

ԱՂԿԱՅԻՆ ՄԱՏՆԱԿԱՐԱՆ

ԱՊ.

# ՀԱՅՈՑ ԳՐԵՐԸ

• ԴՐԵՑ

ՀՐԱՅԵԱՆ ԱՃԱԹԵԱՆ



ՎԻԵՆՆԱ

ԽԻՒԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1928

ՀԱՅՈՑ ԳՐԵՐԸ

---

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ԳԲ.

ՀԱՅՈՑ ԳՐԵՐԸ



ՎԻԵՆՆԱ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1928

491.99-53

Li-50

Library.

003 (47.925)

ՄՅՈՒԳԱՄԻ Է 1901 թ.

# ՀԱՅՈՑ ԳՐԵՐԸ

ԳՐԵՑ

ՀՐԱՉԵԱՅ ԱԺԱՌԵԱՆ

22.702



ՎԻԵՆՆԱ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1928

A  $\frac{\pi}{12850}$

205


**ԱՌ ԳԵՐ. Հ. Յ. Վ. ՏԱԾԵԱՆ**

**ՀԻՄՆԱԴԻՐ**

**ՀԱՅ ՀՆԱԳԻՐՈՒԹԵԱՆ**

**Ի ՆՇԱՆ**

**ԽՈՐՀՆ ՅԱՐԴԱՆԱՅ**



## Ե Ր Կ Ո Ւ Խ Օ Ս Բ


Ներկայ գրութիւնս երրորդ մասն է Ս. Մեսրոբի եւ Հայերէն գրերու պատմութեան վրայ խօսող ընդարձակ աշխատութեանս, որ 1906 թուին արժանացաւ Բանաստեղծական մրցանակին՝ Մոսկուայի Լազարեան Ճեմարանի կողմէն՝ քննութեամբ Մեծ. Ուսուցչապետ Պր. Դր. Խալաթեանի: Գրութեանս առաջին մասը (Աղբիւրներ) արդէն հրատարակուած է Ռարիզ 1907, իսկ երկրորդը (Ս. Մեսրոբի կենսագրութիւնը) դեռ մամուլի տակ է:

Ներկայ գրութեանս մէջ՝ որ միւս երկուքէն բոլորովին անկախ ու անջատ է, կը խօսիմ՝ բոլոր այն այբուբեններուն վրայ՝ որոնք Հայոց մէջ գործածուած են կամ իբր այնպէս կը համարուին: Ասոնք են կարգով՝ Հայկեան, Խալդեան Նշանագիր, Դանիէլեան, Յոյս, Պարսիկ, Ասորի եւ վերջապէս Մեսրոբեան գրերը:

Խորին շնորհակալութիւն եւ պատիւ վիճնալի Մխիթարեան Միաբանութեան, որ հիւրընկալելով գրուածքս Հանդէս Ամօթեայ ուսումնաթերթին մէջ, ցոյց տուաւ թէ ինչպիսի դժուարամիտներն տալագրութեանց յաղթել կարող է:

Նոր-Նախիջեւան  
1909 Դեկտ. 20.

ՀՐԱՋԵԱՅ ԱՃԱՌԻՆԷՐ



## ՀԱՅՈՑ ԳՐԵՐԸ

### Գ Լ ՈՒ Խ Ա.

#### Հաթեան գրերը:

1. Ո՞վ նմ Հայքնուր. 2. Հաթեան գրերը. 3. Հայկուն  
գլխոսն ծագումն:

1. Հայոց գրերուն վրայ խօսելու ժամանակ, ամենէն առաջ պէտք է յիշատակել Հաթեան հարցը, որ վերջերս գիտական աշխարհին մէջ մեծ աղմուկ հանեց: Դախ տեսնենք թէ ո՞վ են հաթերը: — Եգիպտական մեհենադրոշմ, ասորեստանեան եւ խալդեան բեւեռագիր արձանագրութեանց մէջ յիշատակուած է Ht, Hate, Hatti, Hati անունով երկիր մը, որ եբրայեցիք կը կոչեն Hittim (Ասաուածաշնչի հայ թարգմանութեան մէջ գրուած է քետացիք): Այս երկիրը կը բռնէ զլիւաւորապէս այժմեան Նիւիկիան: Հաթեաններու մասին յիշեալ արձանագրութեանց մէջ կան ինչ ինչ պատմական անդեկութիւններ, որոնցմով կ'երեւայ թէ հաթեան ժողովուրդը գոյութիւն ունէր քրիստոսէ գեռ 1500 տարի առաջ եւ պատմական շրջանին մէջ պատերազմներ կը մղէր շրջակայ ազգերուն՝ Եգիպտացւոց, Ասորեստանցւոց, Ասորւոց եւ խալդեանց հետ: Այս ազգը թողած է նաեւ յատուկ նշանագրերով արձա-

նագրութիւններու խումբ մը, ուր կը պատմէ իր  
 թագաւորներու քաջագործութիւններն ու աշ-  
 խարհաշինութիւնները: Եփեսէս հիմա գտնուած  
 է 60 հաթեան արձանագրութիւն, բայց ոչ մէկ  
 տեղ աւանգուած է հաթեան գրերու բանալին:  
 Կիտունները զանազան ժամանակներ զբաղելով  
 այս արձանագրութիւններով, ջանացին լուծում  
 տալ նոյն անծանօթ լեզուին: Ըմենէն յաջողը  
 այս փորձերուն մէջ՝ կատարեց գերմանացի  
 Լեւսէն գիտնականը, որ այն արդիւնքին հասաւ:  
 Թէ հաթեանները ուրիշ բան չեն, բայց եթէ  
 Հայոց ազգին նախնիքը, եւ հաթերէն արձանա-  
 գրութիւնները ուրիշ բան չեն ներկայացնել,  
 բայց եթէ հայերէն լեզուին ամենահին վիճակը՝  
 ամենահին հայկական նշանագրերով, Ըստ Եւսէնի  
 հաթերը կամ հին հայերը մնալով Կիլիկիայի  
 մէջ երկար ժամանակ, Քրիստոսէ՝ առաջ դէպի  
 Զ. դարը գաղթեցին Կիլիկիայէն դէպի խալդի-  
 ներու երկիրը եւ զայն նուաճելով՝ ըրին իրենց  
 հայրենիքը, զոր եւ կոչեցին Հայաստան:

Աւելորդ կը համարինք մանրամասն խօսիլ  
 այս խնդիրներու վրայ, քանի որ մեր ծրագրած  
 սահմանէն դուրս է: Բայց պէտք կը կարծենք  
 հարկաւոր չափով խօսիլ հաթեան գրերուն  
 վրայ, քանի որ համարուած է հայկական հնա-  
 գոյն այբուրենը:

2. Հաթեան նշանագիրներէն Jensenի  
 օրով ծանօթ էին 92 հատ՝ այլ եւ այլ նշանա-  
 ձեւերով, զորոնք խնամով ամփոփած է ի մի  
 իւր աշխատութեան մէջ՝ Hittiter und Ar-

menier, Strassburg, 1898, տախտակ I—X.  
 Զասոնք բաժնած է Ենսէն երեք կարգի. Ա.  
 Գաղափարանշաններ. Բ. Չայնանշաններ եւ  
 Գ. Չայնանիշներ:

Գաղափարանշանները, որոնք ամբողջ բառ  
 մը, յատուկ կամ հասարակ անուն մը կ'ար-  
 տայայտեն, թուով 57 են ըստ Ենսենի հաւաք-  
 ման, որոնցմէ զը ներկայացրենք հոս ինչ ինչ  
 ձեւեր միայն, ամբողջական ցանկը տալու  
 համար նշաններ չգտնուելով:

1. ㊦ Աստուած ինչ.
2. ㊦ ㊦ Syennesis Աստուած.
3. ㊦ ㊦ Բեծ Բայր Աստուածուհի.
4. ㊦ sr = dsario «Թագաւոր».
5. ㊦ dsario? «Թագաւոր».
6. ㊦ X + p(w) = arwa «Թագաւոր,  
 իշխան»?
7. ㊦ ㊦ tii = dēi «տէր».
8. ㊦ bhura(i)n?
9. ㊦ kur կամ mar «քահանայապետ».
10. ㊦ ㊦ dsarayi «ժառայ».
11. ㊦ spa = zapa «որդի, ժառանգ.  
 զաւակ».
12. ㊦ Թագաւորի մը անուն.
13. ㊦ wtr = watirā «երկիր».
14. ㊦ Hāti.

15.  Arsauia?  
  
 16.  Karigami "կարկեմիշ".  
 17.  Gurgum կամ Markas.  
 18.  msi = medzi? "Մեծ".  
 19.  psi = wadji "Հզոր".  
 20.  imia = emio? Հզոր, Մեծ.  
 21.  x + m = ?

Չայնանշանները՝ կը ներկայացնեն առ  
 մը կամ վանկ մը բաղկացած մէկ ձայնաւորէ եւ  
 մէկ բաղաձայնէ, եւ կամ երկու բաղաձայններէ՝  
 միջին ձայնաւորով մը միացած: Ենսէնի  
 ցանկը ունի ասոնցմէ 28 նշան. ահաւասիկ  
 քանի մը ձայնանշաններ:

22.   á, այն է a, o.  
 23.   í, այն է i, e.  
 24.  (Spiritus lenis).  
 25. ( r.  
 26.   k, ka, ak.  
 27.  t'.  
 28.  in?  
 29.  n, ni.  
 30.  s.  
 31.  m.  
 32.  p (w).  
 33.  rl, rk.  
 34.  t'ar.

35.  št'.

36.  ar.

37.  t'í?

38.  mi.

39.  p (á).

Չայնանիչները ընթերցանութիւնը դիւ-  
րացնող տառաձեւեր են, որոնք տառական կամ  
ձայնական նշանակութիւն չունին, այլ կը ցուցնեն  
թէ ուր կը սկսի կամ ուր կը վերջանայ բառ մը, թէ  
բառը դրուած է ուղղական հոլովով, թէ յա-  
ջորդ նշանը կը ծառայէ իւր գաղափարանշան  
եւն: Չայնանիչները՝ որոնց թիւը 7 է ըստ  
Ենսէնի, հետեւեալներն են.

40.  բառին սկիզբը կամ վերջը.

41.  " " " "

42.  արձանագրութեան սկիզբը գրուած  
է մէկ անգամ.

43.  բառանշատ.

44.  նշան ուղղականի.

45.  եւ ( գաղափարագրի նշան կամ  
բառանշան:

3. Շատ հետաքրքրական է քննել թէ ինչ  
ծագում ունին արդեօք այս նշանագիրները, որ  
հայկական մտքի առաջին եւ հնագոյն արգա-  
սիքը կը համարուին: Ենսէնի քննութեամբ՝  
համեմատ արձանագրութեանց ամենահինը քրիս-  
տոսէ առաջ մօտ 1000 թուականէն է: Բայց

նոյն իսկ այս ժամանակի արձանագրութեանց մէջ գործածուած նշանագրերը, արդէն այնպէս զարգացած ձեւեր ունին, որ ակնյայտնի կ'երեւայ թէ հնագոյն պատկերագրի մը շարունակութիւնն են: Այս մասնութեամբ պէտք է կարծել որ հաթեան նշանագրութիւնը հնարուած ըլլայ գոնէ Բրիտոսէ 1100—1200 տարի առաջ: Այս թուականին ասորեստանեան ազդեցութիւնը մեծ չէր, եւ չէր տարածուած Հաթեանց վրայ. ուստի չենք կրնար կարծել թէ հաթեան նշանագրութիւնը ասոնցմէ ձեւացած ըլլայ: Բայց նոյն ժամանակները ծաղկած էր Եգիպտական քաղաքակրթութիւնը. այնպէս որ եթէ հաթեանք ուզէին իրենց գրութեան համար նախատիպար մը վերցնել, անշուշտ պիտի դիմէին եգիպտական գրութեան: Իրօք ալ կան շօշափելի ապացոյցներ, որոնք կ'ապացուցանեն թէ հաթեան գրերը եգիպտականէն կազմուած են. այսպէս Զէնճիրլիի մէջ կայ փորագրութիւն մը, որուն վրայ նկարուած է գրող մը՝ եգիպտական գրիչ մը ձեռքին, Հաթեան նշանագիրներէն խումբ մը՝ անձուկ նմանութիւն ունի եգիպտական նշանագրերուն հետ. յատկապէս յիշենք կրկնածայր թագը, որ կը նշանակէ «թագաւոր», եւ որ նման է Եգիպտական կրկնածայր թագին. այս թագը կը կրէին Եգիպտոսի ինքնակալները՝ իբրեւ վերին եւ Ստորին Եգիպտոսի աիրողներ, որոնք միացուցած էին երկու իշխանութեանց թագերը:

## Գ Լ Ո Ւ Մ Բ.

## Խաղընան բեւեռագրերը:

1. Խաղընան տրված հազար թեւանց նո ժողովուրդի մասին համահոտիւ. 2. Խաղընան գրութեան ծագումը. 3. Ասորեստանեան թեւեռագրասկսման դրութիւնը. իւր դժուարութիւնները. 4. Խաղընանց մտքոցած խաղեկոթութիւնները. 5. Ցուցակ Խաղընան թեւեռագրերու:

1. Այս երկրորդ գլխով կ'ուզենք խօսիլ Խաղընան բեւեռագրութեան վրայ, որ թէեւ հայկական գրութեան մէջ երեւալու բացարձակ իրաւունք չունի, բայց իբրեւ Հայաստանի մէջ դարերով ապրող ժողովուրդի մը գիրը, արժանի է մեր մասնաւոր ուշադրութեան:

Ամենահին անձը՝ որ այս բեւեռագրերուն վրայ ուշագրութիւն է գարձուցած, Խորենացին է: Սա՝ նկարագրելով Վանայ բերդը եւ անոր վրայ գանուած բազմաթիւ բեւեռագիր արձանագրութիւնները, կը պատմէ թէ այս բոլորը Ասորեստանցւոց Շամիրամ թագուհիին ձեռակերտն է, ուստի եւ գրուած ասորեստաներէն: Ահաւասիկ իւր բառերը. «Իսկ զամենայն երեսս քարին իբր գրչաւ զմոմ հարթեալ, բազում գիրս ի նմա գրեաց, որոց հայեցուածն միայն զամենայն դք ի զարմանս անէ: Եւ ոչ միայն այս, այլ եւ բազում տեղիս յաշխարհին Հայոց արձանս հաստատեալ, նովին գրով յիշատակ ինչ հրամայէ գրել. եւ բազում տեղիս սահմանս նովին գրով հաստատէր» (Խոր. Ա. Ժգ):

Նոր ժամանակներէն առաջին անգամ Սէն-Մարթէն ուշագրութիւն դարձուց Խորենացւոյն այս տեղեկութեան վրայ, Գիտուններու յորդորանքով ֆրանսական կառավարութեան կողմէ Հայաստան ուղարկուեցաւ Շուլց քարոզիչը, որ 1828 թուին վան գալով, նոյն քաղաքին ու անոր շրջականներուն մէջ գտաւ 39 խալդեան բեւեռագիր արձանագրութիւններ, Շուլց պատրաստեց այս արձանագրութեանց ընթերցանականութիւնը, բայց ինքը շուտով սպաննուելով բարբարոս քուրդերէն, իւր աշխատութիւնները կորուստի մատնուեցան: Ֆրանսական գեսպանի եւ հիւպատոսի ստիպմամբ միայն՝ բաւական ժամանակ յետոյ՝ կարելի եղաւ ձեռք բերել այս ընթերցանականութիւնները, որոնք վերջապէս 1840 թուին Journal Asiatique թերթին մէջ (թիւ 52) հրատարակուեցան:

Այս արձանագրութեանց ընթերցանութեամբ եւ լեզուով հետաքրքրուելով գիտնականները, զանազան մեկնութիւններ տուին: Հինքս անգղիացին համարեցաւ արիական ծագումէ եւ հայերէն (1848). Մորթման, որ ութը նոր խալդեան արձանագրութիւններ ալ գտաւ, կարգաց եւ թարգմանեց ասորեստանեան բեւեռագրերու օգնութեամբ եւ հայերէն լեզուով (1872): Սակայն այս մեկնութիւնները իբրեւ թիւր ու անարժէք մերժուեցան գիտնականներէն: Ուղղագոյն մեկնութիւնը, որ այժմ ընդունուած է գիտութեան մէջ, տուաւ Սէյս անգղիացին, որ նոյնպէս ասորեստանեան բեւեռա-

գրերու օգնութեամբ կարգալով զանոնք, առանց հայերէնի օգնութեան դիմելու, լոկ արձանագրութեանց համեմատական ուսումնասիրութեամբ թարգմանեց զանոնք, կազմեց համառօտ բառարան եւն:

Այսպէս ստեղծուեցաւ Հայաստանի բեւեռագրութեանց գիտութիւնը. կատարուեցան նորանոր հետազօտութիւններ՝ նոր արձանագրութիւններ երեւան հանելու համար: Այս հետազօտութեանց մէջ մեծ մաս ունին Մեսրոբ Եպ. Սմբատեան, եւ մանաւանդ Պէլք եւ Լէման գերմանացիները, որոնց շնորհիւ այժմ երեւան հանուած են մօտ 200 արձանագրութիւններ:

Արձանագրութեանց վերծանութեամբ եւ բեւեռեան նկաւ նաեւ Հայաստանի հնագոյն վիճակին պատմութիւնը. տեսնուեցաւ թէ մեր երկրին մէջ՝ այս հնագոյն ժամանակներուն՝ կ'ապրէր խալդի կամ խալդեանք անունով ոչ հնդեւրոպական ժողովուրդ մը, ցեղակից Կովկասեան զանազան ազգերուն: Խալդեանց տիրապետութիւնը տեւեց մինչեւ Զ դար, երբ Հայերը Հաթիաստանէն գալով, նուաճեցին այս երկիրը եւ իրենց սեպհականելով զայն, դարձուցին Հայաստան: Այն շրջանը՝ որ այս արձանագրութիւնները կ'ընդգրկեն, կը սկսի Ն. Քս. թ. դարէն եւ կու գայ մինչեւ Զ դար, պարուսնակելով խալդեան 15 թագաւորներու պատմութիւնը. այն է՝ Բրամէ, Լուտիպրիս, Շարիտուր Ա., Իսպուհնիս, Մինուաս Ա., Արգիստիս

Ա.: Շարիտուր Բ., Ռուսա Ա., Արգիստիա Բ.,  
 Ռուսա Բ., Երիմինա, Ռուսա Գ., Շարիտուր  
 Գ., Իրկուսա եւ Մինուսա Բ.: Այս թագաւոր-  
 ներն են, որ իշխելով լայնածաւալ խաղիաս-  
 տանի վրայ, յամառօրէն կը կռուէին ասորես-  
 տանեան թագաւորներու հետ, իրենց անկախու-  
 թիւնը պաշտպանելու համար: Մինուսէն յետոյ  
 արձանագրութիւնները կը լռեն, որովհետեւ  
 շուտով Հայերը գալով՝ կը ջնջեն խաղդեան  
 թագաւորութիւնը:

2. Խաղդեան բեւեռագրական դրութիւնը  
 ասորեստանեան բեւեռագրութեան հարազատ  
 նմանութիւնն է: Երկու ամենահին արձանա-  
 գրութիւնները, որ կը պատկանին Շարիտուր  
 Ա.ին (Թ. Գարի սկիզբէն), գրուած են ասորես-  
 տանեան լեզուով եւ ճիշտ ասորեստանեան  
 բեւեռագրական նշաններով: Ասկէ կրնանք հե-  
 տեւցնել թէ խաղդեան թագաւորներու մէջ  
 Շարիտուրն է՝ որ ծանօթանալով ասորեստա-  
 նեան բեւեռագրութեան հետ, առաջին անգամ  
 գաղափար յղացաւ պատմական դէպքերը ար-  
 ձանագրելու, ուստի Ասորեստանէն բերել տա-  
 լով ասորեստանցի բեւեռագրողներ, քանդա-  
 կել տուաւ անոնց՝ այս երկու արձանագրու-  
 թիւնները: Բեւեռագրողները գործածեցին իրենց  
 մայրենի լեզուն:

Սակայն շուտով բեւեռագրութեան ար-  
 հեսար սորվեցան նաեւ տեղացի վարպետները,  
 այնպէս որ այնուհետեւ խաղդիական լեզուն  
 գարձաւ խաղդեան բեւեռագրութեանց սովո-

րական լեզուն, եւ այս լեզուով են գրուած մնացեալ բոլոր արձանագրութիւնները՝ առանց բացառութեան:




Պէտք է նկատել սակայն որ ասորեօտանեան բեւեռագրութեան ոճը խալդիոյ մէջ կուրօրէն փոխ չառնուեցաւ. այլ տրուեցաւ անոր այնպիսի փոփոխութիւն մը, աւելի ճիշդ այնպիսի կատարելագործութիւն մը, որ նոյն չափազանց դժուար դրութիւնը գարձաւ շատ աւելի դիւրին եւ շատ աւելի գործնական:

3. Ասորեստանեան բեւեռագրութեան այբուբենը կը պարունակէ 329 նշաններ. ասոնք կը բաժնուին երկու տեսակի. ա. Գաղափարանշաններ, Նէր եւ Բ. Ընթերցաններ: Գաղափարանշանները ամբողջ բառ մը կ'արտայայտեն. օրինակ  կը նշանակէ «քաղաք»,  կը նշանակէ «թագաւոր»,  կ'արտայայտէ «երկիր»,  կը ցուցնէ «չուր, գետ կամ ծով» եւն: Ընթերցողը տեսնելով այս նշանները, կը կարդար զայն իւր լեզուով, ըմբռնելով անոր տուած նշանակութիւնը, ճիշտ այնպէս՝ ինչպէս այժմ զանազան ազգեր եւ ժողովուրդներ տեսնելով 1, 2, 3, 0, =, + եւն գաղափարանշանները, կը կարդան իրենց յատուկ լեզուով եւ կ'ըմբռնեն անոնց պարունակած իմաստը, թէեւ այս նշաններուն մէջ հնչական կամ տառական տարր մը չկայ ամենեւին:

Վանկանշանները այնպիսի նշաններ են, որոնց արժէքը վանկ մը միայն կը ներկայացնէ. ինչ.  կը կարդացուի -,  կը կարդացուի



վանկերու խիստ մեծ թիւը պատճառէ եղած  
երբեմն կազմելու այնպիսի նշաններ, որոնք մինչեւ  
17 գծիկներու խճողում մը կը ներկայացնեն.

ինչ.  tir,  bir,  n,  
 gig,  sax.

Վանկանշանները միշտ միեւնոյն ձայնը  
կամ արժէքը չունին. կան նշաններ՝ որ ըստ պա-  
րագային կրնան մինչեւ տասներմեկ տեսակ կար-  
գացուիլ. օրինակի համար  կը կարգացուի  
kur, mat, šat, lat, nat, kin.  կը կարգա-  
ցուի u, ut, tu, tam, bir, par, pir, lax, lix,  
xiš, xis.

Գաղափարանշաններն ալ միշտ միեւնոյն  
նշանակութիւնը չունին, այլ բազմիմաստ են եւ  
տեղին համեմատ այս կամ այն նշանակութեամբ  
կը գործածուին. օր.  կը նշանակէ «երկիր,  
լեռ, նուաճել, արեւի ծագիլ»  «բե-  
րան, ատամ, բառ, հրաման»  կը նշանակէ  
«մէջ, Ասորեստան, Աշուր աստուածը, տալ,  
վճարել, որդի».

Նմանապէս գաղափարանշաններն ու վան-  
կանշանները միշտ իբրեւ գաղափարանշան ու  
վանկանշան չեն ծառայեր, այլ սովորաբար են  
նաեւ երկու պաշտօնով, այսինքն թէ վանկա-  
նշան եւ թէ գաղափարանշան: Այս պարագային  
գաղափարանշանները փոխանակ ամբողջ բառ մը  
ներկայացնելու, կը կարգացուին միայն իբրեւ

վանկ մը. փոխագարձաբար վանկանշաններն ալ կ'առնուին իբր ամբողջ ռաւ. մետաւորապէս ինչպէս 3 նշանը, բայց երեքի գաղափարանշանն ըլլալէ, ուսերէնի մէջ կը ծառայէ իբրեւ շ տառ, կամ ինչպէս 0, որ ԹԷ զերոյի նշանն է եւ ԹԵ օ ձայնի, գրեթէ բոլոր եւրոպական լեզուներու մէջ: Այսպէս օր.  $\Sigma \Pi \Pi \Pi$  իբր վանկանշան՝ կ'արժէ bid, բայց իբրեւ գաղափարանշան "տուն" կը նշանակէ.  $\langle \rangle$  իբրեւ վանկանշան կը կարգացուի lim, բայց իբրեւ գաղափարանշան՝ կը նշանակէ "աչք, գէմք, ճակատ, տեսնել", եւն: Նոյն  $\Delta$  նշանը, որ իւր վանկանշան կրնայ 11 տեսակ կարգացուիլ, իբրեւ գաղափարանշան ալ կրնայ նշանակել "օր, փոթորիկ, արեգակ, սպիտակ":

Նշանագիրներու կազմիչ տարրերու չափազանց միօրինակութիւնը (սեպ, սեպագլուխ եւ անկիւն), ասկէ ծագած ծայրայեղ խճողումը, վանկանշաններու բազմատեսակ ընթերցումները, գաղափարանշաններու եւ վանկանշաններու շփութութիւնը, եւ վերջապէս երեք հարիւրէ աւելի նշաններու այս խառնակ կուտակումը, այնպիսի դժուար գրութիւն մը ստեղծած են ասորեստանեան գրութեան մէջ, որ նոյն իսկ այսօր գիտնականի մը ամբողջ կեանքը եւ ամենօրեայ վարժութիւնները բաւական չեն կատարելապէս ընտելանալու այս գրութեան:

4. Խալդէիները տեսան այս խառնակութիւնը եւ անոր մէջ այնպիսի փոփոխութիւն մը մտցուցին, որ դժուարութիւնը 95%<sub>10</sub> յապաւուե-

ցաւ եւ դարձաւ բաւական տանելի վանկագրական այբուբեն: Անոնք նախ ջնջեցին գաղափարանշաններու ստուար թիւ մը. երկրորդ՝ ջնջեցին բոլոր այն նշանները՝ որոնք կրնային մերթիւր գաղափարանշան եւ մերթիւր վանկանշան ծառայել, տալով անոնց միայն մէկ պաշտօն. երրորդ՝ իսպառ յապաւեցին վանկանշաններուն զանազան արժէքներ տալը՝ պահելով միայն անոնց առաջին եւ իսկական ընթերցումը. չորրորդ՝ բաղաձայնով սկսող եւ բաղաձայնով վերջացող (եռատառ) վանկերը, որոնք հառելի թիւ մը կը կազմէին ասորեստանեան բեւեռագրութեան մէջ, գրեթէ բոլոր ջնջելով, պահեցին միայն անոնցմէ մէկ երկու հատը (ինչ. xal, gis, sar): Այսպէսով յիշեալ երեք հարիւրէ աւելի նշաններուն կէսէն աւելին ջնջուելով՝ պահուեցաւ միայն 120 հատ, գրեթէ բոլորը ըստ կարելոյն կարճ ձեւով, եւ պարունակելով միայն մէկ ձայնաւոր, կամ մէկ ձայնաւոր ու մէկ բաղաձայն (a, ba, ab):

Խալդեան բեւեռագրութեան մէջ մտած է նաեւ ուրիշ փոփոխութիւն մը, որ ոչ թէ դիտմամբ, այլ տեղական քարերու յատկութեան պատճառով եղած կը համարուի: Այս փոփոխութիւնը բեւեռագրական գրութեան հետ գործ չունի եւ կը կայանայ նշանները քարի վրայ փորագրելու ձեւին մէջ: Ասորեստանեան բեւեռագրերուն մէջ խումբ մը տառեր կան, ուր երկու սեպեր զիրար կտրելով կ'անցնին. այսպէս օրինակ ասորեստանեան ~~𐎶𐎵~~ ni ձեւին



մէջ՝ երկրորդ հորիզոնական սեպը կը ճեղքէ կ'անցնի երկու ուղղահայեաց սեպերը: Խալդեան բեւեռագրութեան մէջ այս խաչաձեւումները ընդհատուելով՝ մէկ սեպը երկու կողմէն իբր երկու անջատ սեպ քանդակուած է. այսպէս






ni. Համեմատէ նաեւ

Ասորեստ.



Խալդեան.




Ամբողջութեան համար յիշենք նաեւ քանի մը նշաններու ձեւական թեթեւ փոփոխութիւնները, որոնք բուն խալդեան լինելէ աւելի, ասորեստանեան զանազան գրութիւններէն ժամանակակից որեւիցէ ձեւ մը կը ներկայացնեն: Հմմտ.

Ասորեստ.



Խալդեան



5. Ըստ այսմ խալդեան բեւեռագրական գրութիւնը կը պարունակէ հետեւեալ նշանները.

— . 4 2 1 3 2 1 3 2 1

|   |         |          |         |
|---|---------|----------|---------|
|   | a       | i        | u       |
|   |         | e        | n       |
| B | ba      | bi       | bu      |
|   | ab      | ib       | bar     |
| D | da      | di       | du      |
| G | ga      | gi       | gu      |
|   |         |          | giš     |
| K | ka      | ki       | ku      |
|   | la      | li       | lu      |
| L | al      | el       | ul      |
| M | ma      | —        | mu      |
|   | —       | me       | man     |
| N | na      | ni       | 4wd  nu |
| P | pa      | pi       | pu      |
|   | ap      | ip       | —       |
| Q | qa      | 4wd  qi  | qu      |
|   | ra      | ri       | ru      |
| R | 4wd  ar | ir       | ur      |
| S | sa      | si       | su      |
|   | sar     | 4wd  sar |         |

|   |        |    |     |
|---|--------|----|-----|
|   | ša     | ši | šu  |
| Š | aš     | iš | uš  |
|   |        | iš | še  |
| S | —      | si | su  |
| T | ta     | ti | tu  |
|   | at     | te | tar |
| Ṭ | ta     | —  | tu  |
| X | xa     | xi | xu  |
|   |        |    | xal |
| Z | za     | za | zi  |
|   |        |    | zu  |
|   | ia, ya |    | 'a  |

Բ. Գ. Դ. Ե. Զ. Է. Ը. Թ. Ժ. Ի. Լ. Խ. Ծ. Ծ.

(Գծիկներու թուին համեմատ դասաւորուած):

|                |               |
|----------------|---------------|
| արգ            | ասուած        |
| աշխարհ, երկիր  | թռչուն        |
| նշան, յոգնակիի | յոգնակիի նշան |
| թագաւոր        | կին           |
| փայտ, ծառ      | քաղաք         |
| տէր            | եղ            |
| բոլոր, ամենայն | մեծ           |
| երկիր          | մեծազօր       |
| Ardini         | ասուած, օր    |
|                | տուն, տաճար   |

|                |               |
|----------------|---------------|
| աղգ, ժողովուրդ | յումէշ, ցուլ. |
| արձանագրու-    | Teišba Աս-    |
| թիւն           | տուած         |
| զոհ            | դետ           |
| դուռ (քաղաքի)  | սլալատ, տա-   |
| աջ             | ճար           |
| մարդիկ, ժողո-  | արձանա-       |
| վուրդ          | գրուած քար    |
| միս            | թագաւոր       |
| շուր           | սեղան         |
| ռչխար          | կին           |
| երջանիկ        | գան.          |
| տեղ, վայր      |               |

#### 4. ԹԱՆԳԱՆԵՐ.

(պատկանները լրացուցած եւ՛ր ասորեստաններէնէ).

- |          |         |
|----------|---------|
| 1. Ի     | 6. Կամ  |
| 2. ԻԻ    | 7. Կամ  |
| 3. ԻԻԻ   | 8. Կամ  |
| 4. ԻԻԻԻ  | 9. Կամ  |
| 5. ԻԻԻԻԻ | 10. Կամ |

|     |       |
|-----|-------|
| 11. | 40.   |
| 12. | 50.   |
| 13. | 60.   |
| 14. | 70.   |
| 15. | 80.   |
| 16. | 90.   |
| 17. | 100.  |
| 18. | 120.  |
| 19. | 200.  |
| 20. | 1000. |
| 21. | 2000. |
| 30. |       |

### Գ Լ ՈՒ Խ Գ.

#### Նշանագրեր:

1. Նշանագրերու ինն գործածութեամբ մասին ևն-  
թաղարտութիւնն էր. 2. Նշանագրերու Ռառաքածուն էր.  
3. Յուցակ հայերէնն Ոշանագրերու. 4. Համառօտու-  
գրութեանց կազմութիւնը. 5. Նշանագրերու կազ-  
մութիւնը. 6. Նախորդ հմթաղարտութեանց ղեկընդունի:  
7. Նշանագրերու ղեկընդունի ժամանակը:

1. Երբորդ տեսակ գրութիւնը՝ որ բեւե-  
ռագիրներէն յետոյ մինչեւ Ս. Մեսրոբի նա-  
խաւոր շրջանը գործածուած էր Համարուի

Հայաստանի մէջ, այն տեսակ մը պատկերագիր գրութիւնն է, որ յայտնի է մեր բանասիրութեան մէջ «Էջմիշի իմաստան» կամ պարզապէս «Էջմիշի» անունով: Այս կարծիքը առաջին անգամ յայտնած է Մկրտիչ Էմին, իւր *Объ армянскомъ алфавитѣ* աշխատութեան մէջ, որ հրատարակուած է իւրեւ չորրորդ յաւելուած խորենացւոյ պատմութեան ուսման թարգմանութեան (1858)<sup>1</sup>: Այս աշխատութիւնը թարգմանուած է նաեւ (*Prud'hommeի* ձեռքով) գաղղիներէն լեզուի եւ տպագրուած *Revue d'Orient* թերթին մէջ, 1865 թուին. իսկ հայերէն թարգմանութիւնը հրատարակեց Ս. Ստեփանէ «Հայկական այբուբեն» վերնագրով, Հ-յի-ւ-ն -շի-ւ-ն թերթին մէջ, 1870 փետր., էջ 42—46, որ կարծեմ կիսատ է մնացած: Էմին իր այս տեսութեան իւրեւ ապացոյց մէջ կը բերէ այն հանգամանքը, որ զանազան հին ձեռագրերու մէջ եւ նոյն իսկ մինչեւ հիմայ ալ այս տեսակ պատկերագիր գրութիւն մը գործածական է: Յիշեալ աշխատութեան մէջ Էմին կը դնէ 84 նշանագիր, լազարեան ճեմարանի թիւ 141 ձեռագրէն քաղելով, եւ այս սակաւաթիւ պատկերագիրներէն կը հետեւցնէ թէ հնապէս կար շատ անելի ստուար թիւ մը, այնքան որ բաւա-

<sup>1</sup> Գրուածքիս երկրորդ տպագրութիւնը ինչ ինչ փոփոխութեամբ՝ տես *Известія о жизни и деятельности Н. О. Эмина* Երևան 1896, էջ 204—230:

կան ըլլար գաղափար մը քիչ թէ շատ կանոնաւոր կերպով արտայայտելու համար: Այս տեսակ գրութիւն մը իբր թէ ընդհանուր գործածական էր մեր մէջ կռապաշտական շրջանին եւ այն նշանագիրները հնարուած էին ըսելով հայոց մէջ, առանց օտար ազդեցութեան, քանի որ մեր շրջակայ ազգերուն մէջ պատկերագիր գրութիւն չկար այն ժամանակ:

Էմին եւ որոնք որ Էմինի այս ենթագրութեան կուսակից են, իբր փաստ մէջ բերած են նաեւ երկու պատմական վկայութիւն, որ իբր թէ այս կարծիքը կ'ապացուցանեն: Յիշեալ վկայութիւններն ունին՝ նախ Ագաթանգեղոս, որ խօսելով Ս. Լուսաւորչի չարչարանքներու առթիւ ըրած աղօթքներուն վրայ, կ'ըսէ. «Եւ մինչդեռ կայր նա կախեալ այնպէս՝ խօսեցաւ զայս ամենայն. եւ գրեցին ատենակալ դպիրքն նշանագրացն...: Եւ այլ եւս բազում քան զայս խօսեցաւ՝ մինչդեռ կայր կախեալ գլխիվայր, եւ գրեցին եւ մատուցին զայն առաջի թագաւորին (Ագաթ. Տփղիս 1909, հմ. 99)», Հռիփսիմէի առթիւ խօսելով՝ կը պատմէ թէ «ոմանք ի մեծամեծ սպասաւորացն արքունի անդէն ընթացան պատմել թագաւորին զամենայն բանս նոցա. քանզի դիպեցան անդ նշանագիրք, որ գրեցին զամենայն բանս, եւ ընթերցան առաջի թագաւորին» (Ագաթ. 176):

Երկրորդ վկայութիւնն ունի Բուզանդ, որ խօսելով Ս. Ներսէսի ըրած յանդիմանութեանց մասին Վաղէս կայսեր դէմ, կ'ըսէ. «Եւ գրէին

զայս սեմիարք նոտարացի արքային, որք կայինն առաջի թագաւորին, (Բուգ. Դ. 6):

Էմին՝ Ագաթանգեղոսի յիշեալ բառերով իբրեւ զուտ նշանագիր կ'ուզէ հասկնալ, այն մտածումով թէ Ագաթանգեղոսի նկարագրած վերոյիշեալ պարագաներուն անհրաժեշտ էր արագ գրելու կարեւորութիւնը եւ մանաւանդ վերջին պարագային անկարելի էր սովորական տառերով գրել. ուստի պէտք է ենթադրել թէ գպիրներուն գրածը սովորական տառերով չէր, այլ տեսակ մը նշանագրերով: Այսպէս կ'ընդունի նաեւ Լանկլուա (Collection II. էջ 4) եւ յիշեալ վկայութեան վրայ հիմնուելով կ'ենթադրէ թէ Հայերն ալ ունեցած էին տեսակ մը սղագրութիւն, որ նման էր Հռոմայեցոց մէջ գործածական տիւրանեան սղագրութեան եւ հաւանաբար ասկէ փոխառեալ էր: Նոյնը կ'ընդունի նաեւ Զարբհանալեան, Պատմ. Հայ. Դպր. Ա.<sup>3</sup> էջ 17—18:

Բայց այսպիսի վկայութենէ մը եզրակացութիւն հանելը շատ անապահով է: Եթէ մինչեւ իսկ լէ-էր-լէ ըլլան այս վկայութիւնները, ամենեւին տեղեք չկայ կարծելու թէ Ագաթանգեղոսի նշանագիր բառը կամ Փաւստոսի -էօ-բէ-ն-բ-ն-ն-ն ձեւը մեր նշանագիրները կ'ազնարկեն: Մ. Միանսարեանց (Լանոնաւոր եւ վայելուչ գրութեան պատմութիւնն ու տեսութիւնը, էջ 86—87) համառօտիւ, իսկ Իս. Յարութիւնեան, որ (Հայոց Գիրք էջ 105—109 եւ էջ 244 եւն) առանձին կարեւորութիւն կու ապա Էմինի

այս ենթագրութեան, երկար կը հակաճառի անոր գէմ եւ անոր այս կարծիքը ջրելով՝ կ'ուզէ ապացուցանել թէ Ագաթանգեղոսի վկայութիւնը պարզ գրեր կ'ակնարկէ եւ ոչ երբեք սղագրութիւն: Իբր փաստ մէջ կը բերէ հետեւեալ կէտերը.

ա) Պէտք չկար անպատճառ որ գպիրները բառ առ բառ գրէին Ագաթանգեղոսի ակնարկած ղէպքերը. կարելի էր կարեւոր կէտերը նշանակել թագաւորին ծանուցանելու համար, եւ ասոր համար հասարակ գրերը բաւական էին:

բ) Ագաթանգեղոսի Յառաջաբանին մէջ կ'ըսուի. «Արդ՝ հրաման հասեալ առ իս ոմն Ագաթանգեղոս, որ ի քաղաքէ ի մեծն Հռովմայ, եւ վարժեալ հայրենի արուեստիւ, Հռոմայերէն եւ Յունարէն ուսեալ գպրութիւն, եւ ոչ կարի ինչ անտեղեակ լեալ ձեռնարկութեան Նշան-Քրտ» (Ագաթ. 12): Վերջին բառով հեղինակը կ'ուզէ ցուցնել թէ բացի յունարէն եւ լատիններէն լեզուներէն՝ գիւէր նաեւ հայերէն քրտ, զոր առանձին պարծանքով կը յիշէ. եթէ հոս Նշան-Քրտ «գիր» իմաստն ունի, նոյն իմաստով առնելու է նաեւ վերը:

գ) Բոլոր պատմագիրները, որոնք Նշան-Քրտ բառը գործածած են, գիր կամ տառ իմաստով միայն գործածած են. այսպէս օր. Եւ յարուցեալ յաղութիցն, եստեղծ զնշանագիրս մեր (Խոր. Գ. Ժգ). Զվաղնջուց գտեալ նշանագիր տառից (Խոր. Գ. Ժբ). Յաղագս Դանիէլեան

նշանագրութեանն (խոր. Գ. ԺԶ)։ Առ որում  
 նշանագիրքն հայերէն կային (Փարպ. 39). Եւ  
 դիրս նշանագրաց Հայաստան ազգին հասանել  
 (Խոր. 8). Վասն որոյ եղի մահի (Խեսարոպ) հնարել  
 գտանել նշանագիրս Հայոց լեզուիս (Խոր.) եւն։

Ասոնցմէ կը հետեւի թէ Ագաթանգեղոսի  
 յիշեալ վկայութիւնը Աղագրութեան համար  
 ըսուած չէ։ Ըստ մեզ հոս յատկապէս բառերու  
 ձեւական նոյնութիւն կայ, առանց նշանակու-  
 թեան նոյնութեան։ Ագաթանգեղոսի Նշանագիրը  
 պարզապէս դիր կամ տառ գաղափարը կ'ար-  
 տայայտէ եւ կապ չունի մեր Նշանագիրներուն  
 հետ, որ համեմատաբար նոր գաղափար է։ Իսկ  
 Բուզանդի «սեմիարք նօտարացի» ձեւը նոյն է  
 անշուշտ յն. σημεῖα ἐν μικροῖς բացատրութեան  
 հետ, որով կը հասկցուէր տեսակ մը սղագրու-  
 թիւն, եւ կ'անարկէ յունական եւ հետեւաբար  
 յունարէն լեզուով սղագրողները, քանի որ Ներ-  
 սէս Բուռաց պալատին մէջ կը խօսի։ Այսպիսի սղա-  
 գիր նօտարներ (sténographe) կային Հռովմայե-  
 ցոց մէջ սկսեալ Քրիստոսի Ա. դարէն։ Եթէ ու-  
 նենայիմք Հայերս այսպիսի սղագրական կամ  
 պատկերագրական գրութիւն մը, դժուար թէ  
 ասկէ որեւիցէ հետք մը մնացած չըլլար որեւիցէ  
 քանդակի մը, արձանագրութեան մը կամ դրամի  
 մը վրայ, բայց պահուէր համեմատաբար շատ  
 յետին ձեռագիրներու մէջ։

Էմինի ժամանակէն շատ յետոյ, վերջերս,  
 երբ Ենսէն հրատարակեց իւր քննութիւնները  
 հաթեան պատկերագիր այբուբենի մասին եւ

քարոզեց թէ հաթերը նախահայերն են, ոմանք, ինչպէս շ. Գ. Կ. (շվ. 1898, 183) եւ շ. Իս. Սրապեան (շվ. 1902, 202), ենթադրեցին թէ հայերէն նշանագիրներն ալ կրնան չաթեան նշանագրերու շարունակութիւնն ըլլալ: շ. Սրապեան կը կարծէ նաեւ թէ նոյն նշանագրերը կրնան կապ ունենալ Գլանիէլեան գրերու հետ: Բալց թէ այս եւ թէ նախորդ անհիմն ենթադրութիւնը լիովին հերքելու համար պէտք է նախ մէջ բերել նշանագիրներու ամբողջական ցուցակը, հարկաւոր բացատրութիւններով միասին:

2. Հայկական նշանագիրներու աղբիւրները այն մանր մունր ցուցակներն են, որ կը գտնուին զանազան Հայերէն ձեռագիրներու, մասնաւորապէս բառարաններու եւ ժողովածուներու մէջ հոս հոն ցրուած: Այս ձեռագիրներէն հանելով այլ եւ այլ ժամանակ հրատարակութեան տրուած են քանի մը հարիւր նշանագիրներ: Առաջին եւ հնագոյն հրատարակութիւնը՝ որ ինձ ծանօթ է, Էփնի վերոյիշեալ աշխատութիւնն է, ուր մէջ են բերուած 84 նշանագիրներ: Այս նշանագիրները հանուած են լազարեան ճեմարանի թիւ 141 ձեռագրէն, էջ 60—63 եւ 134 (գրուած 1620) թուին: Ձեռագիրն ունի ընդամենը 332 նշանագիր, որոնցմէ 11 հատը առանց բացատրութեան է. եւ որովհետեւ ասոնց մեծ մասը հասարակ համառօտագրութիւններ են, Էփն զատած ընտրած է միայն անոնք՝ որ իսկապէս պատկերացիր են:

Նոյն ձեռագրին մէջ՝ էջ 60—63 գտնուած  
 նշանագիրներու ամբողջական ցուցակը հրատա-  
 րակեց Իս. Յարութիւնեան, Հայոց գիրը, էջ 108  
 զրուած տախտակով (ընդ ամէնը 305 նշանա-  
 գիր), որոնց բացատրութիւնը դրուած է էջ 110  
 —112: Երկրորդ հաւաքածուն հրատարակեց  
 Abbé P. Martin, Des signes hiéroglyphiques  
 dans les manuscrits arméniens: Congrès in-  
 tern. des Orientalistes, 1873, էջ 456 եւ, որ  
 կը պարունակէ իւր 257 նշանագիր: Այս  
 աշխատութիւնը գծախտաբար շեմ տեսած,  
 երրորդ հաւաքածոն կազմեց Գ. Վ. Սրուանձ-  
 տեան, Թորոս Աղբար աշխատութեան Առաջին  
 հատորին մէջ (ապ. 1879, էջ 337—340),  
 հանելով Տիգրանակերտի զանազան ձեռագիր-  
 ներէն. այս նշանագիրներու թիւը 120 հաս է:  
 Զորրորդ հրատարակութիւնը պատրաստեց Տըր-  
 գաս Վ. Պալեան. այս հաւաքածոն՝ որ բոլոր  
 վերոյիշեալներուն մէջ ամէնէն աւելի լիակա-  
 տարն է, առանձին տետրակ մըն է «նշանագիրք  
 Հայոց» խորագրով, ապ. վիեննա, 1898, էջ  
 13—8, ութը վիմատիպ տախտակներով, ուր  
 նշանագիրները դասաւորուած են այբուբենա-  
 կան կարգով: Կը պարունակէ 511 նշանագիր:  
 Իբր հինգերորդ կրնանք յիշել 25 նշանագիր-  
 ներու փոքրիկ հաւաքածոյ մը՝ զոր հրատարակեց  
 Անտոնեան միաբաններէն Հ. Իսահակ Վ. Սրա-  
 պեան, Հանդէս Ամսօրեայ, 1902, էջ 201—  
 202, հանելով Անտոնեան միաբանութեան Օր-  
 թաքէոյի թանգարանին թիւ 112 գրչագրէն:

(Յուլյաննու Դամասկացւոյ աստուածարանական եւ իմաստասիրական գրութիւնները)։ Վերջապէս վեցերորդ շատ աւելի ճոխ հաւաքածոյ մը, զոր հրատարակեց Գրէտէրիք Մուրատ՝ Զնդէ- Մհո- ռեայի մէջ, 1903, էջ 5—9, 144—146, 333 — 335։ Այս հաւաքածոն հանուած է Պերլինի արքեւնի մատենադարանին թիւ 805 ձեռագրէն (էջ 271—274) եւ կը պարունակէ ընդամենը 505 նշանագիր։

Ս. Էջմիածնի ձեռագրատան մէջ կը գտնուին ութը ձեռագիրներ, որոնց մէջ կան նշանագիրներու զանազան հաւաքածուներ։ Այս ձեռագիրները՝ հետեւեալներն են։

1. Կարինեան թ. 612, էջ 146բ—148ա.
2. " թ. 662, էջ 126ա—129ա.
3. " թ. 1700, էջ 124բ—126ա.
4. " թ. 2297, էջ 271.
5. Գէորգեան թ. 91, էջ 1—4.
6. " թ. 265, էջ 210—212.
7. " թ. 300, էջ 558—559.
8. " թ. 557, էջ 122ա—125ա.

Դավրէթի Առաջնորդարանի թ. 14 ձեռագիրը (էջ 374ա—բ) ունի քանի մը նշանագիր։

Ասոնցմէ զատ՝ Էջմիածնի ձեռագրատան մէջ կայ բաւական ընդարձակ աշխատութիւն մը, «Մեկնութիւն նախնի նշանագրաց Հայոց» (Կարինեան հին թ. 1435, արդի 1472), որուն աւելորդ մեր նիւթին համար շատ կարեւոր աշ-

խատութիւն մը կ'ենթադրէ: Բայց այս աշխատութիւնը, ինչպէս գրքին սկիզբը դրուած ընդարձակ յառաջարանին մէջ կը բացատրուի, ուրիշ բան չէ, բայց եթէ յետին հայ հեղինակի մը հնարած բաւական ճարտարամիտ սղադրական մէկ դրութիւնը, որ կը հիմնուի գլխաւորապէս հայերէն ձայնաւորները ձայնանիշներով նշանակելու վրայ: Այսպէս օրինակի համար բաղաձայնի մը վրայ դրուած կէտ մը նոյն ձայնաւորին կու տայ նախաւոր = մը, ինչ. ն = ան, լ = ալ, պ = ապ: Վերագիր շեշտ մը կու տայ նախաւոր է. ինչ. ն' = ին: Վերագիր երկշեշտը կու տայ նախաւոր է. ինչ. ն" = են: Վերագիր պարոյկը՝ նախաւոր եւ. ինչ. ն" = եան: Վերագիր փուշը՝ նախաւոր -յ. ինչ. լ' = այլ: Տառի մը տակը դրուած կէտը, շեշտը եւ երկշեշտը նոյն վանկերուն սկիզբը կ'աւելցնեն վերջին բաղաձայնը. ինչ. ն = նան, ն = նին, ն = նեն, Վէտը, շեշտը, երկշեշտը կրկնուելով կամ իրարու հետ միանալով կը ձեւացնեն համապատասխան վանկեր նոյն բաղաձայնին վրայ. ինչ. ն = անան, չը = չարարար, բ'ը = բարբար, բ"ը = բերբեր, բր' = բերիր, ար' = տարիր եւն եւն: Սղագրական այս դրութիւնէն յետոյ՝ որով քանի մը բաւական մեծ հատուածներ սղագրուած են իբր փորձ, կը հետեւին բազմաթիւ ցուցակներ՝ այբուբենական կարգով դասաւորուած հարիւրաւոր համառոտագրութիւններու, որոնց գլխաւոր զանազանութիւնը պատիւներու ձեւին եւ

դիրքին մէջ կը կայանայ. ինչ. **ա** = ամենակալ, **ա** = արժանաւոր, **ա** = ապաւէն, **ա** = ամբարիշտ եւն եւն: Այս բոլորը նոյն անձանօթ հեղինակին գիւտը լինելով, կը թողունք աւելի մանրամասն յիշել, իբր բուն հայկական նշանագիրներու շրջանակէն դուրս:

3. Ծնացեալ բուն հայկական նշանագիրները՝ որոնք հրատարակուած են վերոյիշեալ հաւաքածուններուն մէջ կամ կը գտնուին դեռ անտիպ Ա. Էջմիածնի եւ Թաւրիզի սոյն ինը ձեռագիրներուն մէջ, քննելով, ստուգելով, իրարու հետ համեմատելով եւ նորէն ամբողջը այբուբենական կարգի վերածելով, կը հրատարակենք հոս հետեւեալ տախտակներով:

4. Վերոյիշեալ ցուցակին մէջ նշանագիրներու ընդհանուր թիւն է (իւրաքանչիւր շարքը մէկ նշանագիր միայն հաշուելով) 454, որոնք կը համապատասխանեն 367 բառերու կամ գաղափարներու: Այս թիւը եթէ ուրիշ պակասաւոր ցուցակներու մէջ երբեմն 500ը կ'անցնի, ասոր պատճառն ուրիշ բան չէ, բայց եթէ այն որ բոլոր ձեռագիր եւ տպագիր ցուցակներուն մէջ ալ իբրեւ նշանագիր մուտ գտած են նաեւ բազմաթիւ այնպիսի տառաձեւեր, որոնք ուրիշ բան չեն, բայց եթէ հայերէն բառերու պարզ կամ փակագիր համառոտագրութիւնները: Այս հասարակ պաշտօնական համառոտագրութիւնները, որոնց թիւը 300ի չափ է, մենք ընտրանք դուրս ենք վտարած մեր ցուցակէն: Բայց որովհետեւ ասոնց համառոտագրա-

կան օրէնքները պէտք պիտի գան մեզ նշանագիրներու կազմութեան բացատրութեան ժամանակ, ուստի հարկաւոր է համառօտիւ խօսիլ անոնց մասին:

ա) Նշանագիր համառօտագրութեանց ամէնէն պարզ տեսակը բառին առաջին տառն է միայն. ինչ. բ = Բարթուղիմէոս. զ = զօրաւոր. վ = վարդան. ք = քան. մ = մայր:

բ) Երկրորդ տեսակը թէեւ դարձեալ համառօտագրելի բառին նախատառն է, բայց այս նախատառը այնպիսի աննշան ձեւափոխութիւն մը կրած է, որ մի քանի նոյնատառ բառեր իրենց համառօտագրութեան մէջ՝ չեն շփոթուիր իրարու հետ: Ահա քանի մ'օրինակ:

Գ = Գէորգ

Ժ = Ժամանակ

Գ = Գրիգոր

Ի = Ժողովուրդ

Ջ = գեղեցիկ

Մ = մայր

Գ = գուսան

Մ = միտք

Համառօտագրութեան այս ոճին համար հմտ. վերը էջ 31—32:

գ) Սովորութիւն է բառի մը սկզբնատառին վրայ աւելցնել օ նշանը, որ կրնայ կցուիլ կամ անջատ մնալ, ինչ.

օբ = Բենիամին

դօ = դահեկան

բօ = բանայի

դ) Պատուի սովորական օրէնքով՝ համառօտութիւնը կրնայ նաեւ կազմուիլ բառին առաջին եւ վերջին տառերուն յարադրու-

Թեամբ. ինչ. դլ = Դանիէլ. գլ = գովել.  
գռ = գաւառ եւն:

Ե) Բայց այս պարագային փոխանակ վեր-  
ջատառին՝ կրնայ նաեւ դրուիլ բառին միջին  
կարեւոր տառերէն մէկը կամ աւելին. ինչ.  
Թգ = Թագաւոր. գռպ = գաւառապետ:  
Հատ անգամ նոյնը զարդերով, ինչպէս.

ճօգ = ճարտարագետ      Եփլ = Եղեկիէլ  
ճն = ճնչել      զկ = զան այսօրիկ

Զ) Երնայ շատ անգամ պատահիլ որ ըն-  
տրուած տառերուն շարքը փոխուի. ինչ.

չդ = գեղեցիկ      չք = Բենիամին

Է) Փակագրութիւնը շատ սովորական ե-  
րեւոյթ մըն է վերոյիշեալ բոլոր պարագանե-  
րուն ալ. ինչպէս.

ռ = դրել      յ = Յորդանան

Ը) Համառոտութեան սովորական օրէնք-  
ներուն տարօրինակ հակագրութեամբ շատ ան-  
գամ բառին մէջէն ընտրուած տառ մը կամ  
տառեր, կամ նոյն իսկ միայն վերջատառը, կը  
ծառայեն իբր համառոտագրութիւն. ինչ. դղ  
= աղաղակ. ո = Անտոն. ր կամ շ = աշա-  
կերա. գօ = Անդրէ. ր կամ դր = Աղէքսանդր.  
գ կամ ի = Եգիպտոս. մ = Երեմիա, Եսբ  
= Մեսրոբ, ւղ = շաւիղ, մմ = ումման. ք  
= փղբր. ընչ = արարիչ. ճծ = Աստուած-  
ածին:

Նոյնը զարգերով կամ փակագրութեամբ.  
ինչ.

ա = Թագաւոր

բ = ռաբի

գ = պարգեւ

դ = եղեցի

Դ, Դ = որդի

Ե = կաթուղիկէ

Ը) Այս պարագային յետին արտասանու-  
թեան սխալները երբեմն պատճառ եղած են քիչ  
մը տարօրինակ համառօտագրութեանց. ինչ,  
դս = կաթուղիկոս. ւս = կոյս (իբր կոյս).  
բ = ֆիլիպպոս (մեկնուած է Բիլիպպոս, տես  
Տ. Վրդ. Պալեանի ցուցակը, էջ 10). զինկ =  
զմիանկամ:

Ժ) Հայերէն տառերու ձեւական նմանու-  
թիւններն ալ երբեմն պատճառ եղած են այս-  
պիսի տարօրինակ համառօտագրութիւններ ձեւ-  
ացնելու. ինչ, ղըր, որ եւ ոչ տառով մը կը  
յարմարի «անդորր», բառին, որմէ համառօտեալ  
է. բայց ղըր վարիանգը՝ որ նոյն բառին երկու  
վերջատառերը երեւան կը հանէ, կը ցուցնէ թէ՝  
ինչպէս որ ըր կըցած են շփոթուիլ եւ դառնալ  
ըր, նոյնպէս ղ պէպք է որ յառաջ եկած ըլլայ  
դ ձեւէն: Ջանազան ձեռագիրներու մէջ ունինք  
մը = Բաբելոն համառօտագրութիւնը, որ ըստ  
ինքեան անմեկնելի է. բայց Տ. Վրդ. Պալեանի  
ցուցակին մէջ ասոր տեղ կը գտնենք Բւն, որով  
կը հասկցուի թէ մը յետին տառական շփոթու-  
թեան մը արգիւնքն է:

Այս կարգի համառօտագրութիւններէն  
քանի մը հատ, որոնց որ ծագման ու կազմու-

Թեան պատմութիւնը կրնայ հետեւուիլ, նշանակած ենք վերը ցուցակին մէջ: Այսպէս օր. ~~միջոցի~~, որուն դէմ դրուած ձեւերէն երկրորդ շարքին առաջին ձեւը կը ներկայացնէ իբր փակագիր շտ, որմէ յետոյ յառաջացած է յն. ք գրին նման ձեւ մը եւ յետոյ ասկէ ալ նմանութեամբ տառաձեւը, թէեւ այս վերջինը ամենեւին կապ չունենայ ~~միջոցի~~ բառին հետ: Գոյնալէս է յ---ջ բառին նշանագիրը յ, որ յ եւ ջ տառերուն փակագրութիւնն է (պարու-նակելով ջ տառին գլուխը եւ յ տառին ստորոտը) եւ բնաւ կապ չունի յ տառին հետ:

Այս կարգին կը վերաբերին նաեւ շարք մը ուրիշ համառոտագրութիւններ՝ որոնք առաջին աննարկով տարօրինակ կը թուին. ինչ. պ = Սարգիս. ի° = խնամ. լք = Ամբակում. ծբ = Մետրոբ. ղբ = Եղիազար. բայց ասոնք ալ կը լուծուին շատ գոհացուցիչ կերպով՝ երբ ենթադրենք թէ տառական շփոթութեամբ ձեւացած համառոտագրութիւններ են. այսպէս վերիններուն նախաձեւերն ըլլալու են՝ պ = սր. ի° = խ. լք = մբ. ծբ = մբ. ղբ = ղբ:

Եւ) Ան այժմ բոլորովին անմեկնելի կը ձեան քանի մը բոլորովին կամայական համառոտագրութիւններ. ասոնք են՝ ւր = բամբակ. է կամ ը = Արիսողում. զ = Միւրթար. ւբ = Համբարձում. գ = աշխարհ. ծ = ապարանք: Ասոնց մեկնութիւնը գանելու համար փոքր ձեւերու պէտք կայ:

5. Այժմ անցնինք քննել Յուդակին եւ տնոր մէջ նշանակուած բուն նշանագիրներուն կազմութեան եղանակը:

Յուդակը ինչպէս կը տեսնուի, բաղկացած է երեք սիւնակներէ. առաջին սիւնակին մէջ նշանակուած են համառօտագրելի բառերը, որոնց գէմ երրորդ սիւնակին մէջ դրուած են համառօտագրութիւնները: Ասոնց թիւը զանազան է. քիչ բառ կայ որ միայն մէկ նշանագրով համառօտագրուած ըլլայ. սովորաբար ամէնքն ալ ունին 2, 3 եւ աւելի նշանագիրներ: Այն եւ ինչպէ՛ք բառերն ունին մինչեւ 11 ձեւ նշանագիր: Ինչէ՛ն է այս բազմազանութիւնը:

Ինչպէս յայտնի է բանասէրներուն, երբեք չէ եղած բնագիր մը՝ որ իր բոլոր արտագրութեանց մէջ անփոփոխ մնացած ըլլայ: Որեւէ գրիչ կամ արտագրող՝ ինչքան ալ խղճամիտ ըլլայ, բնականաբար ընդունակ է ընելու քանի մը գրչագրական սխալներ, որոնք յաջորդ արտագրողներու ձեռքով հետզհետէ աւելի պիտի շատնան: Եթէ այսպէս է պարզ գրերով գրուած գրութեան մը համար, ինչքան աւելին պիտի ըլլայ նշանագիրներու համար, որոնք ո՛չ միայն նկարիչ ձեռքի մը ճարտարութիւնը կը պահանջեն, ո՛չ միայն գծիկի մը ամենանուրբ տարբերութեամբ բոլորովին այլ ոճ ու ընթացք ստանալու վտանգին ենթակայ են, այլ եւ այս այլափոխութիւնները անգործ են: Արդարեւ պարզ գրչագրի մը համար անկարելի բան չէ, որ երկրորդ արտագրող մը առաջինին սխալը

Նկատէ եւ ուղիղը փնտռէ գանէ եւ ուղղէ. բայց  
Նշանագիրներու համար այսպէս չէ: Փոքրիկ  
տարբերութիւն մը՝ որ առաջին արտագրիչին  
ձեռքով յառաջացաւ, գրեթէ անկարելի է որ  
Նկատելի գառնայ երկրորդին եւ ուղղութեան  
ճամբայ բացուի: Իւրաքանչիւր ձեւափոխութիւն  
մշտական է եւ յարաճուն:

Ասոնց վրայ կ'աւելնան նաեւ գիտաւորեալ  
սրբագրութիւնները: Նշանագիր մը իբրեւ հա-  
մառօտագրութիւն կամ իբրեւ սղագրութիւն,  
ըստ կարելւոյն կարճ եւ արագ գրութեան ձեւ  
մը ունենալու է. այս ձգտումը ունեցած են բնա-  
կանաբար արտագրողները եւ աշխատած են ըստ  
կարելւոյն աւելի համառօտել, աւելի կարճե-  
ցրենել զանոնք: Այսպէսով բարդ ձեւերը հետ-  
զհետէ աւելի պարզուած եւ իրենց նախաւոր  
վիճակէն հեռանալով հասարակ եւ անձանաչ  
ձեւի մը վերածուած են: Այս պատճառով է  
դարձեալ որ շատ Նշանագիրներ մաշուելով  
կրճատուելով հասած են նոյն վախճանին եւ  
այսօր իրարմէ որեւէ զանազանութիւն չեն ներ-  
կայացներ: Այսպէս օրինակ օ կը նշանակէ  
“աղբիւր, դրախտ, երկիր, ընդհանուր, հան-  
գերձ, արառնչ”. օ “ազանդ, անդգամ, եր-  
կինք, հեռաւոր”. յ “անողորմ, խորան, ծառայ,  
Ստեփանոս”. լ “առաւօտ, խորան, աշխարհ,  
սերովբէ”. յ “հաւասար, յմք, վերակացու”,  
| “աղքատ, Բիւզանդիոն”. ր “կառարած,  
փարաւոն, փոխ”. օ “Բիւզանդիոն, որպէս, պա-  
տարագ, իբրեւ, երկինք, լուսաբեր”. Վ “Ահա-

րոն, Թովսէս, Պետրոս, Խոստովան, Ք "առաքեալ, մարգարէն. Ս "լուսարեր, Արուսեակ, անարգ, պատարագ, եւն եւն, Ինչպիսի ճիշտ նմանութիւն ասորեստանեան կամ չինական գաղափարանշաններու հետ:

Վերոյիշեալ պայմաններն ի նկատի ունենալով տարօրինակ պիտի չթուի անշուշտ, եթէ ըսենք թէ գրեթէ չկայ ձեռագիր մը՝ որ ուրիշ ձեռագրի մը նշանագրերուն հետ ձեւական ճիշտ նմանութիւն ունենայ: Նախկին հրատարակիչները միայն մէկ ձեռագիր ի նկատի ունեցած ըլլալով, իրենց ցուցակներուն մէջ հրատարակուած բառերն ալ միայն մէկ նշանաձեւ ունին: Իսկ մեր նշանագրերը քաղուած ըլլալով 14 հաւաքածուներէ (ձեռագիր կամ տպագիր), բնական է որ շատ բազմազան ըլլային: Այս զանազան ձեւափոխութիւնները գասաւորելու համար հարկ էր դիմել մասնաւոր սկզբունքի մը: Ասոր համար կար երկու միջոց.

ա) նշանագիրները կարելի էր դասաւորել համաձայն ձեռագիրներու, նշանակելով իւրաքանչիւր բառի դէմ թէ ինչ ձեւեր ստացած է նա թիւ 1—14 ձեռագիրներուն մէջ:

բ) կարելի էր նոյն զանազան ձեւերը գասաւորել ըստ զարգացման, այսինքն մեկնելով ամէնէն բարդ եւ սկզբնական ձեւէն՝ յաջորդաբար անցնիլ աւելի պարզուած մաշուած ձեւերուն, համաձայն այն պայմաններուն՝ որ քիչ մը վերը բացատրեցինք:

Ծեղի համար լաւագոյն թուեցաւ այս երկրորդ միջոցը, որուն եւ հետեւեցանք:

Եթէ նշանագիրները քննենք առանձինն անջատաբար, առանց համեմատութեան եզրներ ունենալու, դժուար է անոնց նախնական ձեւը, հետեւաբար կազմութեան պատմութիւնը գուշակել: Բայց երբ աչքի առջեւ բերենք միեւնոյն նշանագրին զանազան աւելի կամ պակաս բարդ ձեւերը, անոնց համեմատական ուսումնասիրութեամբ կարելի է երեւան հանել թէ ինչ նախապի ունէր նա, որմէ հետզհետէ փոփոխուելով յառաջ եկած է նորագոյն զարգացեալ ձեւը: Ահա այս զարգացման ժամանակագրական ընթացքով շարած ենք մենք ալ նշանաձեւերը մեր ցուցակին երրորդ սիւնակին մէջ:

Կան բառեր որոնց նշանաձեւերը իրարու հետ բնաւ կապ չունին, կամ գոնէ մեր այժմեան միջոցներով չենք կրնար անոնց մէջ որեւէ կապ գտնել: Այսպէս օրինակի համար ~~անգո-ի-ր~~ բառին համար ունինք երեք նշանաձեւ, մին քառանկիւնի եւ միւս երկուքը շրջանակաձեւ, որոնք իրարու հետ չեն կրնար կապուիլ: Պարզ է որ ասոնք տարբեր տարբեր նշանագրեր են. ուստի մենք ալ Ցուցակին մէջ նշանակած ենք տարբեր տողերով եւ իրարմէ անջատ: Աւելի շատ են այնպիսիները՝ որոնք թէեւ կը կազմեն քանի մը նման նշանաձեւերու խումբեր, բայց այդ խումբերուն մէջ բնաւ կապ չկայ: Օրինակ ըլլայ ~~բբ-ի-ր~~ բառը, որ ունի 12 նշանաձեւ, որոնք կրնան երեք խմբի տակ դասաւորուիլ. առաջին

խումբը ունի 3 նշանաձեւ, երկրորդը 4 եւ երրորդը 5, որոնք թէեւ իրենց մէջ նման են, բայց ոչ նաեւ խումբէ խումբ, հետեւաբար եւ երեք տարբեր նշանագրեր են մեզի համար:

Նշանագիրներու կազմութեան եւ դարգացման քննութիւնը երկու տարբեր ուղղութիւններ երեւան կը հանէ.

1. Նշանագիրները կազմուած են նախնական պարզ կամ փակագիր տառախումբէ մը, որ նոյն բառին համառոտագրութիւնը կը ներկայացնէ. ասիկա հետզհետէ այլափոխուելով եւ զանազան ԴՂԻՆ յե-եբէ անցնելով<sup>1</sup> վերջապէս ձեւացած է անորոշ նկար մը, որուն շրջագիծը ոչ կը ներկայացնէ այն առարկային պատկերը, զոր կը նշանակէ, եւ ոչ ալ այն համառոտագրութիւնը, որուն հետքերը կը կրէր առաջ: Ցուցակին երկրորդ սիւնակին մէջ դրած ենք բոլոր այս ձեւերուն ծագումը, այսինքն այն տառերը՝ որոնցմէ կազմուած էր բառին առաջին եւ նախնական համառոտագրութիւնը: Իսկ (փկ) ձեւով կը նշանակենք այն նշանագիրները, որոնց նախաձեւը կազմուած է բարդ փակագրէ մը, ուր կարելի է նշմարել մայր բառին տառերէն քանի մը հատը:

2. Նշանագիրները ուղղակի նշանակած առարկային պատկերն են. բայց այս պատկերը

1 Միջին ձեւերէն է՝ ու ԴԼԵ ենթադրութեամբ կամ երեւակայութեամբ հնարուած է. այլ ցուցակին մէջ դրուած բոլոր ձեւերն ալ՝ առանց բացառութեան արտակարգուած են ընագիրներէն:

հետզհետե այլափոխուելով, ձեւացած է դարձեալ անորոշ շրջագիծ մը, որ պատկեր լինելէ շատ հեռու, առի մը խառնակ ձեւափոխութիւնը լինելու երեւոյթն ունի:

Առաջին տիպարին իրրեւ գեղեցիկ օրինակ կը ծառայեն.

ա) Աշտարակ. հոս ներկայացուած առաջին ձեւը կը ներկայացնէ փակագիր Ան, որ անգաստան բառին համառօտագրութիւնն է. երկրորդ եւ երրորդ ձեւերը նոյնին քիչ մը անփոյթ կերպարանքն ունին. բայց չորրորդը աւելի բազուկի կամ ծխամորճի նկարն է, քան առաջինը: Առաջին ձեւը կը նպաստէ լուծելու նաեւ երկրորդ շարքին երկու նշանները, որ ասոնց հետ կապ չունին, եւ նոյնպէս կը ներկայացնեն ահա համառօտագրութիւնը. այս պատկերներուն աջ մասը նօսրագիր — առան է, իսկ ձախ կողմը գանուած կլորակը ն առին գլուխն է:

բ) Արտաշէս. առաջին անջատ եւ երկրորդ փակագիր ձեւերը կը ներկայացնեն ւծ համառօտագրութիւնը, որ երկիցս փոխուելով՝ դարձած է հինգերորդ ձեւին, որ աւելի զարգանկար մըն է:

գ) Եփեսոս. առաջին ձեւը կը ներկայացնէ նօսրագիր ելի, որ շուտով այնպիսի զարգացում կրած է որ դարձած է եկեղեցւոյ մը իսկական պատկերը՝ գմբէթով ու խաչով կամ սրածայր կաթուղիկէով:

դ) Յօշոտ. առաջին ձեւը կը ներկայացնէ չա՛ր գրի ձեւագրին նման գրութեամբ. յա-

ջորդներուն մէջ նախապէր կորսուելով, վերջապէս ձեւացած է պտուղներու սիրուն փնջիկ մը՝ կոթով միասին:

է) Հանգուր. առաջինը շատ հասարակ համառօտագրութիւն մըն է. երկրորդին մէջ հ դարձած է փակագիծ. երրորդը՝ ամբողջապէս փակագրուած է, եւ չորրորդին մէջ վերջապէս ձեւացուցած է բազմոցի քառակուսի բարձ մը՝ չորս փունջերով, որոնց օղակները ճ եւ ը տառերուն փաթթուածքներովն են կազմուած:

զ) Փառաւոր. առաջին նշանը է սկզբնատոին ձեւափոխութիւնն է, ինչպէս են նաեւ քառուրդ, քառ բառերուն առաջին ձեւերը. բայց այս է ձեւը շուտով աւելի փոխուելով՝ դարձեր է շղթայ կամ համրիչ:

ի) Մարգարէ. է ձեւէն դարձած է սունկ կամ մուրճ:

ը) Մերկուր. համառօտուած է նօսրագիր եւ փակագիր մէ, որ յետոյ դարձեր է ճարմանդ կոճակի մայր:

թ) Պարսեփ. ոչ նախաառը իւր կլորակ պատիւով դարձած է վերջապէս միոտանի սեղան մը, որ պատարագին ներկայացուցած գաղափարին ալ համաձայն է:

Երկրորդ տիպարին ամենէն բնորոշ օրինակներն են.

ա) Միւր. առաջին ձեւը լեզուի նիւթական նկարն է, որ չորրորդ աստիճանին հասած է առաւանակին շատ մօտիկ:

բ) Արի-ն. առաջին ձեւը կը ներկայացնէ նորածագ արեւը՝ իր ամբողջ սկաւառակով եւ արձակած ճառագայթներով, որոնք հետզհետէ կը կրճատուին. վերջապէս կը հասնի հորիզոնական գրուած գլխաւոր թիւ:

գ) Ա-տ-ւ-ւ. նկարուած է նախ գիւրք մը բացուած ձեւով, որ հետզհետէ սղուելով՝ գարձած է քառակուսի մը, յետոյ նամակի պահարան, այնուհետեւ գամ հանելու աքցան եւ վերջապէս մէջէն կիսուած շրջանակ մը, նման օտառաձեւին:

դ) Դ-ւ-ւ. նկարուած է նախ երկաթեայ գռան մը մէկ փեղկը՝ վերին եւ ներքին ծխնիներով. բայց ամենէն յետոյ դարձած է պարոյկ նշանին նման բան մը:

ե) Յօւ. առաջինը կամարաւոր յօնք մըն է. երկրորդին մէջ յօնքը պոստուած է, երրորդին դարձած է -:

զ) Նշ-ւ-ւ. նախ դրուած է նշխարքի մը պատկերը՝ վրան խաչի նշանով. յաջորդին մէջ ձապած է միայն խաչը, որուն ուղղահայեաց մասը երկարելով եւ ոլորուելով՝ դարձած է յետոյ նօտագիր Գ:

Պէտք է նկատել սակայն որ ԱԻ. քանի մը նշանագիրներու նախաձեւերը աւանդուած չեն. այնպէս որ ասոնց զարգացման պատմութիւնը երեւան հանելու համար, հարկաւոր է միայն գուշակութիւններ ընել: Օրինակ՝ այսպէս բառին գէմ դրուած է պատուհանի ձեւով նշանագիր մը, որ կազմուած ըլլալու է -, ,, Կ եւ ւ տա-

ուերէն՝ փակագրութեամբ: Գլխաւոր թաղանձարն է տեսակ մը գլխարկ, որ յետոյ եղած է գարեջուրի բաժակ, ասկէ ալ գուրգայ եւ վերջապէս կոր եղերքով քառանկիւն մը: Սակայն պէտք է որ իր նախաձեւին մէջ պարունակէ թ եւ ծ տառերուն փակագրութիւնը: Սիւլք բառը նշանակուած է չակերտով մը եւ պարոյկով մը, որոնք ներկայացուցիչ ըլլալու են « եւ ն տառերուն: Սակայն թաղանձարը՝ որ կաթուղիկէի կամ սրտի ձեւն ունի, ծագած է « եւ հ տառերէն: Կարգաւոր չակերտն է ը եւ շ ձեւերէն, թէեւ այժմ միայն պարոյկ մը կը ձեւացնէ: Ստեփանն եւ իսկին գլխաւորապէս կազմուած են X ձեւով նշանէ մը, որ չ գրին հետ շատ նման չէ, բայց երկուքին համեմատութիւնը, ինչպէս եւ վրան ագուցուած ն, «, Լ տառերը կը ցուցնեն թէ չ գրին կերպարանափոխութիւնն է: Արձաւոր թաղանձարը կը թուի թէ շ, լ, ը, « եւն տառերով կազմուած փակագրութիւն մ'է:

Բ. Խումբ մը նշանագրեր այնպիսի ձեւեր են ստացած, որ կրնան թէ տառաձեւէ եւ թէ պատկերէ յառաջացած կարծուիլ: Օրինակ՝ Կարգաւոր նշանագիրը կը ներկայացնէ թէ զարգարուն « եւ թէ ճառագայթարձակ արեւ մը: Յետոյ կրնայ նկատուիլ թէ իբր խարխիս՝ որ նշան է ապահովութեան եւ թէ իբր փակագիր յը կամ յը տառերուն: Օ՛ նման է թէ օձի եւ թէ « եւ յ տառերուն: Մեզի համար առանց տարակոյսի է թէ բոլոր այս եւ այսպիսի նշան-

նագրերը բուն տառաձեւէն կը ծագին, իսկ պատկերական նմանողութիւնը յետին գործ է:

գ. Քանի մը բառեր իրենց նշանագիրը փոխ առած են հոմանիշ ձեւէ մը. օրինակ ԳԻՐՈՐ՝ ծագած է ԵԼԵԴԵԴ ԲԱՌԷՆ, ԷՐԵՐ՝ ծագած է ԳԵՐԵՐՈՐԷՆ. ԴԵՂԻ՝ բառին նշանագիրները ծագած ըլլալու են ԴԵՐ ԵՐԵՆ՝ ԵՒ ԻԲԵՐ՝ ԲԱՌԵՐԷՆ: Նոյն պիսի փոխառութիւն մը կայ ոչիւրէն ԵՒ ԵՐԵՐ, ԵՒ ԹԵՐԵԼՍ՝ ՈՂԵՐ ԵՒ ԷԵՐՅՈՒՄ՝ հոմանիշ ներուն մէջ:

Աւելի հետաքրքիր է ԴԺԻԻ, որուն նշանագիրը քն համառօտագրութիւնն է, յետոյ խանգարուելով դարձած յ: Արդ այս քն ուրիշ բան չէ, բայց եթէ ԴԺԻԻ հոմանիշ քնէն բառին կանոնաւոր համառօտագրութիւնը:

դ. Մերձաւոր նշանակութեամբ բառերն ալ մերձաւոր նշանագիրներ կ'ունենան, որոնք իրարմէ շինուած են. ասոր գեղեցիկ օրինակ են ՊԻՐԵՆ, ԲԻՐԵՆ, ԵՒ ԵՐԵՆ ԲԱՌԵՐԸ, որոնց նշանագիրները իրարու հետ անձուկ նմանութիւն կը կրեն: Ասոնց մայրն է ԲԻՐԵՆ, որուն նշանագիրը փակագրութիւն մ'է՝ ԿԱՂՄԻԼԱԾ Ե, Բ, Բ, ԵՒ ԵՒՐԷՆ. միւս երեքը կազմուած են ասկէ փոքրիկ ձեւափոխութեամբ: Նոյնպիսի նմանութիւն կայ նաեւ երկինք ԵՒ ԵՐԿԻՐ, Արուսեակ ԵՒ ՂՈՍԱՔԵՐ ձեւերուն մէջ, որոնք իրարմէ կազմուած են: Շատ հետաքրքիր են ՊԵՂԵՒ ԵՒ ՊԵՐԵՒՍ ԲԱՌԵՐԸ. երկուքն ալ երկբական նշանագիր ունին՝ իրարմէ շինուած. ՊԵՂԵՒ՝ ստացած է ոչ տառէն կազմուած նշանագիր մը՝ զարգերով, երկրորդ՝ լատինական

Եւ տառը, որ նոյն անուան սկզբնատառն է, եւ երրորդ՝ անորոշ նշանագիր մը՝ որ լի ձեւն ունի։ Պետրոսին նշանագիրներն են նախ՝ սկզբնատառը հասարակ պատիւով մը, երկրորդ՝ լատինական Ե-ին շրջուած ձեւը եւ երրորդ՝ նոյն անորոշ լի նշանին նոյնպէս շրջուած Վ ձեւը։

Ե. Փակագրութիւնը երբեմն հասած է այնպիսի կատարելութեան, որ պարզագոյն ձեւի մը մէջ կ'ամփոփէ բառին բոլոր գրերը. ասոր շատ գեղեցիկ օրինակ է թիւ 402ա, որուն մէջ ~~պատիւ~~ բառին բոլոր ութը գրերն ալ ներկայ են. թիւ 371 կը պարունակէ ~~բառին~~ բառին չորս գրերը. թիւ 283ա կը պարունակէ ~~բառին~~ բառին գրեթէ բոլոր գրերը. թիւ 340 կը պարունակէ ~~բառին~~ բառին գրեթէ բոլոր գրերը։ Նոյնպէս ըլլալու է նաեւ ~~պատիւ~~ (թիւ 106), որ անկիւնաւոր խաչի մը մէջ պարփակած է բառին տառերուն մեծագոյն մասը։

զ. Խնդիր է գիտնալ թէ նշանագրերու կազմութեան մէջ օտարազգի տառեր ալ մասնակցութիւն ունեցած են։ Իս. Յարութիւնեան, Հայոց գիրը, էջ 109, ասոր հաստատական պատասխան կու տայ եւ իբր օրինակ կը յիշէ ~~բառին~~ (թ. 275μ), ~~բառին~~ (թ. 280դ), Պօլոս (թ. 369գ), ~~բառին~~ (թ. 387ա) նշանագրերը։ Բայց ասոնց մէջ մենք օտար տառ չենք տեսներ։ Թերեւս հեղինակը ուզէ նմանութիւն գտնել արար. Շ, յն. չ եւ լատին. T տառերուն հետ, բայց Բն ձեւով կարելի պիտի ըլլայ այս տա-

ուերը կապել վերի բառերուն հետ: Յայտնի է որ այս օրինակները բոլորովին անօգուտ են:

Մեր կողմէն կրնայինք աւելցնել քանի մը ուրիշ օրինակներ, որոնք նմանութեան աւելի յաջող հանգամանքներ կը ներկայացնեն. ինչպէս՝ Ս-Կ-Լ-Յ բառին չորրորդ նշանագիրը  $H$ , իբր լատին  $H$  տառը, որուն հետ նոյն կու գայ նոյն բառին հինգերորդ նշանագիրը, իբր հայերէն  $Հ = H$ : Միջուկ բառին երրորդ նշանագիրը ճիշտ արաբերէն  $ج$  տառախումբն է (իբր  $ج$  և  $ح$ ): Բայց ինչ կապ կայ Սաաանայի եւ  $H = Հ$  տառերուն մէջ կամ Միջնորդին եւ Վէթիլին մէջ: Եւ ոչ մէկ, կը նշանակէ թէ ասոնք ալ անօգուտ օրինակներ են:

Ընդհակառակը սակայն շատ ապահով կը գտնենք Պօղոս եւ Պետրոս բառերը, որոնք՝ ինչպէս քիչ մը վերը նկատեցինք, կաղմուած են լատին  $B$  տառէն, որ նոյն անուններուն նախատառն է՝ արեւմտեան արտասանութեամբ: Ասկէ պակաս ապահով չենք համարիր «եղ-ն բառը» որուն առաջին նշանագիրը կը ներկայացնէ  $յն$ .  $T$  իբր նախատառը  $\tau\rho\acute{\alpha}\pi\epsilon\zeta\alpha$  «սեղան», բառին, որ հայոց մէջ շատ ծանօթ բառ մ'էր եւ մինչեւ իսկ այսօր ալ գործածական է քանի մը գաւառական բարբառներու մէջ:

Է. Օտարներէ փոխառեալ նշանագիրներու մմբողջ շարք մը կայ սակայն, որ նախորդներուն հետ նմանութիւն չունի բնաւ. ասոնք աստղաբաշխական բառեր են, այսինքն կենդանակերպներու եւ մոլորակներու անունները,

որոնց նշանագրերը ընդհանուր գիտութեան մէջ  
ընդունուած ձեւերն են. ասոնք են՝ Զրհոս,  
Չուհն, Խոյ, Ցուլ, Երկաւոր, Խեցգետին, Առիւծ,  
Կոյս, Կշիռ, Կարիճ, Աղեղնաւոր, Այծեղջիւր,  
Փայլածու, Լուսաբեր, Երկիր, Հրատ, Լուսն-  
թագ, Երեւակ: Չենք հաշուեր Արեգակն ու Լու-  
սինը: Ասոնցմէ ձեւացած են մեր մէջ՝ Արուսեակ  
(= Լուսաբեր ձեւէն), Երկինք (շրջուած՝ Եր-  
կիր բառէն) եւ աշխարհ (որ նոյն երկիր բառն  
է): Այս բառերը ցուցակին մէջ նշանակած ենք  
— նշանով, գէմն ալ դնելով ստոյգ եւրոպա-  
կան ձեւերը:

Այս բոլոր պայմաններն ու օրէնքները ի  
նկատի ունենալով, վերիցուցակին մէջ գտնուած  
454 նշանագրերը՝ որոնք կը համապատասխա-  
նեն 367 բառերու կամ գաղափարներու, կրնանք  
բաժնել չորս տեսակի.

ա. Զանազան տառաձեւերէ եւ պարզ  
կամ փակագիր համառօտագրութիւններէ յա-  
ռաջացած նշանագրեր, այս բաժնին կը պատ-  
կանի նշանագրերու մեծագոյն մասը, թուով  
298 հատ, որոնք ցուցակին մէջ առանձին նշա-  
նով մը նշանակուած չեն:

բ. Բուն պատկերագիր նշանագրութիւն-  
ներ, որոնց նախատիպը տակաւին որոշակի կը  
պահէ ներկայացուցած առարկային իսկական  
պատկերը. ասոնց թիւը 31 հատ է՝ որոնք ցու-  
ցակին մէջ նշանակուած են + նշանով:

Այս պատկերագրերն են. Ա՛ռ, Կ՛շիռ, Կ՛շիռ-  
աշիռ, Կ՛շիռ-աշիռ, Կ՛շիռ-աշիռ, Կ՛շիռ-աշիռ, Կ՛շիռ-  
աշիռ:

Գ-ին, Կ-ին, Զ-ին (կը ներկայացնէ  
 տնկուած երեք ծաղիկ), Է-ին (կը ներ-  
 կայացնէ գինիի աիկ մը), Ը-ին (կը ներկայա-  
 ցնէ գռան մը փեղկը՝ վերին եւ ներքին ծխնի-  
 ներով՝ արեւելեան ձեւով. յայտնի է որ հին  
 արեւելեան ձեւով ծխնիները դռան քովէն  
 ագուցուած չեն, այլ վերի եւ վարի ծայրերը).  
 Եղիւ-ր, Երիւ-ժ, Երիւ-ժ (բացուած զմեջի մը պատ-  
 կերն է), Բ-ին (կը ներկայացնէ հնաձեւ  
 թագ մը), Երիւ-ժ, Երիւ-ժ (կը ներկայացնէ  
 Երիւ-ժի մը մէկ նժարն է՝ թելով կա-  
 խուած), Երիւ-ժ (ճակտին վերին եզերագիծն է եւ  
 մէկ յօնք՝ փոխանակ երկուքի. հնագոյնին մէջ  
 կրնար գտնուիլ երկու յօնք, ինչպէս որ Երիւ-ժ  
 Երիւ-ժին մէջ ալ երկու աչքը վերածուած է  
 մէկի), Երիւ-ժ, Երիւ-ժ (երեք կլորիկ  
 պտուղ՝ սալորի, խնձորի նման եւն), Երիւ-ժ, Երիւ-ժ  
 (խաչանիշ մը դրուած միայն), Երիւ-ժ  
 (բերանաբաց վիշապի մը  
 տեսքով պատկերն է), Երիւ-ժ (ցուցամատը պար-  
 զած եւ միւս մատերը ծալած ձեւք մը,  
 իբր 3):

Պատկերագրերու խնդիրը առհասարակ  
 շատ փափուկ եւ զգուշալի է։ Նշանագրեր՝ որոնք  
 մեզի պատկեր կը թուին, կրնան իրօք պատկեր  
 չըլլալ։ Այսպէս՝ օրինակ Երիւ-ժ բառին նշա-  
 նագիրը այնպէս պարզ եւ որոշ է՝ որ ամէն մարդ  
 ալ պիտի ընդունի իբր եկեղեցիի նկար մը՝ խա-  
 չով եւ կաթուղիկէով։ Այսպէս ընդունած էի  
 ես ալ մինչեւ վերջերս, երբ ծանօթ չէի Տրդատ

վրգ. Պալեանի Յուցակին: Վերջին անգամ  
ձեռք բերելով նոյն աշխատութիւնը՝ տեսայ էլ  
Համառոտագրութիւնը՝ այնպէս յարմար ձեւ-  
ուած, որ այլ եւս տարակոյս չմնաց ինձ Համար  
թէ տաճարի պատկերը նոյն Համառոտագրու-  
թենէն ձեւաւորուած է յետնաբար:

Այսպէս սխալած է նաեւ Էմին, որ իր  
Հրատարակած բոլոր 84 նշանագրերն ալ պատ-  
կերագիր կը կարծէ, ոմանց մասին առանձին  
բացատրութիւններ ալ տալով: Օրինակ՝ «չէ-  
(Թ) նշանագրին մէջ կլորակը կը Համարի ջուրին  
ակունքը, իսկ կլորակին քովի գծիկը՝ նոյն ակուն-  
քէն թխած ջուրին ընթացքը: Անդհաբան նշա-  
նագրին Համար կը կարծէ որ Հին Հայոց արօրին  
Հեռ նմանութիւն մ'ունեցած ըլլայ: Եւ չէ-  
նշանագրին մէջ գտնուած զիկզակը կը Համարի  
Հին Հայոց երաժշտական խաղերէն մէկը եւս:  
Սակայն այս բոլորը աչքի խաբէութիւն է,  
գլխաւորապէս յառաջացած նախատիպ ձեւերու  
բացակայութենէն: Եթէ ընթերցողը Համեմատէ  
այս նշանագրերուն նախատիպերը մեր ցուցակին  
մէջ, պիտի տեսնէ որ բոլորն ալ գրերու Համա-  
ռոտագրութիւն են. «չէ-» = «-», «անդհաբան»  
= Ա, «է-» = «-»:

Մեր նշանակած պատկերագրերուն մէջ ալ  
կրնան գտնուիլ այնպիսիներ, որ իրօք յետին  
ձեւակերպութիւն ըլլան: Օրինակի Համար՝ կաս-  
կածելի կը թուին յատկապէս «-»-ը, «-»-  
ը, «-»-ը: Աւետարանը կրնայ պարունակել «-»  
տառերը, «-»-ը, «-»-ը, «-»-ը, «-»-ը կը

Թուի կազմուած ըլլալ - տառէն՝ որ յետոյ միջակէտ մը դարձած է, ճիշտ ինչպէս որ ~~գործ~~ բառին մէջ փոքրիկ կլորակի մը վերածուած է: Սակայն մեր այս կասկածները հաստատելու միջոց չունենալով, ստիպուած կ'ըլլանք ընդունելու իրրեւ պատկերագիր:

Գ. Օտարներէ փոխառեալ նշանագրեր, որոնք ընդ ամէնը 21 հատ են եւ ցուցակին մէջ — նշանով նշանակուած աստղաբաշխական բառերն են:

Դ. 'Նշանագրեր' որոնց ծագումը յայտնի չէ. ասոնք կրնան ըլլալ այլափոխեալ փակագրութիւններ, բայց կրնան ըլլալ նաեւ պատկերագիր կամ գաղափարանշան, եւ այսպէս պատկանիլ առաջին կամ երկրորդ տեսակին: Ասոնց թիւը 104 է եւ ցուցակին մէջ նշանակուած են \* նշանով:

Ե. Նշանագրերու կազմութեան եւ այլ հանգամանքները այս ձեւով պարզելէ յետոյ, կրնանք քննել այն խնդիրը թէ նշանագրերը կրնան ըլլալ նախամեսրոբեան մեհենագրոշմ կամ գաղափարագիր նշաններ (էփն), հաթեան նշանագրերու մնացորդ (Հ. Գ. Գ. եւ Հ. Իս. Սրապեան) եւ կամ վերջապէս Դանիէլեան գրերը (Հ. Իս. Սրապեան):

Նշանագրերը չեն կրնար ըլլալ մեհենագրոշմ գրութեան մը նշանները, որովհետեւ՝

Նախ, ինչպէս տեսանք, անոնց ամենամեծ մասը, 298 նշան, կազմուած է հայերէն տառերու վրայէն, ուստի եւ կը պատկանի յետմես-

որոնք են շրջանին. մինչև իսկ ումանք շատ աւելի յետին են, որովհետեւ կը կրեն տառը, որ մեսրոբեան այբուբենին մէջ գոյութիւն չունէր (այս մասին աւելի ընդարձակ տես յաջորդ թուահամարը):

Երկրորդ. միայն 31 նշան կայ, որ կրնանք հաստատ կերպով գաղափարանշան կամ պատկերագիր համարել (չհաշուելով աստղաբաշխական նշանները՝ որ հայ մտքի ծնունդ չեն): Ասոնցմէ ալ գեռ չորսը յետին է, որովհետեւ քրիստոնէական ժամանակի բացատրութիւն են. ինչ. Աւետարան, խաչ, նշխար, վերին Երուսաղէմ: Ուրեմն ընդ ամէնը 27 պատկերագիր:

Երրորդ. եթէ մինչև իսկ բոլոր 104 անծանօթ նշանագիրները համարինք գաղափարանշան, հանելով ասոնցմէ 17 յետին կամ յետքրիստոնէական բառերը (Աբբ-հ-մ, աղ-ն-դ, Ան-ի, Ան-ի-ի, Բի-ղ-ն-դ-ի-ն, Ե-ի-ի-ի, Ի-ն-դ-ն-դ, Լա-ղ-դ-դ, Լի-ն-ն-ն, Հի-ի-ի, Թ-ի-ի, Պ-ի-ի, Ս-ի-ի-ի, Ս-ի-ի-ի [3 նշան], Ս-ի-ի-ի), կ'ունենանք 87 նշանագիր, որ նախորդ 27 պատկերագրերու հետ կը կազմեն 114 նշանագիր, համապատասխանելով մի. միայն 98 բառերու կամ գաղափարներու: Այս 98 բառերը բաւական չեն ամենատարրական իմաստ մ'անգամ մեհենադրոշմ գրութեամբ արձանագրելու: Այս նպատակին հասնելու համար պէտք է ամենաքիչը քանի մը հարիւր նշան, չըսելու համար հազարաւոր, ինչպէս են եգիպտական մեհենադրոշմները:

Գալով հաթեան նշանագրերուն, կրնար ըսուիլ թէ ասոնք աւելի կապ ունենային մեր

նշանագրերուն հետ. գոնէ արտաքին երեւոյթը  
 այսպէս կը ցուցնէ. նախ թուի կողմէ հակառա-  
 կութիւն չկայ, որովհետեւ հաթեան նշանները  
 ընդ ամենը 92 հատ լինելով, կրնան շատ ճիշտ  
 յարմարիլ (ենթադրեալ) մեր 98 բառերու  
 կամ 114 փաղափարանշաններու թուին: Եր-  
 կրորդ շատ նշաններ ձեւով նոյն են մերիններուն  
 հետ. այսպէս օրինակ հաթեան թիւ 1 նշանա-  
 գիրը ① «Աստուած» նման է մեր Աւետարան  
 ① կամ սանգուիք (թ. 381μ) եւ կամ սեղան  
 (թ. 389) ձեւին. նոյնպէս թիւ 2 Syennesis  
 Աստուած Ս = Դրախտ (թ. 143դ).  
 թիւ 4 sr = dsario «Թագաւոր» 𐎎 = Թա-  
 գաւոր (թ. 174). թիւ 5 dsario? «Թագաւոր»  
 𐎎 = յօնք 𐎎. թիւ 7 tii «էր» 𐎎 =  
 դրախտ (թ. 143դ). թիւ 10 Δ dsarayi «Ժա-  
 ոայ» = Δ լեռոն. թիւ 11 𐎎 zapa «Ժա-  
 ոանգ» = Սահակ (թ. 374ա). թիւ 14 𐎎  
 hati = փարթամ (թ. 438μ). թիւ 16 𐎎  
 Կարկէմիշ = Ճմարիտ (թ. 275դ). թիւ 26  
 𐎎 k, ka, ak = մարգարէ (թ. 279դ).  
 թիւ 29 𐎎 n, ni = տես (թ. 422).  
 թիւ 27 𐎎 t' = եղբայր (թ. 147μ). թիւ 31  
 ① m = ① Աւետարան. թիւ 32 𐎎 p', w =  
 փոխ. թիւ 38 𐎎 mi = 𐎎 սկիզբ. թիւ  
 40 \ բառասկիզբ կամ բառավերջ = / Ժա-  
 ոայ. թիւ 41 |( բառասկիզբ = || Եսայի.  
 թիւ 43 𐎎 բառանշան = 𐎎 ղեակ. թիւ 44  
 𐎎 նշան ուղղականի = փարթամ (թ. 438բ):

Աւելցնենք նաեւ ուրիշ յաջող համեմատութիւններ. ինչպէս իշարա Աստուածուհին եւ անդունդ (թ. 47բ), arwa «Թագաւոր, իշխան» եւ յափշտակէ (թ. 308բ), bhurain? «տիրող, բռնաւոր», եւ շուշան (թ. 332), պաշտօնակալ (Würendträger) եւ առաջնորդ (թ. 78ե), մարտիկ եւ պտուղ (թ. 366ա) կամ ցնծա՝ (թ. 427դ), šē' եւ հեթանոս (թ. 248բ), բառավերջ եւ տնանկ (թ. 423ա) եւ այլն: (Այս վերջին օրինակներուն հաթեան ձեւերը տես Ենսէնի ցուցակին մէջ):

Բայց ինչ արժէք կրնան ունենալ այս համեմատութիւնները, երբ նշանակութեան կողմէ կապակցութիւն չկայ բնաւ: Եւ արդարեւ ինչ կապ ունին իրարու հետ ծառայ եւ լեռոն, Թագաւոր եւ յօնք, Ժառանգ եւ Սահակ, Կարկեմիշ եւ Ճշմարիտ եւն եւն: Իմաստի կողմէ քիչ թէ շատ յարմարող միակ ձեւերն են թիւ 1 Աստուած եւ Աւետարան, թիւ 4 dsario եւ Թագաւոր (երկուքն ալ հոմանիշ), arwa «Թագաւոր, իշխան» եւ յափշտակել, պաշտօնակալ եւ առաջնորդ, թիւ 14 hēti «հաթեան, հայ» եւ փարթամ: Բայց դժբախտաբար ասոնցմէ ալ երեքը (առաջնորդ, յափշտակել, փարթամ) մետրոքեան տառերու վրայ ձեւացած համառօտագրութիւններ են եւ ոչ գաղափարանշան, մէկն ալ (աւետարան) յետքրիստոնէական բառ: Թագաւոր ձեւն է միայն՝ որ ամէն կողմէ կրնար յարմարիլ, բայց միակ այս բառին վրայ հիմնուելով ենթադրութիւններ ընելն ալ բանաւոր չէ:

Աւելորդ կը համարինք վերջապէս խօսիլ  
Դանիէլեան գրերու մասին ալ, որովհետեւ ամե-  
նեւին տարակոյս չկայ որ այս գրերը ձայնական  
գրութեամբ (տառեր) ըլլային, մինչդեռ մեր  
նշանագրերը ամբողջական բառեր ըլլալով, բնա-  
ւէն կրնար յարմարիլ անոնց հետ:

Եզրակացութիւնն այն է որ վերոյիշեալ  
ցուցակին մէջ գտնուած բոլոր նշանագիրները,  
պատկերագիր թէ համառօտագրութիւն, յեա-  
մարորեան շրջանին հայերէն տառերու վրայ  
ձեւուած կամ առարկային պատկերէն առնուած  
նշաններ են, եւ բնաւ կապ չունին մեհնագրոշմ-  
ներու եւ հաթեան կամ գանիէլեան նշանա-  
գրերու հետ:

7. Ե՞րբ կրնայ ըլլալ, գոնէ մօտաւորա-  
պէս, հայ նշանագրերու հնարման ժամանակը:

Այս բանը որոշելու համար երկու գլխաւոր  
հիմնակէս ունինք. —) ձեռագիրներու ժամանակը.  
բ) նշանագրերու տառական կազմութեան եղա-  
նակը:

Նշանագրերու ցուցակ պարունակող ձե-  
ռագիրներէն հնագոյնը Պերլինի արքունի մա-  
տենագարանի թիւ 805 ժողովածուն է (Ֆրէ-  
տէրիք Մուրատի հրատարակածը), որ գրուած  
է 1564 թուին: Ասկէ յետոյ կու գան Լազա-  
րեան ճեմարանի թիւ 141 ձեռագիրը (Էմինի  
եւ Իս. Յարութիւնեանի հրատ.), գրուած  
1620—21 թուին. Թաւրիզի Առաջնորդարանի  
թիւ 14 ձեռագիրը՝ 1678 թուին. Տրգատ  
Վրդ. Պալեանի տեսած ձեռագիրները Ժէ գա-

րու վերջերէն (յատկապէս Թալաս գիւղինը 1695 թուէն), եւ վերջապէս Անտոնեան Սիւրբանութեան () Թաքէօյի Թանգարանին Թիւ 112 ձեռագիրը (Հ. Իս. Սրապեանի հրատ.) 1707 թուէն: Դժբախտաբար միւս հրատարակութեանց բնագրի, ինչպէս եւ Էջմիածնի ձեռագիրներու թուականը ձեռքի տակ չունիմ:

Ասոնցմէ կը հետեւի թէ նշանագրերու գիւտը 1564 թուէն առաջ է. այս թուին գրուած ձեռագիրը արդէն այնպիսի զարգացած ձեւեր ունի, որ նոյն թուականը պէտք է անպատճառ դեռ աւելի առաջ տանիլ: Անտոնեան Թանգարանի ձեռագիրը օրինակուած է 1339 թուին գրուած օրինակէ մը, եւ եթէ վստահելի է Հ. Իս. Վրդ. Սրապեանի տեղեկութիւնը, նշանագրերը այս հնագոյն ձեռագրին մէջ նոյնպէս կային: Եւ որովհետեւ հոս գտնուած նշանագրերու թիւը 25 է միայն, որմէ 10 հատը ընդհանուր աստղաբաշխական նշանագրեր են, ասկէ կրնանք հետեւցնել թէ նշանագրերու առաջին գործածութիւնը ԺԴ դարէն մտած ըլլայ, առաջին անգամ սակաւ քանակութեամբ, որմէ յետոյ քիչ քիչ շատցած եւ ընդհանրացած է:

Այս եղբակացութեան համաձայն կուգայ նաեւ նշանագրերու տառական կազմութեան եղանակը: Ունինք խուճի մը նշանագրեր՝ որոնք միմիայն նօտրադրէ կարող են յառաջացած ըլլալ. այսպէս են օրինակ Անդաստան, եկեղեցի, առաւել քան, անդունդք, քարող եւն: Անգ...

քան համառոտուած է Ա. գլխատառ նօտրագրէն, առանց որոյ նշանագրին ձախակողմեան թեւը շատ աւելի կարճ, միանգամայն տակը առանց ոլորքի պիտի ըլլար: Եւթիւս բառը եթէ նօտրագիր է ձեւէն ծագած չըլլար, ձախակողմեան պատը ամենեւին երեւան չպիտի գար, որով եւ եկեղեցիի ձեւը երեւան չպիտի ելլէր: Անդհաւաստեալն յոյնպէս նօտրագրէն է, որովհետեւ ք գրին տակի ոլորքը միայն կրնար ձեւացնել զարգանկարի տակի օգակը: Վերջապէս եթէ — — — է քան նօտրագիր քէն չըլլար, բրիչի ձեւը երբեք չպիտի յառաջանար: Կը թողուիք յիշել նուազ պայծառ օրինակները:

Նշանագրերէն ոմանք կազմուած են ք տառէն, որ մետրոքեան տառերու շարքին մէջ գոյու-թիւն չունէր, այսպէս են՝ քէն-իւն, քէն-իւն, շէն-իւն, քէն-իւն, քէն-իւն բառերը:

Վերջապէս կան նշանագրեր՝ որ յետին արտասանութեան վրայ ձեւուած են. ինչ. քէն-իւն (թ. 213գ, ք տառով), քէն-իւն (թ. 218ա, ք տառով), Փիլիպ (թ. 439) (եւ մեկնուած բիլիպոս), քէն (թ. 441) (եղիպոս ալ ք տառով) եւ վերջապէս Պիլիպ B եւ Պիլիպ B առաքելներու անունները՝ որոնք՝ ինչպէս քիչ մը վերը ցուցուցինք, կազմուած են լատինական B տառով՝ համաձայն Պ գրին յետին ք արտասանութեան:

Այս երեքն ալ (նօտրագիր գործածութիւնը, ք գրին փոխառութիւնը եւ արտասանութեան փոփոխութիւնը) ԺԲ դարէն յետոյ

են: Ըստ Է. Տաշեանի (Լինարկ մը հայ հնագրութեան վրայ, էջ 73) նօտրագիրը գործածուիլ սկսած է ԺԳ—ԺԴ դարէն. ասով երկրորդ անգամ կ'ապացուցուի մեր եզրակացութիւնը թէ նշանագրերու հնարումը ԺԴ դարէն է:

## Գ Լ Ո Ւ Խ Դ.

### Դանիէլեան գրեր:

1. Վկայութիւններ հիմ աշխտանքի մը գոյութեամբ հասնար. 2. Այս վկայութեամբ աշխտանքը. 3. Հիմ հայերէն աշխտանքը 'Խանիէլեան գիրն է. 4. Այս գրերը 'Խանիէլի հմայածանքը չեն. 5. Աշխտանքի գիրտիլ կամ' գործածութեամբ ժամանակը. 6. Քանի գրէ թուականը եւ այս աշխտանքը. 7. Ի՞նչ լեզուէն շինուած էր. 8. Նոր քանիչաշխտանքը ի՞նչ ունիւց ինքնուրու. 9. 'Խանիէլեան գրերը հայերէն չեն, յիշատակար միայն հայերէն կ'աշխտանքում:

1. Զորրորդ աշխտանքն՝ որ պատմական վկայութեամբ գործածած են Հայերը նախորդ աշխտանքներուն խախտումէն յետոյ, Դանիէլեան աշխտանքն է: Այս գրերու գիւտին պատմութիւնը կը պատկանի Ս. Մեսրոպի Կենսագրութեան, ուստի զանց առնելով խօսիլ այս մասին, կ'ուզենք վաղից հոս միայն այն խնդիրներուն քննութեամբ, որոնք կը վերաբերին նոյն գրերու ներքին կազմութեան:

Նախ եւ առաջ քննենք այն խնդիրը թէ Է դարէն առաջ հայերը գիր ունեցած են, կայ պատմական վկայութիւն ասոր համար, Հայերը

գիտէին այդ բանը եւ յիշեալ պատմական վկայութիւններն ինչ արժէք ունին:

Մեր բանասէրներուն մեծ մասը առհասարակ ընդունած է թէ Հայերը ե գարէն առաջ, հաթեան նշանագրերէն ու խալդեան բեւեռագրերէն շատ յետոյ, ունեցեր են առանձին տառական այբուբեն: «Մեսրոպեան այբուբենից դեռ եւս շատ առաջ, կ'ըսէ Իս. Յարութիւնեան, հայերն արդէն ունեցել են սեպհական այբուբեն, որ գործածութեան մէջ է եղել» (Հայոց Գիրը, էջ 253): Այս բանին հակառակը ուղղակի անկարելի կը գտնէ Գարագաշեան (Քննակ. Պատմ. Դ. 39). «Նայելով հանգամանաց հայերէն լեզուին յառաջ քան զՄեսրոպ՝ ահաւր էր լեզուին առանց գպրութեան հասնել յայն աստիճան զարգացման՝ յորում կը գտնենք զնա ի հատակոտորս երգոց վիպասանաց, որոց կաարեալ նմանութիւն է թարգմանչաց լեզուն», «Անմիբանելի կը թուի մեզ դնել մեր հին լեզուն ամենեւին առանց իրիք գրի եւ գպրութեան յառաջ բան զՄեսրոպեանն» (անդ, էջ 45)<sup>1</sup>:

Գրեթէ նոյնպիսի ձեւով կը փաստաբանէ նաեւ Պալասանեան (Փորձ, Բ տարի, Գիրք III, էջ 29—30). «Անհնարին է ենթադրել թէ գրի գործածութիւնը Ասիայում մտնելուց յետ-

<sup>1</sup> Գարագաշեան, էջ 45, աւելի առաջ երթալով, մինչեւ իսկ կը դնէ թէ Մեսրոպէն առաջ կար նաեւ հայերէն բառարան մը, որ թարգմանիչները կը հաւաքէին իրենց նոր շինած բառերը եւ կը թողուին յաջորդ սերունդին: — Արեւեստական լեզուի գաղափարով անած մարդու համար Բն լեզուի բնական քան բառարանը:

տոյ, հայերը փորձած չլինին իրանց սեպհական տառերը ունենալ։»

Այս բանը ապացուցանելու համար կան մինչեւ իսկ քանի մը դրական ապացոյցներ եւ վկայութիւններ։

Առաջին վկայութիւնը, որ ասոր համար մէջ կը բերուի, փիլոսարաոսս պատմաբանին մէկ հատուածն է<sup>1</sup>։ Այս պատմաբանը՝ որ Կարակալա կայսեր ժամանակակից ըլլալով, կ'ապրէր մերձաւորապէս Քրիստոսի 175—249 թուականին, իւր «Տիանա Ապողոնի կենսագրութեան» մէջ՝ խօսելով Տաւրոս լեռան մասին, հետեւեալ պատմութիւնը կ'ընէ. «Ինչ որ մեր Տաւրոսի մասին կ'ըսեն (որուն երկար ժամանակ մէկը չէր հաւատար) թէ նա Հայաստանի սահմաններն ալ կ'անցնի, կը հաստատեն այն յովազները, որ ինչպէս գիտեմ, կը բռնուին համեմաշատ Պամփիլիայի մէջ. այս կենդանիները սիրելով անոյշ բուրմունքը՝ դուրս կուգան Հայաստանէն եւ կը դիմեն գէպի այն կողմերը, ուրկէ հովք կը բերէ այդ անոյշ հոտը։ Կը պատմեն նոյնպէս, որ անգամ մը Պամփիլիայի մէջ բռնուեր է յովազ մը, որուն ոսկի մանեակին վըայ գրուած էր հայերէն ճբբբբբ»։ «Արշակ թագաւոր՝ Աստուծոյն Նիւսեայ», այսինքն Նիւսիայի Աստուծոյն նուէր Արշակ թագաւորէն։ Այս Արշակն այն ժամանակ Հայոց

<sup>1</sup> Այս փաստը կը յիշէ նախ Ինծիճեան, Հնախ. Հայաստ. Գ. 76. Եղբը Պալասանեան, Իս. Յարութիւնեան, Յաղաարեան եւն.։

Թագաւոր էր եւ իր բռնած յովազը՝ անոր մեծու-  
 Թեան պատճառաւ՝ նուիրեր էր Դիոնիսոսին։  
 Դիոնիսոս Տնդկական Նիւսայի պատճառաւ՝  
 Տնդկացիներէն եւ արեւելեան ժողովուրդներէն  
 կը կոչուէր Նիւսոս։ Այս կենդանին ժամանակ  
 մը բոլորովին ընտանեցաւ եւ կը Թողուր ձեռքով  
 շօշափել եւ փազաքշել զինքը. սակայն երբ որ  
 գարունն եկաւ, երբ յովազներն անգամ կը  
 յաղթահարուին սէրէն, արուի պահանջ զգա-  
 լով՝ փախաւ դէպի լեռները՝ իր հետ տանելով  
 նաեւ իր զարդը։ Յետոյ գրաւուելով համե-  
 մունքի բուրմունքէն՝ դարձեալ բռնուեցաւ Ստո-  
 րին Տօրոսի վրայ, (Philostrati de vita Apol-  
 lonis Tianeis, գերմ. Թրգմ. Fr. Jakobs, Stutt-  
 gart, 1829, II. էջ 229. Մենք հանած ենք Իս.  
 Յարութիւնեանի Հայոց գրէն, էջ 252)։

Այս պատմութիւնը կը ցուցնէ Թէ Քրիս-  
 տոսի երկրորդ դարէն առաջ կար հայերէն գիր։

Երկրորդ փաստը կը համարուին Ագա-  
 Թանգեղոսի այն վկայութիւնները, որ յիշեցինք  
 ՀԱ. 1910, 171ր եւ որոնցմէ յայտնի կը տես-  
 նուի Թէ Տրդատի Թագաւորութեան ժամանակ  
 գրելու արուեստը տարածուած էր Հայաս-  
 տանի մէջ։

Երրորդ փաստը կու տան գրերու գիւտին  
 վրայ խօսող մեր երեք կարեւոր աղբիւրները՝  
 Կորիւն, Փարպեցի եւ Խորենացի։ Ասոնք յոյն  
 պարսիկ կամ ասորի լեզուներու ուսմամբ Հայոց  
 կրած նեղութիւնները պատմելէ ետք, կամ  
 Ս. Մեսրոպի յղացած գաղափարին եւ Դանիէ-

լեան գրերու գիւտին վրայ խօսելու առթիւ կը պատմեն թէ Հայերը ունեցած են գրեր, որոնց գործածութեամբ կարող էին բոլոր գծուարութիւնները վերցնել: Ահաւասիկ այդ վկայութիւնները. «Մանաւանդ թէ գոն նշանագիրք հայերէն լեզուոյս, որովհետեւ հնար է ինքեան ձայնիւ, եւ ոչ մոլորացածոյ ըարբառով, շահել զոգիս...: Ասացեալ է ուրումն ցարքայ, թէ տեսի նշանագիրս հայերէն առ ումեմն եպիսկոպոսի ի գեօղ միում:... Դանիէլի եպիսկոպոսի, առ որում նշանագիրքն հայերէն կային (Փարպէշ 36—38): Եայնժամ պատմէր նոցա արքայն վասն առն ուրումն ասորւոյ եպիսկոպոսի ազնուականի Դանիէլ անուն կոչեցելոյ, որոյ յանկարծ ուրեմն նշանագիրս աղփաբետաց հայերէն լեզուի... Առեալ երանելի հոգաբարձուացն զյանկարծագիւտն... Մանաւանդ զի եւ նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց թողեալք՝ եւ յարուցեալք գիպեցան (Կոր. էջ 8—9): Զվաղնջուց գտեալ նշանագիր տառից» (Խոր. Գ. ծբ):

Զորրորդ աւելի պարզաբանեալ փաստը կուտայ Վարդան պատմիչ, որ կը պատմէ թէ հին ժամանակ Հայերը ունէին 22 գրերէ բաղկա-

1 Թէեւ տպագիրն ունի Ռ-դէ-ւ-թ, բայց ուղղագոյն ընթերցուածն է Ռ-դէ-ւ-թ: Այսպէս սրբագրած է առաջին անգամ Գ. Եպս. Այվազեան, իսաւ. թրգմ. Խորենացւոյ, ապ. Վենետ. 1841, էջ 356: Այս ընթերցումը կը դառնենք նաեւ. Միսրանի կազմած քննական հրատարակութեան ձեռագրին մէջ: Գրերը չեն թաղուիր, այլ երեսի վրայ կը թողուին. յաջորդ յորոցիւր բառն է որ Ռ-դէ-ւ-թ ձեւ. մը երեսան հանած է:

ցած այբուբեն մը, զոր յետոյ թողուցին.  
 «Դպրութիւն հայերէն քսան եւ երկու գիր առ  
 Դանիէլի ասորւոյ գտեալ ի հին ժամանակաց,  
 որ վասն ոչ պարզելոյն զընդարձակութիւն լե-  
 զուիս՝ անհոգացեալ եղեւ յառաջնոցն», վար-  
 դան ասոր համար դրական ապացոյց մ'ալ կու  
 տայ՝ հաստատելով թէ Լեւոնի ժամանակ գրու-  
 նուեցաւ սյդ հին գրերով դրամ մը. «Եւ զի  
 լեալ է հայերէն գիր հնոցն՝ վկայեցաւ ի ժամա-  
 նակս Լեւոնի արքայի. զի գաաւ դրամ ի Նիլիկիա,  
 հայերէն գրով դրոշմեալ զանուն կռապաշտ  
 Թագաւորացն հայկազանց» (Վարդ. էջ 50):

Հինգերորդ ապացոյցը կու տայ Ինճիճեան,  
 որ իւր Հնախօսութեան մէջ, Գ. էջ 75 կը  
 պատմէ թէ 1788 թուականին Պոլսոյ անգղիա-  
 կան դեսպան Ա. Ենզիէի հին դրամներու նշանաւոր  
 հաւաքածոյին մէջ տեսեր է հարիւրաւոր պար-  
 թեւ-արշակունի արծաթէ դրամներ հայերէն  
 գրերով: Այս դրամները հետեւեալ ձեւով կը  
 նկարագրէ Ինճիճեան. «Ի մի կողմն դրոշմեալ  
 ունելով ատրուշան ի մէջ երկուց մոգուց. իսկ  
 ի միւս կողմն դէմք թագաւորի ըստ արեւելեան  
 օրինակի սաղաւարտեալ, ունելով շուրջանակի  
 հայկական տառս որոշ մնացեալս, է, ր, ո, է, ճ  
 եւն, զոմանս ուղղագիրս, իսկ զոմանս խոտորնա-  
 դիրս. բայց ոչ գաանելով ի նոսա տառ ինչ  
 ձայնաւոր՝ չեղեւ ինձ մարթ անուն ինչ ըն-  
 թեռնուլ»:

2. Հիմայ քննենք այս ապացոյցներուն ար-  
 Ժէքը մի առ մի:

— 1. Փիլոսոփայությունս պատմաբանին խօսքը, ինչպէս Հիւբըման կ'ըսէ, այնպէս անորոշ է, որ առասպել ըլլալու ամէն երեւոյթ կ'ընծայէ: Ուրն է այն Արշակ Թագաւորը, որ Նիւսեայ Աստուծոյն ընծայած է յիշեալ յովազը: Արշակ՝ եթէ իրօք պատմութիւնը ճշմարիտ է, աւելի պարթեւ Թագաւորի մ'անունն ըլլալու է, եւ այն մակագրութիւնն ալ աւելի պահաւերէն քան թէ հայերէն: Արեւմուտքի հեղինակի մը համար շատ դիւրին էր շփոթել հայ եւ պարթեւ ազգերը, մանաւանդ այն ժամանակ, երբ կ'ապրէր Փիլոսոփայությունս:

Բ Ագաթանգեղոսի վկայութիւնն աւելի մեծ նշանակութիւն ստացած է Իս. Յարութիւնեանի քով, որ «Հայոց գիրը» աշխատութեան մէջ, էջ 243—251 մանրամասն կը քննէ խնդիրը եւ վերջապէս կ'ապացուցանէ թէ Ագաթանգեղոսի վկայութիւնը կը հաստատէ հին հայերէն գրերու գոյութիւնը: Ագաթանգեղոսի այս վկայութեանց մէջ, ինչպէս վերը տեսանք, Էմին, լանգլուա եւ Զարբհանալեան կ'ուզէին Նշն-էի բառով հասկնալ տեսակ մը հայկական պատկերագիր կամ սղագրութիւն: Յարութիւնեան Նշն-էի բառը կ'առնու բուն «գիր», իմաստով եւ կ'ենթադրէ թէ կար հայերէն տառական գրութիւն մը Տրդատի օրով: Մենք՝ եթէ վերը մերժեցինք Էմինի ենթադրութիւնը, աւելի հակառակ կը կանգնինք հոս ալ Յարութիւնեանի ենթադրութեան, պարզապէս այն պատճառով որ Ագաթանգեղոսի աշխատութիւնը

իրքեւ կեղծեալ գործ մը, իբրեւ Ե գարու աշխատութիւն՝ արժէք չունի բնաւ այսպիսի կարեւոր խնդրի մը լուծման մէջ, մանաւանդ երբ խնդիրը կը վերաբերի հին ժամանակի պատմութեան կամ կեանքին:

Հ. Յ. Տաշեան (ՀԱ. 1893, էջ 90) կը ցուցնէ թէ Ագաթանգեղոսի այս խօսքերը չեն կրնար արդէն առնուիլ հայերէնի համար. որովհետեւ Ս. Հռիփսիմեան կոյսերը հայ չէին եւ իրարու հետ կը խօսէին «հռովմայեցւոց լեզուով», հմմտ. «Արդ՝ զայս ամենայն խօսեցաւ սուրբն Գայիանէ ի բարբառ հռովմայեցւոց... իսկ զոյն անդ ոմանք ի սպասաւորացն արքունի, որ լսէին զայն ամենայն ի բարբառ հռովմայեցւոց» (Ագաթ. հմ. 189): Ասկէ կը հետեւի թէ դպիրները, եթէ երբեք բան մը գրեցին, յունարէն լեզուով գրեցին եւ մատուցին յունադէա արքային:

Շատ լաւ կը նկատէ Աղայեան (Մուրճ, 1892, էջ 1848), որ «եթէ Տրդատի դպիրները, այնքան ճարտար էին հայագրութեան մէջ, որ մարդկանց խսակցութիւնը իսկոյն գրի էին առնում ծածկաբար, որ թագաւորին ցոյց տան, ինչո՞ւ այդ մարդիկը իրանց այդ հրաշալի շնորհքը չէին ցոյց տալիս եւ Տրդատի հովանոցի վրայ, մի երկու բան դրել տալով նրա սլաքատաշ քարերի վրայ», Յայտնի է որ Տրդատի հովանոցի աւերակը դեռ կայ, բայց քարերուն վրայի արձանագրութիւնը յունարէն է միայն:

Է. Եւրոյդ փաստին վրայ կը խօսինք  
ստորեւ § 9:

Դ. Վարդանի տուած տեղեկութեան ար-  
ժէքը հին ժամանակի գրերուն մասին, կը տես-  
նենք նոյնպէս քիչ յետոյ: Գալով լեւոնի ժա-  
մանակ գտնուած հայկական դրամին, ու աւելի  
հիմնական նշանակութիւն պիտի ունենար, սա  
միայն կրնանք ըսել թէ Վարդան անշուշտ սխա-  
լած է պահլաւական գրերով գրուած արշա-  
կունի դրամ մը Հայկական կարծելով՝ գրերու  
չափազանց նմանութեան պատճառաւ: Այսպէս  
կը կարծէ օրինակ Petermann, Վարդանի յիշած  
դրամը սխալմունք համարելով: Նոյնպէս է եւ  
Սուքրեան (Սկիզբն հայկական լեզուի եւ դիո-  
նեսիոսի թրակացւոյ քերականութեան, Բազմա-  
վէպ 1877, էջ 97—109): Լանգլուս կը կարծէ  
թէ այդ դրամը աքեմենեան թագաւորներու  
հպատակութեան տակ գտնուած նախարարնե-  
րէն մէկունն էր եւ գրուած՝ փիւնիկեան տա-  
ռերով: Ըստ Տաղաւարեանի՝ Իրաւացի է Լանգ-  
լուսյի ենթադրութիւնը, որովհետեւ իրօք ալ  
այդ դրամներէն հասած է մեզ Տիրիբազի փիւ-  
նիկական տառերով դրամը (այս իշխանը կ'ա-  
պրէր Ն. Ք. չորրորդ դարուն եւ կ'իշխէր Արեւ-  
մտահայոց մէջ):

Ամենէն բանաւոր պատճառաբանութիւնը  
կու տայ Չամչեան Ա. 760: Եթէ այդ տառերը  
հայերէն էին, կ'ըսէ Չամչեան, ինչպիսի՞ տառեր  
էին որ Վարդան կրցաւ կարգալ թագաւորին  
անունը. եթէ Մեսրոպեան գրերուն նման էին,

ուրեմն եւ Միսրոպեան դրերն էին. իսկ եթէ անոնցմէ տարբեր էին, հապա ինչպէս կըցաւ վարդան կարգաւ եւ հասկնալ թէ Հայոց կռապաշտ թագաւորներունն է: Ասկէ կը հետեւի թէ վարդանի ըսածը մակաբերութիւն է միայն, ի հարկէ սխալ. եւ ոչ երրեք հաստատուն փաստ:

Վարդանի տուած այս տեղեկութիւնը, յար եւ նման է՝

Ե. Ինձիճեանի տուած տեղեկութեան: Ինձիճեանի տեսած գրամներուն պատմութիւնը՝ որ Զարուհանալեան եւս իբր իրը կը քշէ (Հայկ. հին Դպր. Պատմ. 1897, էջ 44), բոլորովին սխալ է. որովհետեւ յիշեալ գրամները զուտ արշակունեան պարթեւ կամ սասանեան գրամներ են, պահլաւերէն վերտառութեամբ եւ ամենեւին կապ չունին մեզ հետ: Գրերու մեծ նմանութիւնը հայերէն կարծեւ տուած է, ճիշտ ինչպէս որ այսօր ալ վրացերէն խուցուրի կամ Լթովպական գրութիւն մը հայերէն կը թուի չգիտցողին համար եւ կամ ճավայերէն գրուածք մը հայերէն շեղագիր կարծեւ կու տայ: Եթէ Ինձիճեանի յիշածին պէս հայկական գրամ մը գտնուած ըլլար, եւ այն ալ այդքան նոր հաւաքածոյի մը մէջ, հիմայ այնպէս ծանօթ կ'ըլլար գրամագետներուն եւ բանասէրներուն, որ կասկածի բնաւ տեղիք չէր մնար:

Այսպէս ուրեմն կրնանք համարձակ կերպով ըսել թէ վերի փաստերէն չորսը ամենեւին նշանակութիւն չունին եւ չեն կրնար իբրեւ

«Կաստ ծառայել հին հայ գրի մը գոյութեան համար: Կը մնայ մեզ Լորորդ վկայութեանց շարքը, որ ժամանակակից եւ տեղեակ հեղինակներէ քաղուած ըլլալով, ամէն կասկածէ վեր է ու չենք կրնար այնպէս անփոյթ կերպով նկատել: Կորիւնի, Փարպեցւոյն եւ Խորենացւոյն միաձայն վկայութիւնը հաստատուն կերպով կը ցուցնէ թէ Լ, դարու սկիզբը, Ճիշտ այն ժամանակ՝ երբ Ս. Մեսրոպ հայերէն գրերու գիւտով կ'աշխատէր, կար Հայոց մէջ տարածուած կարծիք մը թէ ունեցած են ժամանակին այբուբեն մը, որ ատեն մը գործածուած եւ յետոյ թողուած է:

3. Ո՞րն էր պատմագիրներուն վկայած այս այբուբենը. արգեօք այն որ Դանիէլի քով կը գտնուէր եւ անոր անունով Դանիէլեան կոչուեցաւ, թէ ասկէ տարբեր այբուբեն մը: Գարագաշեանի խօսքերը (Քնն. Պատմ. Դ 39) այնպէս անորոշ են, որ կարծես թէ այս երկուքը տարբեր են, բայց բոլոր քննիչներն ալ առհասարակ ընդունած են թէ Հայոց այդ հին այբուբենը Դանիէլեան գիրն է: Իս. Յարութիւնեան, (Հայոց Գիրը, էջ 240 եւ 255) կը հաստատէ թէ «Դանիէլեան կոչուած այբուբենը Հայոց հին գործածական գիրն էր... այդ այբուբենի հետքը բոլորովին անհետանում է եւ Միջագետքում օտարի մօտ գտնուում»:

Մեր պատմագրերու տուած պարզ եւ ակներեւ վկայութիւնը կասկածի տեղիք չի տար այս մասին. համառ. յաջորդ խօսքերը. «Դանիէլի

եպիսկոպոսի, առ որում նշանագիրքն հայերէն-կային (Փարպ.) վասն առն ուրումն ասորւոյ եպիսկոպոսի ազնուականի Դանիէլ անուն կոչեցելոյ, որ յանկարծ ուրեմն նշանագիրս ալիաբետաց հայերէն լեզուին (Կոր.) քսան եւ երկու գիր առ Դանիէլն ասորւոյ գտեալ ի հին ժամանակաց (Վարդան) եւնւ,

Աներկրայ է ուրեմն որ Հայոց այդ հին այբուբենը Դանիէլեան գիրն է, որ յետոյ Հաբէլի եւ Վահրիճի ձեռքով Հայաստան բերուեցաւ, երկու ասորի գործագրութեան դրուեցաւ եւ յետոյ խափանուեցաւ:

4. Հիմայ քննենք թէ ով էր այս այբուբենին հեղինակը:

Դանիէլեան անունը առաջին ակնարկով այնպէս կը ցուցնէ թէ նոյն գրերուն հեղինակը Դանիէլ ասորի եպիսկոպոսն էր: Այս կարծիքը կը հասաւ նաեւ խորենացին՝ որ կը վկայէ թէ նոյն գրերը յարմարցուած էին Դանիէլէն. «Մատուցեալ առ արքայն քահանայի ուրումն՝ Հաբէլ անուն կոչեցեալ, խոստանայր հայկականացս լեզուաց առնել նշանագիր, յարմարել է Դանիէլ եպիսկոպոսէ՝ յիւրմէ մերձաւորէ» (Խոր. Գ. Ժբ): Երկրորդ վկայութիւնը կու տայ Ասողիկ. «յորոյ աւուրս գպրութիւն Հայոց լեզուիս իթ գիր է Դանիէլ քիւսէ-քիւսէ Ասողոց Կոթեցա» (Ասող. գլ. Գ. էջ 139): Երրորդ վկայութիւնն ունի Կայսերաց պատմութիւնը. «յորոյ աւուրս գտաւ քսան եւ ինն գիրն հայերէն լեզուի ի Դանիէլէ փոխառեալէ ասորւոյ»:

Սակայն այս վկայութիւնները բոլորովին անարժէք են: Եթէ Դանիէլեան գրերը հայերէն հին նշանագրերն էին, հակառակէն դատելով պէտք է մասնել թէ նոյն նշանագրերը Դանիէլ եպիսկոպոսի հնարածները չէին: Երկրորդ՝ ինչ պէտք ունէր Միջագետցի ասորի եպիսկոպոս մը Հայ անգրագէտ ազգին համար գրեր հնարելու: Երրորդ՝ ինչո՞ւ հայերն այնպէս պինդ փարէին պիտի այս նշանագրերուն եւ երկու ասորի պիտի գործածէին զանոնք, եթէ հին հայերէն նշանագրերը չըլլային, այլ Դանիէլի հնարածը:

Այսպիսի մտածումներով առաջնորդուած են անշուշտ նաեւ Չամչեան ու Ագեբեան, որոնք կը տատամսին ու անորոշ կը թողուն, ինչիրը, մէկ անգամ մէկ կարծիքին եւ միւս անգամ միւս կարծիքին կողմը հակելով: Այսպէս Չամչեան, Ա. 491 կ'ըսէ թէ գրերը Դանիէլի հնարածն էին. «Ասորի եպիսկոպոս տեղւոյն՝ որ կոչուր Դանիէլ՝ յարմարեալ եւ յօրինեալ է յիւրմէ տառս ինչ Հայոց. եւ ազաչէր զնա, զի տացէ հրաման տանելոյ զայն եւ ի Հայս, եւ տարածելոյ անդ... զորս ստեղծեալ էր (Դանիէլ) ըստ նմանութեան յունական տառից եւ գրոց», Իսկ էջ 760, հրաժարած այս կարծիքէն, կ'ըսէ. «Այլ վասն Դանիէլեան նշանագրաց չունիմք ինչ հաստատուն աւանդել, յիւրմէ արգեօք հնարեալ իցէ զայնս, թէ յայլոց առեալ»:

Այսպէս անորոշ է նաեւ Ագգերեան, Լիակ. Վարդ Սբբոց, հա. Ե. էջ 288 եւ 290. «Ունի առ իւր (Դանիէլ) նշանագիրս իմն ալփաբետաց հայերէն լեզուին, գտնալս ուստեք կամ յարմարեալս... կամ էին ալփաբետք խառն ի յունէ եւ յասորւոյ՝ անբաւականք մերումն լեզուի, եւ կամ առ նախնեօք Հայոց երբեմն հնարեալք իբրեւ նշանագիծս, եւ խափանեալք որպէս միջինս եւ անյաջողակս»

Բայց անշուշտ այսպիսի կասկածներու տեղի չկայ, որովհետեւ նոյն իսկ Խորենացին քիչ մը յետոյ իրեն գէմ վկայութիւն կու տայ եւ կը պարզէ խնդիրը, ըսելով թէ այն գրերը վաղեմի բաներ էին. «Քաջ հմտացեալ ի Դանիէլէ, կարգեալ ըստ ձեւոյ օրինակի յունականն ղիւղիզիոյ ԲԵԼ՝ նշանագիր տառից, եկեալ ետուն ցմեծն Սահակ եւ Մեսրոպ» (Խոր. Գ. Ժբ)։

Ամենէն զօրւոր ապացոյցն է Կորիւնի վկայութիւնը. «Եայնժամ պատմէր նոցա արքայն, վասն առն ուրումն ասորւոյ եպիսկոպոսի ազնուականի Դանիէլ անուն կոչեցելոյ, որոյ յանկարծ ուրեմն նշանագիրս աղփաբետաց հայերէն լեզուի» (Կոր. էջ 8)։ Մեր դժբախտութեամբ այս հատուածը կը կազայ եւ անպատճառ պակաս բառ մը կայ. «որոյ յանկարծ ուրեմն նշանագիրս հայերէն լեզուի» ի՞նչ. բայր կը պակսի։ Եւ կը թուի թէ այս պակաս բայր պիտի ըլլայ ԲԵԼ եւ ասոր համար է որ իսկոյն յաջորդ տողին մէջ ալ կը կրկնուի. «Եւ իբրեւ

պատմեցաւ նոցա յարքայէ վասն գրելոյն (կարգաւ գրելոյն) ի Դանիէլէ... քանի մը տող յետոյ բառը նորէն կրկնուած է աւելի պարզ. «Ապա առեալ երանելի հոգաբարձուացն զյանկարծագիւտն...» (էջ 9), ուր առաջին խօսքին յանկարծ եւ գրեւ բառերը միացած են:

Այս բոլորէն կը հետեւի թէ Դանիէլ յանկարծ տեղ մը գրեւ էր այդ նշանագրերը եւ հետեւաբար անոնք իր հնարածները չէին: Դանիէլեան անունը սխալ բացատրութիւն մըն է, որ ժամանակն եւ հանգամանքները նուիրագործած են: Եւ նոյն իսկ խորենացին՝ որ առաջին անգամ կու տայ այս անունը՝ ոչ թէ անշուշտ իբր հեղինակ կ'ուզէ ներկայացնել զայն, այլ իբր այն գրերը ունեցող կամ պահող անձը: Այսպէս կ'ընդունին գրեթէ բոլոր մեր բանասէրները:

Սակայն II. Վրդ. Պարոնեան, (Երկրագունդ 1885, 99—101 եւ ՀԱ. 1896, 72—76) կը յայտնէ նոր կարծիք մը՝ որ այս երկուքին միջին տեղը կը բռնէ: Հեղինակը կ'ըսէ թէ Դանիէլ գտած էր այդ հին նշանագրերով գրուած գիրք մը, որուն մէջէն ինքը առաջին անգամ հանեց այբուբենը եւ յունարէնի շարքով գասաւորեց, եւ ահա այս գասաւորութեան համար այբուբենն ալ կոչուեցաւ Դանիէլեան: — Չենք ուզեր երկար խօսիլ հոս այս մասին, որովհետեւ Ս. Մեսրոպի Կենսագրութեան մէջ՝ պէտք եղած ապացոյցները տուած ըլլալ կը կարծենք, ապացուցանելու համար

Թէ Դանիէլի ձեռքը գանուածն ուրիշ բան չէր, բայց եթէ այսուրեքնական տախտակ մը:

Ինգիլիզ բոլորովին ուրիշ ձեւով կը փաստաբանէ Ղ. Աղայեան, Մուրճ 1892, էջ 1844: Աղայեան կ'ընդունի մեղի պէս Թէ Դանիէլի ձեռքը գանուածը գիրք չէր, այլ պարզ այբուբենական տախտակ մը: Բայց տարօրինակ կը գտնէ այն որ գրականութիւն մը ամբողջապէս ջնջուի, անկէ ամենեւին հետք մը չմնայ, եւ մի միայն գանուի այբուբենական ցուցակ մը, այն ալ միայն մէկ հատ: Ասկէ կը հետեւցնէ Թէ այդ գրերու հնարողը Դանիէլն է. Դանիէլը կամ ինքն իրանից, կամ մի հայի առաջարկութեամբ ասորական գրերը ձեւափոխելով՝ յատկացրել էր հայերին, ասելով՝ « եթէ կամենում էք ձեր սեփական գրերն ունենալ, համեցէք տարէք, բոլորովին այնպէս, ինչպէս Մեսրոպն արաւ Վրացոց համար: Հայերը ընդունեցին այս գիրը եւ ստեղծեցին գրականութիւն: Իսկ եթէ հայ պատմագիրները «չեն ուզում ուղղակի խոստովանել, որ այդ գրերը ինքը Դանիէլն էր շինել,» այդ այն պատճառով է միայն որ ասորիները այլ եւս ատելի էին գարձեր հայերուն, զգուած էին Սուրմակի, Բոքիշոյի եւ Հմուէլի վարմունքներէն եւ, ինչպէս որ քաղաքականապէս կ'ուզէին ազատիլ պարսկական հպատակութենէն, նոյնպէս ալ մտաւորապէս կ'ուզէին ազատիլ ասորական ազդեցութենէն, յունաց օգնութեամբ: «Այսպէս ահա՝ բնական եւ քաղաքական հանգամանքները մտաւորապէս կշռելով, մենք գտնում

ենք, որ Դանիէլի գիր տալը հայերին՝ ան-  
ժխտելի է:

Մենք այս փաստաբանութիւնը չենք ըն-  
դունիր, որովհետեւ եթէ Դանիէլեան գրերը  
Դանիէլի ձեռքով, Հայոց համար հետեւաբար  
ժամանակակից հայերէնի վրայ շինուած էին,  
այլ եւս ինչո՞ւ պակասաւոր եւ անյարմար պիտի  
ըլլային, որ Ս. Մեսրոպ պէտք զգար նետելու  
կամ լրացնելու: Երկրորդ՝ ինչէ՞ն գիտենք թէ  
Մեսրոպ որեւիցէ գրագարանի մէջ չգտաւ նոյն  
գրերով գրուած գիրք մը, որով համոզուեցաւ  
թէ Դանիէլեան գրերը հայերէն չէին: Եւ վեր-  
ջապէս եթէ հայերը այդպէս կ'ատէին ասորի-  
ները, ուրեմն անոնց հնարած գրերն ալ պիտի  
չընդունէին: Գուցէ Աղայեան կ'ուզէ ըսել թէ  
առեւելութիւնը Մեսրոպէն յետոյ ծագեցաւ. բայց  
ընդհակառակը կը տեսնենք որ Մեսրոպին ժա-  
մանակակից պատմիչը (Նորիւն) աւելի քիչ գեր-  
կու տայ Դանիէլին, իսկ Մեսրոպէն յետոյ եկող  
պատմիչներն աւելի պատիւ կու տան անոր եւ  
մինչեւ իսկ հայերէն գրերու գիւտը անոր կը  
վերագրեն ամբողջապէս (Փարպեցի) կամ մա-  
սամբ (Վարդան եւն): Դանիէլի գրերը համե-  
մատել Մեսրոպի վրացերէն գրերու գիւտին  
հետ, շատ անյարմար է. Մեսրոպ ինքը անձամբ  
գնաց Վրաստան, գրերը հնարեց, քարոզեց,  
տարածել աշխատեցաւ, մինչդեռ Դանիէլ հե-  
ռուն նստած գիր մը կը շինէ եւ Հայաստան կը  
ղըկէ, այն ալ երբ իրմէ Վռամշապուհը կը  
խնդրէ, հրովարտակով մարդ կ'ուղարկէ եւն:

Եթէ Դանիէլն էր հնարողը, հապա ինչո՞ւ չեկաւ  
Հայաստան, ինչո՞ւ իր ձեռքով չտարածեց գրերը,  
կը նշանակէ թէ ինքը բոլորովին չէզոք դիրք մը  
ունի եւ անտարբեր պահապան մըն է միայն:

Վերջապէս Գ. Փառնակ (Անահիտ 1905,  
էջ 128) հիմնուելով Կորիւնի բառերուն վրայ՝  
“Եւ իբրեւ պատմեցաւ նոցա յարքայէ վասն  
Բել-Նի ի Դանիէլէ,” կը հետևցնէ թէ Դանիէլ  
նախապէս գրած էր Վռամշապուհին եւ առա-  
ջարկած էր իր կողմէն հնարել հայերէն նոր  
այբուբեն՝ նիւթական վարձատրութեան ակնկա-  
լութեամբ: Այս այբուբենը կրօնական պեա-  
քերու համար պիտի չքլար, որովհետեւ այս  
պարագային կաթողիկոսին դիմել հարկ կ'ըլ-  
լար, այլ արքունի դիւանին պեպքերուն համար,  
քանի որ Վռամշապուհ այս կողմէն արդէն նե-  
ղութիւն կը քաշէր: Այբուբենը յարմարցու-  
ցած էր զանազան լեզուներէ առնելով:

Ծեղի համար այս մեկնութիւնն ալ ուղիղ  
չէ, որովհետեւ ոչ միայն Կորիւնի յիշեալ հա-  
տուածին մէջ Բել-Նի ուղղելի է Բել-Նի (ինչպէս  
ապացուցած ենք Ս. Մեսրոպի Կենսագրութեան  
մէջ), այլ որովհետեւ դարձեալ անհասկանալի  
կը մնայ այն հանգամանքը թէ ինչպէս կ'ըլլայ  
որ Դանիէլ հայերէնի ժամանակակից լեզուին  
վրայ այբուբեն կը կազմէ, եւ այդ այբուբենը  
այնպէս անկաատար կ'ըլլայ, որ իբրեւ անյարմար  
դուրս նետել պէտք կ'ըլլայ:

5. Եթէ Դանիէլեան կոչուած գրերը Դա-  
նիէլի հնարածը չէին, պէտք է ստուգել թէ որ

ժամանակի գործ էին, երբ հնարուեցաւ եւ մինչեւ երբ տեւեց անոնց գործածութիւնը:

Ինձիճեան անոնց գիւտը եւ գործածութիւնը ամենահին ժամանակները կը դնէ անորոշ կերպով. «Ի սկզբան անդ ի հնումն գոյր առ մեզ գիր հայկական», (Հնախ. Գ. 73). Բայց քիչ մը յետոյ, էջ 76, Փիլոսոփաութեան վկայութիւնը յիշելէն եւ անոր յիշած հայերէն գրերը նոյն Դանիէլեան գրերը համարելէն կը հետեւի թէ այդ բնիկ հայ գրերուն հնութիւնը կը հանէ քրիստոսի Բ դարը եւ աւելի վեր: Քիչ մը աւելի պարզ կը բացատրէ Էմին, որ նոյն գրերը կը դնէ Հայոց կռապաշտական շրջանին. «Մեսրոբեան գրերու գիւտէն առաջ՝ հեթանոս Հայաստանի մէջ գոյութիւն ունէր անյիշատակ ժամանակներէ ի վեր գործածուող այբուբեն մը: Ասիկա կը կազմէ անցման շրջան մը՝ նշանագրերու (իմաստնոց նշանագիրք) եւ բուն Մեսրոբեան այբուբենի մէջտեղ եւ ծառայած է հեթանոս Հայոց մտքի արտայայտութեան համար, ասորական, պարսկական եւ յունական գրերու ներմուծութենէն շատ առաջ: Այս գրերը մտնելով Հայաստանի հողին վրայ՝ խափանեցին հին այբուբենը՝ հաւանաբար զուտ քաղաքական պատճառներով... Իսկապէս՝ հնագոյն հեթանոսական շրջանին՝ հայերը ունէին իրենց սեպհական այբուբենը<sup>1</sup>»:

<sup>1</sup> Исследования и статьи Н. О. Эмина, Москва, 1896, էջ 210 եւ 212:

Ոմանք այս շրջանը աւելի առաջ կը տանին եւ կը դնեն Վաղարշակէն առաջ (արդեօք փիլոսոփաութի թուականը Ն. Բ. հասկնալով)։ այսպէս Միանսարեան (վանոնաւոր եւ վայելուչ գրութեան պատմ. էջ 99—100) կը դնէ Ն. Բ. 200 թուին հնարուած. նոյնպէս Պալասանեան (Փորձ, Բ տարի, Գիրք III), Մ. Վ. Մուրատեան, Իկեղ. Պաամ. էջ 86, 87, 89 եւն։ Սարգսեան (Սգաթ. եւ իւր բազմ. գաղտնիքը, էջ 290) Գ կամ Դ դարուն յարմարուած կը կարծէ։

Սակայն այս խնդրով ամենէն աւելի մանրամասն զբաղած է Իս. Յարութիւնեան, Հայոց գիրը, էջ 152—3 եւ 253—260, Հեղինակի կարծիքով հին հայկական գրին ծագումը եւ գործածութիւնը կ'իյնայ նոյնպէս կռապաշտական շրջանին։ Ամէն կրօն առանձին քաղաքակրթութիւն մըն է եւ սերտօրէն կապուած է գրի որեւէ տեսակի մը հետ։ Ջնջուելով կրօնը, կը ջնջուինաւ այդ քաղաքակրթութիւնը եւ գիրը։ Ամէն նոր կրօն կը բերէ նոր գիր։ Այսպէս՝ փիւնիկէն բերուած նոր կրօն մը Յունաստանի մէջ տարածեց փիւնիկեան գիրը. մահմեական նութիւնը ուր որ մտաւ տարածեց արաբական գիրը, քրիստոնէութիւնը Եգիպտոսի մէջ ջնջեց մեհենագիրը եւ տեղը դրաւ յունական այբուբենը, լատինական գիրը Թ. Գրքի հետ տարածուեցաւ արեւմտեան Եւրոպայի մէջ։ — Հին Հայոց գիրը կապուած էր հին Հայոց կրօնին հետ։ Դ դարուն երբ Գր. Լուսաւորիչ ջնջեց

հեթանոսութիւնը եւ անոր տեղ տարածեց քրիստոնէութիւնը Հայոց մէջ, կռապաշտական քաղմութիւ սովորութեանց հետ ոչնչացուց նաեւ այդ գիրը եւ անոր տեղ տարածեց յունարէն եւ ասորերէն տառերը: Լուսաւորչի հետ Հայաստան բերուած յոյն եւ ասորի կրօնաւորները արգիլեցին հայ գրի գործածութիւնը եւ իրենց գործածած յոյն եւ ասորի տառերը տարածեցին նաեւ մեր մէջ: Անցաւ 100 տարի եւ հայերէն գիրը այնպէս անհետացաւ, որ Միջագետցի ասորիի մը քով միայն կարելի եղաւ գտնել: Ասիկա շատ զարմանալի չէ, կ'ըսէ Յարութիւնեան, որովհետեւ պատմութիւնը նման երեւոյթներ շատ ունի: Երբ Սպանիացիք նուաճեցին Մեքսիկան եւ սկսան տարածել քրիստոնէութիւնը, արգիլեցին տեղական գիրը՝ համարելով զայն իրենց նպատակին խոչընդոտ մը: Հարիւր տարի յետոյ՝ երբ սկսան հետազօտել Մեքսիկան, երկու ծերունի հազիւ կրցան գտնել, որ իրենց հին գիրը կարգաւ գիտէին: Հարաւային Ամերիկայի փանոս կոչուած ցեղը, որ այսօր վայրենի վիճակի մը մէջ կ'ապրի, քանի մը դար առաջ՝ ծաղկեալ գրականութիւն ունէր: Վերջապէս մեր դրացի քիւրդերը, որ այսօր գիր չունին, կը համարուին քաղղէացւոց սերունդը, այն խոշոր ազգին՝ որուն ձեռքն էր ամբողջ գիտութիւնը:

Այս բոլորին ամփոփումն այն է ուրեմն որ հին հայերէն (Դանիէլեան) գիրը հնա-րուած է քրիստոսի Բ գարէն աւելի առաջ,

եւ Լուսաւորչի ժամանակ ոչնչացած է՝ Դ Դա-  
րուն։

6. Քանի՞ գրէ բաղկացած էր Դանիէլեան  
այբուրենը։ Այս մասին ժամանակակից պատ-  
միչները տեղեկութիւն չունին. կ'ըսեն միայն թէ  
հայերէն լեզուով գրելու համար անբաւական  
էին, այսինքն անկէ շատ պակաս գրեր ունէին.  
“Իսկ իբրեւ ի վերայ հասեալ թէ չեն բաւական  
նշանագիրքն՝ ողջ ածել զսիւղորայս եւ զկապս  
հայերէն լեզուոյն” (Կոր. էջ 9). “Տեղեկացեալ  
գիտացին՝ ոչ լինել բաւական այնու նշանա-  
գրօք ստոյգ հոլովել զհեգենայ բառից հայկա-  
կանաց հագներգաբար” (Խոր. Գ. Ժբ)։ “Եւ յետ  
բաղում աշխատութեանց եւ քննութեանց եւ  
ուսմանց՝ անշահ ծնացեալ, զի ոչ բերէր զբառս  
եւ զբանս ալփափեաացն ըստ հայերէն լեզուիս”  
(Փոքր Կոր. էջ 10)։

Նոյն պակասութիւնը կը շեշտեն նաեւ  
յետին պատմագիրները, սակայն ասոնց մէջ  
քանի մը հատը որոշ կերպով կը նշանակեն  
նոյն իսկ գրերու քանակութիւնը։ Վարդան  
պատմիչ կը գնէ 22 գիր. “քսան եւ երկու  
գիր առ Դանիէլի ասորւոյ գաեալ ի հին ժա-  
մանակաց” (էջ 49)։ Ասողեկ կը գնէ 29 գիր.  
“յորոյ աւուրս դպրութիւն Հայոց լեզուիս իթ  
գիր ի Դանիէլէ փիլիսոփայէ ասորւոց կարգե-  
ցաւ” (Գլ. Զ, էջ 139)։ Դաւիթ Անյաղթին  
ընծայուած հանելուկի մը մէջ՝ նոյն թիւը 24 է.  
“Ձեռք ամենակալին ստեղծին զիս եւ բար-  
ձրեալն ի բարձանց ի բարձունս ընծայեաց զիս”

Չափ հասակի իմոյ երկիցս երկոտասան, այժմ եմ երկցս երկոտասան<sup>1</sup>, Ուրիշ յետին գրուածքի մը մէջ՝ որ գրուած է խորենացւոյ ազգեցու թեամբ, կը կարգանք. «Հայերէն եգաւ դպրու թիւն ի քսան եւ ինն գրոյ ի Դանիէլ փիլիսոփայէ՝ զոր ետ գրել Ռամշապս—Վախրճայն նախարարին ի ձեռն Հաբէլի երիցու» (հանուած Ս. Էջմիածնի Կարինեան Թ. 1723, էջ 275 եւ Գեորգեան, Թ. 263, էջ 255 երկու ձեռագիր Ոսկեփորիկներէ)։ Վարդանագիրքը կ'ըսէ թէ Դանիէլեան գիրը 17 տառ էր։ Կայսերաց գրոց մէջ կը գրուի 29. «Ի սորա յաւուրսն էր սուրբն Սահակ հայրապետն, յորոյ աւուրսն գտաւ քսան եւ ինն գիր հայերէն լեզուի ի Դանիէլէ փիլիսոփայէ ասորւոյ»։ «Յաղագս սրբոց վարդապետացն Հայոց Մովսէսի եւ Դաւթի, անվաւերականը, որ հրատարակած է Սրուանձտեանց (Հնոցնորոց), կը գնէ 29 գիր. «Յայսմ ժամանակիս եղեւ ինգիր պակասութեան գրոյն Հայոց, զոր ունէին, իթ գիր ի Դանիէլէ փիլիսոփայէ ասորոյ՝ աշակերտ սրբոյն Գրիգորի»։ Գանձարանի մէջ երկու տեղ գրուած է 29. «Վաւաշապուհ

<sup>1</sup> Այս հանելուկը առաջին անգամ հրատարակած է Բաղմ. 1848, էջ 192, ուր մեզ հետաքրքրող բառերուն տարբեր ընթերցումած մ'ալ կայ. «Եւ չափ ամաց իմոց յառաջն էր երկու բժ, այժմ ամեցայ եւ զարգացայ եւ եմ դժգ»։ Հանելուկին վրայ առանձին քննութիւն մ'ալ ունի Հ. Ղ. Մ. Բաղմ. 1948, էջ 247—250, ուր Դաւթի բառով հաստատուելու համար մէջ կը բերուի նաեւ ուրիշ անանուն վկայութիւն մը. «Բանթ գիր գտաւ Մեսրուպ որ ի յերայեցւոցն չկայր» — Պատասխան. Ժր գիր էր, ամէն լէպիտի» (անդ, էջ 249)։

օգնեալ, վահրիճ գործակցեալ, Դանիէլ շնորհեալ, քսան եւ ինն գտեալ, նախնեացն արարեալ.՝ եւ ուրիշ տեղ մը՝ «քսան եւ ինն գիրէր գտած, այլ անօգուտ էր ընթերցողաց, զի եւ ոչ կապէր հեգ բառից անուանց»:

Այսպէս ուրեմն պատմիչներուն տուած տեղեկութիւնները կը ղանազանին 17, 22, 24 եւ 29 թուերուն մէջ: 17ի կողմէն է միայն վարդապետութիւնը. 22 կը դնէ վարդապետութիւն, 24 կը դնէ Դաւիթ Անյաղթ, իսկ 29 կը դնեն Ասողիկ, Ոսկեփորիկ, Այսսերաց գիրք, Մովսէսի եւ Դաւթի անվաւերակտնը եւ Գանձարան:

Այս ղանազանութեան պատճառը իմանալու համար պէտք է քննել թէ

7. Ի՞նչ լեզուէ, այսինքն ի՞նչ այբուբենի համեմատութեամբ ձեւուած էր յիշեալ այբուբենը: Այս կարեւոր խնդրին վրայ Կորիւն եւ Փարպեցի որեւէ տեղեկութիւն չեն տար: Խորենացին անոնց ծագումը յունարէնէ կը դնէ. «Քաջ հմտացեալ ի Դանիէլէ, կարգեալ ըստ ձեւոյ օրինակի յունականին զվաղնջուց գտեալ նշանագիր տառից», (Խոր. Գ. ԾԲ): Նոյն բանը կը պատմէ նաեւ Յայմաւուրքը. «Եւ ուսուցեալ մանկունս զամս բ, եւ ոչ կարացին հանել ի հեգ, քանզի ի հռոմ լեզուն միայն էր յարմարեալ ի հայոց բարբառս», (Տրէ Ժէ = Նոյեմբ. 25):

Յետինները այս այբուբենի ծագումը կը դնեն ասորականէն: Այս բանը բացօրոշ կերպով կը պատմէ վարդապետութիւնը. «Եւ այս են

Ճշմարտապէս ստուգիւ գտեալ. զի Ասորիք ընդ մեր թագաւորօքն էին, եւ նոցայն է քսան եւ երկու գիր. ի նոցանէ ջանացան առնել մեր գիր: ... զառաջինն ի նոցանէ էր առեալ եօթն եւ տասն գիր, զի զՀինգ գիրն թողեալ էր եւ չէր թարգմանեալ:», Ըսել կ'ուզէ թէ Դանիէլեան գիրը յարմարցուած էր Ասորւոց 22 գրերէն, որոնցմէ գուրս ձգուած էր 5 գիր:

“Բազմավէպի», յիշած անանուն հեղինակը կը գնէ երբայականէն, որ նոյնպէս սեմական լեզու մ'է:

Յունարէն այբուբենը 24 գրէ եւ ասորականը 22 գրէ բաղկացած ըլլալով, պատմիչներէն անոնք որ Դանիէլեան այբուբենի ծագումը յունական կ'ընդունին, բնական է կը գնեն 24 գիր, իսկ անոնք որ անոր ծագումը ասորական կը կարծեն, կը գնեն 22 գիր: Կամ ի հակառակէն գտաւելով՝ 24 գիր ընդունողները յունական ծագման կողմն են, իսկ 22 գիր ընդունողները ասորական ծագման: Ըստ այսմ Խորենացին ընդունելով յունական ծագում՝ կ'ենթադրուի թէ ընդունած ըլլայ 24 գիր: Դաւիթ ընդունելով 24 գիր՝ յունական ծագման կողմն է. իսկ Վարգան ընդունելով 22 գիր՝ ասորական ծագման կողմն է:

Այս բացատրութեամբ կը մեկնուին 17, 22 եւ 24 թուերը: Բայց ի՞նչ թիւ է 29:

Եթէ ասորերէն եւ յունարէն գրերը գնենք դէմ առ դէմ, կը տեսնենք որ ասորին ունի 5 տառ՝ որ կը պահսին յունարէնի մէջ եւ 7

առաջ որ յունարէնի մէջ կան, բայց կը պակսին ասորիին մէջ:

Ահաւասիկ ասոնց համեմատութիւնը.

|   |   |   |   |   |   |   |   |   |   |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ա | բ | գ | դ | ե | զ | է | թ | ի | կ |
| α | β | γ | δ | ε | ζ | η | θ | ι | κ |
| ⲁ | ⲃ | Ⲅ |   |   |   |   | Ⲇ | ⲇ | Ⲉ |

|   |   |   |   |   |   |   |   |   |   |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| լ | մ | ն | շ | ո | պ | գ | ս | ա | ւ |
| λ | μ | ν | ξ | ο | π | ρ | σ | τ | υ |
| ⲉ | Ⲇ | ⲇ | Ⲉ |   |   |   | Ⲋ | ⲋ |   |

|   |   |   |   |
|---|---|---|---|
| փ | ք |   |   |
| φ | χ | ψ | ω |
| ⲱ | Ⲳ |   |   |

Յունարէնը աւելի ունի ε, η, ο, π, υ, φ, ω, բայց կը պակսին α, β, γ, δ, ε, ζ, η, θ, ι, κ, λ, μ, ν, ξ, ο, π, ρ, σ, τ, υ.

Երկու այբուբենները միացնելով եւ պակասները իրարմով լրացնելով կ'ըլլայ՝

24 յոյն + 5 ասորի կամ 22 ասորի + 7 յոյն՝ հաւասարապէս 29:

Ահա այս է 29 թուին ծագումը:

Բայց կայ նաեւ ուրիշ հաշիւ մը: Յունարէն այբուբենը թէեւ ունի 24 գիր, բայց անոնցմէ երկուքը φ եւ ω իբր առանձին տառ գոյութիւն չունին մեր մէջ: Նոյնպէս ասորին թէեւ ունի 22 տառ, բայց (ܐܝܬ) գիրը գոյութիւն չունի մեր մէջ: Որով յունարէնը կը դառնայ 22 գիր, իսկ ասորին 21: Այս հաշիւը վեր

ի վայր կը շքէ ամէն ինչ: Անոնք որ 24 թիւ  
ընդունած են ըստ յունականին, կը սխալին փ եւ  
օ գրերուն պատճառաւ: անոնք որ 22 ընդու-  
նած են, կրնան ոչ միայն ասորականին կողմն  
եղած ըլլալ (ինչպէս ենթադրեցինք վերը), այլ  
եւ յունականին (համարելով թէ փ եւ օ հա-  
նած են հաշուէն): Եթէ փ եւ օ պակաս հա-  
շուելով գրած են 22, ուղիղ են: Իսկ եթէ  
ասորականին կողմն ըլլալով հանդերձ 22 գրած  
են, կը սխալին՝ գրին պատճառաւ: Նոյնպէս  
անոնք որ երկու այբուրենները միացնելով՝  
29 թիւը հանած են, կրկնակի կը սխալին,  
որովհետեւ մէկ կողմէ փ եւ օ եւ միւս կողմէ՝  
չգանուելով հայ այբուրենին մէջ, երեք թիւ կը  
պակսի եւ 29 թիւը կ'իջնայ 26: Աերջպէս  
եթէ նկատի ունենանք Բազմավէպի անանուն  
հեղինակին ըսածը թէ Մեսրոպ հայերէն գրերը  
կազմեց երրայեցերէնի 24!! գրերէն, այն ժա-  
մանակ պիտի ըսենք թէ մեր միամիտ հեղինակ-  
ներուն ըսածը սխալներէ կը բաղկանայ միայն:

Այսպիսի վերիվայր յեղաշրջումներ եւ  
ակնյայտի սխալներ կը տեսնենք նաեւ ուրիշ  
տեղեր:

Խորենացին պատմելով հանդերձ թէ Դա-  
նիէլեան գրերը յունականէն առնուած էին,  
Մեսրոպին կու ապ - , է, է, Ը, է, - , - ձայնա-  
ւորներուն գիւտը, որով կը հետեւի թէ Դա-  
նիէլեան գրերը ձայնաւոր չունէին: Բայց այդ  
ինչպիսի յունարէն է, որ - , է, է, է, - , - ձայ-  
նաւորները չունի: Շատեր կը հաստատեն թէ

խորենացւոյն մէջ ձայնաւորներու այս թուումը յետին յաւելուած է. այսպէս խալաթեան, Ղ. փարպ. եւ Գործք նորին, էջ 117, խորէն Ստեփանէ, թրգմ. խոր. 1889, ծան. 697, Իս. Յարութիւնեան, Հայոց գիրը, էջ 265 եւն. Ասոնք կը շեշտեն այն հանգամանքը՝ որ ձեռագիրները, ի մէջ այլոց նաեւ Լամբրոնացւոյն ձեռագիրը, չունին այդ յաւելուածը եւ մէկ ձեռագիր կայ միայն՝ որ այս եօթը ձայնաւորներու թուումը կ'ընէ:

Ինչ մնան սակայն խումբ մը ուրիշ պատմիչներ, որոնք յայտնի կերպով կը ցուցնեն թէ Դանիէլեան այբուբենը ձայնաւորներէ զուրկ էր եւ Մեսրոպ աւելցուց 7 ձայնաւորները: Այսպէս Գանձարանը՝

Քսան եւ ինն գիր էր գաած,  
Այլ անօգուտ էր ընթերցողաց,  
Զի եւ ոչ կապէր հեգ բառից անուանց,  
Այլ անհոգի մարմնոյ նմանած...  
Աջն Ասուածոյ անեղին փառաց  
Ըզ եւթն գիրն ի քարին գրեաց...  
Ա, է եւ է կարգեալ ընդ ըին,  
Եւ (է), ո, եւ - ի կարգին:

Երկրորդ՝ Ոսկեփորիկը (Ձեռ. Էջմ. Բ. 263 եւ 1723), որ կը գրէ.

“Ա, է, է, Ը, է, ո, - . այս գրերս աւելցաւ ի Մեսրոբ - գեղեցիկ վարձապետէ... Ո՛վ եհան գիր Հայոց. յորժամ սուրբ Սահակ հայրապետ

էր Հայոց եւ հայերէն եգաւ գպրութիւն ի քսան  
եւ ինն գրոյ ի Դանիէլ փիլիսոփայէ՝ զոր ետ  
գրել Ռամշապ-- Վախրճաշն նախարարին ի  
ձեռն Հարէլի երիցու։ Չոր առնկալեալ Հայոց՝  
ոչ օգտեցան զի պակասէին եւթն գիրն իսմանէ,  
մինչեւ ի բազում ժամանակս։ Իսկ զեւթն  
(գրոցն) պակասութիւն ելից Մեսրոպ երանելին  
ի Տարօն- գաւառէ ի Հացեկաց գեղջէ որ քա-  
ռասնօրեայ պահօք եւ աղօթիւք եւ ամօրե-  
ճանպարհաւ խնդրեաց յԱստուծոյ եւ երեւցաւ  
նմա ոչ ի քնոյ երազ եւ ոչ արթնոյ տեսիլ-  
թաթ ձեռին որ եցոյց գիրս եօթն, որ են այսո-  
քիկ -, է, է, Ը, է, -, զի որպէս մարմին անգի  
շարժում ոչ բերէ, սոյնպէս եւ առանց սոցա  
մակոյժ բանի ոչ ուղղէր Հ-տ-նէ- է- հելե-  
նացոյ գրչի ճարտար սամրացոյ,

Երրորդ եւ չորրորդ՝ երկու ուրիշ անա-  
նուն հեղինակներ ունին նոյնպէս 7 ձայնաւոր,  
“Եւ Մեսրոպ վարդապետ մեզի գիր եհան -, է,  
է, Ը, -, է, -”, “Մեծ վարդապետն Մեսրոբ առ-  
բօնացին... որ եւ զեօթն ձայնաւոր գիրսն ըն-  
կալաւ յԱստուծոյ”, (Բազմ. 1848, էջ 248)։

Ինչ ալ դնենք Դանիէլեան այբուբենի  
ծագումը, անկարելի է որ գոնէ - տառը չու-  
նենայ, հետեւաբար այս եօթը ձայնաւորներու  
թուումը սխալ մ'է միայն։

Ինչքան մանրամասնութեանց մէջ կը  
մտնեն մեր պատմիչները, այնքան այլանդակ  
սխալներ կը գործեն։ Ասոնց մէջ ամենէն նշա-

նաւորն է վարգանագիրքը<sup>1</sup>։ Ահա ասոր պատմածը։

“Եւ որ են գրերն զոր պարգեւեաց Աստուած։ Պատասխանի. Այս են վեց գիր ձայնաւոր եւ երեք տասան անձայն։ Եւ ձայնաւորքն են այս. ա, է, ո, ի, ը, —, եւ անձայնքն են այս. ք, փ, խ, շ, յ, լ, շ, լ, ց, շ, փ, յ, փ, ընդ ամենն ինն եւ տասն։ Եւ այս են ճշմարտապէս ստուգիւ գտեալ, զի Ասորիք ընդ մեր Թագաւորօքն էին, եւ նոցայն է քսան եւ երկու գիր, ի նոցանէ ջանացան առնել մեր գիր։ . . . զառաջինն ի նոցանէ էր առեալ 17 գիր, զի զհինգ գիրն Թողեալ էր եւ չէր Թարգմանեալ. երբ ջանային Թէ Թարգմանեմք ըստ մեր ընդուիս, չգայր ի բան այն հինգ գիրն։ Ապա յաղօթս ապաւինեալ՝ տեսանէր մարգարեական աչօք՝ Թաթ ձեռին աջոյ, որ գրէր ի վերայ վիմի. եւ ամենայն հանգաւ։

1. Վարգանագրքի այս հաստատել մասամբ կամ ամբողջապէս հրատարակած են. 1. Բաղմովէպ 1850, էջ 128. 2. Լեռնաւում, Coll. II հ. էջ 7—8 (Թարգմ.). 3. JAS. 1867, էջ 199—200. 4. Արշակունի. Մարտիկան դար հայկական լեզուի, Բաղմ. 1875, էջ 7—18. 5. Երկրագուն 1885, էջ 108 ծանօթ. 6. Բաղմ. 1887, էջ 197. 7. Սարգսեան, Բաղմ. 1889, էջ 29 (Հանուած վեհապետի Թ. 729 ձեռագրէն). 8. Ի. Գարսեալեան, Հայոց գիրք, էջ 267. Մերը հանուած է Ի. Գարսեալեանի (— JAS. 1867) հրատարակութենէն, որուն հետ նոյն է վեհապետի Թ. 729 ձեռագիրը։ Միւս հրատարակութեանց մէջ կան տարբերութիւններ։ Այսպէս Արշակունի? յիշած երկու ձեռագիրներէն միւսն մէջ չգրին առջ կը գտնենք շ, փ. ին մէջ բաղմանայններուն շարքն է ք, փ, շ, լ, խ, շ, փ, լ, շ, փ, ընդ մեր վերջինը առաջին տեւալ է, որովհետեւ Թիւրքիւն չէ

մանքն եւ որպիսութիւնն ապաւորեցաւ ի սիրան  
եւ վաղվաղակի ստեղծանէր ինն եւ տասն գիր։  
Եւ այն՝ որ եօթն ասնն, վասն նոցա պատուա-  
կանութեան ասնն՝ որ ձայնաւորք են, եւ որպէս  
հոգի են այլոցն։ Եւ ընգէր ասնն եօթն, զի վեց  
են ձայնաւորք։ Պատասխանի. զի է գիրն կայր  
յԱսորւոցն. եւ նա զայն էառ ի Դանիէլէ՝ վար-  
դապետն Մեսրոպ, վասն այնորիկ զայն այլ նմա  
ասնն, բայց ի մարդոյ օգտեցաւ զէ գիրն, եւ  
զիննեւտասն յԱսորւծոյ։ Եւ վասն եօթն գրոյն  
առաւել պիտանութեան, զեօթն գիրն մէն ասնն  
եւ գովեն. եւ զերկոսասանն, ոչ յիշեն, այլ  
հաստատ տես<sup>1</sup>։ Եւ ասնն թէ ալփայն այլոցդ  
(կարգաւ ասորւոցդ) կայ. էր շառնուին։ Ասեմք  
թէ Ասորւոցն — է, որ է . եւ այրն՝ այս է —  
չկայ<sup>2</sup>։

Այս պատմութենէն կ'երեւայ որ Դանիէ-  
լեան այբուբենն ունէր է, Դ, Ղ, Լ, Խ, Զ, Է, Ը,  
Դ, Զ, Դ, —, ., Դ, Ը, + առները որոնք առնուած  
էին ասորերէնի 22 առներէն, դուրս ձգելով  
ասկէ միայն 5 գիր. Մեսրոպ աւելցուց —, Ե, ., Է,  
Ը, — ձայնաւորները եւ Բ, Գ, Ժ, Ծ, Զ, Ը, Է.

<sup>1</sup> Պատմաւորանել կ'ուզէ այն թէ ինչո՞ւ նախորդ  
պատմիչները 7 գրի պակասութեան մասին միայն կը խօսին։  
Անոնք, կ'ըսէ, յապագեա 7 գիրը կը յիշեն, որովհետեւ ձայ-  
նաւոր են, իսկ միւս 12ը կարեւոր չեն համարիր յիշել։ Բայց  
ի նկատի չունի պատմիչներուն բացօթիւ ըսածը. թէ Դանիէ-  
լեան գրերը 29 հասն էին։

<sup>2</sup> Այսպէս ըստ որդարութեան Իս. Յարութիւնեանի .  
Հայոց Գիրը, էջ 269։ Բայց այս հեղինակին տուած բացա-  
ւորութիւնը թէ — — լաւ՝ սխալ է. տես քիչ մը վարը։

ց, շ, ծ, յ, չ բաղաձայնները, Բայց այդ ի՞նչպիսի ասորի այբուբեն է, որ երկու և երկու բռնի, բայց չունի ք, գ, ձ, լ, շ (կամ է), չ բաղաձայնները, Հեղինակը անշուշտ է տառով կը հասկնայ **ա** (ուրեմն ի՞նչ դործ ունի **ա**), իսկ **դ** տառով **օ** (b)! ուրեմն ինչպիսի՞ յեանութիւն: Այսպիսի սոսկալի յեանութեան նշան է նաեւ — գրին համար ըսածը, որ մեր ըմբռնողները լաւ նկատած չեն: Ինչո՞ւ համար — ը ասորիներէն չտոին, կը հարցնէ հեղինակը եւ պատասխանն ալ կու տայ՝ թէ ասորիները — չունին, անոնց — ը — = — է: Այո՞, յետին ժամանակներու մէջ ասորերէն — ը տեղ տեղ օ ձայնն առած է եւ — ցֆ — ը եղած օւֆ: Եւ ահա այս կը հասկցնէ հեղինակը:

Այս բոլորը կը ցուցնեն թէ մեր պատմիչներուն տուած տեղեկութիւնները այս մասին՝ զուտ անձնական ենթադրութիւններ են, որոնցմէ զուրկ են բարեբախտաբար ժամանակակից պատմիչները: Այդ ենթադրութիւնները բոլորն ալ սխալ են<sup>1</sup>, որովհետեւ որեւէ պատմական կռուան չունին: Միակ պատմական կռուանը

1 Այսպիսի սխալներու հիմարիտ օրինակ մըն է Վարդանի քերականութեան մէջ ըսուածը՝ միւս այբուբեններու համար. «Աղինք երեք վերստին է շնորհացն Եւսուծոյ գառն դգիք»՝ նախ քան զառան մատենան Մովսէսի, Լատինք եւ Պաղեստինք եւ Արապիկք հաստատեցին գիրս թուով քառն եւ չորս, զոր թեպէտ եւ աւելի ունին եւ այլ աղինք՝ ի նոցանէ են, որոշմամբ շնչոյ ճեղեալ եւ աճեցուցեալ... Ձոր է մերոց Թարգմանչացն՝ պատճառաւ թանձր լեզուիս վեցեցո վեց մերոց տառիցս երեսուն եւ վեց շարեալ գիրոց (Բաղմ. 1848, էջ 248):

Դանիէլ եպիսկոպոսի ասորի ըլլալն է, կամ  
Խորենացւոյն յունական ծագում ապրը:

Յ. Նոր քննիչները, որոնք պատմիչներու  
յիշեալ ենթագրութիւնները, իբրեւ լուրջ ըն-  
դունած են, ըստ այսմ զանազան կարծիքներ կը  
յայտնեն եւ կը վերականգնեն Դանիէլեան այ-  
բուբենը: Չամչեան, Ա. 760 եւ Ագեբեան,  
Վիպկ. վարք Սրբոց Ե. 290, անորոշաբար կը  
համարին յարմարցուած յունարէնէ կամ Թե-  
րեւս նշանագիրք (իմասանոց), ինչ որ անկարելի  
բան է:

Ինճիճեան, Հնախ. Գ. 73—77, հիմ-  
նուելով Խորենացւոյ, Ասողիկի եւ Վարդանի  
պատմածներուն վրայ՝ Դանիէլեան գիրը կը հա-  
մարէ Թուով 22, որմէ կը պակսին 7 ձայնաւոր  
եւ 7 զուտ հայ գրեր (այս գրերը չի յիշեր,  
բայց կը հասկնէ Թէ պէտք է ընտրել ի, Է, Ի,  
Ի — օ, յ, ց — շ, ք — ւ, Եւս Եւս Եւս  
ըուն մէջ):

Է. Ղ. Մ. (Բաղմ. 1848, էջ 248—9)  
պատմական վկայութեանց մէջ ամէնէն հինը  
համարելով Դաւիթ Անյաղթը, կը գտնէ զայն  
“անհակառակելի”, որով կ’ընդունի Թէ Դանիէ-  
լեան գիրն էր 24, իսկ Մեսրոբ աւելցուց 12 գիր.  
այս գրերը չեն կրնար ըլլալ ձայնաւորները,  
որովհետեւ հայերէնը իբրեւ հնդեւրոպական  
լեզու՝ չէր կրնար ձայնաւոր չունենալ. ուստի  
այդ պակաս 12 գրերը իրարու լծորդ բաղա-  
ձայններն էին: Իսկ ձայնաւորներն յիշող հնդի-  
նականները վարուած են միայն մակաբերաբար:







Թիւն ունէին փիւնիկեցւոց հետ, թէ Մծրին,  
 Եղեսիա եւն փիւնիկական գաղթականութիւններ  
 էին եւն եւն: Արդ՝ «եթէ այս հաղորդակցու-  
 թեան գոյութիւնն ապացուցուեցաւ, այնուհե-  
 տեւ հասկանալի է, որ հայ ազգն — եթէ դա  
 մի փոքր ընդունակ եւ դէպ յառաջդիմութիւն  
 ձգտող մի ազգ էր, որ վկայում են թէ հին եւ  
 թէ նոր ժամանակների օտար ազգութեանց  
 պատկանող անձինք — չէր կարող չ'ենթար-  
 կուել այդ ժողովրդների քաղաքակրթութեան:  
 Արդ, քաղաքակրթութեան արդիւնքներից մէկն  
 էր եւ գիրն, ուստի... անկարելի էր, որ հայերը  
 կամ ուղղակի դոցա գիրը չ'առնէին, կամ թէ  
 նոցա հետեւողութեամբ եւ նմանութեամբ սեպ-  
 հական գիր չ'աղմակերպէին», (էջ 327): Այս  
 բոլորը մենք կը համարենք նիւթին չ'վերաբերող  
 խօսքեր: Միակ բանը՝ որ փաստի տեղ պիտի  
 բռնէր, հայ գրերու համեմատութիւնն է փիւ-  
 նիկեան, պալմիրական, երբայական եւ պահլաւ  
 գրերու հետ, բայց այս համեմատութեան փո-  
 խարէն կու տայ միայն այս հինգ այբուբեններու  
 հասարակ ցուցակը եւ առանց ամենեւին անոնց  
 համեմատութեան մասին բառ մը իսկ դնելու,  
 կը հետեւցնէ թէ «հայերէն հին տառերը պատ-  
 կանում են սեմիտական մեծ ընտանիքին եւ ու-  
 նին իւրեանց բոլոր ազգակիցների հետ մի որ եւ  
 է նմանութիւն, թէ՛ ձեւի, թէ՛ հնչման եւ թէ  
 շարահիւսութեան կողմից», (էջ 305) եւ թէ  
 «մեր այբուբենի տառերը ծագում են ~~նիւնիւն~~  
~~սեմիտական~~ ~~տառերէն~~ եւ ոչ յունաց այբուբենից:

սեմիտական ձեւերի մէջ հայոց տառերն առաւել նմանուում են փիւնիկեան տառերի ձեւերին՝ (էջ 309): Բետոյ ալ քանի մը խօսքով կը քննէ թէ ինչու մեր այբուբենը որքէր կերպիւ է շարժական իմաստներու հետ ինքնուրուշեան եւ «եթէ նոյն իսկ հայոց տառերի ձեւերն ուղղակի շարժական իմաստներու ինքնուրուշեան յետեւին» եւն (էջ 310—311):

Երրեք ասկէ աւելի անտրամաբան եւ թափթփած գրուածք տեսած չեմ<sup>1</sup>:

Միւլէր WZKM, 1888, էջ 245—8 — 1890, էջ 284—8 եւ 1894, էջ 150—160) ընդունելով նախ Ասողիկի եւ յետոյ Վարդանի տուած թուերը, կ'եզրակացնէ թէ Հայոց հին

1 Թարգմանի գրքին վրայ ընդարձակ քննադատական մը ունի Աղայեան, Մուրճ 1892, էջ 1841—51, ժողովրդական ու սուր լեզուով գրուած, որմէ քանի մը հաստատեալ յիշեցինք վերը: Իր գաղափարներուն մեծագոյն մասամբ համաձայն ենք: Փիւնիկեցւոց հետ յարաբերութեան եւ հետեւաբար անոնցմէ դիր առնելու աւթիւ, ահա թէ ինչ կ'ընէ Աղայեան իր զուարթ լեզուով. «Եթէ մի անգիր ազգ յարաբերութիւն ունենալով դիր ունեցող ազգի հետ, վեր առնէր նրա գիրը, եւ աշխարհիս երեսին ոչ մի անգիր ազգ չէր լինի: Հին հայերի յարաբերութիւնը իրանցից լուսաւոր ազգերի հետ նոյնն էր, ինչ որ այսօր օսերի եւ չէրքէզների յարաբերութիւնն է մեզ հետ. ինչպէս սրանցից մէկը իր իւրն ու պահիրն է մեզ տալիս, միւսը՝ իր ձին ու ետփնջին, նոյնպէս եւ Հայերը կարող էին իրանց խաղաղն ու դինին եւ էլն ու ջորին տանել ի վաճառ: Մասաւոր զարգացման մի աստիճանից միւսին անցնելը ոչ գիւրին եւ ոչ կարճ ժամանակի դարձ է եւ կարեւորն ունի ամենազօրեղ ցնցումներէ, ամենակենսական պահանջներէ: Յաճիկն ու պարսիկն էլ այսօր յարաբերութիւն ունին լուսաւորեալ Եւրոպայի հետ: Բայց մեզմէն են նոյնը, ինչ որ կան:»



ներէ կազմեալ, ոչ անծանօթ սակաւ գրագիտաց, նոցին իսկ Սահակայ եւ Մեսրոպայ եւ նոցայոցն, որում տուաւ Մեսրոպ շունչ եւ կենդանութիւն՝ մոծանելով Յունաց ձայնաւորներն:

Տաղաւարեան (ծագումն հայ տառից, էջ 7—12 եւն) գրեթէ ըստ ամենայնի համաձայն է Յարութիւնեանի կարծիքներուն եւ ապացոյցներուն: Հոս ալ մէջ կը բերուին կրօնական ազգեցութիւն, վաճառականական յարաբերութիւններ, յաւ, իւր, եւն բառերու փոխառութիւնը եւն: Տաղաւարեան կը համարի թէ հայերը սեպագրերու գործածութենէն ետք ընդունեցին փիւնիկեան գրերը եւ կազմեցին անով երկրորդ գրականութիւնը (առաջինն ըլլալով սեպագիր գրականութիւնը): Թէեւ ասիկա ապացուցանելու համար որեւէ յիշատակութիւն չկայ, կ'ըսէ, լայց տրամաբանութիւնը կը ստիպէ մեզ ընդունիլ: Եթէ բոլորովին անգրագէտ ազգեր, ինչպէս յոյները, ընդունեցին փիւնիկեան գիրը, ուրեմն ինչքան աւելի հայերը, որ արգէն սեպագիր գրականութիւն ունէին, պիտի ընդունէին եւ իւրացնէին նոյն գրերը: Այս փիւնիկեան գրականութիւնը տեւեց մինչեւ լուսաւորիչ. լուսաւորիչ եկաւ եւ փիւնիկեան տառերով գրուած բոլոր հայերէն գրքերը վառեց, մոխիր դարձուց: Հին Դանիէլեան-Փիւնիկեան գրերը 22 հատ էին. —, ք, գ, դ, է, լ, շ, հ, ֆ, ի, ի, լ, յ, ն, շ, —, ո, շ, շ, +, բ, —, ո. մնացեալ գրերը կ'որոշուէին կէտերով եւ նշաններով, որոնք Մես-

րորի ձեռքը չհասան: Մեսրոբ՝ տեսնելով որ կարելի չէ այս պակասաւոր առօրեով բան գրել, կէտերով ու պայմանական նշաններով պակասները լրացուց. այս պայմանական նշաններն են թերեւս մեր հիմնական ունեցած երաժշտական խազերը (էջ 16): Բայց տեսնելով որ ասիկա շատ դժուար է, հետեւ 14 նոր գրերը:

Գ. Փառնակ (Անահիտ 1905, էջ 1-9)  
 Հիմ կ'առնէ Կորիւնի "յայլոց դպրութեանց թաղեալք եւ յարուցեալք դիպեցան", խօսքը: Այս խօսքը առհասարակ հասկեցուած է մեր մէջ այն իմաստով թէ այդ գրերը ուրիշ անգամ ալ փորձուած եւ իբր անյարմար թողուած էին. բայց Գ. Փառնակ կը թարգմանէ թէ այդ գրերը մոռցուած այբուբենէ մը հանուած՝ երեւան բերուած էին: Այս այբուբենը չէր կրնար ըլլալ ո՛չ յոյն, ո՛չ ասորի եւ ո՛չ ալ սասանեան պահլաւ գրերը, որոնց հայերը արդէն ծանօթ էին եւ իսկոյն կը ճանչնային. կը մնայ ենթադրել հին (արշակունեան) պահլաւերէնը, որուն գործադրութիւնը դադրած էր 272 թուականէն յետոյ. այս այբուբենը շատ կը նմանէր քաղզէականին եւ ասոր համար էր թերեւս որ գտնուեցաւ Դանիէլի քով: Դանիէլ այս արշակունի պահլաւ գրերէն հանեց իր այբուբենը եւ ղրկեց Մեսրոբին:

Այս բոլորը անապացոյց ենթադրութիւններ են՝ հիմնուած պատմիչներու աւելի անապացոյց ենթադրութեանց վրայ: Միակ իրական եւ հաստատուն կէտը որ կայ, այն է թէ Դանիէլեան

այրուքները չունէր հայերէն լեզուին յատուկ ձայները եւ այս իսկ պատճառաւ մէկ կողմ դրուեցաւ Ս. Մեսրոբի կողմէ:

9. Այս վերջին իրողութիւնը իմաստուն մտածութիւն մը կու տայ Ստ. Մալխասեանի, որ իւր վիմատիպ Մատենագրութեան Պատմութեան մէջ (էջ 50) այսպէս կը պատճառաբանէ:

Առաջին. եթէ Դանիէլեան գրերը պակասաւոր եւ հայերէն լեզուին անյարմար էին, կը նշանակէ թէ հայերէն լեզուի դասերը չէին:

Յարութիւնեան (էջ 313) կը կարծէ թէ Դանիէլեան գրերը կը ներկայացնէին Հայոց շատ հին լեզուն եւ անոր մէջ չգտնուած տառերը այն ժամանակի հայերէնի մէջ ալ չկային, որովհետեւ «ժամանակի ընթացքում հայոց լեզուն եւս կատարելագործուել էր եւ հին գիրը չէր համապատասխանում լեզուի բոլոր հնչիւններին»: Արգարեւ շատ փխրուն փաստաբանութիւն: Յարութիւնեանի կարծիքը լիովին մերժելու համար բաւական է յիշել որ հեղինակը այս կատարելագործուած լեզուին յատուկ ձայները կը համարէր ը, է, է, ա, ծ, ծ, հ, յ, շ, ճ, շ, ը, —, փ ձայները, ասոնց մոլաքը անշուշտ զնելու էր Դ գարէն ետք, որովհետեւ իր կարծիքով Դ գարուն զագրեցաւ Դանիէլեան գիրը. եթէ այս «կատարելագործեալ» գրերը Դ գարէն առաջ մտած ըլլային, Դանիէլեան գիրն ալ Դ գարէն առաջ պիտի խափանուէր: Ըսել է թէ Դ—Ե գարուն, այն է միայն 100 տարուան մէջ ստեղծուեցան այս 14 «հնչիւնները»:

Բայց մենք կրնանք ապահովցնել յարգելի հեղինակը թէ այս «կատարելագործեալ հնչիւնները» Դ դարէն շատ առաջ ալ կային:

Հիւբշման, Sprachwissenschaftliche Abhandlungen թերթին մէջ (հատ. I, էջ 129—172) պատուական յօդուած մը ունի հայերէն ձայնական օրէնքներու ժամանակագրութեան վրայ: Հեղինակը իբր կռուան բռնելով պարսկերէնէ, ասորերէնէ, յունարէնէ եւ արաբերէնէ փոխառեալ բառերը, քննութեան կ'առնէ անոնց մէջ տեղի ունեցած ձայնական փոփոխութիւնները (ի, — ձայնաւորներուն անկումը եւ է, եւ, — ձայներու սղումը): Յունարէն եւ արաբերէն բառերը այս փոփոխութիւններէն աչառ են բուլղորովին, ասորերէն բառերը մասամբ ազատ եւ մասամբ ենթակայ են, իսկ հին պարթեւական փոխառութիւնները ամբողջապէս ենթակայ են: Որովհետեւ յոյն եւ արաբ բառերը քրիստոնէական շրջանէն յետոյ մտած են, իսկ պարթեւական բառերը աւելի հին են, ուստի կ'ըրակացնէ հեղինակը թէ այն բառերը որոնց մէջ այս փոփոխութիւնները տեղի ունեցած են, կը պատկանին պարթեւական շրջանին, այսինքն 300 թուէն առաջ, իսկ այն բառերը որոնց մէջ նոյն փոփոխութիւնները տեղի ունեցած չեն, կը պատկանին սասանեան եւ քրիստոնէական շրջանին, այն է մօտաւորապէս 300 թուէն յետոյ: Հեղինակը կու տայ նաեւ քանի մը ընդարձակ ցանկեր այն բառերու որոնք այս հին պարթեւական շրջանին փոխառեալ են:

Արգ՝ ասոնց մէջ կան այնպիսի ձեւեր,  
որոնք կը պարունակեն մեր խնդրին առարկայ  
եղող ձայները. այսպէս՝

Ժ. — Նժդհ < հար. \*niždahyu-, Դժդհ < ԿՏԼ. drōžan, Դժդհ < Դժդհ. \*dužgaona-

Ծ. — Մշակ < ասոր. מִשְׁכָּל Nəšwīn.

Հ. — Հնար < պլ. hunar, Հնար < ԿՏԼ. hinduk.

Ճ. — Վճարել < ԿՏԼ. vičartan, Գճար < ԿՏԼ. viđir, Կնճիթ < ԿՏԼ. kundit, Կարգաբան < ԿՏԼ. patmōčan.

Զ. — Ասփնջակ < ԿՏԼ. \*aspinjakān.

Ի. — Բիշիկ < ԿՏԼ. bijišk, Գճար < ԿՏԼ. viđir.

Եթէ հայերէնի այս ձայները ճիշդ նոյն  
հնչումով կը գտնուին նաեւ օտար փոխառու  
ձեւերուն մէջ եւ փոխառութիւնը կատարուած  
է 300 թուէն առաջ, կը նշանակէ թէ նոյն  
թուին նոյն ձայները կային նաեւ հայերէնի  
մէջ:

Ը ձայնին հին գոյութեան համար օրինակ  
են բոլոր այն բառերը՝ որոնց մէջ իրանեան չ եւ  
ա ձայները ինկած են. երբ ասոնք ինկան, անոնց  
տեղ տկար ը ձայնը եկաւ: Յիշենք յատկապէս  
Տրդ " < ԿՏԼ. Tirdāt, որուն երեք յաջորդա-  
կան բաղաձայնները անկարելի է որ միաշունչ  
արտասանուէին:

Հիւրըմանի սկզբունքով առաջնորդուելով՝  
կրնանք վկայութեան առնել նաեւ այն բառերը՝

որոնք վրացերէնը մեզմէ փոխ առեր է։ Այս փոխառութիւնները խիստ բազմաթիւ են, բայց մեծաւ մասամբ 300 թուականէն յետոյ առնուած են, որովհետեւ կը ներկայացնեն ճիշտ հայերէնի ձեւերը՝ առանց է, — ձայնաւորներու անկման եւ է, եւ, — յ ձայնաւորներու սղման Սակայն կան քանի մը սակաւաթիւ բառեր ալ՝ որոնք է, — ձայնները կը պահեն եւ հետեւաբար 300 թուէն առաջ փոխ առնուած են։ Այս բառերուն ցուցակը առած եմ Արարատի մէջ, 1898, էջ 313բ։ Աւելորդ կը համարիմ օրինակներ դնել նաեւ ասոնցմէ, որովհետեւ վերիններուն վրայ նոր բան մը չպիտի աւելցնեն։ Կը յիշեմ միայն վրաց. *რქნის* < *რქნის* բառը, որ կ'ապացուցանէ հայ. *չ* ձայնին գոյութիւնը 300 թուէն առաջ։

Է ձայնին համար կը յիշենք *լէւ* = *պրս. virēb*, որուն մէջ *i* ձայնին անկումը՝ բառը կը տանի 300 թուէն առաջ։ Սակայն այս ձայնին հին գոյութեան համար ունինք այնպիսի օրինակներ, որ պահպանական ձեւերն ալ կ'անցնին կը գերազանցեն հնութեան կողմէ։ Այս. *պէս* է *ռէլէ* = *զնդ. \*xšaeta-*, *պՏԼ. šēt*, որուն մէջ թէեւ *š* (է) կայ, բայց *x* ձայնը ինկած է. ուրեմն մեր ձեւը անկէ աւելի հին է եւ կը բռնէ զանդիկ եւ պահպանական ձեւերուն մէջտեղը. *յ-է-է* = *արշակունեան պՏԼ. yāvētan*, որուն սասանեան ձեւն է *yāvēd*, *դ-է-է-է* = *սասանեան պՏԼ. pālēz*, *արշակունեան ձեւը պիտի ըլլար \*pardēz*, ինչպէս կը ցուցնէ երբ. *pardēs*. Աւելի, հին

արշակունի անուն, որուն նոր սասանեան ձեւն է Ardašir (Արաշիր)։ Սասանեան բառին մէջ *d* կը ցուցնէ բառին յետնութիւնը։ Հայերէնի մէջ *+* (*t*) խոր հնութեան նշան է։ Պլուտարքոս եւ Դիոն Կասիոս կը յիշեն Ἀρταξης (*η* = *ե* եւ *ոչ* թէ *ε* = *ե*) հայ թագաւորը Ն. Ք. 30 թուին (Հիւբշ. Arm. Gramm. էջ 29)։

Այսպէս ուրեմն ապացուցուած է թէ Հայերէնի *լ*, *է*, *ի*, *ժ*, *հ*, *յ*, *ճ*, *լ* ձայները արգէն Բ — Գ դարուն գոյութիւն ունէին։ Յարութիւնեանի ցուցակը ամբողջական ըլլալու համար պէտք էր ապացուցանել նաեւ *ւ*, *լ*, *ն*, *ւ*, *փ* ձայներուն գոյութիւնը։ ասոնց համար չունինք առ այժմ այնպիսի հաստատուն (եւ շօշափելի) օրինակներ, որ ամէն կասկածէ վեր ըլլային։ Սակայն այսքանն ալ բաւական է կարծեմ ոչընչացնելու համար իր սխալ կարծիքը։

Այս բոլորէն կը հետեւի թէ այդ Դանիէլեան գիրը՝ որ 22 տառերէ կը բաղկանար, ոչ միայն չէր յարմարեր Ե դարու հայերէնին, այլ եւ չէր կրնար նախորդ դարերու լեզուին յարմարիլ, եւ հետեւաբար երբեք ալ հայերէն գիր եղած չէր։ Յարութիւնեանի փաստաբանութիւնը իր դէմ կ'ելլէ եւ ինքզինքը կը ջնջէ։

Երկրորդ. Ինչպէս կրնայ ըլլալ որ ազգ մը կամ լեզու մը այբուբենն մը ունենայ, գործածէ զայն ժամանակ մը, եւ այդ գրականութիւնը այնպէս մը ջնջուի, որ անկէ գիղք մը, տետրակ մը կամ աննշան արձանագրութիւն

մանգամ չմնայ: Հին պարսկերէն բեւեռագրութիւնն ալ ջնջուեցաւ. պահլաւական գրականութիւնը իրենք պարսիկները իրենց ձեռքով ջնջեցին ոչնչացուցին. բայց ինչքան ալ որ ջնջեցին, նորէն այդ գրականութեանց մնացորդները կան ու յաւիտեան կը մնան: Եթէ դարերու խոշոր անջրպետ մ'ունենանք ի նկատի, այգպիսի գիրք մը (ինչպէս հանճարեղ կերպով կը նկատէ Հ. Բ. Սարգսեան, Ագաթ. եւ իւր բազմ. գաղտ. էջ 290) երեւան պիտի գար գոնէ Ե գարուն եւ այդ առթիւ կորիւն եւ կամ ուրիշ ժամանակակից մէկը բան մը յիշելու էր:

Վերջապէս ինչպէս կրնայ ըլլալ որ այս հայկական համարուած այբուբենը ամէն տեղանհետ կը կորսուի, Հայաստանի մէջ՝ ուր գործածուած պիտի ըլլար, ի սպառ կ'աներեւուէր թանայ, եւ կը մնայ միայն Միջագետցի ասորիի մը քով:

Այս պատճառաբանութիւններէն կը հետեւի պարզապէս թէ Դանիէլեան գրերը հայերէն չէին եւ հայոցմէ երբեք գործածուած ալ չէին, այլ կորսուած հին սեմական ազգի մը այբուբենը, զոր Ս. Մեսրոբ յետոյ միայն հասկնալով՝ երեսի վըայ ձգեց: Եւ այս բանը կը ցուցնէ կորիւնի համառօտ, բայց զօրեղ վկայութիւնը. «Մանաւանգ զի եւ նշանագիրքն իսկ յայտնի չէր թողեալք եւ յարուցեալք դիպեցան», Միեւնոյն բանն է նաեւ խորենացւոյն ըսածը. «Մոռաց-նոյն-ն այնուիկ գծագրու-

Թեանմբ, այսինքն օտարէն մոլորացուած<sup>1</sup> եւ երբեք հայ ազգային սեփականութիւն չեղած։ Դանիէլ ասորի եպիսկոպոսը յանկարծ տեղ մը գտնելով յիշեալ այբուբենը եւ կարծելով թէ հայ լեզուի այբուբենն է, յայտնեց վռամշապուհին, որով եւ պատճառ եղաւ սուտ լուրի մը տարածուելուն Հայոց մէջ։

Հայերը նախ քան Մեսրոբ գրաւոր գրաւանութիւն ունեցած չեն. եղած է միայն բանաւոր գրականութիւն՝ որուն հաւանութեան են վիպասանական երգերը. այսպիսի գրականութիւն ունի եւ ամէն անգրագէտ ազգ, օր. այսօրուան քրդերը, գնչուները, լազերը եւն։ Ս. Մեսրոբէն առաջ հայերէն գրականութիւն չենելը, որ իրր թէ ջնջեց Ղուսաւորիչ՝ այրելով քոլոր հայերէն գրքերը, անմիա հէքեաթ մ'է միայն։

## Գ Լ Ո Ւ Խ Ե .

Պարսիկ, Յոյն եւ Ասորի գրերը։

Նախորդ գլխուն մէջ մեր եզրակացութիւնն այն եղաւ՝ որ Հայերը նախ քան Ս. Մեսրոպ (իբր թէ Դանիէլեան գրերով) գրաւոր գրականութիւն ունեցած չեն. եղած է միայն բանաւոր գրականութիւն, որ կը բաղկանար Ժողովրդական երգերէ, զրոյցներէ եւ առաս-

1 Մարտի 1-ի թուականին այս նշանակութիւնը կը գտնուէր նաեւ Փարսեցւոյն քով. «մանաւանդ թէ գն Նշանագիրը հայերէն լեզուոյն, որով հետք է ինքեան նային եւ ոչ Բարսեցւոյ բարբառով շահել զգրիւն»։

պեններէ, որոնք կ'երգուէին ու կը պատմուէին միշտ բերանացի, առանց բնաւ գրի առնուելու (վիպասանական շրջան): Այս շրջանը տեւեց մինչեւ Ե գարու սկիզբը, երբ Ս. Մեքոպ հայերէն գրերն հնարելով՝ ստեղծեց հայոց գրաւոր գրականութիւնը:

Հին բանասէրներէն շատերը, ինչպէս եւ նորերէն ոմանք, կ'ենթադրեն թէ այս շրջանին մէջ Հայերը զուրկ չէին գրաւոր գրականութենէ, այլ ընդունելով պարսիկ<sup>1</sup>, յոյն եւ ասորի տառերը՝ ստեղծեր էին հայալեզու, բայց պարսկառաւ, յունառաւ եւ ասորառաւ գրականութիւն մը, ճիշտ այնպէս՝ ինչպէս արգի եւրոպական լեզուները կը գործածեն լատինական տառերը, բայց կը գրեն իրենց խօսած լեզուով, կամ ինչպէս մահմետական իւրաքանչիւր ազգ կը գործածէ արաբական տառերը, բայց կը գրէ իր մայրենի լեզուով:

Այս ենթադրութիւնն ապացուցանելու համար յիշեալ բանասէրները մէջ կը բերեն հետեւեալ երեք պատճառաբանութիւնները:

Ա. Ոսկեգարու առաջին գրուածքները, որոնք գրերու գիւտէն անմիջապէս յետոյ գրուեցան, ինչպէս Ս. Գիլքը, Նորիւն, Եզնիկ եւն, ունին այնպիսի գեղեցիկ, ճոխ ու կանոնաւոր լե-

<sup>1</sup> Պարսկական տառեր ըսելով կը հասկնաւի պահլավական կամ զէնաական գրերը: Որոնք իրարմէ անշտն տարբերութիւն միայն ունին: Այս պարսիկներու գործածած տառերը առնեց հետ բնաւ կապ չունին, արաբերէն են եւ փոխ առնուած շատ յետին ժամանակներու մէջ:

զու մը, որ երկար մատենագրական մշակութիւն կ'ենթագրեն. առանց այս մշակութեան այնպիսի սքանչելի լեզու մը արտագրել անկարելի է. եւ որովհետեւ անկարելի է մատենագրութիւն առանց գրերու, ուստի պէտք է ենթադրել թէ Հայերը այն երկար շրջանին ալ գրեր ունեցած ըլլան:

Բ. Մեր մատենագրութեան մէջ կան քանի մը գրուածքներ, ինչ. Յաճախապատում, Ագաթանգեղոս, Բուզանդ, Ջենոր Գլակ, որոնք գրուած են Դ դարուն. եթէ ասոնք գրուած ըլլային նախ յունարէն կամ ասորերէն եւ յետոյ թարգմանուած հայերէն, պէտք էր որ բնագիրներէն հետք մը մնացած ըլլար. բայց որովհետեւ կարելի չէ ապացուցանել այսպիսի բնագրի մը գոյութիւնը, ուստի ընդունելու է թէ այս աշխատութիւնները գրուեցան յունարէն կամ ասորերէն տառերով եւ հայերէն լեզուով. եւ միայն հայերէն գրերու գիւտէն յետոյ վերածուեցան հայերէն տառերու:

Գ. Մեր մատենագիրները քանի մը տեղ յայտնապէս կը վկայեն թէ հայերը գրերու գիւտէն առաջ կը գործածէին յունարէն, ասորերէն եւ պարսկերէն գրերը: Այսպէս Փարպ. Գլ. Ժ (էջ 43 նոր տպ.) խօսելով Ս. Մեսրոպի ժամանակ արքունի դիւանագրութեան մասին, կ'ըսէ. «Ասան զի ասորի եւ յոյն գրով վճարէին յայնժամ զգործ թագաւորացն Հայոց՝ արքունի դպիրքն, զվճռոցն եւ զհրովարտականն», խորենացի (Ա. Գլ. Գ) խօսելով հին

Հայոց անուսումնասիրութեան մասին, կը գրէ.  
 “Այլ ասիցէ որ արդեւք վասն ոչ լինելոյ գիր  
 եւ դպրութիւն ի ժամանակին կամ վասն պէս-  
 պէս պատերազմացն, որ կուռ զմիմեանց զկնի  
 անհետ ի վերայ գային, Այլ ոչ արգարեւ այ-  
 սոքիկ կարծեցեալ լինի, քանզի գասնին եւ  
 միջոցք լեալ պատերազմացն, եւ գիր պարսից եւ  
 Յունաց, որովք այժմ գիւղից եւ գաւառաց եւս  
 եւ իւրաքանչիւր տանց առանձնականութեանց  
 եւ հանուրց հակառակութեանց եւ դաշանց  
 այժմ առ մեզ գտանին անրաւ զրուցաց մա-  
 տեանք. մանաւանդ որ ի սեփական ազատու-  
 թեան պայազատութիւնն.” Նոյնպէս՝ Մերու-  
 ժանի այրած գրքերու առթիւ խօսելով՝ կը  
 յիշեցնէ թէ “Զի յայնժամ գիր դպրութեան  
 Հայոց չեւ եւս էր լեալ, եւ յունականաւն վա-  
 րէին եկեղեցւոյ կարգք” (Խոր. Գ. 19), Վեր-  
 ջապէս Մեսրոբի հրաժարումէն յետոյ՝ արքունի  
 քարտուղարի պակասութեան առթիւ կը գրէ.  
 “Ոչ փոքր ինչ կրէ (Վռամշապուհ) աշխատու-  
 թիւն յաղագս քարտուղարի, զի մինչեւ գնաց  
 Մեսրոպ յարքունական դրանէն՝ ոչ զոք ի ճար-  
 տարաց գտանէր անդ ի գպրաց, քանզի պարս-  
 կականաւն վարէին գրով” (Խոր. Գ. Ժբ)։

Ներսէս Շնորհալի՝ Բարձրացուցէքի Մեկ-  
 նութեան յառաջաբանին մէջ՝ օգտուելով Խո-  
 րենացիէն, կ'ըսէ. “Եւ այսպէս կարգեցան (յա-  
 ջորդք Ս. Լուսաւորչի) մինչեւ ի սուրբն Սահակ  
 եւ Մեսրոբ, զանձինս տուեալ օրինակ բարեաց,  
 եւ վասն զի ոչ էր գիր հայերէն լեզուի, այլ

յոյն եւ ասորի գրով վարէին եւ ուր ոչն լինէին սուրբն Սահակ եւ Մեսրոպք, որ Թարգմանէին եւ մեկնէին զգիրս սուրբս, յոչով ուրեք պահասութիւն լինէր ճշմարտութեան աւանդիցն առ աշակերտեալսն եւն<sup>1</sup>։

Աւելի յետին ժամանակներէն ունինք՝ Երակոս պատմիչ. «Քանզի ցայնվայր ոչ ունէին գիր չալք, այլ յոյն եւ ասորի գրով վարէին եւ նշանագրաւ» (էջ 15)։ Վարդան պատմիչ՝ էջ 49 «յոյն եւ ասորի եւ պարսիկ գրով շատացեալք»։

Գանձարանը երկու տեղ կը յիշատակէ նոյն բանը, նախ կանոն Սահակայ եւ Մեսրոպայ.

Արդ ի մերոյ սուրբ Լուսաւորչէն,  
Արթուն անուն սրբոյ Գրիգորէն,  
Օրինադրեալ դարձաք ի չարէն,  
Ի կոռց զոհից եւ ի բանսարկուէն,  
Այլ նա վարժեալ գրովն յունարէն,  
Զի չունէաք գիր ի հայ բառէն,  
Մինչ իսահակ մեծն ի պարթեւէն<sup>2</sup>։

<sup>1</sup> Նոյն հեղինակին խօսքերը Նիկքս կայսեր մատուցած Հաւատոյ դաւանութեան մէջ (տես Երակոս պատմիչ), պէտք է հասկնալ զուտ յունարէն բնագիրներու համար. «Եւ օրհնութիւն խաչի ոչ ի մէջ եղեալ է, այլ յաւաքին հարցն ձերոց (Յունաց), զոր նախնիքն մեր Թարգմանեալ ետուն միշտ, որպէս այժմ դասնեմք յարեւելոյ յունարէն գրով ի հին գիրս, ոչ առանել եւ ոչ նուազ քան գիրս, զի գրեալ էր լուսնաւ գնորդ խաչի»։  
<sup>2</sup> Աւան եւ թուրիքի Ա. 48 թիւ ձեռագրէն, էջ 318բ-321բ, սրուն հետ համեմատած եւ Էջմիածնի Արթնեան թ. 466, էջ 182 եւն։

երկրորդն է Գանձ սրբոց Թարգմանչացն,

Թագէոս եկեալ,

Զոր գրով յշեալ,

Թումայ առաքեալ,

Մեր հարքն որ ընտրեալ,

Յասորոց վարժեալ,

Յոյն գրով վարեալ<sup>1</sup>,

Այս կարծիքը առաջին անգամ յայտնած է Չամչեան, որ թէեւ իր պատմութեան մէջ առանձին անսովորեալ մը չի պարզեր իր գաղափարը, ըստ էջ 494 եւ 509 առած անդուծութիւններով պարզապէս յայտնի կ'ընէ իր միաբնակ շայոց գրաւոր գրականութեան առաջին գործունէութեան ժամանակ Ս. Սահակի համար կ'ըսէ. «Եւ որչափ ինչ գիրս եգիտ գրեալ յունաց կամ ասորոց տառիւ, յորս ընդն էին հայերէն, ետ գրել զայնս հայոց գրով» (էջ 494)։ Յովսէփի եւ Եղիկ զրկուեցան Եգեպտա, «զի թէ կայցեն անդ մատեանք ինչ հայոց՝ գրեալ ասորոց գրով՝ գրեսցեն զայնս հայերէն, նաեւ զգիրս հարց ասորոց Թարգմանեացն ի հայս» (էջ 509)։

Չամչեանի կարծեցիկն են Դնճիճեան, Էմին, Լիշան եւ Վենետիկցիներէն շատերը<sup>2</sup>, աւելի

1 Թարգմանքի Ս. 43, էջ 150բ—154ա։

2 Ասոնց հետ գնելու է նաեւ Հ. Մ. Ազեբեան, որուն խօսքերը սակայն քիչ մը անորոշ են. հմտ. հեւեալ հաստատօրէն. «Քաջավարժ գտաւ (Ս. Սահակ) յամենայն դպրութիւնս յունաց եւ ասորոց եւ պարսից թող զներհուն հմտութիւն ի բնիկ բարբառ հայկաբան առանց

նորերէն Զարհանալեան (Պատմ. Հայ Դպր.<sup>3</sup> էջ 16—17), Ֆր. Միւլէր (Zur Geschichte der arm. Schrift, WZKM 1890, Թրգմ. ՀԱ 1891, էջ 69բ), Իս. Յարութիւնեան, Ս. Վէպէր, եւ այս բանը կ'ուսուցուի մինչեւ անգամ դասագրքերու մէջ եւ այլուր. ինչ. Մուրատեան Եկեղ. պատմ. էջ 87, Պալասանեան (Փորձ, Բ տարի, Գ. էջ 29), Ի. եպ. Ստեփանէ (Խոր. աշխ. Թրգմ. Ծանօթ. 12) եւն:

Ինճիճեան կ'ընդունի թէ հայերը նախապէս կը գործածէին Դանիէլեան գրերը, այս գրերը ձայնաւորէ զուրկ ըլլալով՝ հայերը ստիպուեցան թողուլ զանոնք եւ փոխ առին գրացի երեք ազգերու գրերը, բայց մանաւանդ յունարէն եւ ասորերէն. «ի պակասիլ ձայնաւոր տառիցն՝ չէ մարթ կապել կամ հեգել զվանկս... Եւ վասն այնորիկ նախնիք մեր բոլորովին ի բաց թողեալ զայն գիր՝ երից դրացի ազգաց գրովքն վարէին (Հնախօս. Գ. էջ 74). Բայց առաւել երեւի գործածութիւն յունական տառից, եւս առաւել ասորեոցն» (անգ. էջ 70):

Ի. Պին (Ивсанъ А. 1896, էջ 207, 211 եւ 221, Թարգմ. Հայկ. աշխարհ 1870, էջ 45) Դանիէլեան գրերէն յետոյ կը դնէ պարսկական կամ զէնդ, յետոյ ասորական եւ վերջապէս յունական գրերու գործածութիւնը, այս գրերը՝ զուտ քաղաքական պատճառներով մանելով

ԳՐԱՅ. ԳԻՆ ԴՊՐ ՀԱՅԵՐԷՆԳԻՐ ԳՎՐԱԹԻՒՆ ՄԻՆՇԵ ԳՐԱՐԱՆ  
ՆՈՐԸ, ՎԵՆ ՈՐՈՎ ՎԱՐԷԻՆ ՕՐՈՐ ԳՐՈՎ: (Ախի. ՎՐԲ. ՍՐԲ.  
Բ. 182. Հմմտ. նաեւ Բ. 141, Ե. 281, 287.)

Հայաստան, խափանեցին Գանիէլեան գրեթե գործածութիւնը, “Գիտնականները այս խնդիրը բաւական լուսաբանած են արդէն”, կ’ըսէ Տեղինակը եւ աւելորդ կը գտնէ անոր վրայ անգամ մ’ալ վերագառնալու:

Իս. Յարութիւնեան (Հայոց գիրը, էջ 153, 157) կ’ընդունի թէ հայերը ունէին ընդհանր գիր, որ “ամուր կապերով շղթայուած էր կռապաշտութեան հետ”, յոյն եւ ասորի կրօնաւորները դառնալով Հայաստան, հալածեցին զայն եւ “ներմուծեցին յունական եւ ասորական գիրը”, այնուհետեւ հայ ազգը “մոռացութեան տալով իւր սեպհական հին գիրը՝ մոռացկանութեամբ սովորում եւ գործ էր դնում յունաց, պարսից եւ ասորոց տառերը”, Բայց օտար քարոզիչները ասով ալ չբաւականացան եւ հայ լեզուն ալ ջնջելով՝ սկսան գործածել յունարէն եւ ասորերէն լեզուները: Հայերը տեսնելով որ այսպէսով իրենց ազգութիւնը կորուսման ճամբուն մէջ է, մտածեցին հնարել հայերէն գիր եւ ազգը փրկել:

Ամենէն մեղմ է S. Weber (Die katholische Kirche in Armenien, 1903, էջ 395), որ կը կարծէ թէ Ս. Մեսրոպէն առաջ հայերը առօրեայ գործառնութեանց մէջ կը գործածէին յունարէն գրերը (հայ լեզուով գրուածներու մէջ), բայց ամբողջական գրականութեան մը գոյութիւնը կը մերժէ:

Քննիչներէն ոմանք մինչեւ իսկ տարօրինակ յայտնութիւններ կ’ընեն այս մասին. օրինակ

Ինճիճեան կը պատմէ թէ մինչեւ այժմ ալ գոյութիւն ունին ասորի տառերով հայերէն գրքեր. «Երբեք չայժմ լսեմք ուրեք ուրեք գտանիլ հայկական մատենից դրեալ ասորի տառիւք. յորոց զմին ինքնին տեսեալ վկայեաց մեզ Սիմոն Լասեմանին, որ մի էր ի վարժապետացն ի Պետաւիոն», (Հնախ. Գ. էջ 71):

Սակայն բոլոր այն պատճառաբանութիւնները՝ որով կ'ուզուի ապացուցանել հայերէն լեզուով ու պարսկաւար, յունատառ եւ ասորատառ գրականութեան մը գոյութիւնը, անհիմն ու սխալ են. անոնցմէ ոչ մէկը կրնայ դիմանալ նոր քննական գիտութեան առջեւ, եւ ոչ մէկ նոր բանասէր՝ որ ծանօթ է քննական պատմութեան եւ լեզուաբանութեան, կրնայ ընդունիլ այսպիսի սխալ ենթադրութիւն մը:

Չամչեանի կարծիքին հակառակորդ եղած վիճենացիք, որոնց կողմնակից են նոր բանասէրները. այսպէս Գարագաշեան (Քնն. պատմ. Գ. էջ 32—33), Լ. Յ. Տաշեան (ՀԱ 1893, էջ 90—91), Լ. Բ. Սարգիսեան (Ագաթ. եւ իւր բաղմ. գաղտ. էջ 288—297), Հիւպըման (Arm. Gramm. էջ 12), Գ. Տէր-Մկրտչեան (Արարատ 1896, էջ 31), Լ. Գ. Մէնէվիշեան (ՀԱ 1896, էջ 213—214), Ստ. Մալխասեան (Դասընթաց Հայոց մատ. պատմ. էջ 44), Marquart (ՀԱ 1911, 535—536) եւն:

Ասոնց մէջ բերած փաստերը եւ մեր պատճառաբանութիւնները միացնելով իրարու հետ, կ'անցնինք քննել հիներուն առարկու-

թիւները եւ իւրաքանչիւրին պատասխանել մի առ մի:

—) Լեզուն գործարանաւոր մարմին մ'է, որուն կեանքը կախուած է խօսողներէն. գրիչը՝ այսինքն գրական մշակութիւնը, այնքան մեծ ազդեցութիւն չունի անոր վրայ, որչափ կենդանի շրթունքը. ժողովուրդի մը հազարաւոր տարիներու աշխատանքը այնպէս կը կոկէ կը կերպարանափոխէ զայն, որ գիտունը շատ անգամ զարմացած կը մնայ: Ափրիկէի եւ Ամերիկայի վայրենիներուն մէջ անգամ գտնուեցան այնպիսի լեզուներ, որոնց կանոնաւորութիւնն ու ճոխութիւնը կրնար միջիլ մշակուած լեզուներու հետ, թէեւ անոնք ամենեւին գրական մշակութիւն տեսած չըլլային: Բնաշրջութեան եւ բնական զարգացման այս օրէնքին արդիւնքն է նաեւ մեր Ե դարու լեզուն. ամենեւին պէտք չկայ անոր կազմութեան մէջ հին գրական մշակութիւն մը ենթադրել. անոր կանոնաւոր քերականութիւնն ու ճոխ բառարանը հայ ազգի հազարաւոր տարիներու կեանքի ծնունդն է: Իսկ ոճի այն մաքրութիւնն ու վայելչութիւնը՝ որով կը փայլին Ե դարու գրուածքներէն ոմանք, արդիւնք են իրենց հեղինակներու ազնիւ ճաշակին եւ Յունաստանի մէջ ստացած կրթութեան: Լեզուն միշտ մարդունն է, ոճը հեղինակին: Արդարեւ կրեց հայերէնը գրական մշակութիւն, բայց այս ձախորդ գրական մշակութիւնը յունաբան կամ լատինաբան արուեստակեալ լեզու մը միայն տուաւ:

բ) Դ դարուն հայերէն լեզուով մատենագրութիւն մը ենթադրելը հին Վենետիկեան ներուն քաղցր երազն էր. բոլոր այն աշխատութիւնները՝ որոնք նոյն դարուն ծնունդը կը համարուէին, նորագոյն քննադատութեան վճռով իջան Ե. Զ. եւ է գարերուն: Յաճախ պատուով որ Ս. Գրիգոր Լուսաւորչի աշխատանքը կը համարուէր, Ե դարուն ալ չի կրնար գրուած ըլլալ: Ագաթանգեղոս եւ Բուզանդ գրուած պիտի ըլլան Ե դարու առաջին կէսին, ինչպէս կը ցուցնէ իրենց բնիկ ոսկեդարեան լեզուն: Զենոր Գլակ Է. Գաթրճեանի եւ Պրոֆ. Խալաթեանի վճռով է գարու կարկատանք մ'է: Ղեբուբնայի բնագիրը գրուած է ասորերէն լեզուով եւ Ե գաբու առաջին կէսին թարգմանիչներու ձեռքով հայերէնի վերածուած: Վերջապէս Ե գարէն առաջ հայալեզու գրականութիւն մը չկայ եւ չկրնար լինել<sup>1</sup>:

Եթէ հայերը Դ դարուն գրականութիւն մը ունեցած ըլլային, ամէնէն առաջ պարտաւոր էին Ս. Գրիգոր, գոնէ միայն Աւետարանը թարգմանել եւ ոչ թէ զանազան պատմական դործեր հեղինակել: Վրաց, Աղուանից, Գոթաց եւ Սլաւներու մատենագրութիւնն ալ այս ձեւով սկսած է: Եւ չկայ հեղինակ մը՝ որ կարծէ թէ Աւետարանն ալ յունատառ կամ ասորատառ եւ հայալեզու էր քանի որ պատմագիրներու վկայու-

1 Իր վերին ուսումնասիրութեան Էջ Marquart Իսաա բառերով կ'ըսէ. "Հայաստանի Էջ երկրին յատուկ լեզուաւ առջ մ'իսկ գրուած չէր" (ՀԱ. 1911, էջ 536):

Թիւնն այս մասին շատ պարզ է. «Քանզի ոչ գոյին դեռ եւս հայերէն լսողութեամբ սուրբ կտակարանք եկեղեցւոյ,» (Փարպ. Ժ): Նոյն իսկ Չամբեան, որ այս կարծիքին հեղինակն է, կ'ընդունի թէ Մեսրոպ «հանապազ ընթերցեալ յականջս Ժողովոգոց զաստուածաշունչ գիրս գրեալս յայլ լեզու՝ մեկնէր նոցա զայն հայերէն,» (Ա. էջ 489):

Գ) Մեծագոյն փաստը՝ որ գիտնականները պիտի կասեցնէր, երրորդն է. ինչպէս կարելի էր առարկել այն պարագային՝ երբ Փարպեցի, Խորենացի եւս յայտնի վկայութիւն կու տան թէ հայերը կը գրէին յոյն, պարսիկ եւ ասորի գրով:

Քննագատութիւնը չի մերժեր Խորենացւոյն, մանաւանդ Փարպեցւոյն վկայութիւնը. բայց նկատել կու տայ թէ Էդր բառը հոս հին իմաստով պէտք է հասկնալ «գրականութիւն,» եւ ոչ թէ «տառ, նշանագիր,» Փարպեցին կամ Խորենացին կ'ուզեն ըսել թէ Հայերը Ս. Մեսրոպէն առաջ հայկական գիր եւ գրականութիւն չունէին, բայց պէտք եղած պարագային կը գործածէին յիշեալ երեք ազգերու գրականութիւնը. կը գրէին յունարէն տառերով եւ յունարէն լեզուով, կամ պարսկերէն տառերով եւ պարսկերէն լեզուով, եւ կամ վերջապէս ասորերէն տառերով եւ ասորերէն լեզուով: Այս վիճակը կը համապատասխանէ եւրոպական ազգերու հին շրջանին, երբ ասոնք մայրենի լեզուով գրականութիւն չունենալով՝ կը գործածէին լատիներէն լեզուն:

Յետին ժամանակներու մէջ, երբ չէր բաժնի պահեց միայն «տառ, նշանագիր» իմաստը, ինչպէս հիմա, փարպեցւոյն եւ խորենացւոյն վկայութիւնը՝ որ լեզուի մասին էր, նշանագրի համար առնուեցաւ։ Այսպէս կրնայ հասկցած ըլլալ օրինակ Ն. Շնորհալի՝ իւր վկայութեան մէջ, թերեւս նաեւ վարդան պատմիչ։ բայց մանաւանդ Կիրակոս Գանձակեցին, որ իր «Ինչ է և ինչ չէ»-ը, բառերով յայտնապէս կը ցուցնէ թէ ինքը նոր իմաստով միայն հասկցած էր։

Եթէ հայերը կարենային գործածել յունարէն, պարսկերէն եւ ասորերէն գրերը հայերէնի համար, կը նշանակէ թէ ունէին երեք տեսակ այբուբեն, հետեւաբար պէտք չկար Ս. Մեսրոպին կրել այնպիսի մեծամեծ նշանութիւններ՝ հայ ժողովուրդին գրեր տալու համար։ Եւ ի զուր է ենթադրել Խ. Յարութիւնեանի նման (Հայոց գիրը, էջ 258) թէ Ս. Մեսրոպի հայերէն գրեր հնարելու բուն պատճառը նոյն իսկ մեր երեք տեսակ այբուբեն ունենալն էր, որոնցմէ ոչ մին կրցաւ ճանչցուիլ իրր ազգային սեպհականութիւն. եւ իրր թէ եթէ այս երեք գրերէն մէկը միայն գործածական ըլլար, գրի գիւտը երբեք չէր կրնար տեղի ունենալ եւ ոչ ալ կրնար յառաջ գալ Ս. Մեսրոպի այն մեծ յեղափոխութիւնը։ Ի զուր է այս ենթադրութիւնը, որովհետեւ բուն իսկ իր մէջ կը հակասէ, քանի որ պատմագիրներու վկայութեան համեմատ վերջին ժամանակները յունարէնը վտարուելով՝ մնացած էին միայն ասորի եւ



եթէ աւելի բացայայտ կերպով ալ ըսուած ըլլար, կարելի չէր իրրեւ ստուգութիւն ընդունիլ, քանի որ հնագոյն պատմագիրները այգպիսի բան մը չունին: Կորիւն կը գրէ. «Ձի յասորական բարբառոյն՝ զնոցին հարցն սրբոց զաւանդութիւնս, հայերէն գրեալս գարձուսցեն (էջ 20), Հոս «Հայերէն գրեալս, գարձուածը պէտք չէ կասկածի տեղիք տայ, իբր թէ Կորիւն ըսել ուզէր՝ Միայն հայերէն գրերով գրուած, որովհետեւ եթէ գրերը միայն ասորի ըլլային, իսկ լեզուն հայերէն, կարելի չէր ըսել «յասորական բարբառոյն»:

✓ Աւելի բացորոշ են Փ. Կորիւն եւ Խորենացի. «Ձի յասորի բարբառոյն զսուրբ գիրս Նոր Թարգմանեսցեն ի հայ լեզու եւ գրով աւանդեսցին իւրեանց աշխարհիս» (Փ. Կոր. էջ 16): Հոս ոչ միայն «յասորի բարբառոյն», բառերը ասորերէն լեզուն կը մատնանշեն, այլ եւ «նոր Թարգմանեսցին ի հայ լեզու», բառերն ալ կարծես դիւմամբ դրուած են, յայտնապէս ցուցնելու համար թէ այն գրքերը հայերէն չէին, հայերէնի Թարգմանուած չէին, եւ Նոր պէտք էր Թարգմանել հայերէն: — «Ձի որ միանգամ գացի անգ գիրք ասացեալ նոցին սրբոց հարցն առաջնոց, Թարգմանեալ ի մեր լեզու՝ բերցին փութով, զի յետ այնր ի Բիւզանդիոն առաքեսցին ի նոյն գործ» (Խոր. Գ. Կ): Կարելի չէ կարծել որ Ասորի սուրբ հայրերը իրենց գործերը հայալեզու եւ միայն ասորատառ գրած ըլլային. եւ, եթէ Նոյն գործին համար Բիւզանդիոն ալ

պիտի երթային, նաեւ յոյն հայրերը յունա-  
տառ ու հայալեզու գործեր թողուցած ըլլային,  
վերջապէս եթէ իրօք հայալեզու եւ ասորա-  
տառ կամ յունատառ գրութիւններ կային, ինչ  
գործ ունէին անոնք Եգեսիոյ եւ Պոլսոյ մէջ, չէ՞  
որ այդպիսի գրքերը Հայաստանի մէջ միայն  
պիտի գտնուէին. եւ եթէ Հայաստանի մէջ կար,  
այլ եւս ինչ պէտք կար այդքան հեռունները  
երթալ՝ հայատառի վերածելու համար զանոնք:

Եթէ հայերը օտար տառերով հայալեզու  
գրականութիւն մը ունենային, այլ եւս ինչո՞ւ  
ուրեմն չպիտի կրնային հասկնալ եկեղեցական  
գրքերը, երբ անոնք եկեղեցւոյն բնմէն կը  
հնչէին. գրին ձեւը ինչ նշանակութիւն ունի  
հնչման մէջ. նեղութիւն կրողը շատ շատ ըն-  
թերցողը պիտի ըլլար: Եւ այլ եւս ինչ բանի  
պէտք էին թարգմանիչները, առանց որոնց ժո-  
ղովուրդը ամենեւին բան մը չէր հասկնար:  
«Ասորի մեծաջան եւ անօգուտ ուսմամբքն աշ-  
տեալք յոխորտ. յորոց բազմութիւնք ժողո-  
վրդոց ունայնք եւ թափուրք հրաժարեալք  
գնային յեկեղեցւոյն, եւ ուսուցիչքն հանելով  
յոգւոց եւ հառաչելով՝ զղջանային զսնոտի ջանն  
իւրեանց, յորում ոչ զոք յուսումնասէր ժողո-  
վելոցն տեսանէին օգտեալս ի վարդապետու-  
թենէ հոգեւոր խրատուցն», (Փարպ. Ժա):  
«Քանզի ինքն էր (Մեսրոպ) ընթերցող եւ թարգ-  
մանիչ, եւ եթէ այլ ոք ընթեռնոյր, ուր նա ոչ  
հանդիպէր, զանխուլ ի ժողովրդոցն լինէր՝ յա-  
ղագս ոչ լինելոյ թարգմանիչ. (խոր. Գ. խէ)

Այս խօսքէն պարզ է որ գրեթե ընթերցման համար կային երկու տարբեր պաշտօնեաններ՝ ընթերցող եւ խօսք-նշող. առաջինը յոյն կամ ասորի տառերը ճանչնալով՝ պարզապէս կը կարգար գիրքը, բայց լեզուն չէր հասկնար. անոր կը յաջորդէր երկրորդը՝ որ յոյն կամ ասորերէն լեզուն ալ գիտնալով՝ կը սկսէր թարգմանել կամ գրուածքին միտքը բացատրել:

Եթէ օտարատառ եւ հայալեզու գրական-նութիւն մը ունէին հայերը, այն ինչ աւելորդ ոգեւորութիւն է՝ որ ամբողջ Հայաստանը կը պատէ հայալեզու գրականութիւն մը ստեղծուելուն առթիւ, որուն համար Կորիւն ու Փարպեցի յափշտակուած հիացած՝ բառ չեն գտներ պատմելու, ու կը նկարագրեն մեզ՝ իբրեւ հրաշալիք մը՝ որուն նմանը բնաւ երբեք չէր տեսնուած:

Աերջապէս իբրեւ հզօր փաստ պէտք է յիշել պատմագիրներու այն վկայութիւնները, որոնցմով յայտնի կը ցուցուի թէ խնդիրը ոչ թէ յոյն, պարսիկ եւ ասորի տառերով գրելու վրայ է, այլ բուն իսկ այդ լեզուներով գրելու եւ կարգալու: Այսպէս օրինակ՝ Փարպ. Ա. «Քանզի պաշտօն եկեղեցւոյ եւ կարգացմունք գրոց ասորի ուսման վարէին ի վանորայս եւ յեկեղեցիս Հայաստան ժողովրդոցս. յորմէ ոչ ինչ էին կարող լսել եւ օգտել ժողովուրդքն այսպիսի մեծ աշխարհի, եւ լինէր պաշտօնէիցն աշխատութիւն եւ ժողովրդոցն անշահութիւն յանլրութենէ լիւ-ին ասորւոյ... մանաւանդ թէ գոն նշանագիրք հայերէն լեզուոյս, որով

հնար է՝ ինքեան ձայնիւ, եւ ոչ հոգեւոր քեր-  
բանի (բարբառով՝ այսինքն լեզուով եւ ոչ  
թէ տառերով), շահիլ զոգիս արանց եւ կանանց  
առ հասարակ յամենայն եկեղեցիս բազմու-  
թեանն, խոր. Գ. լզ. “Եւ զորս միանգամ գիրս  
գտանէր (Ծերութեան)՝ այրէր, եւ հրաման տայր  
մի՛ ուսանել զգրութիւն յունարէն, այլ պար-  
սիկ. եւ մի՛ ոք իշխեսցէ յոյն խառն կամ Ռուս-  
ճաշիւ... զի յայնժամ գիր գրութեան հայոց  
եւ եւս էր լեալ, եւ յունականաւն վարէին  
եկեղեցւոյ կարգքի, նոյն, Գ. ծգ. “Հտային  
պարսիկ վերականգնէն յոյն ուսանել Գր-  
թիւն ումեք յիւրեանց մասինն, այլ միայն  
ասորի,՝

Աւելի հինէն եւ աւելի զօրեղ բաւերով  
վկայութիւն մը ունի Բուզ. Գ. ծգ. “ի վաղն-  
չուց, յորմէ հետէ առին նորա զանուն քրիստո-  
նէութեանն, լոկ միայն իբրեւ զկրօնս իմն մարդ-  
կութեան յանձինս իւրեանց եւ ոչ ջերմեռանդն  
ինչ հաւատովք ընկալան, այլ իբրեւ զմոլորու-  
թիւն իմն մարդկութեան ի հարկէ, ոչ եթէ որ-  
պէս պարտն էր գիտութեամբ յուսով կամ  
հաւատով, բայց միայն սակաւ ինչ որք զհան-  
գամանս գիտէին հելլէն կամ ասորի գրու-  
թեանց, որք էին հասու ինչ այնմ փոքր ի շատէ,  
Իսկ որք արտաքոյ քան զգիտութիւն արուեստին  
էին այլ խառնազանճ բազմութիւն մարդկան  
ժողովրդոց նախարարացն եւ կամ շինականու-  
թեանն, եթէ զցայգ եւ զցերեկ նստեալ վար-  
դապետացն եւ ըստ նմանութեան ամպոցն իբրեւ

զյորդահեղեղ ինչ անձրեւաց սաստկութիւն  
զվարդապետութիւնն ի վերայ հոսէին, ոչ որ ի  
նոցանէն եւ ոչ մի ոչ, եւ ոչ մի բան, եւ ոչ  
կէս բանի, եւ ոչ գոյն յիշատակ ինչ, եւ ոչ  
նշմարանս ինչ զոր լսէինն, եւ ոչ կարէին թնչ  
ունել ի մտի:»

Յոյն եւ ասորի լեզուները սորվելու հա-  
մար Հայերը ոչ միայն կը դիմէին Յունաստան  
եւ Ասորիք, այլ եւ Հայաստանի մէջ իսկ ունէին  
զուա ասորի եւ յոյն լեզուով դպրոցներ: Այս-  
պիսի դպրոցներ հաստատեցին Լուսաւորիչ եւ  
Մեծն Ներսէս, ինչպէս կը պատմեն Ագաթան-  
դեղոս եւ Բուզանդ. «Եւ ի տեղեաց տեղեաց  
սահմանացն Հայոց՝ տայր հրաման թագաւորն  
Տրդատ՝ իւրոյ իշխանութեանն յաշխարհաց եւ  
ի գաւառաց բազմութիւն մատաղ մանկուոյ  
ածել յարուեստ դպրութեան, եւ կարգել ի  
վերայ հաւաարիմ վարդապետս... եւ զնոսա  
յերկուս բաժանեալ, զմանս յԱսորի դպրու-  
թիւն կարգեալ, եւ զմանս ի Հելլէն» (Ագաթ.  
ՃԻ. 840): «Կարգէր եւ ի տեղիս տեղիս դպրոցս  
յունարէն եւ ասորերէն յամենայն գաւառս  
Հայոց, (Բուզ. Գ. 4): Առաջններուն մասին  
կ'ակնարկէ նաեւ Վարդան՝ ներքող Լուսաւորիչի.  
«Դպրոցս յօրինէր, մանկունս հաւաքէր, վար-  
դապետս յոյն եւ ասորի գրոյ եւ լեզուի գիտակս  
կացուցանէր:» Այսպիսի դպրոցի մը մէջ սոր-  
վեցաւ նաեւ Մեսրոպ. «Ի մանկութեան տիսն  
վայելեալ հելլենական գպրութեամբն» (ոչ թէ  
գրով) (Կորիւն, էջ 13—14):

Զուտ յունարէն եւ ասորերէն գրականութեան յիշատակարաններէն ոմանք յիշուած են յայտնի կերպով մեր մատենագրութեան մէջ եւ ոմանք ալ մինչեւ այսօր մեր ձեռքը հասած են: Է. Բ. Սարգիսեան (Ագաթ. եւ իւր բաղմ. գաղտնիքը, էջ 295—297) կու տայ այս յիշատակարաններու ցուցակը, հետեւեալ ձեւով. 1. Տիգրանի, Արտաւազդի, Զարեհ կուսակալի եւ Երատոյ թագուհւոյն դրամները՝ յունարէն վերտառութեամբ. ասոնց վրայ կրնանք աւելցնել (բոս Ասպետ v. Petrowicz, Arsaciden-Münzen, Wien, 1904, յառաջաբան, էջ 183—188 եւ տախտակ 24—25) Վաղարշակ Ա.ի, Արշակ Ա.ի եւ Արտաշէս Ա.ի դրամները, որոնք մեր ձեռքը հասած են: 2. Արտաւազդ Ա.ի գրած յունարէն ողբերգութիւնները՝ ըստ վկայութեան Պլուտարքոսի: 3. Հանիի մեհենական պատմութիւնները եւ Վաղարշապատի արքունական վճիռները (յունարէն): 4. Մեծն Խոսրովի կանգնած յաղթական կոթողը “հելլենացի գրով”, խաղըաց եւ Բասլաց զէմ յաղթական արշաւանքին առթիւ (խոր. Բ, 46): 5. Տրգատի յունարէն արձանագրութիւնը Գառնիի ամրոցին եւ արքունի ապարանքին վրայ (խոր. Բ, շա): 6. Տարօնի մէջ Արձանի պատերազմին ինկած հայ քաջերու եւ քուրմերու տապանագիրը “ասորի եւ հելլենացի գրով” (Զենոբ, էջ 31): 7. Տարօնի մէջ Ս. Կարապետի եւ Ս. Աթանագինէի գերեզմանին վրայ գրուած ասորի արձանագրութիւնը՝ որով կ’ար-

գիլուէր կանանց մուտքը: (Զենոբ, էջ 33)  
 8. Սուռ-Սերէոսի պատմութիւնը՝ որ իբր թէ  
 Ագաթանգեղոս արձանագրեր էր Տրգատի հրա-  
 մանով՝ յուևարէն լեզուով: 9. Էջմիածնի տա-  
 ճարին հիւսիսային պատին արտաքին կողմի կրկին  
 արձանագրութիւնները՝ յուևարէն լեզուով (Ա-  
 լիշան, Այրարատ, էջ 213, պատկեր 82 եւ  
 83), որոնք մինչեւ հիմայ կը մնան: Աւելցնենք  
 նաեւ 10. Բագրեւանդի Ս. Յովհաննէս եկեղե-  
 ցւոյն արտաքին պատերուն վրայի երեք ասորե-  
 ղէն արձանագրութիւնները, որ այնպէս մինչեւ  
 այժմ կը մնան (Ալիշան, Այրարատ, էջ 530—  
 531, պատկեր 200, 201, 202): 11. Մու-  
 Ֆարղլինի մէջ Լէմանի գաած յուևարէն արձա-  
 նագրութիւնը՝ որ կը վերագրէ Պապ Թագաու-  
 ղին (սեւ իր Armenien einst und jetzt, I. 1910  
 եւ ՀԱ 1911, էջ 542):

Այս յիշատակարաններէն անոնք՝ որ  
 մեր ձեռքը հասած են, ամէն կասկած կը փարա-  
 տեն. իսկ եթէ միւսները կեղծիք ալ ըլլան,  
 խնդիրը ամենեւին չեն փոխեր, այլ հաստատ  
 կերպով կը ցուցնեն թէ հին հայոց գործածածը,  
 ոչ թէ յոյն, ասորի եւ պարսիկ այբուբենն էր,  
 այլ լեզու:

Այժմ անցնինք Ինճիճեանի<sup>1</sup> այն վկայու-  
 թեան՝ որով կը հաստատէ թէ այսօր ալ կան

<sup>1</sup> Ինճիճեանի այս վկայութիւնը կը յիշեցնէ իր միւս  
 վկայութիւնը՝ Դանիէլեան գրերու մասին, որ անսանք վերը  
 (ՀԱ, էջ 273): Այս մասին Հնախօսութենէն աւելի ման-  
 րաման տեղեկութիւն կը գտնենք իր Դարապատում գոր-

ասորատառ հայալեզու գրքեր, որոնցմէ մէկը յատկապէս տեսէր է հռչակաւոր ասորագէտ Ասսեմանի (Հնախ. Գ. էջ 71), — Ասոնք ուրիշ բան չեն կրնար ըլլալ, բայց եթէ շատ յետին ժամանակները գրուած ձեռագիրներ՝ Միջագետքի Հայոց ձեռքով՝ որոնք սաստիկ աչդուած էին Ասորիներէն:

Մեր ըսածը կը հաստատեն երկու այս կարգի յիշատակարաններ (ասորատառ հայալեզու), որոնք այսօր բանասիրութեան կատարելապէս ծանօթ են: Առաջինն է ասորերէնէ հայերէն բառգիրք մը, որ թարգմանութիւնն է Բար-Բահլուլի (արաբական յորջորջումով Ա-բուլ-Հասան-Իսա-իւն-ալ-Բահլուլ) ասորերէնէ արաբերէն բառգրքին: Այս աշխատութեան վրայ ընդարձակ ուսումնասիրութիւն մը

---

ծին մէջ (տպ. Վենետիկ 1827, էջ 238—240 ծան): Այնպէ՛ Սուլթան Համիտ Ա.ի որով Պոլսոյ տնօրէնական գեապանն էր, ունէր 100.000 հին գրամներու հաւաքածու մը՝ որ մոռ-ված էր Փոքր-Ասիոյ մէջ: 1788 թուին Ինճիճեան կը տեսնէ այս հաւաքածուն եւ հոն կը գտնէ 12 տիպ ուղղենեան գրամ-ներ ասոնց մէջ էին նաեւ «պարթեւաց կռեցեալ» հարիւրաւոր անծանօթ գրամներ, որոնց շուրջ տեսանք, կ'ըսէ, այնպիսի գրքեր, որ հայերէն էին, ինչ. ի, զ, պ, ր եւն, «որը չիտակ դրած, որը պառկած, բայց ամէնն ալ խիստ որոշ. միայն ձայնաւոր սառեր չի կային մէջը: Աս ըսակաները՝ որ ուրիշ տեղեր ալ կը գտնուին, մեզի երեւցան հին հայկական ըս-տականեր, ան հայկական գրերով՝ որ մեսրոպեան գիրը չի գտնուված անկատար գիր մը կը բանեցնէին մերոնք:» — Այս խօսքերէն ականերեւ է որ գրամները իրօք սասանեան էին, Ինճիճեանը սխալմամբ միայն հայերէն կարծած է, իսկ իր ականարկած ի, զ, պ, ր տառերն ալ պհլ. d, m, k r, դրերն են, որոնք իրօք շատ կը նմանին յայն հայ տառերուն:

Հրատարակեց D. S. Margoliouth, The Syro-Armenian Dialect, IRAS, 1898, էջ 839 եւ շար. (տես Ղ. Թ. Տաշեանի մատենախօսականը, ՀԱ 1899, էջ 22—23)։ Ասկէ կ'երեւայ որ աշխատութիւնը շատ յետին ժամանակի գործ է. գրուած 1657—1660 թուին, եփրեմ գրչի ձեռքով եւ Միջագետքի հայ բարբառով մը, որ՝ ինչ. = յօդին գործածութենէն կ'երեւայ (օր. իւր-իւր, լւ-ւ, Դժ- փիւ. կրակը, լոյսը, մէջը)։ Տիգրանակերտի բարբառին շատ մօտիկ էր։

Երկրորդն է երեք տող արձանագրութիւն մը իբր թէ Ե դարէն (!), որ գտնուած է Մերտինի (Ս'ամպտոյ) Ս. Գէորգ եկեղեցւոյն վրայ եւ Հրատարակուած է ՀԱ 1906, էջ 65—67, Ղ. Թ. Տաշեանի քննութեամբ հանդերձ։ Արձանագրութիւնն է "Շինեցաւ տուն տեառն յանուն Սուրբ Կեւորկիոս Զօրաւարի յամի տեառն 450։, Ղ. Տաշեան քննելով նոյն արձանագրութիւնը եւ նկատելով անոր մէջ նորագոյն արեւմտեան տառադարձութեան հետքեր (ինչ. + գիրը երեք անգամ տառադարձուած ասորերէն, d գրով, j երկու անգամ տառադարձուած ասորերէն a h գրով, եւ վերջապէս ձ երկու անգամ տառադարձուած ասորերէն օ p տառով), կը հետեւցնէ թէ յիշեալ արձանագրութիւնը շատ յետին ժամանակի կեղծիք է, հաւանաբար 1707—1716 թուերէն։

Ինչիճեանի աւանդածին նման բան մ'ալ կը յիշուի աւելի նորերէն (տես Զէյթունի Անցեալէն եւ ներկայէն, Մասն Ա. Վիեննա 1900,

էջ 15)։ Հոս կը յիշուի մագաղաթեայ ձեռագիր աւետարան մը «յունական գրով ու հին հայերէնով գրած» որ սեպհականութիւնն էր Զէյթունի Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ քահանաներէն Տ. Ենովք Դաւիթ-Երէցեանի։ Սկիզբէն թէեւ այսպէս պարզապէս Աւետարան կ'ըսուի, բայց յետոյ կը պարզուի թէ ձեռագիրը «Մանկութեան աւետարան կը կոչուէր», որ գրուած էր «Քրիստոսի 250 թուականին»։ Հեղինակը ձեռագրին ետեւէն կը հանէ Ժանթութիւն մը՝ ուր կը պատմուի Զէյթունցոց քրիստոնէութիւն ընդունելու մասին՝ Քրիստոսի 75 թիւին։ Մանկութեան աւետարանները առհասարակ անվաւերական բաներ են եւ յետին ժամանակի գործ. ուստի 250 թիւը կեզծիք կը համարիմ։ Յայտնի չէ թէ Զէյթունցոց քրիստոնէութիւն ընդունելու սուտ պատմութիւնն ալ յունարէն գրերով գրուած էր. եթէ այո՛, այն ժամանակ կեզծիքը բոլորովին կը հաստատուի։ Ցաւալի է որ «այս անգին հնութիւնը Գող Վասլի հռչակաւոր աւետարանին եւ ուրիշ կարեւոր ձեռագիրներու հետ պրեցաւ 1884ի մէջ հրդեհին»։ Ասով զրկուած ենք կարողանալէ դրականապէս հաստատելու որ յիշեալ աւետարանն ալ, եթէ իրօք յունարէն գրերով հայերէն էր, յետին ժամանակի գրութիւն մ'էր։

Այս բոլորին եզրակացութիւնն այն է թէ մինչեւ Ս. Մեսրոբ Ենթագրել հայալեզու գրականութիւն մը յոյն, պարսիկ կամ ասորի տառերով՝ անհիմն է. եւ թէ այս շրջանին հայերը

ունէին ոչ թէ հայերէն, այլ յունարէն, պարսկերէն եւ ասորերէն լեզուներով գրականութիւն:

## Գ Լ Ո Ւ Խ Զ.

*Մեսրոբեան գրերը:*

Բոլոր նախորդ այբուբեններու խափանումէն յետոյ, վերջէն գրութիւնը՝ որ հայ ժողովուրդը գործածել սկսաւ Ե դարէն եւ անխափան կը պահէ մինչեւ հիմայ, Մեսրոբեան (կամ ընդհանուր անուանով՝ Հայկական) գիրն է: Այս գրերու գիւտի հանգամանքները, տեղի ու ժամանակի քննութիւնը կը պատկանին Ս. Մեսրոբի կենսագրութեան: Այս գլխուն մէջ կը մնայ մեզ ուսումնասիրել բոլոր այն հանգամանքները՝ որ կը վերաբերին Մեսրոբեան գրերու ներքին կազմութեան:

Նիւթին ամբողջական ուսումնասիրութիւնը կը պարունակէ ութը գլխաւոր խնդիրներ. ասոնք են՝

Ա. Գրերու թիւը.

Բ. Մեսրոբեան այբուբենի յօրինուածութիւնը.

Գ. Գրութեան ուղղութիւնը.

Դ. Գրերու ձեւը եւ անոնց ծագումը.

Ե. Գրերու դասաւորութիւնը կամ կարգը.

Զ. Գրերու անունը.

Է. Գրերու հնչումը կամ արժէքը.

Ը. Գրերու տեսակները եւ զարգացումը:

Ուրեմն ներկայ գլուխն ալ պիտի պարու-  
նակէ ութը մաս՝ նիւթին ութը մասերուն հա-  
մապատասխան:

### ՄԵՐԻՔԷՆԻ ԳՐԵՐՈՒՆ ԻՆԷՆՆԻ

1. Պատմագիրներու վկայութիւնը Մես-  
րորեան գրերու թուի մասին. 2. Մատենագրա-  
կան վկայութիւններ. 3. Հնագոյն արձանագրու-  
թեանց վկայութիւնը. 4. Նոր քննիչներուն  
կարծիքը. 5. Ղ. Աղայեանի կարծիքը. 6. Ասոր  
հերքումը. 7. Մեր 36 գրերը բոլորն ալ Մես-  
րորի հնարածն են. հին պատմիչներու եւ նոր  
քննիչներու երկու տարբեր կարծիքները. 8.  
Անոց քննութիւնը. եզրակացութիւն:

1. Թէեւ այսօրուան մեր գործածած հայե-  
րէն այբուբենը 38 գիր կը պարունակէ, բայց  
ինչպէս ամէնուն յայտնի է, անոնցմէ 6 եւ 6 վեր-  
ջին դարերուն միայն աւելցուած են հին այբու-  
բենին վրայ՝ յունարէնի եւ լատիներէնի ազդե-  
ցութեամբ: Բուն Մեսրորեան այբուբենը ունի  
36 գիր (— էն մինչեւ +):

Բայց տեսնենք թէ իրօք Ս. Մեսրորի հնա-  
րած այբուբենը 36 գիր էր, արգեօք այս թուին  
վրայ յաւելումներ կամ յապաւումներ տեղի  
ունեցած չեն յետագայ դարերուն մէջ:

Մեսրորեան գրերու թուին վրայ՝ մեր հին  
պատմագիրներուն (յառկապէս Արիւնի, Փար-  
պեցւոյն եւ Խորենացւոյն) մէջ ամենեւին տեղե-

կութիւն չենք գտներ: Աւելի յետին մատենագիրներու մէջ հետեւեալ տեղեկութիւնները կան:

—) Շնորհալոյն վիպասանութեան հետեւեալ տողերը:

ՁԱՍՏՈՒԼԾԱԳԻԾ ԿԱՌԱ ՆՆԿԱԼԵԱԼ,  
ԵՐԻՎ ԿԱՍԱՄԲԲ ՎԵՅԻՎ յԱՆԳԵԱԼ,  
ԱՐԵԳԱԿԱՆ ԵԼԻՎ չԱՓԵԱԼ:

(Վիպ... էջ 533:)

Հասուածին երկրորդ տողը շատ պարզ է. կը ներկայացնէ 36 թիւը ( $3 \times 10 + 6 = 36$ ). Իսկ երկրորդ տողը մութ կը մնայ: Չամչեան Ա. 755 կը համարի իբրեւ ակնարկութիւն տարւոյն 360 օրերուն («ըստ 36 տասանց աւուրց տարւոյն»):

Բ) Ասողիկ (ԳԼ. Զ, էջ 139) կը գրէ. «Դպրութիւն Հայոց լեզուիս է՛ն գիր ի Դանիէլէ փիլիսոփայէ կարգեցաւ, իսկ զեօթն գրոցն պակասութիւն Մեսրոպք երանելի Տարօնեցի խընդրուածովք յԱստուծոյ առնու»: ( $29 + 7 = 36$ .)

Գ) Վարդան, էջ 49. «Սուրբն Մեսրոպ յօրինէ դպրութիւն հայերէն, քսան եւ երկու գիր առ Դանիէլէ ասորւոյ գտեալ . . .», որուն վրայ կ'աւելցնէ թէ «տայնմա Աստուած զխնդրելն, չորեքտասան գիրս»: ( $22 + 14$  կ'ըլլայ 36.)

Դ) Պայսերաց Պատմ. «Գտաւ դպրութիւն հայերէն լեզուին, է՛ն գրով ի Դանիէլէ փիլիսոփայէ . . . իսկ զեօթն գրոյն պակասութիւն Մեսրոպ երանելի Տարօնացի . . . հայցեալ

յԱստուծոյ եւ ցուցեալ նմա ի տեսլեան,  
( $29 + 7 = 36$ .)

Ե) Գանձարանի մէջ. «Քսան եւ ինն գիր  
էր շինած . . . Այն Աստուծոյ անեղին փառաց  
եօթն գիր այլ ի վիմին դրոշմած» (2եռ. Թաւ-  
րիզի, Թ. 43, էջ 318բ—321բ, Var. զեօթն  
գիրն ի քարին գրեաց՝ 2եռ. Կարին. 466,  
էջ 182.) — Ուրեմն  $29 + 7 = 36$  :

Զ) Նոյն Գանձարանի մէջ՝ աւելի յետոյ.  
«Սոքայ հոգի ջահեցաւ նոցին, վեցեակ վեցից  
համարեալ գրին» ( $6 \times 6 = 36$ .)

Է) Դարձեալ Գանձարան, ուրիշ տաղի մը  
մէջ. «Դանիէլ շնորհեալ, քսանեւինն գտեալ . . .  
Աստուած գթացեալ . . . եօթն գիր յայտնեալ  
(2եռ. Թաւրիզի, Թ. 43, էջ 150բ—154ա.)  
— Հոս ալ  $29 + 7 = 36$  : — Իսկ Կարին.  
466, էջ 57—61 ասն է՝ ինչ բառին տեղ ունի  
ասն է՝ հին, որ յայտնապէս սխալ է :

Ը) Կարապետ Սասնեցի, էջ 41. «Որոյ  
անյապաղ առեալ ընդ իւր զիմաստունն Գանիէլ  
եւ Ժամանէ առ հոջողն իւր՝ Թարգմանելով զվա-  
ղուց արարեալ նշանսն զկրկին տասն եւ զերկու  
տասն» : — Հոս վերջին բառը պետք է ուղղել  
որոշ, որովհետեւ  $2 \times 10 + 2 \times 10$  արդէն  
անսովոր եւ ագեղ գարձուած մ'է. ասով կ'ու-  
նենանք  $2 \times 10 + 2 = 22$ , որուն վրայ աւել-  
ցնելով էջ 43 յիշուած 14 տառերը (գրէր  
մատանագիծ ի սալս սրտի իւրոյ չորեքտասան  
տառ), կ'ունենանք 36 տառ :

Ը) Ոսկեփորիկ (Ձեռ. Գեորգեան, Թ. 263, էջ 255 եւ Կարինեան, Թ. 1723, էջ 275) կը գրէ. «Հայերէն եղաւ գպրութիւն ի քսան եւ ինն գրոյ . . . իսկ զեւթն (գրոց) պակասութիւն ելից Ծեսորոպ», ( $29 + 7 = 36$ ):

Ժ) Դաւիթ Անյաղթին ընծայուած հանելուկին մէջ (տես վերը՝ էջ 81) «Չափ հասակի իմոյ երկիցս երկոտասան, այժմ եմ երիցս երկոտասան», (այսինքն թէ առաջ գրերը  $2 \times 12 = 24$  հատ էին, յետոյ եղան  $3 \times 12 = 36$  հատ):

Ժա) Յաղագս սրբոց վարդապետացն Հայոց Մովսէսի եւ Դաւթի անվաւերականին մէջ՝ (Սրուանձա. Հնոց-Նորոց) «ունէին ին գիր ի Դանիէլէ փիլիսոփայէ . . . հրեշտակ տեառն էջ յերկիր . . . ապր նոցա զգիրս եօթն», ( $29 + 7 = 36$ ):

Ժբ) Վարդանազրբին մէջ կը կարդանք (տես վերը էջ 88) «Ջառաջինն ի նոցանէ (յԱսորւոց) էր առեալ 17 գիր . . . ապա յաղութս ապաւինեալ . . . եւ վաղվաղակի ստեղծանէր ինն եւ տասն գիր», ( $17 + 19 = 36$ ):

Ինչպէս կը տեսնուի, այս բոլոր յիշատակութիւնները միաձայն կ'ընդունին 36 մեսորդեան գիր: Ասոնցմէ հնագոյնը Ասողիկինն է, Ժ դարէն: Աւելի հին տեղեկութիւն չկայ: Անստոյգ է Դաւիթ Անյաղթին ընծայուած հանելուկին թուականը, թէեւ ասիկա մինչեւ Ե դար հանելուզուի: (Այսպէս Հ. Ղ. Մ., Բազմ. 1848, էջ 248—49): Անծանօթ է նոյնպէս Կայսերաց

գրոց Թարգմանութեան ժամանակը, զոր ոմանք  
Անանիա Շիրակացիին կու տան (Է դար) եւ  
ոմանք Ուխտանէսին (Թ դար): Հմմտ. Զարբ.  
Հայկ. Տին Դպր.՝ էջ 465 եւ Ալեշանի Հայա-  
պատումը՝ Ա. 71բ:

2. Բայց այս խնդրին մէջ մեզի օգնու-  
թեան կը հասնին անուղղակի միջոցներ:

Է դարուն ունինք երկու քերթող՝ Կոմիտաս  
կաթուղիկոս եւ Դաւթակ երգիչ, որոնց առա-  
ջինը դրած է Հոսիփսիմեանց շարականը եւ եր-  
կորդը՝ Աղուանից Զուռնչիւր իշխանին մահուան  
վրայ ողբ մը: Այս երկու դրութիւններն ալ  
տուն առն այբուբենական կարգով ըլլալով՝ կը  
պարունակեն բոլոր 36 առուերը (աէն մինչեւ +):

3. Անցնինք հիմայ արձանագրութիւն-  
ներուն:

Հայերէն ամենահին արձանագրութիւնը  
կը համարուի Տեկորի եկեղեցւոյն արեւմտեան  
դրան բարաւորին արձանագրութիւնը, որ հրա-  
տարակեց նախ Սարգսեան, Տեղագր. էջ 206 եւ  
յետոյ Ալեշան, Շիրակ էջ 132: Ալեշան այս  
արձանագրութիւնը կը դնէ Ե դարէն, ինչպէս  
ընդունած են նաեւ բանասէրներէն շատերը:  
(Յուսիկ եպս., Արարատ 1892, էջ 879 կը  
համարի Է դարու սկիզբէն:) Ասոր չափ հին կը  
կարծուին նաեւ այն քանի մը մոզայիք արձանա-  
գրութիւնները՝ որ դանուեցան Երուսաղէմի մէջ՝  
Ձիթենեաց լեռան քով, Ռուսաց վանքի շինու-  
թեան ժամանակ եւ զորոնք հրատարակեց Երու-  
սաղէմի Սիօն Թերթը, ասկէ ալ Արարատ 1871,

էջ 251, 1872, էջ 494, Պատմ. կամ ուղե-  
ցոյց Ս. Տեղեաց էջ 167, նաեւ Տաշեան, Ակ-  
նարկ մը հայ հնագոր. էջ 137, Այս արձանա-  
գրութեանց մէջ տարբերութիւն չկայ, բայց մեկուն  
մէջ կայ «հոռի ԺԼ», ամսաթիւը. ասկէ կը հե-  
տեւեցնեն թէ հայ թուականի հաստատութենէն  
առաջ ըլլայ արձանագիրը:

Որոշ թուականով ամենահին արձանա-  
գրութիւններ կը համարուին՝ 1. Հառիճի Ս.  
Յարութիւն մատուռին քով թաղուած Երեմիա  
երաժիշտին տապանաքարը՝ ԺԷ = 568 թուէն  
(Ալիշան, Շիրակ էջ 163): 2. Սեբաստիոյ մօտ  
Սոխկերի քարայրին արձանագրութիւնը՝ ԽԷ =  
598 թուէն (հրատ. Սարգս. Տեղագոր. էջ 65.  
արձանագրութեան նմանահաս արտագրութիւնը  
ինձ հաղորդեց թղթակից բարեկամս՝ Սեբաս-  
տացի Պր. Կ. Գաբրիկեան): 3. Խազմասի գերեզ-  
մանատան մէջ գտնուած տապանաքար մը՝  
ԻԲ = 573 թուէն (Մ. Վ. Բարխուդ. Աղուանից  
երկիր, էջ 134): 4. Շամախիի Գէօքզայ գա-  
ւառին Ղալակեա գիւղին գերեզմանատան մէջ  
գտնուած տապանաքար մը՝ ԼԴ = 585 թուէն  
(անդ, էջ 209): Բայց ասոնք ամէնքն ալ կաս-  
կածելի են, գրեթէ բոլորին ալ հարիւրաւոր  
թուանշանները կոտրած կամ յապաւուած ըլլա-  
լով: Ստոյգ կը մնայ յառկապէս Տեկորի արձա-  
նագրութիւնը: Արդ՝ այս արձանագրութեան  
մէջ գործածուած կը գտնենք հայերէն գրերուն  
ամենամեծ մասը (պատահաբար միայն գործած-  
ուած չեն հոն՝ Է, Ը, Ժ, Ծ, Ծ, Զ, Է, Ը, Ժ, Ժ, տառերը):

4. Նոր քննիչներէն ոչ մէկը կասկած յայտնած է մեսրոբեան գրերու թուի մասին. բոլորն ալ կ'ընդունին որ մեր գրերը Մեսրոբի սրով 36 հատ էին: Այսպէս՝ Չամչեան, Աւգերեան, Ինճիճեան, Ալիշան, Իմին, Պատկանեան, Լանկուա, Լեկարա, Հիւբշման, Սարգսեան, Յարութիւնեան, Միւլէր, Գարագաշեան, Տաղաւարեան, Տաշեան, Մէնէվիշեան եւն եւն: Ասոնց վկայութիւնները աւելորդ կը դանեմ մի առ մի յիշատակել, որովհետեւ վերը՝ Դանիէլեան գրերու առթիւ (գլուխ Դ. 8) արդէն յիշած եմ:

5. Միմիայն Ղ. Աղայեանն է որ այս կարծիքէն կը շեղի:

Իր քանի մը գրուածքներուն մէջ<sup>1</sup> Աղայեան այն կարծիքը կը յայտնէ թէ Մեսրոբի հնարած այբուբենին մէջ չկային է, Է, Է, Ե գրերը. այլ այս չորսն ալ յետին ժամանակներու մէջ հնարուած բաներ են: Ասոր իբր ապացոյց մէջ բերուած խօսքերը այնպիսի տգիտական բաներ են, որ մարդ կը զարմանայ թէ իրօք ասոնք գրագէտ մարդու գրուածներ են:

Աղայեան նախ ընդհանուր տեսութիւն մը կ'ընէ Մեսրոբեան գրերուն վրայ, բայց այնքան

1 Հմմտ. յառկապէս՝ Սուրբ Լեզու, Մուրճ 1890, էջ 1581—1591 եւ 1713—1721 (մանաւանդ՝ էջ 1587—1589), Մեր գրերի թիւն ինչու էր 38, Մուրճ 1891, էջ 1575—1579. Մեր ուսուցիչներին ընկերական Նը-էր, Թիֆլիս 1892, վերջին գրքոյկին մէջ ամփոփած է այս առթիւ զանազան տեղեր հրատարակած յօդուածներուն էութիւնը:

Ճապաղ, մթին ու անհասկանալի. որ երկար աշխատութեան պէտք կայ իր միտքը ըմբռնելու համար: Իր ըսել ուզածը կրնանք հետեւեալ ձեւով պարզել. — Մեր հայ գրերը կը բաժնուին երեք տեսակի.

1. Բուն հայ գրեր, այսինքն այն գրերը՝ որ չեն գտնուիր պարսիկ, ասորի կամ յոյն այբուբենին մէջ, եւ հետեւաբար չեն կրնար անոնցմէ փոխ առնուած ըլլալ: Այս գրերն են՝ ւ, ռ, շ, յ, ճ, ա, ց:

2. Այն գրերը՝ որ կը գտնուին թէ՛ հայ, թէ՛ ասորի եւ թէ՛ պարսիկ այբուբենին մէջ: (Այս գրերուն ցուցակը չի տար Աղայեան.)

3. Այս երկու շարքի գրերը հանելով մեր այբուբենէն՝ կը մնան է, լ, է, յ յունական գրերը:

Ա. Մեսրոբ «յունական տառերից ոչ մէկ հատ չի վերցրել», որովհետեւ եթէ յունական այբուբենէն օգտուած ըլլար, անկարելի է որ անոնց երկու տերէն (օ եւ ա) մէկն ու մէկը չառնէր: Մեսրոբ — երկբարբառին տուած էր 4—5 պաշտօն, այն է — է, ա, —, օ, — ձայները. յունական օ կամ ա գիրը փոխ առնելով՝ ճիշտ այս անպատահութենէն պիտի ազատէր Մեսրոբ: Բայց նա չուզեց օգտուիլ յունարէնէ: Այս պատճառով ալ է, լ, է, յ գրերը՝ որ յունական են, չեն կրնար ըլլալ Մեսրոբի գործը:

Մեսրոբի ժամանակ է գրին տեղ կը գրուէր է. ինչպէս՝ Բերեհ, Բերեհ, եւ ասոնց բնական հետեւութեամբ անշուշտ նաեւ Բերեհ, հին ձեռա-

գիրներու մէջ արդէն կը գտնենք է գրին տեղ է: Մեսրոբէն շատ յետոյ՝ Ունիթոռները հնարեցին այս է գիրը, որ սակայն չկրնալով ամբողջապէս վտարել հին եր, հաստատուեցաւ միայն բառերուն ծայրը եւ երբեմն ալ մէջերը:

Վ եւ - գրերը հնչական տարբերութիւն չունին եւ չունէին. մէկը հաստ, մէկը նուրբ կամ մէկը բաղաձայն եւ միւսը ձայնաւոր չէ եղած: Մեսրոբի ժամանակ ու, ուէ, ուէ, ուէ, ուււ, ուււ ձեւերը կը կարգացուէին "ուէ, ուէ, ուէ, ուէ, ուււ, ուււ": Օրինակի համար՝ նուէ բառը կը կարգացուէր նոււէ (nuver). յետոյ ըստ օրինի ու ձայնը սղուելով ը, բառը դարձաւ նւէ, ինչպէս կը գրուի տողադարձի ժամանակ: Ոգրութիւնը իբրեւ Վ՝ հնարուած է նոյնպէս Ունիթոռներու ձեռքով:

Մեսրոբի ժամանակ մեր այսօրուան Վ գրութեան տեղ կը գործածուէր ու. ինչպէս՝ քոււււււ, երւււււ եւն. Վ չկար: Մեսրոբը Սիւնեաց երկրին մէջ եւ Սիւնեցոց համար գրելով աւետարանն ու Մաշտոցը, բնական է որ Սիւնեցոց բարբառով ալ գրեց. արդ՝ Սիւնեաց բարբառին մէջ՝ մինչեւ այսօր Վ չկայ. այլ միշտ ու կը հնչուի. (օր. Ըրւււււ = Աստուծով, ուււ = աղով եւն). ուստի Մեսրոբ ալ ու գործածած է եւ ոչ բնաւ Վ:

Այս բոլորէն կը հետեւի որ Վ տառն ալ եկամուտ է. Մեսրոբի այբուբենին մէջ չկար այգպիսի գիր: Երբ Թրակացւոյն քերականուութիւնը Թարգմանեցին յունարէնէ, յունարէնի

հետեւողութեամբ աւելցուցին նաեւ Վ ձայնը, որ միայն բառերուն սկիզբը յաջողեցաւ մտնել: Պիտի գայ օր մը՝ երբ մենք բառին սկիզբէն ալ պիտի ջնջենք այդ գիրը եւ մեր այբուբենէն բոլորովին դուրս պիտի վտարենք:

Է եւ յ գրերուն համար ապացոյց բնաւ բերած չէ Աղայեան. "Մեր գրերի թիւն ինչո՞ւ էր 36, յօդուածին մէջ ընդհանրապէս կ'ըսէ որ այս է, է, յ, Վ գրերը Մեսրոբէն շատ յետոյ աւելցուցին մեր այբուբենին վրայ՝ թուագրութեան հաշիւը ճիշտ բերելու համար. (ուրեմն  $\text{ա—ժ} = 1—10$ ,  $\text{ժ—ճ} = 10—100$ ,  $\text{ճ—ռ} = 100—1000$ ,  $\text{ռ—ք} = 1000—9000$ ): Առանց այս չորս գրերու յաւելուածին՝ 5000ի վրայ պիտի կանգնէինք:

6. Ահա ասոնք են Աղայեանի տեսութիւնն ու մէջ բերած փաստերը:

Բանասիրութեան համար աւելորդ էր վիճել այսպիսի գրութեան մը դէմ, որ ծայրէ ի ծայր անհեթեթ սխալներով լի է: Բայց որովհետեւ մեր աշխատութեան մէջ մենք ուզած ենք ամբողջական ըլլալ եւ հայ այբուբենի առթիւ յարուցուած ամէն խնդիր շօշափել, ուստի ստիպուած ենք խօսելու:

Ամէնէն առաջ նկատենք հաշուի անտեղի սխալը, որ նախորդ գլխով ալ յիշեցինք: Աղայեան ղենելով Դանիէլեան գիրը 22 ասորապարսիկ տառերէ բաղկացած, կ'աւելցնէ ասոր վրայ 7 մեսրոբեան գրեր (ը, ռ, շ, յ, ճ, ռ, ք) եւ յետոյ ալ 4 ունիթոռական գրեր (է, է, յ, Վ): Բայց ասով

գումարը կ'ըլլայ 33. ուր են հապա մնացեալ  
երեք գրերը:

Ը, Վ, Զ, Ը, Դ, Ե գրերուն համար կ'ըսէ  
թէ բնիկ հայ են եւ չեն գտնուիր ասորի, պար-  
սիկ եւ յոյն այբուբեններուն մէջ: Բայց սխալ է,  
քէ կայ ասորերէնի մէջ (հմմտ. Ծնձույ, Մձբին,  
Ծոճ, Մեձույն, Նձույն եւն բառերը՝ որոնք  
ասորերէնէ փոխառեալ են): Դ կայ պարսկերէնի  
եւ պահլաւերէնի մէջ (հմմտ. Դուգ, Դեմ, Դեր-  
հ, Դեմ, Դեմ եւն բառերը). Ե կայ յունարէնի  
մէջ (0). Բայց տգիտութիւն կ'ըլլայ եթէ ըսենք  
թէ հայերէն - գիրը Ս. Մեսրոպի ժամանակ  
հնչուելով Գ՝ համապատասխան չէր յունա-  
կան 0-ին:

Չեմ հասկնար թէ ինչ մտածելով է, Է  
է, Ե գրերը յունական միայն կը կարծէ: Ի գիրը  
կայ թէ ասորերէնի մէջ եւ թէ պահլաւերէնի  
մէջ. Ե գիրը յունարէնի մէջ բնաւ չկայ եւ  
միայն պահլաւերէնի Ե գիրը կրնայ ասոր հա-  
մապատասխանել. (հմմտ. յաւիտեան, Յազ-  
կերա, յազել): Եթէ կայ գիր մը՝ որուն համար  
յատկապէս պէտք է ըսել թէ յունական չէ,  
այդ ալ Է գիրն է (եւ Է ձայնը), որ յունարէնի  
մէջ բոլորովին կը պակսի. պարսիկը, պահլաւը,  
զէնտը, ինչպէս նաեւ ասորին ունին Է: Կ'երեւայ  
թէ Աղայեան թ գիրը նոր հնչումով Վ կը  
կարգայ !!!

Աղայեան գաղափար չունի մեր գրերու  
հին հնչման մասին. Ե երկբարձառը ոչ - Է կը  
կարգացուէր, ոչ Ե, ոչ Ե, ոչ Ե եւ ոչ Է:

այլ միայն եւ միայն ԶԱ, հնչում մը՝ որ կայ  
այսօր գերմաներէնի, անգլերէնի, արաբերէնի  
եւ քրդերէնի մէջ. այսօրուան հայը այսպիսի  
հնչում չգիտէր եւ ինք չունենալով՝ կը կարծէ  
թէ հին հայն ալ չունէր: Հայը այսօր -- երկ-  
բարբառը ԶՎ կը կարդայ եւ կը կարծէ որ  
Ե դարուն ալ այսպէս կը կարդային: Ո՛չ: Հին  
հայերը չէին կրնար հնչել ԶՎ, ինչպէս որ մենք  
ալ այսօր չենք կրնար հնչել ԶԱ: (Ասոր վրայ  
քիչ մ'աւելի ընդարձակ տես վարը՝ § Է):

Հնագոյն ձեռագիրներուն մէջ, կ'ըսէ Ա-  
ղայեան, Ե կը գործածուի եւ ո՛չ Է: Բայց ա-  
սիկա շատ սահմանափակ բան մ'է. Ե-ի գործա-  
ծութիւնը մեր ներկայ Ե-ին տեղ՝ կը գտնենք  
միայն թե, եթե, թեպէտ, երբեք մասերուն եւ ան-  
կատարներու մէջ. ինչ. եւտ, եկտ, էի, հարչանի, ի,  
գիպտ. տեւտ. եւն. (տես Յուշարձան, էջ 68,  
Կրկնագիր Ագաթանգեղոսի գրութեան առթիւ,  
եւ Meillet, իր նորատիպ հայերէն քերական-  
ութեան մէջ, էջ 6): Ասոնցմէ գուրս է գիրը  
կայ ամէն տեղ եւ ամէն հին ձեռագրի մէջ. օր.  
Կրկնագիր Ագաթանգեղոսի մէջ, Յուշարձան՝  
էջ 73բ է ԴԷ, 75ա ԴԴԴԴԴԴԴԴ, էջ, 77բ շար-  
դար, ԼԼԼԼԼԼԼԼԼԼ, էջ 79ա անդէն, 81բ արտայն,  
է յեւնդիւնիւն եւն եւն: Ե գիրը քանի մը  
տեղ արդէն լեզուաբանական պահանջ է եւ  
կը ներկայացնէ հին Ե + յ երկբարբառը. այս-  
պէս բայերուն երրորդ դեմքին վրայ. Թերեւ,  
Թերեւ = Թերե (տես Meillet, նոյն տեղը՝  
էջ 22):

վ եւ — միայն այսօր հնչական տարբերութիւն չունին. հին ժամանակ շատ տարբեր էին. և ունէր մեր այսօրուան հնչումը, իսկ — կը հնչուէր Կ, հնչում մը՝ որ մենք այսօր կարող չենք արտաբերել, եւ որ կը գտնուի անգլերէնի, արաբերէնի, քրդերէնի եւ քանի մը հեռաւոր հայ բարբառներու մէջ, այն է՝ Սուչավա, Մարաղա, Հազզօ:

Ամենէն աւելի տարօրինակ է այն կարծիքը թէ է, ի, յ, և դրերը թրակացւոյն ժամանակ կամ Ունիթոռական շրջանին աւելցուած են: Բիշ մը վերը տեսանք արդէն խուճմբ մը հին արձանագրութիւններ, որոնց մէջ կան գործածուած այս գրերը: Տեկորի արձանագրութեան մէջ՝ որ Ե դարէն է, կան է, յ, և տառերը. միայն է չկայ: Եթէ ուզենք, կրնանք ասոր վրայ ուրիշներ ալ աւելցնել: Օրինակի համար՝ Նախիջեւան գաւառի Ալաման գիւղին եկեղեցւոյն շրջապատ արձանագրութիւնը՝ 2Ե = 636 թուէն (հրատ. Սարգսեան, Տեղագր. 194, Ալիշան, Շիրակ էջ 125), ունի 1 և, 13 է: Ս. Հռիփսիմէի տաճարին արեւմտեան դռան կամարին վրայ՝ Կոմիտաս կաթողիկոսի արձանագրութիւնը՝ է դարէն (հրատ. Շահխաթ. Ա. 264, Ալիշան, Այրարատ 238, Աբ. արք. Մխիթ. Արարատ 1875, էջ 18, Հաւագոյնը Գ. վրդ. Յովսեփեան, Արարատ 1898, էջ 442) ունի 1 և, 10 է, 5 յ. (Վէյնց՝ թառին մէջ երեք գրերն ալ կան). միայն է չկայ, Նոյն կաթողիկոսին արձանա-

գրութիւնը՝ տաճարին ներսը՝ աւագ սեղանին ետեւը՝ արեւելեան պատին պատուհանին ճակատը ագուցուած քարին վրայ (Տրատ. Գ. Վ. Յովսէփեան, Արրտ. 1898, 441) ունի 7 է, 3 յ, Է գիրը հոս ալ չկայ: Բայց թէ՛ հոս եւ թէ՛ վերիններուն մէջ գործածուած չըլլալը բոլորովին պատահական է, որովհետեւ բացառական հոլով գոյական մը կամ բայի եզակի երրորդ գէմբ մը գործածուած չէ<sup>1</sup>:

Այսպէս ուրեմն Աղայեանի փաստերը ամբողջապէս սխալ են եւ ամենեւին բանի մը չեն զօրեր: շեղինակը յետին միտք մը միայն ունէր. այն է իբր թէ բարեփոխել հայերէն ուղղագրութիւնը եւ անոր մէջէն երեք տեսակ V գրութեան ձեւերէն (-, --, Վ) երկուքը ջնջելով՝ պահել մէկ հնչիւնին մէկ գիր: Նպատակը բարի էր (որովհետեւ գիտական՝ այսինքն հնչական ուղղագրութիւն մը այսօր բոլոր ազգերու մէջ եւ բոլոր լեզուներու համար ալ ցանկալի եղած է), բայց միջոցը սխալ, իսկ արդիւնքը՝ բարեւոյնեան խառնակութիւն մը, որուն մէջ կը գտնուի այսօր արեւելեան հայերէնի ուղղագրութիւնը, Աղայեանի պատճառով: Աղայեան ոչ միայն չկրցաւ հասնիլ իր նպատակին, որովհետեւ չկրնար վտարել բառասկզբի Վ գիրը, չկրցաւ մէկ հնչիւնին մէկ գիր սկզբունքը հաստատել, այլ եւ ընդհանրապէս՝ աւելի խանգարեց հայերէն ուղղագրութիւնը, որովհետեւ

1 Է հայերէն հայերէնի մէջ քրիստոսէ առաջ ալ գրութեան ազգայնները տեսնուելը ԳԼ. Դ. 8 9:

է, —, — գրերուն դիւրին ու հաստատուն կանոնները խառնակուեցան ու մոռցուեցան, եւ մէկ գրին երկու հնչում տալու անախորժ դրութիւնը աւելի հաստատուեցաւ:

7. Հաստատելէ յետոյ թէ Մեսրոբեան այբուբենը ունէր 36 գիր, պէտք է քննել թէ այս գրերը բոլորն ալ Մեսրոբի հնարածներն են, եւ եթէ ոչ՝ որո՞ւք են Մեսրոբի հնարածները:

Այս խնդրին մէջ թէ հին մատենագիրները եւ թէ նոր քննիչները երկու մեծ խումբի կը բաժնուին:

Առաջին խումբը կ'ընդունի որ Մեսրոբեան գրերը անկախ են Դանիէլեան գրերէն, թէ Դանիէլեան գրերը հայերէն չեն եւ թէ Մեսրոբ իր նշանագրերը հնարելու ժամանակ՝ անոնցմէ օգտուած չէ. հայերէն այբուբենը ամբողջապէս Մեսրոբի հնարածն է:

Երկրորդ խումբը կ'ընդունի որ Դանիէլեան գիրը հայերէն էր, որ Մեսրոբ ձեռք անցընելէ յետոյ՝ պէտք չունէր մէկ կողմ նետելու. նա պահասները միայն լրացուցած է եւ կազմած է հայերէն այբուբենը:

Առաջին խումբին գլուխը կանգնած է գրերու գիւտին ամէնէն հաւաստի պատմիչը՝ Կորիւն. «Որում եւ պարգեւէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ հայրական չափուն ծնանել ծնունդ՝ Զորի եւ սքանչելի՝ սուրբ աջովն իւրով, Զաւարիս հայերէն լեզուին: Եւ անդէն վաղվաղակի նշանակեալ, անուանեալ եւ

կարգեալ, յօրինէր սիղոբայիւք եւ կապօք եւ ձայնատուր նշանօք, (էջ 10<sup>1</sup>), վերջին երեք բառերը (նշանակեալ, անուանեալ եւ կարգեալ) այնպիսի թանկագին բառեր են, որ իրենց համառօտութեան մէջ ամէն գաղանիք կը բացատրեն: Մեսրոբ ըրաւ այբուբենին վրայ ինչ որ պէտք էր, տուաւ անոնց ձեւերը (նշանակեալ), դրաւ անոնց անունները (անուններ), որոշեց անոնց կարգը (գործիք), աւելցուց ձայնաւորները: Կորիւն մասնաւոր տառերու գիւտին վրայ չի խօսիր, այլ ընդհանրապէս կ'ըսէ «նշանագիրս հայերէն լեզուին», ասկէ պէտք է հասկնանք որ Մեսրոբի գտած հնարած գրերը մեր այբուբենին բոլոր գրերն էին: Այս բանը աւելի կը շեշտէ ձայնաւորներու առանձին յիշատակութիւնը, որմէ կ'երեւայ որ բաղաձայններն ալ Մեսրոբինն էին: Վերջապէս նորէր բառը՝ որ կը պատկանի ծնած գրերուն (եւ ոչ թէ աջին), կը ցուցնէ թէ այն գրերը Մեսրոբի ձեռքով նոր հնարուած էին եւ ոչ թէ հին Գանիէլեան գրերն էին:

Կորիւնէն յետոյ կու գայ Խորենացին, որ գրերու գիւտը նոյնպէս ամբողջովին կու տայ Մեսրոբին. «Երեւութացեալ հոգւոյն աչաց թաթ ձեռին աջոյ՝ գրելով ի վերայ վիմի . . . եւ յարուցեալ յաղօթիցն, եստեղծ զնշանգիրս խորհրդերձ չռութանսսիւ կերպածեալ զգիրն Մեսրոպայ առ ձեռն պատրաստ, փոխադրելով

1 Ըստ Գ. Յեր-Մկրտչեանի կազմած բնագրին (տե՛ս Վերոյ. 1912, էջ 510):

զհայերէն աթուօթայսն ըստ անսայթպրութեան սիւղորայից հելլենացւոց (Խոր. Գ. Ժգ): — (Հոս Խորենացւոյն մէջ յետոյ աւելցուած եօթը ձայնաւորներու մասին տես քիչ մը վարը):

Գրեթէ նոյն բառերն ունի Փոքր Կորին (էջ 10), ինչպէս նաեւ Կիր. Գանձակեցի, էջ 15. «Երեւեալ Մեսրոպայ թաթ ձեռին չգօրին, գրելով ի վերայ վիմի, եւ ծանուցաւ միշտ չհաճեալսն. եւ յարուցեալ ստեղծ զգիրսն»:

Հնորհային ալ՝ համառօտ ակնարկի մը մէջ՝ այսպէս կը մտածէ.

Ըստ Մովսեսի արժանացեալ,  
Ջաստուածագիծ տառս ընկալեալ,  
Երիւք տասամբ վեցիւք յանգեալ:

Նոր քննիչներէն այս կարծիքը կը պաշտպանեն Չամչեան, Աւգերեան, Իգ. Փափազեան եւ Մէնէվիչեան:

Աւգերեան կը գրէ. «Ընկալաւ (Մեսրոբ) տեսլեամբ զկատարեալ նշանագիրս բաւականս վասն ճոխ եւ բազմահնչիւն լեզուիս հայոց» (Լիակ. վըք. սրբ. Ե. 292—3): Ասոր հետեւողութեամբ է Իգ. Վ. Փափազեանց (Պատմ. եկեղ. էջ 227). «Երեւութեացն նմա ձեւք տառիցն եւ հնչմանց, սերտ տպաւորութեամբ ի սիրտ եւ ի խորհուրդս մտացն՝ բովանդակեալ ունելով շատեալսն բազմահնչիւն լեզուիս»:

Բայց այս մասին ընդարձակ եւ մանրամասն կը խօսի Չամչեան, Ա. 493 եւ 755—761:

Չամչեան իբր փաստ առաջ կը բերէ նախ՝ պատմագիրներուն վկայութիւնը, երկրորդ՝ այն հանգամանքը՝ որ երբ Մեսրոբ գրերը ձեռքը կը դառնայ չայաստան, Թագաւոր եւ կաթողիկոս հանդիսաւոր կերպով ընդ առաջ կ'ելնեն եւ անոր բերած գրերը իբր աստուածատուր շնորհք կ'ընդունին. երրորդ՝ Ս. Մեսրոբ որ Վրաց ու Աղուանից այբուբենը ամբողջապէս հնարեց, չպիտի կրնար իր ազգին գրերը ամբողջապէս հնարել:

Հ. Գ. Մէնէվիշեան՝ Տաղաւարեանի գրքին ընդարձակ քննադատականին մէջ (ՀԱ. 1896, էջ 213—7) Դանիէլ ասորիին գործը լոկ իբր փորձ կը համարէ եւ մեր ամբողջ այբուբենի գիւտը կու տայ Մեսրոբին:

Ահա ասոնք են առաջին կարծիքին պաշտպանները:

Գալով երկրորդ կարծիքին, ասոր կը պատկանին հին պատմիչներուն եւ նոր քննիչներուն մեծագոյն մասը:

Հին պատմիչներուն մէջ այս կարծիքին առաջին պաշտպանն է Փարպեցին, որ մեսրոբեան գիրը ուղղակի Դանիէլեան գիրը կը դնէ. «Իսկ արքային Հայոց սուրբ կաթողիկոսաւն Սահակաւ եւ երանելեաւն Մաշտոցիւ ընկալեալ զնշանագիրսն (Դանիէլի) ի Հաբէլէ՝ ուրախ լինէին: Եւ այսպէս դիպեալ գիւտի նշանագրացն՝ ձեռն ի գործ արկանէր երանելին Մաշտոց, յերիւրելով զնա սուրբ հայրապետին Հայոց Սահակայ, դիւրահնար ճանապարհ ցուցանելով

կարգադրութեան գրենոյս եւ հեգենային ուղղաձայնութեան, տալով նմա օգնականս եւ այլ արս բանիրունս եւ մտացիս ի քահանայիցն Հայոց, որք էին սակաւ մի եւ նոքա, որպէս երանելին Մաշտոց, մերձաւորեալք ի յունարէն հեգենայինսն . . . (Մաշտոց) զոր զարթոյց Աստուածայինն շնորհ ի ցանկութիւնս այս՝ կարգել զվաղընջուցն գրեալ շարագիրս տառիցն, զորս ոչ ուրուք էր հոգացեալ արկանել ի կիրո՛ւ (Փարպ. 1904, էջ 15—16):

Փարպեցիէն յետոյ կու գայ խորենացին (Գ. Ծգ), որ թէեւ իսկապէս առաջին խումբին կը պատկանի, բայց անոր ձեռագիրներէն մէկուն մէջ աւելցուած է եօթը ձայնաւորներու յիշատակութիւնը. «Երեւութացեալ հոգւոյն աչաց թաթ ձեռին աջոյ՝ գրելով ի վերայ վիմի. ա. ե. է. ը. ի. ո. ւ.», Ասով կ'իմացուի որ Մեսրոբ Դանիէլեան գիրը անփոփոխ պահելով՝ իր կողմէն աւելցուց միայն 7 ձայնաւորները:

Խորենացիէն յետոյ եկող գրեթէ բոլոր պատմիչներուն առջեւ կը բացուի ազատ ասպարէզ՝ համանման կարծիքներու համար, թէեւ ոչ ամէնքն ալ միեւնոյն ձեւով: Ասոնք ամէնքն ալ կը պատմեն թէ Մեսրոբ Դանիէլեան գիրը անփոփոխ պահեց եւ անոր պահասները միայն լրացնելով՝ կազմեց իր այբուբենը: Բայց այս պահասներու թուին համար մեծապէս կը զանազանին իրարմէ: Անոնք որ Դանիէլեան գրերը 22 կը դնեն, կ'ընդունին հետեւաբար որ Ս. Մեսրոբ նարած ըլլայ մնացեալ 14 գրերը. անոնք որ կը

դնեն 29 գիր, Ս. Մեսրոբին կու տան 7 գիր-  
այսպէս եւ 24 գիր դնողները՝ կու տան 12 գիր,  
իսկ 17 գիր ընդունող վարդանագիրքը՝ 19 գիր:

Պատմիչներուն մեծագոյն մասը 7 գիր  
աւելցուած ըլլալու կողմն է. այսպէս են՝ Ասողիկ,  
Ոսկեփորիկ, Կայսերաց գիրք, Մովսէսի եւ Դաւ-  
թի անվաւերականը եւ Գանձարան: "Մաշտոցն  
երանելի . . . գանիէլեան նշանագրօք զգարու-  
թիւն ըստ հայումն յօրինէր ընկերօք ոմամբ,  
տուելովք նմա ի Սահակայ, Յետ որոյ գարձեալ  
եւս ի վեցերորդումն նորին վռամ-Շապոյ . . .  
վերստին աստուածատուր նշանագրօք զնոյնս  
յեղանակեալ յօրինէր (Ասող. էջ 74): Դպրու-  
թիւն Հայոց լեզուիս իթ գիր ի Դանիէլէ փիլի-  
սոփայէ ասորւոյ կարգեցաւ. իսկ լեզուն գրոցն  
պակասութիւն Մեսրոպը երանելի տարօնեցի  
խնդրուածովք յԱստուծոյ առնու" (Ասող.  
էջ 139): "Ա. ե. է. Ը. ի. ո. Լ. այս գրերս  
աւելաւ ի Մեսրոբա գեղեցիկ վարդապետէ . . .  
եւն" (Ոսկեփ. Չեռ. Էջմ. Թ. 263 եւ 1723.  
ամբողջ հատուածը տես վերը՝ էջ 86—87):  
"Յորոյ աւուրս գտաւ դպրութիւն հայերէն լե-  
զուին, իթ գրով ի Դանիէլէ փիլիսոփայէ ասոր-  
ւոյ կարգեցաւ . . . իսկ լեզուն գրոյն պակասու-  
թիւն Մեսրոպ երանելի տարօնացի . . . հայցեալ  
յԱստուծոյ եւ ցուցեալ նմա ի տեսլեան" (Կայ-  
սերաց պամ.): "Յայսմ ժամանակիս եղև խնդիր  
պակասութեան գրոյն հայոց, զոր ունէին, իթ  
գիր ի Դանիէլէ փիլիսոփայէ ասորոյ՝ աշակերտ  
սրբոյն Գրիգորի. իսկ սուրբն Սահակ եւ Մեսրոբ

բազում աշխատութեամբ պէտք արարին . . . յետոյ երեւցաւ ի տեսլեան հրեշտակ տեառն . . . էջ յերկիր առ նոսա եւ որպէս ի տունջեան խօսէր ընդ նոսա, եւ յաման ինչ խեցեղէն՝ մատամբ նկարեալ տայր նոցա զգիրս եօթն»։ (Մովսէսի եւ Դաւթի անվաւերականը, Հնոց-Նորոց, էջ 41—46։)

Վերջապէս Գանձարանի մէջ կը կարգանք հետեւեալ առղերը.

Քսան եւ ինն գիր էր շինած,  
Այլ անօգուա էր ընթերցողաց,  
Ջի ոչ կապէր հեգ բանից անուանց,  
Այլ անհոգի մարմնոց նմանած . . .  
Աջն Աստուծոյ անեղին փառաց՝  
Եօթն գիր այլ ի վիմին դրոշմած։

(Var. զեօթն գիրն ի քարին գրեաց)։ . . .

Տպաւորեալ ի սիրաս նորին  
Այն որ գրեցաւ աջովն անեղին,  
Այբ, եչ եւ է կարգեալ ընդ եթին,  
Ոյ եւ լիւն՝ որ եօթն կոչին.

(Var. ի եւ ու իւնն ի կարգին.)

Ջոր առեալ Մեսրոպ սքանչելին,  
Խառնեաց ի յայլ գիրսն որ նախ էին։

(Var. զոր եւ առեալ մեծի Մեսրաւպին,  
Խառնեալ ի յայլ գրերն առաջին)

Սորայ հոգի ջահեցաւ նոցին,  
Վեցեակ վեցից համարեալ գրին։

(Ձեռ. Թաւր. 43, էջ 318բ—321բ,  
Var. էջմ. Կարին. Թ. 466, էջ 182։)

Հայ գիր յօրինեալ,  
 Վրամշտպուհ օգնեալ,  
 Վախրիճ գործակցեալ,  
 Դանիէլ շնորհեալ,  
 Քսան եւ ինն գաեալ,

(Var. քսան եւ հինգ)

Նախնեացն արարեալ...  
 Աստուած գթացեալ,  
 Հրեշտակ Տեառն իջեալ,  
 Մատամբ փորագրեալ...  
 Եօթն գիր յայտնեալ,  
 Այն հոգի ջահեալ,  
 Զայլ գիրսն յարուցեալ,  
 Սիղոբայք հեգեալ,  
 Բանն յար մնացեալ,  
 Ի գիրս միացեալ,  
 Զիմաստս պատմեալ,

(Ձեռ. Թաւր. 43, էջ 150բ—154ա,

Var. Էջմ. Կարին. Թ. 466, էջ 57—61.)

Եօթը գիր ընդունողներուն մէջ կը յիշուի նաեւ հին հեղինակ մը՝ Անանիա Շիրակացի (աես Բազմ. 1848, 248): Բայց այս բանը ուրիշ տեղ մ'ալ կրկնուած չեմ գտներ. եւ կը կարծեմ որ այս անունով կ'ուզուի ակնարկել Վայսերաց Պատմութիւնը, որ յիշեցինք վերը:

Դանիէլեան այբուբենը 22 գրէ բաղկացած ընդունելով՝ Ս. Մեսրոբին 14 գիր կու տան միայն նարապետ Սասնեցի եւ Վարդան պատմիչ, երկուքը իրարու գրեթէ ժամանակակից, կամ

Սասնեցին քիչ մը աւելի հին: «Առեալ ընդ իւր զիմաստունն Դանիէլ եւ ժամանէ առ կոչողն իւր՝ Թարգմանելով զվաղուց արարեալ նշանսն՝ զկրկին տասն եւ ղերկու տառսն (տպուած է որոշ. այս սրբագրութեան մասին տես վերը՝ § 1), որք ոչ բաւականանային բայից մերոց . . . (յետոյ կ'աւելցնէ) տեսանէր . . . զՏէրն հրեշտակաց՝ մարգարէական աչօք՝ որ գրէր մատանագիծ ի սալս սրտի իւրոյ չորեքտասան տառ» (Կ. Սասն. էջ 41, 43): «Սուրբն Մեսրոպ յօրինէ դպրութիւն հայերէն, քսան եւ երկու գիր առ Դանիէլի ասորւոյ գրեալ ի հին ժամանակաց, որ վասն ոչ պարզելոյն զընդարձակութիւն լեզուիս, անհոգացեալ եղեւ յառաջնոցն . . . եւ ոչ Մեսրոպ կարէր նոքօք փոխել զաստուածաշունչ մատեանս ի հայ բարբառ: Վասն որոյ աղօթից տուեալ զանձն գործակցութեամբ սրբոյն Սահակայ, ապա նմա Աստուած զխնդրելին, չորեքտասան գիրս, աջով իւրով դրոշմեալ առաջի նորա» (Վարդան, էջ 49): «Լեալ է հայերէն գիր հնոցն . . . զորոյ զթերութիւնն ելից նորս մեր Եզրաս, աստուածախառն շնորհօք լցեալ, նորոգիչ նորոյս Իսրայելի եւ կարգաւորիչ» (անդ, էջ 50):

Դաւիթ Անյաղթին ընծայուած հանելուկին մէջ եւ Մագիստրոսի քով Ս. Մեսրոբին կը տրուի 12 գիր, իսկ Վարդանագրքին մէջ՝ 19 գիր (տես վերը՝ էջ 81, 88):

Յաւելեալ գրերու թուի մասին անտարբեր է Սամ. Անեցի, էջ 68. «ԶԴանիէլի նշա-

Նագիրսն յօրինէին ընկերօք հանգերձ: Եւ յետ  
 միոյ ամի դարձեալ աստուածատուր Նշանագրօք  
 զնոյն յեղանակեալ, որով եւ գպրութիւնք եւ  
 գիրք աստուածայինք ուղղեալ Թարգմանէին:

Գրեթէ ասոր նման բան մը կը գրէ Յայս-  
 մաուրքը. «Եւ առեալ (տեսիլքէն յետոյ)  
 եստեղծ զնշանագիրսն մերոյ լեզուիս՝ հանգերձ  
 Ռուփինոսիւ իմաստասիրաւն: Եւ նախ յզեցին  
 զհոմ գիրն ի հայերէն պարուբնսն եւ ապա  
 զթերին լցին աստուածատուր շնորհքն»:

Վերջապէս յիշենք եթովպական առաս-  
 պել մը՝ որ պլանդակ ձեւով՝ հայերէն գրերուն  
 գիւտը կը պատմէ: Այս առասպելը որ կը կրէ  
 «Պատմութիւն Տերտագ հայ Թագաւորին»  
 վերնագիրը, առաջին անգամ գտաւ Joh. Bach-  
 mann՝ Պերլինի Թագաւորական մատենադարանի  
 եթովպացերէն մէկ ձեռագրին մէջ եւ հրատա-  
 կեց՝ գերմաներէն Թարգմանութեամբ հանգերձ՝  
 Die Philosophie des Neopythagoreers Se-  
 cundus (Berlin 1888) աշխատութեան իբր  
 յաւելուած (տես գրքին ետեւը, էջ 12, Ge-  
 schichte des armenischen Königs Tertäg)  
 եւ երկրորդ անգամ իր Aethiopische Lese-  
 stücke (Leipzig 1893) աշխատութեան մէջ: Այս  
 առասպելին համառօտութիւնը կու աայ Տաղա-  
 ւարեան (Ժագումն հայ տառից, էջ 37), որուն  
 ամփոփումը կը զնեմ հոս:

«Հայերը հին ժամանակ չունենալով գիր՝  
 կը գործածէին Հռովմայեցոց եկեղեցական  
 գրքերը. անոնց քահանաները կու գային Հռով-

մէն: Յետոյ Հայերը գոտելով Հռովմայեցիներէն, կորեցին իրենց յարաբերութիւնը, որոշեցին իրենցմէ ընտրել քահանաները եւ սեպհական գիր հնարել: Թագէտս անունով առաքինի եւ արդար քահանայ մը, 3 շաբաթ աղօթեց Աստուծոյ, եւ Աստուած շնորհեց անոր 12 գիր, որ բաւական չէին գիրք գրելու: Թագէտս այս գրերը փորագրեց եկեղեցիի մը քարին վրայ ու մեռաւ: Մարտիրոս եպիսկոպոսը՝ հայ առօրը գտնելու համար քուրձ հագաւ, մոխրի վրայ նստաւ, 3 օր ծով պահեց, 42 անգամ լալախառն աղօթեց: Վերջապէս Աստուած լսեց անոր ձայնը եւ ղըկեց հրեշտակը, որ Մարտիրոսին սօրվեցուց 10 գիր ալ եւ ըսաւ. «Գնա՛ բարդէ՛ Թագէտս քահանային 12 գրերուն վրայ, որով կ'ունենաս 22 գիր: ասով կ'ամբողջանայ այբուբենը»: Այսպէս գտնուեցան հայերէն գրերը, որոնցմով Թարգմանեցին հին ու նոր կտակարանները:»

Այս խնդրին առթիւ նոր քննիչները կը բաժնուին 10 մասի:

1. Ինճիճեան, Էմին, Լակարտ, Հիւրշման, Կարգհաուզէն, Սարգսեան, Յարութիւնեան եւ Տաղաւարեան կ'ընդունին որ Մեսրոբ իրմէ հնարած եւ Դանիէլեան այբուբենին վրայ աւելցուցած է 14 գիր:

2. Հ. Ղ. Մ. (Բաղմ. 1848, էջ 248—9) 12՝ բաղաձայն:

3. Պաականեան՝ 10 գիր (2 ձայնաւոր եւ 8 բաղաձայն):

4. Լանկլուա՝ 19 գիր (6 ձայնաւոր եւ 23 բաղաձայն)։

5. Գարագաշեան (Քնն. Պատմ. Դ. 38)՝ 7 ձայնաւոր։

6. Աղայեան (Մուրճ 1890, էջ 1587—8)՝ 7 գիր (2 ձայնաւոր եւ 5 բաղաձայն). իսկ 2 ձայնաւոր եւ 2 բաղաձայն՝ շատ յետոյ։

7. Միւլէր՝ 14 գիր (7 ձայնաւոր եւ 7 բաղաձայն) կամ 16 գիր (7 ձայնաւոր եւ 9 բաղաձայն). (տե՛ս Տաղաւ. ծագ. հայ տառից, էջ 19)։

8. Ս. Վ. Պարոնեան (ՀԱ. 1896, էջ 74ր եւ 75) աւելցուած գրերուն թիւը չ'որոշեր։ Այսպէս նաեւ Գ. Փռնակ (Անահիտ 1905, էջ 130)։

9. Մալխասեան՝ իր Դասընթաց հայ. մատ. (Թիֆլիս 1899) աշխատութեան մէջ երկգիւղի գիրը մը կը բռնէ. նախ (էջ 50) կը հաստատէ որ Դանիէլեան գրերը հայերէն չէին եւ հետեւաբար Մեսրոբ մէկ կողմ թողուցած է. իսկ յետոյ (էջ 52) կը գտնէ որ Մեսրոբ 15 գիր միայն հնարած է (1 ձայնաւոր եւ 14 բաղաձայն), այն է՝ յունարէնի մէջ չգտնուող գրերը՝ որոնց մէջ նաեւ շ։

10. Մարկուարդ<sup>1</sup> կ'ընդունի որ Մեսրոբ բարեփոխած ըլլայ Դանիէլեան գիրը, թէ՛ անոր

<sup>1</sup> Այս հեղինակին աշխատութիւնը (Պատմ. Հայերէն նշանագրերու եւ Վարուց Ս. Մալթոցի) նոր միայն հրատարակուեցաւ (ՀԱ. 1911, էջ 529—544, 673—684, 1912, էջ 41—54, 199—216, 657—688), բնագրով եւ չ. Ա.



(էջ 663)՝ Ասոնց վրայ մոռցած է աւելցնել նաեւ է, ը գրերը, որոնց համար կ'ըսէ թէ է գրէն կազմուած են (էջ 659)<sup>1</sup>,

Վերոյիշեալ տասը կարծիքներուն մանրամասն թուումը չենք ընել, որովհետեւ նախորդ գլխուն մէջ՝ Դանիէլեան գրերուն առթիւ (§ 8) յիշած ենք:

8. Կարծիքներու այս քառսին մէջ որն է ուղիղն ու հաւանականը: Ասիկա գտնելու համար պէտք է մի առ մի քննել վերը յիշատակուածները:

Ամենէն առաջ արժէքէ զուրկ է Փարպեցւոյն պատմութիւնը: Այս պատմութեամբ Դանիէլեան գիրն է նոյն իսկ Մեսրոբեան գիրը. եւ զեռ այս գրին ալ ~~հարկէ~~ ~~հարկէ~~ ~~հարկէ~~ ոչ թէ Մեսրոբինն է, այլ Սահակի եւ անոր տուած քանի մը աշակերտներունը: Եթէ այսպէս է, այսինքն թէ մեր այսօրուան 36 գրերը Դանիէլեան այբուբենն են, ուր են ուրեմն Մեսրոբի երկամեայ փորձերը, Միջագետք եւ Եդեսիա իր ճամբորդութիւնը, տեսիլքով կամ իր սեպհական աշխատութեամբ պակաս գրերը գտնելը, Առակաց գրքի թարգմանութիւնը, ուրախ վերագարձը, թագաւորին, կաթողիկոսին եւ ժողովուրդին ուրախ ընդունելութիւնը եւն, զէպքեր, որոնք այնքան մանրամասն պատմուած են Կորիւնի մէջ: Այս խնդիրը արդէն աւելի ընդարձակ քննած ըլլալով Ս. Մեսրոբի Կեն-

<sup>1</sup> Այս ենթագրութեանց դէմ մեր պատասխանը տես վերը՝ էջ 70—78:

սագրութեան մէջ (Գլուխ Դ), աւելորդ կը գտնենք հոս մէջ բերել մեր փաստերը: Միայն կը յիշենք հետեւեալ հանգամանքը: Փարպեցին գրի գիւտը պատմած առանձին կ'ըսէ որ իր աղբիւրը Կորիւնն է, իր տուած տեղեկութիւնները բոլոր անկէ կը քաղէ: Եւ որովհետեւ Կորիւնի մէջ չկայ այսպիսի տեղեկութիւն, կը հետեւի թէ փարպեցին սխալած կամ, աւելի բանաւոր կ'ըլլայ ըսել, խնդիրը կարճ կապած է: Այս համառոտախօսութեան պատճառաւ է նաեւ որ վրաց ու աղուանից այբուբենի գիւտն ալ չի յիշեր: Հետեւաբար եւ անոր վրայ կարծիք հիմնել անտեղի է եւ սխալ:

Խորենացւոյն մէջ գտնուած եօթը ձայնաւորներուն թուումը յետին յաւելուած մ'է: Այս խնդրին վրայ խօսած են արդէն Langlois, Collect. II, 162, Խալաթեան, Փարպ. եւ Գործք նորին, էջ 117, Խ. Ստեփանէ, Թրգմ. Խոր. 1889, ծան. 697, Խ. Յարութիւնեան, Հայոց գիրը, էջ 265, 371 եւն: Ասոնք կը ցուցնեն որ յիշեալ ձայնաւորներու յաւելուածը կայ վենետիկի 6 ձեռագիրներէն միայն մէկուն մէջ<sup>1</sup>, այն ալ լուսանցքին վրայ: Միւս ձեռագիրները չունին այդպիսի բան. չկայ Լամբրոնացւոյն ընտիր օրինակին մէջ, չկայ Յակոբ Վարինեանի բաղդատած օրինակին մէջ, ինչպէս նաեւ Փոքր Կորիւնին (էջ 10) եւ Գանձակեցւոյն մէջ (էջ 15), որոնք Խորենացւոյն տե-

<sup>1</sup> Իսկ Ալիշանի Հայապատումը (մասն Բ, էջ 145բ) կը գրէ. «մասն Ի վեց օրինակաց մեր ունեցած ձեռագրաց»:

սիւքը թէեւ բառացի կ'օրինակեն, բայց եօթը ձայնաւորներու յիշատակութիւնը չունին: Վենետիկի հրատարակիչները զուր տեղը բնագրին մէջ մտցուցած են այդ յետին յաւելումը, որոնց հետեւած են միւսներն ալ անգիտութեամբ, եւ այսպէսով մտած է նաեւ զանազան թարգմանութեանց եւ արտատպութեանց մէջ:

Միայն Հ. Բ. Սարգիսեանն է (Բազմ. 1897, Ապրիլ, յաւել. էջ 3), որ պաշտպան կը ներկայանայ այս եօթը ձայնաւորներուն: Իր ապացոյցն այն է որ "Մովսէս քերթողահօր քերականական գրութեան մէջ կը հանդիպինք եօթն ձայնաւորաց թուարկութեան՝ զոյգ ընդ բաղաձայնից. ասկէց իսկ կարելի է թէ անցած ըլլան պատմագրութեան մէջ. բայց ես կարծեմ, թէ Մովսէս՝ պէտք է, որ նոյն իսկ իւր պատմութեան մէջ անորոշ կերպով Մեսրոպայ ձեռքով յաւելեալ տառերու յիշատակութիւն մ'ըրած ըլլար, զոր անոր ընծայուած հնագոյն քերականք, այսպէս եւ յետոյ վարդան եւ Ասողիկ՝ իբրեւ պաշտպան մեր այբբենարանի ասորական ծագման՝ չգտնելով այդ ձայնաւորաց գոյութիւնը ասորի հին այբբենարանին մէջ, մտածեցին Մեսրոպայ գիւտին ընծայել զայն":

Այս ապացոյցը, ինչպէս կը տեսնուի, բաւական անզօր է: Նախ՝ Մովսէս քերթողի անունով հասած քերականութիւնը յետին գործ մ'է եւ անուանապէս միայն ընծայուած է Պատմագրին: Երկրորդ՝ ենթադրելով իսկ որ երկուքն ալ մէկ հեղինակի գործ ըլլան, ինչ կապ

մէկուն կամ միւսին մէջ, Մոսկէս քերթողի  
 քերականութիւնը ապագրութեամբ ծանօթ չըլ-  
 լալով եւ Հ. Սարգիսեանի գրուածքին մէջ ալ  
 նոյն հատուածը մէջ բերուած չըլլալով, պարզ  
 չենք գիտեր թէ ինչ կ'ըսէ քերականը: Բայց  
 որչափ կ'իմացուի Հ. Սարգիսեանի բառերէն,  
 կ'երեւայ որ քերականութեան մէջ տառերու  
 պարզ «թուարկութիւն» մը կայ. չէ՛ յիշուած  
 թէ ձայնաւոր գրերը Մեսրոբ աւելցուց հին  
 այբուբենին վրայ: Ամէն քերականութեան մէջ  
 ալ ի հարկէ պիտի յիշուին լեզուին գրերը, թէ՛  
 ձայնաւորները եւ թէ՛ բաղաձայնները. բայց  
 ասկէ եզրակացնել թէ ուրեմն խորենացւոյն  
 Պատմութեան մէջ ալ յիշուած էր որ Մեսրոբ  
 եօթը ձայնաւորներն աւելցուց հին գրին վրայ,  
 առնուազն զարմանալի կը գտնենք:

Այսպէս ուրեմն խորենացւոյն մէջ ձայնա-  
 ւորներու թուումը յետին եւ երկրորդական գրչի  
 մը յաւելուածն ըլլալով, ժամանակ է որ վերնայ  
 նոր հրատարակութեանց մէջէն, ինչպէս վերցաւ  
 Փարպեցւոյն մէջէն՝ տեսիլքին ամբողջ հատուածը:

Ս. Մեսրոբին մասնակի գիւտ մը վերա-  
 գրելու գաղափարը առաջին անգամ կը ծագի  
 Հայոց մէջ՝ Ժ դարուն (Ասողիկի քով): Ասկէ  
 հին համարուած յիշատակութիւնները անստոյգ  
 են. այսպէս Անանիա Շիրակացին (Բազմ.  
 1848, 248), որուն վերագրուած Պատմու-  
 թիւնը, ինչպէս ըսինք, պիտի ըլլայ կայսերաց  
 Պատմութիւնը<sup>1</sup>:

<sup>1</sup> Հայապատում՝ Ա. 71թ՝ կայսերաց Պատմութեան  
 25000 ՅԻՄԲԸ

Սկիզբէն Մեսրոբի աւելցուցած առեւտրուն  
 թիւը եօթը կը համարուի, բայց առանց որոշե-  
 լու թէ ինչ տառեր են: Երկու-երեք դար յե-  
 տոյ՝ թիւը կը բարձրանայ 14-ի (ինչպէս ունին  
 Սասնեցիք եւ Վարդան): Բայց ասոնք ալ դեռ  
 չեն որոշեր առեւտրուն էութիւնը: Քիչ մը յե-  
 տոյ կու գան Գանձարանն ու Ոսկեփորիկը,  
 որոնք խաբուելով Եօթը թիւէն, գազափարաց  
 զուգորդութեամբ կ'ենթագրեն թէ Մեսրոբի  
 հնարած գրերը ձայնաւորներն են: Վերջապէս  
 կու գայ Վարդանագիւղքը, որ խայտառակ  
 պատմութիւն մը կը յերկուրէ, ինչպէս տեսանք  
 վերը՝ էջ 88—89:

Խնդիրը այսպէս ամփոփելէ յետոյ, կը հար-  
 ցնենք, իրաւացի՞ է արգեօք մէկ կողմ ձգել հնա-  
 գոյն եւ գրի գիւտին ժամանակակից պատմիչ-  
 ները եւ 600 կամ 800 տարի յետոյ եկող  
 անձերու պատմածին կարեւորութիւն տալ, ինչ-  
 պէս կ'ընեն վերը յիշուած նոր քննիչները, այն  
 ալ կամայաբար մէկուն կամ միւսին հետեւելով:  
 Եթէ խնդիրը ներքին պահանջներ ունենար, այն  
 ժամանակ հնարաւոր էր թերեւս լսել յետին  
 պատմիչներուն. բայց այսպիսի պահանջ մը չկայ:  
 Եթէ Մեսրոբ հասկցաւ որ խաբէութեան մը  
 զոհ գացած է, թէ Դանիէլեան գրերը հայերէն  
 չեն, այլ եւս ինչո՞ւ պիտի պահէր այդ ձեւերը:

---

Համար կ'ընէ թէ Խոր-գրին մէջ կը գրուի «ՅԱՆԴՐԵԱՆԵ  
 ԵՒ Ի ՄՈՎԻԷՆԵ ԶԵՐԹՈՂ-ՀՕՐԷ» քաղուած եւ կը հասնի  
 մինչեւ 885 թիւը: Խորենացոյն յիշատակութիւնը շու-  
 կանկածելի կը գործնէ գործը:

Կորիւն իր գրքին սկիզբը կը գրէ. «Ջասքանա-  
 զեան ազգին եւ Հայաստան աշխարհին զաս-  
 տուածապարգեւ գրոյն . . .» Եթէ մեր գրերը  
 Դանիէլին ղրկածներն են եւ քանի մը հատը  
 միայն Մեսրոպ գտեր է, ալ ինչ «ասքանազեան  
 ազգ», «Հայաստան աշխարհ», կամ «աստուա-  
 ծապարգեւ գիր». Թող ըսէր «Ջասորական  
 ազգին եւ Միջագետաց աշխարհին զԴանիէլա-  
 պարգեւ գրոյն . . .» եւ այն տանն ճիշտ կ'ըլ-  
 լար: Ո՛վ որ աչք ունի համեմատելու հայերէն,  
 ինչպէս նաեւ հին վրացերէն գրերը, պարզ կը  
 տեսնէ որ ասոնք մէկ ոճ, նկարչական մէկ դրու-  
 թիւն ունին, հետեւաբար եւ մէկ ձեռքի շնորհք,  
 միեւնոյն մարդու ձեռակերան են: Երկու գրու-  
 թիւն, երկու տարր, մին Դանիէլեան եւ միւսը  
 Մեսրոպեան՝ չկայ հոն: Յաւելուածներու մասին  
 խօսող պատմիչները իրողութիւն մը չէ որ կը  
 պատմեն, այլ իրենց ըմբոստիական միաժողով-  
 թեան արդիւնքը: Կորիւնի եւ Խորենացոյն քով  
 կարդալով թէ Դանիէլ ասորի էր, կամ թէ  
 այբուբենը յունականին հետեւողութեամբ կազ-  
 մուած էր, ասկէ կը սկսին եզրակացութիւններ  
 հանել. կը հետեւցնեն թէ Դանիէլեան գրերու  
 թիւն ըլլալու էր ըստ ասորականին 22, կամ  
 ըստ յունականին 24 եւ կամ երկուքին խառ-  
 նուրդով 29 եւն (տես վերը, էջ 82—91):  
 Բայց այս բոլորը անհիմն է:

Ս. Վ. Պարոնեան (Երկրագունա 1885,  
 էջ 101—3), որ Դանիէլեան գրերուն անփո-  
 փոխ շարունակութեանը կողմնակից է (իրեն հե-

նաեւ Զարհանալեան, Հին Դպր. Պատմ.<sup>3</sup>, էջ 18), բացի Փարպեցւոյն վկայութենէն՝ կը բերէ նաեւ հետեւեալ երկու պատճառաբանութիւնները. 1. Հնութիւնը յարգի բան մ'է. մարդիկ ամէն ժամանակ աշխատած են պահել հնութիւնը. այս զգացմունքով Մեսրոբն ալ պիտի պահէր Դանիէլեան գրերը: 2. Եթէ հայերը այնպէս պիտի փարեցան Դանիէլեան գրերուն, երկու տարի գործադրեցին եւ շատեր վարժեցան անոնց, ուրեմն Մեսրոբ անկարող էր անտես ընել զանոնք:

Մեսրոբ հայերէն գիր կը փնտռէր եւ ոչ թէ հնութիւն. Պարոնեան այս պատճառաբանութիւնը կու ապայն պատճառով որ կը կարծէ թէ Դանիէլեան գիրը հայերէն է եւ թէ այդ գրերով գրուած հայ գրականութիւն կար: Այսպէս է նաեւ Տաղաւարեան. «Մեսրոպ կամեցաւ հաւատարիմ մնալ հնութեան, պահել այդ գրերն նոյնութեամբ, զի ազգային էին եւ նուիրական . . . : Եւ ինչո՞ւ թողոյր այդ ազգային նուիրական գրերն եւ բոլորովին նորեր գտնելու աշխատէր» (էջ 25—26): Բայց մենք գիտենք որ Դանիէլեան գիրը հայերէն չէր, Մեսրոբ այդ գրով գրուած բան մը հազիւ թէ գտած ըլլար, կամ եթէ գտած էր՝ անմիջապէս տեսած ու հասկցած էր որ օտար այբուբենի մը հետ գործ ունի. եւ այս հանգամանքը միայն բաւական էր որ իսկոյն եւեթ մէկ կողմ նետէր զայն:

Երկու տարուան փորձ ըսածը երկու դար չի նշանակեր: Նայելով այն ժամանակի հան-

գամահիւններուն՝ այսքան կարճ ժամանակի մէջ՝  
Դանիէլեան այբուբենը շատ ոչինչ տարածու-  
թիւն ունեցած պիտի ըլլար: Մեսրոբ իր գրերը  
35 տարի տարածեց անխոնջ ջանքերով: Իր  
գործը շարունակեցին իր յաջորդներն ան-  
դադար եւ այնու ամենայնիւ մէկ-երկու դար  
յետոյ կը գանենք որ Տարօնի մէջ դեռ Մես-  
րոբեան գիր չկայ եւ ասորի գրականութիւնը  
կ'իշխէ:

Մեր կարծիքն այն է որ Մեսրոբ Դանիէ-  
լեան գիրը բոլորովին մէկ կողմ դնելէն յետոյ՝  
իր այբուբենը ամբողջապէս ինքը հնարեց:

#### Բ. ՄԵՐ-ՔԵՆՆԻ ԱՅԲՈՒԲԵՆԻ յԵՐԼՈՒՆԴԱՆԸ:

9. Սաջատական եւ կցողական այբուբեններ: 10. Հայե-  
րեան իրարեւ սաջատական այբուբեն: 11. Չայնաուոր-  
եան գրչու կամ չգրչու դրոշմներ:

9. Երբ աշխարհիս վրայ գանուած զանա-  
զան այբուբենները համեմատենք իրարու հետ,  
անոնց յօրինուածութեան մէջ երկու կարեւոր  
կէտ կը գանենք, որով այդ այբուբենները կը  
զանազանին իրարմէ:

Այս կէտերէն առաջինը տառաձեւերուն  
ամէն դիրքի մէջ ալ նոյն կերպով գրուելու  
կամ չգրուելու խնդիրն է: Այբուբեններէն  
ոմանք անդո՛ւն են, այսինքն շարագրութեան  
մէջ տառերը անջատ իրարու քով կը շարուին,  
առանց անոնց վրայ որեւիցէ փոփոխութիւն մը  
տեղի ունենալու: Միւսները ինչո՛ւն են, այսինքն

շարագրութեան մէջ տառերը իրարու կը կցուին եւ այս պարագային իրենց զանազան մասերէն յապաւումներ կը կրեն. այնպէս որ տառ մը միայն առանձին մնացած պարագային կը ներկայանայ իր ամբողջ ձեւով: Օրինակ՝ արար. 1 գիրը՝ որ առանձին մնացած ժամանակ յ ձեւն ունի, երբ յաջորդ գրի մը կցուի՝ կ'ըլլայ 1, երբ իրեն գիր մը կցուի՝ կ'ըլլայ յ, երբ երկու գրի մէջտեղ գտնուի՝ կ'ըլլայ 1, վերջապէս 1 - գրին հետ միացած՝ կ'ըլլայ Ն: Աւելի բարդ ձեւափոխութիւններ ալ կան. ինչպէս արար. 2 գիրը, որ առանձին կ'ըլլայ 2, աջէն կցուած 4, ձախէն կցուած 3, երկու գրի միջեւ 6:

Անջատական այբուբեններու կարգին կը պատկանին հայերէնը, վրացերէնը, փիւնիկերէնը, յունարէնը, ռուսերէնը, լատիներէնը եւ ասկէ ածանցած բոլոր եւրոպական այբուբենները: Ազգողական այբուբեններու կարգին կը պատկանին ասորերէնը, պահլաւերէնը, արարերէնը եւ մոնղոլական այբուբենները (մանչու, մոնղոլ, քալմուք, պուրեաթ եւն):

Երկու գրութեանց մէջտեղը կը բռնեն եթովպական եւ հնդկական այբուբենները: Եթովպացերէնի մէջ ձայնաւորները կրճատ ձեւով կը կցուին բաղաձայններուն վրայ: Հնդկերէնի մէջ անջատ կը գրուի ձայնաւորէն անմիջապէս առաջ գտնուած բաղաձայնը միայն, իսկ եթէ նոյն վանկին մէջ այս բաղաձայնէն առաջ ուրիշ բաղաձայններ ալ կան, կը կրճատուին եւ իրենց կրճատ ձեւերով վրայէ վրայ

կը կցուին վերջին բաղաձայնին վրայ՝ Ասկէ զա-  
հնգերէնի մէջ ամբողջ բառը կամ աւելի յա-  
ճախ քանի մը բառեր միասին՝ վերի կողմէն  
գծով մը կը միանան, այնպէս որ հնգերէն  
գրութիւն մը միշտ կը ներկայացնէ հորիզոնա-  
ձեւ գրուած ձող մը՝ որուն վրայէն կախուած են  
առները:

Պէտք է կարծել թէ ամէն սեմական այ-  
բուբն կցողական է. ընդհանակը հնագոյն սե-  
մական այբուբենները անջատական էին, ինչ-  
պէս եւ փիւնիկերէնը եւ եբրայեցերէնը: Կցո-  
ղականութիւնը յետոյ մտաւ սեմականներուն  
մէջ: Այս գրութեան հետեւեցան ասորիները,  
պահլաւները, արաբները եւ ասոնց հետեւո-  
ղութեամբ՝ պարսիկներն ու թուրքերը: Նոյն  
խիչ զենդական այբուբենը՝ որ պահլաւկա-  
նէն ձեւացած է, անջատական գրութեան կը  
հետեւի:

10. Այն ժամանակ՝ երբ Ս. Մեսրոբ  
հայերէն գրերը հնարելու հետամուտ էր,  
Հայաստանի մէջ գործածական էին թէ՛ անջա-  
տական եւ թէ՛ կցողական այբուբեններ. այսպէս՝  
յուշարէնը անջատական էր, ասորերէնն ու  
պահլաւերէնը կցողական էին: Եթէ այս վերջին  
երկու այբուբենները միասին առնունք, կրնանք  
ըսել թէ կցողական գրութիւնը աւելի տարա-  
ծուած էր հայոց մէջ, քան անջատականը: Բայց  
իմաստունն Մեսրոբ՝ աեսած է կցողականին ան-  
պատեհութիւնները եւ անջատականին առաւե-  
լութիւնները, եւ հակառակ աւելի տարածուած

ասորական ու պահլավիկ այբուբեններու գրութեան՝ ընդունած է յունական գրութիւնը։ Այսպէսով մենք ալ, ինչպէս եւ մեզի հետ մեր դրացի վրացիները՝ այսօր անջառական այբուբեններու լուսագոյն շարքին մէջ մեր տեղն ունինք։

11. Երկրորդ կէտը՝ որով աշխարհիս զանազան այբուբենները կը զանազանին իրարմէ իրենց յօրինուածութեան մէջ, ձայնաւորներու գործածութեան խնդիրն է։ Հայերէն, վրացերէն, յունարէն, ռուսերէն, լատիներէն եւ ասկէ ածանցած բոլոր այբուբենները՝ ձայնաւորները կը գրեն. իսկ սեմական այբուբենները չեն գրեր։ Ասոնք սովորաբար բառին բաղաձայնները միայն կը նշանակեն եւ ընթերցողին կը թողուն գուշակել ձայնաւորները։ Այսպէս օր. երբայեցերէն. Ի-Ե-Ի բառը կը գրուի ١٥٥, այն է Ի-Ե. ընթերցողին կը ֆեյ գուշակել – եւ է ձայնաւորները։ Արաբերէն ١٥٥ Ի-Ե-Ի բառը տառացի կը կարգացուի ١٥٥. իսկ ١٥٥, ١٥٥ է ձայնաւորները, ինչպէս նաեւ երկրորդ ١٥٥ բաղաձայնը՝ կարգացողը պիտի դնէ։ Որոշ պարագաներ կան միայն երբ ձայնաւորն ալ կը նշանակուի. այն է՝ երբ ձայնաւորը երկար է կամ բառին սկիզբը եւ կամ վերջը կը գանուի. ասոնք ալ շատ անկատար կներպով։ Օրինակ՝ ասոր. ܐܝܬܐ Ի-Ե-Ի բառին մէջ, իսկապէս գրուած կը գաննէք ١٥٥. ուրեմն առաջին ձայնաւորը պէտք է հասկնալ Ի. վերջինը՝ ١٥٥. Աւելի յետին ժամանակի գործ է ձայնանշաններու գործածութիւնը։ Սեմականները

իրենք ալ տեսան որ այս գրութեամբ՝ բառերը, մանաւանդ օտար անունները շատ դժուար էր կարգալ. ուստի մտածեցին հնարել ձայնաւորներու համար քանի մը նշաններ, որոնք բաղաձայններուն վրան կամ տակը գրուելով՝ կը ցուցնեն թէ բաղաձայնէն յետոյ ինչ ձայնաւոր պէտք է կարգալ:

Պահլաւերէն այբուբենն ալ՝ իբրեւ սեմականին հարազատ զաւակը՝ ժառանգած էր այս գրութիւնը: Բայց այս լեզուին մէջ գրութիւնը այնպիսի խայառակ վիճակի մը հասած էր որ ընթերցումը կատարեալ չարչարանք մ'էր: Պահլաւերէնի մէջ ոչ միայն չէին գործածուեր ձայնաւորները, ոչ միայն առուերը իրարու կցուելով ձեւահան կ'ըլլային, այլ եւ գրերը մաշուելով մաշուելով այնպիսի վիճակի մը հասեր էին, որ շատ գրեր իրարու նման էին. օրինակ՝ է եւ դ միեւնոյն ձեւն ունէին. է, շ, լ, բ, ու միեւնոյն ձեւն ունէին, նոյնպէս նաեւ հ, ի, ու Այս խառնակութիւնը այն աստիճանին հասաւ՝ որ Պարսիկները իրենք ալ ձանձրացան եւ հնարեցին նոր անջառական այբուբեն մը, ուր ձայնաւորները գրելու գրութիւնը ընդունուեցաւ եւ ամէն մէկ տառ մէկ հնչումով մը որոշուեցաւ: Ասիկա էր զենդական այբուբենը:

Ս. Մեսրոբ՝ որ ամէն օր աչքին առջեւ կը տեսնէր անձայնաւոր այբուբեններու պաածառած անտեղութիւնները, ընթերցանութեան բազմութիւ սխալները՝ որ հայ նորուսները կ'ընէին ասորերէն կամ պահլաւերէն գրելու կամ

կարգալու ժամանակ, իմաստուն գանուեցաւ հոս  
ալ հետեւելու յունական այբուբենական դրու-  
թեան՝ թէ՛ հայերէնի եւ թէ՛ վրացերէնի հա-  
մար, որով եւ տուաւ մեզի այս կողմէն ալ կա-  
տարեալ այբուբեն մը։ Ա՛յս կը ցուցնէ նաեւ  
Կորիւնի կորճ, բայց զօրեղ վկայութիւնը. «յօ-  
րինէր սիղոբայիւք եւ կապօք եւ յօյնոսք  
նշանօք»

#### Գ. ՄԵՐԵՔԵՆԻ ԳՐԱՆԻՆ ԱՂԸՆԻՆԸ։

12. Ախակողմնամ, ձախակողմնամ եւ ուղղախակողմնաց  
դրութիւնները գրութեամբ տեղ. 13. Գրութեան աջա-  
կողմնամ կամ ձախակողմնամ ուղղութիւնը. 14. Ձա-  
խակողմնամ ուղղութեամբ խաչաձեւ գրութեամբ։

12. Գրութեան ուղղութիւն ըսելով կը  
հասկնանք այն հանգամանքը որ գրերը իրարու  
յաջորդած ժամանակ՝ անոնց ընթացքը աջէն  
դէպի ձախ կ'ուղղուի թէ ձախէն դէպի աջ։

Այբուբեններէն ոմանք կը հետեւին աջ-  
իւղեան ուղղութեան. այսինքն գրերը կը շարուին  
ձախէն դէպի աջ, ինչպէս է հայերէնը. միւսները  
կը հետեւին յօյն-իւղեան ուղղութեան, այսինքն  
գրերը կը շարուին աջէն դէպի ձախ, ինչպէս է  
առաքելները։

Ասոնցմէ գուրս կայ նաեւ վերէն վար  
գրելու ուղղութիւնը, ինչպէս են չինարէնը,  
ճաբոններէնը, մոնկոլներէնը։ Այս լեզուներուն  
մէջ՝ գրողը սկսելով թուղթին աջ անկիւնէն՝  
գրերը աակէ աակ կը շարէ, յետոյ կ'անցնի  
քովի աղիւն եւն. այսպէս իրարու քով ուղղա-

Հայեաց գիրքով կը շարունակ առդերը: Ընթեր-  
ցողը կարդալու ժամանակ թուզթը դէպի ձախ  
կը դարձնէ, այնպէս որ ուղղահայեաց առդերը  
դառնան հորիզոնական. եւ աջէն ձախ գիմելով  
ու առդ առ առդ վարէն վեր բարձրանալով՝ կը  
կարդայ գրութիւնը:

Աշխարհիս ամենահին գրութիւնները կը  
հետեւին աջակողմեան ուղղութեան. այսպէս են  
ասորեստանեան, բաբելական, հին պարսկական,  
ինչպէս նաեւ խաղդեան բեւեռագիրները: Այ-  
բուբենի դասական գրութիւնը հնարող ֆինի-  
կեցիք ընդունեցան ձախակողմեան գրութիւնը,  
որոնց հետեւեցան նաեւ միւս բոլոր փոխառու  
ազգերը: Այսպէս՝ եբրայեցիք, Ասորիները,  
Պարսիկները, Արաբները եւն: Յոյներն ալ նա-  
խապէս ընդունած էին ձախակողմեան գրութիւնը.  
ասոնց մէջ յետոյ յառաջացաւ βουστροφθόον  
կոչուած գրութիւնը, ուր գրութիւնը մէկ առդ  
կ'երթար աջէն ձախ, յաջորդը ձախէն աջ եւ այս-  
պէս շարունակաբար: Քրիստոսէ առաջ ե դարուն՝  
այս գրութեան տեղ կ'ընդունուի աջակողմեան  
ուղղութիւնը, որուն կը հետեւին նաեւ լա-  
տինները եւ ասոնցմէ ածանցող բոլոր այբու-  
բենները:

Այն ժամանակ՝ երբ Ս. Մեսրոբ իր ազգին  
համար այբուբեն մը հնարելու հետամուտ էր,  
Հայերը երեք լեզու կը գործածէին. ասորերէն,  
պահլաւերէն եւ յունարէն: Ասոնցմէ առաջին  
երկուքը աջէն ձախ կը գրուէին, յունարէնը  
միայն ձախէն աջ էր: Ենթադրելով թէ երկու

լեզուի գործածութիւնը միասին՝ աւելի շատ պիտի բլար քան միայն յունարէնինը, հաւատարմով նոյնպէս պատմիչներու խօսքին, որ կը ցուցնեն թէ ասորերէնը շատ աւելի տարածուած էր Հայաստանի մէջ քան յունարէնը, կրնանք հետեւցնել որ Հայերը աւելի վարժած էին աջէն ձախ գրութեան, քան թէ ձախէն աջէն։ Սակայն Մեսրոբ չհետեւեցաւ այս ձեւին, թողուց աւելի տարածուած գրութիւնը եւ յունարէն գրութեան ոճը ընդունեցաւ։

Պատմիչները հայերէն գրութեան ուղղուածեան վրայ բան մը չեն ըսեր, ոչ ալ նորքնիչներէն որեւիցէ մէկը ասոր վրայ խնդիր հանած է։ Բայց դարաւոր գործածութիւնը կը ցուցնէ որ ուրիշ տեսակ ալ եղած չէ։

Ջուր կասկած մըն է միայն այն որ Ի. Յարութիւնեան (Հայոց գիրը, էջ 310), կը յայտնէ, որ իբր թէ «մեր նախնիքը պահած լինէին սեփական գրի ուղիղ ձեւերն եւ գրելու ուղղութիւնը մինչեւ սուրբ Մեսրոպ», եւ կը սպասէ որ նախաքրիստոնէական արձանագրութիւն մը գտնուելով՝ դրականապէս ցոյց տար թէ հին հայերը կը գրէին աջէն ձախ։ Մենք որ նախա-մեսրոբեան գրականութեան մը գոյութեան մասին ամենեւին հաւատք չունինք, բնական է որ չենք կրնար ընդունիլ նաեւ այսպիսի անհիմն թագրութիւններ։

13. Գրութեան ուղղութեան իբրեւ բնական հետեւութիւն՝ կայ նաեւ գրերու ուղղութիւնը։

Երբ առնուիք օրինակի համար երկու հայերէն տառ՝ Ա եւ Յ, եւ ասոնց դիրքն ու գրութեան ձեւը համեմատենք իրարու հետ, կը տեսնենք որ Ա-ը իր երեսը դարձուցած է դէպի աջ, իսկ Յ՝ դէպի ձախ. Ա գրելու ժամանակ՝ գրիչը ձախէն դէպի աջ կը շարժենք, իսկ Յ գրելու ժամանակ՝ աջէն դէպի ձախ: Ասիկա կը կոչուի գրերու ~~աջ-ի-դի-ւ-ն կամ յ-ի-ի-դի-ւ-ն~~ ~~աջ-ի-ւ-ն~~:

Փիւնիկներէն այբուբենը՝ որ աշխարհիս հնագոյն տառական այբուբենն է, առհասարակ կը հետեւի ձախակողմեան ուղղութեան, այսպէս օրինակ՝ *Գ Բ, Դ Գ, Յ Ե, Զ Կ, Շ Ը* եւն եւն գարձած են դէպի ձախ: Յոյները փիւնիկեցիներէն փոխ առնլով այբուբենը՝ գրերուն առին աջակողմեան ուղղութիւն. այսպէս՝ վերոյիշեալ գրերը յունարէնի մէջ եղան Β, Γ, Ε, Κ, Ρ եւն: Ասկէ ժառանգեցին նաեւ լատիններն ու Ռուսերը: Եւ այսօր յունարէնի ու լատիններէնի մէջ չկայ ո՛չ մի տառ՝ որ ձախակողմեան ուղղութիւն ունենայ:

Միւս այբուբեններէն ասորին, երբայեցին ու պահլաւը կը հետեւին փիւնիկներէնին եւ ունին ամէնն ալ ձախակողմեան ուղղութիւն:

Հայերէն այբուբենը կը ներկայացնէ երեք ձեւ.

—) Աջակողմեան ուղղութեամբ գրեր. Ա, Բ, Ե, Է, Ը, Թ, Ի, Լ, Խ, Կ, Հ, Մ, Ն, Շ, Ռ, Ր եւ Ք.



Այս բոլորէն կը հետեւի որ այբուբենի մը աջակողմեան կամ ձախակողմեան ուղղութիւնը՝ ընդհանրապէս պէտք է հասկնալ, եւ թէ ձախակողմեան ուղղութեան հետեւող այբուբեններու մէջ ալ կան աջակողմեան տառեր: Ս. Մեսրոբ այս մասին կամ առանձին մտադրութիւն մը ունեցած չէ, եւ կամ եթէ ունեցած է՝ առաւելութիւնը աջակողմեան այբուբեններուն տուած է: Իւրաքանչիւր գրին մանրամասնութիւնը կը տեսնենք վարը՝ գրերու ձեւական համեմատութեան մէջ:

Ինչ որ ըսինք հայերէնի համար, նոյնը հասկնալու է նաեւ վրացերէնի համար: Հոս ալ ունինք՝

ա) Աջակողմեան գրեր. **Է** **ա**, **Ն** **զ**, **Բ** **հ**, **Դ** **թ**, **Ի** **ի**, **Կ** **կ**, **Կ** **ն**, **Օ** **ո**, **Ս** **ս**, **Բ** **ա**, **Ի** **չ**, **Գ** **ց**, **Բ** **ծ**, **Մ** **ժ**, **Է** **խ**, **Ժ** **հ**:

բ) Ձախակողմեան գրեր. **Վ** **բ**, **Մ** **գ**, **Պ** **ե**, **Ի** **վ**, **Դ** **լ**, **Ժ** **մ**, **Շ** **հ**, **Վ** **յ**, **Ժ** **ր**, **Վ** **ւ**, **Վ** **շ**, **Ս** **շ**, **Ժ** **ռ**, **Ք** **ը**, **Դ** **հ**:

գ) Միջին դիրքով գրեր. **Օ** **դ**, **Փ** **դ**, **Փ** **թ**, **Ո** **լ**, **Կ** **խ**:

Մեծամասնութիւնը աջակողմեան ուղղութեամբ է:

14. Լսած եմ թէ Շամախիի մէջ եկեղեցւոյ մը աւերակները փորելու ժամանակ գտնուեր է հայերէն արձանագրութիւն մը:

որուն գրութիւնը աջէն ձախ էր եւ գրերը հակառակ կողմը դարձած: (Այս դիրքին ճիշտ պատկերը ունենալու համար կարելի է թուղթի մը վրայի գրութիւնը թուղթին ետեւի կողմէն կամ հայելիի մը մէջ ցուցնելով դիտել):

Այսպիսի արձանագրութիւն մը ուրիշ տեղ տեսնուած չէ: Միայն Սեւանի մէջ խաչքարի մը վրայ կայ շրջուած արձանագրութիւն մը, որ վերինը կը յիշեցնէ: Այս արձանագրութիւնը 1826 թուին օրինակեր է Այսիվալտ գերմանացին, որմէ առնելով Ալիշան, Սիսական, էջ 79, կը հրատարակէ նմանատպութեամբ:

Ընթերցողները այլալեզու գրութիւն մը կարծած են անշուշտ: Բայց Ալիշան սրամիտ կերպով կը լուծէ հանելուկը եւ տառերը գլխիվայր շրջելով կը վերածէ՝

#### ԳԵՐՁԿՊՏՔԻՆՆԵՐ

որ եւ կը կարդայ (առաջին երեք գրերէն յետոյ)՝

Ձկարաղես քաջանայ ՅԱՂԹԻՍ աղաչեմ<sup>1</sup>

Սակայն թէ՛ այս եւ թէ՛ նախորդը ծածկագրութեանց ոճին պատկանող գրութիւններ են եւ շատ մասնաւոր դիպուածներ: Արձանագրողը այսպէս ըրած է անոր համար՝ որ յետին

<sup>1</sup> Ըստ իս պէտք է կարգւել յիշեի: որովհետեւ Վարդան հայր-կան է: Առաջին երեք գրերն ալ թերեւս ըլլան թուականը, որմէ պարզ է փայն վերջին Բ — 2 թիւը:

խարգախողներ գրուածքէն բան մը չհասկնալով  
անուներ կամ յիշատակը չընջեն:

Նման բան մը կը գտնենք նաեւ Սկեւռայ  
վանուց “Հանգիստ նշխարաց սրբոց” կոչուած  
մասնատուփին վրայի արձանագրութեան մէջ  
(տես Ալիշանի Սիսուանը, էջ 107—112), ուր  
Հեթում թագաւորի պատկերին քով, իբրեւ  
անոր բերնէն բխած՝ կը կարգանք հետեւեալ  
տողերը. ԲԱՐԵՒԱԻՍԵԱՅ ՄԱՅՐ ԱՅ ԱՆՃԱՌ  
ԾՆԵԼՈՅՆ Ի ՔԵՆ ՈՐԴՈ ՎԱՍՆ ԿԱՄԱՅ ԻՒՐ  
ՀԱՇՏԵԼՈ՞. ԸՆԴ ԾԱՌԱՒՍ ԻՒՐՈՅ ՀԵԹՄՈ՞.  
Ասոր մէջ “բարեխաւսե” բառին թէ՛ գրու-  
թիւնը եւ թէ՛ գրերը ձախակողմեան ուղղու-  
թեան կը հետեւին, այսինքն աջէն ձախ է  
գրուած եւ տառերն ալ շրջուած՝ դէպի ձախ  
դարձած են: Ասիկա գրողին կամ փորա-  
գրիչին մէկ մասնաւոր քմահաճոյքին արգիւնքն  
է եւ գործ չունի հասարակաց գործածու-  
թեան հետ:

Դ. Գրեր— յեւ է— նշան շ— ք— յը:

15. Մեր պատմագիրներու տոռած տեղեկութիւն-  
ները մնայորենամ գրելու առի ծագման մասին.  
16. Նոր քննիչներու կարծիքները. 17. Ասոնց քննա-  
դատութիւնը. որ պարտաւորեմներէն կրնար Մնայոր  
օգտուած ըլլալ. 18. Հայերէն 36 գրերու մանրա-  
ւումն համեմատութիւնը օտար պարտաւորեմներու  
հետ. 19. Եզրակացութիւն եւ ամփոփում:

15. Գրերու ուսումնասիրութեան մէջ  
ամէնէն գլխաւոր խնդիրը գրերու ձեւն է:

Ինչպէս հնարեց Մեսրոպ հայերէն 36 գրեթէ պատկերը, իրմէ՞ հնարեց բոլորը, թէ ուրիշ այբուբեններու օրինակով կազմեց զանոնք, եւ յատկապէս ո՞ր գիրը ո՞ր այբուբենէն:

Մեր պատմիչներուն մէջ այս առթիւ վստահելի տեղեկութիւն մը չենք գտներ: Կան քանի մը ակնարկութիւններ, բայց ասոնք կամ անստոյգ են եւ կամ ուրիշ բան կ'ակնարկեն: Ահա ինչ որ կը գտնեմ պատմիչներուն մէջ այս մասին:

«Երանելին Մաշտոց հանգիպեցուցանէր զհայերէն աթութայսն ըստ կարգման սիւով-րայիցն Յունաց, ստէպ հարցմամբ եւ ուսանելով ի սուրբ կաթողիկոսէն Սահակայ զաթու-թայիցն գաղափար, ըստ անսայթաքութեան յունին... Կարգեալ այնուհետեւ, փրկչին առաջնորդութեամբ, զգիր գրենոյն հայերէնի եւ հելլենացին ուղղեալ յօրինուածս... (Փարպ. 1904, 16): Եստեղծ զնշանագիրս մեր հանգերձ Հռոփանոսիւ, կերպաձեւեալ զգիրն Մեսրոպայ առձեռն պատրաստ փոխադրելով զհայերէն աթութայսն ըստ անսայթաքութեան սիւղաբայից հելլենացւոց (Խոր. Գ. ծգ): Ասոր հետ նոյն է Փգըր Կորիւն էջ 11. «Փոխադրելով ըստ հայերէն ըստ անսայթաքութեան սիղորայից հելլենացւոց:» — «Եւ առեալ եստեղծն զնշանագիրսն մերոյ լեզուիս՝ հանգերձ Ռուփինոսիւ իմաստասիրաւն: Եւ նախ յղեցին զհում գիրն ի հայերէն այբուբենսն եւ ապա զթերին լցին աս-

տուածատուր շնորհօքն, (Յայսմ. տրէ 17 = Նոյ. 25):

Խորենացւոյն եւ Փօքր Կորիւնին ըսածը այն է թէ հայերէն գրերը յունարէնի ոճով էին ոչ թէ ձեւի կողմէ, այլ ընթերցանութեան: Ասորերէնի եւ պահլաւերէնի մէջ՝ ինչպէս գիտենք, ձայնաւորներ չգործածուելով՝ ուղիղ (անսայթաք) ընթերցանութիւն կարելի չէ, բայց յունարէնի մէջ այսպէս չէ, որովհետեւ ձայնաւորներ գործածելու սովորութիւնը կայ: Մեսրոբ մեր գրերուն մէջ ընդունեցաւ յունական դրութիւնը, ձայնաւորները նշանակեց, որով ընթերցանութիւնը եղաւ ուղիղ (անսայթաք):

Փարպեցւոյն գրածը աւելի մութ է. հոս կայ ակնարկութիւն գրերու շարքի մասին (ըստ Կաթողիկոսի սիլովբայիցն Յունաց), ձայնաւորները գրելու դրութեան մասին (ըստ անսայթաքութեան Յունին), բայց թէ արդեօք «նոնայիցն Գաղաթաւ եւ Բելլենացի ուղիւ յորինած» յատկապէս գրերուն նիւթական ձեւը կ'ակնարկեն, յայտնի չէ:

Հոս տեղն է յիշել Մարքուարդի մէկ նոր մեկնութիւնը (ՀԱ 1912, 200), որով Փարպեցւոյն «նոնայիցն» բառը կը հասկնայ գրերու անջատողական դրութիւն: Ասիկա նոր իմաստ մ'է, որ անծանօթ է թէ հին պատմիչներուն եւ թէ մեր նոր հայկաբաններուն: Ասոնք բոլորն ալ «նոնայիցն» բառով հասկցած են «ուղիղ ընթերցանութիւն», ակնարկելով ձայնաւորները

գրելու գրութիւնը: Ասոր համար է որ հին պատմիչներէն ոմանք յատկապէս կը յիշեն եօթը ձայնաւորներու յաւելումը, որով մեռեալ տառերը շունչ առին: Արդէն բառին կազմութիւնն ալ ուրիշ բան չի կրնար ցուցնել: Առանց սայթաքելու, առանց սահելու, առանց ~~է-է-է-~~ ըսելով՝ ուղիղ ընթերցանութիւն կրնայ հասկըցուիլ: Ասիկա կը հաստատեն նաեւ բառին գործածութեան հանգամանքները: Խոր. Գ. ծգ կը գրէ. «Փոխադրելով զհայերէն արեւմտայն ըստ անսայթաքութեան սիւղաբայից հեւնացուոց», Սիւլ-է-յ յն. συλλαβή «վանկ» բառն է եւ «գիր» չի նշանակեր. հմմտ. նաեւ Կոր. էջ 10. «Եւ անդ վաղվաղակի նշանակեալ, անուանեալ եւ կարգեալ, յօրինէր սիղորայիք եւ կապօք, ուր իւր բառին յարադրութիւնը կը ցուցնէ թէ իւր-իւր ունի «վանկ» նշանակութիւնը: Արդ՝ երբ կ'ըսուի «վանկերու անսայթաքութիւն», բնական է թէ կը հասկցուի «ուղիղ ընթերցանութիւն» անջատական գրութիւն նշանակելու համար՝ գոնէ պէտք է ըսուէր «~~է-է-է-~~ անսայթաքութիւն»: Փարպեցին՝ որ կը գործածէ ~~այլ-է-է-~~ ձեւը, քիչ մը անդին իր միտքը կը բացատրէ ուրիշ բառով մը՝ որով ամէն բան կը պարզուի: «Սահակայ գիւրահնար ճանապարհ ցուցանելով կարգադրութեան գրենոցս եւ հեգենային ~~այլ-է-է-~~ գրեթէ թարգմանութիւնն է «ըստ կարգման սիլովբայիցն յուսաց, ստեպ հարցմամբ եւ ուսանելով ի սուրբ կաթողիկոսէն Սահակայ զարեւմտայիցն գաղա-

փար, ըստ անսայթաքութեան յունին, հասուածին: Ուղլը-յն--իւն բառը այլ եւս տարակոյս չի թողուր որ խնդիրը գրեթե հնչման եւ ոչ թէ ձեւի մասին է:

Մարքուարդ իր տուած իմաստը հաստատելու համար օգնական կ'առնու նաեւ փարպեցւոյն մէկ ուրիշ խօսքը. «Մէք որ կամքս առաջիք, հանգերձ երանելեալն Մաշթոցիւ, զոր զարթոյց աստուածայինն շնորհ ի ցանկութիւնս այս՝ կարգել զվաղնջուցն գրեալ շէ-թէ- տառիցն, զորս ոչ ուրուք էր հոգացեալ արկանել ի կիր»։ Շէ-թէ բառը Մարքուարդ կը հասկնայ «իրարու կցուած գիր», Բայց ասիկա բոլորովին անյարմար է եւ մինչեւ անգամ Մարքուարդի ուզածին հակառակը կ'ապացուցանէ: Ղազար կ'ըսէ թէ «Հին շէ-թէ տառերը ամենեւին մէկը գործածած չէր, եւ միայն Մեսրոբ գործածեց», ըսել է թէ Մեսրոբեան գիրը նոյն է հին «շարագիր տառից», հետ, եւ որովհետեւ Մեսրոբեան գիրը կցողական չէ, ուստի հին «շարագիր տառերն» ալ կցողական չեն: Ասկէ զատ շարել եւ կցել նոյն բանը չեն. շէ-թէ տառից կրնայ նշանակել միայն «գրեթե շարք, իրարու քով շարուած գիրեր, շարագրութիւն» եւ ոչ թէ «կցուած գրեր», Վերջապէս տառից սեռականը չի թողուր որ շէ-թէ բառը իբր

1 Մարքուարդ իր տուած այս նշանակութեան վրայ հոյս հիմնուելով՝ եղբայրացուցած է թէ Դանիէլեան գիրը կցողական գրութեան կը հետեւէր, զոր Մեսրոբ վերածած է անջատականի:



ա) Շրէօտեր, Thesaurus ling. arm. I, էջ 33 կը դնէ յունարէնէ:

բ) Չամչեան ընդունելով որ մեր բոլոր գրերը Ս. Մեսրոպի հնարածն են, առանց բացարձեան կ'ընդունի նաեւ որ Մեսրոպ այդ գրերու յօրինման մէջ ուրիշ այբուբենէ մը ազդուած չէ:

գ) S. Wahl, Allgemeine Geschichte der morgenländischen Sprachen und Literatur, էջ 613, մասամբ յունականն եւ մասամբ Պարսից ու Ասորաց այբուբենէն:

դ) Gatterer, Abriß der Diplomatik, էջ 46, կը դնէ յոյնէն:

ե) Fr. Kopp, Bilder und Schriften der Vorzeit, 1819, II, էջ 361—367 ծաղրելի կը գտնէ հայկական այբուբենը յունականն հանել եւ կը դնէ պահլավերէնէ, քանի մը առաւ խպտական ու եթովպական այբուբենէ:

զ) Ռոմմէլ, Allgemeine Enzykl. der Wiss. und Künste von Ersch und Gruber, Ապրիլի 1820, հատ. V, էջ 360, կը դնէ յունականէն:

է) Սէն-Մարթէն, Hist. du Bas-Empire, V, էջ 322, 323, ծան. 1, Դանիէլեան գրերը

---

են նաեւ քանի մը ուրիշ հեղինակներու կարծիքները, բայց առոնք այնքան աննշան բաներ են, որ մինչեւ անգամ ա.ե. լորդ Է յիշատակել:

յունականին նման կը գտնէ, իսկ Մեսորոթաւելցուցած նոր գրերը զենդ ու պահլաւ գրերուն կը նմանցնէ:

բ) Klaproth, Aperçu de l'origine des diverses écritures de l'ancien monde, Paris 1832 (արտատպուած Courtinի Encyclopédie moderneէն), էջ 69, հայ գիրը կը համարի Դանիէլեանէն, ճոխացած նոր յաւելումներով, յաւկապէս 6 եւ 5 խպտերէնէ:

ը) Ինճիճեան, Հնախ. Գ. 77 ծան. չ'ընդունիր որ Մեսորոթ յոյն գրերու ձեւն օրինական ըլլայ, որովհետեւ այս պարագային տեսիլքի պէտք էր մնար, կ'ըսէ, իսկ էջ 74՝ ձայնաւորները յունարէնէ կը դնէ:

ճ) E. Boré, IAs. Paris 1836, էջ 214, ծան. 1, զենդ ու ասորի այբուբենէն:

Մ) Վինսիշման, Die Grundlage der Arm. էջ 5—16, 24 կը դնէ յունարէնէ եւ ասորերէնէ:

Ժբ) Büttner, Vergleichungstafeln der Schriftarten verschiedener Völker, I, էջ 8 եւ II, էջ 25—26 հին պարսկերէնէ:

Ժգ) Լեպսիուս, Standard Alphabet, էջ 133, յունարէնէ:

Ժդ) Իֆին (Изсл. и Статьи, Угосл. 1896, էջ 222) կը մերժէ որեւէ նմանութիւն հայ եւ զանդիկ գրերու մէջ, որովհետեւ նախ տառաձեւերու նմանութիւն չկայ, երկրորդ՝ զանդկե-

րէն գրեցու թիւը մերինէն տարրեր է, երբորդ՝ զանդկերէնը շատ աւելի հարուստ է ձայնաւորներու կողմէն քան հայերէնը: Յաւնարէն այբուբենի համար ալ «գրեթէ նոյն բանն է», կ'ըսէ Էփն, ասով ծագումն անորոշ կը թողու:

ԺԵ) Պատկանեան (Recherches sur la form. de la langue Arm. 148, 149, 151) կը համարի մէյ մը արամեական, մէյ մ'ալ իրանական ծագումէ:

ԺԶ) Միւլէր, Über den Ursprung der arm. Schrift, **SWAW** 48, 438, կը ղնէ արամեական այն այբուբենէն՝ որմէ ձեւացած է նաեւ պահլավական այբուբենը: Գրեթէ նոյն բաները կը կրկնէ նաեւ **WZKM** 1888, էջ 245—248 (Թրգմ. ՀԱ 1889, 86—87), ուր կ'աւելցնէ թէ եօթը ձայնաւորները յունականն են: Երբորդ յօդուածի մը մէջ (**WZKM** 1890, էջ 284—288, Թրգմ. ՀԱ 1891, 68—70) հայերէնի 22 Գանիէլեան տառերը կը ղնէ ծագած ասորական այբուբենէ մը, յաակապէս պալմիրական գրէն, որուն վըայ Մեսրոբ աւելցուց 7 բաղաձայն (որ ազգէն) եւ 7 ձայնաւոր՝ որ ամբողջապէս փոխ առաւ զենդական այբուբենէն (**WZKM** 1894, 150—160, Թրգմ. ՀԱ 1894, էջ 244—246 եւ Մուրճ 1894, էջ 1089—1092):

ԺԷ) Lagard, Gesammelte Abh. 1866, յռջ. էջ Թ—Ժ, հայերէն այբուբենի հիմը կը ղնէ յունականէն, միայն 4 կամ 6 գիր խաւականէն: Նոյն հեղինակը (Gelehrte Anzeigen,

Göttingen 1883, էջ 281) քիչ մը աւելի պարզելով իր միաբը՝ 19 գիր կը դնէ հին այբուբենէն, 3 գիր յունարէնէ, 4 գիր (ֆ, լ, յ, շ) խաթիներէն, երկու գիր (յ, շ) արամեականէն, իսկ եօթը գիր անյայտ: Մոռցած է հաշուել 2 գիրը:

ԺԸ) Լանկուա, Kollekt. II, 7, կը դնէ ասորականէն:

ԺԹ) Dulaurier, IAs. 1870, էջ 149, ծան. 1, արամեականէն:

Ի) Լընուան, Essai sur la propagation de l'Alphabet phénicien I, էջ 192, հայերէն այբուբենը ծագած կը դնէ զենգականէն:

ԻԱ) Ֆաուլման, Illustrierte Geschichte der Schrift, էջ 499—500 Թէ հայոց եւ Թէ վրաց այբուբենը կը համարի այն ժամանակ գործածուած հմայական հին նշաններէ:

ԻԲ) Հիւպշման, Über Aussprache und Umschreibung des Altarm. ZDMG 1876, 64՝ յունականէն կը դնէ:

ԻԳ) Gardthausen, ZDMG, 1876, 74—80, շարունակելով Հիւպշմանի գործը, մի առ մի կը համեմատէ հայ գրերը յունականին հետ եւ կը հաստատէ որ մեր գրերը յունական ծագում ունին:

ԻԴ) Թէյլըր՝ իր նշանաւոր գործին մէջ (The Alphabet, London 1883, հա. II, էջ 268) հայ այբուբենը կը դնէ իրանեան-սեմական այբուբենէն անանցուած:

ի) Սարգիսեան, Բազմ. 1889, էջ 34—35, կը ցուցնէ որ հայերէն այբուբենը կազմուած է պարսիկ, յոյն եւ ասորի այբուբեններու խառնուրդով (22 գիր յունարէնէ, 12 գիր պարսկերէնէ եւ զանգերէնէ, 2 գիր ասորերէնէ): Մեսրոբ մեր գրերը ձեւած ժամանակ փիւնիկ եւ զանգիկ գրերն «իրրեւ նախաարիւ օրինակ» իր առջին ունեցած է:

իւ) Աղայեան, Մուրճ 1890, էջ 1587, Դանիէլեան գիրը կը գնէ ասորապարսկական ծագումէ, իսկ յաւելեալ եսթը գրերը Մեսրոբէն հնարուած: Հայ այբուբենը յունական ծագում չունի:

իէ) Ի. Յարութիւնեան (Հայոց գիրը, էջ 309—314) կը գտնէ որ հայերէն այբուբենէն 22 գիր ծագած է փիւնիկեան այբուբենէն (էջ 309) կամ ուղղակի եւ կամ Արամայեցոց միջնորդութեամբ (էջ 312), որուն վրայ Մեսրոբ աւելցուցեր է 2 գիր յունարէնէ առնելով եւ 12 գիր իրմէ հնարելով՝ փիւնիկեան առներու ոճով: Էջ 309 կ'ըսէ թէ հայերէն գրերը 60 տեսակ յունարէն այբուբենի հետ համեմատեր է եւ ոչ մէկ նմանութիւն չէ գտնուիր:

իւ) Տաշեան, ՀԱ 1893, էջ 91բ, կ'ընդունի որ հայ գրերը կազմուած են յունարէնի վրայ, որուն ապացոյց են գրերու նմանութիւնը, շարքը, թուական արժէքը, — գրելու ձեւը, — յ տառին կնճռոտ գործածութիւնը: Պատուական յօդուած մ'է ասիկա, որուն մէջ

յայտնուած կարծիքներուն գրեթէ լիովին համաձայն ենք:

է՛) Մալխասեան՝ Յարութիւնեան գըքին քննադատականին մէջ (Յարազ 1893, թ. 1—5<sup>1</sup>) այն կարծիքը կը յայտնէ որ Մեսրոպ մեր գրերը Ասորիքի մէջ հնարելով՝ ազգուած ըլլայ ասորականէն. բայց յետոյ Հռուփանոս զանոնք գարձուց յունականի (տես անդ, էջ 42բ եւ 72բ): Այսօրուան մեր այբուրենը նման է յունականին: Երեւոյնք կը գանէ Յարու-

1 Նոր միայն ձեռքս անցաւ Ս. Մալխասեանի պատգամը: Առաջը գաղափարներով լի պատուական յարուած մ'է. այնքան որ կը դադարեցնէ անոր քննադատական համար: Իր գաղափարները նոյն են մերինին հետ. յառկապէս ինչ որ ըսինք Գլխի Գ., Դանիէլեան գրերու մասին: Հեղինակն ալ հակառակ է նախաւոր հայ գրականութեան մը գնահատեան. որուն համար երկու երեւելի ազդեցիկ ալ ունի, որ պէտք է աւելցնել վերջը՝ յիշուածներուն մէջ. Եթէ հին հայ գրականութիւն մը կար, ինչու համար էին ուրեք խորհրդացոյն այն գաւազանգամները թէ հին հայերը ազեւ, անուանաւոր ու վայրենի մարդիկ էին, որ ոչ միայն իրենց յատուկ գիրը չունէին, այլ եւ չէին ուզէր օգտուիլ յոյն ու պարսկերէնէն: (Եւ ալ կ'աւելցնեմ՝ մանաւանդ այն խորհրդին, որուն խօսքերուն վրայ իրր թէ հիմնուելով կ'եզրակացնեն քննիչները թէ հին հայ գիր ու գրականութիւն կար): Եթէ հին հայ գիր ու գրականութեան ընդման իբր պատճառ կը բերուի քրիստոնէութիւնը, ընդհակառակը մենք կը տեսնենք որ Մեսրոպի ժամանակ դեռ հեթանոսութիւնը կենդանի է Հայաստանի զանազան գաւառներուն մէջ, եւ եթէ հին հայ գիր ու գրականութիւն կար, ասոնց մէջ գտնէ պահուած պիտի ըլլար, մանաւանդ որ միայն 100 տարի անցեր էր լուսաւորչին յետոյ, եւ այն ասէն Մեսրոպ պէտք լուրի ունենար Միջագետքի եւ Ասորիքի մէջ փնտաւելու հին հայկական գիրը:

թիւնեանի համեմատութիւնները սեմականներուն հետ: Ասկէ քիչ մը ասորեր է Դասընթաց Հայ. մատ. պատմ. (թիֆլիս 1899, վիմատիպ), ուր նախ կը դրուի ասորական ազդեցութեամբ (էջ 49), իսկ յետոյ յունական, ասորական եւ զենգական ծագումէ (էջ 52):

Լ) Տաղաւարեան (Ծագումն հայ առօրից, էջ 24 եւ 32—33) Յարութիւնեանի նման մեր գրերը ծագած կը դնէ փիւնիկերէնէ. միայն 7 գիր զանդիկ-պարսկականէն, մէկը ասորերէնէ, մէկը յունարէնէ, իսկ հինգը ածանցուած նոյն փիւնիկեան տառերու ոճով:

Ը) Գարագաշեան (Քնն. պատմ. Դ. 39) 7 ձայնաւորները կը դնէ յունարէնէ, իսկ բաղաձայնները սեմականէն, որոնք առաջ թերեւս աջէն ձախ կը գրուէին: Յետոյ ալ կ'ըսէ թէ Մեսրոբեան գրերը շինուած են յունարէնի ոճով, մէջը խառնելով նաեւ Դանիէլեան (սեմական) գրերը, որոնցմէ յաակապէս կը յիշէ լ եւ ի:

Թ) Ս. Ա. Պարոնեան (ՀԱ 1896, էջ 74բ, 75բ) ծագումը կը դնէ արեւելեան (այն է սեմական կամ պահլաական), իսկ յաւելեալ գրերը բուն իսկ Մեսրոբէն, որովհետեւ «յայնժամ դրացի ազգք չունէին հայկականին յաակացեալ հնչմանց համապատասխանող տառեր որ տային Հայոյն»:

Ժ) Հ. Գ. Մէնէվիշեան (ՀԱ 1896, էջ 213—217) 25 գիր կը դնէ յունարէնէ, իսկ մնացեալ 11ը պարսկերէնէ, ասորերէնէ

կամ Մեսրոբի մօտոյ ճարտարութեամբ հնա-  
րուած :

ւ) Պասմաճեան (Բազմ. 1898, էջ 534)  
հայերէն այբուբենը կը հանէ հին պարսկական  
բեւեռագիրներէն: Առանձին ցուցակի մը մէջ կը  
համեմատէ հետեւեալ գրերը, սեպերը ուղիղ  
գծերու վերածելով եւ անջատ սեպերը իրարու  
միացնելով: Այսպէս՝  $\text{𐎱} = \text{Ա}$ ,  $\text{𐎲} = \text{Բ}$ ,  
 $\text{𐎳} = \text{Գ}$ ,  $\text{𐎴} = \text{Դ}$ ,  $\text{𐎵} = \text{Բ}$ ,  $\text{𐎶} = \text{Ի}$ ,  
 $\text{𐎷} = \text{Լ}$ ,  $\text{𐎸} = \text{Ն}$ ,  $\text{𐎹} = \text{Վ}$ ,  $\text{𐎺} = \text{Զ}$ ,  
 $\text{𐎻} = \text{Տ}$ ,  $\text{𐎼} = \text{Ծ}$ ,  $\text{𐎽} = \text{Պ}$ ,  $\text{𐎿} = \text{Ս}$ ,  
 $\text{𐏀} = \text{Տ}$ :

վ) Վէպէր (Die katholische Kirche in  
Armenien, 1903, էջ 395 եւն) կը կարծէ որ  
Մեսրոբ յունականէն օգտուելով եւ այս այբու-  
բենին տառերուն նմանցնելով՝ կաւարելագոր-  
ծած ու լրացուցած է Դանիէլեան այբուբենը:

ւշ) Գ. Փառնակ (Անահիտ 1905, էջ  
129—130) Դանիէլեան գիրը կը դնէ հին  
(արշակունեան) պահլաւերէնէ (բայց իր բերած  
օրինակներէն շատը սասանեան պահլաւերէնէն  
է), որուն վրայ Մեսրոբ աւելցուց քանի մը գիր  
յունարէնէ առնելով, քանի մը հաւա ալ իրմէ  
հնարելով: Պահլաւական ծագման իբր ապա-  
ցոյց կը դնէ Փարպեցւոյն «ըստ ուղղաձայնու-  
թեան, ըստ անսայթաքութեան յունին» բա-

ները, որով կը կարծէ թէ կ'անարկուի պահ-  
լաւերէն գրերու բազմատեսակ ընթերցումը.  
ինչպէս՝ 1 = 1 եւ 2. 3 = 4 եւ 5 եւն.

է) Մարքուարդի ՀԱ 1912, էջ 658—  
666 մէջ բերած համեմատութիւններէն կը  
տեսնուի որ մեր այսօրուան 36 գրերէն 15ը  
պահլաւ են, 7ը յոյն, 6ը ասորական այբուբեն-  
ներէ (ասորի, եսթրանկէլօ, արամական), 5ը  
Մեսորոսի Ննարածը, երեքն ալ անձանթ:

Ահա ասոնք են նոր քննիչներուն կարծիք-  
ները, որ եթէ միասին ամփոփենք, կը տեսնենք  
որ հայ գրերու ծագումը՝ ամբողջապէս կամ  
մասամբ՝ կը գրուի անկախ կամ հին հայական  
նշաններէ եւ կամ հին պարսիկ բեւեռագիր-  
ներէ, հին (քաղգէական) կամ նոր (սասանեան)  
պահլաւերէնէ, զանդկերէնէ, նոր պարսկերէնէ,  
փիւնիկերէնէ, պալմիրականէն, արամերէնէ,  
եսթրանկէլօ գրէն, ասորերէնէ, խպտերէնէ,  
եթովպացերէնէ կամ յունարէնէ:

17. Անմիջապէս ըսենք որ այբուբեններու  
յիշեալ ճոխ շարքին մէջ կան քանի մը հատ՝  
որ ի սպառ գործ չունին մեզի հետ եւ չեն կրնար  
Մեսորոսեան գրերուն իբրեւ ազգիւր ծառայած  
ըլլալ:

Ասոնց մէջ առաջին տեղը կը բռնէ հին  
պարսկական բեւեռագրութիւնը, որմէ հանել  
կ'ուզէ Պասմաճեան մեր հայերէն գրերը: Պարս-  
կական բեւեռագրերը, ինչպէս յայանի է, գոր-  
ծածական էին Աքեմենեան աէրութեան ժամա-  
նակ, Քրիստոսէ երեք դար առաջ (330 թուին)

Դարեհ Գ. ի մահով՝ Աբեմենեան տերութիւնը վերջացաւ եւ Պարսկաստանը ինկաւ Մակեդոնական իշխանութեան տակ։ Անոր հետ վերջացաւ նաեւ բելետագիրներու գործածութիւնը։ Եւ այն ժամանակ՝ երբ Ս. Մեսրոպ հայերէն գրերը կը հնարէր, սեպագրերը, ինչպէս կը նկատէ Միւլլեր (Բազմ. 1898, էջ 534—535), արգէն 800 տարիէ ի վեր գործածութենէ ինկած եւ մոռցուած էին։ Ապահովապէս այն դարուն չկար մէկը՝ որ անոնց արժէքը գիտնար։ Ինչպէս կրնար ուրեմն Մեսրոպ այս գրերը իրեն օրինակ առնել։ Հայերէն եւ բելետագիր այբուբենին մէջ եղած քանի մը գրերու նմանութիւնը (ինչպէս են —, ու եւն) բոլորովին պատահական է, իսկ մնացեալը բռնի։ Ինչպէս անձնական տեղեկութեամբ գիտենք, Պասմաճեան ալ արգէն հիմայ իր այս կարծիքէն բոլորովին հրաժարած է։

Երկրորդ աեղը կը բռնէ նոր պարսկերէնը, որուն հետ կը համեմատեն Սարգիսեան եւ Ցաղաւարեան քանի մը հայերէն գրեր։ Պարսկերէն կոչումը խաբած է զանոնք եւ կարծել տուած է որ այս գիրը պարսկական մտքի արդիւնք է եւ հին։ Բայց իրօք նոր պարսկերէն կոչումը սխալ բացատրութիւն մըն է եւ այդ անունով կոչուած գիրը ամենեւին կապ չունի Պարսկաստանի հետ։ Նա պարզապէս արաբական գիրն է. եւ այնչափ միայն պարսիկ է, որչափ որ է թուրք, աֆղան, հինաուսթանի, մալայեցի, սարթ, թաթար, թիւրքմէն, քումուք, մուլ-

Թանի, սինահի, քաշմիրի, սվահիլի կամ պեր-  
պեր: Այս բոլոր ազգերն ու լեզուները փոխ  
առած են միեւնոյն արաբական գիրը, որուն վրայ  
երբեմն աննշան յաւելումներ ըրած են: Այսպէս  
պարսիկները աւելցուցած են پ, ڤ, چ, څ, ژ, ځ, گ  
գրերը, որոնք գոյութիւն չունին արաբերէնի  
մէջ: Արաբական գիրը իր ձեւաւորումն ստացած  
է Մահմետի ժամանակ եւ անկէ առաջ Արա-  
բիայէն գուրս ելած չէ: Է գարուն միայն, իր  
մահմետական Արաբները գուրս ելան Արաբիայէն  
եւ իրենց աշխարհակալութեան հետ տարածել  
սկսան իրենց կրօնն ու գպրութիւնը, այս գրերն  
ալ այն ժամանակ սկսան կամաց կամաց մոռա-  
գործել նուաճուած եւ մահմետականացած ազ-  
գերուն մէջ: Այս ժամանակ է որ պարսիկներն  
ալ թողուցին իրենց զրադաշտական կրօնը, ոչըն-  
չացուցին իրենց հին գրքերը, մոռացութեան  
տակին պահլաւական ու զենդական գրերը, եւ  
խալամութեան հետ ընդունեցան արաբերէն  
տառերը:

Այսպէսով ուրեմն Ե գարուն նոր պարս-  
կերէն գրեր չկային դեռ եւ հետեւաբար Մես-  
րօր չէր կրնար անոնցմէ օգտուած ըլլալ:

Փիւնիկ, պալմիրական եւ արամական  
գրերը գործածուած են մինչեւ Քրիստոսի եր-  
կրորդ դարը, որմէ յետոյ անոնք տեղի տուին  
ասորական եւ յունական այբուբեններուն: Եւ  
այն ժամանակ երբ Ս. Մեսրօր կը հնարէր  
հայերէն գրերը, փիւնիկեան, պալմիրական եւ  
արամական գրերը արդէն 250 տարիէ ի վեր

գործածութենէ ելած եւ մոռացութեան մատնուած էին: Կրնա՞ր կամ պէտք ունէ՞ր Մեսրոբ այս անհետացած այբուբենները երեւան հանելու եւ անոնցմէ օգտուելու հայերէն գրերու համար, մինչ իր ձեռքին տակ պատրաստ ունէր խուժք մը այբուբեններ, որոնք իր հայրենակիցներուն ալ մասամբ կամ ամբողջովին ծանօթ էին:

Մեր կարծիքով ոչ:

Երկու ու կէս դարը մեր ժամանակ ալ մեծ շրջան մ'է. բայց Բ. դարուն, երբ գրքերը այնքան սակաւաթիւ էին, գրելու արուեստը չափազանց քիչ տարածուած, ուսումնականներու թիւը անհամեմատ կերպով սահմանափակ, ինչքան խոշոր պէտք է ըլլար այդ շրջանը, որ մոռացութեան տրուած չըլլար ամէն բան: Այն հեղինակները՝ որոնք հայերէն գրերուն կու տան փիւնիկեան, արամական կամ պալմիրական ծագում, կը հաւատան Դանիէլեան գրերու գոյութեան, որով չափազանց կը մօտենան կամ գրեթէ ժամանակակից կ'ըլլան այն գրերուն: Բայց որովհետեւ մեզի համար Դանիէլեան հայ գիր ու գրականութիւն գոյութիւն չունի, ուստի հայ գրերն ալ չեն կրնար փիւնիկեան, պալմիրական կամ արամական ծագում ունենալ:

Ամէնէն բնական ու արամաբանական բանը՝ որ կարելի է ենթադրել, եւ որ աշխարհիս բոլոր այբուբեններուն ծագման տիեզերական պատմութենէն կը հետեւի, այն է թէ Մեսրոբ օգտուած ըլլայ իր ժամանակակից եւ շրջակայ



բուրսեր ուրեմն հին չէ: Spiegel (Gramm. d. altiranischen Sprachen, էջ 11) կը համարի որ հնարուած ըլլայ է դարուն: Միւլլեր, WZKM 1891, էջ 253 կ'ուզէ ապացուցանել թէ շինուած ըլլայ Գ—Դ դարուն, որովհետեւ յունական դրերու հետ նմանութիւններ կ'ենթադրէ. որ Աշէքսանդրի աշխարհակալութեամբ Պարսից ծանօթացած կը կարծէ: Բայց իր տեսութիւնը ընդունուած չէ գիտնականներու կողմէն եւ առհասարակ զանգկերէն այբուբենը նոր դիր կը համարուի, առանց թէեւ ճիշտ ժամանակը որոշելու (Salemman, Grundriß der iranischen Philologie, I. I. Abt. III, էջ 353):

Իրանեան այբուբեններու շարքին հետ կրնանք յիշել նաեւ մանիքէական եւ սոգդիական այբուբենները՝ որոնք նոյնպէս արամական ծագում ունին եւ վերջերս միայն գտնուեցան Թուրքմանի գիտական արշաւանքի ժամանակ: Այս երկու այբուբեններուն հրատարակութիւնն ու անոնց քննութիւնը ըրաւ Մաքքուարդ, WZKM 12, էջ 158—159 եւն:

Ասորիներն ունին երկու տեսակ գրութիւն: Առաջինը՝ որ ասորիներու երկաթագիրը կրնայ համարուիլ, կը կոչուի Է-Նը-նէ-ն, երկրորդը՝ որ կրնայ անոնց բոլորգիրը համարուիլ, կը կոչուի պարզապէս Է-նէ-ն, ասորի-ն կամ լաւագոյնս Ե-նէ-ն: Առաջ կը կարծուէր ընդհանրապէս որ ասորիներու հին գրութիւնը էսթրանկէլօն է, որու գործածութիւնը սկսած է քրիստոսի Բ գարէն եւ մինչեւ հիմայ կը աւելէ, իսկ յակորի-

կեան գրութիւնը սկսած է 550 թուականէն եւ այսօրուան սովորական գրութիւնն է: Բայց նոր քննութիւնները ցուցուցին որ այս կարծիքը սխալ է. երկու գրութիւնները իրարու ժամանակակից էին, էսթրանկէլօն կը գործածուէր իրր պաշտօնական գիր՝ մեծածախ գրքերու եւ եկեղեցական մատեաններու մէջ, իսկ յակոբիկեանը առանին գործածութեան համար էր: Առաջինը հեղհեմէ տեղի տուաւ երկրորդին եւ յակոբիկեան գրութիւնը դարձաւ յետոյ գերիշխող<sup>1</sup>, Ս. Մեսրոբ իր առջեւ ունէր ուրեմ թէ էսթրանկէլօ եւ թէ յակոբիկեան գրութիւնները:

Յունարէն այբուբենը ամէնուն յայտնի է: Ասիկա կը ծագի փիւնիկեան այբուբենէն, որուն մէջ յոյները մացուցին քանի մը կարեւոր փոփոխութիւններ: Նախ՝ փիւնիկեցւոց չորս կիսաձայնները դարձուցին ձայնաւորի, որոնց վրայ աւելցուցին հինգերորդ նորահնար ձայնաւոր մը՝ Ի - : Երկրորդ՝ ջնջեցին փիւնիկեան Վ եւ Զ գրերը, որովհետեւ ասոնց համապատասխան ձայները չկային յունարէն լեզուի մէջ: Երրորդ՝ աւելցուցին ֆ եւ չ գրերը՝ որոնք չկային փիւնիկեան այբուբենին մէջ: Չորրորդ՝ փոխեցին գրերու ուղղութիւնը եւ ձախէն դարձուցին դէպի աջ: Հինգերորդ՝ զանազանելու համար շք եւ իօ գրերը՝ որոնք փիւնիկերէնի մէջ նմանաձեւ առուեր էին, փոխեցին իօա (Լ) գրին ձեւը եւ վերածեցին ուղղահայեաց գծիկի մը (I):

<sup>1</sup> ՅՄ- Յուլեան, Արհարի մը հայ հնագրութեան վրայ, էջ 89:

Ահա ասոնք են այն այբուբենները՝ որոնք Ս. Մեսրոբի ձեռքի տակ կային եւ որոնցմէ կրնար օգտուիլ Ս. Մեսրոբու քննիչներուն յիշած այբուբեններուն մէջ կան նաեւ խպտի եւ եթովպական այբուբենները, որոնցմէ ձեւացած կը համարուին հայերէն քանի մը գիր։ Այս գրերն են՝ Գ, Է, Ը, Զ, Դ, Զ, Ը, Կ։ Առաջին ութը ըստ ոմանց կը համարուին խպտիերէնէ փոխառեալ, վերջինը (Կ)՝ եթովպացիերէնէ։ Քիչ մը վարը պիտի տեսնենք որ այս համեմատութիւնները յաջող չեն եւ հետեւաբար խպտին եւ եթովպացին գործ չունին մեզի հետ։ Այսպէս կը մտածէ նաեւ Մարքուարդ, որ (ՀԱ 1912, 662) կը յայտնէ թէ Ս. Մեսրոբի ժամանակ Եգիպտոսի եւ պարսկական Միջագետքի միջեւ յարաբերութիւն չկայ։

Իր մնայ հերքել նաեւ հայերէն գրերու անկախ կամ հին հմայական նշաններէ յօրինուած ըլլալու գաղափարը. բայց ասիկա ինքնին պիտի հերքուի արգէն, երբ յաջորդ համեմատութիւններէն տեսնուի թէ հայերէն գրերը ինչ աղբիւրներէ յօրինուած են։

18. Վերոյիշեալ այբուբեններէն ոչ մէկը կրնար Ս. Մեսրոբի փափաքը ամբողջապէս լրացնել, այսինքն տալ հայերէն լեզուին հնչուածները պատկերացնող բոլոր գրերը միանգամայն։ Այս պատճառով առաջին իսկ վայրկեանին Մեսրոբ պարտաւորուած էր գիմելու քանի մը այբուբեններու, անոնցմէ ընտրութեամբ քաղելու իրեն պէտք եղած նշանները, մէկուն պակասը

միւսով լրացնելու եւ բնաւ չգտածները իր մօտէն հնարելու։ Ասկէ բնականօրէն կը հետեւի որ հայերէն գրերէն ծագած չէ կըլլայ զի ոչիւրէն չի ըլլալ եւ պէտք է զանազան ազգիւրներ են թաղորել։ Այս ազգիւրները որոշելու համար ուրիշ ապահով միջոց չկայ, բայց եթէ հայերէնի իւրաքանչիւր տառը համեմատել շրջակայ ազգերու այբուբեններուն համապատասխան տառերուն հետ եւ անոնց ձեւական նմանութենէն հանել ստոյգ եզրակացութիւնը։ Ուրիշ ամէն միջոց (պատմական յարաբերութիւններ, գրական ազդեցութիւն, փոխառեալ բառեր, կրօնական միութիւն, քաղաքական գերիշխանութիւն են) երկրորդական նշանակութիւն ունին վճռելու համար այս խնդիրը։ Այս միջոցները շատ անգամ խաբուսիկ ալ են. օրինակի համար՝ Միւլլէր (WZKM. 1894, 155—160) ապացուցանելու համար թէ Հայերը յունարէնէ գիր չառին, մէջ կը բերէ այն թղթակցութիւնը՝ որ տեղի ունեցաւ Ս. Սահակի Ժամանակ Յունաց եւ Հայոց մէջ, եւ որով Յոյները կը դասապարտէին Հայերը թէ ինչո՞ւ անոնք դիմեցին «ասորոց ոմանց» եւ Յոյներուն գիտութեանը չդիմեցին։ Բայց այս թղթակցութիւնը խորենացողն շինածն է եւ իրականութեան մէջ գոյութիւն չունի. եւ առ առաւելն Դանիէլ ասորիին դիմումը եւ Ս. Մեսրոբի Միջագետք ու Եգեպտա ճամբորդութիւնը կ'անկարկէ։

Քննիչներէն շատերը դիմած են յիշեալ երկրորդական ապացոյցներուն. քիչերն են միայն

որ կը գիմեն առաջին միջոցին. հայերէնի իւրաքանչիւր տառը համեմատելով օտար այբուբեններու այս կամ այն տառին հետ եւ անոր կրած ձեւափոխութիւնները նշանակելով:

Վերջիններուն կը պատկանին.

-) Kopp, Bilder und Schriften (1819) ունի 18 հայ գրերու համեմատական տախտակ մը. որ կ'արտաայէ Յարութիւնեան, Հայոց գիրը, էջ 288.

բ) Müller, SWAW. 48. 436—38 կուտայ հայ եւ վրացի գրերու մեծ մասին համեմատութիւնը. այս յօդուածին կցուած առանձին տախտակը հայ եւ վրացի գրերու հասարակ ցուցակն է, առանց որեւիցէ համեմատութեան: Զայնաւորներու համեմատութիւնն ունի WZKM. 1894, 155—160, թրգմ. ՀԱ. 1894, էջ 244—46: Իսկ նոյն հեղինակին Ueber den Ursprung der gruzinischen Schrift (SWAW. 137, էջ 1—12) յօդուածին մէջ կը գտնենք վրացերէն գրերու ծագման պատմութիւնը, համեմատական տախտակով:

գ) Gardthausen, ZDMG. 1876, 74—80, յաջող գաղափարն ունեցած է փոխանակ հայ գրերը արդի յունարէն տառերու հետ համեմատելու, ընտրել հին ձեռագիրներու մէջէն յունարէն տառերու հին ձեւերը եւ մի առ մի համեմատած է մեր գրերուն հետ:

դ) Սարգիսեան (Բազմ. 1889, էջ 34 եւ 35) երկու տախտակի մէջ կուտայ հայերէն.

գրերու հնագոյն ձեւերը եւ կը համեմատէ զանոնք յունարէնի հնագոյն ձեւերուն, զանգկերէնի եւ նոր պարսկերէնի հետ:

Ե) Յարութիւնեան, Հայոց գիրը, էջ 308, վիմատիպ ցուցակի մը մէջ կը շարէ հայուն դէմ փիւնիկ, արամական, պալմիրական, եբրայական, բարեղական եւ պարսկերէն գրերը մասամբ. բայց անոնց համեմատական քննութիւնը չի տար:

Զ) Մալխասեան (Տարազ 1893, էջ 72) ունի քանի մը գրերու համեմատութիւնը, բայց առանց սկզբնաձեւերը յիշելու:

Է) Տաղաւարեան, Ծագումն հայ տառից, էջ 24 ունի համագրական պարզ տախտակ մը հայ, փիւնիկ եւ յոյն գրերու:

Ը) Հ. Գ. Մէնէվիշեան (ՀԱ. 1896, էջ 215) իբր հիմ ընդունելով Gardthausen-ի տուած հին յունական ձեւերը՝ առանձին տախտակի մը մէջ կը դնէ անոնց յաջորդական ձեւափոխութիւնները՝ մինչեւ հայերէն երկաթագրին հասնիլը: Հայերէն գրերու մինչեւ այժմ եղած բոլոր համեմատական ուսումնասիրութեանց մէջ ամէնէն կատարեալն ու միակ լաւագոյնն է:

Թ) Փառնակ (Անահիտ 1905, էջ 129—130) անցողակի կը յիշէ քանի մը գրերու առանձին առանձին ծագումը, առանց սակայն օտար ձեւերը համեմատութեան առնլու (ապագրութեան դժուարութեան պատճառով):

Ժ) Մալքուարդ (ՀԱ. 1912, էջ 658—666) կու ապ 33 հայերէն գրերու համեմա-

տութիւնը իրենց համապատասխան յոյն, ասորի եւ պահլաւ ձեւերուն հետ:

Մենք ալ պիտի դիմենք տառերու ձեւական համեմատութեան ստոյգ միջոցին:

Համեմատութիւնը կատարեալ եւ ամբողջական ընելու համար կարեւոր կը համարինք նախ զնել ընդհանուր համադրական տախտակ մը, որուն մէջ իւրաքանչիւր հայերէն տառի գէմ գրուած են օտար այբուբեններու հնչմամբ համապատասխան տառերը: Համեմատուած այբուբեններն են հայերէն յետոյ կարգով՝ վըացերէն (խուցուրի եւ միսեդուլի), յունարէն (ձեռագիրներէ քաղուած հին յունական ձեւերը եւ յետոյ արդի ձեւերը՝ գլխագիր եւ բոլորգիր), խպտիերէն, փիւնիկերէն, արամական, պալմիրական, բաբելական, սամարական, եթովպական, մանիքէական, սոգդիական, էսթրանկէզ, ասորական (յակոբիկեան), հին սասանեան (երկու արձանագրութեանց մէջ գործածուած ձեւերը), պահլաւական, զննգական եւ արաբական գրերը<sup>1</sup>:

Այս ցուցակին հետ կուսանք նաեւ Հ. Մէնէվիչեանի յօրինած տախտակը, ուր կը գտնենք 25 հայ գրերու համեմատութիւնը յունարէնի հետ եւ անոնց միջին կամ անցման ձեւերը<sup>2</sup>:

1 Հրապարակային շնորհակալութիւն ընկերոջս Պր. Կ. Բասմաջեանի, որ ուղարկեց ինձ վերոյիշեալ այբուբեններէն քանի մը հատը:

2 Յաջորդ եջերուն մէջ այս աւետարանը պիտի յիշենք Փ. Յոս. (Փոքր Յուցակ) համառոտագրութեամբ. իսկ Մեծ Յուցակը պարզապէս Յոս.՝ բաւով:

|                |                |
|----------------|----------------|
| Ա. Բ. Գ. Դ. Ե. | Զ. Է. Ը. Թ. Ծ. |
| Բ. Բ. Բ. Բ. Բ. | Օ. Օ. Ո. Ո.    |
| Ժ. Գ. Գ. Գ. Գ. | Ո. Ո. Պ. Պ.    |
| Ժ. Ժ. Դ. Դ. Դ. | Ջ. Զ. Զ.       |
| Է. Է. Է. Է. Է. | Ռ. Բ. Բ. Բ. Բ. |
| Ը. Զ. Զ. Զ. Զ. | Շ. Ս. Ս. Ս.    |
| Ի. Ի. Է. Է. Է. | Կ. Կ. Կ.       |
| Թ. Թ. Բ. Բ. Բ. | Դ. Տ. Տ. Տ.    |
| Լ. Լ. Լ.       | Դ. Դ. Դ.       |
| Ա. Կ. Կ. Կ. Կ. | Վ. Վ. Լ. Լ.    |
| Ղ. Ն. Ն. Ղ. Ղ. | Փ. Փ. Փ.       |
| Ս. Մ. Մ. Ս. Վ. | Ք. Բ. Բ.       |
| Ն. Ա. Կ. Կ.    |                |

Այս երկու ցուցակները ունենալով մեր աչքին առջեւ, կրնանք հիմալ անցնիլ իւրաքանչիւր գրի մանրամասն քննութեան:

## Ա.

Gardthausen եւ Մէնէվիշեան այս գիրը կը հանեն յն. ա-էն (տես Փ. Յուգ. Թիւ 1 նշանը, որ արդի ա-էն այն աարբերութիւնն ունի, որ կըրակին ծայրերը դուրս ելած չեն). Kopp եւ

Փառնակ հին պահլաւական Ս ձեւէն, Տաղաւարեան եւ Յարութիւնեան փիւնիկ չ գրեն, Միւլէր նախ սասանեան եւ զանդիկ չ գրեն, յետոյ զնդ. չ գրեն. Սարգիսեան յն. ա-էն, բայց կ'ըսէ թէ Մեսրոբ աչքի առջեւ ունեցեր է նաեւ զնդ. չ գիրը, Մարքուարդ կը մերժէ յն. ա եւ կը դնէ գլխիվայր դարձած էսթրանկէլը ռ էն կամ աւելի լաւ՝ պահլաւերէն չաէն:

Սխալ է զանդիկ չ գրին համեմատութիւնը, ինչքան որ հայերէն չ-ին հետ նմանութիւնը կատարեալ ըլլայ, որովհետեւ նախ զնդ. չ կը ներկայացնէ երկար չ, երկրորդ որ հայերէն բոլորգիր կամ նօսրագիր ձեւը շատ աւելի յետին ժամանակի բան է: Անընդունելի կը դանձմ նաեւ էսթրանկէլը գիրը, որմէ հայերէն Ա հանելու համար ոչ միայն տառը պէտք է գլխիվայր շրջել (Վ), այլ եւ յետոյ ալ գէպի աջ դարձնել: Ի՞նչ պէտք ունէր Մեսրոբ այսպիսի յեղաշրջութեանց ենթարկելու տառը:

Մեր գրին նման կը մնան ուրեմն փիւնիկարամական չ ձեւը, յունարէնն ու պահլաւականը:

Յունարէնի համար պէտք չէ առնուլ արդի ա ձեւը, այլ այն հնագոյն ձեւերը՝ որ կ'երեւան մեր Յուցակին մէջ: Gardthausen կ'առնու ցուցակին առաջին ձեւը, որ օղակ մ'է՝ քովէն թեք գծիկով մը գոցուած: Բայց Gardt. կը յիշէ նաեւ անսակ մը ա, որ հին գրութեանց մէջ շատ անգամ կը պատահի եւ որուն մէջ կըրտակին անդ սուր անկիւն մը կայ (անս փ. Յուց-

թիւ 2 եւ 3): Այս պարագային յոյն տառը գրեթէ կը նոյնանայ փիւնիկեան ձեւին հետ: Մեծ ցուցակին երկրորդ եւ երրորդ ձեւերը աւելի մօտիկ են հայերէնին: Յոյն եւ հայ գրերուն նմանութիւնը երեւան հանելու համար պէտք է նկատել որ յունարէն առուերը հայերէնի մէջ ենթարկուած են բնորոշ ձեւափոխութեան մը. գրերուն կը որ դարձուածքները գրեթէ միշտ բացուած են: Այս օրէնքը անմիջապէս աչքի կը զարնէ, երբ համեմատենք օրինակի համար՝ փ = յն. փ, ր = յն. ր, և = յն. և. Օ գրերը: Այս ձեւափոխութեան ծագումն անշուշտ այն է որ գրչի շարժումները սկիզբէն քիչ մը թոյլ եղած են, կը որ դարձուածքները անփոյթ կերպով կատարուած են, որով կը որակներուն գիծը գրին միշտ բունին կպած չէ, այլ անջատու բերանաբաց թեւ մը ձեւացուցած է: Այս նկատումով ոչ միայն ցուցակին երկրորդ եւ երրորդ ձեւերը՝ որոնք նոյն են հայերէնին հետ, այլ եւ նոյն իսկ առաջին ձեւը կրնայ տալ հայերէն Ա, կը որակը ըստ օրինի բանալով եւ թեք գիծը փոխանակ ամբողջութեամբ դնելու, քիչ մը վարէն դնելով: (Մեր նոր ոճի գրութեանց մէջ՝ ԳԵՂԵՍ Ա-ը գրեթէ այս ձեւն ունի):

Մեր գրին շատ մօտիկ են նաեւ փիւնիկ-արամեական ձեւը, զոր պէտք է մերժել ժամանակի հեռաւորութեան պատճառով, եւ պահապան «, որ ուրիշ բան չէ, բայց եթէ դէպի ձախ դարձած Ա:

Ուրեմն մեր Ա-ին ծագումը կը տառանդ-  
յուն. ա-ի եւ պհլ. «-ի միջեւ:

Վրացերէն ձեւը մեկնելն աւելի դժուար  
է, որովհետեւ ծանօթ ձեւերէն ոչ մէկուն կը  
նմանի: Միւլէր շրջելով մէկ քովի վրայ ( Ե )  
կը գանէ որ նման է սասանեան եւ զնդ. « ձեւին,  
իսկ յետոյ կը նմանցնէ արամ. ք գրին: Ըստ իս  
անտարակոյս է որ վրացերէն գիրը կը ծագի  
յն. ա-ին եւ իր ձեւով կը գտնուի հայուն եւ  
յոյնին մէջտեղ: Հայերէն Ա ձեւը գուրս բե-  
րելու համար երեք շարժում կ'ընենք. առաջին  
շարժումով կը գծենք ձախակողմեան սիւնը,  
երկրորդ շարժումով այս սիւնը կը շարունակենք  
եւ կը գծենք աջակողմեան սիւնը. երրորդ շար-  
ժումով կը գծենք պոչը: Եթէ այս երեք շար-  
ժումներուն կարգը փոխենք եւ առաջին շար-  
ժումէն յետոյ անցնինք երրորդ շարժումին, կը  
ձեւանայ վրացի գրին հիմնական մասը Լ, զոր  
լրացնելու համար կը մնայ երրորդ շարժումով  
մը գծել աջակողմեան սիւնը: Այս սիւնը ան-  
ջատ մնալուն պատճառաւ կրցած է աւելի վեր  
բարձրանալ, քիչ մը հեռուէն սկսիլ, եւ վեր-  
ջապէս կարճնալով՝ Լ-ին վրայ թեւ մը ձեւաց-  
նել: Այս բոլորը զարմանալի երեւալու չէ մեզի,  
որովհետեւ միշտ միեւնոյն բանը պատահած է  
նաեւ հայերէն գրութեան մէջ. նօտագիր  
գլխատառ Ա-ը, որ մեր հիմնական ձեռագիր-  
ներուն մէջ գործածական է, կազմուած է նոյն  
հիմնական Լ-էն, որուն ծոցին մէջ դրուած է մէկ  
շեշտաձեւ նշան (1) եւ մէկ ոլորուող թեւ (2):

## Բ.

Յարութիւնեան եւ Տաղաւարեան կը հանեն փիւնիկեան  $\gamma$  կամ շրջուած Բ ձեւէն: Müller կը յիշէ յն. B, բայց աւելի լաւ կը գտնէ պալմիրականը, որմէ շրջեալ կը կարծէ: Մարքուարդ կը հանէ էսթրանկէլօ  $\Rightarrow$  դրէն: Իսկ Gardt., Մէնէվիշեան, Սարգիսեան, Մալխասեան եւ Փառնակ կը հանեն յն. B-էն: Ըստ իս  $\acute{o}$  չ փիւնիկեանը,  $\acute{o}$  չ պալմիրականը եւ  $\acute{o}$  չ ալ արամական, բաբելական, ասորական ու պարսկական ձեւերը կրնան մեկնել մեր գրին ծագումը: Մարքուարդ մեր ձեւին հասնելու համար  $\Rightarrow$  ձեւը նախ աջ կը դարձնէ ( $\equiv$ ), երկրորդ՝ ասոր ծախ կողմէն սիւն մը կ'աւելցընէ (F) եւ երրորդ՝ երկու թեւերուն ծայրը կտուցի պէս վար կը ծռէ՝ համաձայնեցնելու համար «յոյն նախագաղափար B-ին»:

Չեմ գիտեր թէ ինչ պէտք կայ այսքան փոփոխութիւն մտցնելու մէկ գրի վրայ եւ վերջը դարձեալ յունական B գրին օգնութեանը գիւմելու, որ ինքնին կրնայ ամենագեղեցիկ կերպով տալ մեր Բ գիրը: Մարքուարդ կը մերժէ B գրէն հանել մեր Բ-ը, ըսելով որ եթէ յունարէնը մեր գրին մայրն ըլլար, գրեթէ R ձեւը պիտի տար: Բայց այսպէս չէ: Հայերէն գիրը յունարէնի հետ նոյն դիրքն ունի, աջ ու ձախ շրջելու պէտք չկայ. յոյն գրին աջակողմեան երկու կլոր դարձուածքները՝ հայերէն գեղադրութեան սովորական օրէնքով (ինչպէս քիչ մը վերը բացատրեցինք) բացուած եւ ձեւացուցած են մեր

Բ գրին երկու թեւերը: Այսօր ալ շատեր արգէն այնպէս մը կը գրեն մեր գլխատառ Բ-ը, որ գրեթէ յունական կամ եւրոպական B գիրը կը դառնայ:

Վրացերէն Մ շատ կը նմանի արամական նին՝ իր ձախ դարձած գիրքով ու կիսաբաց բերանով. բայց պոչը աջ է գարձած, մինչդեռ արամականին մէջ գէպի ձախ դարձած է: Միւլէր վրացի տառը կը միացնէ մէյ մը պալմիրականին, մէյ մ'ալ արամականին:

Ինձ համար այս գրին ծագումը մոլոր կը փնայ:

#### Գ.

Միւլէր կը հանէ արամական եւ պալմիրական ձեւերէն. Յարութիւնեան եւ Տաղաւարեան փիւնիկեան ձեւէն. Մարքուարդ կը դնէ որ Գ գիրը նման է սասանեան Ղին, բայց որովհետեւ ասիկա Կ ձայնն ունի, ուստի չ'ընդունիր եւ առանց մեկնութեան կը թողու:

Փիւնիկերէնն ու արամերէնը՝ որոնք նոյն ձեւն ունին, զուրկ ըլլալով մեր գրին թեւէն, բնականաբար համեմատութենէ հեռու կը մնան: Պալմիրականը բնաւ չի նմանիր հայուն: Շատ տարբեր են նաեւ ասորի, էսթրանկէլը, պահլաւական եւ մանիքէական ձեւերը: Սոգդիական, եթովպական ու սամարական ձեւերը թէեւ շատ նման են, բայց չունին Գ-ին թեւը՝ որ մեր գրին հիմական գիծը կը կազմէ եւ Դ-էն զանազանող մասն է. հետեւաբար եւ հաշուի չեն

գարի Զնդ. Գ կրնար բաւական մօտենալ, եթէ շրջուած շրջարի Իբրեւ համեմատութեան նիւթ կը մնայ յունարէնը: Սարգիսեան կը հանէ յն. Դ ձեւէն, որուն հետ կցելու համար դիրը աջէն ձախ կը դարձնէ: Բայց աջէն ձախ դարձնելը արդէն հայերէն դեղադրութեան ոգւոյն հակառակ է, որովհետեւ ինչպէս գիտենք, հայերէն այբուբենը աջակողմեան ուղղութեան կը հետեւի, հետեւաբար կրնայ առ առաւելն ձախէն աջ դարձնել եւ ոչ բնաւ հակառակը: Այս տեսակէտով յունարէն Դ եւս նշանակութենէ զուրկ է:

Պէտք է առնուլ հին յունարէն ձեւը, որ կը տեսնուի Յուցակին մէջ. Gardt. եւ Թէնէ-վիշեան մեր գիրը կը համեմատեն այս ձեւին հետ: Թեր եւ յոյն գրին մէջ երկու տարբերութիւն կայ. նախ՝ յոյն գրին դուլիւ բաց է, մինչդեռ մերինն մէջ ընդհակառակը գոց է, եւ երկրորդ՝ տակը կեռ մը կայ, որ մերինին մէջ չի գտնուիր: Gardt. յունարէն հին ձեռագիրներու մէջ գտած է զուտ խաչաձեւ գի՛ մը (+), որ տակի կեռէն զուրկ ըլլալով՝ ատրճերութիւններէն մէկը կը ջնջուի: Բայց գլխի կողմէն միացած ձեւ մը գտնուած չէ: Կրնայ ըլլալ որ այս միացումը յետոյ հայերէնի մէջ ձեւացած ըլլայ, ինչ որ շատ դիւրութեամբ կրնար տեղի ունենալ: Արդարեւ եթէ առնունք զուտ խաչաձեւ գի՛ մը (+), բնականօրէն կրնանք ենթադրել որ այս խաչաձեւ կազմող երկու գծերը գրութեան ժամանակ երկրաչափական ճշտութիւն

մը պահած չըլլան, այլ գրութեան դիւրութեան համար իրենց ծայրը փոքրիկ կեռ մը ստացած ըլլան և 7 ձեւով, որոնք յետոյ միանալով կազմած ըլլան 4 թուանշանին նման ձեւ մը եւ ասկէ ալ Գ. Արգէն ներկայ ձեռագրին մէջ ալ կայ նման գիւմ մը, որ կը բաշկանայ և ձեւով գծէ մը, որուն մէջտեղէն վերէն վար կ'անցնի Կ նշանին նման գիծ մը:

Վրացերէն Ա նոյն է հայերէնի հետ, միայն թէ հոս թեւին տեղ գրին սորորոտը սանդղաձեւ մը շինուած է: Միւլէր այս գիրն ալ կը հանէ արամական եւ պալմիրական ձեւերէն, ինչ որ իմ կարծիքովս անընդունելի է:

#### Գ.

Այս գիրը բաւական դժուարութիւն կը յարուցանէ: Միւլէր կը հանէ արամական կրկնակ նշաններէն, Թարութիւնեան եւ Տաղաւարեան փիւնիկեան Դ գրէն, որոնց հետ շատ յարմար կու գան նաեւ բաքելականը, պալմիրականը եւ սամարականը: Բայց այս համեմատութեան ժամանակ նկատի պէտք է առնուլ Գ տառը, ինչպէս գիտենք, հայ. Գ եւ Դ շատ նման են իրարու եւ միայն բերնի բաց կամ գոց ըլլալով կը տարբերին: Այսպէս է նաեւ սասանեան գրութեան մէջ: Հին սասանեան գրութեան մէջ Գ եւ Դ առանձին առանձին ձեւեր ունէին. բայց ժամանակ անցնելով այդ գրերը իրենց հին ձեւը կորսնցուցին եւ միմեքան մօտեցան իրարու, որ պահլաւերէնի մէջ արդէն

միեւնոյն փոքրիկ Ե ձեւին հասան: Ընթերցանութեան համար շփոթ էր այս, ուստի զանգիկ այբուբենին մէջ այդ ձեւը յատկացուցին Գ-ի, իսկ Գ-ի համար հնարեցին բոլորովին տարբեր նշան մը: Այսօր պահլաւերէն ձեռագիրներու եւ եւրոպական հրատարակութեանց մէջ՝ երկու ձայները տարբերելու համար Գ-ին վըայ կը դնեն երկկէտ, իսկ Գ-ին վըայ պարոյկ կամ երեք կէտ: Նոյնպիսի նմանութիւն կայ նաեւ փիւնիկերէնի մէջ, ուր  $\Gamma = \text{գ}$  եւ  $\Upsilon = \text{գ}$ : Թէեւ այս նմանութիւնը շատ նպաստաւոր հանգամանք մը կը ներկայացնէ, բայց կայ կէտ մը որով նմանութիւնը շատ կը հեռանայ: Փիւնիկերէնի մէջ Գ տառն է որ բաց բերան ունի, իսկ Գ՝ գոց. մինչդեռ հայերէնի մէջ ճիշտ հակառակը: Այնպէս որ եթէ հայ եւ փիւնիկեան ձեւերուն մէջ ցեղակցութիւն ըլլար,  $\Gamma$  պիտի տար Գ, իսկ  $\Upsilon$  պիտի տար Գ:

Փիւնիկերէնի մանրանկարներն են էսթրանկէլօ, ասորի, պահլաւ եւ արարական ձեւերը, որոնք գլխէ կամ թեւէ զուրկ ըլլալով՝ չեն յարմարիր մեր գրին: Ասորին Ը գրէն զանազանուելու համար ստացած է տակը կէտ մը. նոյն ձեւը քիչ մ'աւելի զարգացուցած է զանդիկը՝ որ իր տակի պոչով մեզմէ հեռու կը մնայ: Մարքուարդ մեր գիրը կ'ուզէ հանել այս պահլաւական » կամ հին եգեսական (ասորական) » ձեւէն: Այս ձեւը մեր Գ-ին հասցնելու համար գիրը նախ ուղիղ դիրքով կը կանգնեցնէ, երկրորդ՝ ձախ կողմէ կտուց մը կ'աւելցնէ, երրորդ՝

աջ կողմէն թեւ մը կը կպցնէ: Գրին ուղղուած  
 դիրքը եւ ձախակողմեան կտուցը կրնանք ընդու-  
 նիլ. բայց աջակողմեան թեւին յաւելումը մեզի  
 համար անըմբռնելի է: Գրերը իրենց ձեւափո-  
 խութեան մէջ ենթակայ եղած են միշտ յա-  
 ջորդական զարգացման մը. ամէն զարգացում իր  
 սկզբնապատճառն ունի. օրինակի համար՝ երբ  
 կ'ըսենք որ յոյն գրերու բերանը բացուած է  
 հայերէնի մէջ, ասիկա գրչի թուղութեան ընա-  
 կան արդիւնքն է, զարգացման յաջորդական  
 աստիճան մը: Երբ կը տեսնենք որ գրի մը պոչը  
 կարուած է, ասիկա աւելի համառօտ գրելու  
 կամ ժամանակի ընթացքին մէջ մաշուելու  
 սկզբունքէն է: Երբ կը տեսնենք որ գծի մը  
 ծայրը աւելորդ պոչ մը աւելցած է (օր. զնն-  
 գական ՝ գրին պոչը), ասիկա ալ կրնանք մեկ-  
 նել աճման կամ զարգարուն գրելու հասարակ  
 սկզբունքով (ինչպէս է տաճկերէնը կամ տաճ-  
 կահայոց այսօրուան ձեռագիրը): Բայց երբ  
 կ'ուզուի բոլորովին անկախ մաս մը աւելցնել  
 գրի մը վրայ, առանց որեւիցէ պատճառի, ասիկա  
 անըմբռնելի կը թուի: Վերի պարագային Դ գրին  
 համար ենթադրուած թեւը բոլորովին անտեղի  
 է. եթէ Դ ծագած ըլլար պահլաւական ձեւէն,  
 պարզապէս Գ ձեւը պիտի ունենար: Չենք կրնար  
 ալ ըսել որ ուրիշ գրի հետ չչփոթուելու հա-  
 մար ստացած է այդ թեւը, որովհետեւ առանց  
 թեւի ալ ոչ մէկ գրի հետ կրնայ չփոթուիլ:

Kopp հայերէն Դ գիրը կը հանէ խպաիե-  
 րէն Դ գրէն, որ անշուշտ շատ նման է եւ

կրնայինք ընդունիլ իբր մեր գրին մայրը, եթէ խպաիներէնը ուրիշ որեւէ պարագայի մէջ հայերէն գրերուն նպաստ մը մատուցած ըլլար:

Եթովպական եւ հին պահլաական, մանաւանդ մանիքէական եւ սոգդիական գրերը համեմատութենէ հեռու կը մնան ձեւի պատճառաւ:

Եր մնայ ուրեմ յունարէնը, որուն հետ կը համեմատեն Gardt., Մէնէվիշեան եւ Սարգիսեան:

Յունարէն Դ գիրը թեեւ այսօր հասարակ եռանկիւն մ'է, բայց նախապէս եռանկիւնին գագաթին վրայ՝ աջ ու ձախ թեւեր ունէր: Այս հին ձեւէն ծագած է խպական ձ մ գիրը, որ գագաթին վրայի ձախ թեւը անաղաւ կը պահէ. նոյնպէս է նաեւ խպաի X յ, որ ձեւացած է յն. Δ-էն եւ անոր գագաթին վրայի երկու թեւերն ալ կը պահէ: Gardt. որ մեր հայերէն Դ գիրը այս յոյն ձեւէն կը հանէ, իբր միջնորդ կամ ապացոյց կը բերէ խպաիին հետ վրացերէն գիրը: Ս. Մեսրոբ անշուշտ աչքի առջեւ ունեցած է երկու թեւերով յունարէն Դ, որուն բաւական հաւատարիմ պատկերն է վրացերէն Ծ: Ասոր տակի կլորակը յոյն գեղապին եռանկիւնը կը ներկայացնէ, իսկ կարճ բունին վրայ աջ ու ձախ նստած թեւերը կը ներկայացնեն հին գեղապին գագաթի երկու թեւերը: Հայերէն Դ-ի մէջ՝ ասկի գոց եռանկիւնը բացուելով՝ նախապէս Թոյլ կիսակլորակ մը շինուած է՝ որ հետզհետէ կրճատուելով՝

մնացած է միայն Դ-ին ուղիղ սիւնը, ընդհանրապէս կառուցողական կարճ թեւերը զարգացած եւ ձեւացուցած են մեր մէջ Դ-ին գլուխը եւ թեւը: Գոց եռանկիւնի բացման երեւոյթը տեղի ունեցած է նաեւ յունաց մէջ. հմտ. ցուցակին մէջ երկրորդ եւ երրորդ ձեւը՝ որմէ զարգացած է նորագոյն ձեւը:

Սարգիսեան մեր Դ գիրը կը հանէ ցուցակին երրորդ եւ չորրորդ ձեւերէն, որոնք սակայն չեն կրնար հայերէն Դ-ին նմանցուիլ. միւսին ժամանակ կ'ըսէ թէ Մեսրոբ աչքի առջեւ ունէր զն. է ծ գիրը (իբր մի կը յիշէ ձեւ մը՝ որով անշուշտ այս գիրը կը հասկնայ):

Միւլլէր վըացի Տ կը հանէ փիւնիկ. A կամ արամական A Կ գրէն, գլխավայր շրջելով, ինչ որ այնու ամենայնիւ նմանութենէ հեռու կը մնայ:

## Ե.

Յարութիւնեան կը հանէ փիւնիկեան Յ գրէն. բայց ասիկա հայերէն Ե դառնալու համար շատ բանի կը կարօտի. նախ պէտք է երեսը դէպի աջ դարձնել, յետոյ սիւնը տակէն կաշել, եւ վերջապէս վերի առաջին թեւը հանել: Այսքան փոփոխութիւն ծանր երեւցած է նոյն իսկ Տաղաւարեանին, որ թէեւ առհասարակ հայերէն գրերու փիւնիկեան ծագման կողմնակից է, բայց այս պարագային Ե կը համարի հայերէն Է գրէն ձեւափոխուած: Եյ նաեւ այն հանգամանքը՝ որ փիւնիկեան Յ գիրը, ինչպէս

եւ անոր ցեղակից բոլոր սեմական, ասորական եւ իրանեան ձեւերը, ի ձայնն ունի եւ յունաց մէջ միայն դարձած է է: Սեմական լեզուները զուրկ են է ձայնաւորէն եւ միայն զննդական այբուբենն է որ ստեղծած է այս ձայնաւորին համար քանի մը նշաններ. Խ (b) եւ է՝ որ կը համարուի ը թ, եւ ասոնց համապատասխան երկարները՝ Խ օ եւ է օ: Այս կէտը նկատի ունենալով համեմատութեան ամէն պայման կը քննուի յիշեալներուն հետ:

Միւլէր, որ սկիզբէն սեմական լ է գրին կողմնակից էր, ասոր իբր ապացոյց բերելով վրացերէն Պ է գրին նմանութիւնը, վերջին անգամ կը գիմէ զննդերէնի եւ մեր գիրը կը հանէ զնդ. է ձեւէն որ ճիշտ նոյն է յունարին Ե-ին հետ: Բայց այս մեկնութիւնը անշուշտ ուղիղ չէ, որովհետեւ, ի նկատի չունենալով հանդերձ այն կէտը՝ որ զնդ. է կը համարուի թ ը, գրին մէջքը փոս է եւ չի կրնար տալ հայերէն Ե, այլ շատ շատ շրջուած Յ-ի նման ձեւ մը:

Սակայն ինչքան հաւատարիմ նմանութիւն կայ յն. ձեւին հետ, որուն հետ կը համեմատեն մեր Ե-ը բանասէրներուն մեծ մասը. Gardthausen, Մէնէվիշեան, Սարգիսեան, Մալխասեան եւ Մարքուարդ:

Յունարէն գիրը փիւնիկերէնի շրջուած ձեւն է, ծուռ կամ ուղիղ գրուած Բ, որ մեր գրին դիմքն ունի: Ասոր տակէն յետոյ կրճատուած է վար երկարած սիւնը, ինչպէս հայերէնին մէջ եւս, որով ձեւացած է Ե ձեւը:

Բայց ինչպէս Յուդային մէջ կը տեսնուի, զանազան հին ձեռագիրներու մէջ գործածուած է նաեւ ասոր քիչ մը տարբեր ձեւը, ուր ստորին թեւը կիսաբոլոր վեր դարձած է՝ ճիշտ մեր գրին պէս. իսկ վերին թեւը շեշտի նման բան մը եղած է: Երբեմն նաեւ այս շեշտն ալ կը պակսի, ինչպէս կը ցուցնեն ցուցակին երրորդ, չորրորդ եւ հինգերորդ ձեւերը, որոնք մեր Ե-էն տարբերութիւն մը չունին:

Սորգիսեան թէեւ ուղիղ համեմատութիւնը կը դնէ, բայց կ'ըսէ նաեւ որ Մեսրոբ զնդ. **Մ** գիրը աչքի առջեւ ունէր հայերէն. "համապատասխան" գիրը կազմած ժամանակ: Բայց թէ որն է այս համապատասխան գիրը չ'ըսեր: Ինչ կը թուի թէ Ե կ'ուզէ հասկնալ, Այս կետը աւելորդ էր:

Շատ հետաքրքիր է վրացերէն **Պ** Ի. Ասիկա՝ ինչպէս կը տեսնուի, յն. գրին հետ ընտել նմանութիւն չունի եւ աւելի արդարացի պիտի ըլլար համեմատել արամական ու պալմիրական ձեւին հետ, ինչպէս կ'ընէ Միւլլեր: Սակայն, ինչպէս Gardthausen կ'ըսէ, վրացի ձեւը կը ծագի հին II գրէն, որ յն. E-ին երկրորդական ձեւն էր եւ յատկապէս գործածական լատինական գրութեան մէջ: Վրացերէնի մէջ, ինչպէս սպասելի էր, երկու ցուպերը դիւի կազմէն միացած են, միակաուր գիր մը ունենալու համար: Ասկէ զատ առաջին ցպիկը երկրորդէն քիչ մը կարճացած է:

## 2.

Յարութիւնեան կը համեմատէ փիւնի-  
կեան Գ, Տաղաւարեան I կամ Z գրերուն հետ։  
Առաջինը գլխով նման է, բայց քովէն աւել-  
լորդ թեւ մը ունի. ասկէ զատ աակի պոչը կը  
պակսի։ Միւս փիւնիկեան ձեւերը, ինչպէս նաեւ  
պալմիրականը, սամարականը, եթովպացին, մա-  
նիքեականը, սոգդիականը, էսթրանկէլոն, ասո-  
րին, զենգն ու սասանեան ձեւերը բոլորովին  
աարբեր են։ Արնայինք սամարական թ ձեւին  
դիրքը փոխել, վըսյի կոտոշը կարել, որով կը  
ձեւանար ճիշտ մեր Զ գիրը. բայց մէք այս-  
պիսի յեղաշրջութեանց հակառակ ենք։ Չենք  
կրնար ընդունիլ նաեւ Kopp-ի կարծիքը, որ  
մեր Զ գիրը պ՛հ. 5 գրէն կը հանէ. եւ կը զար-  
մանանք Մարքուարդի վըսյ որ կը դիմէ պ՛հ.  
111 կամ սասանեան ՝՝՝ ձեւերուն։

Ենթադրենք թէ ասոնց վերի մասի կորու-  
թիւնը զարգանալով առած ըլլայ հայերէն  
Չ-ին գրուիւք. բայց ուր է պոչը։ Ենթադրենք  
նոյնպէս որ յիշեալ գրերուն ծայրի ոլորքը աւելի  
աճած եւ կանոնաւոր պոչ մը դարձած ըլլայ.  
բայց այն ժամանակ այս պոչը ձախ կողմը միայն  
պիտի գանուէր եւ պիտի ունենայինք y ձեւը։  
Ինչէ՞ն յառաջացաւ պոչին աջակողմեան մասը։

Մեր կարծիքով իրաւունք ունին Gardt-  
hausen, Մէնէվիշեան, Սարգիսեան եւ Մալ-  
խասեան, երբ հայերէն գիրը կը համեմատեն  
յն. Z-ին հետ։ Ասիկա փիւնիկականին զար-  
գացած ձեւն է, որուն առաջին աստիճանն է

արամականը, զոր կրնայինք նոյնպէս հայերէնի հետ համեմատել, եթէ ասոր գլուխը քիչ մ'աւելի զարգացած ըլլար, ինչպէս յունարէնին մէջ:

Յունարէն գիրը զանազան ձեւեր ունի, որոնցմէ հինգը դրած ենք ցուցակին մէջ: Ասոնց վըայ աւելցնենք նաեւ նորագոյն Ե եւ խպաիե-  
րէն ձեւը: Ասոնցմէ կը տեսնուի որ ձգառում կայ այս գրին գլուխը զարգացնելու եւ նախկին ուղիղ գիծը՝ ձախակողմ հակուած բոլորակի մը վերածելու: Համեմատէ՛ խպաիական ձեւը, նոյնպէս արդի եւրոպական ձեռագրին Տ ձեւը, Բոլորակը կառարելութեան հասած է յունական երկրորդ ձեւին մէջ, որմէ առնուած է ռուս. 3: Ասկէ ձեւացած է նաեւ հայերէն Զ-ին գլուխը:

Գալով գրին տակի պոչին, այս ալ տեսակ տեսակ է. առաջին ձեւին մէջ պոչը կը թեքուի աջ ու ձախ՝ երկու կողմ. երկրորդին մէջ միայն դէպի ձախ կ'ոլորուի, իսկ միւսներուն մէջ դէպի աջ. Նոր այբուբեններէն խպաին աջակողմեան է, ռուսը ձախակողմեան, իսկ մերը աջ ու ձախ է միանգամայն: Այսպէս է նաեւ եւրոպական արդի ձեռագրին մէջ, ուր Տ-ին տակի գիծը աջ ու ձախ ալեւել կը ծածանի: Հայերէն բոլորգրին ու նոսրագրին մէջ պոչին աջակողմեան ուղղութիւնը վերականգնուած է:

Մարքուարդ՝ որ Չ գրին յն. Շ-էն ծագման հակառակ է, հարց կու տայ թէ ինչ պատճառաւ բոլորակը աջակողմը դրուած չէ՞: — Ժիշտ այն պատճառաւ ինչ պատճառաւ որ եղած

է յունականին երկրորդ, չորրորդ եւ հինգերորդ ձեւերուն, խպտին, ուստին եւ լատինին մէջ, երբ գրենք յն. նօարագիր զ ձեւը, վերի աջակողման ուղրքը արագ գրութեան մէջ կրնայ հեազհետէ պակսիլ եւ վերջապէս ոչինչի վերածուիլ, իսկ ընդհակառակը ձախակողմեան ուղրքը շատ աւելի վերէն սկսիլ ու հեազհետէ մեծնալ, կրնայ նաեւ ճիշտ հակառակը կատարուիլ, երկուքն ալ գրին զնորագման բնական ընթացքը կը ներկայացնեն, չայերէնին մէջ առաջինը տեղի ունեցած է եւ տարօրինակ բան մը չի ներկայացներ բնաւ:

Վրացերէն Ն որ մեր այսօրուան շղագիր չ-ին ձեւն ունի միշտ, մերինին հետ նոյն ծագումն ունի: Միւլէր կը հանէ արամական եւ փիւնիկեան Շ ձեւէն, որ գծախտաբար շատ հին է: Վրացերէնի մէջ գրին գլուխը մերինին պէս ձախակողմեան է եւ իր կիսաբաց դիրքով նման է յունարէնի հինգերորդ ձեւին, Բունարէնի սովորական ձեւերուն համաձայն է նաեւ գրին պոչը՝ որ միայն դեպի աջ կ'երկարի:

է.

Յարութիւնեան (էջ 314) այս գիրը կը հանէ հայերէն Ղ գրէն, մէջտեղը թեւ մը անցնելով: Բայց չեմ հասկնար թէ ինչ կապ կայ Լ-ի եւ Է-ի մէջտեղ: Եթէ գրերու համեմատութեան մէջ ձեւի նմանութիւնը միայն պիտի ունենանք ի նկատի, առանց հնչման համազօրութիւնը ի նկատի առնլու, այն ժամա-

նակ այլ եւս ինչ պէտք են հնագրութիւն, զանազան այբուբեններու քննութիւն, համեմատութիւն, առներու յաջորդական փոփոխութիւններ եւն: Արնայինք այն ժամանակ մեր բոլոր 36 գրերն ալ հանել օրինակի համար միակ մեր Ի գրէն, կը վերջանար կ'երթար: Գրերու ածանցման օրէնքն է կամ հնչման նշանութիւն եւ կամ գոնէ մերձաւորութիւն. վերջին պարագան ալ այն ժամանակ միայն, երբ մայր այբուբենին մէջ կը պակսի պահանջուած ձայնը: Ասոր վրայ աւելի ընդարձակ անս ը գրին մէջ:

Ցաղաւարեան Է գիրը կը հանէ փիւնիկ Ճ գրէն, որ սակայն կը համապատասխանէ մեր Է-ին եւ Է դառնալու համար կարօտ է ենթարկուիլ գրեթէ նոյնքան անդամահատութեան, որչափ Ե գառնալու համար:

Հաս գեղեցիկ է Kopp-ի եւ Միւլլերի համեմատութիւնը: Ասոնց քով մեր գիրը կը դրուի զնգ. Է գրէն, ճիշտ ինչպէս որ Ե կը հանուի զնգ. Է գրէն: Ջնգ. Է եւ Է ճիշտ այն համեմատութիւնն ունին իրարու հետ, ինչ որ հայ. Ե եւ Է: Երկուքին մէջ ալ վերջինը պոչով մը միայն կը տարբերի աւաջինէն: Սակայն դժբախտաբար, ինչպէս գիտենք զանդիկ ձայնաւորներու դրութիւնը յետին ժամանակի ներմուծութիւն մ'է: Է եւ Է ինչ թէ Ե, Ջ ձայներն ունին, այլ Ե, Ջ. Ե ձայնին համար կը դործածուի զնգ. Պ ձեւը, որուն երկարն է Պ թ. հայերէն Ե չի ծագիր զնգ. Է-էն, այլ յն. Ե-էն, ինչպէս անսանք: Այսպէսով հայ. Է եւ զնգ. Է գրերուն

շատ գեղեցիկ նմանութիւնը կը գառնայ պատահական:

Միւս այբուբենները զուրկ են համապատասխան ձայնաւորէն. կը մնայ միայն յունարէնը:

Gardthausen, Մէնէվիշեան եւ Սարգիսեան մեր գիրը կը համեմատեն յն. Ի դ գրին հետ, որ հնչմամբ, գրերու շարքով եւ տառադարձութեան մէջ հայերէն է-ին համապատասխանն է: Թէեւ յունարէն Ի մերինէն շատ տարբեր է ձեւով, բայց անոր հին ձեւերը (անսցուցակին երկրորդ եւ երրորդ ձեւերը) դիւրութեամբ կու տան հայերէն է գիրը, միջին թեւին յաւելմամբ:

Մարքուարդ է գիրը մեր է-էն ձեւացած կը դնէ եւ հակառակ է յունարէն ծագման, առարկելով թէ Ի գիրը է-ի մօտիկ հնչում մ'ունէր: Բայց ապահովապէս կը սխալի Մարքուարդ, որովհետեւ է դարու հայերը յունարէն Ի գիրը տառադարձուցած են միշտ է կամ է եւ այբուբենին մէջ ալ է-ին գէմ դրած են:

Միւլլէր վրացի Ի գիրը կը հանէ արամական Ի (հ) գրէն, բայց յն. Ի-ին երկրորդ ձեւը աւելի մօտ է. վրացի գրին վրայի կէտը կը բռնէ մեր գրին թեւին տեղը եւ միեւնոյն ծագումն ունի:

## Ը.

Միւս ազգերը չունին այս գիրը. հարուստ վրացերէնի մէջ անգամ կը պակսի. երաւոյեցնք եւ նոր պարսիկները ունին այս հնչումը, բայց

ձայնանիշով կը նշանակեն: Այնպէս որ Մես-  
րոբի համար հայերէնի այս հնչման դէմ հա-  
մազօր մը չկար:

Յարութիւնեան (էջ 314) այս գիրը կը  
հանէ հայ. Լ-էն, որուն համար պէտք է կրկնել  
այն՝ ինչ որ վերը ըսինք է գրին աւթիւ: Տա-  
ղաւարեան կը հանէ հայերէն շ գրէն, ասիկա  
ալ փիւնիկ Թ գրէն: Միւլլեր կը հանէ զնդ. \*  
գրէն, որ ունի ոնգային = (ւ) հնչումը եւ  
հետեւաբար նոյնպէս հեռու կը մնայ մեզմէ:  
Սարգիսեան կը հանէ ասոր. \* է գրէն (անուը-  
ւում թերեւս յարմար գտնելով ընդ անունին),  
բայց ասիկա ալ ձեռով ամենեւին նման չէ:

Գրին ծագումը գտնելու համար պէտք է  
նախ քննել թէ ինչպէս վարուած են այբուբեն-  
հնարող ուղիղ աչքերը՝ երբ իրենց լեզուին  
մէջ ունեցած են այնպիսի հնչիւններ՝ որոնց հա-  
մազօրը կը պակսէր իբր նախաափա առնուած  
այբուբենին մէջ:

Օրինակը կը ցուցնէ որ այս պարագային՝  
այբուբեն հնարողները իրենց տիպար այբու-  
բենին մէջէն ընտրած են սովորաբար այն գիրը՝  
որ ամէնէն աւելի մօտիկ հնչում ունէր իրենց  
ունեցած հնչման, եւ այն գրին վրայ փոքր ձեւա-  
փոխութիւն մը մտցնելով՝ շինած են նոր տառ:  
Այսպէս օրինակի համար պարսիկները փոխ առ-  
նելով արաբական այբուբենը, չգտան հոն  
իրենց լեզուին ք, ծ, թ եւ ց հնչիւնները. ուստի  
առին ասոնց մերձաւոր հնչիւնն ունեցող տա-  
ռերը՝ ب b, ج j, ز z, ک k եւ փոքրիկ փոփոխու-

Թեամբ շինեցին՝ Բ ք, Շ ճ, Յ թ, Յ ց։ Թուրքերը երբ փոխ առին պարսկական (= արաբական) այբուբենը, չգտան հոն իրենց լեզուին Պ (կոկորդական Ն) հնչիւնը, ուստի առին ասոր մօտաւոր հնչիւնն ունեցող Կ k գիրը եւ վրան երեք կէտ աւելցնելով՝ շինեցին Կ ր (սաղըր քեաֆ)։ Այսպիսի նորակերտութիւններ են նաեւ մալայերէնի ڠ ng, ڤ ny, ڨ p, Հինտուսթանի ڄ j, եւրոպական լեզուներուն մէջ՝ լեհերէն, սլովէք եւն յ, ډ, ڏ, ځ, իսլանաերէն ڨ, գոթերէն ƿ, սպաներէն ր եւն եւն։

Այս օրէնքը կը կոչեմ *այբուբեն-թեան օրէնք*։

Այլանմանութեան բնական եւ ընդհանուր օրէնքին հետեւած է նաեւ Մեսրոբ ամէն անգամ՝ երբ հայ հնչումն արտայայտող գիր մը չէ գտած իր ծանօթ այբուբեններուն մէջ։

Ը գրին ամենամօտիկ հնչիւնն էր անշուշտ է, ուստի ասոր միջին թեւը քիչ մը վեր բարձրացնելով՝ շինած է Ը տառը։ Գրեթէ նման ձեւով մը վարուած են նաեւ նոր լեզուաբանները, որոնք գիտական այբուբենի մէջ Ը ձայնը նշանակելու համար ընտրած են նոյն Ը գիրը եւ շրջելով կամ տակը կէտ մը գնելով՝ շինած են Զ կամ Ը։

Մենք ուրախ ենք որ Ս. Մեսրոբ մեր գրեւորուն մէջ կէտեր գործածած չէ, ինչ որ առանձին առաւելութիւն մը կու տայ մեր այբուբենին։ Քիչ այբուբեն կայ որ այս առաւելութիւնն ունենայ. ամէնքն ալ գոնէ փոքր չափով մը կէտե-

րով զարգարուած են. օր. ասորին ունի յ, յ, լատինը i, j, ռուսը i, ѥ, յունարէնը կէտերու եւ շեշտերու ահագին բազմութիւն մը, իսկ սեմական լեզուները իրենց ձայնանիշներով, մանաւանդ արաբերէնը եւ ասկէ յառաջացած այբուբենները՝ ամէն մէկ գրի վրայ մէկէն մինչեւ չորս կէտերով ու ձայնանիշերով՝ ուղղակի անտանելի են:

Վրացերէնը, ինչպէս գիտենք, ը գիրը չունի. վերջին ժամանակները հնարուած է Չ ձեւը՝ այս ձայնին համար:

### Թ.

Թ գրին ծագումը որոնելէ առաջ պէտք է որոշել Թէ որո՞նք են իր համապատասխանները օտար այբուբեններու մէջ: Թունարէնի մէջ ասոր համապատասխանն է Թ, որուն տարակոյս չկայ: Թունարէն այբուբենը, ինչպէս գիտենք, ծագած է փիւնիկեանէն, ուր այս գրին մայրն է Թ *teṯ* գիրը: Միւս սեմական այբուբեններուն մէջ փիւնիկեան Թ գրին համապատասխաններն են երր. Ծ, ասոր. Ե, սամար. Ծ, եթովպ. Ծ եւն: Թունարէնի մէջ կայ նաեւ T գիրը, որուն փիւնիկեան մայրն է + կամ X *tau*. ասոր ալ ցեղակիցներն են երր. Դ, եթովպ. +, սամար. X, ասոր. 2 եւն: Արդ՝ հայերէնի մէջ Թէեւ յունարէն Թ տառագարձուած է Թ եւ յն. T = հայ. Դ, բայց սեմական Ծ կու ապ հայ. Դ, իսկ սեմական Դ = հայ. Թ (տես Հիւպշ., *Arm. Gramm.* էջ 286): Հակառակութիւնը ակ-

ներեւ է. յն. Թ = հայ. Թ, յն. Թ = սեմ. Թ,  
բայց սեմ. Թ = հայ. Թ:

Արդ՝ երբ Ս. Մեսրոբ կը հնարէր հայերէն  
գրերը, ինչ բան ի նկատի պիտի առնուր. գրե-  
լուն հնչումը թէ անոնց հին ծագումը: Ցարա-  
կոյս չկայ որ միայն հնչման հետ գործ ունէր  
անիկա, որովհետեւ հնագրագէտ մը չէր՝ տա-  
ռերուն հին վիճակը փնտռելու եւ իր գրերը  
անոնց վրայ կաղապարելու համար: Այս ան-  
սակէտէն առաջնորդուելով՝ մենք ալ մեր ցու-  
ցակին մէջ Թ գրին դէմ գրինք յունարէն եւ  
խպտիներէն Թ, բայց փիւնիկ եւ այլ սեմական  
այբուբեններուն Թ տաւ գիրը. իսկ Տ գրին դէմ  
յն. Թ, բայց փիւնիկ եւ այլ սեմական այբու-  
բեններուն Թ thet գիրը:

Այս համապատասխանութիւնները որոշելէ  
յետոյ տեսնենք թէ ինչպէս կը վարուին մեր  
քննիչները Թ գրին հետ:

Յարութիւնեան այս գիրը կը հանէ փիւ-  
նիկեան Ս գրէն, Տաղաւարեան՝ փիւնիկ Թ գրէն,  
Միւլլէր պալմիրական Ն գրէն. ասոնք բոլորն ալ  
սեմական thet գրին ներկայացուցիչներն են, որ  
ինչպէս տեսանք, կը համապատասխանեն միայն  
մեր Տ-ին եւ հետեւաբար հոս գործ չունին:  
Աւելցնենք նաեւ որ ձեւով ալ նման չեն մեր  
գրին, փիւնիկեան Ս եւ պալմիրական Ն մեր  
գրին վերածուելու համար պէտք է նախ աջ  
գառնան եւ յետոյ գլխիվայր շրջուին: Փիւնիկ Թ  
հեռուէն միայն կը յիշեցնէ մեր գիրը եւ անոր  
հասնելու համար զանազան ձեւափոխութեանց

պէտք ունի: Զնդ. Ե գիրն ալ գործ չունի մեզի հետ, որովհետեւ ասոր հնչումը յն. արգի Թ գրին պէս Բ-ի եւ ֆ-ի մէջ կը աատանէր. ասկէ զատ՝ ձեւով տարբեր չէ պալմիրականէն: Միւս այբուբեններու համապատասխան ձեւերը, փիւնիկ + կամ X (աես ցուցակին մէջ), նոյնպէս տարբեր են մեր գրէն: Корр կը դնէ հին պրս. (իմա զնդ. պհլ.) Ս գրէն, որ աւելի մեր ո գրին կը համապատասխանէ, թէեւ երբեմն ալ Բ տառագարձուած է:

Փիւնիկեան Թ գրին զարգացած ձեւը կը ներկայացնէ յն. Թ: Փիւնիկ գիրը գրչի անջատ շարժումներով միայն կրնար ձեւանալ. ջանք եղած է մէկ շարժումով գրելու. այսպէս ձեւացած է հին յունական ձեւը, որ շրջուած Զ գրին նման բան մ'է եւ նոր յունական Թ, որոնց տարբերութիւնն այն է որ առաջինը վերէն կը սկսի, երկրորդը վարէն: Հին յունականին բոլորովին նման է հայ. Թ, որուն մէջ ձախակողմեան սիւնը հայ գեղագրութեան ոճին համաձայն երկարած եւ մինչեւ տողին վըայ իջած է:

Gardthausen, Մէնէվիշեան, Սարգիսեան, Մախասեան եւ փառնակ մեր գիրը կը դնեն յոյնէն: Սարգիսեան կ'ուզէ որ Մեսրոբ աչքի առջեւ ունեցած ըլլայ նաեւ զնգ. Ծ գիրը. բայց ասիկա, ինչպէս ըսինք, թէ ձեւով եւ թէ իր թլուտ հնչումով յարմար չէ մերինին: Մարքուարդ ալ յն. Թ գրէն կը դնէ մեր գիրը, բայց աւելի լաւ կը կարծէ հին էսթրանկէլո և ձեւէն

գնեւր, որ սակայն յունարէնին չափ նման չէ հայուն:

Վրացերէն (Ի գիրը Միւլէր կը հանէ փիւնիկ Թ ձեւէն, բայց ըստ մեզ հայերէնի հետ նոյն ծագումն ունի, ինչ որ աւելի պարզ կ'երեւայ երբ համեմատենք յն. Թ ձեւը: Յոյն տառին մէջի անջատ գծիկը վրացերէնին մէջ թեւ մը գարձած է՝ միակտուր գիր մը ունենալու համար:

### Ժ.

Մեր շրջակայ ազգերուն մէջ միայն Պարսիկներն են որ ունին այս հնչումը, այն է զնգ. փ, պՏԼ. Ե: Հայերէնը շատ նման է վերջինին եւ ակններեւ կերպով անկէ շինուած է: Վրացերէն Վ յ գրին մէջ, հիմնական ձեւը նոյն է. սիւնը կը մնայ անփոփոխ, միայն ձախակողմեան ոլորքը փոխանակ սիւնէն ձեղքել անցնելու՝ կրկնակ ոլորքով մը վեր կը դառնայ:

Յարութիւնեան այս գրին հետ համեմատած է փիւնիկ Պ ի գիրը, իսկ էջ 314՝ հայերէն Զ կամ Շ գրէն կը հանէ: Սարգիսեան պրս. յ կամ զնգ. ք յ (Ջ) գրէն (անշուշտ տառագարձութենէն խաբուելով, որովհետեւ ինքն ալ արդէն յ կը տառադարձնէ): Յաղաւարեան պրս. յ կամ բակտրիական փ (?) գրէն: Բայց թէ փիւնիկ ի եւ թէ բակտրիական փ (?) չունին հայ տառին հնչումը. հետեւաբար անոր հետ չեն կրնար համեմատուիլ: Գալով ձախորդ պրս. յ գրին, ասիկա արաբերէն յ ք գրին վըսյէն



կարճ է օ-էն երկար է օ եւն), Միւլլէր՝ որ նախապէս թէ մեր գիրը եւ թէ վրացին սեմական ՚ ( ? ) գրէն շրջուած կը համարէր, վերջին անգամ հայերէն է գիրը այս զանգիկ երկար է-էն կը հանէ, որ ոչ հնչումով նոյն է եւ ոչ ձեւով: Ի՞նչ պատճառով Ս. Մեսրոբ պիտի առնուր երկար Է-ն, քանի որ կարճ է կար: Չեւի կողմէն յարմարութիւն մը գտնելու համար՝ Միւլլէր զանգիկ ք գիրը ձախ կողմ կը գարձնէ, յետոյ ուղիղ կը կանգնեցնէ, բայց ասով ալ գեռ է չի ձեւանար:

Հաւ գեղեցիկ կը մեկնեն Gardthausen, Մէնէվիշեան, Սարգիսեան, Մալխասեան, փռնակ եւ Մարքուարդ, որ մեր է գիրը կը համեմատեն յունական | գրին հետ: Այս հասարակ ձողիկը քիչ մը աւելի պարզորոշ ձեւ մ'առնլու համար՝ քովէն սաացած է թեւ մը: Այս բանը գեղեցիկ կերպով կը ցուցնէ նաեւ վրացերէն Վ. որուն մէջ նոյն թեւը աւելցած է ձողիկին գլուխը: Սարգիսեան կը կարծէ որ հայ գիրը յունարէնի I ձեւէն յառաջացած ըլլայ, ուր ծայրի գծիկներուն տեղ դրուած է մեր է-ին թեւը. կը յիշէ նաեւ Է ձեւով գրութիւն մը, որուն միջին թեւը շատ աւելի մօտ է մեր գրին թեւին: Բայց աւելորդ կը գտնենք Սարգիսեանի այն ենթագրութիւնը թէ Մեսրոբ այս գիրը յօրինած ժամանակ զնդ. ք գիրն ալ աչքի առջեւ ունէր:

Միւլլէր՝ որ նախապէս վրացի գիրը վերի սեմական ձեւէն կը դնէր, վերջին անգամ կը

Հանէ արամական Վ ձեւէն: Ասիկա շատ լա-  
կընար մեկնել ոչ թէ վըրացին, այլ աւելի հայե-  
րէն ձեւը, եթէ ժամանակի այնքան մեծ անջրպետ  
մը չգտնուէր երկուքին մէջտեղ:

# Լ.

Այս հնչիւնը յատուկ է միայն հայերէնի.  
Միւս ազգերու և ձայնին գէմ կը գտնենք հայե-  
րէն և, թէ այբուբենի շարքին մէջ եւ թէ՛ բա-  
ռերու առագաթարձութեան մէջ: Յարութիւնեան  
եւ Տաղաւարեան այս գիրը կը հանեն փիւնի-  
կեան Լ գրէն, որուն հետ նոյն են բարեւական,  
արամական, սամարական, հին եբրայական եւ  
հին սասանեան ձեւերը: Էսթրանկէլօ, ասորի,  
սոգդիական եւ արաբական ձեւերը միայն ձախ  
դարձած են. իսկ պՏԼ. հ կրած է փոքր ձեւա-  
փոխութիւն մը, որ կը յիշեցնէ եբրայական ֆ և  
առը: Ջանդիկը այս գիրը չունի: Եթովպացին  
վերածած է զուտ եռանկիւնի մը՝ որուն նման  
կու գայ յունարէնի արդի Ռ ձեւը: Հին յու-  
նարէնը կը տարբերի ասկէ աջակողմեան սրուն-  
քին ծայրը աւելցուած թեւով մը, իսկ ձախա-  
կողմեան սրունքը երբեմն երկար է, երբեմն  
կարճ: Ցարբեր զարգացում մը կրած է պալ-  
միրականը՝ որ կը յիշեցնէ մեր Կ գիրը եւ նման  
մեր Լ-ին: Միւլէր մեր գիրը կը հանէ սեմա-  
կանէն, Մարքուարդ էսթրանկէլօ Ն-էն շրջուած  
կը կարծէ, Սարգիսեան կը գրէ հին յունական Լ  
ձեւը եւ ասկէ կը դնէ մերը: Փառնակ կը հանէ  
նոր պահլաւական ձեւէն, որ գրեթէ ուղիղ

գծիկ մ'է եւ բ-էն զանազանուելու համար  
աջակողմը ստացած է յետոյ փոքրիկ կլորակ մը,  
որով մեր գրէն շատ հեռու կը մնայ:

Խնդիր է թէ իրաւունք ունի՞նք հայ գիրը  
վերիններուն հետ համեմատելու. ձեւի կողմէն  
հակառակելու բան չկայ, բայց հնչման տարբե-  
րութիւնը կրնանք արգեօք նկատի չունենալ:  
Ասոր պատասխանը կը դժուարանամ տալ, որով-  
հետեւ և գիրը մեծ դիւրութեամբ կրնայ նաեւ  
Ղ-էն յառաջանալ՝ այլանմանութեան օրէնքով  
(հմմտ. Ը գրի մասին ըսուածները): Ղ լինելով  
աւելի թանձր և, իսկ և աւելի նուրբ, կրնար  
Ս. Մեարդը առաջինին փոխել յապաւել եւ շի-  
նել և տառը:

Այս կարծիքն ունի նաեւ Մէնէվիշեան:  
Վրացերէնը չունի և:

### Խ.

Յարութիւնեան կը համեմատէ փիւնիկ **𐤕**  
եւ բարելական **𐤕** ձեւերուն հետ, որոնք շատ  
հեռու են մեզմէ: Տաղաւարեան կը հանէ փիւ-  
նիկ **𐤕** + գրէն, որ ձեւով աւելի հեռու է եւ  
հնչմամբ ասարբեր: Չեւով հեռու են նաեւ  
արամական, մանիքէական, սոգդիական, խպտի  
եւ հին սասանեան գրերը. յոյնը չգիտէ այս  
հնչումը. քիչ մը նմանութիւն ունին պալմիրա-  
կան, սամարական եւ եթովպական այբուբեն-  
ները, բայց նմանութիւնը գրեթէ կատարեալ է  
նոր սասանեան, զենդի, էսթրանկէլօ եւ ասորա-

կան ձեւերուն մէջ: Ասոնցմէ մեր Խ-ին հասնելու համար կը պակսի միայն ձողիկը, բայց այս ձողիկն ալ արդէն կը գտնուի զանդիկ ձեւին մէջ:

Մեր քննիչներէն ոմանք արդէն դիմած են այս ուղղութեան: Kopp համեմատած է հին պրս. 𐭪 (յ) գրին հետ, որով կ'երեւայ թէ կ'ուզէր հասկնալ պՏԼ. \* X կամ զնգ. 𐭪 XV: Միւլլէր նախապէս (SWAW. 1864) սասանեան Տ կամ ՏՆ եւ զնգ. 𐭪 X ձեւերուն հետ կը համեմատէր, բայց յետոյ՝ առանձին յօդուածի մը մէջ (WZKM. 1894, 272—287, Թրգմ. ՀԱ. 1894, էջ 295) կը համեմատէ զնգ. 𐭪 կամ 𐭪 XV գրին հետ: Սարգիսեան արար. 𐭪-ին! հետ կը յիշէ նաեւ զնգ. 𐭪 X գիրը: Մարքուարդ ալ 𐭪 XV ձեւէն կը հանէ: Փառնակ կը յիշէ պարզապէս պահլաւը: Մեր կարծիքով պէտք չկայ դիմելու 𐭪 XV ձեւին, որովհետեւ ասիկա կրկին հնչիւններու գումարն է եւ հետեւաբար համապատասխան չէ մերինին: Իրանեան եւ ասորական այբուբեններու պարզ Խ ձեւը բաւական է մեր գիրը մեկնելու համար: Հայերէնին ձախակողմեան ձողիկը դժուարութիւն չի հաներ, որովհետեւ կրնայ յետոյ զարգացած ըլլալ հայ դեղագրութեան օրէնքով: Երկրորդ՝ պահլաւերէն — եւ Է գրերը նոյն ձեւն ունենալով՝ պէտք կար վերջապէս այսպիսի զանազանութիւն մը հնարելու. երրորդ՝ ինչպէս ըսինք, զանդիկն արդէն ունի ձախակողմեան սիւնը: Իսկ գրին զարգացումը կարելի է համեմատել ճիշտ Թ գրին հետ:

Վրացի <sup>Է</sup> նման է հայերէն մէկ թեւով  
Խ-ի. բայց թէ ինչէն զարգացած է տակի թեւը  
չեմ գիտեր:

Թ.

Յարութիւնեան կը հանէ հայերէն Զ կամ  
Շ գրէն. Սարգիսեան պրս. (իմա արար.) 3 թ եւ  
զնդ. շ գրէն. Յաղաւարեան արար. 3 թ  
գրէն! Ասոնք թէ՛ ձեւով եւ թէ՛ հնչումով տար-  
բեր են հայէն. Այս հնչումը կը գտնենք միայն  
սեմական լեզուներուն մէջ. Ասոնցմէ փիւնիկ,  
արամեական, պալմիրական, սամարական, մանի-  
քեան եւ սոգդիական ձեւերը բնաւ նմանու-  
թիւն չունին մեր գրին հետ: Ընդհակառակը  
շատ նման են եթովպական, էսթրանկէլո եւ ա-  
սորի ձեւերը, որոնք հայերէն տառագարձու-  
թեան մէջ ալ կը համապատասխանեն մեր  
3 գրին. օր. ձեւերը = ասոր. *šedagya*, Բ-բ-բ-  
ձ-ն = *Bardaišān*, Բ-բ-բ-բ-բ = *Baršaumā*,  
Շ-բ-բ-բ-բ = *Šwāḇ*, Շ-բ-բ = *Šūr*, Շ-բ-բ-բ =  
*Šōpnā*, Մ-բ-բ-բ-բ = *Mešrīm*, Մ-բ-բ-բ = *Nšrīm*,  
Բ-բ-բ-բ = *būšmā*, ձ-բ-բ-բ = *šəššalā*, ձ-բ-բ-բ =  
*šaθrā*, ձ-բ = *šaumā*, ձ-բ-բ = *šəiārā*, Ն-բ-բ-բ-  
բ = *məšaləyānə*, Ն-բ-բ-բ-բ = *našraya* (այս բառե-  
րուն վրայ տես չիւպշ. Arm. Gramm. էջ 290  
— 312): Եթովպական ձեւը տեղի հեռաւորու-  
թեան պատճառով գուրս մնալով համեմատու-  
թենէ, կը մնան ասորերէնն ու էսթրանկէլոն,  
որոնք էապէս տարբերութիւն չունին իրարմէ:  
Ասոնցմէ կը դնեն նաեւ Լակարա եւ Մարբուարդ:

Այս գրերը հայերէնի անցած ժամանակ՝ տակի կիսատ կլորակը ամբողջացած եւ աջակողմեան շրջագծէն գուրս երկարած է, այնպէս որ ձեւացած է երկրորդ թեւ մը, գրեթէ բոլորգիր Թ-ին նման: Յետոյ այս ձեւը երկաթագրի գեղագրութեան օրէնքներով ձեւաւորուած եւ յառաջ եկած է Ծ: Այս ձեւափոխութիւնը համապատասխան է ճիշտ Թ գրին ձեւափոխութեան, ուր նոյնպէս պՏԼ գրին տակի կիսատ կլորակը ամբողջացած եւ աջակողմեան շրջագծէն գուրս երկարած է թեւի մը պէս:

Վրացերէն ձեւը գոյուար է մեկնել, փռնիկերէն, արամերէն եւ պալմիրական ձեւերուն բաւական նման է. բայց գլուխը գոց է, եւ աւելորդ թեւ մը ունի: Աւելի յաջող կ'ըլլար եթովպականին համեմատութիւնը, բայց չեմ կարծեր որ այս գրերը իբր օրինակ ծառայած ըլլան վրացերէնին: Ուստի նորէն պիտի դիմենք ասորականին: Իմ կարծիքով յաջորդական փոփոխութեանց շարքը կարելի է դնել հետեւեւալ ձեւով: Ասորիին տակի կիսատ կլորակը, ինչպէս հայերէնի մէջ, նոյնպէս հոս ալ աշխատուած է ամբողջացնել. բայց մինչդեռ հայուն մէջ աջակողմեան շրջագծին մէջէն ճեղքած անցած է, հոս ընդհակառակը ուղղակի վեր բարձրացած է, որով յառաջացած է գրեթէ В-ի նման ձեւ մը, որ յետոյ դարձած է Բ: Նկատենք որ հոս ալ ձեւափոխութեան նմանութիւն մը կայ Զ Ժ գրին հետ, ուր նոյնպէս պՏԼ. Ս գրին տակի կիսատ կլորակը փոխանակ հայուն պէս շրջա-

գիծը ճեղքել անցնելու, ուղիղ դէպի վեր  
բարձրացած է:

#### Կ.

Այս գրին ծագումը որոնելէ առաջ՝ պէտք  
է որոշել անոր համապատասխան գրերը օտար  
այբուբեններուն մէջ:

Յունարէնի մէջ այս կարգի երկու գիր  
ունինք՝ *K* եւ *X*, որոնցմէ առաջինը տառադար-  
ձուած է *Քիտ* և, երկրորդը +: Իրանեանները  
ունին մէկ գիր (*չ*), որ տառադարձուած է մեծ  
մասամբ և եւ երբեմն *ժիայն* + (*շաաը յեաին*):  
Սեմականները ունին նոյնպէս երկու գիր, մէկը  
*kaf* (երբ. *כ*, ասոր. *ܟ*, արաբ. *ك*) եւ *միւսը*  
*qof* (երբ. *ק*, ասոր. *ܩ*, արաբ. *ق*). *kaf*-ը հայե-  
րէն տառադարձուած է +, *qof*-ը և. հմմա.  
*Բրբիշոյ* = ասոր. *Brīṣō*, *Դկղաթ* = *Deḡlaṭ*,  
*Կամիշու* = *Qāmīšo*, *Կաինայ* = *Qatīnā*,  
*աքսոր* = *aksoria*, *կաթսայ* = *qadsā*, *կատու* =  
*qatū*, *կարկուրեայ* = *qarqūrā*, *կաքաւ* = *qaq-*  
*qəwā*, *կեղեւ* = *qəlāfā*, *կուզ* = *qūsā*, *կաաւ* =  
*qettau*, *ղեկ* = *ləqā*, *մաքս* = *maṣṣā*, *մարակ* =  
*matrəqā*, *շուկայ* = *šūqā*, *սակուր* = *seqūrā*,  
*փրկեմ* = *pəraq*, *քահանայ* = *kāhnā*, *քաղ-*  
*գեայ* = *ḡaldāyā*, *քակքար* = *kakkarā*, *քա-*  
*րող* = *kārōsā*, *քնար* = *kennārā*, *քուշնայ* =  
*kušnā*, *քուսիթայ* = *kōsiṭā*, *քուրայ* = *kūrā*,  
*քուրմ* = *kumrā*, *քրորէ* = *kəwā*, *քրքում* =  
*kurkəmā*, *քօշ* = *kəwšā* (տես չիւպշ. Arm.  
Gramm., էջ 286—320):

Ընդունելով որ յն. *K* ծագած է փիւնիկեան *kaf*-էն, իսկ *X* ծագած է փիւնիկեան *qof*-էն, կը գտնենք նոյնպիսի հակառակութիւն մը, ինչ որ գաած էինք թ. եւ *S* գրերուն մէջ. յն. *K* = հայ. *կ*, յն. *K* = սեմ. *כ*, բայց սեմ. *כ* = հայ. *+*, իսկ յն. *X* = հայ. *+*, յն. *X* = սեմ. *ך*, բայց սեմ. *ך* = հայ. *ի*։

Ինչպէս թ. եւ *S* գրերուն առթիւ ըսած ենք, Մեսրոբ պէտք չունէր հետեւելու գրերու սկզբնական ծագման պատմութեան, այլ միայն անոնց հնչուփն. հետեւաբար մենք ալ մեր համեմատութեանց մէջ պէտք է որ ի նկատի ունենանք միայն ձայնական համապատասխանութիւնները, ինչպէս ըրած ենք Յուցակին մէջ։

Корр մեր գիրը կը հանէ խպտի *h* (քէյ) գրէն. Միւլլէր՝ նախ սեմական *h* ձեւէն կը հանէր, յետոյ պալմիրական *h* գրէն կը հանէ (WZKM. 1890, 284—88, Թրգմ. ՀԱ. 1891, էջ 70). Յարութիւնեան կը դնէ փիւնիկեան *h* եւ արամէական *h* ձեւէն։ Բայց այս բոլորը մեր + գրին կը համապատասխանեն եւ ո՛չ թէ *ի*-ին։ Սեմական *qof* գրին զանազան ձեւերը բոլորովին հեռու են մեզմէ, ինչպէս նաեւ զենդու պահլաւ *q* ձեւը։ Տաղաւարեան կը դնէ հայերէն *q* գրէն ձեւափոխուած, ինչ որ անյարմար կը կարծեմ։ Gardthausen, Մէնէվիշեան եւ Սարգիսեան կը հանեն յն. *K* գրին ռուսարգիր *к* ձեւէն. Մարքուարդ այս վերջինին հետ կը յիշէ նաեւ ասորի *o* գրին *q* վերջաձեւը (350/400 Թ. Յ. Բ.). չափազանց նման

է նոյնպէս հին սասանեան ի գիրը. այնպէս որ մեր կը վարանինք այս երեքէն մէկը որոշել:

Վրացերէն Կ հայերէնէն գրեթէ տարբերութիւն չունի եւ միեւնոյն վճռին կ'ենթարկուի. ուստի սխալ կը գանձմ Միւլլերի մեկնութիւնը, որով վրացի գիրը արամական Կ ձեւէն կը հանէ:

### 3.

Յարութիւնեան կը հանէ հայերէն Զ գրէն! Տաղաւարեան՝ փիւնիկ Թ գրէն, որ սակայն ի հնչումն ունի եւ հետեւաբար սխալ է համեմատել մեր գրին հետ: Միեւնոյն սխալը կը գործէ նաեւ Müller (WZKM. 11, 391), որ մեր գիրը կը հանէ սեմ. Վ գրէն, որ իբր թէ նախ գրուած է ծուռ դիրքով Զ. յետոյ տակէն կրճատուած եղած է հ եւ վերջապէս հ: Kopp եւ լակարտ խպտիերէն Շ (Տօրի) գրէն կը հանեն, բայց այս ալ ձեւով տարբեր է: Անտեղի է Սարգիսեանի յիշած արաբ! Ը ի գիրը: Ծիծաղելի է չիւնքեարպէյէնեանի մեկնութիւնը, որ կը հանէ Հայկ համաստեղութեան գլխաւոր աստղերուն դիրքէն, իբր Զ (սեմ Տաղաւ. էջ 23): Մեր դրացի ազգերու այբուբեններուն մէջ սեմական ձեւերը շատ կը տարբերին մեր գրէն. իրանեաններն են միայն՝ որ բաւական նման են մեզի: Արդէն փառնակ դրած է պահլաւէն, առանց սակայն յիշելու թէ յատկապէս որ ձեւէն: Մարքուարդ կը հանէ սասանեան Զ ձեւէն, բայց ըստ իս լաւագոյն է դնել պահլա-

ւական Շ ձեւէն, որ նոյնին տարբերակն է եւ  
աւելի լաւ կը յարմարի հայերէն չ-ին: Ասկէ  
զատ վրացի Դ Է գիրն ալ վերջինով միայն  
կրնայ մեկնուիլ եւ ոչ նախորդով: Վրացի գրին  
ձախակողմը թեքուած գլուխը կը ներկայացնէ  
մեր յիշած պահլաւ ձեւին դէպի գուրս կորա-  
ցած գլուխը. նախորդին մէջ այս գլուխը ներսն  
է եւ չի կրնար տալ վրացիին գուրս երկարած  
գլուխը:

## 2.

Յարութիւնեան կը հանէ Զ կամ Շ գրէն.  
Սարգիսեան եւ Տաղաւարեան արար. Ե գրէն.  
Լակարա խպտական Ճ (սիմա) գրէն որ յունա-  
րէնի σ « գիրն է. Մարքուարդ հայերէն Զ գրէն:  
Բայց ասոնք բոլորն ալ անյարմար են՝ հնչման  
տարբերութեան պատճառաւ: 2 հնչիւնը կը  
գտնենք միայն հապէշերէն Թ եւ արաբերէն 3  
գրերուն մէջ (վերջինը այսօր տաճկերէնի մէջ  
կը հնչուի պարզապէս շ). բայց այս երկու այ-  
բութիւնները Մեսրոբի ձեռքին տակ չկային:  
Մեզի դրացի ուրիշ որեւիցէ այբութեան մէջ  
չգտնուելով այս գիրը՝ բնական է որ Ս. Մես-  
րոբ իրմէ հնարած ըլլայ: 2 եւով ու ձայնով 2  
շատ նման է մեր Ծ գրին, ուստի կը կարծեմ  
որ ասկէ շինուած ըլլայ այլանմանութեան օրէն-  
քով: Ծ գիրը բաղկացած է օղակէ մը՝ որուն  
գլուխը ագուցուած է երկթեւ մը. 2-ի մէջ  
օղակը անփոփոխ կը մնայ եւ միայն երկթեւը  
տակն է դրուած: Մեր մեկնութիւնը աւելի կը

յարմարի, եթէ դիմենք ուղղակի Ծ գրին մօրը՝  
ասորական յ ձեւին: Ասոր գլուխը խոշորացած եւ  
ուղիղ դիրքով գրուած է (Հմմտ. Բ), իսկ տակի  
կիսաւ կլորակը ամբողջացած ժամանակ՝ փոխա-  
նակ աջակողման շրջագծին վերի կողմէն դուրս  
երկարելու, վարի կողմէն դարձած է:

Վրացերէնի մէջ ալ գրեթէ նոյն բանն է  
եղած եւ վրացերէն ժ յ գիրը հայերէն Զ-էն  
անով միայն կը տարբերի որ գլուխը կրճա-  
տուած է:

## Ղ.

Корр այս գիրը կը հանէ հին պրս. (իմա՝  
զնդ.) Ղ (γ) գրէն, Սարգիսեան արաբ. ڭ q (շաա  
կոկորդական Ղ ձայնը) կամ զնդ., ڭ g գրէն,  
որուն կը հետեւի նաեւ ڭաղաւարեան (էջ 32),  
դնելով արաբերէն ڭ-էն: Բայց երեքն ալ չա-  
րաչար կը սխալին, որովհետեւ ինչպէս յայտնի  
է, Ս. Մեսրոբի ժամանակ մեր Ղ գիրը ամենեւին  
այսօրուան հնչումը չունէր, այլ անսակ մը հաստ  
լ էր եւ կը համապատասխանէր միւս պրու-  
բեններու Ղ գրին: Միւլլէր նախ թէ՛ հայը եւ  
թէ՛ վրացին կը հանէր սեմական Ղ ձեւէն, բայց  
յետոյ հայերէն Ղ գրէն, ինչպէս կ'ընէ նաեւ  
Յարութիւնեան: Փառնակ դրած է պահլաւէն  
(բայց որ ձեւէն):

Բայց թէ՛ այս համեմատութիւնները եւ  
թէ՛ ասոնցմէ դուրս մնացած միւս բոլոր օտար  
ձեւերը յարմար չեն, որովհետեւ կամ պարզ  
եռանկիւն մը կը ներկայացնեն, կամ ձախ դար-

ձած են եւ կամ եթէ աջ դարձած են՝ զուրկ են մեր գրին ձախակողմեան թեւէն: Ասոնք կրնան առ առաւելն ծառայած ըլլալ իբր նախատիպ մեր Ղ գրին, բայց ոչ նաեւ Ղ-ին: Աւելորդ կը գտնեմ նաեւ Ծարքուարդի մեկնութիւնը, որ կը կարծէ թէ Ղ կազմուած է Լ-ի կրկնութեամբ իբր Դ, Ղ ունի լաւագոյն մեկնութիւն մը. Gardthausen, Լակարա եւ Մէնեփիշեան կը համեմատեն յունարէն Α գրին հետ. թէեւ այս ձեւը չի կրնար ապա հայերէն Ղ, բայց Gardthausen հին յունարէն ձեռագիրներու մէջ տեղ տեղ գործածուած կը գտնէ տնոր մէկ ուրիշ տարբերակը (հմտ. Wattenbach, Anleitung zur gr. Paläogr., էջ 13), որ մեր Ղ-էն տարբերութիւն չունի (տես մեծ եւ փոքր Ցուցակները):

Արացերէն **Մ** բոլորովին նոյն է հայ ձեւին հետ եւ պէտք չունի բացատրութեան:

### Ճ.

Սարգիսեան եւ Տաղաւարեան կը հանեն տրար. Շ գրէն, որ ոչ մէկ նմանութիւն ունի մեր գրին հետ: Նախ՝ կայ հնչման տարբերութիւնը (չ հին տառագարձութեամբ կը գտնայ Չ եւ արեւմտեան նոր հնչմամբ միայն ճ է). երկրորդ՝ ձեւի տարբերութիւնը (գիրը պէտք է գլխիվայր դարձնել, թեւը շրջել եւ պակաս մէկ թեւը աւելցնել). երրորդ՝ ժամանակի եւ տեղի մեծ հեռաւորութիւնը: Kopp, Klaproth եւ Լակարա կը հանեն խպտական Ճ (Janja) գրէն,

որոնց համաժիտ է նաեւ Մալխասեան: Յարու-  
թիւնեան (էջ 313—14) մէկ անգամ իրաւունք  
կու տայ Խորթ-ին եւ երկրորդ անգամ յունա-  
րէն  $X +$  տառէն կը հանէ! Բայց խպտի  $X$  ունի  $j$   
հնչումը եւ կը համապատասխանէ մեր ,ջ-ին,  
ոչ թէ ճ-ին: Մարքուարդ ալ չ'ընդունիր զայն,  
որովհետեւ Ե դարուն Հայոց ու խպտիններու  
մէջ յարաբերութիւն չկար: Սակայն Մար-  
քուարդ իր կողմէն մեկնութիւն մը չի տար այս  
գրին:

Մեր շրջակայ ազգերէն միայն իրանեան-  
ներն ունին  $\delta$  ճ գիրը, ուստի Մեսրոբ ասոնց  
միայն դիմած պիտի ըլլար: Ինչպէս Յուցակէն  
կ'երեւայ, իրանեան այբուբեններուն մէջ՝  $\delta$  ունի  
երեք ձեւ, որոնք իրարմէ շատ կը տարբերին,  
բայց այնու ամենայնիւ միեւնոյն գրին տարբե-  
րակներն են: Առաջին ակնարկով ասոնց եւ  
հայ. ճ-ի մէջ նմանութիւն չենք տեսներ. բայց  
եթէ օգնութեան առնունք վրացի ձեւը, կրնանք  
նմանութեան գծեր գտնել: Առաջին իրանեան  
ձեւը բաղկացած է երկու մասէ, թէք  $\zeta$  մասէն,  
որուն գլուխն ագուցուած է կեռ գիծ մը: Կեռ  
գիծը վրացւոյն մէջ ուղղուած է, իսկ թէք մասը  
աննշան փոփոխութիւն մը ստացած է, որ յետին  
զարգացման արդիւնք է: Հայերէնի համար  
պէտք է  $\xi$  ձեւէ մը, որուն մէջ եթէ ընդունինք  
որ վերի կորութիւնը հեռզհեռէ կըճառուած  
ըլլայ, իսկ տակի կիսատ կլորակը ամբողջանա-  
լով՝ ձախակողմեան շրջագծէն դուրս ելած ըլլայ,  
այն ժամանակ կ'ունենանք ճ գիրը: Զարգացման

նոյն երեւոյթը կը ներկայացընեն նաեւ Ժ. Ե. Ծ գրերը, մանաւանդ վերջինը, որուն մայրը՝ ասորի 3՝ իրանեան 4-ի աջ շրջուած ձեւն ունի գրեթէ։ Տակի կիսատ կլորակին ամբողջացումն ու շրջագծէն դուրս երկարիլը ընդհանուր է բուլղին։ Եթէ ասորի 1 ձեւը առած է հայերէն Ծ, նոյն զարգացմամբ իրանեան ձեւն ալ պիտի կրնար առ Ճ, որ Ծ գրէն իրապէս տարբեր չէ ձեւով։

Միւլլէր մեր գիրը հանած է սասանեան Ե ձեւէն, որ ինձ անծանօթ է։ Բայց եթէ ասիկա ուղիղ է, ուրեմն մենք ունինք միեւնոյն գրին համար չորս իրարմէ տարբեր ձեւեր, եւ այն ժամանակ գժուար չէ ենթադրել որ ասոնց հետ գտնուէին նաեւ ուրիշ միջին ձեւեր՝ որոնք աւելի նման բլլային հայերէն Ճ-ին։

## Մ.

Յարութիւնեան եւ Տաղաւարեան կը հանեն փիւնիկեան 4 գրէն, որ ամենեւին նմանութիւն չունի մեր գրին հետ։ Տաղաւարեան կը յիշէ նաեւ փիւնիկ. 7 ձեւ մը՝ որ ինձ անծանօթ է եւ նմանութեան հետք մ'ալ չունի։ Կը սխալի նաեւ Միւլլէր, երբ կը համեմատէ սեմական Ը ձեւին եւ սասանեան ու զանգիկ գրերուն հետ։ Փառնակ կը հանէ պահլաւէն, բայց չեմ գիտեր թէ ինչ նմանութիւն կրնայ նշմարուիլ ասոր հետ։ Էսթրանկէլօ, ասորի եւ միւս սեմական ձեւերն ալ չունին նմանութիւն։ Մարքուարդ կը դնէ հնագոյն եղեսական (ասորա-

կան) որ ձեւէն, որ իբր թէ դարձուած է աջ  
 եւ յետոյ գլխիվայր շրջուած է, չգիտեցելու հա-  
 մար Ո-ի հետ: Բայց չէ՞ որ այն ժամանակ ալ  
 Ս-ի հետ կը շփոթուէր: Տրուած բացատրու-  
 թեամբ կը հասնինք Ա ձեւին եւ ոչ թէ Մ-ի:  
 Մարքուարդ այս չափին վրայ աւելցնելու էր  
 նաեւ թէ Ա-ի հետ ալ չգիտեցելու համար՝  
 ծայրի թեւը վերի կողմը գրուեցաւ: Բայց այս-  
 չափ ձեւափոխութիւն չ'աւ է մէկ գրի վրայ:

Իրաւունք ունին Gardthausen, Մէնե-  
 վիշեան, Սարգիսեան եւ Մալխասեան, որոնք մեր  
 գիրը կը համեմատեն յունարէնի հետ: Սար-  
 գիսեան կը դնէ յն.  $\mu$  ձեւէն, բայց ասիկա շատ  
 յարմար չէ մեր գրին: Պէտք է առնուլ Gardt-  
 hausen-ի եւ Մէնեվիշեանի առաջարկած Ա  
 ձեւը, որ կը գործածուէր քրիստոնէական թուա-  
 կանէն առաջ եւ յետոյ, ինչպէս կը գտնենք  
 սինյայական նշանաւոր Աւետարանի ձեռագրին  
 մէջ: Յունարէնի այս ձեւէն ծագած է խպախա-  
 կան  $\mu$  ի: Այս պատճառաւ աւելորդ է Kopp-ի  
 եւ Klaproth-ի առաջարկութիւնը, որոնք մեր  
 գիրը կը հանեն խպաական այս ձեւէն: Հայե-  
 րէնի մէջ յոյն գրին աջակողմեան եւ ձախա-  
 կողմեան մասն փոխները ջնջուած են եւ ասոնց  
 տեղ աւելցուած է գլխուն վրայի կորութիւնը,  
 տարբերելու համար Ս-էն, առանց որոյ անոր  
 հետ բոլորովին նոյն պիտի ըլլար: Մարքուարդ  
 ընդունելով եզեսական ծագում, բնական է  
 հակառակ պիտի ըլլար յունարէնին, որմէ շատ  
 տարբեր կը գտնէ մեր գիրը: Բայց իր յիշած

յունարէնը *M* ձեւն ունի, որ իրօք տարբեր է ինչու չի գներ Gardthausen-ի ձեւը:

Վրացերէն ժ գիրը Միւլէր կը դնէ պահ-լաւ ւ-էն. բայց մենք ասոր հետ նմանութիւն չենք տեսներ, եւ հին սասանեան ձեւէն ծագած կը կարծենք: Զարմանալի է որ նոր վրացա-կան Յ ձեւը այնքան նման է պահլաւ ու զան-դիկ ւ-ին. բայց ասիկա զուտ պատահումներ մ'է:

### 3.

Յարութիւնեան մոռցած է նշանակել այս գրին ծագումը. Լակարս կը դնէ արամ. (ասոր.) 1 - գրէն. Սարգիսեան պրս1 (իմա արար.) ւ յ կամ զնգ. v (?) գրէն, բայց յետոյ ասկէ հրա-ժարած՝ յն. 1 գրին եւ նշանին միացումը կը դնէ (Բազմ. 1897, ապր. յաւել. էջ 6), Յաղաւարեան ալ հետեւելով Սարգիսեանի՝ կը հանէ արար. ւ յ գրէն: Հիւնքեարպէյէնտեան (տես Յաղաւ. էջ 23) Հ գրին շրջուած Զ ձեւէն կը համարէ: Gardthausen չէ նշանակած այս գրին ծագումը՝ իբր ոչ յունական:

Մեր դրացի ազգերու այբուբենին մէջ առանձին առումը մը նշանակուած չէ այս ձայնը, որ սակայն թէ՛ ասորերէնի եւ թէ՛ մա-նաւանդ պահլաւերէնի մէջ սովորական էր եւ որ մեր նախնիք առադարձած են միշտ յ գրով-որ. ասորերէն՝ *Yaunān* = Յովնան, *Yōxannān* = Յովնան, *ihūdāyā* = հրեայ, *yaxnārā* = յահար եւն. պահլաւերէն՝ *yaštan* = յազնէ, *yāsmīn* = յասմիկ, *yāvētān* = յաւիտեան,

*ayātkār* = յեակար, *Yasākert* = Յազկերա եւն  
 եւն, Ասորերէնի մէջ այս ձայնը կը նշանակուի  
 պարզապէս « ի գրով. նոյնպէս եւ պահլաւերէնի  
 մէջ « ի գրով, որ յաջորդ գրի մը հետ միացած  
 ժամանակ կը դառնայ « ձեւով կիսաշրջանակ  
 մը: Չանդիկ գրութեան մէջ ի եւ « ձայները  
 զանազանելու համար՝ առաջինն տեղ կը գոր-  
 ծածեն մէկ ի (i), երկրորդին տեղ երկու ի (u),  
 որ իբր առանձին տառ կ'ըմբռնուի եւ կամ նո-  
 րահար քս ձեւը՝ որ անշուշտ կազմուած է  
 պահլաւերէնի կցեալ « գրէն:

Ա. Մեսրոբ շրջակայ ազգերու այբուբեն-  
 ներուն մէջ առանձին ձեւ մը չգտնելով այս  
 ձայնին համար՝ փոխ առած է պհլ. « ի գիրը:  
 Բայց որովհետեւ ասիկա շատ փոքրիկ նշանախեց  
 մըն էր, ուստի հարկ համարած է կամ խո-  
 շորցնել (ինչպէս րած է վրացերէնի համար՝ Վ)  
 եւ կամ երկու անգամ իրարու վրայ դնել (ինչ-  
 պէս ըրած է հայերէնի համար՝ Յ): Այս վեր-  
 ջինը բաւական կը մօտենայ զանդիկ « y գրու-  
 թեան, ուր երկու ի-երը քովէ քով դրուած  
 են, փոխանակ վրայէ վրայ դրուելու:

Այսպէս կը մեկնէ նաեւ Մարքուարդ:

## Ն.

Յարութիւնեան կը հանէ փիւնիկեան ի  
 գրէն. այսպէս է նաեւ Տաղաւարեան: Բայց  
 փիւնիկեան ձեւը չունի մեր գրին աջակողմեան  
 դէպի վեր գարձած մասը: Նոյնը պէտք է ըսել  
 նաեւ Kopp-ի համար, որ կը հանէ եթովպա-

կան Լ և գրեն: Միւս այբուբեններէն արամականը, պալմիրականը, բաբելականը եւ սամարականը փիւնիկեանին ընկերներն են եւ նմանութիւն չունին մեր գրին հետ: Աւելի կը հեռանան էսթրանկէլօ, ասորի եւ նոր պահլաւիկ ձեւերը. վերջինը հասած է պարզապէս ուղիղ գծի մը: Չափազանց տարբեր են մանիքեական և եւ սոգդիական յ ձեւերը:

Համեմատութեան համար կը մնան յունարէն, հին սասանեան եւ զանգիկ ձեւերը:

Gardthausen. Մէնէվիշեան եւ Մալխասեան կը համեմատեն յն. N ձեւին հետ: Gardthausen նմանութիւնը այնքան պայծառ կը գտնէ, որ աւելորդ կը կարծէ բացատրութիւն տալ: Մենք այդչափ պայծառ նմանութիւն չենք տեսներ եւ նմանագոյն ձեւի մը հասնելու համար պէտք կը տեսնենք զիմելու նախաձեւին: N-ի նախաձեւն ստանալու համար՝ միջին շեղագիծը պէտք է բոլորովին վար իջեցնել, այն ատեն կը ձեւանայ 11-ի նման գիր մը: Ինչպէս փիւնիկերէն Ա Դ եւ Կ և իրարու նման բաներ էին եւ երկրորդը առաջինէն պակաս ատամով մը միայն կը տարբերէր, նոյնպէս յունարէնի մէջ ալ նախապէս 11 Դ եւ 11 Կ նման բաներ էին, եւ երկրորդը առաջինէն կը տարբերէր աջակողմեան եւ ձախակողմեան ստորին փրիկներու բացակայութեամբ: Սարգիսեանի յիշած յունարէն ձեւերուն մէջ Դ եւ Կ բնաւ չեն տարբերիր, երկուքն ալ  $\mu$  ձեւն ունին: Ս. Մեսրոբ այս երկու գրերը, ինչպէս նաեւ հայ. Ս իրարմէ տարբե-

րելու համար կրնար Ն-ի վրայ աւելընել ձա-  
խակողմեան կառուցը, ինչպէս որ Մ-ի վրայ աւել-  
ցուցեր էր աջակողմեան կառուցը:

Հայերէնին չափազանց նման է հին սա-  
սանեան է, որմէ կազմուած են զանգիկ չորս  
Ն-երէն գոնէ երկուքը, այն է ձախ շրջուած  
3 և եւ փոքրիկ յաւելուածով մը Կ և Պ: Սար-  
գիսեան արդէն յունարէնի հետ նաեւ վերջին  
զանգիկ ձեւն ալ կը յիշէ. փառնակ պահլաւ  
(իմա զնդ.) 1-էն շրջուած կը համարէ. իսկ Մար-  
քուարդ սասանեան է ձեւէն:

Ես չեմ կրնար վերջին վճիռ մը աալ եւ  
կը տատանիմ յունարէն եւ սասանեան ձեւե-  
րուն մէջանդ:

Վրացերէն Ի և հայերէն Ն-էն մեծ տար-  
բերութիւն չունի. բայց իր աջ դարձած կառու-  
ցով կարծես կը ցուցնէ որ ինչպէս իրեն, նոյն-  
պէս եւ հայ գրին համար աւելի լաւ է ընդու-  
նիլ սասանեանը:

## Ե.

Միւլէր այս գիրը կը հանէ սեմական 7  
(իմա պալմիրական 2) գրէն, որմէ կը դնէ նաեւ  
վրաց. 5! (ըսել կ'ուզէ Յ 2): Սարգիսեան կը  
հանէ արաբ! ش կամ զնդ. 4 3 ձեւէն, որուն  
ինչ ըլլալը չհասկցայ: Յարութիւնեան փիւնիկ  
w ա կամ սասանեան 22 3 ձեւէն: Տաղաւա-  
րեան փիւնիկ Բ գրէն, որ մեր 3 գրին արժէքն  
ունենալով՝ ոչ ձեւով կը յարմարի եւ ոչ

ձայնով: Սասանեան ձեւին ալ նմանութիւնը խաբուսիկ է. որովհետեւ նախ տառը պէտք է կիսել եւ առնուլ միայն կէսը. այն ալ կը համապատասխանէ մեր բոլորգիր շ-ին, որ յետին ժամանակի գործ է: Աւելորդ է խօսիլ արաբ. շ-ին վրայ: Միւս սեմական ձեւերը, ինչպէս նաեւ խպարին, իրենց եռաճիւղ մատերով շատ հեռու են մեր գրէն:

Կը մնան յունարէնը, զանդիկն ու պահլաւը:

Gardthausen, Գէնէվիշեան եւ Մալխասեան մեր գրին հետ կը համեմատեն յն. Ճ + ձեւը, որուն համաձայն էր նաեւ Հիւպշման, ինչպէս յայանած է ինձ իր գասախօսութիւններէն մէկուն մէջ: Թունարէնի մէջ, ինչպէս յայտնի է, շ ձայնը չկայ. եւ եթէ Մեսրոբ փափաքէր մեր շ-ին համազօր մը փնտռել յունական այբուբենին մէջ, պիտի ընարէր կամ  $\sigma$  եւ կամ  $\xi$  +: Առաջինը իր բնիկ պաշտօնն ունենալով, իսկ երկրորդը իբր աւելորդ տառ մնալով՝ այս վերջինը կրնար աւելի լաւ համարուիլ՝ մանաւանդ որ յոյներն ալ իրենց Ἀρταξήρ = Արտաշէր, Ἀρταξίας = Արտաշէս, Ἀρτάξατα = Արտաշատ եւն տառադարձութիւններով կը թուէին ցուցնել թէ  $\xi$  տառը կրնայ փոխանակել մեր շ ձայնը: Այս պատճառաւ է անշուշտ որ Մեսրոբ հայերէն գրերու շարքին մէջ շ գիրը զետեղած է ճիշտ հանդիսնայ յն.  $\xi$  (ս. շ-ի եւ  $\sigma$  -ի մէջտեղ):

Ճ տառը շատ բազմաշարժար ձեւ մը ունի՝ հնապէս ունէր 𐎠 ձեւը, որ յետոյ ուղղահայեացքը

կորսնցնելով՝ եղաւ Զ, բայց նաեւ երեք անջատ  
գծերը իրարու հետ միանալով՝ եղաւ վերջա-  
պէս Է, որուն հնագոյն ձեւը տեսցուցակին մէջ  
Ասիկա մեր Շ-էն մեծ տարբերութիւն չունի:

Վերոյիշեալ գիտուններուն հետ մենք ալ  
պիտի ընդունէինք այս շատ յարմարաւոր մեկ-  
նութիւնը, եթէ սակայն աւելի յարմարը  
չգտնուէր: Ասիկա է պՏ. Խ թ գիրը, որ ԹԲ  
ձայնով (մինչգեռ Է ունէր Խ հնչումը) ու Թէ  
ձեւով նոյն է հայերէն Շ-ի հետ: Յն. Է ձեւը  
հայերէն Շ-ին հասնելու համար՝ վերի երկու  
ոլորքներէն մէկը պիտի պահէր, իսկ պահլաւե-  
րէն Խ ձեւին մէջ՝ ձախակողմեան փլիկը պէտք է  
Թեւի պէս երկարել գրին գլխուն վրայ:

Մեր կարծիքը կը հաստատէ նաեւ վրացե-  
րէն Ս թ, որ աւելի գիւրութեամբ կրնայ նոյն  
պահլաւ ձեւէն ծագիլ, քան Թ է յն. Է-էն:

Մարքուարգ մեր Շ գիրը կը համեմատէ  
հին եգեսական Վ եւ Ատրպատականի մէջ հնա-  
րուած բնիկ պահլաւիկ Ե գրին հետ, որ յետ-  
հնագոյն Արշակունեաց դրամներուն եւ քանի մը  
հնագոյն սասանեան արձանագրութեանց վրայ  
կը նշմարուի:

Մենք՝ մեր եւ յիշեալ գրերուն մէջ նմա-  
նութիւն չենք տեսներ:

## Ո.

Յարութիւնեան եւ Յաղաւարեան կը հա-  
նեն փիւնիկեան Օ (‘այն) գրէն, որ սեմական-  
ներուն յատուկ կոկորդային հնչում մ’է (ա-

բար. Ե) եւ ամենեւին կապ չունի մեզի հետ: Միւլէր կը հանէ զնդ. 3 0 գրէն, բայց թէ ասիկա ինչքան տարբեր է մերինէն, պէտք չկայ բացատրելու: Մարքուարդ կը դնէ էսթրանկէլօ - կամ Հաճիապատի (պՏԼ.) 71 գրէն, որ իւր թէ ձեւափոխուեր է յն. 0 գրին կաղապարով: Բայց եթէ յն. 0 գիրն է ծառայած իբր կաղապար, ալ ինչ պէտք կայ յիշելու էսթրանկէլօն ու պաՏԼաւը:

Մեր գրին մայրն է յն. 0, ինչպէս կ'ընդունին Gardthausen, Գէնէվիշեան եւ Մալխասեան: Միւս այբուբենները արդէն զուրկ են համապատասխան ձայնաւորէն: Յունարէն տառը ձեւով ու ձայնով նոյն է մեր Ո-ին հետ: Միակ տարբերութիւնն այն է որ Ո-ին տակը բաց է, մինչդեռ յունարէնը չորս կողմէն գոց կըլորակ մ'է: Gardth. կ'ըսէ թէ յունարէնի մէջ ալ կայ կիսաբաց բերնով Օ, միայն թէ այս բացուածքը վերի կողմէն է: Gardth. կը կործէ որ այդ ձեւով բացուած Օ մը հայերէնի մէջ պիտի տար Ս, բայց որպէս զի այս ձեւը չչփութուի մեր Ս-ին հետ, բացուածքը տակի կողմէն եղած է: Այս բացատրութիւնը ուղիղ չէ: Ս. Մեսրոբ իր առջեւ բերանաբաց Օ մը ունեցած չէ, ինչպէս կը ցուցնէ ասոր միշտ օրինակութիւնն եղող վրացերէն Օ. այլ այդ բացուածքը առաջ եկած է յետոյ՝ հայերէնի մէջ եւ հայկական գեղադրութեան այն ոճէն, որուն վրայ աւելի ընդարձակ խօսեցանք վերը՝ Ա գրին առթիւ (հմմտ. P = ր, φ = փ, B = Բ):

Ո գրին բացուածքի տարրերութիւնը կասեցուցած է նաեւ Սարգիսեանը, որ՝ կարծելով նաեւ թէ հայ. - երկար ձայնաւոր է, մինչ յն. օ կարճ է, հայերէն - գիրը կը հանէ յն. երկար օ օ-էն եւ կամ ասորի օ -էն (որ ըստ վարդանազարի խեղկատակ պատմութեան՝ մեր - գիրն է)։

## 2.

Gardthausen չի խօսիր այս գրին վրայ, որովհետեւ յունական այբուբենին մէջ չկայ, Սարգիսեան կը հանէ արաբ. ع գրէն. Տաղաւարեան՝ փիւնիկեան ܐ ձեւերէն, որոնք - հնչիւնն ունենալով՝ չեն յարմարիր մեր գրին, Յարութիւնեան հայերէն օ կամ շ գրէն ձեւացած կը կարծէ։ Մեր շրջակայ այբուբեններուն մէջ միայն իրանեանն ունի շ ձայնը, բայց ասիկա ալ հայերէնի մէջ տառադարձուած է միշտ օ. (մէկ անգամ կայ պհլ. օսօճ = հայ. - - - - - չիւպշ. Arm. Gramm., էջ 112)։

Այսպէս ուրեմն 2 գիրը մնալով առանց համապատասխանութեան, պէտք է որ շինուած ըլլայ այլանմանութեան օրէնքով՝ մերձաւորագոյն հնչումէ մը։ 2-ին ամէնէն մօտիկ հնչումներն են ճ եւ օ, որոնց իրանեան ձեւերը ահա Յուդայի մէջ։ Մարքուարդ կը հանէ արշակունի գրամներուն Շ գրէն, որ պահլաւական ըհ կամ զանդիկ ր գիրն է եւ ըստ մեզ տուած է հայերէն ճ։ Այս մեկնութիւնը կրնայ ուղիղ ըլլալ, բայց աւելի նման է հայերէն օ,

որուն զենդական ձեւն է Զ՝ վերջին պարագային՝ պիտի ըսենք որ Զ-ին ծուռ ու մուռ գլուխը կանոնաւորուած եւ տակի պոչն ալ ուղղուած է:

Վրացերէն Ի չ նման է յատկապէս զանդիկ յ-ին:

Երբ բոլորգիր Ղ-էն ածանցուած է ուսսերէն Պ, ինչպէս կ'ըսեն ուսս հեղինակները: Ռուս ձեւին մէջ յապաւուած է մեր Ղ-ին պոչը, ինչպէս եղած է նաեւ ց-ի քով (տես անդ): Այսպէսով ուսսերէն Պ ստացած է զանդկերէնի շրջուած ձեւը՝ բոլորովին պատահաբար:

#### Պ.

Հայերէնը ունի երեք շրթնային պայթուցիկ բաղաձայն (բ, պ, փ). ասոնցմէ առաջինը բոլոր մեր դրացի ազգերուն մէջ ալ կը գտնուի. երկրորդ եւ երրորդ ձայներուն դէմ յունարէնի մէջ կը գտնենք π եւ φ, որոնցմէ առաջինը կանոնաւոր կերպով եւ միշտ տառադարձուած է պ, երկրորդը միշտ փ: Իրանեան լեզուներն ունին ք եւ ֆ ձայները. որոնց առաջինը կու տայ հայերէն պ եւ երկրորդը՝ փ. (հարիւրաւորներու դէմ ունինք մասնի չափ բառ, ուր պրս. ք = հայ. փ): Այս ք եւ ֆ ձայներուն համար պահ-լաւերէնն ունի մէկ գիր (ϕ), որ երբեմն ք կը կարդացուի, երբեմն ֆ: Այս շփոթութեան առջեւ առնչու համար զանդկերէնի մէջ օ յատկացուեցաւ ք ձայնին, իսկ ֆ-ի համար՝ այլանմանութեան օրէնքով հնարուեցաւ ծ ձեւը:

օթմականներն ալ ունին  $\Xi$  = ասորի  $\omega$  գիրը,  
 որ կը կարդացուի երբեմն  $\varphi$  եւ երբեմն  $f$ : Հայե-  
 րէնի մէջ ասորական փոխառութեան 16 դէպք  
 կայ, ուր կը պատահի նոյն տառը, ասոնցմէ վե-  
 ցին մէջ ասորին ունի  $f$ , հայերէնը  $\dagger$  (եփրեմ,  
 Ծովփք, շեփոր, շուփայ, սոփեր, փիլիսոփայ).  
 եօթնին մէջ ասորին  $\varphi$ , հայերէնը  $\dagger$  (շամփուր,  
 շափիւղայ, շուլփայ, սափրեմ, փեգենայ, փղշա-  
 ցի, փրկեմ). երկուքին մէջ ասորին  $\varphi$ , հայե-  
 րէնը  $\eta$  (զուպայ, պողոտայ). մէկ տեղ ալ ասո-  
 րին  $f$ , հայերէնը  $\eta$  (կուպր): Ասկէ կը հետեւի  
 որ սեմական այս գրին դէմ հայերը սովորաբար  
 կը հանեն  $\dagger$ . ուրիշ խօսքով սեմականներու  
 հնչումը աւելի  $\dagger$  կը լսուէր, քան թէ  $\eta$ : Ասոր  
 համար է որ նոյն իսկ իրանեան  $\varphi$  ձայնին գէմ  
 ասորերէն կը գտնենք  $f$ . օր. պՏԼ. *sapat* =  
 ասոր. *saftā* "կողով", հպրս. *apadāna* = ասոր.  
*āfādōnā* "սպարանք", եւայլն: Արաբացին, ինչ-  
 պէս յայտնի է, արդէն իսպառ զուրկ է  $\varphi$  ու  
 ձայնէն եւ ունի միայն  $f$   $\dagger$ :

Այս բոլորէն կը հետեւի որ հայերէն  $\eta$   
 եւ  $\dagger$  գրերու ուղիղ եւ հաստատուն համապա-  
 տասխանները պէտք է փնտռել միայն յունարէն  
 այբուբենի մէջ եւ ոչ այլուր:

Ցեսնենք հիմայ թէ ինչպէս վարուած են  
 մեր քննիչները:

Յարութիւնեան եւ Տաղաւարեան կը հա-  
 նեն փիւնիկ  $\dagger$  գրէն, Միւլէր (WZKM. 1890.  
 284—88, Թրգմ. ՀԱ. 1891, էջ 70) պաւ-  
 միրական ձեւէն, որ գէշ գրուած  $\varphi$ -ի կը նմանի

կ'ըսէ: Բայց ոչ մին եւ ոչ միւսը նման է հայերէն Պ-ին: Յարութիւնեան ունի նաեւ փիւնիկ լ ձեւը. այս ձեւը թաւական կը յիշեցնէ հայերէն Պ գիրը. ուստի փափաքելով ստուգել անոր գոյութիւնը, դիմեցի ընկերոջս Պր. Կ. Բասմաջեանի: Պր. Բասմաջեան իր նամակին մէջ (1893 յունվ. 7 Ն. ա.) կը յայտնէ որ այսպիսի ձեւ մը չէ կրցած գտնել փիւնիկերէնի մէջ: Հայերէնէն առբեր եմ նաեւ միւս սեմական ձեւերը, ինչպէս նաեւ ասորի օ եւ պՆԼ. Ս, որոնք մեր անսովեամբ արդէն չէին կրնար գործածուած ըլլալ իւր օրինակ հայ այբուբենին: Մարքուարդ կ'ըսէ թէ այս գրին ծագումը չի գիտեր. բայց միեւնոյն ժամանակ սասանեան Գ կամ եգեսական (ասորական) Ծ Ծ գրին կրկնութիւնը կը կարծէ:

Ուղիղ մեկնութիւնը կու տան Gardthausen, Մէնէվիշեան, Մալխասեան, Սարգիսեան եւ Փառնակ, որոնք Պ գիրը կը դնեն յուրարէն Ո-էն:

Ըյս գիրը յունարէնի մէջ երկու ձեւ ունեցած է. միաձիւղ (Γ) եւ երկձիւղ (Π). առաջինն շարունակութիւնն է լատինական P, որ սակայն շուտով ջնջուած է յունարէնի մէջ: Տեւական եղած է երկձիւղ Π, որ անցած է նաեւ ռուսերէնի: Հայերէն գիրն ալ յունական երկձիւղ Π-էն է:

Երկձիւղ Π-ն ալ քանի մը ձեւ ունեցած է, որոնցմէ երեքը տե՛ս մեր Յուցական մէջ: Սարգիսեան մեր գիրը կը հանէ Յուցական վերջին ձեւէն, ենթադրելով որ ասոր գագաթին

վրայ երկարող հորիզոնական գծին աջ ծայրը քիչ մ'աւելի վար կախուած է, որով ձեւացած է մեր Պ-ին երրորդ երկար սիւնը: Բայց այն ատեն ընդունելու է նաեւ որ յունարէն գրին առաջին եւ երկրորդ սիւներն ալ կարճըցած են մեր մէջ, եւ հորիզոնական գծին ձախ ծայրը ջնջուած է: Ասիկա քիչ մը երկար է: Լաւագոյն մեկնութիւնը կ'անարկէ Gardthausen, որ մատնանիշ կ'ընէ Յուցակին երկրորդ ձեւը: Ասոր սկիզբը գտնուած փոքրիկ ուորքը հայերէնի մէջ քիչ մը վարէն առնուելով՝ աւելի երկարած է, որով յառաջ եկած են մեր գրին երեք ձիւղերը, ինչպէս է նաեւ յունարէն բոլորգիր գրութեան մէջ: Չախակողման թելին երկարացման համար կարելի է համեմատել նաեւ Թ եւ Խ:

Վրացերէն Ս ու կը թուի թէ ծագած ըլլայ պՏԼ. Ե-էն, ինչպէս կը դնէ նաեւ Միւլլեր. հմմտ. վրաց. Յ = պՏԼ. Ե ձ:

## 2.

Յարութիւնեան կը հանէ հայերէն Ջ գրէն: Սարգիսեան զնգ. ԼԴ գրէն, որ թէեւ ձեւով նման է մեր գրին, բայց ձայնով աարբեր ըլլալով՝ հոս գործ չունի: Յազաւարեան կը հանէ պրս. Շ գրէն, որ Թ—Ժ գարուն ձեւացած է արաբերէն Շ գրէն՝ այլանմանութեան օրէնքով, եւ կը համապատասխանէ մեր Գ գրին: Gardthausen (որուն հետեւելով նաեւ Մէնէվիշեան) կը համեմատէ յն. Գ + գրին հետ. բայց այս գիրը Ս. Մեսրոբի ժամանակ արգէն շատոնց

ընջուած էր եւ մերինէն շատ տարբեր հնչում ունենալով՝ բնաւ չկրնար համեմատութեան առնուիլ: Մարքուարդ կը հրաժարի այս գրին մեկնութիւն մը տալէ: Միւլլեր նախապէս կը դնէր սեմ. Y Y (!) ձեւէն, ասիկա իրր թէ ուղիղ գիրքով տուած է վրացերէն Ե Յ (!), իսկ գլխիվայր դառնալով՝ եղած է հայերէն Զ, Բայց յետոյ ասկէ հրաժարած՝ կը դնէ զնդ. Կ յ գրէն (WZKM. 8, 285, Թրգմ. ՀԱ. 1894, 295), փառնակ կը դնէ պահլաւէն, բայց չեմ հասկնար թէ ինչ կը հասկնայ պահլաւ ըսելով: Պահլաւերէնի մէջ Ս ձայնին համար յատուկ նշան մը չկայ. ասոր տեղ կը գործածուի օ օ, օ օ, օ օ եւ ասոր կցեալ օ ձեւը:

Մեր շրջակայ ազգերու տյրուբններուն մէջ երկու տեղ միայն կրնանք գտնել հայերէնի համապատասխան գիր մը. առաջինն է եթովպացերէն ը յ ձեւը, որ տեղի հեռաւորութեան պատճառով մէկ կողմ կը մնայ, երկրորդն է զանդիկ ը յ, որուն հետ Միւլլեր կը համեմատէ հայերէն գիրը: Ասիկա թէ՛ ձեւով եւ թէ՛ ձայնով նոյն է հայերէնի հետ: Հայերէնի մէջ գրին գլուխը քիչ մը գոցուած է, իսկ պոչը գրուած է երկաթագրի հայկական այն ոճով՝ որ կը գտնենք նաեւ Զ, Զ, Զ, Ծ գրերուն մէջ: Բոլորգրի մէջ այս ձեւը փոխուած է եւ պոչը գարձած է միայն աջ. հմմտ. զ, չ, ջ, շ:

Վրացերէն Ծ ը նոյն ծագումն ունի. իր ծումուած ձեւը համապատասխան է մեր Զ-ին ծուռ ու մուռ գլխին:

## Ռ.

Այս գրին ծագումը քննելու ժամանակ ի նկատի առնելու է նաեւ Ր գիրը՝ Օտար ազգերը մեր այս երկու գրերուն գէմ մէկ ՚ միայն ունին։ Այբուբենի շարքին մէջ թէեւ այս ր-ին գէմ հայերէն կը համապատասխանէ Ռ, բայց տառագարձութեան մէջ մեծագոյն մասամբ գրուած է Ր։ Գրերու ձեւէն գաւելով՝ օտար այբուբեններու ր գիրը կապուած է մեր Ր-ին հետ եւ ոչ թէ Ռ-ին, ինչպէս որ քիչ մը վարը պիտի տեսնենք։ Հայերէն Ր ծագած է յունարէն Ρ գրէն։ Gardthausen, Լակարտ եւ Մէնէ-վիշեան թէեւ Ռ կը հանեն յունարէն Ρ-էն, բայց ասիկա յայանի կերպով սխալ է։ Gardthausen իր ըսածն ապացուցանելու համար՝ կը յիշէ գոթական ՂՂ ձեւը, զոր նաեւ Մէնէ-վիշեան գրած է իր ցանկին մէջ, ասոր հետ կարելի էր նաեւ յիշել լատինական R, որ շատ նման է մեր Ռ-ին. բայց թէ մին եւ թէ միւսը նշանակութիւն չունին մեզի համար, որովհետեւ չեն կրնար իւր օրինակ ծառայած ըլլալ Ս. Մես-րոբին. պէտք էր հին յունարէնի մէջ գտնել այդպիսի երկճիւղ ձեւ մը։ Այս տեսակետով շատ հետաքրքրական է Սարգիսեանի ցանկին մէջ յիշուած յունարէն Ω (r) ձեւը, որուն սակայն այլուր հանդիպած չեմ։ Այս ձեւին պակասութիւնն այն է որ ձախակողմը աւելորդ թեւ մը ունի՝ որ հայուն մէջ չկայ, իսկ աջակողմեան թեւը վարէն առնուած է, մինչդեռ հայուն քով՝ մէջտեղէն է։ Նոյն իսկ Սարգիսեան, որ իր ցու-

ցակին մէջ կը յիշէ այս յոյն ձեւը, իր բացա-  
արութեանց ժամանակ Ռ գիրը կը գնէ յն. Թ  
կամ սորի ; տառն՝ մէկ քովի վրայ պառկեցը-  
նելով զանոնք : Յարութիւնեան կը հանէ Ո գրէն !

Մեր դրացի ազգերու այբուբեններուն մէջ  
մէկ գիր մը կայ միայն, որ ըստ կարելոյն մօտ  
է հայ գրին. այս է հին սասանեան արձանա-  
գրութեանց Ղ ձեւը : Ասիկա, ինչպէս ցուցակէն  
կ'երեւայ, երկու արժէք ունէր *ր* եւ *յ*. հմմտ.  
նաեւ պՏԼ. 1, որ կ'արժէ *ր* եւ *յ* : Այսպիսի ա-  
նորոշ գրի մը դիմել եւ զայն իւր կաղապար  
գործածել անշուշտ չպիտի ուզէր Ս. Մես-  
րօբ, եթէ հանդամանքները քիչ մը տարբեր  
ըլլային :

Հայերէն այբուբենին համար պէտք էր  
հնարել *R*, *R* եւ *V* գրերը : Քանի որ *ռ*-ն մէկ  
այբուբենի մէջ ալ կրկին *R* չկար, ուստի Մես-  
րօբ մտածեց մէկ *ր* առնել յունարէնէ, միւսը  
առնել ուրիշ այբուբենէ մը, այն է ասորիէն  
կամ իրանեանէն : Ասորի ; կամ էսթրանկէլա *𐭪*  
փոքր նշանախեց մ'էր, որ կէտով միայն կը զա-  
նազանուէր ; կամ *𐭫* *դ* գրէն. ուստի աւելի լաւ  
համարեցաւ Մեսրօբ՝ իրանեան Ղ ձեւը : Բայց  
*V* գրին համար ալ պէտք էր դիմել այս երկու  
այբուբեններէն մէկուն, որովհետեւ յունարէնի  
մէջ *V* գիրն ալ կը պակսէր : Ասորի *𐭬* եւ  
էսթրանկէլա *𐭮* (*V*) գրերը նոյնպէս փոքրիկ աա-  
ռեր էին եւ հայերէնի մէջ ձեւով պիտի շփո-  
թուէին Ո գրին հետ. ուստի նորէն պէտք էր դի-  
մել իրանեաններուն : Բայց, իրանեաններուն մէջ

ալ, ինչպէս գիտենք, ի եւ ծ միեւնոյն առաւ-  
 ձեւն ունէին: Այլ եւս ուրիշ ելք չէր  
 մնար Մեսրոբին, բայց եթէ այս երկու գրե-  
 րուն մէջ մացնել փոքրիկ ձեւափոխութիւն մը  
 եւ այսպէսով հնարել հայերէն Ռ եւ Վ  
 գրերը:

Ռ գիրը շինելու համար Մեսրոբ Սասա-  
 նեան գրին ձախ սիւնը երկարեց մինչեւ վար  
 (գեղադրական ձեւ մը՝ որ կը նշմարենք նաեւ  
 Թ, իս եւ Պ գրերուն մէջ), իսկ պոչը բարձրա-  
 ցուց վեր: Իսկ Վ շինելու համար՝ պոչը աեղը  
 պահեց, բայց ձախ սիւնը մէջաեղը բերաւ: Այս-  
 պէս՝ Ղ = Ռ — Վ:

Բոլոր այս մեր ըսածները կ'անդրադառ-  
 նան նաեւ վրացերէնի մէջ, ուր ունինք յ — եւ  
 Դ — Վ գրերը: Այս երկուքը միեւնոյն հիմնական  
 կաղապարն ունին, եւ կը ծագին նոյնպէս սա-  
 սանեան Ղ ձեւէն. երկուքին մէջ ալ միջին եր-  
 կար սիւնը եւ աջակողմեան թեւը ճիշտ միեւ-  
 նոյնն են. միայն ձախակողմեան թեւը մէկուն մէջ  
 վերն է, միւսին մէջ վարն է:

Տաղաւարեան եւ Մարքուարդ մեր գիրը կը  
 մեկնեն այլանմանութեան օրէնքով, իբր Ր գրին  
 կրկնութեամբը ձեւացած (Ր), Ասիկա կրնար  
 հաւանական ըլլալ, որովհետեւ նախ՝ ձեւի կողմէ  
 հակառակութիւն չկայ, երկրորդ որ Ռ գիրը  
 իրօք շատ անգամներ դրուած է կրկին Բ-ին փո-  
 խարէն: Բայց մեր կարծիքով Սասանեան ձեւը  
 աւելի պատշաճ է, որուն իբր ապացոյց կը ծա-  
 ոայէ նաեւ վրացին:

## Ս.

Յարութիւնեան կը հանէ փիւնիկ <sup>34</sup> եւ արամական <sup>1</sup> (ս) ձեւերէն, որոնք նման չեն մերին: Տաղաւարեան կը զնէ փիւնիկ w գրէն, որ շ հնչիւնն ունենալով՝ չի յարմարիր հոս: Տարբեր են նաեւ ասորին եւ միւս սեմական ձեւերը: Համեմատութեան համար կը մնան իրանեան եւ յոյն ձեւերը:

Մարքուարդ մեր գիրը կը հանէ հին սասանեան արձանագրութեանց որ ձեւէն, զոր իբր թէ Մեսրոբ գլխավայր շրջած է՝ Ո գրէն զանազանելու համար: Մեր գրին շատ աւելի նման է առաջին սասանեան, պահլաւական եւ զանգիկ <sup>2</sup> ձեւը, որուն հետ համեմատած են արդէն Kopp, Միւլլեր եւ Փառնակ:

Gartdhausen, Մէնէվիշեան եւ Սարգիսեան մեր գիրը կը հանեն յունարէն Σ-էն: Թէեւ այս ձեւը մեր գրէն շատ տարբեր է, բայց հնագոյն ձեւերը շատ աւելի նման են, ինչպէս կը տեսնուի ցուցակին մէջ: Սարգիսեան կը յիշէ երկու ձեւ. առաջինն է Γ ձեւը, զոր մէկ քովի վրայ պառկեցնելով կը շինէ հայերէն Ս: Ասիկա տնայարմար կը կարծեմ: Աւելի լաւ է Սարգիսեանի երկրորդ ձեւը, որ մեր ցուցակին ալ երկրորդ ձեւն է եւ հայերէն ւյ-ի նման բան մ'է: Ասոր երկու ծայրի ոլորքները կը ճառելով՝ կը ձեւանայ հայերէն Ս:

Gardthausen եւ Մէնէվիշեան կը հանեն յն. C ձեւէն, որ պարզ կիսալուսին մ'է եւ որմէ ձեւացած են նաեւ լատինական C եւ ռուսական

C գրերը: Հայերէնի մէջ, կ'ըսէ Gardthausen, գրին համաչափ ձեւ մը տալու համար՝ աւելցուած է երկրորդ գիծը եւ այսպէսով յառաջ եկած է Ս: Վրացերէն լ-ի մէջ այս յաւելուածական ձիւղը կ'իսով չափ միայն բարձրացած է:

Բացի Gardthausen-ի եւ Սարգիսեանի յիշած ձեւերէն, հայերէնի յարմար կու գայ նաեւ յունարէնի երրորդ ձեւը (ζ), որ ուրիշ բան չէ, բայց եթէ ծուռ դիրքով գրուած Ս:

Այսպէսով մեր գիրը կը տատանի երկու մեկնութեանց մէջ (իրանեան « կամ յունական Σ) եւ վճռի կը սպասէ: Այս վճիռը տալու համար նպաստաւոր ըլլայ թերեւս վրացի լ գիրը, որ իր ձեւով աւելի մօտիկ ըլլալով յունարէն C-ին, քան թէ սասանեան «-ին, կրնայ յունական ծագումը ապացուցանել:

Միւլլէր վրացի լ գիրը կը հանէր նախ արամական Լ ձեւէն (որ թէ՛ ձեւով եւ թէ՛ հնչումով [L] տարրեր է), իսկ յետոյ սասանեան « ձեւէն:

#### Վ.

Յարութիւնեան եւ Տաղաւարեան կը հանեն փիւնիկեան Մ Վ (վ) գրէն: Լակարտ խպտական Ս (ֆէի) գրէն, որ թեեւ ձեւով բաւական նման է, բայց ձայնով տարբեր է, եւ կը համապատասխանէ մեր Փ-ին: Kopp հին պրս. Մ գրէն կը հանէ, որ սակայն գոյութիւն չունի<sup>1</sup>:

<sup>1</sup> Եթէ զեդ. Ե գիրը կ'ուզէ հասկնալ, ապա վրոյսէն քիչ մը վարը:

Սարգիսեան պրս! 3 եւ զնդ. 5 գրէն, բայց յե-  
տոյ ասկէ հրաժարած՝ կը դնէ իբր միացում  
յն. օս երկբարբառին երկու գրերուն (Բազմ.  
1897, ապր. յաւել. էջ 5բ), Gardthansen  
չէ յիշած այս գրին ծագումը: Մէնէվիշեան կը  
հանէ հին յունական այբուբենի վ ձեւէն, չին  
յունարէնի մէջ կար Բ (վ) գիրը, որ ծագած  
էր փիւնիկեան վավ տառէն, եւ կը բռնէր այ-  
բուբենի գրերուն մէջ վեցերորդ տեղը: Այս  
գրէն ձեւացած է լատինական Բ (Ֆ), Ժամանակ  
անցնելով՝ յունարէնի մէջէն այս ձայնը ջնջուե-  
ցաւ, հետեւաբար եւ գիրն ալ այբուբենէն  
վերցաւ: Միայն Թուահամարի կարգը չխան-  
գարելու համար պահեցին այս գիրը գլխակար-  
գութեանց մէջ 5 ձեւով եւ 6րդ նշանակու-  
թեամբ: Դ դարուն արգէն Բ շատոնց ջնջուած  
էր, հետեւաբար Մեսրոբ այս գիրը բնաւ աչքի  
առջեւ ունեցած չէ: — Մարքուարդ մեր գիրը  
հայ. Ի գրէն կրկնուած կը կարծէ: — Մեր գրէն  
շատ տարբեր են ասոր. օ, պհլ. 1, ինչպէս եւ  
միւսները. այնպէս որ չեն կրնար իբր աղբիւր  
ծառայած ըլլալ:

Անցնինք զանդկերէնին: Չանդկերէնը ունի  
երեք տեսակ V (ն » ڤ). ասոնցմէ առաջինը կը  
գործածուի միայն բառասկիզբը, երկրորդը կազ-  
մուած է 1 ու գրին կրկնութեամբ եւ կը գոր-  
ծածուի բառամէջը, երրորդը նախորդներէն  
տարբեր հնչում մ'ունի, որ արդի տառագար-  
ձութեամբ կը նշանակուի ڤ, Հայերէնի մէջ ալ  
ճիշտ նոյնպէս է. բառասկիզբն ունինք ڤ, բառի

մէջ — եւ ձայնաւորէ յետոյ — Զանգիկ ք  
հայերէն ին համապատասխանն է եւ ձեւով  
ալ բաւական նման է։ Մենք պիտի ընդունէինք  
այս գիրը, եթէ չըլլար հին սասանեան Ղ ձեւը,  
որ չափազանց նման է մեր գրին եւ անշան փո-  
փոխութեան մը պէտք ունի՝ հայերէն ի գառ-  
նալու համար։

Թէ ինչ ձեւով կատարուած է այս փոփո-  
խութիւնը, արդէն բացատրած ենք Ռ գրին առ-  
թիւ եւ հոս կրկնելու պէտք չկայ։

Միւլէր վրացերէն Պ (v) կը հանէ արա-  
մական Ղ (v) գրէն. աջակողմեան թեւը դրուած  
է կ'ըսէ, Պ է գրէն զանաղանելու համար։

### Յ .

Վերը՝ Թ գրին վրայ խօսելու ժամանակ  
ցոյց առինք թէ որոնք են մեր Տ գրին համա-  
պատասխանող օտար գրերը։ Տեսնենք հիմայ թէ  
ինչ համեմատութիւններ եղած են քննիչներուն  
կողմէ։

Միւլէր կը դնէ սեմական Մ Ռ ձեւէն,  
Յարութիւնեան փիւնիկեան Մ ձեւէն, իսկ Տա-  
ղաւարեան փիւնիկեան + ձեւէն. ասոնք բոլորը  
մեր Թ գրին կը համապատասխանեն եւ հոս  
գործ չունին. թող որ ձեւով ալ արգէն նմա-  
նութիւն չունին մեր Տ գրին հետ։ Տաղաւարեան  
կը յիշէ նաեւ փիւնիկեան Շ գիր մը, որ գտեր է  
Ph. Bergerի նշանաւոր գործին մէջ (էջ 126)։  
Այս ձեւը շատ նման է հայերէնի. ուստի փա-  
փաքելով ստուգել անոր գոյութիւնը, դիմեցի

ընկերոջս Պր. Կ. Բասմաջեանի: Պր. Բասմաջեան  
կը գրէ ինձ թէ յիշեալ տեղը նոյնպիսի տառ  
մը գոյութիւն չունի: Kopp չիւն պրս. (զնդ.  
ըսել կ'ուզէ) Ե գրէն կը հանէ, որ արդի յու-  
նարէնի Թ գրին թլուատ հնչումն ունի եւ չի  
յարմարիր մեր Տ-ին: Gardthausen եւ Կէնէ-  
վիշեան կը հանեն յունարէն Դ գրէն, որմէ իբր  
թէ նախ ձեւացած է Դ. յետոյ համաչափու-  
թիւնը պահելու համար՝ վերին աջակողմեան  
թեւը դրուած է նաեւ վարը՝ ձախակողմը: Բայց  
այս մեկնութիւնը, ինչպէս կը տեսնուի, բաւա-  
կան քաջքշուկ է: Աւելի յարմար էր Սար-  
գիսեանի յիշած յունարէն ձեւը, ինչպէս կը  
տեսնուի մեր ցուցակին մէջ. բայց ասոր ալ  
թեւերը հայերէնին հակադիր շարքն ունին:  
Այսպէս են նաեւ պալմիրական եւ ասորական  
ձեւերը: Սոգդիական ձեւը բաւական կը նմանէր  
եթէ երկու անջատ մասերէ բաղկացած չըլլար,  
եւ միւս կողմէ եթէ ուրիշ որ եւ իցէ հայերէն  
գիր այս այբուբենէն ծագած ըլլար:

Մեր գրին լաւագոյն նմանութիւնը կը  
գտնենք չին սասանեան ձեւերուն մէջ: Ասոնք  
երեք տարբերակներ կը ներկայացնեն մեզի, ինչ-  
պէս կը տեսնուի մեր ցուցակէն: Տ դիրը յառ-  
կապէս նման է վերջին ձեւին, որ հայերէնի մէջ  
աւելի գեղեցկացած ու կանոնաւորուած է: Սա-  
սանեան ձեւին նորագոյն վիճակը կը ներկայաց-  
նեն պՏը. եւ զնդ. Բ, որ ըստ Սարգիսեանի իբր  
օրինակ ծառայած է Ս. Մեսրոբին: Այս ենթա-  
դրութիւնն անտեղի է: Մարքուարդ ալ մեզի

պէս մեկնած է, բայց իր մէջ բերած սասանեան գիրը Խ ձեւն ունի: Կը յիշէ նաեւ ասորական Ե գիրը, որ ոչ միայն ձեւով նման չէ հայերէն Տ-ին, այլ եւ հնչմամբ կը համապատասխանէ մեր Թ գրին: Արդէն Մարքուարդ ալ քիչ մը վերն այս գիրը համարած էր մեր Թ-ին մայրը, հետեւաբար Տ-ի քով յիշեցն աւելորդ էր:

Վրացերէն  $\text{P} \rightarrow$  Ծագած է նմանապէս սասանեանէն. ասոր համար թերեւս իբր օրինակ ծառայած ըլլայ ցուցակին առաջին ձեւը, որուն տակը, ուղիղ գիծ մը աւելցուած է. այս գիծը մեր Տ-ին ձախակողմ թեքուող պոչին կը համապատասխանէ:

Միւլլէր վրացերէն գիրը կը համեմատէր արամական  $\text{P} (\text{t})$  ձեւին հետ:

## Բ.

Այս գիրը Kopp հին պրս., իսկ փառնակ պՏԼ.  $\text{P}$  գրէն կը հանեն. բայց այսպիսի տառ մը գոյութիւն չունի: Թերեւս կ'ուզեն ըսել պՏԼ. եւ զնգ.  $\text{P}$  գիրը, որ գրեթէ ուղիղ գիծ մ'է՝ ձախակողմ դարձած եւ թեւէն զուրկ: Յարու թիւնեան կը հանէ փիւնիկեան  $\text{P}$  ձեւէն, Յաղաւարեան փիւնիկ  $\text{A} \triangleright \text{P}$  ձեւերէն: Gardt-hausen չի յիշեր այս գիրը, Ուղիղ մեկնու թիւնը կու տայ Մէնէվիշեան, որ կը համեմատէ յն.  $\text{P}$  գրին հետ: Այս գրին գոց բերանը հայերէնի մէջ բացուած է՝ մեր գեղադարութեան օրէնքներուն համաձայն. հմմտ.  $\text{B} = \text{P}$ ,  $\text{P} = \text{P}$ ,  $\text{O} = \text{P}$ : Մէնէվիշեան իր ցուցակին մէջ կը յիշէ

նաեւ յունական *P*-ի բերանաբաց ձեւ մը: Սարգիսեան ալ յունարէնի կողմնակից է. բայց ասոր հետ կը դնէ նաեւ պոս! (իմա արաբ.) Եւ որմէ շրջուած կը կարծէ մեր գիրը: Մարքուարգ յունական *P*-ին հակառակ է, չեմ գիտեր ինչո՞ւ, եւ հայ գիրը կը հանէ պհլ. Եւ կամ հին ասորական Եւ ձեւէն, որ սակայն ձեւափոխուած կը դնէ յն. *P* գրին օրինակով: Եթէ յն. *P* իբր օրինակ պիտի ծառայէր, ալ ինչ պէտք կար պահլաւին կամ ասորիին:

Մեր գրին յն. *P*-էն, ծագելու հանգամանքները տես նաեւ Ռ գրին մէջ:

### 8.

Kopp կը հանէ եթովպական *ጸ* գրէն. Թարութիւնեան փիւնիկ Վ, արամական Վ, պալմիրական Վ եւ եթովպական *ጸ* գրերէն, որոնք նոր հնչմամբ միայն մեր ց-ին կը հասնին, իսկ Մեսրոբեան դարուն կը համապատասխանէին մեր Ծ գրին (աես այս գիրը): Այս պատճառով համեմատութիւնը անյաջող է թէ՛ ձեւի եւ թէ՛ հնչումի կողմէ: Սարգիսեան եւ Տաղաւարեան կը հանեն ասոր. Եւ գրէն, որուն համար նոյն հնչական դժուարութիւնը կայ: Այսպէս է նաեւ Մարքուարգ:

Ըստ իս Ս. Մեսրոբ այս գիրը կազմած է այլանմանութեան օրէնքով՝ մեր Ծ գրէն: Այս գրին հիմնական մասն էր տակի կըրուկը, զոր երկու անգամ իրարու վրայ դրած է, ինչպէս

ըրած էր Յ գրին համար՝ վրացերէնը կաղ-  
մուած է դարձեալ նոյն կլորակէն, բայց միայն  
մէկ անգամ դրուած (ինչպէս Շ, գրին մէջ) եւ  
քովէն թեւ մը ստացած:

Ըստ ռուս հեղինակներու, հայերէն բո-  
լորգիր ց-էն ձեւացած է ռուսերէն Է գիրը,  
որուն մէջ յապաւուած է մեր գրին տակի պոչը  
(հմմտ. Է = 9):

## Ի.

Յարութիւնեան կը հանէ հայերէն Լ գրէն:  
Տաղաւարեան (էջ 33) կը դնէ հայ. վ գրէն.  
ըսելով թէ - «թէ հնչմամբ եւ թէ ձեւով  
առաջնոյն կէսն է»: Միւլէր, Լակարտ, Gardt-  
hausen, Մէնէվիշեան, Մալխասեան եւ Մար-  
քուարդ յաջող կերպով կը հանեն յն. Ի գրէն,  
որ հայ տառադարձութեամբ միշտ - է: Երկու-  
քին կատարեալ նմանութիւնը տեսնելու համար՝  
պէտք է աչքի առջեւ ունենալ հին յունական Ի  
ձեւը, որ մերինէն ոչ մէկ բանով կը տարբերի:  
Սարգիսեան ալ կը դնէ յունարէն Ի-էն, բայց  
այնպիսի ձեւէ մը՝ որ բնաւ նման չէ հայուն՝ իր  
ձախ դարձած եւ հակադիր գիրքով: Այս ձեւը  
սակայն կու աայ ճիշտ վրացերէն Վ -:

Ո- հնչման համար Ս. Մեսրոբ հետեւած  
է ուղղակի յունարէնին, ասոր համեմատ գրե-  
լով - = յն. ՍՍ, վրաց. ՕՎ: Աւելի յետոյ  
վրացիք իմաստուն գտնուած են այս երկու տա-  
ռերը միախառնելով ստեղծել ֆ գիրը, որով

նմանը մեր մէջ դժբախտաբար տեղի ունեցած չէ:

Միւլլէր՝ որ նախապէս Ի գրին համար յունական ծագում կ'ընդունէր, 1893-ին (նամակ Տաղաւարեանին, Ծագումն հայ տառից, էջ 19) կը յարի փիւնիկեան ծագման. իբր թէ Ի կազմուած է փիւնիկ Օ (կոկորդական 'այն հնչումը) գրէն եւ նախապէս ունեցած է Ի-, -- հնչումները: Տարի մը յետոյ՝ ասկէ ալ հրաժարած՝ կ'անցնի լանդկերէնի եւ կ'ենթադրէ՝ որ, ինչպէս բոլոր հայ ձայնաւորները, նոյնպէս եւ Ի՝ զանդկական այբուրենէն առնուած է եւ շինուած է զնդ. յ -- (երկար) ձայնաւորէն: Իրմէ առաջ այս կարծիքն ունեցած էր նաեւ Սարգիսեան, որ կ'ըսէ թէ Ս. Մեսրոպ հայ գիրը յն. Ի-էն հնարած ժամանակ՝ աչքի առջեւ ունեցած է նաեւ զնդ. յիշեալ գիրը:

### Փ.

Բոլոր քննիչներն ալ կը հանեն յունական Փ գրէն. միայն Տաղաւարեանն է որ նոյն գիրը կը դնէ յն. փ + գրէն. սակայն կ'երեւայ որ ասիկա տպագրական սխալ մ'է: Են. Փ հայերէնի անցած ժամանակ՝ նախապէս տուած է Փ ձեւը, առանց փոփոխութեան. բայց յետոյ հայ գեղադրութեան սովորական օրէնքով՝ երկու կողմի կ'ըր թեւերուն ընդմէջ բացուած է, մէկը վերի կողմէն, միւսը վարի կողմէն, որով յառաջացած է փ ձեւը: Վարցերէնի մէջ (Փ) այս բացումը տեղի ունեցած չէ, ինչպէս է նաեւ

$Q = O = N$ : Միայն թէ վրացերէնի մէջ գրին նեցուկը վերէն կրճատուած է, մինչդեռ հայերէնի մէջ ամբողջ է:

Յոյն գրին արտասանութիւնը (իբր  $\phi$ ) բնաւ դժուարութիւն չի յարուցաներ, որովհետեւ Ս. Մեսրոբի ժամանակ հայերը (ինչպէս հիմայ Ղարաբաղցիք) անընդունակ ըլլալով  $\phi$  ձայնը արտասանել, օտար ազգերու  $\phi$  ձայնը  $\phi$  կը լսէին: Ասոր համար է որ բոլոր օտարազգի  $\phi$ -երը տառագարձուած են  $\phi$  գրով:

Իրանեան լեզուներն ալ ունին  $\phi$ , որ զենդիայբուբենին մէջ  $\phi$  ձեւն ունի, իսկ պահլաւական գրութեան մէջ առանձին ձեւ մը չունենալով՝ կը գործածուի Ս յ: Այս երկուքը, ինչպէս նաեւ բոլոր միւս այբուբեններու համապատասխան գրերը, մեր ձեւէն հեռու կը մնան:

### Ք.

Կ գրին վրայ խօսելու ժամանակ ցոյց տուինք արդէն թէ որոնք են մեր Ք գրին համապատասխան օտար գրերը: Ըստ այսմ կը սխալին Յարութիւնեան, Տաղաւարեան եւ Միւլլէր, երբ առաջինները այս գիրը կը հանեն փիւնիկ-արամական Ք գրէն, իսկ վերջինը սեմական Ք գրէն: Այս գրերը կը համապատասխանեն մեր Կ-ին եւ գործ չունին հոս: Միւս բոլոր քննիչները (Լակարտ, Մէնէվիշեան, Սարգիսեան, Փառնակ, Մարքուարդ) Ք գիրը կը դնեն յն. X ձեւէն: Մինչեւ անգամ Միւլլէր նախապէս այս

կարծիքն ունէր (1864), որ յետոյ փոխելով՝  
դրաւ սեմական Ք-էն, սակայն ընդունելով  
հանգերձ որ կրած է յն. X ձեւին ազդեցու-  
թիւնը:

Յունարէն գրին նախնական ձեւը արդէն  
կը տեսնուի մեր ցուցակին մէջ. այս գիրը քիչ  
մը աւելի ուղիղ կանգնեցնելով կ'ունենանք հայ  
ձեւը: Սարգիսեան կը դնէ ցուցակին երրորդ  
ձեւէն: Ամէն պարագայի մէջ շատ ուղիղ է  
Մարքուարդի այն նկատողութիւնը, որով դիտել  
կու տայ թէ յունարէնի ծուռ գծերը հայերէնի  
մէջ ուղիղ դիրքով դրուած են. հմմտ. յն. Վ =  
Ի կամ Ի: Այսպէս եղած է նաեւ ք:

Ք-ի այս շատ պարզ մեկնութեան քով  
աւելորդ կը դառնամ Gardthausen-ի այն մեկ-  
նութիւնը, որով Ք-ի ծագումը տառախաղ մը  
կը կարծէ եւ կը դնէ յունարէն **Ϡ** ձեւէն, որ  
Քրիստոսի բազմաթիւ համաուօտագրութիւն-  
ներէն մէկն է յունարէնի մէջ: Մեր բարեպաշտ  
հայրերը թոյլ չէին տար իրենց այսպիսի սրբա-  
զան անուններու հետ խաղեր ընել:

Վրացերէն Փ կը բռնէ յունարէնի եւ  
հայերէնի մէջտեղը. կը պակսի միայն գլխին  
կորութիւնը՝ որ յունարէնի մէջ ալ ար-  
դէն փոքր բան մ'ըլլալով՝ յետոյ քնջուեցաւ  
(հմմտ. X):

19. Ամփոփելով մինչեւ հիմայ ըսուած-  
ները, կը տեսնենք որ հայերէն 36 գրերու ծա-  
գումը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

|                        |                       |
|------------------------|-----------------------|
| Ա = յն. A կամ իրան. ա. | Ղ = յն. A.            |
| Բ = յն. B.             | Ճ = սաս. Ջ.           |
| Գ = յն. Γ.             | Մ = յն. M.            |
| Դ = յն. Δ.             | Ծ = պՏԼ. յ.           |
| Ե = յն. E.             | Ն = յն. N կամ սաս. Ն. |
| Զ = յն. Z.             | Շ = պՏԼ. ֆ.           |
| Է = յն. H.             | Ո = յն. O.            |
| Ը = հայ. է.            | Չ = հայ. Չ կամ սաս.   |
| Թ = յն. θ.             | Տ (Ջ).                |
| Ժ = պՏԼ. օ.            | Պ = յն. Π.            |
| Ի = յն. I.             | Ջ = զնդ. Ջ.           |
| Լ = հայ. Ղ կամ         | Ռ = սաս. Ղ.           |
| սաս. Լ.                | Ս = յն. Σ կամ         |
| Խ = պՏԼ. ա կամ         | իրան. ա.              |
| սասոր. ա.              | Վ = սաս. Ղ.           |
| Ծ = սասոր. յ.          | Տ = սաս. Յ.           |
| Կ = յն. K կամ սասոր.   | Ր = յն. P.            |
| կ կամ սաս. կ.          | Ց = հայ. Ծ.           |
| Հ = պՏԼ. Հ.            | Ի = յն. Υ.            |
| Չ = հայ. Ծ կամ         | Փ = յն. Φ.            |
| սասոր. .               | Ք = յն. X.            |

Ըստ այսմ հայերէն գրերը մեծագոյն մասամբ կը ծագին յունարէնէ, քանի մը հատը իրանեանէն, փոքր բան մը ասորական (ծ, խ? կ? ձ?), քանի մը հատ ալ հայերէնի մէջ ձեւացած են այլանմանութեան օրէնքով (է, Ղ? ձ? չ? ց?):

Ե. ՄԻՐԻՔԻՆԻ ԳՐԻՐՈՒՄ ԳԵՂԵՍԻՆԻ ԿՈՒՆԵՐԵՐԸ:

20. Այսօրուստի հայերէն գրիտու շարքը *Անյն է հնին* հետ: 21. Ս. Մարտի որ այրուքնին հետեւած է հայերէն գրիտու դաստիարակում մէջ: 22. Վրացիներն այրուքնին մէջ իմը դրուծում հետեւած է:

20. Թեեւ կորիւնի եւ փարպեցւոյն վկայութեամբ գիտենք թէ հայերէն գրերու շարքը Ս. Մարտի գործն է, (եւ անդ վաղվաղակի նշանակեալ անուանեալ եւ ԿՐԻՔԻՆԻ յորինէր սիղոբայիւք եւ կապօք. կոթ. էջ 10. Երանելին Մաշթոց հանդիպեցուցանէր զհայերէն արձու-թայսն ըստ կարգման սիլովբայիցն Յունաց. փարպ.) բայց պէտք է ստուգել թէ արգեօք Ս. Մարտի գործ շարքը անսխալօրէն մնաց եւ թէ մեր այսօրուան գրերու դասաւորութիւնը նոյնն է ինչ որ Ե դարուն:

Ասիկա ստուգելու համար երկու անուղղակի վկայութիւն ունինք: Առաջինը Վոմիտաս կաթողիկոսի Անյն+ ԿՐԻՔԻՆԻ շարահանն է, երկրորդը Դաւթակ քերթողի ողբը՝ Աղուանից քուանշիր իշխանին մահուան վրայ: Երկուքն ալ գրուած են այբուբենական կարգով եւ կը ներկայացնեն ճիշտ այն կարգը որ ունի մեր այրուքները այսօր: Յիշեալ գրութիւնները գրուած ըլլալով Ե դարուն, կը ցուցնեն որ մեր այբուբենի այժմեան շարքը նոյն էր նաեւ Ե դարուն:

Աւելի հին շրջանի մասին վկայութիւն կրնայինք դնել ուղղակի Ե դարու մատենագրութեանց մէջ յիշուած թուականներու եւ գլուխներու թուահամարի միջոցով: Բայց ինչ



Հին իրանեան այբուբեններու դասաւորութիւնը յայտնի չէ։ Նոր գիտուններն իրանեան այբուբենները շարելու ժամանակ՝ կը հետեւին հնդկական այբուբենի դասաւորութեան, որ զուտ ձայնախօսական է. նախ կու գան ձայնաւորները, յետոյ՝ երկբարբառները, այնուհետեւ բազմաձայնները, որոնք շարուած են հնչող գործարաններու շարքին համեմատ. այսպէս՝ նախ շրթնայինները (բ, ք, պ, փ), յետոյ առաջնականները, լեզուայինները, քմականները, կոկորդականները, նայերը եւն։ Սակայն իրանեան այս դասաւորութենէն խաբուելու չէ, որովհետեւ բոլորովին նոր բան է եւ յատուկ միայն Եւրոպացի գիտուններուն։ Հին իրանեան այբուբենի շարքը պէտք է կարծել որ նոյն էր սեմական այբուբենին հետ, քանի որ անկէ ծագած է եւ իր տառաձեւերով ալ նման է։ Այն քանի մը գրերը որ աւելցած էին իրանեան այբուբենին վըպ (ժ, յ, ճ, ջ, -), կրնային միւս գրերուն մէջերը դասաւորուած ըլլալ։

Պարզ համեմատութիւն մը սեմական, յոյն եւ հայ այբուբեններու, կը ցուցնէ թէ հայ տառերը չունին բնաւ սեմականին կարգը, որ թէեւ սկիզբէն համաձայն է մերինին, սակայն շուտով կը շեղի հ, լ, ր, ի տառերով եւ աւելի հետոն՝ - տառէն յետոյ՝ բոլորովին կը խանգարուի։ Յունարէնը սակայն քայլ առ քայլ համաձայն է մեր այբուբենին, որ կը հեռանայ անկէ միմիայն իր գերազանց ճոխութեան պատճառով։ Յաւելուածական տառերն անցնելէ

յետոյ՝ դասաւորութեան նոյնութիւնը կը շարունակուի մինչեւ +, ասոր յաջորդող յունարէն բառով գրերը չկան հայերէնի մէջ:

Ընդ ամենը 15 դիր ունինք՝ որմէ զուրկ է յունարէն այբուբենը. այդ գրերն են մեր այբուբենական կարգով՝

Ը, Ժ, Լ, Խ, Ժ, Կ, Յ, Ժ, Ե, Զ, Է, Ը, Թ, Դ, Ե:

Այս գրերը տեղաւորելու համար՝ երկու միջոցի կրնար դիմել Ս. Մեսրոբ. այն է՝ աւելցնել զանոնք + գրէն յետոյ՝ իբրեւ առանձին խումբ, եւ կամ ներմուծել միւս տառերուն շարքին մէջ: Մեսրոբ առաջին միջոցին գիմած է վրացերէնի համար, իսկ երկրորդին՝ հայերէնի համար:

Այս ներմուծելի գրերն ալ կարելի էր երկու ձեւով դասաւորել. առաջին՝ գրերը շարելով առանց մասնաւոր դիտումի կամ նպատակի, երկրորդ՝ հետեւելով իրանական այբուբենին՝ ուր կը գտնուէր արդէն մեր տառերուն մէկ մասը (ինչ. Ժ, Ե, Զ, Է, Ը, -): Դժբախտաբար իրանական այբուբենին շարքն անծանօթ ըլլալով մեզի՝ չենք կրնար այս խնդրին լուծումը տալ:

Ը գրին տեղը որոշած է Է տառը՝ որմէ անուցուած է: Շ գիրը դրուած է Է գրին դէմը այն պատճառով որ պարզեցինք վերը:

22. Վրացերէն այբուբենին շարքը հետեւեալ ձեւով է (սեւ Մառի Լազերէն քերականութեան սկիզբը դրուած տախտակը):

ա, բ, գ, դ, ե, լ, զ, է, թ, ի, կ,  
 լ (= L), մ, ն, յ, ո, պ, ժ, ռ, ս, տ, ւ, փ,  
 ք, շ, շ', շ', շ', ց, ձ, ծ, ճ, խ, խ', չ, հ, հ':

Համեմատելով սեմական եւ յունական  
 այբուբեններուն շարքին հետ, կը տեսնենք որ  
 վրացի տառերն ալ մերիններուն նման կը հե-  
 տելին յունական այբուբենի շարքին: Վրացե-  
 րէնն ունի 16 գիր՝ որ կը պակսին յունական  
 այբուբենին մէջ. հայերէն այբուբենի ոճին հա-  
 կառակ՝ այս յաւելուածական գրերէն 13-ը զն-  
 տեղուած են այբուբենին վերջը, միայն երեք գիր  
 (լ, յ, ժ)՝ հայերէն այբուբենի ոճով ներմու-  
 ծուած են նախորդ գրերուն շարքը:

Այս ներմուծումը սակայն անխորհուրդ եւ  
 պատահական բան մը չէ: Ինչպէս գիտենք, շատ  
 հին յունական այբուբենն ունէր F եւ Q գրերը,  
 որոնցմէ առաջինը կը գտնուէր Ե գրէն յետոյ,  
 իսկ երկրորդը՝ Ղ գրէն յետոյ: Ասկէ զատ՝ յոյն  
 այբուբենին մէջ կայ Զ ասուը՝ որ ինչպէս հայե-  
 րէնի, նոյնպէս եւ վրացերէնի մէջ չկայ: Բոլոր  
 այս երեք գրերուն տեղ դրուած է մէկ մէկ  
 վրացական տառ. F-ին տեղ դրուած է լ, որ  
 սեմական այբուբենին մէջ ալ նոյն տեղը կը  
 բռնէր. Զ-ին տեղ դրուած է յ, իսկ Q-ին տեղ  
 դրուած է ժ: Այս ներմուծումը, թերեւս անոր  
 ըլլայ՝ որ վրացի գրերուն թուական արժէքը  
 յունականին հետ նոյն ըլլայ, ինչպէս կը նկատ-  
 է զարդհասուզէն, մինչդեռ հայերէնի մէջ տար-  
 բեր է:

Միւս յաւելուածական տառերուն շարքին մէջ, ուր չկայ հայերէնի հետ համապատասխանութիւն, կ'երեւայ թէ ի նկատի առնուած է ձայնասօսական շարքը, որով իրարու քով դրուած են շ, շ' — ց, ց, շ — ի, ի' — հ, հ' :

## Զ. ՄԵՐՔԵՆԻ ԳՐԵՐՈՒ ՆՆԵՐԸ:

23. Մեսրոբեան գրերու հիմնն ևս անուանուի:  
 24. Մեր ջրհսկայ ուղղորտ գրերու անուանուի:  
 25. Հայն ևս Վրացի գրերու անուանուի թիւում ծագումով:

23. Մեսրոբեան գրերու անուն մասին մեր ունեցած վկայութիւնները մինչեւ և դար կը հասնին: Այս դարէն ունինք չորս զրի անուն. Համարեաց թէ գրիցէ զիւնն միայն եւ զ— եւ զէ առանց ձայնաւորացն. կիւրղ. աղ. մեկն. արրծ. քրիստոսին եւ Աստուծոյ անունով, զիւնն (կամ զիւնն) վերադիր եգ. Ոսկ. կփես. ժը: Աւելի բաղմամբիւ են յաջորդ դարերէն վկայութիւններ. Որպէս զայք առ Կէ, եւ զԼայ եւ զԼայ առ Կէ-ր, եւ զիւնն առ Է, եւ զԼայ առ Է. Խոր. Ա. Բ. Չէ-րն ի Ղէ փոխեցին եւ զիւնն ի Կէ. Շիր. տպ. Պատկ. էջ 18. Ես եմ այք եւ ես եմ Կէ. Յայա. ա. 8. Խոսր. անձ. կոշիւր Աբրամ, յետոյ Աբրամ, տառի այքին կրկնեցելոյ. Փիլ. Իմ. եւ լին. գ. 43. Յուցանէ չորս գիրս՝ Լայ, Է, Է, Է. Բ. Սոկր. գ. 19. Վեց անկեամբք յանկաւորեալ քառիւք ձայնաւորօք՝ այիւ, հիւիւ, այիւ, Էիւ. իսկ երկու բաղաձայնիւք՝ Լայիւ,



վերոյիշեալ վկայութեանց մէջ յիշուած են մեր այբուբենի բոլոր գրերուն անունները: Թեթեւ համեմատութիւն մը կը ցուցնէ որ այս անունները բոլորովին նոյն են ներկային հետ: Փոքրիկ տարբերութիւններ կը ներկայացնեն միայն Ե, Ի, Զ տառերը: Ը գիրը այսօր կը կոչուի ԸՆ, քիչ մը հին սերունդը կը կոչէր ԷՆ. վերի օրինակներուն մէջ կը գտնենք ԸՆ եւ ԷՆ ձեւերը: Ի տառը այսօր ԻՆ անունն ունի, հիներուն մէջ կը գործածուի ԻՆ, ինչպէս ունի նաեւ Շնորհալին: Ն տառը այսօր կը կոչուի Նո, վերի օրինակներուն մէջ ունի Նոյ ձեւը: Միւսները անփոփոխ կը մնան եւ անտարակուսելի է որ Ս. Մեսրոբի հնարած անուններն են:

24. Քննելու համար թէ ինչ ծագում ունին մեր 36 գրերու անունները, պէտք է նախ տեսնել մեր շրջակայ ազգերու այբուբենի անունները:

Ահաւասիկ ասոնց համեմատական տախտակը.

հայ. վրաց. սեմական. յուն. եթովպ. խալտի արաբ.

| Ա | այբ | ան  | ալէֆ,<br>ալաֆ | ալֆա  | ալֆ   | ալֆա                  | ալֆ   |
|---|-----|-----|---------------|-------|-------|-----------------------|-------|
| Բ | բեն | բան | բէթ           | բէա   | բէտ   | —                     | բէ    |
| Գ | գիմ | գան | գիմէլ         | գամմա | գէմէլ | գամմա                 | (չիմ) |
| Դ | դա  | դան | դալէթ         | դելտա | դենտ  | դալդա,<br>դաս,<br>դէյ | դալ   |

1 Հաւաստարապէս գործածական են Դո, Դոյ, Լո, Լոյ գրութիւնները:

հայ. վրաց. սեմական. յուն. հիթովակ. իսլամի արաբ.

|   |      |      |         |        |        |         |        |
|---|------|------|---------|--------|--------|---------|--------|
| Ե | Ել   | Են   | —       | Եփփլան | —      | էյ      | —      |
| Ջ | զա   | զեն  | զային   | զէտա   | զայ    | զիդ     | զէ     |
| Է | է    | —    | —       | էտա    | —      | —       | —      |
| Ը | ըթ   | —    | —       | —      | —      | —       | —      |
| Թ | թոյ  | թան  | թաւ     | թէտա   | թաւ է  | թիդա    | թէ     |
| Ժ | ժէ   | ժան  | —       | —      | —      | —       | —      |
| Ի | ինի  | ին   | ինդ     | ինտա   | ինաման | ինուդա  | հէ     |
| Լ | լիւն | —    | —       | —      | —      | —       | —      |
| Խ | խէ   | խան  | խէթ     | —      | խաուա  | խի. խէի | հա, իք |
| Ծ | ծա   | ծիլ  | ծադէ,   | —      | ծադէ   | —       | ծադ    |
|   |      |      | ծադէք   |        |        |         |        |
| Կ | կեն  | կան  | կփ      | կապա   | կափ    | կաբուա  | կաֆ    |
| Հ | հա   | հան, | հէ      | —      | հոյ    | հիդա,   | հէ     |
|   |      | հէ   |         |        |        | հօրի    |        |
| Ձ | ձա   | ձիլ  | —       | —      | ձապա   | —       | ձալ    |
| Ղ | ղա   | ղա   | ղաք     | ղամբդա | ղավէ   | ղադա    | ղամ    |
| Ճ | ճէ   | ճար  | —       | —      | —      | —       | —      |
| Մ | մեն  | ման  | մէմ     | միւ    | մայ    | մի      | միմ    |
| Յ | յի   | հիւ  | —       | —      | —      | —       | —      |
| Ն | նա   | նար  | նու     | նիւ    | նախա   | նի      | նու    |
| Շ | շա   | շին  | շին     | —      | շաուա  | շէյ     | շին    |
| Ո | ո    | օն   | —       | օ      | —      | օ       | —      |
| Չ | չա   | չին  | —       | —      | —      | —       | —      |
| Պ | պէ   | պար  | —       | պի     | պայա,  | պի      | —      |
|   |      |      |         |        | պա     |         |        |
| Ջ | ջէ   | ջան  | —       | —      | —      | ջանջա   | ջիմ    |
| Ռ | ռա   | ռէ   | ռէլ     | ռօ     | ռէտա   | ռօ      | ռէ     |
| Ս | սէ   | սան  | սամէր,  | սիդմա  | սաուա  | սիդմա,  | սին    |
|   |      |      | սէմբաու |        |        | սիմա, օ |        |
| Վ | վիւ  | վին  | վաւ     | —      | վաւ    | վիդա    | վաւ    |
| Տ | տիւն | տար  | տէթ     | տաւ    | տայա   | —       | տլ     |
| Բ | բէ   | —    | —       | —      | —      | —       | —      |



Այս ընդհանուր օրէնքէն հետացած չի կրնար ըլլալ նաեւ հայերէնը:

Հայերէն գրերու անունները կը բաժնուին հետեւեալ հինգ խմբերուն.

1. Դ-, Ղ-, Զ-, Յ-, Ը-, Զ-, --.
2. Է, Ժ, Ի, Կ, Դ, Ը, Է, Ը, Ժ.
3. Ե, Ը, Է, Ը.
4. Բ, Գ, Դ.
5. Լ-, Խ-, Ծ-, Ծ-<sup>1</sup>.

Առանձին կը մնան այբ, գէտ, էն, Ղ-տ, Ն- (նոյ), վե-, եւ, ին (ին), յէ եւ զէ-ր:

Վրացերէն գրերը կը բաժնուին 6 օթը խմբի.

1. Ը, Ը, Է.
2. Է, Բ-, Գ-, Ը-, Է-, Դ-, Ե-, Զ-, Է-, Ը-, Ը-, Ը-, Ը-.
3. Է, Ը.
4. Ը, Ը, Ը, Ը.
5. Դ-, Է.
6. Է-, Ը-, Ը-, Ը-, Ը-, Ը-, Ը-.
7. Ը-, Ը-.

Առանձին կը մնան Ը-, Ը-, Ը-, Ը-.

Ինչպէս կը տեսնուի, կատարեալ նոյնու-  
թիւն մը հայ եւ օտարաղգի գրերու անունա-

<sup>1</sup> Աղայեան (Խուրճ 1890, էջ 1589) հէ-ն անունը կը մտնէ Է-ն < Է-ն, այսինքն վե-ն (ն յօգուլ). բայց Է-ն, Դ-ն Է-ն կը ցուցնեն որ այսպիսի մտնումը ինչ մը անտեղի է:

կողովական մէջ՝ գրեթէ չկայ, Այս կողմէ ամենէն յաջողակները հետեւեալներն են.

1. Այբ. — նման կը հնչէ թէ յունական — լէֆ—ին եւ թէ սեմական —լէֆ—ին (հայ տառագարձութեամբ —լէֆ—, —լէֆ—). մեր բառն անշուշտ անցած է —լէֆ եւ —յէֆ ձեւերէն (հմտ. եթովպ. —լէֆ), իսկ ի փոխուած է ք-ի՝ յաջորդքէն գրին անունէն ազդուելով:

2. Գէհ. — ասոր հետ գրեթէ նոյն են յն. Գահ— եւ մանաւանդ սեմական Գէհ (արաբ. Գէհ կամ Զէհ). հայերէնը կրնայ գալ միայն սեմականէն՝ ի ձայնաւորին պատճառաւ՝ որով գէմ յոյնը ունի —:

3. Է. — թէեւ կը համապատասխանէ յն. է֊ (η) գրին, սակայն անունով նոյն է յն. է— է֊էլ֊ի (հմտ. է— է֊էլ֊) հետ:

4. Ըբ կամ Էբ. — ինչպէս ձեւով եւ կարգով յարմարցուած է հայերէն է—ին, նոյնպէս ալ անունով շինուած է է գրին համապատասխան յն. է֊֊էն (η):

5. Դ֊֊. — կրնայ գալ թէ սեմական լ֊֊էրէն եւ թէ յն. Լ֊֊֊էն:

6. Մէն. — չի կրնար ծագիլ յն. մ֊ (mu) ձեւէն. աւելի մ֊տիկ է սեմական մ֊֊, որուն վերջատառը միայն փոխուած է:

7. Ն֊֊. — եթէ նկատի չունենանք հնագոյն ն֊ ձեւը, կրնայ շինուած ըլլալ յունական ն֊֊ (nu) կամ սեմական ն֊֊֊էն՝ քնքելով վերջատառը:

8. Ո (գրուած նաեւ ոյ. հին ժամանակ կը կարդացուէր օ). — սեմական այբուբենին մէջ չկայ. յոյներն ունէին երկու տեսակ օ (օ օրօր օ եւ օ օրօր մեծ օ). մեր բառը ուղղակի ասկէ փոխ առնուած է:

9. Պէ. — նոյն է սեմական փէ-ին հետ, որ երբեմն նաեւ տառադարձուած է ոյ. յունարէնն ունի ոյ:

10. Վէ- կամ վէլ. — կը պակսի յունական այբուբենին մէջ. կու գայ սեմական վէ-էն:

Վրացերէն գրերու անուանակոչութեան մէջ նմանութիւնը աւելի քիչ է. հոս կայ միայն շ տառը՝ որ թէ վրացերէնի եւ թէ սեմականին մէջ կը կոչուի շէ: Կրնանք յիշել նաեւ շէ, որ մտ է սեմական շ-ին անուան: Ընդհակառակը հայերէնն անուններու հետ կայ բաւական մեծ նմանութիւն. համտ.

| վրաց. | հայ.    |
|-------|---------|
| բ-ն   | բէն     |
| գ-ն   | գէն     |
| լ-ն   | լն, լն  |
| կ-ն   | կեն     |
| ս-ն   | սէն     |
| ւ-ն   | ւ-ն, րէ |
| ռ-ն   | ռիւն    |
| տ-ն   | տէն     |
| ն-ն   | ն-      |
| շ-ն   | շէ.     |

(Ոյ տ համեմատութեանց վրայ տես նաեւ Müller, SWAW 137, էջ 6).

Ի նկատի ունենալով այս բոլորը, կը տեսնենք որ գրերու անուանակոչութեան մէջ դեր խաղացած են թէ՛ սեմական եւ թէ՛ յուսական անուանները: Ս. Մեսրոբ օգտուելով թէ՛ մէկէն եւ թէ՛ միւսէն, ընտրելով անոնց մէջէն իրեն աւելի յարմար երեւցածները, փոքրիկ փոփոխութիւն մը մացնելով անոնց մէջ՝ կազմած է իր յօրինած գրերուն անունները: Այս անուանակոչութեան մէջ Ս. Մեսրոբ աշխատած է յատկապէս կարճ, միավանկ, դիւրահնչիւն անուաններ ստեղծել. այս պատճառաւ կրճատած ու համառօտած է յոյն ու սեմական գրերու ծանր անունները: Ինչպէս կը անունուի վերի ցուցակէն, յուսական գրերը առհասարակ երկավանկ անուաններ ունին (ալֆա, փէտա, ֆաֆա, դէլա, լաֆդա եւն). շատ տարբեր չեն նաեւ սեմական անուանները (համա, ալֆ, ֆէֆէ, քալէ, լաֆ, շաֆէ, սաֆ). Ս. Մեսրոբ ասոնք բոլոր փոխած է. ֆաֆա, ֆէֆէ շինած է ֆէֆ. լաֆդա, լաֆէ շինած է դաֆ եւն:

Յոյն եւ ասորի այբուբեններէն դուրս կայ նաեւ իրանեան այբուբենի ազգեցութիւնը. բայց այս այբուբենին անուանակոչութիւնը անծանօթ ըլլալով մեզի, անկարելի է որոշել ազգեցութեան չափը: Շատ կարելի է որ այն փոփոխութիւնները՝ որ մենք վերագրեցինք Ս. Մեսրոբին՝ հայերէն գրերու անուանակոչութեան մէջ, գտնուէին նոյն իսկ իրանեան այբուբենին մէջ, որմէ ուղղակի օգտուած պիտի ըլլար Ս. Մեսրոբ:

## Է. ՄԵՐ-ՂԵՆ ԳՐԵՐԻՆ ԸՆԴՈՒՆ ԼՈՒ ՄԵԺԵՐ:

26. Լճիսարհիս մէջ ճիւղ լեզու մը: 27. Իմջ որ ըսինք լեզուներու համար առհասարակ: 28. Հայերէն ալ-բուրճիի դասաւորութիւնը: 29. Դիւնաւիտութիւնը: 30. Օտար լեզուներէ տաւադարձութիւնը յայտնելը՝ հայերէնի մէջ:

26. Աշխարհիս մէջ չկայ լեզու մը՝ որուն ձայնական գրութիւնը շարունակ անփոփոխ մնացած ըլլայ: Եթէ այսպէս եղած ըլլար, այն ժամանակ ձեւացած պիտի չըլլային աշխարհիս հազարաւոր լեզուները եւ միայն մայր լեզուն պիտի թագաւորէր: Մեռեալ, այսինքն այլ եւս չխօսուող լեզուներն են միայն՝ որ կը մնան գրքերու մէջ՝ այնպէս ինչպէս էին. կենդանի, խօսակցական լեզուն շարունակ պիտի փոփոխուի: Այս է լեզուի կեանքը:

Այբուբենները հնարուած են այն ժամանակ՝ երբ լեզուն հասած էր որոշ ձայնական ձեւափոխութեան: Եւ հնարուող այբուբենի մը առաջին եւ վերջին պայմանն է լինել խօսուող լեզուին հայելին, այն է ըստ կարելոյն լրիւ պարունակել այն բոլոր ձայները՝ որոնք կը գտնուին նոյն լեզուին մէջ, գրելու համար այն՝ ինչ որ կը խօսուի:

Ժամանակ անցնելով լեզուն կը փոխուի. ձայնները կը շրջուին ուրիշ ձայներու. օրինակի համար օձ կը դառնայ ը, ը, օ, օ եւն. Ե ձայնը կամաց կամաց - կը դառնայ, ց ձայնը Ժ կը դառնայ եւն եւն. եւ այս բանը տեղի կ'ունենայ

առանց խօսողին գիտութեան ու կամքին, որովհետեւ բնութեան գործն է եւ մարդը կարող չէ անոր ընթացքը կասեցնել:

Բայց այսուրեւն՝ որ ժամանակ մը հնարուած էր, բնական է կը մնայ այնպէս ինչպէս կար: Տառերն ալ իրենց ձեւերը փոխելու չէին: Մարդը որ կը շարունակէ իր այսուրեւնը գործածել, իր տառերուն կու տայ աստիճանաբար փոփոխուող այն հնչիւնը՝ որուն հասեր է իր լեզուն: Օրինակի համար՝ ենթագրենք թէ ՚ն հնչիւնը հազար տարուան մէջ դառնայ –. ասիկա անշուշտ մէկ անգամէն պիտի չըլլայ, այսինքն հազար տարի շարունակ մնայ ՚ն եւ անժիջապէս որ հազարը լրացաւ՝ մարդիկ սկսին արտասանել –: Այլ անցած պիտի ըլլայ հնչման զանազան անցողական շրջաններէ, որոնցմէ իւրաքանչիւրը միւսէն անգգալի տարրերութիւն մը միայն ունի: Հազար տարուան մէջ որոշենք հինգ կէտ, որոնցմէ իւրաքանչիւրը ներկայացնէ հինգ հնչական աստիճան. ամէն մէկ կէտ 200 տարի յետոյ է իր նախորդէն: Ամէն մէկ կէտի վրայ եղող անձը՝ որ չի կրնար ծանօթ ըլլալ 200 տարի առաջ գոյութիւն ունեցող հնչման, պիտի կարծէ որ իր ներկայ հնչումը իսկականն է եւ թէ ՚ն տառը 200 տարի առաջ ալ հնչուած է այնպէս՝ ինչպէս ինքը հիմայ կը հնչէ: Եւ երբ հասնի հինգերորդ աստիճանը՝ ուր հնչումը դարձած է –, խօսողը նորէն նոյն ՚ն գրին հնչումը – պիտի կարծէ եւ անհաւատալի պիտի գտնէ երբ ըսեն իրեն թէ իր հնչումը փոխուած է:

Այսպէս եղաւ յունարէնի մէջ: Յոյները իրենց թ գիրը դեռ Ե գարունն ի կը հնչէին. իսկ այսօր արդէն շատոնց փոխած են -: Յոյները իրենք չեն ընդունիր որ թ տառը ժամանակին ի հնչուած ըլլայ. բայց գիտութիւնը այս բանը վճռական կերպով հաստատած է:

27. Ինչ որ ըսինք լեզուներու համար առհասարակ՝ նոյնը հասկնալու է նաեւ հայերէնի համար: Այն օրը երբ հնարուեցաւ Մեսրոբեան այբուրենը, ասիկա բնական է թէ կը ներկայացներ ժամանակակից լեզուն կամ որոշ բարբառ մը: Բայց այն օրէն մինչեւ այսօր անցեր է 1500 տարի. եւ այսքան երկար ժամանակի մէջ անկարելի էր որ լեզուն եւ հնչումը անփոփոխ մնային: Եթէ նկատի առնունք այսօրուան հայերէն լեզուն, կը տեսնենք որ տեղէ տեղ կը տարբերի. կը պատահի որ միեւնոյն տառը՝ որ Ս. Մեսրոբի ժամանակ մէկ որոշ հնչման կը համապատասխանէր, այսօր մինչեւ չորս տարբեր հնչում ունի. օր. ք տառը կը հնչուի ի (թիֆլիս), ին (կարին), ք (վան) կամ չ (Ուստութօ): Մեր գործը պիտի ըլլայ ուրեմն քննել թէ ինչ հնչում ունէին մեր պրաւբնի 36 գրերը՝ Ս. Մեսրոբի ժամանակ:

Մանրամասն խօսիլ այս խնդրի մասին՝ սիրելի էր թերեւս ասկէ 25—30 տարի առաջ, երբ հայ գրողները, ասոնց հետ միացած նաեւ եւրոպացի գիտուններ, երկու խոշոր բանակի բաժնուած՝ կը վիճէին իրարու հետ՝ արեւելեան եւ արեւմտեան կոչուած տառադարձութեան առթիւ: Այն ժամանակներէն ի վեր խնդիրը

այնպէս պարզուած է (գլխաւորապէս եւրոպացի լեզուաբաններու շնորհիւ), որ այլ եւս կասկածի եւ տարակոյսի տեղիք չկայ:

Հայերէն այբուբենի Ե դարու կամ ընդհանրապէս խօսելով՝ հին հնչումը որոշելու համար՝ չորս միջոց կար<sup>1</sup>. ասոնք են՝

1. Հայերէն այբուբենի դասաւորութիւնը՝
2. Դիփինսիոս թրակացոյն քերականութիւնը:
3. Օտար լեզուներէ առաջարձուած բառերը՝ հայերէնի մէջ:
4. Հայերէնէ առաջարձուած բառերը՝ օտար լեզուներու մէջ:

### 1. Հայերէն այբուբենի դասաւորութիւնը:

28. Վերը տեսանք որ հայերէն այբուբենը այն այբուբենի առօրեան շարքն ունի. գրեթէ նոյն բանն է նաեւ վրացերէնը. յաւելուածական գրերն են միայն որ երկու այբուբեններուն մէջ ալ կարգը անցողակի կերպով կ'ընդմիջեն, բայց առանց ամբողջութիւնը խանգարելու:

Ահա երեք այբուբեններու համեմատութիւնը միշտ իրենց շարքով:

---

<sup>1</sup> Օգտուած եմ գլխաւորապէս Հիւպփանի Über Aussprache und Umschreibung des Altarmenischen այբուբենի (ZDMG. 1878, էջ 53-73):

|   |   |   |   |   |   |   |   |   |   |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ա | Բ | Գ | Դ | Ե | Զ | Է | Ը | Թ | Ժ |
| a | β | γ | δ | ε | ζ | η |   | θ |   |
| է | վ | դ | Ծ | ղ | ն | Բ |   | Ռ |   |
| Ի | Լ | Խ | Ծ | Կ | Հ | Ձ | Ղ | Ճ | Մ |
| ι |   |   |   | z |   |   | λ |   | μ |
| Դ |   |   |   | հ |   |   | Դ |   | ժ |
| Յ | ն | չ | ժ | Ձ | ղ | ձ | Բ | Ս | վ |
|   | ν | ξ |   |   | π |   | ρ | σ | τ |
|   | Կ |   | Օ | Ս |   | Ժ | Ե |   | Ք |
| Դ | Յ | Ի | Փ | Ք |   |   |   |   |   |
|   | υ | φ | χ | ψ | ω |   |   |   |   |
|   | վ | Փ | Փ |   |   |   |   |   |   |

Եթէ Ս. Մեսրոբ այս երեքը իրարու իբրեւ  
Համապատասխան եզրեր ընդունած է, ուրեմն  
Հնչումով իրարու համապատասխան են: Յու-  
նարէն եւ վրացերէն գրերու հնչումը արդէն  
ծանօթ եւ իրարու համապատասխան ըլլալով՝  
անոնց դէմը գանուած հայերէն տառերն ալ  
պէտք է որ ունենան համապատասխան հնչում-  
ները, ուստի եւ Բ = β, Գ = γ են:

Ձ: Դիտենքիս թրակացոյն քերականութիւնը:

29. Դիտենքիս թրակացոյն քերականու-  
թիւնը պատրաստուած է յունարէնի համար,  
անծանօթ հայ թարգմանիչ մը այս քերակա-

նութիւնը Թարգմանելով՝ իբր Թէ վերածեր է  
Հայերէն քերականութեան, բայց ստրկօրէն  
հետեւած է յունարէն ընդուի սկզբունքներուն<sup>1</sup>։

Թրականցին Հայերէն գրերը կը բաժնէ  
հետեւեալ ձեւով. Չայնաւորներ՝ ութը հաւ-  
-, է, է, ը, ի, -, -, -լ. ասնցմէ է եւ ոլ երկար  
են, է, -, - կարճ են, իսկ -, ը, է կրնան թէ  
կարճ ըլլալ եւ թէ երկար։

Երկրարբաններ՝ որոնք են, --, է-, --, -է,  
-է, է-, ը-, է-։

Բաղաձայններ՝ որոնց ստորաբաժանում-  
ներն են.

Լերկ կամ նուրբ — ա, ի, ա, շ, շ, շ,  
հ, -, հ, :

Թաւ, Թանձր կամ ստուար — ի, +, է,  
ի, լ, ց, շ, ջ, -։

Միջակ — ք, գ, դ, յ, շ, ճ, յ, :

կամ ուրիշ ձեւով դասաւորուած՝

Անձայն — ք, գ, դ, ա, ի, ա, ի, գ, +։

կիսաձայն — շ, ց, շ, շ, շ, հ, -, հ, :

կրկնակ — շ, լ, է, շ, շ, ջ, -, ց, :

նայ — շ, հ, շ, հ, :

<sup>1</sup> Այս քերականութիւնը ապուած է ի Mémoires  
de la Société royale des antiquaires de France, հա. VI,  
1824. երկրորդ լուսագոյն հրատարակութիւնը ըրաւ Ն. Ադոնց,  
Պետրոգրադ 1915։ Աւագինը տեսած չեմ, երկրորդը հիմայ  
դժբախտաբար ձեռքիս տակ չունիմ. ուստի կը բաւական-  
անամ միայն չիւսլմանի քաղուածքներով՝ աւագին հրա-  
տարականութենէն։

Այս բաժանումները մեզի համար թանկագին կռուաններ են իմանալու համար հին Հայոց հնչումները՝ Հայերէնի մէջ կարճ ու երկար ձայնաւոր չկայ. այս բոլորը յունարէնի յատուկ է. ուստի երբ հնչեցնակը կ'ըսէ թէ է եւ -լ երկար են, պէտք է հասկնալ թէ այս գրերը հաւասարազօր կը գնէ յն. Դ եւ օ ձայնաւորներուն, որոնք երկար են յունարէնի մէջ, երբ կ'ըսէ թէ է, ու, - կարճ են, կը հասկցուի թէ ասոնք հաւասարազօր կը գնէ ε, ο, υ ձայներուն. իսկ ու, է կը մնան իբր յն. α, ι, Այսպիսի համապատասխանութիւններ կը գտնենք նաեւ երկրարժաններուն եւ բաղաձայններուն մէջ. լերկ կամ նուրբ ըսելով կը հասկնանք յն. φιλᾶ կոչուած բաղաձայնները, որոնք են χ, π, τ. այսպէս ալ թաւ (θαλασᾶ) են յն. θ, φ, χ, միջակ (μέσα) են β, γ, δ. նայ (ὄγρᾶ) են λ, μ, ν, ρ. Երբ Թրակացւոյն Թարգմանիչը այս գրերը կը գնէ յունարէն գրերուն գէժ իբր համապատասխան, ըսել է թէ հնչմամբնոյն են անոնց հետ

### 3. Ոտար չնգոսնձերի տառադարձուած խոռոչը՝

հայերէնի մէջ:

30. Ե գարուն մեզի հետ յարաբերութիւն ունեցող գլխաւոր ազգերն եղած են հիւսիսէն վրացիները, արեւելքէն պարսիկները, հարաւէն ասորիները եւ արեւմուտքէն յոյները՝ Այս չորս ազգերէն հաղարաւոր բառեր եւ անուններ Ե գարու տառագարձութեամբ ծանօթ են մեզի,

ոմանք իրրեւ փոխառեալ ձեւեր, ոմանք ալ պարզապէս իրրեւ օտար անուններ, Պարսկերէն, ասորերէն եւ յունարէն բառերու եւ անուններու գրեթէ ամբողջութիւնը կրնանք գտնել Հիւպշմանի Armenische Grammatik աշխատութեան մէջ: Արացերէնէ փոխառեալ բառերու եւ տառագարձուած անուններու մասին գեռառանձին աշխատութիւն մը չկայ:

Ամէն լեզուի մէջ ալ երկու տեսակ տառագարձութիւն կայ. հելլ-իս եւ պարսիս: Օրինակի համար՝ երբ Berlin քաղաքին անունը Պօլսոյ հայերը այսօր կը գրեն ՊԵՐԼԻՆ, կը հետեւին հնչական տառագարձութեան, ուր իւրաքանչիւր տառ համապատասխան է օտարազգի բառին տառերուն հնչման. իսկ երբ զբարարագէտ լանասէր մը կ'ուղէ գրել ԲԵՐԼԻՆ կամ ԲԵՐԴԻՆ, այն ժամանակ կը հետեւի պատմական տառագարձութեան. հոս այլ եւս տառերու ժամանակակից հնչման համապատասխանութիւն չկայ, այլ իբր օրինակ կ'առնուին հին ժամանակի հնչումները:

Անհաւանակելի ճշմարտութիւն մ'է՝ որ ամէն լեզու նոր գրի առնուած ժամանակ կը հետեւի հնչական դրութեան, այն պարզ պատճառով որ հին գրականութիւն մը չունի՝ պատմական տառագարձութեան հետեւելու համար: Ասկէ կը հաճեի որ Մեսրոպեան գարու տառագարձութիւններն ալ հնչական են, այսինքն կը ներկայացնեն այն հնչիւնները՝ որ կը գտնուին տառագարձուած բառերուն բնիկ ձեւին մէջ:

4. Հայերէն տառադարձութիւնը օտար  
լեզուներու մէջ:

31. Օտար ազգերը քիչ անգամ առիթ ունեցած են հայերէն բառեր տառադարձելու. ասոնց մէջ հնագոյններն են նախ՝ այն խումբ մը աշխարհագրական անունները՝ որ յոյն եւ հռովմայեցի մատենագիրները կը յիշեն. երկրորդ՝ այն բառերը՝ որ վերացերէնը մեզմէ փոխ առած է հին ժամանակները. եւ երրորդ՝ այն բառերը որ հայերէնէ օտար լեզուի մը թարգմանուած գործերու մէջ թարգմանիչները մոցուցած են: Առաջինները կը գտնենք հաւաքուած Հիւպշմանի Die Altarmenischen Ortsnamen (Strassburg 1904) աշխատութեան մէջ եւ Montzka հեղինակին Die Landschaften Gross-Armeniens bei griechischen und römischen Schriftstellern գործին մէջ (Wien 1906, որմէ թրգմ. « Է. Ա. », 212. 1907, 9—14, 301—303, 1911, 31—37). Այս անունները գլխաւորապէս այն պակասութիւնն ունին որ նախ բերնէ բերան, յետոյ ալ ձեռագրէ ձեռագիր անցնելով՝ բաւական բան զոհած են գրիչներու անուշագրութեան պատճառով. ասոր համար համեմատութեան ժամանակ պէտք է առանձին ուշագրութիւն դարձնել եւ զանազան ընթերցումներու մէջէն աշխատիլ ընտրել լաւագոյնը:

Վերացերէն փոխառութիւնները հաւաքած եմ իմ մէկ յօդուածիս մէջ՝ « Չայնաբանութիւն հայերէնից փոխառեալ վերացերէն բառերի »

(Արարատ 1898, էջ 309—315, 365—371)։  
Ասոնք ալ սակայն կրնան ըլլալ զանազան ժամանակներէ, սկսած Ե կամ աւելի հին դարերէն մինչեւ նոր ժամանակները։ Վրացերէն պատմական բառարանի մը բացակայութեան պատճառաւ՝ շատ գժուար է այս բաներուն ժամանակը որոշել։ Ուստի ասոնք ալ պէտք է գործածել բաւական զգուշութեամբ եւ օրինակ առնու միայն այն բառերը՝ որոնք հին ըլլալու երեւոյթն ունին։

Հայերէնէ թարգմանուած գործեր շատ քիչ են հին մատենագրութեանց մէջ։ Այս կողմէն ամենէն հարուստն ըլլալու է վրացերէնը։ Սակայն իմ միջոցներս չեն ներեր քննել այս թարգմանութիւնները, որոնցմէ շատը դեռ կը հայ ձեռագիրներու մէջ։ Հայերէնէ յունարէնի թարգմանուած կարեւոր գործ մը կայ, որ է Ագաթանգեղոսի պատմութիւնը։ Գուտշմիդ այս թարգմանութիւնը կը դնէ 555—622 կամ մանաւանդ 591 թուին, ուստի Ե դարէն ոչ շատ հեռու։ Թարգմանիչը՝ որ հայերէնին բաւական ծանօթ յոյն մըն է, շատ տեղ առիթ ունեցած է հայերէն յատուկ անունները յունարէն տառադարձելու։ Երբեմն ալ հայերէն դժուարիմաց բառեր չկրնալով թարգմանել՝ ուղղակի յունարէն տառերով գրած է։ Ասոնք բնական է գրուած են ճիշտ հայ գրերու հնչման համեմատ, ուստի կարող են շատ օգտակար ըլլալ մեր նպատակի համար<sup>1</sup>։

<sup>1</sup> Յունարէն Ագաթանգեղոսի լատիոյն հրատարակութիւնն ունի Լադարդ Հայագեղը. ասկէ օգտուելով

Օգտուելով ուրեմն այս չորս տարրեր մի-  
ջոցներով՝ քննենք այբուբենին հին հնչումը<sup>1</sup>։

### 32. Անունք նախ ձայնաւորները։

Ներկայ հայերէնի մէջ *ա*, *ի*, *ը* գրեթէ  
ամէն տեղ նոյն հնչումն ունին։ Ա եւ *ի* գրերը՝  
այբուբենի շարքին մէջ կը համապատասխանե-  
լն. *ա* եւ *ւ*, վրաց. *ა* եւ *ი* տառերուն. նոյնպէս  
կը գտնենք նաեւ թրակացւոյն քով եւ տա-  
ռադարձութեանց մէջ, օր. *А* տառ լեզուներէ  
հայերէն՝ Ատրպատական = պէշ. *āturpātākān*,  
Արգար = ասոր. *Abgar*, ադամանդ = յն. *ἀδά-  
μας*, Միհր = զնդ. *Mithra*, Գաղ/շ = ասոր.  
*gādīšā*, Իրիս = յն. *ἵρις*. հայերէնէ օտար լե-  
զուներուն անցած՝ հին աշխարհագիրներու քով.  
Արարատ = *Ararat*, Կարին = *Καρτηνίτις*, *Ca-  
sanitis*, Գարանաղի = *Daranalis*, Հանձիթ =  
*Ἀνζιτηνίη*, ասոր. *Hanšit*, Շիրակ = *Σιρακηνή*,  
Վրացիներէ մէջ՝ ագարակ = *აგარაკი*, արձան =  
*არձანი*, աւազակ = *ავაკი*, Խնստ = *ქნსტი*,  
Հիրիմ = *ჰირტი*. յունարէն Ագաթանգեղոսի  
քով՝ Վաղարշապատ = *Θυαλαρσαπᾶτ*, Փայտա-  
կարան = *Φατακαρηνή*, Մասիս = *Μᾶσις*,  
Սահմի = *Σαομί*, յանի = *ἰανι*. Ուրեմն

քաղուածներ կ'ընեն Ցաշեան (Ագաթ. առ Գեորգայ,  
Վիեննա 1891) եւ Հ. Բ. Սարգիսեան (Ագաթ. եւ Իւր Բաղ-  
մադարեան Գաղտնիքը, Վենետիկ 1880)։ Մեր հաւաքած  
րաւերը քաղուած են ասոնցմէ։

1 Կարելի է օգտուիլ նաեւ Carrièreի հրատարա-  
կած *Un ancien glossaire latin-arménien* (Paris 1886)-  
տետրակէն։

այսօրուան մեր առեւ է հնչիւնները հինէն տարրեր  
բան մը չեն ներկայացներ:

Ը երկու տեսակ է այսօր. գրուած և եւ  
չգրուած և, ինչ. ընկեր, ինչ. Նախ եւ առաջ  
խնդիր է թէ հին հայերն ալ կը ճանչնային այս  
երկուորդ շօշոնը. այսինքն բաղաձայններու խում-  
բերը արտասանելու ժամանակ իրարմէ կը բաժ-  
նէին շօշոնաւորով (ինչպէս կ'ընենք մենք այսօր  
եւ ինչպէս է թուրքերէնի մէջ), թէ միաշունչ  
հնչիւն մը կու տային (ինչպէս է եւրոպական  
լեզուներու մէջ): Ասիկա իմանալու համար որեւէ  
ուղղակի վկայութիւն չկայ, չայագէտ Meillet  
մտածած է հետեւեալ հնարագէտ միջոցը:

Գիտենք որ բայերու խոնարհման ժամա-  
նակ կատարեալի եւ ապառնիի ձեւերը՝ Լթէ  
միավանկ են, կը ստանան յաւելուածը, իսկ եթէ  
բազմավանկ են՝ այդ յաւելուածէն զուրկ կը  
մնան. օր. եկ-ի, եր-ի, եր-ի, եկ-ի, եր-ի, բայց  
«իւրե-ի, բեր-ի, «ձէ եւն, Արդ՝ այն բայերը՝ որոնց  
սկիզբը կը գտնենք կրկին բաղաձայն, նոյն ժա-  
մանակներուն մէջ է չեն ստանար, այսպէս՝ քրե-ի,  
եւ-ի, ւրե-ի եւն, Ըսել է թէ ասոնք միավանկ բաւեր  
չեն եւ հին հայերն ալ կը կարգային քրե-ի,  
իւրե-ի, ւրե-ի եւն, ճիշդ ինչպէս հիմայ:

Ը գրին դեմ այբուբեններու շարքին մէջ  
համապատասխան մը չկայ. Թրակացին կը դնէ թէ  
կարճ եւ թէ երկար ձայնաւորներու շարքը  
բայց ասով բան չի հասկցուիր: Օտար տառա-  
դարձութեանց մէջ միայն ասորին պիտի առնունք  
ի նկատի, որովհետեւ այս լեզուին մէջ միայն

կայ ը ձայնը: Բայց ասորերէնի Ձ ձեւը հայերէնի  
մէջ ամէն ձայնաւոր կու տայ. ինչ. օր. *kurkəmə* ==  
քրք--մ, *kakkarā* == քակք-ր, *kəṛōwā* == ք-  
րովբէ, *šəwīlā* == շ-ւիղ, *məṛalleṯā* == մ-գա-  
ղաթ եւն: Ը գարձած կը գաննէք *pəraq* == էրէլ,  
*məṣalləyānē* == մշէնյ, *šerārā* == ծ-ր-ր, բա-  
ռերուն մէջ:

Աւելի հետաքրքրական է սեսնել թէ ինչ  
կ'ըլլայ ը ձայնը հայերէնէ տառադարձուած  
սոր բառերու մէջ: Վրացերէնի մէջ ասիկա  
կամ կը ջնջուի եւ կամ կը գառնայ է, --. ինչ.  
էյոյ-յէ == գձուձ, իր-փ == խրամ, բ-բ-բ-ի ==  
հրովբաւ, ՚ի-ի-ի == նհանգ, ՚ի-ի-ի == պղինց,  
հո-շ-ի == մշակ, հո-ր-ի == հրեայ. (բայց ասոնց  
վրայ մեր սեսութիւնը սէս Արրա. 1898,  
էջ 313): Աշխարհագրական անուններուն մէջ  
քի գէմ կը գաննէք է, --, -- ձայնաւորները.  
վթառիժ == *Kitharison*, Աղձնիք == 'Αρζανηνή,  
*Arsanene*, Տմորիք -- *Ταμουριτης*? Նպաա ==  
*Νιφάτης*, Մնձուր == *Μουζουρῶν*, Արծկէ ==  
'Αρτζαχέ (Է. դար): Նոյն բանն է նաեւ յու-  
նարէն Ագաթանգեղոսի մէջ. հմմտ. Արծրու-  
նեաց == 'Αρσουρουῶν, Մահքրտան == *Μα-  
χουρτ(αν)ῶν*, Նպաա == *Ναπάτ*, Մասքթաց ==  
*Μασαχουτῶν*, Արպաաական == 'Αρπαταξάν:  
Այս բոլորը սակայն մէկ բան մը միայն կը  
ցուցնեն, այն թէ բաղաձայններու խուճի մը  
մէջ հայերը կը ներմուծէին ձայնաւոր մը, որուն  
երանգը օտար լեզուները չէին կրնար նշանակել:  
Ը գրին արժէքը հաստատելու համար ուրիշ

միջոց չկայ ուրեմն, բայց եթէ նոր բարբառներու միահամուռ վկայութիւնը:

Ե ձայնը ներկայացնելու համար մեսրոբեան այբուբենը ունի երկու գիր՝ ե եւ է: Ասոնցմէ առաջինը (ե) երեք տեսակ հնչում ունի այսօր. բառին սկիզբը գրական լեզուին եւ քանի մը բարբառներու մէջ կը հնչուի ye, ուրիշ բարբառներու մէջ կը հնչուի պարզապէս e, որով է առին հաւասարազօր կ'ըլլայ. (ինչ. օր. Պոլսոյ բարբառով՝ է = ես, եր = երազ, երէտ = երկայն, երնէ = երանի): Բառին մէջ գրական լեզուն եւ բարբառներու մեծամասնութիւնը կը հնչէ e, որով նոյնպէս է գրին հաւասար կ'ըլլայ: Ուրիշ բարբառներ (կարին, Ծուշ, վան, Սերասաիա եւն) այս պարագային կը հնչեն ie երկբարբառային հնչումով: Է տառը ամէն տեղ ալ կը հնչուի e, որով շատ տեղ է եւ է կը գտնան նոյնաձայն գրեր. Բարբառներէն ոմանք միայն կը զանազանեն բառին սկիզբը է = ye, է = e, բառին մէջ է = ie, է = e:

Կարելի բան չէ որ Ե գարուն է եւ է գրերը նոյն ձայնն ունենային. երբ Ս. Մեսրոբ պէտք է տեսեր հնարելու երկու գիր, ըսել է թէ լեզուին մէջ ալ գտեր է երկու տարբեր հնչիւն: Այբուբենի համեմատութեան մէջ կը գտնենք է = e, է = η, որով ասոնց տարբեր բաներ ըլլալը կը շեշտուի: Այսպէս կը գտնենք նաեւ յունարենէ հայերէն տառագարձութեանց մէջ օր. χυριαχη = կիւրակէ, օղη = հիւղէ, օλλην = հելլէն, µά-κελλον = մակեղոն, չին յունարէնի մէջ (նաեւ

Ս. Միսրոբի ժամանակ) և կը հնչուէր կարճ *ե*, իսկ *դ*<sup>1</sup> երկար *ե*. (նոր լեզուին մէջ այս<sup>2</sup> ձայնը դարձած է *ի*)։ Թրակացւոյն քերականութիւնն ալ՝ որ կուրօրէն կը հետեւի յունարէնին, մեր է ձայնը կը դնէ երկար, իսկ *ե*<sup>3</sup> կարճ։ Բայց ասիկա սխալ է։ Հնագոյն հայերէնը կրնայ՝ ունեցած ըլլալ կարճ ու երկար ձայնաւորներ. յատկապէս է կարճ էր, որովհետեւ կը համապատասխանէ հնդեւր. կարճ *ե*ին, իսկ է երկար էր, որովհետեւ կը ծագի հնդ. *ei*, *oy* երկբարբառներէն (ուստի եւ է < *ե* — *յ*)։ Բայց աւելի յետոյ ձայնաւորներու երկարութիւնն ու կարճութիւնը վերցաւել ապահովապէս արգէն է դարուն ըստ *Հիւպշմանի*<sup>1</sup> անոնց մէջ տեւողական տարբերութիւն չկար։ Եթէ *ե* ձայնը կարճ ու երկար ձեւեր ունենար հայերէնի մէջ, նոյնպիսի կարճ ու երկար ձեւեր պիտի ունենային նաեւ միւս ձայնաւորները (ինչպէս է յունարէնի մէջ). երկրորդ որ յունարենէ հայերէն տառադարձութեանց մէջ *դ* ամէն անգամ է չէ, այլ շատ անգամ կը գաննք նաեւ է, երբ որ հայերէնի օրէնքը պղծ կը պահանջէ. ինչ. *թերիակէ* = *θηριακή*, *կեղեցի* = *εὐχρησσία*, *աթերայ* = *ἀθήρα*, *մեմ* = *μῆμα* եւն։ Նոյնպէս նաեւ հայերէնէ տառադարձուած բառերու մէջ երկու ձեւն ալ իսառն կը գտնենք.

<sup>1</sup> Հոս եւ յաջորդներու մէջ *Հիւպշմանի* անունով արուած տեղեկութիւնները օգտւարար անտիպ են. կը քաղեմ այն աշակերտական նութեան՝ որ կազմէր եմ իր աստիճան դասախօսութեանց ժամանակ, որոնց ունկնդրած եմ 1898 թուի գարնան Սթրասպուրի մէջ, դասընկեր ունենալով Եղիկ վրդ. Գեանչեցեանը։

օր. աշխարհագրական անուններու մէջ. ինչ.  
Գերջան = Δερζήνη, Եկեղեաց = 'Εκελίστην ή  
կամ 'Αχιλίστην ή, Անգեղ = Ιγγήλην ή, Երձեշ =  
'Αρσισα, Շակաշէն = Σακάστην. յունարէն  
Ագաթանդեղոսի մէջ՝ չեր = Χερῶς, ասպետ =  
ἀσπὲς, սպասկապետութիւն = (Σ) πασχαπετέων,  
Եկեղեաց = 'Εκελίστην ή, Երէզ = 'Ερηζ, Բա-  
սեն = Βαστηνών, Աշխէն = 'Ασιχήνη, Արացե-  
րէնը մեր երկու գրերուն գէմ ալ միշտ կը  
հանէ e. օր. սենեակ = -ե-ն-ի, աղբրս =  
ալբր-ի, պաանէշ = պ-տ-ն-ի, խննէշ = ի-ն-ն-ի եւն:

Այս բոլորէն կը հետեւի թէ հայ եւ օտար  
տառագարձութիւնները բաւական չեն խնդիրը  
լուծելու համար. օտար լեզուներու ձայնական  
գրութիւնը չէ կրցած ներկայացնել մեր այս  
երկու գրերու հնչական նուրբ տարբերութիւնը:  
Այս պատճառով պէտք է դիմել ենթադրու-  
թիւններու:

Գիտենք արդէն որ է եւ է չեն կրնար  
ունենալ տեւողական տարբերութիւն, միւս  
կողմէն չենք կրնար ընդունիլ նաեւ որ է գիրը  
յօ կամ իօ ձայնն ունեցած ըլլայ, որովհետեւ  
այսպիսի որոշ տարբերութիւն մը անշուշտ պիտի  
նկատուէր երկբարբառներով հարուստ յունարէն  
գրութեան մէջ: Կը մնայ ուրեմն ընդունիլ թէ  
մեր այս երկու գրերուն տարբերութիւնը Ե գա-  
րուն կը կայանար լոկ բերնի բացուածքի մէջ.  
Ե կ'արտասանուէր աւելի բաց, է կ'արտասանուէր  
աւելի գոց: Ծանօթ լեզուաբանական երեւոյթ  
է, որ երկար e ձայնը ժամանակ անցնելով

Հետզհետե կը գոցուի եւ անցնելով թ ձեւէն՝ կուտայ ի չմմա. յն. 7 որ Ե դարուն երկար Ե էր, հիմայ պարզ ի ձայնն ունի. նոյնպէս անզլ-  
ee (= թ), որ հիմայ կը հնչուի ի

Ե իբր բաց, իսկ Ե իբր գոց կ'ընդունի նաեւ չիւպշման եւ կ'ըսէ, թէ թէեւ իր ընդունած տառագարձութեան մէջ Ե դրած է թ, բայց ասիկա պէտք չէ առնուլ տառացի մաքրով. այլ լոկ տառագարձական տարբերութեան համար է եւ աւելի սառագաբանական արժէք ունի, եւ չի ներկայացներ Ե դարու արասանութիւնը: Այս մեկնութեան համաձայն կու գայ նաեւ այն հան-  
գամանքը՝ որ Ե ձայնը անանցման ժամանակ Ե կը դառնայ, մինչդեռ Ե անփոփոխ կը մնայ: Գոց Ե ձայնը արգարեւ շատ աւելի մօտ է Ե հնչման՝ քան թէ ք-ց Ե ձայնը:

Գրեթէ նոյն երեւոյթը կը ներկայացնէ նաեւ ֆրանսերէնը, ուր կայ թ եւ շ. թ կը ներ-  
կայացնէ մեր հին Ե ձայնը, իսկ շ = Ե. ֆրան-  
սերէն բառերու ծայրը չենք գտներ թ, այլ միայն շ. նոյնպէս նաեւ հայերէնի մէջ բառերու ծայրը գրեթէ չկայ Ե եւ բացառապէս Ե կը գտնուի:

Կը մնայ քննել նաեւ թէ Ե գիրը բառին սկիզբը հին ժամանակ յը հնչումն ունէր: Այս-  
պիսի բան մը չի կրնար գոյութիւն ունեցած ըլլալ, հետեւեալ պատճառներով. նախ՝ օտար տառա-  
դարձութեանց մէջ չկայ այսպիսի բան, այլ միշտ  
է կը գտնուի. օր. հին աշխարհագրական անուն-  
ներէն՝ Եկեղեց = Έχελισθη, յունարէն Ագա-  
թանգեղոսի մէջ՝ Երասխ = Έρασχ, Երէզ =

՝Երդհ, վրացերէնի մէջ՝ *erdó* = երդ, *Erevani* = Երեւան, Երկրորդ՝ երբ հայերը *e* տառով սկսող օտար բառ մը հայերէնի կը դարձնեն, և կը գրեն. եւ ոչ է. ինչ. Ենովք = *Ενώχ*, Եղիշայ = ասոր. *Elisa*, Երան = պհլ. *Ērān* (Իրան)<sup>1</sup>, Երրորդ՝ հայերէնի մէջ չ-ով սկսող բառերու վրայ իբր յաւելուածական ձայնաւոր կ'աւելնայ է, ճիշտ ինչպէս երբեմն ալ -, կամ նոր լեզուին մէջ ը, --, օրինակ երան--որան, երնդ, եր--, եր--ի, բարբառներով ը--ի--ն, ըր--ի, ը--ի--ն, որ--ան են. եթէ եր պարզ ձայնաւոր մը չըլլար, այս պարագային չէր գործածուեր: Զորրորդ. անանգի է կարծել որ Ս. Մեսրոբ հայերէն գրերը յօրինած ժամանակ երկու տարբեր ձայներէ բաղկացած *յե* խումբը մէկ տառով ուղած ըլլաւ նշանակել, ճիշտ ինչպէս որ անանգի կ'ըլլար կարծել թէ օրինակ - տառը բառին սկիզբը կը կարդացուէր յաւելուածական ձայնին ժամանակ մը յետոյ *յե* դառնալը լեզուաբանական պարզ երեւոյթ մըն է, որուն կը հանգիպինք նաեւ ուսերէնի մէջ, ուր *e* կը հնչուի *յե*. օր. ուս. *ecchi* = *yesli*:

Ե գրին հետ ճշդիւ համեմատելի է: Նոր լեզուին մէջ ասիկա ալ երեք գլխաւոր ձեւ տաացած է. բառին սկիզբը կը հնչուի գրական լեզուին մէջ *vo*, *uo*, *o*, բառին մէջ՝ գրական-

<sup>1</sup> Երկու բառ միտք ունենք՝ երեդ--յն. *Ἐρεμίας* եւ Երանգի--յն. *Ἐρουσαλήμ*, որոնք յաւելուածական ժամանակ *թ* տառով *յե* հնչումը կը ցուցնեն՝ զարմանալի կերպով: Ասոնց մէջ պէտք է տեսնել սեմական ազդեցութիւն:

լեզուով միշտ օ, բարբառներուն մէջ ուօ կամ օ. ասոնցմէ գորս կը գտնենք նաեւ ու, օ հնչիւնները՝ որոնք սակաւաթիւ բարբառներու միայն յատուկ են:

Տեսնենք թէ ասոնցմէ որն էր հին -ին յատուկ հնչումը:

Այբուբեններու համեմատութեան մէջ մեր \* գրին կը համապատասխանեն յուն. եւ վրաց. օ. Թրակացին - կը համարի կարճ, իսկ -ւ երկար ձայնաւոր. բայց մենք գիտինք որ ամէնէն առաջ -ւ ձայնաւոր Գ-ը, այլ ձայնախումբ մը. ուստի հոս գործ չունի. Թրակացին հոս ալ սարկօրէն հեանեաժ է յունարէնի ձայնական դրութեան, ուր օ կարճ է եւ օ երկար, բայց ասով յայանի կերպով կը ցուցնէ որ հայերէն -ին համապատասխանն է յն. օ. Տառադարձութեանց մէջ օտար ազգերու օին գէմ միշտ կը գտնենք \*. ինչ. պՏԼ. \*rōcik, պրս. rōzi = րօճիկ, ասոր. rōca wōh = րօն եւ րօն, յն. ἐπισκοπος = էպիսկոպոս, պրս. Godare = Գոդար:

Եր պատահի որ երբեմն իրանեան av, u, va ձայներուն դէմ ալ կը գտնենք -, ինչպէս օր. Խարասան = պՏԼ. Xvarāsān, պրս. Xurāsān, Խարասով = պրս. Xusrav, -ի- = պՏԼ. āxvar, պրս. āxur, հմմտ. նաեւ Գ-րով, Ի-րով, Ն-ի-ը եւն: Բայց ասիկա շփոթելու չէ զմեզ, որովհետեւ հայերէն բառերը ծագած են իրանեան այնպիսի բարբառէ մը որ յիշեալ պարագաներուն օ ունէր. այս բանը կը հաստատեն օրինակի

Համար վերոյիշեալ խորհիւ, իւր բառերուն գէմ  
յն. *Xoσpόης* ասոր. *Xasrau* — Գրգ. *axōr* ձեւերը,  
Մէկ երկու անգ ալ ի գէմ ունինք իրանեան  
ա. ինչ. Դժ-ի, Բն-ի, Բ-ի. բայց ասոնք ալ նոյն-  
պիսի պատճառի մը վերագրել պէտք է: Այս  
կարգէն են նաեւ ասորերէնէ փոխառեալ ոչ-  
ոչ = *platiā* եւ սփ-ի = *sefrā*.

Հայերէնէ առաջարձուած բառերու մէջ  
մեր ունի գէմ կը գտնենք օ աշխարհագրական  
անուններուն մէջ՝ *Տֆ-ի* = *Táμωριτης*, Մ-ի =  
*Μαχοene*, Ծ-ի = *Σωφηνή*, *Sophene*, Խ-ի =  
*Χορζιανηνή*, *Chorsianene*. յունարէն  
Ագ-թանդեղոսի մէջ՝ Ն-ի-Շ-ի-ի = *Νορσι-  
ρῆων*, Թ-ի-ճ = *Θοργώμ*, Թ-ի-դ = *Θορδάν*  
(անսաղաք է Աշ-ց = *άσουηνών*, որ Թերեւս  
ուղղելու է *άσος* (հն.)). վրացերէնի մէջ՝ Բ-ի-ի  
= *ամբի*, Ի-ց = *խոց*, Ի-ի = *խփ*, Ի-շ-ի =  
*կոշա* եւն:

Այս բոլորէն կը հետեւի թէ - գրին Մես-  
րոբեան գարուն հնչումն էր օ ճիշտ մեր այսօր-  
ուան օ տառին հնչումը: Չէր կրնար հնչուիլ  
ւօ, մ, ծ, որովհետեւ այս պարագային տառ-  
դարձեալ ձեւերէն գոնէ մէկը պիտի մասնէր  
զայն: յունարէնը կրնար նշանակել առաջին  
երկուքը իր ոսօ, ս ձեւերով, երրորդին համար  
կրնար դործածել եօ ձեւը կամ պարզապէս օ  
նոյնպէս նաեւ վրացին: Ընդհակառակը հայերը  
յունարէնի մ ձայնին գէմ դրած են Ի. ինչ,  
Է-դ-դ = *ἑπατος*, Ի-ի-ի = *χυριαχή* եւն,  
ինչ որ կը ցուցնէ թէ - գիրը չունէր մ հնչումը:

կը մնայ մեզի քննել բառակցքի - գրին  
 հնչումը, Հոս ալ պէտք է որ - հնչուած ըլլայ  
 միայն իւր օ (եւ ոչ բնաւ ու). այս բանը կ'ա-  
 պացուցանեն նախ՝ օտար լեզուներէն հայերէնի  
 անցած բառերը ինչ. օփիլոն = պհլ. *ōstikān*,  
 օրփոփո = յն. *ὀρθόδοξος*, օրփո = յն. *ὁρθός*,  
 շատ լաւ օրինակ է Ուրփո, որուն հին իրանեան  
 ձեւն էր *Aharamazdā*, ասկէ *Auhrmazd* եւ երկ-  
 բարբառին ձուլմամբ *Ohrmazd* (յն. *Ὀρμιζδης*).  
 Երկրորդ՝ հայերէնէ վրացերէնի անցած բառերը  
 ինչ. *ospri* = օփ, *ostinagi* = օփիլոն, *oboli* =  
 օրփ, *orme* = օրփ. Դժբախտաբար հին աշխարհա-  
 գրական անուններուն, ինչպէս եւ յունարէն  
 Ագաթանգեղոսի տառադարձուած բառերուն  
 մէջ չկայ սկզբնաւոր ու Բայց այսքանն ալ  
 բաւական է հաստատելու համար թէ բա-  
 ռին սկիզբն ալ - կ'արժէր օ. Եւ շատ անբնա-  
 կան կը լինէր որ Ա. Մեսրոբ միեւնոյն գրին՝  
 տեղ մը մէկ արժէք տար, ուրիշ տեղ մը ուրիշ  
 արժէք:

Ու հնչիւնը հայերը մէկ անգամ միայն  
 առիթ ունեցած են տառադարձելու եւ այն ալ  
 գրած են ի- (այն է՝ *βορέας* = իւրիւս. Արիստ.  
 աշխ). եթէ բառակցքի ո գիրը յօ հնչումն ու-  
 նենար, ճիշտ տեղն էր գրելու օ-իւս:

Կան ոմանք՝ որ բարդ եւ անանց բառերու  
 մէջ ալ՝ հոն ուր երկրորդ բառը կը սկսի - տա-  
 ռով, կը հնչեն յօ եւ ոչ օ այսպէս օր. անդրժ  
 = անսոյժ, օրփոփո = օրփոփոն, օրփոփոն  
 ճիշդ ինչպէս որ - եւ է գրերով սկսող բառերն

ալ խոնարհման ժամանակ առանց սղման կը հնչեն՝ կը սողալ, կը սորռնէ, կը ցերգէ, կը ցեփէ եւն, իբր թէ ասոնք բաղաձայնով սկսած բառեր ըլլային: Ասիկա տարօրինակ նորմութիւն մ'է, որ կը գտնենք Ռուսահայ գրագէտներու մէջ, եւ ի՞նչ միայն չէր կրնար գոյութիւն ունենալ հին լեզուին մէջ, այլ եւ նորերուս համար ալ շատ խորթ կը հնչէ:

Օ ձայնին յետին ու, օ, օ ձայնափոխութիւնները սովորական լեզուաբանական երեւոյթներ են. այսպէս՝ օրինակի համար իաալերէնի մէջ լատինական օ դարձած է ու հմմա. լա. bonus > իաալ. buono «լաւ», լա. cor > իաալ. cuore «սիրտ», լա. ovum > իաալ. uovo «հաւկիթ», ռուսերէնի մէջ ալ այսպէս է, ինչպէս կը նկատուի Նոր-Նախիջեւանի հայոց եւ ռուսաց արտասանութեան մէջ: Օ ձայնը դարձած օ շատ սովորական է ֆրանսերէնի, մանաւանդ գերմաներէնի մէջ. հմմա. գերմ. Koch, Köche, Köchin, Schloss, Schlösser եւն. լա. cor > ֆր. cœur «սիրտ», լա. populus > ֆր. peuple «ժողովուրդ», օ դարձած օ կը ցուցնեն լա. morum > mûre «թութ», պրո. goft «քսաւ», Արապաականի արտասանութեամբ gūft եւն: Բառասկզբի ու ձեւացած է ու երկրորդային հնչման թանձրանալովը:

Ու ձայնաւորը առանձին առումով մը ներկայացուած չըլլալով՝ այբուբենի մէջ չէ մտած: Ս. Մեսրոպ այս ձեւը շինած է հեռեւելով յուներէնի, ուր ու ձայնը կը ներկայացուի « եւ տառերու միութեամբ (ou): Նոյնպէս ըրած է

նաեւ վրացերէնի համար, ուր ունինք ԱՎ ու, ինչպէս որ հին սլաւոներէնի մէջ ալ կայ օу ու: Բայց վրացիք իմաստուն գանուած են հնարելու յետոյ միատառ օ — գրութիւնը՝ որ մտցուցած են իրենց այբուբենին մէջ: Այսպէս ըրած են նաեւ յոյները՝ հնարելով փակագիր Յ ձեւը, որ բաղկացած է իրարու վրայ դրուած օ եւ ւ գրերէն: Բայց ասիկա իբրեւ առանձին տառ այբուբենի մէջ անցած չէ: Զոր ձեւ հնարած են նաեւ ռուսները (у): Հայերը գծախտաբար մտածած չեն այս միակ ձայնին համար միաատռ նոր ձեւ մը հնարել: Հայերէնի մէջ թէեւ շատ փակագրեր հնարուած են, հնարուած է մինչեւ իսկ և տառաձեւը, որ իբր առանձին տառ այբենաւաններու մէջ մտած է, բայց — ձայնին համար այգպէս եղած չէ: Ասոր գլխաւոր պատճառը Ռ գիրն է: Ռ — գրութեան միատառ փակագիրը շատ անգամ գործածուած է արձանագրութիւններու մէջ, բայց որովհետեւ ասիկա նոյն էր մեր Ռ գրին հետ եւ կրնար շփոթութեան տեղի տալ, ուստի յաջողութիւն ունեցած չէ եւ խափանուած է:

Թրակացւոյն քերականութեան մէջ — կը դրուի իբրեւ երկբարբառ, համապատասխան յունարէն օս ձեւին: Իրօք որ յունարէն օս առաջ երկբարբառ էր, որովհետեւ կ'արտասանուէր օն յետոյ սղուելով գարձաւ ւ, ինչպէս էր Ե դարու ծրաստանութեամբ: Սակայն քերականները շարունակելով հին անուանակոչութիւնը, դարձեալ կ'անուանէին երկբար-

բառ: Թրակացին հեռեւած է այս սովորու-  
թեան, հայ թարգմանիչն ալ հեռեւած է հե-  
ղինակին:

Ու ձեւը այսօր թէ գրական լեզուին եւ  
թէ բարբառներու մէջ կը հնչուի -- սակաւա-  
թիւ բարբառներ միայն եւ այն ո՛չ միշտ՝ կը  
փոխեն մ, օ: Ե դարու արասանութիւնը առա-  
ջինը միայն կրնար ըլլալ (16). այսպէս կը ցուցնեն  
նախ այս ձայնին երկառ ձեւը՝ համեմատ յու-  
նարէնին, երկրորդ՝ Թրակացւոյն վկայութիւնը.  
երրորդ՝ օտար լեզուներէն կաղմուած հայերէն  
առաջորձութիւնները, ինչ. Սւրէն = պրսկ.  
Sūrēn, յն. Σουρήνας, լատ. Surena, Շահ-ն =  
պհլ. Šapuhr, շահ = պհլ. պրս. sūr, Կուր-ն =  
պրս. kurra, Կուր = ասոր. kufrā, Կուր-ն =  
յն. ῥαββουνί, Կուր-ն = σχουτέλλιον եւն. Չոր-  
րորդ՝ հայերէնի վրայ կաղմուած օտար առաջոր-  
ձութիւնները. յունարէն Ագաթանգեղոսի մէջ՝  
Արթուր-ն = Ἀρσουρουσῶν, Ուսէացոց =  
Ουστιῶν, Խոսրովիդուխա = Κουσαρωδούχτα, վրա-  
ցերէնի մէջ՝ Խոսր = Խոսր-ն, Բոր-ն =  
Բոր-ն, Կոր-ն = Կոր-ն, Կոր-ն = Կոր-ն (ժուրճ),  
Կոր-ն = Կոր-ն եւն.:

Այս ընդհանուր համապատասխանու-  
թեանց մէջ կան նաեւ քանի մը շեղումներ,  
Խոսնեանէն փոխառեալ խումբ մը բառերու մէջ  
հայ. Կոր-ն գէժ կը գանձուի օ ինչ. Կոր-ն =  
պհլ. anōšak, Կոր-ն = պհլ. močak (այսպէս նաեւ  
Ան-շահ-ն, Յիւրբ-ն, Սեբ-ն, Կոր-ն, Կոր-ն,  
Կոր-ն, Կոր-ն-ն, Կոր-ն եւ Կոր-ն): Ուրիշ

պարագաներու մէջ իրանեան օ կ'ըլլայ հայերէն --  
 հմմ. Գ-Դ-Ե-Զ = Gōdarz, Կ-դ-ռ = kāf-kōh  
 ինչ պատճառ կայ ուրեմն որ վերի տասը բա-  
 ռերուն մէջ կ'ըլլայ -- Դիտել պէտք է թէ  
 հայերէնի մէջ նախաշեշտ -- կուգայ -յ ձեւէն.  
 հետեւաբար վերի բառերուն բնիկ ձեւն է \*ն-յշ-ի,  
 \*հ-յճ-ի, \*բ-յծ-ի եւն, ինչպէս կը ցուցնեն --ն-յշ,  
 բ-յծ բառերն ալ: Ըսել է թէ իրանեան օ տուած  
 է հայերէն ոչ թէ - եւ --, այլ - եւ -յ, որոնք  
 իրարմէ այնքան հեռու չեն: Մենք հայերէնի այս  
 զանազանութենէն այն կը հետեւցնենք թէ իրա-  
 նեաններն ունէին երկու մօտաւոր հնչում եւ  
 հայերը իրենց հարուստ այբուբենով կրցած են  
 այս երկուքը ճշգիւ նշանակել, ինչ որ կարելի  
 չէ եղած պահլաւական շատ անկատար այբու-  
 բենով: Ասկէ զատ այն շեղումները որ կը նկա-  
 տենք մեզի ծանօթ պաշտօնական պահլաւերէնին  
 մէջ, անշուշտ գոյութիւն չունէին հիւսիսային-  
 արեւմտեան պահլաւ բարբառին մէջ, որմէ փոխ  
 առած են հայերը եւ որուն հետքերը նոր գուրս  
 եկան՝ Թուրքիոյ գիտական արշաւանքին ժա-  
 մանակ: Այս ձեւով մեկնել պէտք է նաեւ  
 հոն--շաի, պ-դ-ռ--եւ եւ իւրանէ բառերը, որոնցմէ  
 առաջին երկուքին մէջ --ի գէմ կը գտնենք  
 պհլ. af, իսկ երրորդին մէջ a: Այս մասին տես  
 Meillet հայագէտին յօդուածը (MSL, 17,  
 242—250):

Ասորերէնէ փոխառեալ բառերու մէջ ալ  
 կը գտնենք նոյնպիսի անկանոնութեւններ. այս-  
 պէս՝ --ի դէմ օ ունին՝ Ծբ--ի, Ծ--ի--ն.

Ուրհայ, Զուլն, Գուգայ, Բաբանայ, Կապիկայ,  
 Աւելի անկանոն են Բարձրայ = *Baršaumā*,  
 Խարտայ = *xargālā*, Զուգայ = *šayāfā*, Կապիկայ =  
*safsēr* բառերը: Ասոնց համար ալ պէտք է կար-  
 ծել որ ծագած են ասորական բարբառային  
 ձեւերէ, ինչպէս որ քանի մը հասին համար  
 արդէն կրնանք յայտնի կերպով ալ ցոյցնել.  
 Ինչ. Ուրհայ = ասոր. *Orhāi*, յետին ձեւով  
*Urhōi*, Զուլն = ասոր. *šūšan*, բայց յունարէն  
 տառադարձութեամբ *Σουσαννα*:

Յունարէնէ փոխառեալ բառերու մէջ ու-  
 նինք 13 ձեւ, որոնք նշյնպէս անկանոն են. այս  
 բառերն են՝ Կապիկայ = *αχομήτης*, Բաբանայ =  
*βάρβιτος*, Կապիկայ = *χόλυβα*, Կապիկայ = *μαρτύριον*,  
 Զուգայ = *νίτρον*, Զուգայ = *ιανουάριος*, Կապիկայ =  
*περιοδευτής*, Կապիկայ = *πίτυς*, Կապիկայ =  
*πρόσχωμεν*, Կապիկայ = *σεχουνδι-*  
*χήριος*, Կապիկայ = *σπόγγος*, Կապիկայ = *τυβί*, Կապիկայ =  
*φόλος*:

Այս բառերէն քանի մը հասար Էրեպան  
 կը սխալի յունարէնէ փոխառեալ նշանակելով.  
 այսպէս Բաբանայ եւ Կապիկայ կը ծագին ոչ թէ  
 յունարէնէ, այլ արաբ. *barbut* եւ *katrūn* ձեւե-  
 րէն, որոնց -- ձայնը համաձայն է մերինին: Միւս  
 բառերէն ոմանք սխալ տառադարձութիւններ  
 են կամ ձեռագրական սխալներ. օր. Զուգայ  
 ուղիղ ձեւը յետոյ դարձած է Զուգայ -- եւ --  
 տառաձեւերուն նմանութեան պատճառով. Կապիկայ  
 բառը պէտք է կարդալ Կապիկայ. Կապիկայ ունի  
 նաեւ կանոնաւոր Կապիկայ ձեւը. միւսները կամ



նախ՝ այրուքների մէջ իրրեւ առանձին տառեր մտած չըլլալով՝ յոյն եւ վրացի այբուբենի համեմատութիւնը կը վերնայ, երկրորդ՝ Թրակացւոյն քերականութիւնը՝ որ Ծ երկբարբառ միայն կը յիշէ, ուղղակի յունարէնի վրայ ձեւուած ըլլալով՝ վստահելի չէ. այսպէս՝ հայերէն չեն -ի, -ի, է-, -ը- երկբարբառները, -ո- երկբարբառ չէ եւ համեմատութեան համար կը մնան միայն --, է-, է-: Երրորդ՝ տառադարձուած բառերը այնպէս առատ չեն, ինչպէս ձայնաւորներու եւ բաղաձայններու համար, եւ եղածներն ալ խնդիր է թէ որչափ հարազատ պատկեր կը ներկայացնեն:

Մեր արդի գրական լեզուն, ինչպէս եւ բարբառներու ամենամեծ մասը երկբարբառ չունի: Երկբարբառ չունի նաեւ թուրքերէնը, որուն ազդեցութիւնը այնքան մեծ է մեր լեզուին վրայ, շեռեւարար երկբարբառի գիտակցութիւնը կը պակսի մեզի: Դժուար է մեզի համար ըմբռնել թէ ինչու օրինակ է-, --, է- եւն երկբարբառ են, որովհետեւ մենք այս ձեւերը վարժուած ենք կարդալ միշտ *yes, ay, iv* եւն, որոնք մէկ ձայնաւորէ եւ մէկ կամ երկու բաղաձայնէ բաղկացած վանկեր են: Երկբարբառի գաղափարը ըմբռնելու համար մենք պէտք ենք դիմել ուրիշ լեզուներու համեմատութեան, ընդհանուր ձայնախօսութեան եւ լեզուաբանութեան օրէնքներուն: Ասոնցմէ կ'երեւայ որ երկբարբառները միութիւնն են երկու տարբեր ձայնաւորներու՝ որոնցմէ մէկը կը հնչուի ամբողջ, իսկ միւսը կիսատ, խուսափուկ հնչումով, որով եւ կը



34. Ա. խմբի երկբարբառներու կազմիչ  
երկրորդ տարրն է յ. որոշենք նախ այս գրի  
ձայնը:

Արդի գրական լեզուին մէջ յ տառը ըստ  
տեղւոյն երեք տարբեր հնչում ունի. բառա-  
սկիզբը կը հնչուի հ, ըստ մէջը եւրապական յ  
(գերմ. յ), բառավերջը անձայն է: Անմասութիւն  
կ'ըլլայ կարծել որ Ա. Մեսրոպ ինքը այսպէս  
ըրած, այսինքն միեւնոյն տառին երեք տարբեր  
հնչում տուած ըլլայ: Քանի որ հ գիրը կար,  
ինչ պէտք կար նորէն յ մ'ալ հնարելու. ուրիշ  
խօսքով եթէ բառասկզբի յ գիրը կը հնչուէր  
հ, ինչ պէտք կար հ գրով չգրելու: Ըսել է թէ  
յ եւ հ տարբեր ձայններ էին, ինչպէս որ տարբեր  
են նաեւ ներկայ բարբառներէն շատերուն մէջ,  
որոնց մէջ յ եղած է կամ կիսաշունչ հա-  
գագ մը եւ կամ բոլորովին ջնջուած է, իսկ  
հ պահուած է հ կամ դարձած ի (օր. Յա-  
կոբ > յ-ի-բ, ա-ի-բ, հաց > հ-ց, ի-ց): Ուրիշ  
լեզուներու տառագարձութենէն կ'երեւայ որ  
բառասկզբի յ գրին հնչիւնն էր եւր. յ. օր.  
յազել պհլ. *yasēn*, յամյր < ասոր. *yaxmāra*,  
յաշտ < պհլ. *yašt*, յասպիս < յն. *ἵασις*.  
համ, նաեւ հայերէնէ տառագարձուած ձեւերէն  
յն. Ագաթանգեղոսի մէջ յԱնի > *lavi*, յա-  
աակ > վրաց. *ի-ა-ი* (տես Արրա. 1898,  
368բ): Ընդհակառակը հ ձայնին դէմ կը  
գանենք հ ինչ. հազար < պհլ. *hašar*, համակ  
< պհլ. *hamāk*, հեգենայ < ասոր. *hegyānā*,  
հերմէս < յն. *έρμης*, կամ աւելի թանձրացած

ձեւով՝ հաշիւ < ասոր. ܐܫܬܐ, հազը < ասոր. ܬܪܝܬܐ, չեր (գաւառը) > յն. Χερῶς եւն.

Ծեկնելով այն սկզբունքէն որ միեւնոյն գրին միշտ միեւնոյն ձայնը պիտի ունենար այբուրենին գոնէ նոր հնարման ժամանակ, կրնանք ընդունիլ թէ բառամիջի յ եւս նոյն իւր յ ձայնն ունէր. ասոր համաձայն կուգան արգի միահամուռ ընդունուած հնչումը եւ ձայնախօսական օրէնքները:

Ընդհանուր ձայնախօսութիւնը կը հաստատէ որ բաղաձայն յ (գերմ. j) միանալով նախորդ ձայնաւորի մը հետ՝ կրնայ ստանալ կիսառ (ոչ բոլորովին ամբողջական) հնչում եւ ասով կը կազմէ երկբարբառներու շարք մը: Այս կիսառ հնչումը՝ որ աւելի մօտ է ի ձայնաւորին, կը նշանակուի ի կամ ի ձեւով, զանազանելու համար յ հնչիւնէն՝ որ բաղաձայն է: Այս կիսառ ի հնչիւնը կը մնայ յաջորդական բաղաձայնի մը քով, իսկ ձայնաւորէ առաջ կամ բառավերջը նորէն կը ստանայ բաղաձայնային հնչումը: Այսպէս գերմ. ein բառին մէջ ի երկբարբառային է, իսկ գերմ. Ei, Eier (ձու, ձուեր), անգլ. boy (մանչ). ռուս. боѣ (կռիւ) բառերուն մէջ ի բաղաձայն է, այսինքն կը հնչուի զուտ յ: Այս եւեւոյթն սակայն ընդհանուր չէ եւ բառավերջի երկբարբառը կրնայ մնալ նաեւ երկբարբառ. այսպէս իտալ. poi, giammai բառերուն մէջ վերջաձայն ի իրօք կիսաձայն է եւ ոչ յ:

Գծրախտարար հայերէն այբուրենը այս

կրկին ձայնաբանական երեւոյթներու համար առանձին նշաններ չունի. կան միայն այ, այ գրչու-թիւնները եւ ոչ բնաւ -ի, -ի կամ նմանօրինակ ձեւեր. բայց ասկէ չինք կրնար հետեւցնել թէ յ միշտ բաղաձայն է: Այսպէս կարծեւու տեղիք կրնար տալ նաեւ Թրակացւոյն քերականութիւնը, ուր այ, այ իբր երկբարբառ յիշուած չեն եւ յն. աւ, օւ երկբարբառներուն իբր համապատասխան ձեւ դրուած են -ի, -ի: Խնդիրը կը փոխուի, երբ ի նկատի առնունք այն քանի մը բառերը, որոնց համազօրը կը գտնենք նաեւ պարսկերէնի եւ վրացերէնի մէջ. այսպէս են այ երկբարբառին համար պայ- եւ պայ-ը, որոնց իրանեան ձեւերն են պրս. *payman*, *paykar*, վրացերէն փոխառութեամբ *պէմանի*, *պէկար*: Իրանեանները կը ցուցնեն որ ասոնց մէջ յ բաղաձայն է, ընդհակառակը վրացին կը ցուցնէ ձայնաւոր: Ըսել է թէ երկբարբառներու հնչման երանգը զանազան է իւրաքանչիւր լեզուի մէջ եւ հետեւաբար անոնց տառադարձեալ ձեւերը զգուշութեամբ միայն ընդունելի:

Եւրոպացի հայագէտները առհասարակ այնպէս կ'ընդունին որ այ երկբարբառ է բաղաձայնէ առաջ եւ բաղաձայնաւոր վանկ է ձայնաւորի քով: Ասոր համար է որ ներկայ բարբառներուն մէջ առաջին պարագային այ կը դառնայ -, է, երկրորդ պարագային անփոփոխ կը մնայ. ինչ. հայր > հոր, հէր, բայց հայել > հայլի, հայել > հայնլ, է-յել > է-յել: Եթէ Թրակացնի այ իբր երկբարբառ չի յիշեր եւ կը դնէ

միայն ինքնահնար ու ձեւը, ասիկա, եթէ յունա-  
րէնի ստրկական հետեւողութիւն չէ, կրնայ մեկ-  
նուիլ անով՝ որ այ երկու արժէք ունենալով՝  
մշտապէս երկրարբառ չէր:

Միջավանկի այ ձեւէն աւելի դժուար է  
վերջավանկի այ ձեւին մեկնութիւնը: Ամէն օտար  
բառ՝ որ կը վերջանայ *a* ձայնով՝ հայերէնի մէջ  
կը դառնայ այ. ինչպէս՝ ֆէդայ < ասոր. *awīlā*,  
սորաւայ < ասոր. *sātānā*: Արդի հայերէնի մէջ  
այս այ կը հնչուի պարզապէս =. բայց ասկէ չի  
հետեւիր որ հին հայերէնի մէջ ալ այնպէս էր:  
Եթէ վերջավանկի այ հնչուած ըլլար =, ինչ  
պէտք կար աւելորդ *y* մ'ալ դնելու. հայերէնը  
ունի վերջաձայն = գրչութիւնը (ինչ. ն=, շ=, իմ  
եւն) եւ այս պարագային ալ կրնար նոյն ձեւը  
գործածել, մանաւանդ որ բառերուն մայր ձեւն  
ալ այնպէս կը պահանջէր: Իսկ եթէ այդպէս  
չէ, ապա ուրեմն *y* ձայնը հոս ալ հնչուած է:  
Ճշմարիտ է թէ վրացերէն փոխառութեանց մէջ  
այս պարագային առհասարակ կը գտնենք = (օր.  
հրէայ > հո-րէ-, շ-ի- > շ-ի- եւն). բայց ասիկա  
ալ պէտք է վերագրել վրացերէն լեզուի ձայնա-  
բանութեան, ուր վերջաձայն բաղաձայն եւ  
մանաւանդ *y* գոյութիւն չունի: Վրացերէնին ճիշտ  
հակառակ կը գտնենք *y* հ. եւ ասորի ձեւեր-  
որոնք կը ցուցնեն որ բառավերջի այ կը հնչուէր.  
հմմտ. օր-հայ = ասոր. *Orhāy*, (վարսա) վի- <  
պհլ. *-vīrāy*, րէշ- > պհլ. *pəšurāy*:

Հիւսիսային կը կարծէ որ հայերէնի մէջ  
վերջաձայն այ կը հնչուէր =, որովհետեւ տար-

օրինակ կը դանէ որ հայը ասորիներէն ա լսէր  
 եւ ինքը այ գրէր. բայց այսպիսի երեւոյթ կը  
 ոչ միայն զարմանալի չէ, այլ եւ մինչեւ այսօր  
 ալ կենդանի է մեր մէջ: Պօլսոյ մէջ թուրքերը  
 կը հնչեն *ա-վ-ա, ա-դ-ա*, հայերը *ի-վ-ի, ի-  
 դ-ի*: Եթէ միեւնոյն քաղաքին մէջ քովէ քով  
 ապրող ժողովուրդներ կրնան տարբեր հնչու-  
 ներ գործածել, որչափ աւելի երկրէ երկիր,  
 Ասորիքէն Հայաստան:

Վերջաձայն *այ*-ին հնչումը պարզելու համար  
 թանկագին օրինակ մ'է յն. Ագաթանգեղոսի  
 մէջ *Αὐταῖς* ձեւը, որ Օդայ անուան տառա-  
 դարձութիւնն է եւ յայտնի կերպով կը ցուցնէ  
 որ բառավերջի *յ* հնչական արժէք ունէր:

Իբր այսպիսի ապացոյց կը ծառայէ նաեւ  
 սեռականի կազմութիւնը. *այ* վերջացող բառերն  
 սեռականի մէջ կ'ըլլան *այի*, իսկ *ա* վերջացող-  
 ները՝ *այ*, որուն մէջ *յ* համապատասխանելով է  
 ձայնին, անոր մերձաւոր հնչում մը ունենալու  
 էր եւ *ա* թէ ըլլալու էր անձայն:

Կը մնայ միայն ստուգել թէ այս հնչումը  
 երկբարբառային էր, ինչպէս իսաւ. *mai, giam-  
 mai* բառերուն մէջ, թէ՛ բաղաձայն, ինչպէս  
 ռուս. *край*, թրք. *saray* բառերուն մէջ: Ասիկա  
 ստուգելու միջոց չունինք: Եւրոպացի հայագէտ-  
 ները կ'ընդունին իբր բաղաձայն: Ասոր իբր ապա-  
 ցոյց թերեւս ծառայէ այն կրկնակ ձայնափոխու-  
 թիւնը՝ որուն ենթարկուած է վերջավանկի *այ*  
 կովկասեան բարբառներուն մէջ. *այսպէս՝ տղայ,  
 փեսայ > տղա, փեսա, բայց տղայն, փեսայն > տղին,*

էի-իւ. վերը ըսուածներուն համաձայն՝ ընդու-  
նելով որ որոշեալ ձեւերուն մէջ իբր բաղա-  
ձայնի քով այ երկրարբառ է, առանց յօդի ձեւն  
ալ պիտի դառնայ բաղաձայնաւոր, քանի որ  
միւսէն տարբեր ձայնափոխութեան կ'ենթարկուի:

Այ երկրարբառին հետ համեմատելի է այ,  
Ասիկա նոր բարբառներու մէջ դարձած է --,  
որմէ ալ է-, եւ. գրական լեզուին մէջ ձայնաւորէ  
առաջ կը հնչուի այ (օր. հայ-ի-ս), բաղաձայնէ  
առաջ -- (աւ-ս-ը): Այս տարբերութիւնը կը  
ցուցնէ երկու բան. նախ՝ որ այ, ինչպէս եւ --,  
երկու տարբեր ձեւ ունէր հին հայերէնի մէջ,  
մին իբր երկրարբառ, միւսը իբրեւ բաղաձայ-  
նաւոր վանկ, երկրորդ՝ որ այ եւ -- հնչում-  
ներէն մին կամ միւսը գոյութիւն չունէր նա-  
խապէս:

Ծննդ կը կարծենք որ -- հնչումը գոյու-  
թիւն չունէր հին ժամանակ. եւ այ երկրար-  
բառին հնչումն էր ձայնաւորէ առաջ օյ, բա-  
ղաձայնէ առաջ երկրարբառային օ. ասոր իբր  
լաւագոյն հաստատութիւնը կը գտնենք վրա-  
ցերէն տառագարձութիւններէն՝ փ-դ-ե-դէ < փ-  
դ-դ, փ-ե-դէ < փ-դ, մասամբ կրնանք յիշել նաեւ  
ա-թ-դէ < ա-թ-դ, շ-դէ < շ-դ, չ-դ-դէ < շ-դ-դ,  
որոնք իրենց « ձայնով կը ցուցնեն որ յամենայն  
դէպս այ երկրարբառին մէջ -- ձայնը չկար:  
Ու հնչումը կը գտնենք վրաց. պ-տ-ը-դէ < պ-տ-  
ը-դ, ս-տ-ը-դէ < ս-տ-ը, շ-տ-դէ < շ-տ, փ-տ-դէ < փ-տ,  
չ-տ-դէ < չ-տ, բառերուն մէջ, որոնք կամ պարս-  
կերէնէ են եւ կամ Հայոց յետին հնչման հա-

ձեմատ: Յ. յն եւ լատին տառադարձութիւններէն  
ուելիք *Xoθαται* (խոթ), *Capotes* (կապոյա  
լեռը), որոնց մէջ նոյնպէս օ կը գտնենք եւ ոչ  
ու: Գալով իրանեաններուն՝ հոս ալ ուելիք օ  
կամ օ. առաջինին կը պատկանին *ῥοι* < *բ-յ-ր*,  
*baoidi* > *բ-յ-ր* եւն, որոնց մէջ օի եւ -յ ճշտել  
համապատասխան են իրարու, իսկ երկրորդին կը  
պատկանին *takōk* > *թ-կ-յ-ի*, *ōš* > *յ-թ*, *ahōš* > *ա-յ-շ*,  
*bōš* > *բ-յ-թ* եւ նմաններ, որոնց օ ձայնի վրայ  
արդէն խօսած ենք վերը՝ -- ձայնին վրայ խո-  
սելու ժամանակ:

Այ երկրորդին նման՝ բառավերջի -յ  
եւս կը փնայ անորոշ, թէ եւ եւրոպացի հայա-  
գէտները կ'ընդունին օյ: Տառադարձութեանց  
մէջ ուելիք *չի-ր-յ* > յն. *ζουάρου*, բայց ասիկա  
անշուշտ արժէք չունի, որովհետեւ յունարէն  
վերջաձայն օս *ու* թէ հ.յ. -յ երկրորդին  
տառադարձութիւնն է, այլ յունարէն սեռա-  
կանի մասնիկը: Արժէք չունի նոյնպէս վրաց.  
*saro* < հ.յ. *ս-ր-յ* շոճի, որովհետեւ վրացե-  
րէնի մէջ յ ձայնը չգտնուելով՝ ջնջուած է:  
Աւելի օգտակար են ասոր. *Awāšō* > *ԱԲԻՇ-յ*,  
*պհշ*. *Vndoi* > *Վնդ-յ*, բայց ասոնք ալ խնդիրը  
չեն լուծեր վճռականապէս: Տարակոյս չկայ որ -յ  
եւ -յ իրարու համադիր ձեւեր են եւ ինչպէս որ  
բառավերջի -յ ընդունուած է իբր բաղաձայ-  
նաւոր, նոյնպէս ըլլալու է նաեւ -յ:

Երկրորդ կարգի երկրորդներն են --,  
ի-, ի-, որոնք կազմուած են - գրով: Քննենք  
նախ այս գրին հնչումը:

Ի գիրը այսօր մեզի համար համազօր է լինի։ Ամենուն յայտնի են այն վեճերը՝ որ երկար ժամանակ վարեցին Կովկասի հայերը այս գրեթե ուղղագրութեան շուրջը։ Խնդիրը ցորձափ կը վերաբերի արդի լեզուի ուղղագրական բարեփոխութեան, չի պատկանիր մեր նիւթին. բայց այս պայքարի առաջնորդ Աղայեանը խնդրի մէջ կը խառնէր նաեւ հին չայոց հնչական դրութիւնը եւ դնելով սուս ու սխալ հիմունքներ, անոնցմով կ'ուզէր ապացուցանել իր տեսութիւնը։ Իր կարծիքով հին չայերը չունէին լ, ե գրերը. ինքը համարձակած է մինչեւ անգամ այն տարօրինակ գաղափարը յայտնելու թէ «չնումը գրելը գրողի կամքիցն էր կախուած, իսկ կարդալը՝ կարդացողին» (Ծուրճ 1890, էջ 1585)։ Իբր թէ երբ կը գրէին Գ՝, ազատ էին կարդալու Գ՝, Գ՝, Գ՝, Գ՝։ Այսպիսի բան ի հարկէ Աղայեանի ենթադրութեամբ միայն գոյութիւն ունի. իսկ բոլոր եւրոպացի հայագէտները համոզուած են որ Ս. Մեսրոբ աշխատեւ է կազմել ըստ կարելոյն ճիշտ հնչական այբուբեն, որուն ներքութեան ու մանրակրկիտ ճշտութեան ապացոյց են մեր Ե-, Ե-, Ե-, Ե-, Ե- եւն մերձաւոր հնչիւններու զանազանութիւնը։ Ասոնց վրայ քիչ մը վարել։ Աղայեանի կարծիքներուն հերքումը տեսանք արդէն նախորդ գլխուն մէջ. հոս պէտք է միայն խօսիլ - եւ լ գրերու տարբերութեան վրայ։

Ահա թէ ինչ կը գրէ ինձ հայագէտ Meillet իր նամակին մէջ այս խնդրի առթիւ.

“Գալով ի եւ – գրեթէ, եւ համոզուած եմ որ  
ասոնք իրարմէ տարբեր ձայներ էին, առանց  
որոյ այբուբենի հեղինակը զանոնք զանազանած  
չպիտի ըլլար: Հակամէտ եմ կարծելու որ ի կը  
նշանակէր իսկական բաղաձայն մը, թերեւս  
արդէն շրթնատափային ի ձայնը. բայց այս վեր-  
ջին կէտին վրայ ապահով չեմ. յամենայն դէպս  
անշուշտ spirante էր, կրկնաշրթնային կամ  
շրթնատափային. իսկ – աւելի բաղաձայն – էր.  
(1913, Դեկտ. 23):

Ի գրին զուա բաղաձայն չըլլալուն, այսինքն  
ի հնչիւնը չունեալուն զօրաւոր ապացոյց մ'է  
Թրակացոյն վկայութիւնը, որ իր դասաւորու-  
թեան մէջ – գիրը կը դնէ ձայնաւորներու եւ  
այն ալ կարճ ձայնաւորներու շարքը, մինչդեռ  
ի գրի մասին յիշատակութիւն չկայ: Ասկէ  
կ'երեւայ որ – ճիշդ համապատասխանն է յն. ս  
ձայնին: Արդէն աւելի յետին յունաբան գրիչ-  
ները այս առօր կը գործածեն իբրեւ ի–, ինչ.  
ի–բ–ի, հ–դ–դ–դ– փխ. կիւրակէ, հիւպատոս:

Աղայեանի եւ իր բոլոր համամիտներու  
մեծագոյն սխալն այն է որ իրենց հիմ կ'առնուն  
արդի արտասանութիւնը եւ կը կարծեն որ ար-  
տասանութիւն ըսուածը այնպիսի քարացեալ  
բան մըն է, որ դարերու ընթացքին մէջ պար-  
տաւոր է անփոփոխ մնալ: Մինչդեռ չկայ աւելի  
յեղյեղուկ ու նուրբ բան քան մարդկային  
հնչումը: Բայց նոյն իսկ եթէ ի նկատի առնուիք  
մեր արդի հնչումը, կը գտնենք խուճի մը բար-  
բառներ, որոնց մէջ – եւ ի ձայներու զանազա-

նութիւնը կայ՝ Այսպէս Հազգո, Սուշաւա եւ  
Մարաղա ունին առանձին առանձին - եւ ի ձայ-  
ները. - անգլ. W կամ S. - Տնչման մատիկ  
ձայն մ'է, որ կը գտնուի թէ՛ բառին սկիզբ, թէ՛  
մէջը եւ թէ վերջը. այսպէս Հազգո - բլէն  
"վրան" (կարդաւ - բլէն), - բլ "որ" (կարդա-  
ւ - բլ), Սուշավայի մէջ հաւ, ցա (կարդաւ հաւ,  
ցա), Մարաղայի՝ բարբառով սովորաբար կրա-  
ւորականի վերջաւորութեան մէջ. ինչ. գ-դը-  
-բէլ, ի-բէլ, ի-բէլ, ի-բէլ, ի-բէլ, ի-բէլ, ի-բէլ,  
+ -բէլ, - - - - (վանք), - - - - , - - - - , - - - - :

Բացի անգլերէնէ՝ - ձայնը կը գտնենք  
յատկապէս քրդերէնի մէջ. օրինակ՝ Յովհ.  
ԺԺ 16 (ըստ բողոքականներու թրգմ. ապ.  
Պօլիս 1872). Ո-է ի-դէ Գ-տ-ի լը Կ-թէ - - - - Գ-  
+ լը Ի-թէ - - - - (յայնժամ ետ զնա ի ձեռս  
նոցա, զի ի խաչ ելանիցէ). Հոս գտնուած երեք  
- - - - թիւները կը ներկայացնեն W = - ձայնը  
(we, օւո, աո)։

Նոյն - ձայնը կար նաեւ հին Հայոց մէջ,  
որով եւ կազմուած են - , Ի- , Ի- երկբարբառ-  
ները. հետեւաբար պէտք է հնչել ասոնք իւր  
- - - , Է- - - , Է- - - :

Ինչպէս ա, օ, նոյնպէս եւ այս տիպի երկ-  
բարբառները ըստ ընդհանուր ձայնաբանու-  
թեան կրնան ստանալ երկու ձեւ. բաղաձայնէ

1 Մարաղայի լատ գործանալի բարբառին վրայ մե-  
րմունք քննութիւն մը պատրաստեցի 1920 թուի ամառը  
նոյն իսկ տեղւոյն վրայ (անտիպ)։

առաջ երկրաբան են, իսկ ձայնաւորէ առաջ  
 եւ բառաւերջը կը ստանան թաւ հնչիւն, - մասը  
 վերածելով լ. Այսպէս լա. aurum "սկի",  
 բայց avis "թռչուն", Սակայն ինչպէս -յ, -յ  
 տիպի երկրարբաններու մէջ՝ նոյնպէս եւ հոս  
 օրէնքը ընդհանուր չէ եւ ունինք երկրարբանային  
 ձեւեր նաեւ ձայնաւորէ առաջ եւ բառաւերջը.  
 ինչ. անգլ. now (նոու) "այժմ. արդ.", how  
 (հոու) "ինչպէս", however (հոու-էր) "թեեւ"  
 nowhere (նոու-էր) "նչ ուրեք", nowise (նոու-յւ)  
 "ամենեւին", գերմ. Bau ("շինուածք."), Frau  
 (կին) եւն.

Հիւպշման կը կարծէ որ հայերէնի մէջ ալ  
 --, է-, է- հնչուած են բաղաձայնէ առաջ երկ-  
 րարբան, իսկ ձայնաւորէ առաջ եւ բառաւերջը  
 ճշդիւ -լ, էլ, էլ, այս պատճառով ալ իր տառա-  
 դարձութեանց մէջ կը գրէ hav, havat, t'et'ev  
 եւն. Meillet այս եւթագրութիւնը վերջնական  
 չ'ընդունիր եւ զգուշութեան համար կը տառա-  
 դարձէ hav, havat, t'et'ev եւն. Յունարէն, պարս-  
 կերէն եւ վրացերէն ասորդարձութիւնները  
 վճռական պատասխան մը չեն տար այս մասին.  
 յունարէնը չունենալով թաւ v ձայնը՝ ամէն  
 պարագայ մէջ ալ կը դնէ երկրարբան. այսպէս  
 Սիւնի < Συνή, Συννία, Συυνία, S-բ-ն (S-բ-ն  
 > Τάρωννα (այսպէս Պրոկոպիոսի քով. իսկ  
 յետնաբար Ταρών, ինչպէս ունի Կոստանդին  
 Ծիրանածին), լա. Tauranitium (իմա Tarauni-  
 tium), Բ-բ-ն > Βαγαδάν, Զ-բ-ն < Σα-  
 ποδανδών, Ա-բ-ն (Οττ) < Αδραϊας, Ղ-բ-ն >

ζουάρου, Բ-դր---նդ > Βαργαυάνδηνγ (Պողո-  
մես). Քնչեւ իսկ չ ձայնին դէմ կը գտնենք  
օս. ինչ. վ-յ-ը > Ουαλάρς, վ-ը-ը-ը-ը >  
Ουαλαρσαπύτ, եւ խեղճ ու կրակ ձեւի մը տակ՝  
վ-ն-վ-ն-ն > Ουαυήος: Պարսկերէնն ու վրացե-  
րէնը ունին ընդհանուակը միայն բաղաձայն Վ եւ  
այսպէս ալ կը տառադարձեն. օր. վրաց. հ-մ-վ-  
< հ-մ-ւ-, Կ-ը-վ-ը < Կ-ը-ւ-, ք-վ-ն < ք-ւ-ն,  
բօն, -վ-ը < -ւ-ը, Վ-ն-վ-ն-ը < Վ-ն-ւ-ն-ը, ար-  
ձ-վ-ն < -ը-ն- եւն: Նոյնպէս նաեւ-ւ-ը < իրան.  
navašard, Արաւազդ < զնդ. ašavašda- եւն:

Մենք կը կարծենք որ --, է-, ի- ամէն  
պարագայի մէջ ալ հնչուած են au, eu, iu (ւ-ւ-,  
է-ւ-, ք-ւ-) եւ ոչ բնաւ av, ev, iv. նոյն իսկ րա-  
ւերու վերջը. ապա թէ ոչ ինչ պատճառ ունէր  
Ս. Մեսրոբ չգրելու հ-ն-վ, այլ հ-ն-ւ: Ի՞նչ  
առարկուի թէ նա հետեւեր է յունարէնին,  
այսինք կուրացած է յոյն ուղղագրութեան ոճով,  
այս ժամանակ ինչո՞ւ բառասկիզբն ալ յունա-  
րէնի համեմատ գրած չէ --, այլ վ: Որչափ որ  
մեր շրջակայ լեզուներու առաջարձութիւնները  
անկարող են խնդիրը պարզելու, այնու ամե-  
նայնիւ ունինք վրացերէն երկու պատուական  
օրինակ, որոնց մէջ վերջաձայն -- տառադար-  
ձուած է --<sup>1</sup> (ի-ւ < ի-ւ-, քէ-ւ < ք-ւ-) ու  
յայանի կերպով կը ցուցնեն որ վերջաձայն --

1 Նոր հրատարակուած «Ուսումնական հայերէն  
էզրէի հոյ-կապ աշխատութեան մէջ (էջ 489) մեծ ան-  
ուղղութեամբ այս -- (ու) ձայնափոխութեան տեղ  
դրուած է ար :

4ր հնչուէր ---: Ասոնց կրնանք աւելցնել նաեւ  
 -լէլ < -դէ-- , որուն մէջ է ձայնաւորը , յամենայն  
 դէպս չի կրնար դրուած ըլլալ ի՛լ ձայնախմբին  
 դէմ, եւ կը պահանջէ երկրարժառային ի- (լէ---):  
 Յիշենք վերջապէս յն. ւ ձայնին մետրոքեան  
 տառագարձութիւնը ի- ձեւով. օր. Κυριαχός >  
 դէ-բ-ի- , λαβύρινθος > ւ-բէ-բէլի- , ζέφορος >  
 չէ-է-ի- եւն: Եղն գիրը Ե. դարուն կը հնչուէր  
 արդի ֆրանս. ւ = գերմ. ւ գրին պէս, Հայերը  
 այս հնչիւնը չունեալով, մօտաւորապէս նոյն  
 ձայնը պատկերացնելու համար կրնային գրել  
 ի- , - , առնուազն ի. իսկ եթէ գրեր են ի- ,  
 ուրեմն ասիկա ունի միջաւոր հնչիւն մը, այն է  
 երկարարժառային ի- եւ ո՛չ ընաւ ի՛լ:

Մասնաւոր ուշադրութեան արժանի են  
 --, ի- յանգող բառերու յոգնակին ի, ի-  
 հղովման եզ. եւ յոգ. գործիականները: Օր.  
 ք-նէ-+ բառը այսօր երկու տարբեր հնչում ունի.  
 ոմանք կը կարդան ք-նէլէ, ուրիշներ ք-նէնէ+:  
 Ասոնցմէ որն է ուղիղը: Բայց գիտենք որ +-լ-+  
 բառի յոգ. գործ. +-լ-+-+ ձեւը կ'ըլլայ +-լ-+ե+ ,  
 որմէ կ'երեւայ որ -- երկարարժառ էր: Ասոր  
 համեմատ ալ պէտք է որ ընդունինք ք-նէ-+  
 (երկարարժառ) եւ ո՛չ ք-նէլէ: Հիւպշման ընդ-  
 հակառակը կը կարծէ որ +-լ-+ե+ , ք-նէ-+ սխալ  
 ձեւեր են. Ե. դարուն Հայերը կը կարգային  
 +-լ-+ե+ , ք-նէլէ, որ +-ի յաւելումով կը կազ-  
 մուէին եզ. +-լ-+ե+ , ք-նէլ ձեւերէն, ճիշտ ինչպէս  
 քի-+լ ձեւէն յոգ. քի-+լէ, կամ եզ. ի-+- ,  
 յոգ. ի-+-+ , եզ. հ-լէ- , յոգ. հ-լէ-+ , առանց

որ եւ է փոփոխութեան: Հիւպշման ընդոննելով նախապէս կաքաւ, հաշիվ, բանիվ, քաղաքաւ իւր հարադատ հնչում, բնական է որ յոգնակիին մէջ ալ պիտի պահանջէր կաքաւ, հաշիվ, բանիվ, քաղաքաւ, թէեւ ասոնք համաձայն չըլլային իր նախապէս ընդունած այն օրէնքին, որ —, է-, է- բաղաձայնէ առաջ երկարորաւ են: Ամբողջ հակասութիւնը կը վերնայ՝ եթէ ընդունինք որ —, է-, է- ամէն պարագայի մէջ ալ երկարորաւ էին եւ մնաւ չէին կրնար ստանալ —վ, էվ, եվ թաճ, հնչումները:

Իբր վերջին նկատողութիւն աւելցնենք այն՝ որ արդի գրականին մէջ է-, է- ուրիշ ձայնափոխութիւն մ'ալ կրած են. այն է որ թէեւ բառին մէջ եւ բառին ծայրը կը հնչուին էվ, էվ, բայց բառին սկիզբը դարձած են եւ = yev, իւ = yu, yü (հմտ. իւր = yur, իւշ = yüχ): Ասոնց մէջ y բոլորովին եկամում է եւ մնաւ գոյութիւն չունէր հին արաւսանութեան մէջ. հմտ. եւզաղ < յն. Εὐζάλιος, եւրակիկոն < εὐράχουλον, եւ վերը՝ սկզբնաւու է գրի մասին ըսուածները:

36. Երրորդ կարգի երկարութիւնները կազմուած են իւրաքանչիւրը մի զոյգ ձայնաւորէն: Ասոնց վրայ երկար չպիտի ըլլայ մեր խօսքը, որովհետեւ նախկին բացատրութիւնները արդէն շատ բան կը պարզին նաեւ այս երկարութիւններու մասին: Ասոնց մէջ առաջին նկատելի խումբն է է-, է-, է- եռեակը: Արդի լեզուին մէջ է- կը հնչուի ya, այսինքն իբրեւ մէկ բա-

զաձայնէ եւ մէկ ձայնաւորէ բաղկացած ձայնա-  
խումբ, ինչ որ երկբարբառ չի նշանակեր: Ասով  
հանգերձ է՝ ունի մեր մէջ զանազան հնչիւններ.  
այսպէս՝ ~~ալ-տ-ւ-թ-ւ-ն~~ կը հնչուի արեւմտեան  
հայոց մէջ *azadut-yan*, արեւելեան հայոց մէջ  
*azatu-t'ian*, ~~ալ-տ-ւ-ն~~ երկուքին մէջ ալ հաւասա-  
րապէս *(t)iārən*, բայց ~~ալ-տ-ւ-ն~~ կ'ըլլայ *seav*, իսկ  
~~ալ-տ-ւ-ն~~ կը տաաանի ~~ալ-տ-ւ-ն~~ եւ ~~ալ-տ-ւ-ն~~ հնչիւններուն  
մէջ: Ըստ այսմ է՝ երկբարբառին արդի հնչիւն-  
ներն են *ya*, *ia*, *ea*: Առաջինը ընդունելի չէ *հ/ն*  
լիզուին համար, որովհետեւ, նախ՝ այս պարա-  
գային հարկ կ'ըլլար գրել յա (ինչպէս ունինք  
Յ-ի-թ, յ-ա-յր < *yaamirā*). երկրորդ՝ եւ երկ-  
բարբառ է, անոր համար որ լեզուին ապագայ  
զարգացման մէջ առւած է պարզ ձայնաւոր, օր-  
~~ալ-տ-ւ-թ-ւ-ն~~ դարձած է ~~ալ-տ-ւ-թ-ւ-ն~~, ~~ալ-տ-ւ-թ-ւ-ն~~ > ~~ալ-տ-ւ-թ-ւ-ն~~  
~~ալ-տ-ւ-թ-ւ-ն~~ > ~~ալ-տ-ւ-թ-ւ-ն~~, ինչ որ կարելի չափաի ըլլար.  
եթէ է բաղաձայն (*y*) ըլլար. երրորդ՝ վրացե-  
րէնը մասամբ կը ցուցնէ որ ասոնց մէջ երկբար-  
բառ կը լսուէր. հմմտ. հոգե-նէ < հոգե-նէ, զ-րէ-  
< զ-րէ-նէ, հոնէ-նէ < հոնէ-նէ, հ-րէ-նէ < հ-րէ-նէ:  
Այսպէս նաեւ յն. եւ լտ. առադարձութիւն-  
ները, ինչ. ~~խ-ր-յի-ն-ն~~ > *Χορζιανηνη*, *Chorzia-*  
*nene*, ~~ալ-տ-ւ-թ-ւ-ն~~ > *Ἀσθιανηνη*, կը մնան *ia* եւ  
*ea*, բայց ընդունելի չէ նաեւ *ia* (թեւեւ նոյնը  
գանձնք յունարէն, լատիներէն եւ վրացերէն  
առադարձութեանց մէջ), քանի որ ունինք է-  
երկբարբառը<sup>1</sup>). եթէ ասոնք համահնչիւն ձայ-

<sup>1</sup> Լատիներէնի ձայնաբանութեան մէջ *ea* յետոյ կը  
գաւնայ *ia*:

Ներ քլային, պիտի կրնային հին ձեռագիրներու մէջ ազատօրէն իրար փոխանակել. մինչդեռ մենք կը տեսնենք որ ամենեւին շփոթութիւն չկայ անոց մէջ եւ է- , է- իրար չեն փոխանակեր: Ընդհակառակը նոյն իսկ այնպիսի տեղ՝ ուր սպասելի էր է- , հայերէնը ազատ կերպով կը հանէ է- . այսպէս՝ ուղ. է-յէ, սեռ. է-յէ-յ (եւ ոչ թէ \*է-յէ-յ): Ասկէ յայտնապէս կ'երեւայ որ է- եւ է- տարբեր բաներ էին եւ հայ լեզուն գիտէր որոշ կերպով զանազանել զանոնք իրարմէ: Իրանեան *iyā* հայերէնի մէջ կը դառնայ է- եւ ոչ է- . ինչ. պհլ. *siyāu* > հյ. -ե-եւն: Հին հայերէն *lê-l*՝ որ նախաւոր ձեւն է, փուռայ յետոյ *lê-l*, մայց ոչ \**lê-l*, *l* թէ կայ փոխանակութիւն, այն ալ երբեմն է- եւ է- գրութեանց մէջ է. ինչ. հէ-յ կամ հէ-յ, որ կը յուցնէ թէ ասոնք մերձաւոր հնչիւններ էին, թէեւ ոչ բոլորովին նոյն:

Ըստ սյսմ վերջնականապէս կրնանք որոշել է- = *èa* (բաց եով), է- = *éa* (գոց եով), է- = *ia*, իսկ յ- = *ya*: Կրկին ձայնաւորներու միջեւ պէտք չէ մտնել զօրաւոր *y* ձայնը, ինչպէս կ'ընենք հիմայ (*eyā*, *iyā* եւն): Հին հայերէնը հակառակ էր այս ներմուծման եւ ուր որ կար՝ կը յապաւեր, հմմտ. պրս. *niyās* > նի-լ. կիսաձայն *y* կրնանք գտնել = եւ = ձայնաւորներէն յետոյ միայն, բայց ոչ մի օրինակ չունինք էյ, էյ, էյ, -յ ձեւերով:

Նոյն խումբերուն համեմատ կրնանք դնել էէ = *èi* (բաց եով), էէ = *éi* (գոց եով), է- =

եօ, է-- = էւ, էէ = իծ, էէ = իծ, է- = իօ, է--  
= իւ<sup>1</sup>.

Կը մնայ տեսնել -- ձայնաւորով կազմուած  
երկբարբառները (---, --է եւն), որոնք մեծ  
շփութութեան պատճառ եղած են արդի լեզուին  
մէջ, Հայերէնի մէջ յօ խումբին համար ունինք  
երեք անսակ գրչութիւն (չհաշուելով զ՝ ձեւը).  
այսպէս՝ օրինակի համար՝ զին--որ, զին--որ, զին--որ,  
Արդեօք այս երեքը միեւնոյն բաներն էին, Եթէ  
նկատի առնունք վերը յիշուած բացատրութիւն-  
ները, յատկապէս է-, է-, է- խմբերու նորո-  
թիւնը, պիտի կրնանք նախապէս պատասխանել  
թէ ո՛չ, Եթէ հայերը հ-դէ բառին սեռականը կը  
գրեն հ-դ-ոյ, բայց ո՛չ նաեւ հ-դ-ոյ, ըսել է թէ  
այս երկուքին մէջ հնչական տարբերութիւն կայ,  
Իրօք - եւ -- չէին կրնար նոյն ըլլալ, ինչպէս որ  
նոյն չէին է- (էւ) եւ է- (էւ) կամ է- (էւ). --  
ամբողջ հնչիւն մ'էր, = անոր կէսը. ուստի վերի  
բառերը իրենց մաքուր ձեւին մէջ կ'արտասա-  
նուէին *sinawor*, *sinuor*, *sinwor*: Երբ հ-դէ կ'ըլլայ  
սեռ. հ-դ-ոյ, ըսել է թէ - եւ է ձայներուն մէջ  
մերձաւորութիւն մը կայ, ուստի չի կրնար

1 Լեզուին ապագայ զարգացման շրջանին մէջ է-  
եղած է *seo* կամ *iyō*. այսպէս Էւրոպական *Leon* անունը  
եղած է Լի--ն (հմմտ. նաեւ Ղի--նդ). հիներէն առա-  
գարձուած Գի-դէ ձեւը կը հնչուի հիմա *Գեւորդ*, որուն հա-  
մաստ ալ արեւմտեան հայոց մէջ մինչ կը գրեն Գի-դ-դ.  
նոյնպէս Մ-դի--ն, Թ-դի--ն արեւելեան հայոց մէջ կը  
հնչուին Մ-թեւո-, Թ-դեւո-, մինչդեռ արեւմտեան հայոց  
մէջ կ'ըլլան Մ-թիւյո-, Թ-դիւյո-. ինչ պատահած է մինչեւ  
իսկ լուի *Ան-իւստ*, մինչդեռ սովորական արտասանութիւնն  
է *Ան-իւստ*:

ըլլալ *ս*, այլ աւելի նուրբ ձայն *մը*։ Լեզուա-  
բանական շատ սովորական երեւոյթով *մը* այս-  
նուրբ *ւ* ձայնը, ինչպէս եւ *ւ*, հետզհետեւ աւելի  
թանձրացան եւ հասան վերջապէս *ս* բաղա-  
ձայնին, ինչպէս կը գտնենք արդի լեզուին մէջ  
(*sevor, hogvo*)։ Ճիշդ նոյն երեւոյթն ունի վրա-  
ցին, ուր կը գտնենք հին լեզուով տոյճօց (*խւււ*)  
“աւք” նոր լեզուով տօճօց (*խււ*)։

Հիւպշման կը կարծէ թէ *Ե. դարուն* —, —  
—, —, —, երկրարբանները կը հնչուին *uva? vi, vo.*  
առաջինը հաստատելու համար մէկ կողմէն հա-  
մեմատութեան կ’առնու իրանեան ձեւերը (ինչ-  
պէս *< զնդ. \*paivāra, սանս. prativāra,*  
*դէս. < պրս. dušvār, Արմէն < պրս. Par-*  
*vēs, Գր. < հպրս. \*duruvatāt-, Դր. <*  
*հպրս. Drvāspa, սանս. dhruvāeva, Զ. <*  
*պրս. Juwānsēr*), միւս կողմէ արդի բարբառներու  
հնչումը (*լււ > լււ* Պոլիս, Լեհաստան)։  
Մենք կը կարծենք սակայն որ *ս* հնչումը հայ  
շրթունքներու համար իսպառ անծանօթ էր.  
ստիկա շատ լաւ կը հաստատէ — հոլովման  
գործիականը. այսպէս *իւր*, *սեւ. ար. իւր*,  
*գրծ. նոյնպէս իւր* — փոխանակ ըլլալու “*իւր*”  
—, եւ յոգնակին *իւր* — փոխանակ “*իւր*”  
—, ինչպէս կը սպասէինք։

Ուր, —, —, —, ձեւերուն համար Հիւպշման իբր  
սպացոյց կը բերէ իւ վերջացող բառերուն հո-  
լովումը. օր. *հով* — *հով*, *իւ* — *իւ*, եւ  
ընդունելով որ ուղղականին մէջ իւ կը հնչուի  
*իւ*, սեռականին մէջ *ի* ձայնի անկումով կ’ուզէ-

գանել ճշգիւ Եւ Բայց մենք վերը տեսանք որ ի-  
շխման կրնար ըլլալ ԻՅ, այլ ԻՅ, հետեւաբար նաեւ  
սեռականին մէջ ընդունելի չէ ՎԻ, ՎՕ: Դնելով  
ուղ. ԲԻ-- , Հ-ՎԻ-- , սեռ. Բ-- , Հ-Վ-- ի հնչումները,  
կ'ունենանք իրարու համապատասխան եւ շատ  
կանոնաւոր ձեւեր:

Ամբողջութեան համար պէտք է յիշել նաեւ  
-Վ ձեւը, որ ոմանք երկբարբառ կը համարին  
սխալմամբ. հին հայերը ասիկա կը դնեն յն.  
բառերու օ ձայնին դէմ բաղաձայնէ առաջ,  
տարբերելու համար օ դրէն, որ կը տառագարձ-  
նեն -, Թրակացին նոյն իսկ կը դնէ ձայնաւոր-  
ներու շարքը, իբր յն. օ: Բայց Ե. դարուն յու-  
նարէնի մէջ օ եւ օ արդէն տարբերութիւն  
չունէին. եւ եթէ մեր Թարգմանիչները մտցուցեր  
են այսպիսի տարբերութիւն մը, այդ պէտք է  
վերագրել իրենց այն ոգւոյն, որով կ'ուզէին  
Ս. Գրքի ամէն մի բառը մանրակրկիտ ճշտու-  
թեամբ վերածել հայերէնի: Ապահովապէս -Վ  
տառագարձութիւնը ուսումնականներուն միայն  
յատուկ էր. Ժողովուրդը կը դործածէր պարզա-  
պէս -. ասոր համար ունինք Յ-վհաւ եւ Յհաւ,  
Յ-ի-վք եւ Յ-ի-ք եւն գրչութիւնները, որոնցմէ  
երկրորդները տուած են յետոյ բուն Ժողովրդա-  
կան լեզուին մէջ Ոհաւ, Մ--էս եւն<sup>1</sup>:

1 Հայերէնի մէջ նաեւ -- եւ. -Վ իբր կը փոխ-  
նակեն. այսպէս ունինք յաւաւ-ի — յէււ-ի, յաւալ —  
յաւալ (վրաց. —վալ), Բաւաւ-ի — Բաւաւ-ի ձեւերը:  
Երեւոյթը բնագոյնու ձայնաբանական է. օր. պրո. ռօս  
“նր” > արդի հնչմամբ ռօս կամ նոյն իսկ ռօ. Թուրքերէն  
av, av) “որո, որորդի, Արպառականի բարբառով օս,

Ընդհանուր ձայնաբանութեան օրէնքներով  
 երկբարբառը առ հասարակ մէկ վանկ է. այս-  
 պէս օր. ֆրանս. fier (հպարտ), hier (երէկ)  
 թէեւ երկու ձայնաւորէ բաղկացած, բայց իրբեւ  
 երկբարբառ մէկ վանկ են. եւ ասիկա յայտնի է  
 նաեւ անկէ՝ որ բառավերջին հնչական է, մինչ-  
 դեռ բաղմնավանկ եղած պարագային չպիտի կար-  
 դացուէր (հմտ. entier, métier): Նոյնպէս էր  
 նաեւ հայերէնի մէջ, որոն կը համոզուինք, եթէ  
 Meilletի հնարիմաց միջոցը գործադրենք նաեւ  
 այսանշ. — Կե՛մ բայը կաաարեալի մէջ կու-  
 տայ կեցի, կեցեր, կեց կամ կեցի՝ է յաւելուածով.  
 ասկէ կ'երեւայ որ կեց միավանկ է եւ հետեւա-  
 բար եւ երկբարբառն ալ միավանկ է: Ուրիշ  
 երկբարբառներու համար յարմարաւոր օրինակ-  
 ներ չկան, բայց այս միակ օրինակը ինքնին բա-  
 ւական է խնդրին լուծման համար:

ՕՄՃ. Ղարաբաղի հայոց բարբառով Իւլ < Իւլ, Կւլ <  
 Կւլ, աղւլ < աղւլ եւն: Չայնափոխութիւնը կրնայ ըստ  
 այսմ յառաջացած ըլլալ թէ անկախաբար հայոց մէջ եւ  
 թէ նախապէս իրանեաններուն մէջ կազմուած ըլլայ եւ.  
 անկէ ուղղակի ածցած հայերէնի: Բայց որովհետեւ բացի  
 իրանեաններէն ուրիշ հայ բառերու մէջ չենք տեսներ (չկան)  
 օր. հւլիւ — \*հւլիւ կամ հււււ — \*հւլիւ ձայնափոխու-  
 թի. ններ), ուստի կրնանք եզրակացնել թէ այդ ձայնա-  
 փոխութիւնը իրանեան է: Մեզ ծանօթ իրանեան մե. երն-  
 ունիստ. Ինչ. fravartak, xusrau, dusrac, Javan, \*ya-  
 vaz > yos, բայց այս բոլորը ունեցած ըլլալու էին -օՍ-  
 ձայնափոխութեամբ մե. եր, որոնցմէ ալ կազմուած են Հյ.-  
 հրեւոյստի. Իւււււլ, Գււււլ, Եււււլ, Եւււլ եւն: Մեր ըսածը  
 հաստատապէս կը ցուցնէ յն. Χοσρόης տառադարձութիւնը,  
 որ ունի նոյնպէս 0 եւ ոչ Գ:

Առանձնապէս նկատողութեան արժանի են  
 -- ձայնաւորով կազմուած երկարաբառները.  
 ասոնք վանկատութեան մէջ կը հաշուէին առան-  
 ձին առանձին. այսպէս -- երկու վանկ էր.  
 հմմտ. լւււ, լւււ, լւււ կամ րւււ, րւււ,  
 րւււ եւն, բոլորն ալ առանց է յաւելուածի:  
 Երկավանկ ըլլալու էին նաեւ --է, --է, --է, --է,  
 որոնց համար գոյնաւորաբար նման օրինակներ  
 չունինք: Այս կէտը վերջին անգամ կապացու-  
 ցանէ մեր ըսածը թէ -- եւ -- ասորքեր բաներ.  
 էին, առաջինին մէջ -- իբրեւ ամբողջ ձայնաւոր եւ  
 ոչ բնաւ Գ, իսկ երկրորդին մէջ' -- իբր կիսաձայն:

37. Բացի վերոյիշեալ երկարաբառներէն՝  
 հայերէնը գիտէ նաեւ բազմաթիւ եռաբարբառ-  
 ներ, այն է. երկու ձայնաւորէ եւ մէկ կիսաձայնէ  
 բաղկացած խումբեր. այսպէս են եւ, եւ, եւ,  
 եւ, եւ, էւ, եւ, որոնց հնչումը համա-  
 պատասխան նախորդներուն կ'ըլլայ *éay, éay,*  
*woy, uoy, éaw, éaw*:

Բաղաձայններու հին հնչումը որոշելու  
 համար մեր օգտագործած չորս միջոցները բաւա-  
 րար են: Արդէն կասկածէ գուրս է լ, լ, լ, լ, լ,  
 --, լ գրերու հնչումը, որոնց համար ապացոյց-  
 ներ բերելու պէտք չկայ. յ եւ -- գրերուն վրայ  
 արգէն խօսեցանք. և գիրը ունէր արդի հնչումը,  
 որ համեմատելով վրացւոց և-ին հետ, բաւական  
 ակար էր. ասոր համար է որ վրացիներէն տառա-  
 դարձութեանց մէջ մեր և գիրը երբեմն կը մնայ  
 եւ երբեմն կը ջնջուի. ինչ. և-մէ-յը > -մէ-րէ.  
 և-մէ-ւ > և-մէ-վէ, -մէ-վէ, և-սա-լ > և-սա-լէ

---ի, հո- > հո-ի, ---ի եւն։ Այսօր մեր հ  
 ձայնը գերմանական նախաձայն հ-էն աւելի  
 ակար հնչում ունի, մինչդեռ ի աւելի ուժեղ  
 է քան գերմ. ch, յն. չ եւ ոուս. ք։

Ու եւ ի հնչիւններուն տարբերութիւնը  
 մինչեւ հիմայ ալ գրեթէ ամէն անգ յահուած  
 է. օտարախօս հայերն են միայն՝ որ այս կողմէն  
 կը նեղուին։ Գրեթէ այսպէս են նաեւ թիֆլիսեցի  
 հայերը, որ կը դժուարանան զանազանել այս  
 երկուքը, որովհետեւ վրացերէն լեզուին մէջ  
 երկու -- չկայ։ Մեր մէջ -- աւելի խիստ է, իսկ  
 ի՞ բարակ. ուրիշ խօսքով ի կ'արտաբերուի լեզուի  
 ծայրով, իսկ -- արտասանելու համար լեզուն  
 աւելի ընդարձակօրէն կը փակչի քիմքին եւ  
 աւելի շատ կը թրթռայ։ Ու կը ներկայացնէ  
 յունական եւ եւրոպական ի հնչումը, իսկ ի կը  
 ներկայացնէ թուրքերու եւ պարսիկներու ի հն-  
 չումը։ Տարբերութիւնը յայտնի տեսնելու հա-  
 մար բաւական է լսել յոյնի մը կամ եւրոպացիի  
 մը խօսած թուրքերէնը (---ի-ի, ի-ի-ի-ի) եւ  
 թուրքի մը խօսած ֆրանսերէնը (իւ իւ-ն լ- հո-  
 րի-ի)։ Անգլ. ի մեր ի-էն աւելի բարակ է։

Ինչ որ են -- եւ ի իրարու համեմատու-  
 թեամբ, նոյն էին նաեւ զ եւ լ։ Բոլոր տառա-  
 գարձութեանց մէջ ալ զ կը համապատասխանէ  
 օտար ազգերու ի ձայնին. նոյն իսկ մեր գրացի  
 վրացիք՝ որ ունին զ ձայնը, մեր այս տառը կը  
 լսեն լ. ինչ. -դէ- > -լէ-ի, նեղ > Նէլ, ք-դ-  
 փոյ > ք-լի-ի։ Եւ որովհետեւ այսօր մեր զ գիրը  
 կը հնչուի իբր առաք. ց, ասկէ կ'երեւայ որ զ-ին

նախաւոր հնչումն էր յետքմական Ն, ուրիշ խօս-  
քով՝ և արտասանելու համար լեզուին ծայրը  
միայն կը դպէր քիմքին առջեւի կողմը, իսկ Ղ  
արտասանելու համար լեզուին կռնակը ամբող-  
ջապէս կը տարածուէր քիմքին ետեւի կողմը:  
Մեր այսօրուան և արտասանութիւնը հին և ձա-  
նին հետ նոյն է. իսկ հին Ղ արտասանութիւնը  
կենդանի կը գտնենք ռուսական թաւ ձայնին  
կամ յունական լ հնչման մէջ: Այսպիսի հըն-  
չում մը կոկորդական Ը-ի վերածուելու համար՝  
բաւական էր որ լեզուին յենակետը քիչ մը  
աւելի ետեւ դէպի կոկորդը տարուէր, ինչպէս  
եղած է հայերէնի մէջ եւ որով յառաջացած է  
մեր այսօրուան Ղ ձայնը:

Թէ երբ կատարուած է այս փոխանցումը,  
ճշգիւ կը գծուարանամ ըսել. բայց անշուշտ Թ.  
դարուն արդէն եղած վերջացած էր, որովհետեւ  
այս ժամանակէն ունինք Բ-ը<sup>1</sup> արիւնարբու  
ոստիկանին անունը՝ գրուած Ղ տառով եւ ճշ  
թէ է կամ ի, Նոյն թուերէն մնացած արձանա-  
գրութեանց մէջ օտարազգի բառերու եւ անուն-  
ներու համեմատութիւնը կրնայ որոշել աւելի  
ճիշդ ժամանակը:

Հոս անկարելորդ չէ յիշել որ Meillet  
հայագէտին նկատողութեան համեմատ՝ և եւ Ղ

<sup>1</sup> Թրքական անուն մ'էր՝ որ կը գործածուէր արա-  
ներու մէջ նոյն ժամանակ. հմմտ. Boghā-el-Soghayr՝ արա-  
բաց Մութաւարքիւ խալիֆային թիկնապահապետը, որ  
սպաննեց զոյն 861 թուին (տե՛ս Vaujany, Histoire de  
l'Egypte, էջ 202):

բացի իրենց հնչումէն՝ գործածութեան մէջ ալ  
կը զանադանէին. շ կը գործածուէր ամէն պա-  
րագայի մէջ, իսկ չ՝ միայն ձայնաւորէ առաջ եւ  
ոչ երբեք բաղաձայնէ առաջ: Նոյն երեւոյթը  
կը նկատեմ ես ալ չ եւ ՝ ձայներու համար.  
հմմտ. Գ-իք եւ Գ-ի-ն: Բառերը, որոնք անշուշտ  
նոյն են, բայց ձայնաւորէ առաջ կը ցուցնեն ՝,  
իսկ բաղաձայնէ առաջ չ:

Եր մնայ հիմայ քննել պայթուցիկ բաղա-  
ձայններու խումբը, որ կը դասաւորուի հետեւեալ  
ձեւով<sup>1</sup>.

|   |   |   |   |   |
|---|---|---|---|---|
| բ | գ | դ | ձ | ջ |
| պ | կ | տ | ծ | ճ |
| փ | ք | թ | ց | չ |

Ասոնցմէ վերջին շարքն է միայն որ այսօր  
ամէն տեղ ալ ունի միեւնոյն հնչումը (այն է  
խուլ շնչաւոր): Երկրորդ շարքը արեւմտեան  
կոչուած բարբառներուն մէջ կը հնչուի իբր  
թրթռուն ի, ց, ձ եւն: Պոյսոյ մէջ թէեւ թըր-  
թռուն, բայց բաւական մօտ խուլերուն (գեր-  
մանական թրթռուն բաղաձայններուն նման),  
արեւելեան բարբառներուն մէջ մաքուր խուլ,  
որուն աստիճանն ալ սակայն միօրինակ չէ. Տփղիսի  
մէջ նոյն խուլերը ընկերացած են նաեւ կոկորդի  
կծկումով՝ համեմատ վրացական խուլերուն:

1 Թրակացւոյն հոյ թարգմանիչը շփոթելով է Գ-ը  
է ց եւ շ ձայներուն քով իբր թաւ, իսկ է գրած է Բ, Գ, Դ,  
Յ գրերուն քով իբր միջով. այս թաւերը յառաջ եկած  
են միայն հեղինակին ազիտութենէն ձայնաբանութեան մէջ  
եւ արժէք չունին:

Գալով առաջին շարքին՝ ասիկա ունի չորս տարբեր հնչում, այսինքն կը ներկայացնէ մարդկային ձայնի բոլոր աստիճանները. Թրթռուն (իբր *b, g, d*), Թրթռուն շնչաւոր (*sonore aspirée*, իբր *bh, gh, dh* եւն), պարզ խուլ (իբր *p, k, t*) եւ Թաւ կամ խուլ շնչաւոր *sourde aspirée*, (իբր *tʰ, tʰ, ʃ, ɟ, ʈ*)։ Հայութեան ամենաստուար մասը այս գրերը կը հնչէ Թրթռուն շնչաւոր. այսպէս եւ Ախալցխայէն ու Ախալքալաքէն սկսեալ մինչեւ Կարին, Մուշ, Խարքերդ, Երզնկա, Շապին-Գարահիսար, Համշէն, Ակն, Արաբկիր, Սեբաստիա, Զէյթուն, Սուչաւա, Նոր Նախիջեւանի գիւղերը, Նոր-Ջուղա, նոյն իսկ Երեւանի շրջանին մէջ Օշական, Աշտարակ եւն, որոնք Արարատեան ժողովրդի հնագոյն եւ բնիկ տարրը կը կազմեն. մէկ խօսքով այս հնչումն ունին ամբողջ հայութեան կենդրոնական մասը Կուր գետէն սկսեալ մինչեւ Ալիս։ Պարզ Թրթռուն հնչումն ունին՝ նախ Արաքսէն անդին Երեւան, Ագուլիս, Տփղիս, յետոյ Եւգոկիայէն սկսեալ մինչեւ Պօլիս եւ վերջապէս Խրիմ ու Նոր-Նախիջեան։ Հայութեան ամբողջ ալեւելեան մասը՝ Աստրախանէն սկսեալ մինչեւ Կուրի եզերքը եւ Կուրի եզերքէն Ղարաբաղի եւ Պարսկահայքի վրայով մինչեւ Վասպուրականի հայերը կը հնչեն պարզ խուլ։ Ասոնցմէ դուրս կը մնան Տիգրանակերտ, Մալաթիա, Ռոստոմթօ եւ Թերեւս փոքր-Ասիոյ նախկին սերունդը, որոնք կը հնչեն խուլ շնչաւոր. այսպէս է նաեւ Պօլսի գրական լեզուն<sup>1</sup>։

1 Մեր առաքելու արդի հնչման վրայ աւելի ընդար-

Աններեւ է որ  $\text{է, Է, Է, Է, Է}$  շարքը եւ գա-  
րուն ալ ունէր արդի հնչումը, քանի որ թէ  
տառերու շարքին, թէ տառադարձութեանց եւ  
թէ թրակացւոյն դասաւորութեան մէջ կը հա-  
մապատասխանէ յն.  $\text{փ, ք, ծ, վրաց. է, Է, Է, Է, Է}$   
ձայներուն. հմտ. իւր-րոն  $<$  յն.  $\text{ῥῆατρον,}$   
 $\text{է-է-է} <$  յն.  $\text{φύλαχῃ, է-է-է-է-է-է-է} >$  յն.  
 $\text{φαρακάνη Σερμάχον}$  (Ագաթանգեղոս), իւր-րոն  
 $>$  յն.  $\text{Θοροδάν, Բ-ր-է-է-է} >$  յն.  $\text{Λαροχαρεών,}$   
 $\text{է-է-է} >$  վրաց.  $\text{է-է-է, ւէ} >$  ւէրի, ց-է  $>$  ց-է-է,  
 $\text{Է-ր-է} >$  Է-ր-է-է եւն: Պարսկերէնի հետ համե-  
մատութեան ժամանակ  $\text{p, k, t, Ծ}$  տառերուն դէմ  
երբեմն կը գտնենք  $\text{պ, ք, Ծ}$  եւ երբեմն  $\text{է, Է, Է, Է}$   
այսպէս՝

|          |           |         |         |
|----------|-----------|---------|---------|
| թագ      | tāγ       | տաշտ    | tašt    |
| թակոյկ   | takōk     | տապ     | tāb     |
| թանգ     | tang      | տոհմ    | tuxm    |
| կախարդ   | kaxvarəda | քարշեւ  | kaš-    |
| կամք     | kām       | քէն     | kēn     |
| կուս     | kūsa      | քէշ     | kēs     |
| պահապան  | pāspān    | փիղ     | pīl     |
| պատասխան | pāsux     | փագան   | padām   |
| պառկեր   | patkar    | փաշաման | pašēman |
| ճրագ     | čirāγ     | շաման   | čaman   |
| ճանկ     | čang      | շմուշկ  | čamšak  |
| ճարպ     | čarp      | շուխայ  | čuxā    |

Տառադարձութեան այս տարբերութիւնը  
մեզի շփոթեցնու չէ. հնչական փոփոխութիւնը

ձեռք եւ ձայնաբանական պատկերներով ահա մեր Les ex-  
plosives de l'ancien arménien étudiées dans les dial.  
modernes. Paris 1899.

տեղի ունեցած է մէջ թէ հայոց, այլ իրանեան-  
ներուն մէջ, Հին իրանեանները այս բաղաձայն-  
ները կ'արտասանէին աւելի մեղմ, նորերը հետ-  
զհետէ թաւացուցին, մինչեւ հասցուցին այս-  
օրուան աստիճանին, որ բոլորովին թաւ է: Հայ-  
երն ալ հետեւելով այս ընթացքին, հնագոյն  
շրջանին կը տառագարձէին ա, ի, տ, ծ, աւելի  
յետոյ թ, +, ֆ, շ: Ասոր գեղեցիկ օրինակ մ'է  
զնդ. *parštirāna* (պրս. *prštbān*) բառը, որ Ար-  
շակունեաց շրջանին տուեր է Հայոց մէջ *պարտաշ*,  
Սասանեանց շրջանին *թարտաշ* է պրս. *čarmša*,  
*časna*, որ հին տառագարձութեամբ  
տուած է *թարտաշ*, *թարտաշ* «արտաբնոց»:  
Այսօր կոմկասի եւ Պարսկաստանի հայերը՝ որովք  
մեր բաղաձայններու հարազատ հնչումը ըստ  
կարելոյն պահած են, նոյն պարսկերէն հնչուն-  
ները կը տառագարձեն *թ, +, ֆ, շ*. օրինակ՝ նոյն  
*čirāz* բառը՝ որ ժամանակին տուեր էր *ճիր-ճ*,  
հիմայ կը գրուի *ճիր-ճ* բառը, որ առաջ  
*Տար-ճ* (*Տար-ճ*) էր, հիմայ կը գրուի *Թար-ճ*.  
նոյն իսկ մայրաքաղաքին անունը կը գրուի *Թեհրան*,  
թէեւ ի տառով է, որ ըստ արաբերէնի կուտայ:

Պարզ խուլերու խումբը (ա, ի, տ, ծ, ծ) թէ  
տառերու շարքին, թէ տառագարձութեանց եւ  
թէ Թրակացոյն դասաւորութեան մէջ կը հա-  
մապատասխանէ յն. *π, χ, τ, φ* րաց. *α, ι, τ, δ*  
գրերուն: Այսպէս՝ *պարտաշ* < *πατριάρχης*,  
*Սպեր* > *Σάσπειρες*, *սպեր* > *ἀσπὲρ*, *սպեր*  
> *Σπυσχαπετέων*, *սպեր* > *Ναπάρ*,  
*Փարտաշ* > *Φαταχαρανής*, *Եփրատ* > *Ἐφρα*

օղորդ, լւ-թ > վրաց. լւ-թէ, ի-թ-ւ-ւ > ի-թ-ւ-է,  
 ճշմ-ւ-է-ր > ճէշմ-ւ-է-րէ եւն: ըստ այսմ կովկասեան  
 հայ բարբառներու արդի հնչումը համապատաս-  
 խան է Ե. դարու հնչման, որու համեմատ կով-  
 կասեան տառադարձութեամբ այսօր ալ ֆրանս.  
 Paris կամ ոռւս. Перекопъ կը գառնան Պ-րէ-  
 Պերէի-դ:

Բայց երբ մէկը ուշադրութեամբ համեմատէ  
 կովկասեան Ղ, ի, ր հնչիւնները ֆրանս. ոռւս.  
 կամ յն. ք, Կ, է ձայներուն հետ, որչափ որ ձայ-  
 նագիտօրէն նոյն, բայց պիտի գտնէ անոնց մէջ  
 նուրբ տարբերութիւն մը. ամէն կողմէ հայոց  
 հնչումը աւելի թոյլ է, եւրոպացւոցն աւելի խիստ:  
 Ի նկատի առնելով նաեւ այն հանգամանքը որ  
 արեււտեան հայոց մէջ Ղ, ի, ր, ք, ճ դարձեր  
 են հետզհետէ թրթռուն, կ'ուզեմ ենթադրել  
 որ Ե. դարու հայոց արտասանութեան մէջ Ղ, ի,  
 ր, ք, ճ քիչ մը աւելի ուժով էին քան այսօր,  
 այսինքն ճշդիւ կը համապատասխանէին յն. ք, Կ, ռ  
 եւ արդի ոռւսաց ք, Կ, է ձայներուն: Այս դժը  
 հետզհետէ պակսեցաւ. կովկասի հայոց մէջ շատ  
 քիչ չափով, բայց շատ աւելի մեծ չափով արեւ-  
 մտեան հայոց մէջ, ուր եւ վերածուեցաւ թըր-  
 թռունի: Այսպէս կարելի է բացատրել եւ հաշ-  
 տեցնել ձայնաբանական այս նշանաւոր տար-  
 բերութիւնը հայութեան երկու հատուած-  
 ներուն մէջ:

Վերը ըսինք թէ Ղ, ի, ր կը համապատաս-  
 խանեն եւրոպական ք, Կ, է գրերու հնչումներուն.  
 Բայց ասիկա բոլոր եւրոպական լեզուներու հա-

մար չէ: Գերմանացիք եւ Անգլիացիք այս գրերը  
այնպէս ուժեղ կը հնչեն, մանաւանդ բառա-  
սկիզբը, որ բնաւ տարբերութիւն չունին մեր փ, ք, քի,  
ձայներէն: Այնպէս որ եթէ ուզենք այս լեզու-  
ներուն ճիշդ հնչումները պատկերացնել, սխալ  
կ'ըլլայ գրել Տիւբինգէն (Tübingen), Պոտս-  
(Potsdam), Կարլ (Karl), քաղաք (town) եւն, եւ  
պէտք է գրել Թիւբինգէն, Փոտս-մ, Գարլ, Բաւն:  
Կովկասի հայերը՝ որ առաջ նոյն բառերը գրու-  
թեան վրայէն տառադարձելով կը հետեւէին  
առաջին ձեւին, հիմայ հետեւելով հնչական  
տառադարձութեան՝ արդէն սկսած են գրել եր-  
կրորդ ձեւով, որով արեւելեան եւ արեւմտեան  
տառադարձութիւնները գոնէ այս կէտին մէջ  
նոյնացած են:

Անցնելով Թրթռուն բաղաձայններու  
խումբին, ասոնք թէ՛ տառերու շարքին, թէ  
տառադարձութեանց եւ թէ Թրակացւոյն գա-  
սաւորութեան մէջ կը գտնենք իբր համապա-  
տասխան յն. β, γ, δ, վրաց. ֆ, ց, Ժ, յ, Զ, պրս. ֆ,  
ց, Ժ, յ ձայններուն: Այնպէս օրինակ՝ Բէթ-թիւն <  
βραβεῖον, Բաւն > Βαστην, Գրէթ-թիւն < Γρηγό-  
ριος, Գր-թիւն > ասոր. ܓܝܪܝܐ, Գր-թիւն < պճլ. dan-  
dān, Գր-թիւն > Δαραναλιτων, Daranalıs, Զ-  
թիւն < պրս. Jāmāsp, Գր-թիւն > վրաց. Գր-թիւն,  
Գր-թիւն > Գր-թիւն եւն: Նոյն իսկ ք ձայնէն յետոյ՝  
ուր արդի հայերէնի մէջ Թրթռունները դար-  
ձած են խուլ. ինչ. վ-թիւն > Vardanes, Լ-թիւն  
> վրաց. Լ-թիւն եւն: Այս համեմատութիւնները  
կը ցուցնեն որ մեր ֆ, ք, քի, յ, Զ գրերը ոչ խուլ

էին եւ ոչ թաւ, այսինքն չունէին *p*, *ph*, *k*, *lh*,  
*t*, *th* եւն, հնչիւնները, ինչպէս կը գտնենք այսօր  
տեղ տեղ, այլ համապատասխան էին *b*, *g*, *d* եւն  
հնչիւններուն: Բայց ասով ինդիերը չի սպառիր  
եւ կը մնայ ստուգել թէ թրթռումը պարզ էր  
(*b*, *g*, *d*) թէ ընկերացած նաեւ փոքր շնչով (*bh*,  
*gh*, *dh*): Ո՛չ մի միջոց չունինք ստուգելու հա-  
մար այս նուրբ զանազանութիւնը: Գիտենք որ  
հնդեւրոպական նախալեզուին *bh*, *gh*, *dh*...  
ձայները *b*. դարու հայերէնի մէջ դարձած են  
*բ*, *գ*, *դ*, *յ*, *ջ*, *լ*, բայց հնդեւրոպական նախաժա-  
մանակէն մինչեւ *b*. դար ահագին դարեր կան  
եւ այս ձայնափոխութիւնը բնաւ չի կրնար ա-  
պացուցանել թէ հայերը *b*. դարուն ալ *բ*, *գ*,  
*դ*, *յ*, *ջ* ձայներն իբր *bh*, *gh*, *dh*... կը հնչէին.  
Ծիշտ ինչպէս որ չենք կրնար ըսել թէ որովհե-  
տեւ հնդեւրոպական նախալեզուեան *b*, *g*, *d*...  
*b*. դարու հայերէնին մէջ դարձած են *պ*, *կ*,  
*դ*..., ուստի եւ *b*. դարու հայոց *պ*, *կ*, *դ*...  
տառերը կը հնչուէին *b*, *g*, *d* եւն: «Տուն, նշա-  
նակող բառը նախալեզուին մէջ ըլլալով \**dom*,  
անշուշտ ամենահին շրջանի հայոց մէջ հնչուած  
է \**dōn*, յետոյ \**dun*, բայց *b*. դարուն արդէն  
դարձած էր *tun*. Թէ ոչ պրտ. *dandan* բառը  
հայերը *դանդան* չէին գրեր, այլ \**դանդան*:

Կրնանք միայն իբր հաստատ ընդունիլ թէ  
արդի քանի մը բարբառներու թաւ հնչումը  
անշուշտ յառաջացած է նախաւոր թրթռուն  
շնչաւորէ. *bh* (բ) շատ դիւրութեամբ կրնայ  
*ph* (փ) դառնալ եւ արդէն անվարժ ահանջ մը

այսպէս կը լսէ: Բայց այս կէտը կրնայ մեզի առաջ-  
նորդել մոռածելու նաեւ որ Թրթռուն շնչաւոր-  
ներն ալ եկած են պարզ Թրթռուններէն, այս-  
ինքն Թէ Են ծագած է նախաւոր Եէն եւ Պոլսոյ  
ռամիկ լեզուի կամ Երեւանի արդի Բ Տնչումը  
նաեւ Ե. դարու Տնչումն է: Ասով կ'ունենանք  
հայ ձայնարանութեան բարեշրջման ընդհանուր  
օրէնքը՝ Ե. գարէն մինչեւ այսօր, այն է՝ որ Բիբ  
դայն--ցիկները յայնի իւրի հետքերէ տիւրացած են,  
ի-ի շնչի իւրի հետքերէ շրացած<sup>1</sup>:

Իբրեւ վերջին նկատողութիւն յիշենք որ  
մեր այս բոլոր եզրակացութիւնները կը վերա-  
դարձնեն մեսրոպեան հայերէնին, այսինքն այն պաշ-  
տօնական լեզուին, որ Ե. գարուն գրականութեան  
բարձրացաւ: Կրնային Ե. դարուն գանուիլ ասոր  
քով զանազան բարբառներ եւ հետեւաբար  
անկէ աւելի կամ պակաս չափով աարբեր ար-  
տասանութիւններ, բայց այդ բոլորը մեզի ան-  
ծանօթ կը մնայ: Հայերէնի աարբեր արտասա-  
նութեան հետքեր, Թրթռունի փոխարէն խուլ  
շնչաւոր՝ ճիշտ այսօրուան Պոլսոյ գրականին պէս,

<sup>1</sup> Պայթուցիկ բաղաձայններու ձայնալուծեան այս  
ընթացքը՝ որ նկատեցինք հայերէնի մէջ հին ժամանակ-  
ներէն մինչեւ այսօր, կը գանենք նաեւ ուրիշ լեզուներու  
մէջ: Այսպէս յունարէնի մէջ հնդեւրոպական bh, gh, dh  
Թրթռուն շնչաւորները դարձած են φ, χ, θ, Աւելի դար-  
մանալի է շինարէնը, ուր նախկին պարզ Թրթռունները  
Է-Ը դարուն դարձեր են Թրթռուն շնչաւոր, իսկ արդի հնչ-  
ման մէջ եղած են խուլ կամ Թաւ. այսինքն Բ (b) >  
բ' (bh) > ր (p) կամ ք (ph). հմտ. Maspéro, Le dialecte  
de Tchang - Ngan sous les Thang, 1920).

երեւան հանուած են մեր մէկ նորափայ աշխատութեան մէջ (Հայերէն նոր րաուեր հին մանագրութեան մէջ, Վենետիկ 1913, էջ 158)։

Ը. ՄԵՐԵՔԵՆԻ ԳՐԵՐ՝ ՊԵՐՏԵՐԸ Ե՝ ՆԵՐԵՐԸ Ե՝

Ե. Դարէն Մինչեւ այսօր՝ 1500 տարուան ընթացքին մէջ՝ հայերէն գրերը չէին կրնար մնալ Միւսնոյն վիճակին մէջ. անոնք անցան զանազան ձեւափոխութիւններէ։ Այս ձեւափոխութեանց ուսումնասիրութեան աղբիւրներն են մեր հին ձեռագիրներն ու արձանագրութիւնները։

Աշխարհիս վրայ սփռուած բովանդակ հայ ձեռագիրներու ընդհանուր թիւն է մօտ 13.000, որոնցմէ ամենահինն է Մոսկուայի Լազարեան ճեմարանին մէջ պահուած Աւետարանը՝ 887 թուականէն, որ եւ ըստատիպ հրատարակուած է։ Չենք յիշեր Երուսաղէմի հնագոյն Աւետարանը, Անտոնեան հարց թարգմանչագիր Աւետարանը եւ կրկնագրի զանազան մնացորդներ. որոնք սոյն թուականէն շատ հին կը համարուին, բայց ըստ որում հաստատուն թուական չունին, այնչափ վստահելի չեն, մանաւանդ ծանրակշիռ եզրակացութեանց համար։

Ձեռագիրներուն ամենախոշոր մասը գեոցուցակագրուած չէ. այսպէս են Էջմիածնի 5000, Վենետիկի 2000, Երուսաղէմի 2700, Պոլսոյ 1000, Նոր-Ջուղայի 250 ձեռագիրները։ Ցու-

ցակագրուած ձեռագիրներուն մէջ առաջին տեղը կը բռնէ Վիեննայի Մխիթարեանցը, որ կը պարունակէ 573 ձեռագիր (անս Տաշեան, Ցուցակ, Վիեննա 1895): Արդէն սկսած է հրատարակուիլ Վենետիկի Մխիթարեանց ցուցակը, որ գեռ վերջացած չէ: Վերջապէս յիշենք Լալայեանի կազմած ցուցակը Վասպուրականի ձեռագիրներու եւ զանազան մանր ցուցակներ՝ Կարնոյ, Թաւրիզի, Նոր-Բայազէտի, Տփղիսի, Կեսարիոյ, Ագուլիսի, Հոռվի, Միւնխէնի եւն:

Չեռագիրներէն աւելի գէշ վիճակի մէջ են արձանագրութիւնները, որոնցմէ հազարաւորներ սփռուած են Հայաստանի եւ գաղթավայրերու զանազան անկիւնները: Հաշուելով մինչեւ  $\Pi = 1551$  թուականը եղած արձանագրութիւնները, կը տեսնենք թէ հրատարակուած են միայն 2000-ի չափ, բայց ասոնք ալ սովորաբար հասարակ արտագրութեամբ, շատ անգամ սխալներով լի եւ առանց լուսանկարի կամ նմանահանութեան<sup>1</sup>:

1. Քանի մը տարի առաջ ձեռնարկեցի կազմելու Հայարձան մը (Corpus inscriptionum), որ քանանեան կապի կողմէն մրցանակի դրուած էր: Ասոր համար նախ հաւաքեցի բոլոր ապագրեալ արձանագրութիւնները (թուով 2000), յետոյ սկսայ անձամբ տեղի վրայ ստուգելու յիշեալ արձանագրութիւնները եւ եթէ կային՝ նորերն հաւաքելու: Ստուգեցի եւ հաւաքեցի Նոր-Նախիջեւանի արձանագրութիւնները, յետոյ եկայ Բագու, որու մօտ, Թրքական գիւղի մը մէջ իբր թէ կը գտնուէր հայերէն ամենահին արձանագրութիւնը: Այս եւ ասոր հետ ուրիշ քանի մը արձանագրութիւններ ալ օրինակելէ յետոյ՝ անցայ Թիֆլիս, ուր Հայոց բոլոր եկեղեցիներու մէջ գտնուած զանազան ար-

Այս երկու աղբիւրներն ալ անբաւարար են. ոչ թէ միայն անոր համար, որ գեռ կատարեալ կերպով ուսումնասիրուած կամ հրատարակութեամբ ծանօթացուած չեն, այլ նաեւ անոր համար որ ինքնին բաւական չեն գրերու զարգացման պատմութիւնը ի յայտ բերելու համար: Արդարեւ, ինչպէս Հ. Տաշեան կը նկատէ, թէ ձեռագիրները եւ թէ արձանագրութիւնները պաշտօնական գրութիւններ են, երկար տարիներու գործածութեան համար յաւակացուած բաներ եւ իբր այն՝ կատարուած առանձին խնամքով, հոգատարութեամբ եւ մա-

ձանագրութիւնները օրինակեցի: Այնուհետեւ մտադիր էի անցնիլ Հաղբատ, Սահահին, Լուի, Սնի եւն եւ այսպէս բոլոր կարեւոր աեղերու արձանագրութիւններն ստուգել եւ հաւաքել: Թիֆլիզի մէջ տեսայ ազգագրագէտ Պր. Ե. Լալայեանը, որուն ցոյց տալով 2000 արձանագրութեանց խշոր հաւաքածուն, յայտնեցի նպատակս: Պր. Լալայեան յայտնեց թէ ինքն ալ նոյն նպատակն ունի եւ արդէն տարիներէ ի վեր կ'աշխատի առօր վրայ. եւ ցոյց տուաւ ինձ 250 արձանագրութիւն, որ ինքը անձամբ նկարած էր ֆէ-ֆէլ գործիքով (téléotypie): Հին աշխատաւորի մը հետ, այն ալ այսպիսի սքանչելի գործիքով գինուած, չհամարձակելով միցիլ, եւ յետ կասեցայ նպատակեւ եւ Թիֆլիսէն ետ դարձայ: Դժբախտաբար Պր. Լալայեան շարունակեց իր մագրութիւնը, ոչ ալ միջանակին մասնակցեցաւ: Այսպէսով իմ աշխատութիւնն ալ կ'իսկատար մնաց եւ հիմայ, եթէ ողջ է, ով գիտէ որոնց ձեռքն ինկած է: Ժամանակ մը յետոյ՝ Կ. Կոստանեան, Լազարեան ճեմարանի տեսուչը, հրատարակեց իր Վիմական Յարեգիրքը, որ է հայ արձանագրութեանց հաւաքածոն, բայց շատ աւելի համեմատ եւ հասարակ ձեւի տակ եւ ոչ միջոցական: Յոյս ունենանք որ Հայաստանի Գիտական ինստիտուտը (Կաճաւ) ինքը միջոցներ ունենայ այս կարեւոր գործը պատշաճ լրութեամբ կատարելու:

նաւանդ աւանդադէտքն: Եւ զի կը պակսին այն առանձնական, անհատական եւ հասարակ կեանքի վերաբերեալ թղթերն ու գրութիւնները, ինչպէս մուրհակ, առտնին հաշիւ, նամակ, յուշատետր եւ այլն, որոնք, օրը օրին եւ անփութօրէն գրուած, պիտի կրէին տառերու յաջորդական ձեւափոխութեանց իրական պատկերը եւ այսպէսով պիտի տային մեզ գրի զարգացման ճշգրիտ պատմութիւնը<sup>1</sup>:

Գրերու ամենահին ձեւը՝ որ աւանդուած է մեզի, կը կոչուի Էլփփէր կամ Բան Դըբէն երկ-նգի<sup>2</sup>: Ասիկա մեր արդի տպա-

1 Յեն Տաշեան, Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ, Վիեննա 1898, էջ 57, 91 եւն: Այս դործը, հակառակ իր անուան, միակն է իր տեսակին մէջ եւ կու տայ միշտ ամէն ինչ որ կարելի էր ըսել հայ հնագրութեան մասին՝ այն ժամանակ: Է. Տաշեան իր այս գործով եղած է հիմնադիրը հայ հնագրութեան գիտութեան (paleography): Տաշեանի գործին իբր լրացուցիչ մաս կը համարենք Գարեգին Վրդ. Յովսէփեանի քարտեզ հայ հնագրութեան (հրտ. Շաղկաթ ժողովածուի մէջ, Վաղարշապատ 1913), որ կը պարունակէ հայ արձանագրութեանց եւ ձեւագիրներու 143 հաս զեզեցիկ լուսատիպ նմայշներ, առանց ուսումնասիրութեան: Այսպիսի նմայշներ ունինք նաեւ Է. Տաշեանի Ցուցակին եւ Արիշանի Տեղագրութեանց մէջ (Շիրակ, Այրարատ, Սիսուան եւ Սիսական):

2 Տառերու տեսակներու անունները գործածուած են զանազան իմաստով. ձեւի անունը շատեր առաւի մեծութեան հետ շփոթած են. այսպէս օրինակ՝ շատեր Էլփփէր անունը գործածած են սովորական երկաթագրի այն տեսակին, որ խոշոր չէ եւ փոքրին ու մեծին միջեւ տեղը կը բռնէ (մեծութեամբ եւ ժգ [թէ ձեւով]): Այսպէս գործածած եմ ես ալ Սանսարեան Վարժարանի Չեռագրաց Ցուցակի մէջ: Է. Տաշեանն է, որ առաջին անգամ



գրութեան թուականը բոլորովին անծանօթ է։ Աւելի լաւ է Յեկորի տաճարի արձանագրութիւնը, որ գրուած է Յոհան կաթուղիկոսի օրով եւ ըստ այսմ կը համարուի Ե դարու վերջերէն։ յամենայն դէպս ոչ ուշ քան Ե դարը (Շողակաթ, Թիւ 2)։ Թուականի կողմէ ամէնէն հաստատունն է Ս. Հռիփսիմէի արձանագրութիւնը՝ 618 թուէն (Շողակաթ, Թիւ 3)։ Աւելի յետոյ կու գան Անիի Միջնաբերդի եկեղեցւոյն արձանագրութիւնը՝ 622 թուէն? (Շող., Թիւ 4), Թալինի խաչածեւ ժատուռին արձանագրութիւնը՝ 630 ական թուերէն (Շող., Թիւ 5), Որենի տաճարի արձանագրութիւնը՝ 637—640 թուերէն (Շող., Թիւ 6), Մաստարայի եկեղեցւոյն երկու արձանագրութիւնները՝ 640 ական թուերէն (Շող., Թիւ 7—8), Արուծի Ս. Գրիգոր եկեղեցւոյն արձանագրութիւնը՝ 668 թուէն (Շող., Թիւ 9) եւն։ Աւելի ուշ կը սկսին ձեռագիրները, որոնց հնագոյնը Լաղարեան ճամբարանի աւետարանն է 887 թուէն, որ նմանահանութեամբ ալ հրատարակուած է։

Գլխագիր երկաթագիր այբուբենի մէջ ձեւի կողմէ նկատողութեան արժանի են հետեւեալ տառերը։

Ա — Մեր հիմակուան գեղագրութեամբ այս տառը կը բաղկանայ երկու հաւասարաչափ սիւներէ, մէկը ձախ, միւսը աջ զետեղուած, տակէն պոչով մը, որ գէպի վար կը ծռի կամ առառաւելն գրեթէ հորիզոնական դիրք մը կ'ընդունի։ Հնագոյն ձեւին մէջ այսպէս չէ սակայն։

Այլ աջակողմեան սիւնին վերի ծայրէն կը սկսի աւելի բարակ դիծ մը, որ մահիկի ձեւով ոլորուելով՝ կ'իջնէ մինչեւ սիւնին ծայրը, եւ երբ կը հասնի գրին տակի կամարին մօտ, սիւնը ճեղքելով դուրս կ'ելլէ եւ գէպի վեր կը բարձրանայ՝ մօտաւորապէս լատինական Օ տառին պէս։ Ա տառի այս ձեւը յայտնի կերպով կը գտնենք Ձիթենեաց լեռան արձանագրութեան մէջ (Շող., Թ. 1), 19 անգամ. նոյնը Տեկորի արձանագրութեան մէջ (Շող., Թ. 2. հմտ. յատկապէս 1-2-ը բառը, ուր նոյն մահիկը լատինական ձեռագիր տառին ձեւն առած է), Մրենի արձանագրութեան մէջ (Շող., Թ. 6), մինչեւ իսկ շատ աւելի ուշ՝ Անիի Ապուղամբենց Ս. Գրիգոր եկեղեցւոյն արձանագրութեան մէջ (Ժ դար, Շող., Թ. 17)։ Այնուհետեւ մահիկին ծայրը փոխանակ վեր բարձրանալու, կը սկսի վար թեքուիլ եւ ասով կը ձեւացնէ վերջապէս արդի պոչը։ Տառերու ծայրը այսպէս վար ծռելը (որ մէկ բառով կրնանք կոչել 1-յ-ը-հ-ի-ը-ի-ը) հայերէն ելի-թի-թի գեղադրութեան յատկանիշներէն մէկն է. այսպէս են գրեթէ մեր բոլոր տառերը, ինչպէս Ա, Բ, Գ, Դ, Է, Ը եւն, մինչեւ վերջ, հակառակ յոյն եւ լատին տառերուն, որոնց մէջ հորիզոնական համաչափութիւնն է գերիշխող. հմտ. օրինակ՝ հ. Ջ եւ յն. լա. Շ եւն. Հռիփսիմէի արձանագրութեան մէջ (Շող., Թ. 3) այդ պոչը արդէն պարզ շեղ գիծ մ'է, բաւական երկար. բայց մահիկը կայ (հմտ. յատկապէս երկրորդ տողին

վերջը) եւ գեռ երկար ժամանակ պիտի շարու-  
նակէ իր գոյութիւնը:

Այլուր Ա տառին ծագման վրայ խօսելու  
ժամանակ՝ ըսինք թէ կը տատանի յն. ա-ի եւ  
պՆշ. --ի միջեւ: Ա տառին այսպիսի մահիկաւոր  
ձեւը եւ վեր գարձած պոչը ըլլալով հնագոյն  
ձեւը՝ միջոց կու տայ մեզի՝ աւելի որոշելու խըն-  
դիրը: Պահլաւերէնի հին ձեւին մէջ տառին  
պոչը ուղիղ է, մինչդեռ յունարէնի մէջ գէպի  
վեր կը բարձրանայ հայերէնին պէս (հմմտ. Ծեծ  
Յուցակին մէջ, յունարէն ա-ի երկրորդ եւ եր-  
րորդ ձեւերը): Ասկէ կը հետեւցնենք թէ հյ.  
Ա կը ծագի միայն յունարէնէ եւ պահլաւերէնի  
հետ գործ չունի:

Ջ — Այս գիրը արգի գեղագրութեամբ  
կը ձեւանայ կլորակէ մը՝ որ հաստատուած է  
դէպի ձախ թեքուած կորութեան մը ձախ ծայրը  
եւ որուն տակ ձախ ու աջ ծռուած պոչ մը կայ:  
Հնագոյն արձանագրութեանց մէջ բաւական  
տարբեր է, Նախ՝ որ կլորակը ուղղակի հաս-  
տատուած է պոչին վրայ՝ առանց այն կորութեան,  
որ կլորակը եւ պոչը իրարու կը միացնէ. եւ եր-  
կրորդ՝ որ պոչը երկու կողմ ծռւումուած չէ, այլ  
պարզապէս ձախէն գէպի աջ թեքուած ուղիղ  
գիծ մ'է. ուրիշ խօսքով՝ հնագոյն Ջ տառը կը  
բաղկանայ պարզապէս խոշոր կլորակէ մը կամ  
ձուածեւէ մը՝ տակը ուղիղ գծով մը: Այս ձեւ-  
ով կը գտնենք Ջ տառը 2իթենեաց լեռան ար-  
ձանագրութեան մէջ (Շող., Թ. 1)՝ չորս ան-  
գամ, Մաստարայի 640 թուի արձանագրու-

(Թեան մէջ (Շող., Թ. 7, 8)՝ չորս անգամ, Հոս մեզի համար կարեւոր է պոչին դիրքը, Արդարեւ այլուր՝ այս գրին ծագման մասին խօսած ժամանակ, ըսինք թէ պոչին աջ ու ձախ ծռմոխիլը վերջէն յառաջացած երեւոյթ մ'է եւ տեղէ տեղ կը տարբերի, Յունարէնի մէջ տառիս ամենահին ձեւը պարզապէս I տառին նման է, բոլորովին ուղիղ պոչով (տես Մեծ Յուցակը)։ Այսպէս է նաեւ Յուցակին երրորդ ձեւը, ըսել է թէ հայերէն Զ-ի այս ձեւը պոչի կողմէ բոլորովին համապատասխան է հին յունական ձեւերուն եւ կը ջնջէ ամէն տարակոյս՝ որ կը յարուցուի այս մասին։

Նկատելի է սակայն, որ այդ պոչը ինչքան ալ ուղիղ գիծ մը ըլլայ, այնու ամենայնիւ ծայրերէն քիչ մը աւելի հաստ է, քան մէջտեղը։ Նոյն իսկ աջ ծայրը այնչափ հաստ է, որ մէջտեղն ալ ծակ մը կայ (հմտ. յատկապէս Զի-թենեաց արձանագրութեան վերջին տողը)։ Ահա այս հաստութիւնը եւ ծակն է՝ որ հետզհետէ զարգանալով՝ վայրահակութեան օրէնքով յառաջ բերած են պոչին աջ ու ձախ կորութիւնները, որոնք արդէն կ'երեւան Հռիփսիմէի արձանագրութեան 4<sup>րդ</sup> տողին սկիզբը եւ Անիի 622 թուի արձանագրութեան մէջ (Շող., Թ. 4). բայց նոյն իսկ 1003 թուականին տակաւին իրենց հին հարազատ ձեւը կը պահեն (տես Նեչառոյքի արձ. Շող., Թ. 18, տող 4<sup>րդ</sup>)։

Ըսինք թէ Զ-ին վերի կլորակը պոչին միացնող կապը հնագոյն ձեւին մէջ կը պահուի։ Ասիկա

անշուշտ փորագրութեան դժուարութեան կամ  
գեղագրական որոշ սկզբունքի մը պատճառա-  
ւէ՛ Եթէ հայերէն Զ կը ծագի յունարէն Ζ-էն  
եւ յունարէն այս տառը իր բոլոր տեսակներուն  
մէջ ալ այդ միացուցիչ կապն ունի, ուստի պէտք  
է որ հայերէնն ալ նոյն կապը ունեցած ըլլայ։  
Եւ անշուշտ այսպէս էր բուն Մեսրոբեան շրջա-  
նին։ Նոյն իսկ Զիթենեաց արձանագրութեան  
մէջ ալ եթէ չորս շ-երէն առաջին երկուքը  
զուրկ են նոյն կապէն եւ կըրարկը պոչէն անջատ  
կը մնայ անոնց մէջ, երրորդին մէջ կըրարկը ար-  
դէն կապած է պոչին, իսկ չորրորդին մէջ կայ նոյն  
իսկ փոքրիկ ուղղահայեաց ցպիկ մը, որ կըրարկը  
պոչին կը միացնէ։ Կապը աւելի պարզ է Տեկորի  
արձանագրութեան առաջին տողին մէջ, ուր Զ  
տառը ճիշտ 2 տառին ձեւն առած է, եւ շատ  
աւելի ընթրոշ՝ Կեչառոյքի 1003 թուի արձա-  
նագրութեան մէջ (ՇՊՂ, Թ. 18), ուր այս Զ  
ձեւն ունի (տես վերջընթեք տողին ծայրը)։

Է — Այս գիրը արդի ձեւին մէջ կը  
բաղկանայ ուղղահայեաց սիւնէ մը, որուն մէջ-  
տեղէն եւ վարի ծայրէն կը մեկնին մէկ մէկ հո-  
րիզոնական թեւ, վար կախուած պոչով։ Հնա-  
գոյն գեղագրութեան մէջ այս երկու թեւերն  
ալ պարզ հորիզոնական գծիկներ են, ճիշտ սա  
ձեւով՝ Է։ Այսպէս կը գանենք Զիթենեաց ար-  
ձանագրութեան մէջ մէկ անգամ։ Աւելի յետոյ՝  
տակի պոչին ծայրը կը սկսի հասանալ (այսպէս  
է Հռիփսիմէի, Թալինի 640 թուի (ՇՊՂ, Թ. 5)  
եւ Արուծի 668 թուի (ՇՊՂ, Թ. 9) արձանա-

գրութեան մէջ), եւ վերջապէս վար կախուած ձեւ մը կը ստանայ: Մաստարայի 640 թուի արձանագրութեան մէջ (Շող., Թ. 8) երկու ձեւերն ալ կան:

Պոչի այսպիսի թեքումը, ինչպէս ըսինք, վայրահակութեան օրէնքի արգիւնքն է: Հնագոյն արձանագրութեանց բոլոր առուերը ուղիղ պոչեր ունին. այսպէս Չիթենեաց արձանագրութեան մէջ Բ, Ե, Թ, Լ, Ղ, Ս, Վ, Տեկորի արձանագրութեան մէջ՝ Բ, Գ, Դ, Ե, Թ, Լ, Ղ, Ս, Հոփսիմէի արձանագրութեան մէջ Բ, Ե, Թ, Ռ, Թալինի արձանագրութեան մէջ (Շող., Թ. 5) Բ, Դ, Ե, Թ, Ղ, Ս եւն:

Այս կէտը ի նկատի ունենալով պէտք է ըսենք թէ արդի ապագրական գլխաառուերէն Բ, Գ, Դ, Ե, Է, Ը, Թ, Լ, Ղ եւն ձեւերը, որոնք եփեղան անունը կը կրեն, շատ աւելի հնաձեւ են, քան թէ Բ, Գ, Դ, Ե, Է, Ը, Թ, Լ, Ղ եւն, որոնք աւելի գործածական են հիմա:

Ը — Այս առու հայերէնի մէջ յաճախ կը պատահի, բայց քիչ անգամ կը գրուի, այս պատճառաւ ալ հնագոյն արձանագրութեանց մէջ չենք գտներ: Առաջին անգամ երեւան կու գայ Մաստարայի երկրորդ արձանագրութեան մէջ (640 թուականէն), յետոյ Արուճի Ս. Գրիգոր եկեղեցւոյ արձանագրութեան մէջ (668 թ.), աւելի ուշ նոյն տեղի 867 թուի արձանագրութեան մէջ (Շող., Թ. 12) եւ բոլորն ալ ճիշտ մեր արդի Ը ձեւն ունին, վայրահակ պո-

չով: Տարօրինակ է միայն Արտաւազդ Կամնարա-  
կանի տապանի արձանագրութիւնը (Շող. Թ. 10,  
Ը դարէն), ուր երկրորդ տողին մէջ Ը տառը  
ունի ֆ ձեւը: Այլուր նման բան մը չի պատա-  
հիր. եւ որովհետեւ ըստ հրատարակչին (տես  
Շողակաթ, էջ 175) արձանագրութեան օրի-  
նակութիւնը շատ աւելի-աւելի է, ուստի սխալը  
ասկէ յառաջացած կը կարծեմ, կամ առ առա-  
ւելն փորագրութեան թերութեան արդիւնք:  
Թ — Հնագոյն ձեւին մէջ այս տառին  
ձախակողմեան սիւնը արդի ձեւին չափ երկար  
չէ, այլ աջակողմեան ուղղքին հաւասար, նոյն  
խկ անկէ ալ փոքր ինչ կարճ է: Նոյնպէս աջա-  
կողմեան ուղղքէն դուրս երկարած թեւը հորի-  
զոնական դիրքով կեցած է, ճշտիւ սա ձեւով՝  
Թ: Այսպէս է օր. 21թենեաց լեռան արձանա-  
գրութեան մէջ երկու անգամ, Տեկորի արձա-  
նագրութեան մէջ երեք անգամ եւն: Այս ձեւը  
ճշտիւ համապատասխան է Թ գրին ծագման,  
որովհետեւ յունարէնի մէջ ալ նոյն սիւնը շատ  
կարճ եւ թեւը ուղիղ դուրս երկարած է (տես  
Յուցակին երկրորդ ձեւը), որով գրեթէ շրջուած  
Թ գրին ձեւն ունի: Աւելի յեաղջ կը սկսի հայ-  
երէնի մէջ սիւնը երկարիլ (ինչպէս ունինք ար-  
դէն Հռիփսիմէի արձանագրութեան մէջ, երրորդ  
տող) եւ վայրահակութեան օրէնքով ալ հորի-  
զոնական թեւը գեպի վար ուղորդիլ, ինչպէս  
ունինք արդէն Մաստարայի երկրորդ արձանա-  
գրութեան մէջ՝ 640 թուէն (տես Շող. Թ. 8,  
տող 7). — Թալինի 783 եւ 901 թուերու

արձանագրութեանց մէջ (Շող., Թ. 11, 13) այս թեւը փոխանակ վար ծռելու՝ վեր բարձրացած է:

Ժ — Հին արձանագրութեանց մէջ Ժ արդի սովորական ձեւն ունի, ինչպէս է Մաստաբայի 640 թուի (Շող., Թ. 7), Արուճի 668 թուի (Շող., Թ. 9), Արաւազդ Կամսարականի տապանի (Շող., Թ. 10) արձանագրութեանց մէջ: Բայց աւելի յետոյ վերէն կը ձեւանայ ձախակողմեան թեւ մը, ինչպէս է Տեկորի Թ. 15 (964 թուի), Ապուղամրենց Թ. 17 (Ժ. դար), Խծկոնից Թ. 20 (1033 թուէն, առջ 13), Կեւառոյքի Թ. 21 (1051 Թ.) եւն արձանագրութեանց մէջ՝ Ժ ձեւով: Այս ձեւը սակայն յաջողութիւն գտած չէ եւ վերջապէս գաղրած է:

Խ — Սովորաբար Խ ձեւն ունի. Արուճի 668 թուի արձանագրութեան մէջ ստացած է փոքրիկ աարբերութիւն մը. փորագրիչը նախ փորեր է Ի ձեւը, որուն ծայրը աւելցուցեր է 5 կիսաշրջանակը, բայց այնպէս որ հորիզոնական գիծը հասած է ճշտիւ անոր կէսին: Կը պատահի նաեւ որ տառին թեւը քիչ մը վարօք ըլլայ, այնպէս որ ծայրով յենուի առջին, սա ձեւով՝ Խ:

Ժ — Արդի գեղագրութեամբ այս տառը ունի Ժ կամ Ծ ձեւը. հնագոյնին մէջ գլխի կորութիւնը շատ աւելի հասարակ է եւ ունի ճշգիւ Ժ ձեւը, ուրիշ խօսքով հասարակ բոլորագիր Ծին խոշորն է: Այսպէս կը գանենք Ձիթենեաց արձանագրութեան, Թալինի 630 թուի արձանագրութեան (Շող., Թ. 5), Մաս-

տարայի 640 թուի (Շող., Թ. 7) եւ Արտաւազգ  
կամսարականի տապանի արձանագրութեան  
(Շող., Թ. 10) մէջ: Ծ տառի այս ձեւը ճշգիւ  
համապատասխան է իր ծագման: Արգարեւ վերը  
այս գրին ծագման վրայ խօսած ժամանակ ըսինք  
թէ կու գայ տառ. 3 ձեւէն եւ թէ մեր գրին  
գլխի զարդը յեառյ յառաջացած երեւոյթ մ'է՝  
հայկական գեղագրութեան օրէնքներով: Ասորին  
այդ զարդէն զուրկ ըլլալով՝ հնապէս պէտք էր  
որ հայերէնն ալ այնպէս ըլլար, ինչպէս որ իրօք  
կը գտնենք հնագոյն արձանագրութեանց մէջ:  
Հայերէն Ծ գրին զարգացած ձեւերը  
դանազան են. այսպէս՝

1. Թեւերը բարձր, իրարու հաւասար եւ  
միւս գրերու կամ տողին սահմանէն վեր բար-  
ձրացած ձեւ մը՝ եթովպական շրջուած Ս ին պէս  
կամ մանիքէական այբուբենի Գ տառին նման  
(տես Մեծ Ցուցակը): Այս ձեւը երեք անգամ  
կը գտնենք Խժկոնից 1033 թուի արձանագրու-  
թեան մէջ (Շող., Թ. 20):

2. Բոլորգիր ծ գրին նման ձեւ մը, միայն  
ասկէ քիչ մը աւելի ուղղահայեաց դիրքով եւ  
գրին վերի ծայրը գանուած կարթը բոլորովին  
հորիզոնական ձեւով: Այսպիսի Ծ կը գտնենք  
Տեկորի 964 թուի Խաչքարի արձանագրութեան  
մէջ (Շող., Թ. 21) եւ Կեչառուքի 1051 թուի  
արձանագրութեան մէջ (Շող., Թ. 21), երկու  
անգամ:

3. Նոյնին քիչ մը աւելի զարգացած ձեւը,  
այն է կարթը բոլորովին ծռուած՝ Բ տառին

գլխին պէս, կարծես թէ իրարու կպած ք եւ բ տառերը լինէին: Այսպիսի Ծ կը գաննէք նոյն արձանագրութեան 3րդ եւ 6րդ տողերուն մէջ:

4. Վրացերէն 6 (բոլորգիր ց) գրին նման ձեւ մը, բայց տակի կըրթակը շատ աւելի զարգացած ու ամբողջացած, իբր արաբ. ۶. այս ձեւը գործածուած կը գաննէք Ապուղամրենց Ս. Գրիգոր եկեղեցւոյ արձանագրութեան մէջ (Ժ. դար, Շող., Թ. 17, տող 4րդ): Սակայն նոյն արձանագրութեան առաջին տողին մէջ կայ նոյնին քիչ մը տարբեր ձեւը. այն է գլխի առաջին կարթը կոտրած՝ գրեթէ ۷ ձեւով:

5. Վերջապէս Ծ ձեւով, որ գործածուած է Թալինի 901 թուի արձանագրութեան մէջ (Շող., Թ. 13):

Այս բոլոր ձեւերը ընդարձակ գործածուած թին չեն գտած եւ խափանուած են:

Կ — Մեր արդի գեղագրութեան համաձայն՝ այս տառը կը բաղկանայ երկու հաւասար սիւներէ, որոնք մէջտեղէն միացած են փոքր կորութեամբ մը: Հին ժամանակ սակայն առաջին սիւնը շատ երկար էր միւսէն եւ կը հասնէր մինչեւ տողագիծը, ուր կը գանուէր նաեւ կորութիւնը. այսպէս՝ Կ: Այս վիճակին մէջ Կ տառը կը նմանէր առանց թեւի եւ գէշ գրուած Եի կամ մէկ կողմը կոտրած Սի: Այս ձեւով է Կ տառը 2րթենեաց լեռան, Տեկորի, Թալինի, Մրենի, Մասաարայի եւ Արուճի արձանագրութեանց մէջ (Շող., Թ. 1, 2, 5, 6, 7, 9) եւն:

Այս գրին ծագման վրայ խօսած ժամա-

նակ՝ չէինք կրցած վճռական որոշում մը տալ եւ կը տատանէինք յոյն, ասորի եւ սասանեան ձեւերուն միջեւ, որոնք հաւասարապէս նման են մեր գրին։ Եթէ սակայն նկատի ունենանք մեր գրին հնագոյն ձեւը, պիտի տեսնենք որ բոլորովին համապատասխան է յն. *Κ*ին նախնական ձեւին (տես *Մեծ Յուցակը*), որով եւ պիտի կրնանք ըսել թէ հայերէն *վ* կը ծագի միայն յունարէնէ։

Հ — Այս գիրը երկու տեսակ է հին արձանագրութեանց մէջ. ամենահինը, այսինքն Ձիթենեաց լեռան արձանագրութիւնը, ունի ճշգրիւ մեր արդի բոլորգրի ձեւով (*Σ*). այսպէս է նաեւ Մաստարայի երկրորդ արձանագրութեան մէջ (*Σ* 7, Թ. 8). Յեկորի արձանագրութեան մէջ ալ կայ այս ձեւը (տես առջ 2, յիշուող բառը). բայց հոս աւելի Հ ձեւն ունի. միայն թէ սուր անկեան վերի կողմ վարի կողմն աւելի երկար է, իսկ աակի պոչն ալ՝ փոխանակ ուղղահայեաց դիրքով կանգնելու, ընդհակառակը դէպի աջ ծռուած է։ Նոյն տառին մէկ ուրիշ ձեւն ալ ունինք Արաւազդէ կամսարականի տապանի արձանագրութեան մէջ, ուր սուր անկեան վերի կողմ գրեթէ ուղղահայեաց դիրք մը առած է եւ ըստ այսմ ալ՝ աակի պոչը արդի բոլորգրին նման գէպի աջ թեքուած է՝ գրեթէ սա ձեւով՝ Հ։ Այս բոլորին մէջ Հ տառը անով միայն կը տարբերի արդի գլխատառէն, որ գլխի կարծէն ղըկուած է։

Հ տառին երկրորդ տեսակը, որ կը գտնենք հին արձանագրութեանց մէջ, ճշգրիւ վերի ձեւով

է, միայն գլխին վրայ աւելցած է կարթը՝ Երկու տեսակները միաժամանակ կը գտնենք Տեկորի, Թալինի եւ Արտաւազգ Կամսարականի տապանի արձանագրութեան մէջ եւն։

Ձ — Հակառակ իր գոգուարին գծագրութեան՝ ամէն տեղ ալ նոյն ձեւով է, որ արգի ձեւէն չի տարբերիր. միայն թէ բերանը շատ աւելի բաց էր եւ ամբողջը քիչ մը աւելի աջ թերուած, իսկ տակի պոչը ձախէն աջ դառնալէ յետոյ, այլ եւս ծայրը նորէն վեր չի բարձրանար, ինչպէս է արգի գծագրութեամբ. հմմտ. Շող., Թ. 2, 5, 7, 8 (երեք անգամ), 9, 18, 20 եւն։ Մ/ւս արձանագրութեանց մէջ չկայ։

Պ — Այս տառը քիչ կը պատահի արձանագրութեանց մէջ. այսպէս՝ առաջին անգամ կը գտնենք Հռիփսիմէի արձանագրութեան չորրորդ տողին մէջ՝ մէկ անգամ, Արուծի արձանագրութեան մէջ (Թ. 12)՝ հինգ անգամ, նաեւ Խծկոնից 1033 թուի արձանագրութեան մէջ (Թ. 20)՝ երեք անգամ, Կեչառոյքի 1051 թուի արձանագրութեան մէջ (Թ. 21)՝ մէկ անգամ եւն։ Արգի գեղագրութեամբ չէ կազմուած է երկու թրաձեւ գծերէ, որոնք իրարու ագուցուած են, բայց ձախ գիծը գէպի աջ անցնելէ յետոյ՝ դէպի վեր կը բարձրանայ, Հռիփսիմէի արձանագրութեան մէջ այս տառը քիչ մը աւելի պարզ ձեւով է. հոս երկու գծերը թրաձեւ չեն, այլ բոլորովին ուղիղ, որոնք ճիշտ լա. X առաին պէս իրարու ագուցուած են, բոլորովին հորիզոնական խարիսխի մը վրայ նստած.

ձախէն աջ եկող գիծն ալ գէպի վեր չի բարձրանար: Արուճի արձանագրութեան հինգ ձեւերն ալ նման են արդի ձեւին. գծերը թրածեւ են, աջէն ձախ գացող գիծը միւսէն կարճ, բայց խարիսխը հորիզոնական եւ ձախէն աջ եկող գիծը՝ փոխանակ վեր բարձրանալու, ընդհակառակը վար ծռած, եթովպացերէն Ճ գրին պէս: Երկուքին միջին ձեւն ունի խճկոնից եւ կեջառոյքի արձանագրութեան մէջ: Ասոնց մէջ աջէն ձախ երկարած գիծը ուղիղ, իսկ ձախէն աջ երկարած գիծը թրածեւ է, ծայրերն ալ վար կախուած, նման խպաական Ճ (janja) գրին:

Ժ գիրը բոլորովին տարօրինակ ձեւ մը ունի խճկոնից 1214 թուի արձանագրութեան մէջ (թ. 23, մէկ անգամ), ուր բոլորովին նման է բոլորգիր ծ գրին, միայն կլորակը խոշոր եւ աջ թեւը ձախէն աւելի երկար ու գէպի վեր բարձրացած, գրեթէ գլխիվայր շրջուած Օ առին պէս, կամ եթովպական շրջուած Յ:

Այս ձեւով Ժ ուրիշ անգ չի պատահիր:

Յ — Այս առող կազմուած է երկու թերի բոլորակներէ, ձախ ծայրը կէտով մը: Սոյն այս ձեւը կը գտնենք նաեւ Զիթենեաց լեռան արձանագրութեան մէջ (աող ՅԲԴ), Հռիփսիմէի արձանագրութեան մէջ (5 անգամ) եւն: Բայց գծագրութեան մէջ անշուշտ կէտին յաւելումը որոշ դժուարութիւն կը յարուցանէր. ուստի գրիչները մտածած են կամ միջին գիծը քիչ մը աւելի երկարել, որով կէտը միասին գծուած կը համարուէր եւ կամ

կէսը բոլորովին ջնջելով՝ պահել միայն երկու բոլորակները: Առաջին ձեւը կը գտնենք Տեկորի արձանագրութեան մէջ քանիցս, իսկ երկրորդ ձեւը՝ նոյն իսկ Ձիթենեաց արձանագրութեան մէջ (2 անգամ):

Ն — Սկսելով հնագոյն արձանագրութիւններէն՝ այս տառը կը գտնենք երկու ձեւով. նախ՝ արգի ձեւով, որուն յաւակնիշն է գլխի կեռ կաուցը. եւ երկրորդ՝ առանց կեռ կաուցի, պարզ հորիզոնական գծով մը, այսպէս Ն, Ձիթենեաց արձանագրութեան մէջ մէկ անգամ առանց կեռ կաուցի է (առաջին տող) եւ հինգ անգամ կեռ կաուցով: Տեկորի (թ. 2) եւ Թալինի (թ. 5) արձանագրութեան մէջ միայն Ն ձեւով է: Տեկորի արձանագրութեան մէջ կայ նաեւ Մ ձեւը մէկ անգամ (տէս առաջին տողը, վեց բառը), որ սակայն այլուր չի պատահիր: Այնուհետեւ Ն ձեւը սովորական կը գտնայ. Հոփսիմէի արձանագրութեան մէջ միայն Ն ձեւով է (3 անգամ), Մրենի (թ. 6) արձանագրութեան մէջ գեռ երկու ձեւերն ալ խառն են. Մաստարայի (թ. 7) արձանագրութեան մէջ ունինք 9 անգամ կեռ կաուցով եւն:

Ն տառի այս հին ձեւը անշուշտ կարեւոր է պարզելու համար իր ծագումը, որ շատ որոշ չէ:

Ձ — Ամենէն աւելի բազմազան երեւոյթներ ստացած է այս տառը՝ հետեւեալ ձեւով.

1. Շ, որ կը գտնենք Ձիթենեաց արձանագրութեան մէջ մէկ անգամ (այսինքն լատին Շ տառին պէս՝ գլուխը բութ նշան մը ագու-

ցուած), Տեկորի արձանագրութեան մէջ 2 անգամ, Հոփսիմէի արձանագրութեան մէջ մէկ անգամ (բայց քարը փնասուած ըլլալով՝ պարզ չէ), Թալինի արձանագրութեան մէջ 4 անգամ (հոս ալ շատ պարզ չէ): Բուժ նշանը աւելի երկար Մաստարայի երկրորդ արձանագրութեան մէջ (երկու անգամ) եւ շատ աւելի երկար՝ Խծկոնից (Թ. 20) արձանագրութեան մէջ:

2. Նշել՝ միայն պոչը քիչ մը վար հակուած՝ Մրենի արձանագրութեան մէջ (Թ. 6, առջ 3րդ) եւ Կեչառուքի արձանագրութեան մէջ (Թ. 21), գրեթէ յն. հ տառին ձեւով:

3. Նշել՝ գլուխը բութի անշ կեռ մը անցուած, գրեթէ սա հ ձեւով, Մրենի արձանագրութեան մէջ՝ առջ 3րդ:

4. Գլուխը ուղիղ՝ ճշտիւ ինչպէս արաբ. Շ Մաստարայի առաջին արձանագրութեան մէջ (առջ 3րդ), Արտաւազգ Կամսարականի տապանագրի մէջ, գրեթէ նոյնպէս եւ Արուծի արձանագրութեան մէջ (Թ. 12):

5. Գլուխը աւելի ձեւաւոր եւ պոչը կէտով մը վերջացած, Շ ձեւով (տես Արուծի արձանագրութեան մէջ՝ Թ. 9, երկու անգամ):

6. Բուժ նշանը մեծ եւ անջատ գրուած, տառին տակը կեռ պոչով՝ իրր ց. այս ձեւը կը գտնենք երկու անգամ՝ Կեչառուքի Թ. 18 արձանագրութեան մէջ:

7. Ճշտիւ բոլորգիւր ղ ձեւով, ինչպէս կը գտնենք Թալինի Ուխտատուր վանականի արձանագրութեան մէջ (Թ. 11, առջ 5րդ):

8. յ ձեւով, առանց գլխի, պոչը կեռ եւ ամբողջը հակառակ գիրքով՝ դէպի ձախ դարձած. կը գտնենք մէկ անգամ Թալինի 901 Թուի արձանագրութեան մէջ (Թ. 13):

9. Գէշ գրուած Ն տառի ձեւով, միայն կեռ կտուցը աւելի ակար, եւ փորը աւելի կլորածեւ, գրեթէ այսպէս՝ Շ: Մէկ անգամ կը գտնենք գործածուած Հաւուց Թառի 1081 Թուի արձանագրութեան մէջ (Շող. Թ. 22):

10. Առանձին ձեւ ունի Էջմիածնի արծաթէ պահարանի արձանագրութեան մէջ՝ 1300 Թուականէն (Շող. Թ. 28), քանի մը անգամ գրեթէ այսպէս Շ կամ Շ:

Այս բոլորին մէջ հիմնական եւ աւելի գործածական ձեւը կը մնայ առաջինը, որուն մանր տարբերակներն են Թ. 2—6, իսկ միւսները բացառիկ ձեւեր:

2 — Այս տառը քիչ կը պատահի. առաջին անգամ կը գտնենք Հոփիսիմէի արձանագրութեան երկրորդ տողին մէջ, բայց կոտրած ըլլալով՝ շատ պարզ չէ: Այնուամենայնիւ կը Թուի Թէ սովորական 2 ձեւն ունի: Երկրորդ անգամ կը գտնենք Արտաւազգ Կամսարականի տապանի արձանագրութեան մէջ՝ բոլորովին մանգաղի ձեւով. այսպէս 2: Նոյն է նաեւ Արուծի Թ. 12 արձանագրութեան մէջ: Սովորական ձեւն ունի Կեչառոյքի Թ. 18 եւ 21, Խըժկոնից Թ. 20 արձանագրութեանց մէջ եւն.:

3 — Մեր տառերուն մէջ ամէնէն բարդ ձեւովն է եւ շատ ալ քիչ կը պատահի: Առա-

ջին անգամ կը գանենք Արուծի Ս. Գրիգոր եկեղեցւոյ արձանագրութեան մէջ՝ 867 թուէն (Շող. թ. 12), երկու անգամ՝ Առաջինը կը պահէ միայն առաին գլուխը՝ արգի ձեւով, միայն բոլորովին դէպի աջ թեքուած (9). իսկ երկրորդը բաւական անշնորհք ձեւով, երկու կորութիւնները իրարմէ հեռու մնացած եւ քովէն պոչով մը՝ որ շատ պարզ չի տեսնուիր։ Աւելի պարզ է Խճկոնից արձանագրութեան մէջ (Շող. թ. 20), մէկ անգամ գրեթէ սա ջ ձեւով. միայն ամբողջը դէպի աջ պառկած։ Նոյնը, բայց պոչը փոխանակ վար ծռելու, սիրուն ոլորքով մը վեր բարձրացած, սա՛ ձեւով Ջ։ Այսպէս կը գանենք Կեչառայքի արձանագրութեան մէջ (Շող. թ. 21)՝ երեք անգամ։ Նոյն արձանագրութեան մէջ երկու անգամ ալ ունինք բոլորովին ուղիղ պոչով՝ որ դէպի աջ եւ դէպի ձախ երկարած է, ճիշտ ինչպէս Օ (ղ) տառին պոչը։ Վերջապէս Էջմիածնի արծաթէ պահարանի արձանագրութեան մէջ (1300) թուէն. (Շող. թ. 28) սա զարդարուն ձեւով՝ Ջ։

Վ — Իր հնագոյն շրջանին մէջ այս տառը ունի Ս ձեւը, այսպէս է Ձիթենեաց լերան արձանագրութեան մէջ երկու անգամ (առղ 1 եւ 5), Մրենի 637 թուի արձանագրութեան մէջ (թ. 6), առղ 1, եւն.։ Այս ձեւով գրուած Վ անպատեհ հութիւն չունէր շփոթուելու Ա տառին հետ, որովհետեւ նոյն ժամանակ Ա տառը իր երկու սիւներուն միջեւ մահիկ մըն ալ ունէր, միանգամայն պոչը դէպի վեր դարձած էր։

Աւելի յետոյ սկսան Վ տառին առաջին սիւնը կարճցնել եւ քիչ մը վերէն կպցնել երկրորդին, որով յառաջացաւ մեր արգի Վ ձեւը։ Ասոր սկզբնաւորութիւնը կը տեսնենք արդէն շխթենեաց լեռան արձանագրութեան 4րդ տողին մէջ, ուր թէեւ դեռ սիւները հաւասար են, բայց պոչը արդէն քիչ մը վարէն առնուած է։ Վ գրին այս ձեւափոխութիւնը անշուշտ կապ ունի Ս գրին ձեւափոխութեան հետ. քանի ասոր մահիկը կրճատուեցաւ եւ պոչը վար կախուեցաւ, ընկանաբար այնքան ալ երկու գրերու նմանութիւնը աւելցաւ, ուստի շփոթութեանէ խուսափելու համար՝ Վ գրին ձեւն ալ փոխուեցաւ։ Արդի աստիճանին հասած կը գտնենք Հռիփսիմէի արձանագրութեան 4րդ տողին մէջ եւ Թալինի 901 թուի արձանագրութեան մէջ (Շող., Թ. 13, աող 1)։

§ — Արգի ձեւով այս տառը ուրորուն բան մ'է. հնագոյն ժամանակները ունէր Մ ձեւը, ասիկա շատ նման է մեր արգի Մ տառին, բայց հնապէս շփոթութեան երկիւղ չկար, որովհետեւ Ռ տառին առաջին սիւնը երկար էր, իսկ Դ-նինը կարճ, միեւնոյն ժամանակ Ռ-ի թեւը հորիզոնական էր, իսկ Դ-նինը վայրահակ։ Այսպէս կը գտնենք § տառը շխթենեաց լեռան արձանագրութեան մէջ (աող 7), Տեղորի արձանագրութեան մէջ (աող 1, 2), Հռիփսիմէի արձանագրութեան մէջ (աող 1, 4) եւ այլն։

Ինգիր է թէ երկու տեսակ § երէն որն

է իսկապէս աւելի հին. ուղղագրի՞ծը թէ ոլորունը: Եթէ ուղղագրիծն է, հապա ինչպէս կ'ըլլայ որ աւելի ուշ կը գտնենք ոլորուն **Տ**, բայց աւելի ուշ ալ բոլորգիր տ, որ ուղղագրիծին շարունակութիւնն է: Իսկ եթէ ոլորունն է հնագոյնը, ինչո՞ւ հնագոյն արձանագրութեանց մէջ կը գտնենք ուղղագրիծ ձեւը: Նկատի ունենանք նաեւ տառիս ծագումը, որ, ինչպէս վերը տեսանք, սասանեան յ ձեւէն ըլլալով, աւելի ուղղագրիծին յարմար է քան ոլորունին:

Ըստ իս տառիս հնագոյն եւ նախնական ձեւն էր ո՞չ ոլորուն եւ ոչ ուղղագրիծ, այլ Բէ-այսինքն վերի մասը գէպի ձախ եւ վարի մասը դէպի աջ հակուած դիրք մը ունէր: Այսպիսի թեք ձեւով կը գտնենք Թալինի 630 թուի արձանագրութեան մէջ (Շող., Թ. 5, տող 1 եւ 4), Արաւաւադդ Կամսարականի տապանի վրայ (Շող., Թ. 10) եւ շատ մը հին ձեռագիրներու մէջ. ինչպէս՝ Էջմիածնի Ն. 311 ձեռագրին մէջ (1066 թուէն, նմանահասնութիւնը տես Շող., Թ. 54), Հ. Տաշեանի Յուցակին մէջ, էջ 1048, տառակ Ե. Թ. 1, ուր երկու գլխատառ **Տ** կայ, երկուքն ալ թեք, եւն. թեքութիւնը անորոշ ձեւ մը ըլլալով՝ աւելի յետոյ ստացած է երկու որոշ ուղղութիւն. կամ ոլորուն, որով յառաջացաւ **Տ** ձեւը, եւ կամ բոլորովին ուղիղ, որով յառաջացաւ **Ծ** ձեւը:

**Ց** — Այս տառը **Յ** գրին շատ նման է. հնագոյն վիճակին մէջ գրեթէ սա **Յ** ձեւն ունէր. որով երկուքին տարբերութիւնն այն էր.

որ ց տառին գլուխը մեծ էր, իսկ յ-ինը փոքր ու կարճ. միանգամայն մէջանդի գիծը յ-ի մէջ ծայրը կէտ մը ունէր կամ առ առաւելն ուղիղ կեցած էր, իսկ յ-ի մէջ նոյն գիծը դէպի վեր կը կորանար: Այսպէս է Ձիթենեաց լեռան արձանագրութեան մէջ: Տեկորի արձանագրութեան երկրորդ առդին շ-յ-ց բառին մէջ երկու տառերն ալ կան, բայց հոս յ-ին գլուխը այնքան փոքրացած է, որ մանր եւ բոլորովին փակ կլորակ մը կը ձեւացնէ, իսկ յ-ին գլուխը մեծ եւ բոլորովին լայն բացուած է: Այս նաեւ ց տառի աւելի պարզ ձեւ մը, որուն մէջ տառին գլուխը պարզ կլորակ մ'է՝ առանձին ու անջատ կեցած, իսկ անոր տակն ալ երկրորդ կլորակն է՝ իր վեր դարձած թեւով, իբր Ծ: Այս ձեւն ունի Հռիփսիմէի արձանագրութիւնը 4 անգամ, նոյնպէս Արուծի արձանագրութիւնը (թ. 9, վերջին առդ): Հմմտ. նաեւ Թալինի արձանագրութիւնը 783 թուէն (թ. 11, վերջին առդ), ուր դարձած է Ծ: Շատ ուշ՝ Կիլիկեանց ժամանակ կը գտնենք տառիս տարօրինակ մէկ ձեւը, որ է Ժ. այսպէս ունինք Հեթում Ա. Թագաւորի գրամի արձանագրութեան մէջ (տես Սիսուան, էջ 232): Այլուր այսպիսի ձեւ գոյութիւն չունի:

Ի — Հնագոյն վիճակին մէջ այս տառը Ի ձեւն ունի. այսինքն ուղղահայեաց սիւնի մը մէջանդէն դէպի աջ երկարած հորիզոնական գծիկ մը. այսպէս է օրինակ՝ Ձիթենեաց, Տեկորի, Անիի Միջնաբերդի (Շող., Թ. 4), Թալինի (Շող., Թ. 5), Մրենի (Թ. 6) արձանագրու-

Թեան մէջ եւն. : Տառիս այս ձեւը աւելի լաւ էր քան արդի ձեւը, որովհետեւ բնաւ չէր կրնար շփոթուիլ ի տառին հետ, որուն թեւը վար կախուած էր : Իսկ ի տառին վար կախուած թեւը, ինչպէս կը գտնենք արդի գեղագրութեան մէջ, յառաջացած է աւելի յետոյ՝ վայրահակութեան օրէնքով : Տառիս նախնական ձեւը շատ համապատասխան է իր ծագման, Արդարեւ վերը տեսանք որ ի կը յառաջանայ յն. Մ ձեւէն, որ Մ գրին հնագոյն ձեւն է. յու նարէնի մէջ թեւը վար կախուած չէ, ուստի եւ աւելի համաձայն է հայերէնի ուղղագիծ թեւին :

Ք — Հնագոյնը արդի ձեւէն այն տարբերութիւնն ունի որ միջին գիծը ուղիղ է. այսպէս Ք : Այս ձեւով կը գտնենք առաջին անգամ Հռիփսիմէի արձանագրութեան մէջ (1 անգամ). յետոյ Մասաարայի երկու արձանագրութեանց մէջ (թ. 7 եւ 8)՝ քանիցս անգամ : Միջագծին երկու կողմ թեքումները շատ աւելի յետոյ յառաջացած են վայրահակութեան օրէնքով. այսպէս Ք :

Տառիս համար արձանագրութեանց մէջ կը գտնենք քանի մը բացառիկ ձեւեր ալ, որոնք սակայն ընդհանուր գործածութիւն ստացած չեն. այսպէս՝

1. Ք այսինքն դէպի աջ դարձած Ք ձեւը, որ կը գտնենք մէկ անգամ գործածուած Կեչառուքի 1051 թուի արձանագրութեան մէջ (թ. 21, առջ 6, ելէ -+).

2. Զ ձեւով, այսինքն տառին գլխի չլու-  
րակը եւ քաշած եւ դարձուցած Ն գրին կտու-  
ցին պէս. այսպէս կը գտնենք մէկ անգամ Էջ-  
միածնի Կ-ի արձանագրութեան մէջ (1232  
թուականէն. նմանահանութիւնը տես Շող.,  
թ. 27):

3. Գ այսինքն գլուխը փոխանակ դէպի  
աջ դարձնելու՝ դէպի ձախ գարձած: Այս ձե-  
ւով կը գտնենք մէկ անգամ նոյն տեղը:

4. Կ այսինքն առանց գլխի եւ վայրահամ  
թեւերով. մէկ անգամ կը գտնենք դարձեալ  
նոյն տեղը:

Այս չորս ձեւերն ալ, ինչպէս ըսինք, բա-  
ցառիկ բաներ են եւ փորագրողի սխալման կամ  
ագիտութեան արդիւնք. առաջինը պարզապէս  
սխալմունք մ'է, որովհետեւ նոյն արձանագրու-  
թեան մէջ կան մի քանի ուրիշ Ք-եր, միշտ  
կանոնաւոր ձեւով են, միայն նոյն մէկն է՝ որ ու-  
նի աջ դարձած Պ-ի կերպարանքը: Գալով միւս  
երեքին, ասոնք իրօք ագիտութեան արդիւնք  
են. փորագրիչը ամբողջ արձանագրութեան մէջ  
երեք անգամ պէտք ունեցած է Ք փորագրելու  
եւ երեքն ալ տարբեր տարբեր ձեւերով փո-  
րագրած է:

Գլխագիր երկաթագրի բնորոշ յատկա-  
նիշն է, ինչպէս ըսինք, կորաձեւ կամարը. ասի-  
կա գծագրական տեսակէտով ձեռքի առանձին  
ճարտարութիւն կը պահանջէր, հետեւաբար  
աւելի դժուար էր, Թ-է դիւրութեան եւ թէ

աւելի արագ գրելու համար՝ մարդիկ ինքնաբերաբար շատ անգամ կորուկիւնները աւելի անփոյթ կը գծէին, որով գրեթէ ուղիղ գիծ մը կը ձեւանար: Ասով քիչ քիչ յառաջացաւ հայերէն գրերու երկրորդ տեսակը, որ կը կոչուի Մէջին-Մի-ր-բեռն երկ-ր-բէր:

Միջին-Մեսրոբեան երկաթագիր այբուբենը հետեւեալն է.

Ա Բ Կ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ Խ Ժ  
 Ս Վ Շ Ղ Ճ Մ Յ Ն Շ Ո Չ Պ Ղ  
 Ռ Ս Վ Մ Դ Յ Ի Փ Բ Օ Ֆ

Այս տեսակ գրութեան ամենահին յիշատակարանը կը կարծեմ ջիւանշիրի Մեծշէն գիւղի Մագաղաթեայ Աւետարանը, որ գրուած է 909 թուին: Գարեգին Վրդ. այս գրութիւնը կը համարի «բոլորաձեւ երկաթագիր» (Շոշ., էջ 188). բայց ուշադիր աչք մը պիտի տեսնէ որ գրութիւնը շատ խառն է: Արդարեւ կան բազմաթիւ գլխագիր երկաթագիր տառեր, բայց կան նաեւ միջին-մեսրոբեան տառեր: Այսպէս՝ յայտնապէս Միջին-Մեսրոբեան են՝ առաջին տողին 13 տառերուն մէջ՝ Տ (երկիցս), Ո (երկիցս), Ի, Բ, Ի, երկրորդ տողին 14 տառերուն մէջ՝ Բ (երկիցս), Դ (երկիցս), Ո, Վ (մի մի անգամ): Կան տառեր, որ մերթ բուն երկաթագիր են, մերթ միջին-մեսրոբեան. այսպէս Բ տառը երկրորդ տողին մէջ միջին-մեսրոբեան

է, մինչդեռ շորորով տողին մէջ յայտնապէս  
բուն երկաթագիր եւն: Կան տառեր ալ՝ որ այն-  
պիսի վիճակ մը ունին, որ կարելի չէ ըսել թէ  
որ տեսակին կը պատկանին. այսպէս՝ առաջին  
տողին մէջ Ե տառը տակէն կամարով է, բայց  
թեւը աւելի միջին-մետրոքեան է: Ե-երը առ-  
հասարակ միջին-մետրոքեան են. եւն:

Այս ձեռագրէն յետոյ կու գան աւելի  
նորերը. այսպէս՝ Էջմիածնի Թ. 2684 ձեռա-  
գիրը, 973 թուականէն (Շող., Թ. 37), որ  
լիովին միջին-մետրոքեան է, Ախալցխայի Ծղրուծ  
գիւղի Աւետարանը՝ 974 թուականէն (Շող.,  
Թ. 38), որուն յիշատակարանն է միայն միջին-  
մետրոքեան երկաթագիր, մինչդեռ ամբողջ գիրքը  
բուն մետրոքեան գլխագրով է (տես Շող.,  
Թ. 39), Ալեքսանդրապոլի Սմնափրկիչ  
կոչուած Աւետարանը՝ 988 թիւէն (Շող.,  
Թ. 40), որ թեւեւ բուն երկաթագիր է, բայց  
տեղ տեղ ունի միջին-մետրոքեան տառեր (ինչ-  
պէս՝ 11<sup>րդ</sup> առդ, Դ, Ե, Զ տառերը), Էջմիածնի  
փղոսկրէ Աւետարանը՝ 989 թուականէն, որ  
թեւեւ բուն երկաթագիր է (Շող., Թ. 41),

1 Այս Աւետարանին յիշատակարանը միայն ծանօթ  
է. խաչիկ Վրդ. Դադեան կտրեր հաներ է նոյն յիշատա-  
կարանը եւ նմանահանութիւն ալ հրատարակուած է Շո-  
ղակ-Թի մէջ, Թիւ 35: Խաչիկ վարդապետի ցաւովի սովոր-  
ութիւնն էր կարել հանել մագաղաթեայ յիշատակարան-  
ները այն ձեռագրերներուն մէջէն, որոնք ամբողջապէս  
խրաջնել չէր կարող: Այսպէսով Թի ձեռագրերները կը  
զգուէին իրենց արժանիքէն եւ թէ հանուած յիշատակա-  
րանները:

բայց Եւսեբիոսի եւ Կարպիանոսի թղթերը միջին երկաթագրով են (Շող., Թ. 42), Էջմիածնի ՊՅ 323 Աւետարանը՝ 1044 թուականէն, որուն մէջ բնագիրը բուն երկաթագիր է, իսկ յիշատակարանը միջին-մեսրոբեան երկաթագիր (Շող., Թ. 49), Էջմիածնի ՊՅ 988 Ճառնատիրը՝ 1045 թուէն, որ թէեւ բուն երկաթագիր է, բայց յիշատակարանը միջին-երկաթագիր (Շող., Թ. 50), Էջմիածնի ՊՅ 3784 Աւետարանը՝ 1057 թուէն, որ թէեւ ամբողջապէս միջին-երկաթագիր է, բայց ունի նաեւ քանի մը հատ բուն երկաթագիր տառեր (տես Շող., Թ. 53, սիւնակ առաջին, առջ 7ԸԷ, է եւ Ն տառերը)։ Կը թուուիք յիշել աւելի նոր ձեռագիրները։

Ժ դարու կէսէն յետոյ կը սկսի խառնակ վիճակ մը. գրութեան զանազան տեսակներ իրարու դիմաց կ'ելլեն. մէկ կողմէն բուն երկաթագիրն ու միջին-մեսրոբեան երկաթագիրը իրարու միացկից կը կանգնին, միւս կողմէն թղթի խնայողութեան կամ դիւրամար գրքեր ունենալու պահանջը կը ստիպէ հեռացնել փոքրացնել խոշոր տառերը, վերջապէս երրորդ կողմէն արագագրութեան կամ գրերու զարգացման ընթացքով պահանջը կը մղէ գրիչները՝ ձեւափոխելու տառերը եւ աւելի գիւրագիծ ու մաշուած ձեւեր հնարելու։ Ահա այս երեք կարգի ձգտումներու խառնուրդէն յառաջ կու գան տեսակ տեսակ այբուբեններ, որոնք կրնանք դասաւորել հետեւեալ ձեւով.

ա) Փոփոխութիւններ կամ փոփոխութիւններ. — ասիկա միջին-մետրոքեան գրերու աւելի փոքրացածն է, որուն հնագոյն օրինակն աւանդուած է մեզ 989 թուին գրուած փղսկրեայ Աւետարանին մէջ: Ասիկա բուն երկաթագրով է, բայց առղերու վերջաւորութեանց մէջ գրիչը խուսափելով տողադարձէ՝ շատ անգամ տառերը աւելի մանրագիր դրեր է բուն երկաթագիր տառերուն քովը կամ վրան (նմանահանութիւնը տես Շող., Թ. 41): Նոյն ձեռագրին վերջը կայ Աւետարանացոյց մը, որ ամբողջապէս փոքր-երկաթագրով է եւ որուն նմանահանութիւնը տես Շող., Թ. 44:

բ) Անշուքէ, որ, ինչպէս անունը կը ցուցնէ, միջին աստիճանն է փոքր երկաթագրի եւ բոլորգրի, եւ ըստ այսմ կը ներկայացնէ զանազան ձեւեր. ասոր մէջ երբեմն փոքր-երկաթագիրն է որ տիրապետող կը հանգիստանայ, երբեմն բոլորգիրը. սակայն քանի ուշ, այնքան ի նպաստ երկրորդին: Անցման գրի մէջ է որ առաջին անգամ երեւան կու գայ եռաճիւղ աւելը: Ահա անցման գրերով պարուբենի երկու օրինակ.

Լ Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ Խ Ծ  
 Կ Տ Զ Դ Ծ Ս Յ Ն Ո Ղ Գ Լ Ռ Ս Վ  
 Ժ Բ Յ Ժ . ք

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ Խ Ծ Կ Տ Զ  
 Դ Ծ Ս Յ Ն Ո Ղ Գ Լ Ռ Ս Վ Ժ Բ Յ Ժ . ք

Այս գրի հնագոյն օրինակն ունինք 971 թուին գրուած ժողովածուի մը մէջ (260. Էջմիածնի, ՊՁ 2679, նմանահանութիւնը անս Շող., Թ. 36): Ասկէ յետոյ կու գան Դիզակ գաւառի Յոր գիւղի ճաշոցի մէկ կտորը՝ 1040 թուականէն (Շող., Թ. 48), Էջմիածնի. ՊՁ 1214, Մեկնութիւն Եսայեայ ձեռագիրը՝ 1118 թուականէն (Շող., Թ. 60), Էջմիածնի ՊՁ 1890, Եղիշէի ձեռագիրը՝ 1174 թուականէն (Շող., Թ. 62) եւն:

գ) ԲՆԼԻԿԻ, որ անցման այն խառնակ շրջանի վերջին հանգրուանն ու եզրակացութիւնն է. ասոր հնագոյն օրինակն ունինք 999 թուէն՝ Կոգովիա գրուած Պօղոսի Թղթոց Մեկնութեան յիշատակարանին մէջ (նմանահանութիւնը անս Այրարատ, էջ 498 եւ Ցաշեան, Ակնարկ, էջ 68): Ասկէ յետոյ կու գան Էջմիածնի ՊՁ 229, Աւետարանը՝ 1033 թուէն, որ Երկրորդ հնագոյն բոլորգիր ձեռագիրն է (ըսա Ցաշեան, Ակնարկ, էջ 83), Էջմիածնի ՊՁ 1330, Մեկնութիւն Գործոց Առաքելոց՝ 1076 թուականէն, Էջմիածնի ՊՁ 238, Աւետարան՝ 1111 թուէն, Ս. Դերսէսի Լամբրոնացւոյ յիշատակարանը՝ 1175 թուէն (նմանահանութիւնը անս Սիսուան, էջ 87) եւն: Այնուհետեւ արագութեամբ կը զարգանայ այս գիրը եւ կը ստանայ վայելուչ ու կանոնաւոր ձեւ, որ եւ այսօր ալ մեր տպագրութեան սովորական գիրն է: Ունի զանազան աստիճաններ, ամէնէն խոշորէն սկսեալ մինչեւ չափազանց մանրը, որոնք սակայն

առաջներու կողմէ բնաւ տարբերութիւն չեն ներկայացներ, եւ հետեւաբար աւելորդ կը գանենք անոնցմէ օրինակներ դնել հոս:

Ինչպէս որ փոքր-երկաթագիրը միջինին բնական հետեւութիւնն է, նոյնպէս եւ բոլոր-գիրը փոքր-երկաթագրի բնական հետեւութիւնն է: Երբ գրերը գրուին բաւական փոքր եւ սիւններու կապակցութիւնները գառնան ուղիղ գծեր, բնականաբար կը ստացուի բոլորգիրը: Օրինակ՝ Ո—Ո—Ո—Ո կամ Պ—Պ—Պ—պ եւն: Այն առերը՝ որոնք իրենց զարգացման ընթացքին մէջ տարբեր ձեւեր առած են, պիտի ուսուցնասիրենք աւելի յետոյ: Բայց բոլորգիրն այլ երբ արագ գրուի, հայերէն գրութեան ձախէն աջ ուղղութեան պատճառաւ տառերն ալ կը սկսին իրենց ուղղահայեաց գիրքը կորսնցնել եւ աւելի աջ հակուիլ: Միեւնոյն ժամանակ, տառերու փոքրութեան պատճառաւ, գծուար է այլ եւս տառասիւններու կապերը ճշաիւ հորիզոնական դիպքով գծել եւ ուղիղ անկիւններով սիւններուն կցել: Աւելցապէս արագ գրելու եւ ժամանակի խնայողութեան պահանջը կը ստիպէ տառասիւններն անջատ անջատ եւ անոնց կապերն ալ առանձին չգծել, այլ աշխատիլ ամբողջ տառը միասին մէկ շարժումով հանել: Այս պայմաններու միացումէն յառաջ կու գան նոսրագիրն ու շղագիրը<sup>1</sup>, որոնք ըստ իս ուրիշ

1 Բուն բառն է շղագիր: այսինքն շիւղով, բարակ ծպրով գրուած. աւելի յետոյ՝ թիւալ ստուգաբանութեամբ

բան չեն, եթէ ոչ միեւնոյն բոլորգորին նոր  
երանգները<sup>1</sup>, գրչածայրին հասաութենէն կամ  
բարակութենէն յառաջացած եւ մասամբ ալ,  
ինչպէս կը կարծեմ, գրիչը դէպի աջ դարձու-  
ցած թէ ուղիղ կերպով թուղթին վրայ հաս-  
տատած ըլլալէն:

Ըհաւաստի այս այբուբեններու շարքը

բոլորգոր

ա բ գ դ ե լ զ է ը թ ժ ի լ խ ծ կ հ ձ ղ

նօտագոր

ւ ֆ Գ Դ Ե Ղ Է Ը Թ Ժ Ի Լ Խ Ծ Կ Ծ Զ Զ Զ

շղագոր

ա բ գ դ ե լ զ է ը թ ժ ի լ խ ծ կ հ ձ ղ

Շղագորի հնագոյն օրինակն ունինք 1099  
թուէն: Այս թուին գրուած միջին-մեսրոբեան  
երկաթագիր Աւետարանի մը (Ձեռ. Էջմիածնի,  
N 288) յիշատակարանը գրուած է առնակ մը  
բոլորգորով՝ որ շղագորին կը մնանայ<sup>2</sup>: Աւելի

դարձուցեր են փշփշէր, իւր թէ գրերուն փշ գիրքին  
պատճառաւ: այսպէս կոչուած բոլոր:

1 Հ. Ձաշեան (Ակնարկ, էջ 75) նշանակեալ է ընդունել  
հակառակ ընդհանուր կարծիքին, որ շղագորը նօտէն լին-  
ալ բոլորգորէն: Նոյն իսկ էջ 193 կը յիշէ Օրինի 1314 թուի  
պարգեւագիրը՝ որ շղագոր ըլլալով հանդերձ կը ցուցնէ «որ  
բոլորգորէն ծագած է արագ ու դիւրամեւ գրելու: Ճիշդ ըն-  
կէն զարգացածն»:

2 Այս մասին առն Շողակաթ, էջ 184: գծրակառ-  
բար Գարեգին վրդ. նմանահասութիւն մը չէ դրած այս  
կարեւոր յիշատակարանէն:

յետոյ՝ 1159 թուէն, ունինք շղագրի պատառիկ մը (Ձեռ. Էջմիածնի, ՊՅ 2684, նմանահանուած թիւնը տես Շող., Թ. 63), 1193 թուականէն «իսկական շղագիր» գրութիւն մը՝ ըստ յիշատակութեան Գարեգին վարդապետի (Շող., էջ 195), 1201 թուականէն մանր յիշատակարան մը բոլորգորով խառն շղագիր (Ձեռ. Էջմիածնի, ՊՅ 3793, նմանահանութիւնը տես Շող., Թ. 70), 1211 թուականէն «անվարժ շղագրով» յիշատակութիւն մը (Ձեռ. Էջմիածնի, ՊՅ 2877, նմանահանութիւնը տես Շող., Թ. 71), 1241 թուականէն Սմբատ Գուճգասապլի մէկ յիշատակարանը (նմանահանութիւնը տես Սիսուան, էջ 71—72), 1244 թուէն նոյն անձին մէկ ուրիշ յիշատակարանը (նմանահանութիւնը տես Շող., Թ. 80) եւս։

Ասոնցմէ աւելի հին կ'երեւայ Էջմիածնի ՊՅ 2877 Աւետարանի մէկ յիշատակարանը՝ որ շղագրի պէս, Ժ—ԺԱ դարէն, ըստ Գարեգին վարդապետի (Շող., էջ 191), որուն նմանահանութիւնն ունի Շող., Թ. 46։ Այս թուականը ստոյգ ալ կ'երեւայ, բայց մենք վերապահութեամբ կը յիշենք, ըստ որում չենք ուզեր հիշուիլ այն ձեռագիրներու վրայ՝ որոնց թուականը կամ տարեթիւը վճռապէս ստոյգ չէ։ Բայց կրնանք տեսնել որ Կոգովտի 999 թուի ձեռագրին մէջ, որ ընդհանրապէս բոլորգիր է, շատ անգամ առուերը շղագրի երեւոյթ ունին։ Նոյնպէս 1034 թուին գրուած Աւետարանի մը յիշատակարանը՝ որ ընդհանրապէս բոլորգիր է,

շատ անշ ալ շղագրի կերպարանք ունի (նմանահանութիւնը տես Ակնարկ, էջ 189): Յիշենք դարձեալ Սարգիս Սանահնեցւոյն բոլորգիր յիշատակարանը 1041 թուէն (նմանահանութիւնը տես Շիրակ, էջ 50 եւ Ակնարկ, էջ 72), որուն մէջ խառն կը գտնենք նաեւ զուտ շղագիր տառեր: Վերջապէս 1057 թուականէն պարզ լուսանցագրութիւն մը «շեղագիր», տառերով ըստ Գարեգին վարդապետի, Էջմիածնի ՄՅ 3784 Աւետարանին մէջ (տես Շղակաթ, էջ 193, բայց առանց նմանահանութեան):

Նօտագիրը՝ իբրեւ նուազ կարեւոր, աւելի քիչ ուսումնասիրուած ըլլալով, չենք կրնար ասոր մասին աւելի հաստատ խօսիլ: Առհասարակ կը դրուի ԺԳ—ԺԴ գարերուն ծագած: Ամենահին յիշատակարանը կը կարծեմ 1291 թուին գրուած կաթողիկեայց Մեկնութեան յիշատակարան մը (նմանահանութիւնը տես Սիսական, էջ 131), որ թէեւ բոլորգիր է, բայց ունի բազմաթիւ նօտր ձեւեր: Այսպէս է նաեւ 1298 թուին գրուած Պիտոյից գրքի յիշատակարանը (նմանահանութիւնը տես Սիսական, էջ 133), որ թէեւ բոլորգիր է, բայց ունի բազմաթիւ նօտր ձեւեր: Ասկէ յետոյ կու գան Էջմիածնի ՄՅ 902, Ճառնաիրը՝ 1313 թուէն, Էջմիածնի ՄՅ 3793 ձեռագրի յիշատակարանը՝ 1346 թուէն (Շղ., Թ. 134), Էջմիածնի ՄՅ 1086, Մեկնութիւն Հինգ գրոցն Մովսէսի՝ 1420 թուականէն, Ագուլեաց Պատմ. Ս. Թէոդորոսի՝ 1436 թուականէն (նմանահանութիւնը



ները զուրկ են այս կարգի գրերէ: Աւելի ուշ  
կը ծաղկի այդ արուեստը: Մինչեւ հիմայ հրա-  
տարակուած նմոյշներէն յիշենք քանի մը հնա-  
գոյնները. 1. Երուսաղէմի ՄՅ 2555 Աւետա-  
րանի առաջին էջի կէտերով պճնուած վարդա-  
գրերը, Ը—Թ դարէն? նմանահանութիւնը Շո-  
ղակաթ, Թ. 33: — 2. Գրիգոր Տուտեորգւոյն  
ձեռագրին զարդագրերը, 1154 թուէն. նմա-  
նահանութիւնը տես Այրարատ, էջ 167: —  
3. Իջմիածնի ՄՅ 2589, Աւետարանի ծաղկա-  
գրերը, 1200 թուէն. նմանահանուած Շող.,  
Թ. 69: — 4. Իգնատիոս գրչի գեղեցիկ նկա-  
րազարդ Աւետարանի զարդագրերը, 1214  
թուէն. նմանահանութիւնը տես Այրարատ,  
էջ 356: — 5. Պայաս գրուած Մաշտոցի մեծ  
ձագագրերը, 1216 թուէն. նմանահանութիւնը  
տես Սիսուան, էջ 415: — 6. Անիի Ս. Գրիգոր  
եկեղեցւոյն ճակատի ծաղկագիր արձանագրու-  
թիւնը, ԺԳ. դարէն. նմանահանութիւնը տես  
Շողակաթ, Թ. 24: — 7. Երուսաղէմի  
ՄՅ 2563/2568 Աւետարանի գեղեցիկ թռչնա-  
գրերը, 1272 թուականէն, նմանահանութիւնը  
Շող., Թ. 91: — 8. Իջմիածնի ՄՅ 979,  
Թագաւորական ճաշոցի ձկնագրերը, 1288  
թուէն. նմանութիւնը Շող., Թ. 102: —  
9. Ամաղուի բուքթելաշէն եկեղեցւոյ գեղեցիկ  
նրբահիւս ծաղկագիր արձանագրութիւնը, ԺԴ.  
դարէն նմանահանութիւնը տես Շող., Թ. 24:

Նոր եւ նորագոյն ժամանակներս կազմուե-  
ցան բազմատեսակ զարդագրեր, որոնց թիւը



թեան համար. հնագոյն օրինակը կը գտնենք  
 Հոիփսիմէի արձանագրութեան մէջ՝ 618 թուա-  
 փանէն, ուր ունինք փակագիր ՄԻ, ՍԻ, ՄԷ վան-  
 կերը: Աւելի նոր ժամանակները փակագրու-  
 թիւնը այնքան մեծ ծաւալ կը ստանայ, որ շաա  
 անգամ ընթերցանութիւնը կը խանգարէ: Չե-  
 ոագիրներու մէջ սովորաբար շաա քիչ կը պա-  
 տահի. ամենասովորական ձեւն է փակագիր «Լ»,  
 որ մինչեւ հիմայ ալ կայ եւ կը շարունակէ իր  
 գոյութիւնը նոյն իսկ տպագրական արուեստի  
 մէջ: Վիեննայի Մխիթարեաններն եղան որ փա-  
 կագրութեան այս վերջին մնացորդն ալ քնջելով՝  
 սկսան գործածել անջառ եւ գրչութիւնը, որ  
 դժբախտաբար ամենուրեք ընդունելութիւն  
 գտած չէ գեռ:

Կը մնայ մեզ որոշել գրի իւրաքանչիւր  
 տեսակի ծագման ժամանակը: Ասոր համար վերը  
 դրինք մեր ունեցած աղբիւրներու հնագոյն  
 թուականները. այսպէս՝ գլխագիր երկաթագիրը  
 909 թուականէն, միջին-մետրոքեան երկաթա-  
 գիրը՝ 909 թուականէն, փոքր-երկաթագիրը՝  
 989 թուականէն, անցման գիրը՝ 971 թուա-  
 կանէն, բոլորգիրը 999 թուականէն, շղագիրը  
 գրեթէ նոյն թուականէն, նօտագիրը 1291  
 թուականէն: Սակայն փոքր ինչ գատողութիւն  
 բաւական է ցուցնելու թէ այս թուականները  
 սխալ են: Ամենէն առաջ մեզի հասած բոլոր  
 ձեռագիրները դեռ քննուած, ուսումնասիրուած,  
 մանաւանդ նմանահանութեամբ ծանօթացուած  
 չեն: Երկրորդ, ինչպէս Հ. Տաշեան (Ակնարկ,

էջ 55 եւն) մանրամասն կը պարզէ եւ մենք ալ յօգուածիս սկիզբը ականարկեցինք, նոյն իսկ ԼԹԷ մեզ հասած բոլոր ձեռագիրները ծանօթացուած ու քննուած ալ լինէին, դարձեալ բաւական չէին խնդիրը վերջնականապէս որոշելու: Արդարեւ անոնք ուրիշ բան չեն, եթէ ոչ պաշտօնական գրութիւններ, տեւական գործածութեան նպատակով գրուած գրքեր, հետեւաբար եւ ըստ կարելոյն խնամքով եւ լաւագոյնին ջանքով: Անշուշտ հեղինակներու սեւագրութիւնը, առանին հաշիւները եւն աւելի անփոյթ ու հասարակ ձեւով մը գրուած ըլլալով, ասոնք միայն կրնային գրերու զանազան տեսակներու ծագման հնագոյն թուականները որոշել: Պարզ ականարկ մը բաւական է ասիկա ապացուցանելու: Վերջ տեսանք զանազան ձեռագիրներ՝ որոնք գրուած են գլխագիր կամ միջին-մետրոքեան երկաթագրով, իսկ անոնց մէջ պատահած լուսանցագրութիւնները կամ յիշատակարանները աւելի հասարակ գրով (փոքր-երկաթագիր, անցման գիր, բոլորգիր կամ շղագիր): Արդ՝ ահա այս կարգի հասարակ առօրեայ գրուածներն են, որ կը պակսին մեզի եւ անշուշտ պիտի պակսին ի սպառ: Վերջապէս՝ նոյն իսկ իրերու բնական ընթացքը կը ցուցնէ որ այդ թուականները սխալ են, եթէ անցման գիրը փոքր-երկաթագրի եւ շղագիրը բոլորգրի աւելի մաշուած վիճակներն են, չեն կրնար անոնցմէ աւելի հին կամ նոյն իսկ ժամանակակից ըլլալ: Մինչդեռ վերի թուականներու համեմատ անցման գիրը փոքր-երկա-

Թագրէն 18 տարի աւելի հին է, իսկ շղագիրը բոլորգրին ժամանակակից:

Այս բոլորէն այն միայն կը հետեւի, որ յիշեալ թուականները իրականէն միշտ նոյն եւ պէտք է զանոնք գեռ աւելի ետ տանիլ, յատկապէս փոքր-երկաթագիրը 971 թուականէն առաջ եւ բոլորգիրը 999 թուականէն գեռ աւելի առաջ:

Իսնգիր է թէ երկաթագրի երկու տեսակներէն որն է աւելի հինը: Ընդհանրապէս ընդունուած է թէ բուն երկաթագիրը հնագոյնն է, որ եւ Ս. Մեսրոբի հնարած հայերէն գիրն է: Այսպէս կը ցուցնեն նաեւ վերը յիշած մեր թուականները, ինչքան ալ որ անոնք ուշ մնացած թուականներ ըլլան: Բայց Հ. Տաշեան իր Անարկին մէջ կասկած կը յայանէ ասոր վրայ. «Աւելի ենթադրութիւն մըն է տակաւին, կ'ըսէ էջ 63, այն կարծիքը՝ թէ Հայոց բուն հին տառերը կամ՝ ըսենք՝ Մեսրոպայ հնարածը միայն գլխագիր-երկաթագիրն ըլլայ»: Հ. Տաշեան իբր օրինակ կը դնէ ասորիները, որոնք ունին երկու տեսակ գիր, էստրանգելա եւ յակոբիկ. առաջինը կը համապատասխանէ մեր միջին-մեսրոբեան երկաթագրին, երկրորդը մեր բոլորգրին: Առաջ կը կարծուէր թէ այս երկու գրերը տարբեր ժամանակի ծնունդ էին եւ թէ վերջինը աւելի յետոյ հնարուած էր քան առաջինը: Բայց հիմայ հաստատուած է որ երկու տեսակ գրերն ալ միաժամանակ հաւասարապէս գործածական էին Ե. դարուն, միայն առաջինը

պաշտօնական գրութեանց մէջ, երկրորդը առանին յարաբերութեանց մէջ, Հ. Տաշեան կ'ենթադրէ որ Ս. Մեսրոբ ալ ասորիներու օրինակով կազմած ըլլայ երկու տեսակ գիր, նոյն իսկ արամադիր է բուն Մեսրոբի հնարած գիրը միջին-մեսրոբեանը համարելու (Ակնարկ, էջ 90, 125) եւ կը սպասէ որ օր մը բախտի անիւը մեր ձեռքն հասցնէ Անցման բոլորգիր դրութիւն մը եւ — Զ գարեբէն եւ Նօտրագրի նման գրութիւն մը՝ ասկէ քիչ մը աւելի ուշ ժամանակով (էջ 92)։ Առաջինին իբրեւ ապացոյց կը զնէ Թալինի Ուխտատուր վանկանի արձանագրութիւնը՝ 783 թուէն, միջին-մեսրոբեան երկաթագրով, ըստ նմանահանութեան քննարկների (Ակնարկ, էջ 60, 126), եւ բազմաթիւ կրկնագիրներ, որոնք գտնուած են արդէն հին ձեռագիրներու մէջ եւ հետեւաբար կ'ենթադրուին որ ըլլան շատ աւելի հին, նոյն իսկ Ե. դարէն։ Այս բոլորը միջին-մեսրոբեան երկաթագրով են։ Այսպէս Վիեննայի Միջին-մեսրոբեան Մատենագրանի կրկնագիր Ագաթանգեղոսը՝ որ ըստ Հ. Տաշեանի՝ Թ. դարէն շատ աւելի հին է (էջ 108), յաակապէս Շուխարգ գերմանացւոյն գտած հայերէն կրկնագիր Թերթերը՝ վրացերէն ձեռագրի մը մէջ՝ որ Ը — Թ դարէն համարուելով, հայ կրկնագիրն ալ բնականաբար Ե. դարէն ենթադրելի է (էջ 62, 114)։ Երկրորդ ենթադրութեան իբրեւ ապացոյց կը բերէ Եգիպտոսի մէջ գտնուած պապիրոսի կտոր մը, որ կը պարունակէ յունարէնի վարժութիւններ՝ հայերէն

տառերով: Այս պապիրոսին գրութեան թուականը յայտնի չէ: Բայց ըստ սրում յունարէն է գրուած, հետեւաբար պէտք է ենթադրել որ Արարներու արշաւանքէն առաջ ըլլայ, երբ յունարէնը տիրող լեզու էր Եգիպտոսի մէջ (էջ 97). ուստի գոնէ Է. դարու առաջին կէսէն: Արդ այս պապիրոսը գրուած է անցման գրով եւ կը կրէ բոլորգորի, շղագորի եւ մինչեւ իսկ նօտագորի հետքեր:

Ահա ասոնք են Հ. Տաշեանի ենթադրութիւնները եւ այս առթիւ մէջ բերած ապացոյցները:

Այն ժամանակ՝ երբ Հ. Տաշեան կը գրէր իր Ակնարկը, դժբախտաբար չկային դեռ հնագրական սյնպիսի տուեալներ, որոնցմով կարելի ըլլար ասկէ տարբեր ենթադրութիւն մը ընել: Հրատարակուած չէր նոյն իսկ Տեկորի արձանագրութիւնը (հիմայ արգէն փլած) եւ ուրիշ կարեւոր արձանագրութիւններ, որուն համար ցաւ կը յայտնէ Հ. Տաշեան (էջ 125): Բայց անկէ ասդին խնդիրը բաւական փոխուեցաւ՝ հրատարակութեամբ Շողակաթի, ուր Գարեգին վարդապետը ոչ միայն Տեկորի, այլ եւ տասնեակներով ուրիշ կարեւոր արձանագրութիւններ՝ լուսանկարչական նմանահանութեամբ լոյս ընծայեց: Հիմնուելով ասոնց եւ ուրիշ փաստերու վրայ, կրնանք հիմայ ըսել թէ երկու տեսակ երկաթագիրներէն հնագոյնը բուն մեսրոբեանն էր եւ թէ Ս. Մեսրոբի հնարած դրերը իրօք այս երկաթագրերն էին, որոնցմէ յետոյ

յառաջացաւ միջին-երկաթագիրը: Ասոր համար ահաւասիկ մեր պատճառաբանութիւնները.

(ւ) Բոլոր արձանագրութիւնները՝ սկսեալ հնագոյնէն, որ Ե. դարու վերջերէն կամ Զ. դարէն կը համարուի, մինչեւ Ժ. դար, առանց բացառութեան գլխագիր երկաթագիր են: Այն նմանահանութիւնները՝ որոնք կատարուած էին եւրոպացիներու ձեռքով ու պարզօրինակութեամբ եւ ոչ թէ լուսանկարով, եւ որոնք անվստահելի կը գտնէր Է. Ցաշեան (էջ 145), իրօք որ սխալ ելան. հմմտ. յատկապէս Թալինի Ուխտաառու վանականի 783 թուի արձանագրութեան նմանահանութիւնը, տպ. Այրարատ, էջ 139, հիմայ ալ Շող. Թ. 11: Այս բոլոր կեղծ նմանահանութիւնները միջին-մեսրոբեան երկաթագիր էին, իսկ իրականին մէջ գլխագիր են:

ը) Արձանագրութեան մէջ փորագրիչին համար անշուշտ շատ աւելի գիւրին էր ուղիղ գծեր քանդակել, քան թէ կլորակներ ու կամարներ, արդ՝ եթէ այս արձանագրութիւնները կլորակներով են եւ ոչ թէ ուղիղ գծերով, ուրեմն անշուշտ այն ժամանակուան սովորական գիրը բուն երկաթագիրն է:

զ) Գլխագիր է հայերէն առաջին ձեռագիրը, որ է Մասկուայի լազարեան ճեմարանի Աւետարանը: Եթէ ուրիշ հին ձեռագիրներ միջին-մեսրոբեան կը կոչուին, անուան սխալ է եւ հետեւաբար կարօտ ստուգութեան:

դ) Չանազան հին ձեռագիրներու մէջ բնա-

գիրը գլխագիր երկաթագիր է, իսկ յիշատակարանը, նախարանը եւ լուսանցագրութիւնները միջին-մեսորեան երկաթագիր են. ասոնց թուումը տեսանք քիչ մը վերը՝ միջին-մեսորեան երկաթագրի հնագոյն օրինակները յիշատակելու ժամանակ: Արդ՝ գիտենք որ հին գրերը՝ իբրեւ աւելի պատուաւոր՝ գործածուած կ'ըլլան բնագիրներու մէջ, իսկ նորագոյն գրերը՝ իբրեւ աւելի շնթացիկ բան՝ կը գործածուին նուազ կարեւոր տեղեր, ինչպէս յիշատակարանները եւն:

ե) Աւելի ուշ գրուած միջին-մեսորեան երկաթագիր ձեւագիրներու մէջ՝ հատուածներու սկիզբը իբր գլխատառ գրուած տառերը բուն երկաթագիր են եւ ոչ միջին-մեսորեան: Արդ՝ գիտենք որ հին գրերը նորագոյններուն համար իբր գլխագիր կը գործածուին (տես Ակնարկ, էջ 44). եւ եթէ այդպէս է, ուրեմն բուն երկաթագիրն է հինը եւ ոչ միջին մեսորեանը:

զ) Արկնագրերու խնդիրը քիչ մը կասկածելի կը գտնեմ: Պէտք չէ ենթադրել թէ կրկնագիր մը վըայի գրութենէն անպատճառ չոր -- ելի հին է: Արնայ անկէ քիչ մը միայն հին կամ մինչեւ իսկ ժամանակակից ալ ըլլալ: Եթէ Պիկերոն կը գանգատէր որ ուրիշներ իր գրածները կ'աւրէին եւ վըան ուրիշ բան կը գրէին (Ակնարկ, էջ 111), ըսել է թէ աւրողը աւրածին ժամանակակից էր: Չեւագիր, մը անգործածելի դառնալու համար պէտք չէ որ անպատճառ ժամանակով շատ հին եղած ըլլայ. զոնա-

զան պատահարներ կրնան զայն անգործածելի վիճակի հասցնել, ինչպէս հրդեհը, ջուրի մէջ իյնալ, մկնակերութիւն եւն: Այսօր իսկ փորձով կրնանք ասնել որ հին ձեռագիր մը աւելի լաւ պահուած ըլլայ քան աւելի նոր մը: Օրինակի համար՝ Վիննայի Մխիթարեանց Մատենադարանի, Թ. 7, Յայտմաւորքը, որ 1439 թուականին գրուած է, հանգամանքով է «լաւ, գրութիւնն անեղծ ու մաքուր» (Տաշեան, Յուշակ, էջ 24): Մինչդեռ Թ. 10, Յայտմաւորքը՝ որ Ժ.Ջ. դարէն է, «հանգամանք գէշ, ամբողջին սկիզբն ու վերջը քայքայած ու թզլծերուն եզերքները մաշած, կտրուած եւ նաեւ պատռւած» (անգ. էջ 55): Ասկէ զատ մէկը կրնար իր առջեւն ունեցած ձեռագիրը իբր հում նիւթ ծախելու ստիպուած ըլլալ եւ գնորդ մը ջնջելով վրայի դրութիւնը՝ նոր մը գրելու վերջապէս ձեռագրի մը բովանդակութիւնն ալ կրնար մէկուն համար կարեւորութենէ զուրկ ըլլալ եւ ասիկա ջնջելով զայն՝ ուրիշ աւելի կարեւոր համարուած բան մը գրելու: Այսպէս կրնայ ըլլալ յատկապէս Շուիտարդի վրացերէն ձեռագրին կրկնագիրը: Վրացին հաւանաբար բան մը հասկցած չէր իր ձեռքն անցած հայերէն գրութենէն, որ եւ ջնջելով՝ վրացերէնը գրեր էր: Երնայ այսպէս ըլլալ նաեւ Վիննայի կրկնագիր Ագաթանգեղոսը: Պատմական գրուածք մը այն ժամանակի աշխարհահայեացքով նուազ սիրուած բան մըն էր քան կրօնական գրութիւն մը եւ ասիկա կրնայ պատճառ գարձած ըլլալ

ընդհուր Ագաթանգեղոսը եւ տեղը գրելու Ան-  
դրէի Մեկնութիւն Յայանութեանն Յովհաննու:  
Չննք ուղեր ըսել թէ այս բոլորը անպատճառ  
այսպէս է, բայց հաւանականութենէ զուրկ չէ:  
հետեւաբար եւ ոչ բոլորովին վստահելի:

է) Կայ եւ իրերու արամաբանական ըն-  
թացքը: Ամէնքն ալ կ'ընդունին որ բոլորգիրը  
միջին-մեսրոբեան գրէն միայն կրնայ յառաջա-  
ցած ըլլալ եւ կը պատկանի գրութեան միեւնոյն  
ոճին: Արդ՝ եթէ մեր գրերու զարգացման ըն-  
թացքն է միջին-մեսրոբեան եւ յետոյ բոլորգիր,  
այսինքն ուղղագիծէն ուղղագիծ, հապա ուր-  
պիաի դրուի գլխագիրը: Բոլորգիրէն յետոյ չէ,  
որովհետեւ պատմականօրէն գիտենք որ անկէ-  
աւելի հին է: Չննք կրնար գնել երկուքին մէջ-  
տեղը, որովհետեւ զարգացման ընթացքին կը  
հակասէ. ուղղագիծ, յետոյ կամարաձեւ, յետոյ  
դարձեալ ուղղագիծ: Կը մնայ միայն մէկ տեղ  
մը եւ այդ տեղն է նախ քան միջինը:

ը) Վերջապէս տառերու ծագման պատ-  
մութիւնն ալ կը պահանջէ որ բուն երկաթա-  
գիրն ըլլայ Ս. Մեսրոբի հնարածը: Վերը, Ա  
գրին ծագման վրայ խօսած ժամանակ՝ տեսանք  
հայ տառերու բերանաբացութեան օրէնքը. —  
այն տառերը՝ որոնք յունարէնի մէջ կընդ  
փա-  
կուածքներ ունին, հայերէնի մէջ սովորաբար կը  
բացուին. այսպէս  $A > Ա$ ,  $B > Բ$ ,  $\Theta > Թ$ ,  
 $O > Ո$ ,  $P > Ր$ , այսպէս նաեւ սաստնեան  
 $\text{Յ} > \text{Հ}$ ,  $\text{Տ} > \text{Տ}$ : Արդ՝ եթէ միջին-մեսրոբեան ուղ-  
ղագիծ ձեւերն ըլլային Մեսրոբեան գրերը:

բերանաբացութեան օրէնքը երեւան չի պիտի գար եւ յիշեալ տառերը այդ ձեւերը չպիտի ունենային, այլ Ա ձեւին տեղ պիտի ունենայինք Ա, Բ ձեւին տեղ Ե, Ո ձեւին տեղ Օ, Բ ձեւին տեղ Բ, Տ ձեւին տեղ Մ. Իսկ եթէ այսպէս չէ եւ տառերուն բերանը բացուած է, ասիկա կը ցուցնէ որ նախապէս տառագծերը կլորակ կամ կամարաձեւ էին եւ գրչի թոյլ կամ անփոյթ շարժումէն յառաջացաւ կամարաձեւ գծերու ոչ-ամբողջական փակումը, որ յետոյ հասաւ բերանաբացութեան:

Այս բոլոր քննութիւններուն նպատակն էր ցուցնել թէ Ս. Մեսրոբի հնարած գիրը բուն երկաթագիրն է, որմէ յառաջացած է յետոյ միջին-մեսրոբեան երկաթագիրը: Բայց ասիկա բաւական չէ որոշելու միջին-մեսրոբեան երկաթագրի, ինչպէս եւ միւս տեսակի գրերու ծագման թուականը եւ չ. Տաշեանի ենթադրութիւնները կրնան ընդհանրապէս ուղիղ ըլլալ, ք հաստատութիւն ասոնց՝ կրնանք գնել հետեւեալ փաստերը. — Տեկորի 964 թուի խաչքարին վրայ (Շող., Թ. 15) կան քանի մը բոլորգիր տառեր. յաւակապէս եւ, ւ տառերը զուտ բոլորգիր են. կայ նաեւ յ ձեւը՝ որ այս թուականին համար մեծ նորութիւն է. Թալինի Ուխտատուր վանականի 783 թուի արձանագրութիւնը (Շող., Թ. 11) թէեւ ընդհանրապէս բուն երկաթագիր, բայց ունի քանի մը համադրին-երկաթագիր եւ Բուրգի տառեր: Այսպէս՝ արձանագրութեան նոյն իսկ առաջին տառը՝

Ա, զուտ միջին է: Յաջորդ տողերուն մէջ կայ առ նուազն հինգ անգամ՝ բոլորգիր Խ. հինգերորդ տողին վերջը՝ Խ բոլորգիր է. եօթներորդ տողին մէջ Կ բոլորգիր է: Այս օրինակները կը ցուցնեն որ արգէն 783 թուին ոչ միայն միջինը, այլ եւ բոլորգիրն ալ կար: Դեռ աւելին կայ: Անիի Միջնարեւոյտի եկեղեցւոյն 622 թուի արձանագրութիւնը՝ որ բուն երկաթագիր է, երկրորդ տողին մէջ ունի Ա տառը ճշտիւ այս ձեւով (Շ). եւ չորրորդ տողին մէջ Կ տառը՝ այս ձեւով (Կ). առաջինը շեղատառ – տառի եւ երկրորդը գրեթէ A թուանշանի երեւոյթն ունի: Բայց երկուքն ալ ոչ միայն բոլորգիր, այլ եւ մինչեւ իսկ շղագիր կրնան համարուիլ: Ասով կը հասնինք այնպիսի թուականի մը՝ որ Հ. Տաշեանի ցուցադրած պապիրոսին թուականէն աւելի հին է եւ զայն նոր փաստով մը կը վաւերացնէ: Բայց նկատելի է որ եթէ 622 թուականին արգէն գտանք բոլորգրի հետքեր, ըսել է թէ միջին-երկաթագիրը, որ բոլորգրի մայրն է, ծագումով գեռ աւելի հին պիտի ըլլայ: Այսպէսով կը մօտենանք արգէն Զ դարուն, որ Հ. Տաշեանի ալ փնտռած թուականն է:

Վերջին կէտ մ'ալ կ'որեւոր է: Գրերու զանազան տեսակները իրարու կը կապուին անցման շրջանով մը. այսպէս՝ միջինէն դէպի բոլորգիրը կայ անցման երկաթագիրը եւ յետոյ անցման բոլորգիրը, բոլորգրի եւ շղագրի միջեւ կայ հին շղագիրը, եւ նօտրագրի ու շղագրի միջեւ կայ նօտրագիր շղագրաձեւ (Տաշեան, Ցուցակ,

էջ 1046), իսկ բուն երկաթագրի եւ միջին երկաթագրի միջեւ որեւէ բան չկայ: Ա՛ննթագրեմ թէ հոս ալ անցման շրջան մը եղած ըլլայ: որուն յատկանիշը հետեւեալն է. — տառասիւններուն միացման անկիւնները կ'ըլլային կամարաձեւ, բայց կամարը երկու կողմէն բարձրանալէ յետոյ կը սկսէր ուղիղ գիծը: Այս ձեւի երկաթագիրը կրնանք կոչել անցման միջին: Անցման միջինի օրինակներ ունինք Ուխտաառուր վանականի արձանագրութեան մէջ (783 թուէն, Շող. Թ. 11). հմմտ. յատկապէս Ա եւ Ս տառերը: Նոյնպէս Թ եւ Ն տառերը՝ Տեկորի 964 թուի արձանագրութեան ճակատը (Շող. Թ. 15): Արդի տպագրութեան մէջ անցման միջինի ձեւով ունինք տեսակ մը այբուբեն, որմէ ահա օրինակ մը.

## ՎԳՈՐԵԹ

Վերը § Դ, Գրերու ձեւը եւ անոնց ծագումը որոշելու ժամանակ տեսանք ինչ ինչ ձեւական տարբերութիւններ յոյն, սասանեան եւ ասորի նախատիպերու եւ անոնցմէ ծագած հայերէն տառերու միջեւ: Խնդիր է թէ այս փոքրիկ տարբերութիւնները նախատիպէն հայերէն ձեւերուն անցնելու համար՝ ժամանակի ընթացքին մէջ ձեւացած են թէ արդէն սկիզբէն կային: Ուրիշ խօսքով համապատասխան գրերու մէջ ձեւի այլազանութիւնը Գեորգի իր ձեռքով մացուց թէ յետոյ կամաց կամաց անզգաւար յառաջ եկաւ Ե գարու սկիզբէն մին.

չեւ Զ դար, այսինքն այն ժամանակը՝ երբ հայերէն տառերը մեզ ծանօթ են:

Ասոր իբր պատասխան մենք մատնանիշ կ'ընենք ուրիշ ազգերու օրինակը: Ինչ ըրին յոյները, երբ փոխ առին փիւնիկեան այբուբենը: Ինչ ըրին լատինները եւ սլաւները, երբ փոխ առին յունական այբուբենը: Մտցուցին անոնց մէջ կամաւոր փոփոխութիւններ, թէ փոփոխութիւններն աւելի յետոյ ինքնաբերաբար յառաջացան: Հնագրութիւնը, այբուբեններու պատմութիւնը եւ առողջ դատողութիւնը վերջինիս կողմն են միայն: Ասոր իբր ապացոյց կը ծառայեն նաեւ հայերէն այբուբենի երկու հիմնական օրէնքները, որ նկատեցինք վերը, այն է բերանաբացութեան եւ վայրահակութեան օրէնքները: Այս օրէնքները կը ցուցնեն փոփոխութեանց սխաթմաստիկ նոյնութիւն եւ ասով միեւնոյն ժամանակ մատնանիշ կ'ընեն, որ փոփոխութիւնները ոչ թէ Ս. Մեսրոբի քմահաճութեան, այլ բնաշրջութեան, ժամանակի եւ հայ գրիչներու ոգւոյն արդիւնքն են:

Գրերու տեսակները ընդհանրապէս որոշելէ յետոյ՝ անցնինք խօսիլ այն ձեւափոխութեանց վրայ, որ մեր տառերը ստացեր են երկաթագրէն յետոյ մինչեւ այսօր, իրենց զարգացման ընթացքին մէջ:

Վերը տեսանք հայ տառերու բերանաբացութեան եւ վայրահակութեան օրէնքները: Վերջինս բոլորգրի մէջ ուրիշ ձեւ կը ստանայ.

ժրջին թեւերը եւ ստորին պոչերը ուղիղ դիրք կ'ընդունին. իսկ վերի թեւերը կը մնան վայրահակ. հմմտ. Բ > Բ, Գ > Գ, Դ > Դ, Զ > Զ, Մ > Մ, Ռ > Ռ, Վ > Վ, Բ > Բ, Ի > Ի, Բ > Բ եւն. Նօտագրի, ինչպէս եւ շղագրի մէջ ասիկա աւելի կը զարգանայ. Այս տառերը՝ որոնք վերէն դէպի աջ երկարած թեւ մը կամ վարէն գէպի աջ կամ դէպի ձախ երկարած պոչ մը ունին, առարկայ կը դառնան զանազան ոլորապտոյտ խաղերու. Այսպէս են Յ (վերի թեւը), յ, ց (դէպի ձախ երկարած պոչը), Լ, Լ, Լ, Լ, Լ, Լ, Լ տառերը (դէպի աջ երկարած պոչը) եւ բոլորգիր և տառին այն տեսակը՝ որ տակէն պոչ մը ունի (տես վարը). իսկ այն տառերը՝ որոնց թեւը ձախ կողմէն կամ մէջանդէն է, ազատ են այս խաղերէն. այսպէս են Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Ը, Թ, Ժ, Ի, Լ, Լ, Լ տառերը. — տառը բոլորգրի մէջ պոչէն զըկուած ըլլալով՝ Բ, Գ, Դ տառերուն նման ազատ է նոյնպէս խաղերէ. Բայց նոյն իսկ այնպիսի տառեր՝ որոնք պոչ չունին, բոլորգրի մէջ դիւրութեան համար տակէն փոքրիկ կեռ մը կը ստանան. ինչպէս՝ Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Ը, Թ, Ժ, Ի, Լ, Լ, Լ եւն. Այս երեւոյթը Ժ.Գ. դարէն կը սկսի. այսպէս 1190 թուին գրուած յիշատակարանի մը մէջ (Շող., Թ. 65), թէեւ տառերը շատ հաստ, բայց այդ կեռերը չկան. Նոյնպէս 1201 թուին գրուած յիշատակարանի մը մէջ (Շող., Թ. 70) հազիւ թէ կը սկսի. իսկ 1244, 1262, 1266 թուերուն գրուած գրութեանց մէջ (Շող., Թ. 80, 83, 84) յայտնի կերպով կայ եւ

դեռ աւելի կը զարգանայ նօտրագիր գրութեան մէջ:

Սովորականէն աւելի խազմողոցներու օրինակ ըլլայ Սմբատ սպարապետի յիշատակարանը Աւետարանի մը մէջ՝ 1244 թուէն (Շող., Թ. 80) եւ մանաւանդ Էջմիածնի ՄՅ 2848 ձեռագիր Աւետարանին յիշատակարանը (Շող., Թ. 108). հմմտ. յատկապէս երրորդ տողը՝ Զ տառին տարօրինակ պոչը, վեցերորդ տողը՝ Ժ տառին գրկախառնութիւնը չորս տառ յետոյ գտնուած Զին հետ, եւ ութերորդ տողին մէջ գտնուած Ժ տառին թեւը: Այս տառը առհասարակ ամէնէն աւելի ենթակայ է խազմողոցներու. երբ պատահի էջին առաջին կամ վերջին տողին վրայ, գրիչը անոր թեւը կը բռնէ եւ այնքան կ'ոլորէ ու կ'ոլորէ, որ երբեմն էջին չորս լուսանցքներն ալ կը պատէ՝ տեսակ մը մանկամիտ հաճոյքով:

Ասոնք արտասովոր բաներ են հայ գրչութեան մէջ եւ ինչպէս կը կարծեմ, տեսակ մը հետեւողութիւն պարսկական յիշատակագրութեան, ուր այնքան սիրելի է տառերու թեւերն ու պոչերը երկարելով զանազան խաղեր ու զարդեր յօրինելը:

Արգի ձեռագրին մէջ տառերու պոչերը ըստ անձնական ճաշակի կը տարբերին եւ մինչեւ 8 ձեւ կը ստանան.

1. Պարզ հորիզոնական գիծ մը, ինչպէս բոլորգիր Լ, Շ, Զ եւայլն ձեւերուն մէջ: Ասոր քիչ մը աւելի ազատ ու երկար նետուած ձեւը

արդէն 999 թուէն, տես Կոգովտի յիշատակարանին մէջ :

2. Նոյնպիսի հորիզոնական գիծ մը վար կախուած ծայրով, օրինակ՝ ինչպէս գլխատառ Լ, Է, Վ տառերուն պոչը :

3. Նոյնը դարձեալ, միայն վար կախուած պոչը դէպի ձախ ուղորուելով վեր դարձած եւ նոյն հորիզոնական գծէն վեր բարձրացած՝ երթալ միանալու համար յաջորդ տառին. գրեթէ այս ձեւով՝ Ե :

4. Վեր ծռուած կորուծիւն մը, գրեթէ այն՝ որ կը գտնենք նոսրագիր Լ, Է, Ը տառերուն աակ, միայն դեռ աւելի զարգացած :

5. Փոխանակ հորիզոնականի, պոչին ալեծածան ձեւ մը տրուած, ինչպէս Ղ, Լ տառերուն աակ :

6. Նոյն ալեծածան ձեւով, բայց ձախէն կլորակ մ'ալ ստանալով, ինչպէս Ջ տառը :

7. Պոչը դէպի ներս ոլորած՝ ճիշտ ինչպէս Շ, Ծ :

8. Նոյնը, միայն թէ պոչը ներս ոլորելէ յետոյ՝ տառին ձախակողմեան սիւնէն դուրս երկարած :

Կարելի է ասոնցմէ դուրս դեռ աւելի քմահաճ ձեւերու ալ պատահիլ. ինչպէս՝ 7-րդ ձեւին պէս պոչը ներս ոլորելէ յետոյ՝ նորէն հոն երկրորդ ոլորք մը շինել. կամ 8-րդ ձեւին պէս պոչը սիւնէն դուրս երկարելէ յետոյ՝ նորէն երկրորդ ոլորք մը շինել եւ վերջապէս՝ պոչը գծելու հա-

մար դէպի ձախ ոլորուելէ յետոյ՝ սուր անկիւն մը ձեւացնելով յանկարծ դէպի աջ ոլորուիլ, ինչպէս Չ ձեւին մէջ:

Գրերու զարգացման պատմութեան համար շատ կարեւոր է Բ-ը, Ե-ը, Բ-ը, Ե-ը, Գ-ի տեսքերը որ երկաթագրի մէջ ամէն տառ հաւասար անօժիւթեամբ է. բացառութիւն կը կաղմեն միայն փ եւ ք տառերը, որոնցմէ առաջինը տողէն աւելի վեր ու աւելի վար կ'երկարի, իսկ երկրորդը տողէն աւելի վար կ'իջնէ: Ակսեալ անցման շրջանէն՝ տառերը կը սկսին իրենց հաւասարութիւնը փոխանցնել եւ ոմանք տողէն վեր, ոմանք ալ տողէն վար կ'երկարին: Անհաւասարութիւնը կը զարգանայ բոլորգրի մէջ եւ իր կատարելութեան կը հասնի նօսրագրի եւ շղաղրի մէջ: Տողը կը թափուի երեք մասի. վերին, միջին եւ ստորին: Տառերէն ոմանք կը գրուին միայն միջին մասին մէջ. այսպէս են՝ ա, ո, ռ, ս, լ, օ (փղ-իւն Գ-Բ-Ե), ոմանք վերին եւ միջին մասին մէջ. ինչպէս՝ ե, ժ, ծ, հ, ճ, մ, ն (վերնիւն Գ-Բ-Ե). ոմանք միջին եւ ստորին մասին մէջ. ինչպէս՝ բ, գ, դ, զ, լ, շ, յ, չ, պ, ջ, բ, ց (ստորնիւն Գ-Բ-Ե). ոմանք ալ ամբողջ երեք մասերուն մէջ. ինչպէս՝ թ, ի, խ, կ, վ, փ, փ (Բ-Ե-Վ-Ի-Ն Գ-Բ-Ե). — բայց ամէնուն համար ալ միջին մասը անխուսափելի է եւ այնպիսի տառաձեւ մը՝ որ միայն տողին վերին կամ ստորին մասին մէջ կանգնէր (ինչպէս երրայեցերէն և կամ արաբերէն), չկայ հայերէնի մէջ:

Թէ ինչ պայմաններու տակ յառաջ եկած է բարձրութեան օրէնքը, կարելի է նկատել հետեւեալ պարագաները.

1. Այն տառերը՝ որոնք իրենց ստորին մասին վրայ պոչ մը կամ ոլորք մը ունին, կը դառնան ստորնական տառեր. ինչպէս՝ Զ, Ը, Լ, Ղ, Յ, Շ, 2, 8. այսպէս է նաեւ Զ, որ իր գլխի պատճառով բոլորգրի մէջ տողէն նաեւ վեր կը կանգնի, բայց արդի շղագրի մէջ լիովին ստորնական է:

2. Այն տառերը՝ որոնք իրենց միջին մասին վրայ թեւ մը ունին, կը դառնան ամբողջական տառեր. ինչպէս՝ Խ, Է, Ի, Վ, Թ, Փ, Ֆ. — այս կարգին կը պատկանի նաեւ Կ տառը. — Ժ տառը թէեւ միջին թեւ ունի, բայց յէն տարբերուելու համար դարձեր է վերնական:

3. Այն տառերը՝ որոնք իրենց վերի մասին վրայ թեւ մը ունին, կը դառնան վերնական. ինչպէս՝ Ն, Մ, Ծ, Ծ, Զ (վերջինս հին բոլորգրի մէջ իր պոչին պատճառաւ կը ստանայ նաեւ ստորնական ձեւ). — 2 տառը իր գլխին պատճառաւ բոլորգրին մէջ դարձեր է վերնական, իսկ յետոյ տակը պոչ մը զարգանալով՝ նօտրի ու շղագրի մէջ դարձեր է նաեւ ստորնական, որով եղեր է ամբողջական:

4. Այն տառերը՝ որոնք պոչէ կամ թեւէ զուրկ ըլլալով կը ներկայացնեն հաւասար սիւններ, կը դառնան միջնական. ինչպէս՝ Ո, Ս, Օ = — Հոս կը պատկանին նաեւ Ա, Ռ, Ի տառերը. առաջին երկուքը թէեւ պոչ ունին, բայց ըստ

որում հիմնական մասերը երկու հաւասար սիւներն են, եղած են միջնական։ Ա տառը բոլորգորի մէջ պոչէն զրկուած ըլլալով՝ պատճառ մը աւելի ունէր միջնական դառնալու։ Վերջապէս Ի տարբերուելու համար Ի էն՝ դրուած է այս կարգին մէջ։

5. Մէկ ամբողջ եւ վերը կէս սիւնէ բաղկացած տառերը գարձած են ստորնական. ինչպէս՝ Բ, Պ. — այս կարգին կը պատկանին նաեւ Բ, Գ, Դ, Բ տառերը, որոնք սակայն բացի մէկ եւ կէս սիւնէն, նաեւ միջին մասին վրայ թեւ մը ունին. այս պատճառաւ ալ ստացած են երկու ձեւ. բոլորգորի մէջ Բ, Գ, Բ ստորնական են, իսկ շղագորի մէջ ամբողջական. միայն Դ տառին թեւը նօտրի եւ շղագորի մէջ վեր բարձրանալով՝ այլ եւս ամբողջական գարձած չէ։

6. Տ տառը ամբողջ սիւնին վրայ վերէն ու վարէն ունենալով կէս կէս սիւն, հաւասարակշռութեամբ մը վերածուած է միջնականի։

Արդի ձեռագրին համար շատ կարեւոր է նաեւ գրերու միացման օրէնքը։ Հին ժամանակ տառերուն զանազան մասերը անշուշտ՝ անջատ անջատ կը գծէին. օրինակ՝ այ գրերու համար կամ կը գծէին երեք ուղղահայեաց սիւնները եւ յետոյ տակէն հորիզոնական գծով մը կը միացնէին, եւ կամ իրարու քով կը գծէին երկու եւ յետոյ ուղղահայեաց սիւն մը՝ իբր ա տառին երրորդ ատամը։ Այս ձեւը յարմար էր բոլորգորին, ինչպէս նաեւ նօտրին։ Արագ գրելու պահանջը կը ստիպէր սակայն իւրաքանչիւր

տառը որքան կարելի է մէկ շարժումով դուրս բերել, Արդէն շղագիր գրութիւնը այս կերպով յառաջացաւ: Բայց դեռ շղագրի մէջ ալ բոլոր տառերը մէկ շարժումով չէին գծուեր: Օրինակի համար Սմբատ Գունդստապլի յիշատակարանին մէջ (Շող., Թ. 80, 1244 Թուէն) ա, մ, յ, շ, ո, ս տառերը անշուշտ մէկ գրչով են. բայց բ երեք գրչով է: Արդի ձեռագրին մէջ ոչ միայն առանձին տառերը, այլ եւ նոյն իսկ ամբողջ բառը մէկ գրչով դուրս բերելու պահանջ կը ծագի եւ այդ պահանջը մեծ մասամբ կը բաւարարուի մազագծերով: Տառէ տառ կապակցութիւնը ըլլալով շատ պարզ, առանձին քննութեան պէտք չկայ: Բայց միեւնոյն տառին առանձին մասերուն կապակցութիւնը քիչ մը աւելի բարդ է: Ասիկա կը ստանայ մինչեւ եօթը ձեւ:

1. Հին բոլորգրի կամ նօսարի ձեւով՝ տառին առանձին մասերը կը գծուին զատ զատ եւ իւրաքանչիւրը կը կպի տառին առաջին մեծ սիւնին, օրինակ՝ ք կը հանուի երեք շարժումով, է, ր կը հանուին երկու շարժումով:

2. Այս պարագային՝ կրնան նոյն առանձին մասերը բոլորովին չկպիլ մեծ սիւնին եւ անկէ քիչ մը հեռու անջատ մնալ:

3. Մեծ սիւնը վերէն վար գծերէ յետոյ՝ գրիչը ճիշտ նոյնին վրայէն նորէն վեր կը բարձրանայ եւ կ'անցնի դժեշ տառին առանձին մասերը. այս պարագային՝ տառերը առհասարակ մէկ շարժումով կը հանուին. ինչպէս՝ է, ր, լ:

բայց երկու թեւ ունեցող տառերը երկու շար-  
ժումով կը հանուին: Գրութեան այս ձեւը  
տարբեր է առաջին ձեւէն, բայց արդիւնքը բո-  
լորովին նոյն է:

4. Մեծ սիւնը վերէն վար գծելէ յետոյ՝  
գրիչը փոխանակ նորէն նոյն գծով բարձրանա-  
լու, աջ քովէն զուգահեռաբար բարակ գծով  
մը վեր կը բարձրանայ եւ կը գծէ տառին միւս  
մասերը: Արդի գրութեան ամենասովորական  
ձեւը այս է:

5. Այս պարագային՝ քովի զուգահեռա-  
կան գիծը կրնայ ծուռ բարձրանալ եւ վարը  
լայն ու վերը նեղ առպրակ մը ձեւացնելով՝  
վերջապէս հասնիլ ու կպիլ մեծ սիւնին (Ճշտիւ)  
ինչպէս Փրանս. ձեռագիր / եւ հոն կազմել  
տառին միւս մասերը սովորական ձեւով:

6. Բայց կարելի է նաեւ փոխանակ սովորա-  
կան ձեւով կազմելու անջատ մասը, սիւնին հաս-  
նելէ յետոյ նորէն ետ գառնալ եւ փոքրիկ ոլորք  
մը կազմել սիւնին վրայ:

7. Աւերջապէս զուգահեռական գիծը փո-  
խանակ աջէն գծելու՝ կարելի է ձախ կողմէն,  
այն է գրին ետեւէն գծել եւ յետոյ սիւնը ճեղ-  
քելով աջ անցնիլ եւ հոս գծել տառին միւս  
մասերը, մօտաւորապէս Փրանս. ձեռագիր :  
տառին ձեւով:

Այս եօթը ձեւերը բոլորն ալ ամէն տառի  
յաատուկ չեն, այլ անոնց միայն՝ որ իրենց աջ  
կողմէն թեւ կամ անջատ մաս ունին. այսպէս են՝  
բ, ք, ե, լ, ի, է, տ, ը, զ. իսկ Վ տառը վերի

կողմէն. միւսները իրենց ձեռն պատճառաւ մասամբ կամ բոլորովին ազատ են:

Այս ընդհանուր օրէնքներէն յետոյ կ'անցնինք խօսիչ իւրաքանչիւր առո՛րի ձեւափոխութեանց վրայ:

ա, ա, ըււ.

Երկաթագրի մէջ, ինչպէս գիտենք, այս առուր կը բաղկանար երկու հաւասար սիւններէ՝ մէջտեղէն մահիկով մը՝ որ աջ սիւնին ծայրէն դուրս եւ դէպի վեր կը բարձրանար: Այսքան բարդ ձեւ մը չէր կրնար երկար դիմանալ եւ արագագորութեան համար պէտք է որ կրճատուէր եւ աւելի պարզուէր: Հախ՝ դիւրութեան համար, մահիկին ստորին ծայրը փոխանակ դէպի վեր բարձրանալու՝ անփոյթ կերպով նետուիլ սկսաւ, որով ձեւացաւ պոչ մը եւ այս պոչն ալ վայրահակութեան օրէնքով դէպի վար կախուիլ սկսաւ: Պոչէն յետոյ անցան մահիկին: Ասիկա քանի մը ձեւով կարելի էր պարզել: Հախ՝ կարելի էր մահիկը մինչեւ վար՝ սիւնին ծայրը չիջնցնել, այլ պահել միայն սիւնին գլուխը. այսպէսով յառաջացաւ մահիկին տեղ ձախ ծռուած փոքրիկ կարթ մը՝ որ հաստատուած էր աջ սիւնին վերի ծայրը եւ անոր հետ միախառնուելով՝ գրեթէ խոշոր ազլաթարցի ձեւ մը առաւ: Միեւնոյն ժամանակ պոչը փոխանակ առանձին գծուելու՝ դիւրութեան համար միացաւ ձախ սիւնին: Այսպէսով յառաջացաւ տեսակ մը երկճիւղ Ա, պոչով եւ աջ սիւնին

Ժայրը կեռ, ինչպէս կը գտնենք գործածուած  
Էջմիածնի փղոսկրեայ աւետարանին մէջ, 989  
թուէն. հմմտ. Շող., Թ. 44 նմանահանուած  
պատառիկը, ուր Ա տառը կը գտնենք միշտ այս  
ձեւով (23 անգամ): Այս տեսակ Աը գարձաւ  
յետոյ գլխատառ՝ բոլորգիր գրութեան մէջ եւ  
իրր այն՝ կը գրուէր աւելի մեծ եւ պոչը աւելի  
երկար ու ալեծածան. հմմտ. Շող., Թ. 103  
նմանահանութեան մէջ՝ 1288 թուէն: Այնու-  
հետեւ այն մնացորդ կեռն ալ կըճատուելով՝  
մահիկը անհետ քնջուեցաւ եւ յառաջացաւ  
պարզ երկճիւղ տառ մը՝ ինչպէս կը գտնենք Ա  
երկաթագիր ձեւին մէջ: Ասոր աւելի պարզ  
ձեւը՝ գրեթէ իսր շղատառ ւս, տես 1190  
թուակնով յիշատակարանի մը մէջ (Շող.,  
Թ. 65):

Մահիկի պարզման երկրորդ ձեւն էր՝ ձախ  
սիւնը գծելէ յետոյ անցնիլ աջ սիւնին եւ ասոր  
կիսակլորակ ձեւ մը տալով՝ շարունակել դէպի  
վար եւ երկու սիւներուն մէջտեղէն ցած իջնել՝  
իրր պոչ: Այսպիսի ձեւով Ա տես Շող., Թ. 95  
նմանահանութեան մէջ՝ 1278 թուէն: Ասոր  
աւելի պարզ ձեւը կը գտնենք Շող., Թ. 86՝  
1267 թուէն, ուր Ա գրեթէ ֆրանս. ձեռագիր  
60 ձեւն ունի:

Մահիկի պարզման երրորդ ձեւն էր աչա-  
կողմեան սիւնէն բոլորովին անջատել զայն եւ  
փոխանակ կլորակ ձեւ մը տալով՝ որ անշուշտ  
աւելի գոյաւար էր, իբրեւ առանձին կարճ եւ  
ուզիղ սիւն մը դնել երկու երկար սիւներուն

միջեւ, Այսպիսի եռաճիւղ եւ պոչով Աի օրինակներ տես 1413 թուականով յիշատակարանի մը մէջ (նմանահանութիւնը Այրարատ, էջ 163) եւ Պիշպէքի գերեզմանատան մէջ տապանաքարին վրայ՝ 1323 թուէն (նմանահանութիւնը տես Անարկ, էջ 152), Այս պարագային Ա-ի երրորդ աջակողմեան սիւնը կրնայ ծայրը ծուռ ըլլալ, բայց կրնայ նաեւ բոլորովին ուղիղ ըլլալ, Երկու ձեւերն ալ միաժամանակ կան Պիշպէքի տապանաքարին վրայ, բայց բոլորն ալ ունին իրենց պոչը եւ միջին սիւնն ալ կարճ է:

Այնուհետեւ պոչը կը կրճատուի, միջին սիւնը կը սկսի երկարիլ եւ համաչափութեան օրէնքով հասնիլ միւս երկուքին բարձրութեան. բայց այնու ամենայնիւ դեռ աջակողմեան երրորդ սիւնին ծայրը աջ կամ ձախ դարձած ուղիղ գծիկ մը կայ: Այս տեսակ Ա կը գտնենք Ս. Ներսէս Լամբրոնացւոյն Աւետարանին մէջ՝ 1193 թուէն (նմանահանութիւնը տես Սիսուան, էջ 84), Վերջապէս աջակողմեան սիւնին ծայրի գծիկն ալ կը կտրուի եւ կը ձեւանայ անպոչ եռատամ Կ, որուն աւելի հին ձեւն է պոչաւոր եռատամ Կ: Վերջինիս օրինակն ունինք արդէն 964 թուէն՝ Տեկորի խաչքարի մը վրայ (նմանահանութիւնը տես Շող., թ. 15), իսկ անպոչ եռատամ Կի հնագոյն օրինակն ունինք 971 թուէն (տես Շող., թ. 36), Այս ձեւն է՝ որ դարձաւ բոլորգործ սովորական ձեւը եւ ասկէ ալ անցաւ նօսրին ու շղագրին:

Աւելի յետոյ՝ համառօտութեան համար՝ այս տառը կրճատուելով դարձաւ միասին կամ միաճիւղ (այսպէս). հմմտ. Գրիգոր Յաղմանեցւոյ յիշատակարանին մէջ՝ 1314 թուէն (Սիսական, էջ 137)։ Այս ձեւը շատ գործածական դարձաւ յետին բոլորգիր գրութեանց մէջ եւ անցաւ նաեւ մեր ապագրական արուեստին. բայց յետոյ խափանուեցաւ եւ հիմայ ի սպառ գոյութիւն չունի։

Արդի ձեռագրին մէջ ա կը մնայ իր եռաճիւղ ձեւով. միայն ոմանք տեսակ մը գեղեցկութիւն տալու համար անոր՝ առաջին ատամը միւս երկուքէն աւելի երկար կը շինեն, ոմանք այդ նոյն ատամին սկիզբը կեռ մըն ալ կ'աւելցնեն, ոմանք իւրաքանչիւր ատամը կ'որակով մը կը ձեւացնեն (որով տառը ֆրանսերէն երեք յաջորդական ձեռագիր օ-ի ձեւը կը ստանայ, իբր օօօ), եւ վերջապէս ոմանք ալ շատ արագ գրութեան մէջ երեք ատամի տեղ հորիզոնական գծիկ մը միայն կը դնեն։

Իւ այսպէս, յն. ա, որ մեր Ա ձեւին մայրն է, հասած կ'ըլլայ ուղղահայեաց կամ հորիզոնական պարզ գծիկի մը։

բ, բ, թ.

Երկաթագրէն յետոյ այս տառը դարձաւ ստորնական։ Բայց որովհետեւ մէկ կարճ սիւնի վրայ տառին թէ՛ գլուխը եւ թէ՛ թեւը տեղաւորելու տեղ չկար, ուստի կամաց կամաց սիւնը

երկարեցաւ եւ վերջապէս բ դարձաւ ամբողջական: Երկու ձեւերու մրցումը կը սկսի Ժ դարէն. Վոգովտի 999 թուի յիշատակարանին մէջ (Այրարաւ, էջ 498) 13 բերէն գոնէ երեքը ամբողջական են. Սմրատ Գունդստապլի ստորագրութեան մէջ (1244 թ., տե՛ս Շող., թ. 80) բ ամբողջական է. Վոստանդնի դաշնագրին մէջ (1271 թուէն, նմանահանութիւնը տե՛ս Սիսուան, էջ 210) հինգէն երկուքը ամբողջական են: Բայց այնու ամենայնիւ լոյրագրի մէջ տիրող ձեւ կը մնայ ստորնականը, ինչպէս ընդունուած է նաեւ արդի տպագրութեան մէջ. իսկ ամբողջականը աւելի սովորական կը դառնայ նոսրի եւ շղագրի մէջ. թէեւ հոս ալ գեռ մրցումը կը շարունակուի: Այսպէս 1323 թուէն շղագիր պայմանագրի մը մէջ (Շող., թ. 126) ութը բ կայ, բոլորն ալ ստորնական. 1596 թուին Զէյթուն գտուած Չեռնագրութեան գրքին մէջ (Սիսուան, էջ 185) կայ 4 բ. որոնք տողէն մասամբ միայն վեր կը բարձրանան:

Արդի ձեռագրին մէջ տառս լիովին ամբողջական է եւ միացման օրէնքներուն համեմատ կրնայ զանազան ձեւեր ստանալ: Հոս խնդիր կը ծագի նաեւ տառին գլխին մասին, որ կրնայ մնալ անջատ, կամ կազմել փաթթուած գլուխ մը կամ հորիզոնական գիծ մը եւ կամ վեր բարձրացած թեւ մը: Սակայն կրնայ նաեւ միանալ միջին թեւին հետ եւ ասոր համար երկու ձեւ կայ՝ նախ կրնանք գլուխը շինել թ գրին գլխին նման կլոր ձեւով եւ իսկոյն տակէն կցել միջին

Թեւր. համա. շղագիր թ: Այս պարագային երբեմն հիմնական սիւնը կրնայ ստորնական գրի մեծութեամբ ըլլալ, իսկ գլուխը բարձր ու մեծ, միջին թեւն ալ դէպի վար կախուած, որով բաառը գէշ գրուած 13 թուանշանին մօտ ձեւ մը կը սաանայ (1 եւ 3 մտղագծով միացած): Երկրորդ՝ կրնանք գլխի փոխարէն տառին երկու զուգահեռական սիւններուն միջեւ ոլորք մը շինել (միացման 6<sup>րդ</sup> ձեւով) եւ սիւնէն գուրս ելած գծիկը տառին թեւը համարել: Այս պարագային բ կը սաանայ յն. Թ գրին նման ձեւ մը եւ նման ձեւով կազմուած շ տառէն միայն բարձրութեամբ կը աարբերի:

գ, գ, գ.

Երկաթագրի մէջ այս գրին թեւը գլխին դուրս երկարած մասը կը կազմէ եւ անոր հետ մէկ գծի վրայ կը գտնուի: Երկաթագրէն յետոյ, Ժ. դարուն, կ'ուղուի թեւը բաժնել գլխէն եւ անկէ աւելի վար իջեցնել. այսպէս Տեկորի 964 թուի խաչքարի արձանագրութեան մէջ (Հող., Թ. 15) կը գտնենք տեսակ մը գ, որ բաղկացած է կլոր գլխէ մը, գրեթէ ջ տառին գլխին պէս, որ կանգնած է ուղղահայեաց սիւնի մը վրայ, որուն տակ ալ նօարագիր գ-ին նման կեռ մը կայ: Թեւը կը գտնուի կլոր գլխէն քիչ մը վար: Աւելի յետոյ թեւը աւելի վար կ'իջնէ: Այսպէս՝ Վոգովտի 999 թուի ձեռագրին մէջ (Այրա-րաւ, էջ 498) գրիչը գ բառը կը գրէ հե-

տեւեալ ձեւով. նախ կը գծէ տառին քառ-  
կուսի գլուխը, յետոյ աջակողմեան սիւնը վար  
կ'երկարէ եւ արդի շղագրին յ եւ յ տառերուն  
նման դէպի ձախ թեքուելով՝ յանկարծ դէպի  
աջ թեւ մը կը նետէ: Այսպէսով տառը գրեթէ  
արդի շղագիր ց-ին ձեւը կը ստանայ, միայն գոց  
գլխով, չետուած թեւը կրնայ կարճ մնալ,  
կրնայ նաեւ քիչ մը երկար դուրս գալ, բայց  
յամենայն դէպս տառին տակէն է եւ ոչ թէ  
քովէն: Այս պարագային՝ տառը զ գրէն տար-  
րերելու համար՝ գլխէն վար դանուած սիւնը  
շատ կարճ կ'առնուի: Վերջապէս թեւը բոլորո-  
վին վար կ'իջնէ եւ ճշգիւ բոլորգիր զ ձեւը կը  
ստանայ, ինչպէս ունինք Սմբատ Գունդստապլի  
ստորագրութեան մէջ (1241 թուէն, Սիսուան,  
էջ 71), միայն այնքան ձեւով եւ սիւնն ալ  
քիչ մը ձախ թեքուած եւ ոչ ուղիղ: Նոյնպէս  
է նաեւ Կոստանդինի դաշնագիրին մէջ (Սիսուան,  
էջ 210), 1271 թուէն:

Գ. տառին այն ձեւի գրչութիւնը սակայն  
յաջողութիւն չի գտներ եւ շուտով կը խափա-  
նուի, անշուշտ որովհետեւ գիւրութեամբ պիտի  
շփոթուէր զ տառին հետ:

Այնուհետեւ գրչութիւնը նոր ուղղու-  
թիւն մը կը բռնէ. նախ տառին կարճ սիւնը մեծ  
սիւնին միացնող վերին կապը կը ջնջուի եւ տառը  
կը գառնայ այսպէս՝ Կ: Գրիչները այս ձեւը  
դուրս կը բերէին անշուշտ երկու շարժումով.  
նախ կը գծէին ւ տառին նման ձեւ մը եւ յետոյ  
մէջտեղէն մեծ սիւնը կ'իջեցնէին: Այս ձեւով

կը գանձէր տառս Սարգիս Սեւանեցւոյն ձեռագորին մէջ՝ 1041 թուէն (Շիրակ, էջ 50), ուր ք տառը արդի շղագիր դ տառէն տարբերութիւն չունի, իսկ այն ժամանակ երկուքը անով միայն կը զանազանէին իրարմէ, որ գիմի գլուխը բաց էր՝ ինչպէս ս, իսկ գայի գլուխը գոց էր՝ ինչպէս ու

Բայց այս ձեւով դ գրելու ժամանակ, քնական էր որ գրիչը մէկ կողմէն կարճացներ և ձեւին ուղղահայեաց մասը, իսկ միւս կողմէն միջին երկար սիւնին սկիզբը վար նայող կեռ մ'ալ ձեւացներ։ Այսպէս կը գանձէր տառը Տուսէորդւոյն ձեռագորին մէջ՝ 1154 թուէն (Այրարատ, էջ 167), Լամբրոնացւոյն ձեռագորին մէջ՝ 1195 թուէն (Սիսուան, էջ 88), Հեթում պատմիչի բժշկարանին մէջ՝ 1294 թուէն (Սիսուան, էջ 337)։ Այնուհետեւ միջին սիւնը աւելի վերէն կ'առնուի եւ կեռն ալ կ'ընդարձակուի. հմմտ. 1306 թուով յիշատակարանին մէջ՝ Շող. Թ. 120։

Այս ժամանակ տառը երկու ձեւ կը ստանայ. կամ կեռը կը կցուի ձախակողմեան կարճ սիւնին, որով կը յառաջանայ նօտր Գ, եւ կամ գրիչները ամբողջ տառը մէկ շարժումով հանել ուզելով՝ և մասը գծելէ յետոյ՝ գրչին ծայրը չվերցուցած՝ դէպի ձախ կը դառնան եւ նոյն հորիզոնական գծին վրայէն կամ աւելի յաճախ տակէն ոլորը մը շինելով՝ ձախակողմեան սիւնին ներսի քովէն վեր կը բարձրանան, եւ տառին գլուխը ձեւացնելով՝ հորիզոնական գծին մէջ-

տեղէն ուղիղ վար կ'իջնեն: Այս ձեւով կը գտնենք տառս Հեթում Թագաւորի ստորագրութեան մէջ՝ 1252 թուէն (Ոխուան, էջ 402):

Արգի ձեռագրին մէջ տառս շատ ածականներ ունի. Արեւմտահայոց մէջ տարածուած ձեւն է Հեթում Թագաւորի ստորագրութեան ձեւը, այն տարբերութեամբ որ Հեթումինը ստորնական է, իսկ արգի ձեւը ամբողջական, ինչպէս եղած է նաեւ նօտորը, որովհետեւ տառին կարճ սիւնը, գլուխը եւ տակի ոլորքը բոլորը միասին կարճ տեղ մը ամփոփել գծուար էր: Այս պարագային կարելի է նաեւ մեծ սիւնը հորիզոնական գծին ոչ թէ մէջտեղէն, այլ բոլորովին ծայրէն կամ նոյն իսկ անկէ քչիկ մը հեռուէն իջնել, որով և մասը ամբողջապէս կը մնայ մեծ սիւնին ձախակողմը: Մեր մանկութեան ժամանակ այս ածականին մէկ ուրիշ ձեւն ալ կար, որ հիմայ խափանուած է. նախ կը գծէին և մասը, յետոյ անոր մէջտեղէն՝ վերէն վար կ'իջնէին աճկ. 7 թուանշանին նման գիծ մը (ուղղադիր), որով տառը երկու շարժումով կ'ելլէր: Կարելի էր նոյնը նաեւ մէկ շարժումով հանել, այն է նախորդին նման և մասին ծայրը տակէն առնուած ոլորքով հանել վեր եւ միացնել գլխին:

Կովկասահայոց մէջ տարածուած է կլոր գլխով, այն է շղատառ զ ձեւը, որ կրնայ զանազան վարիաններ ունենալ: Նախ՝ քովի թեւը միութեան օրէնքներուն համաձայն կրնայ մինչեւ 7 ձեւ ստանալ. երկրորդ՝ կլոր գլուխը կրնայ ձախէն զարդի համար նոր ոլորք մը ստանալ,

կամ իր մէջ երկու անգամ փաթթուիլ, ամբողջովին փակ կամ կիսափակ ըլլալ, մեծ սիւնին բոլորովին կպած կամ դէպի ձախ հեռացած մնալ եւն: Անփոյթ գրութեան մէջ կրնայ մինչեւ անգամ հասնիլ ձեռագիր ք տառի ձեւին, միայն տողէն վար գրուած:

Դ, Դ, Դ.

Տառիս զարգացման ընթացքը նոյն է դատարին հետ. հոս ալ նախ կ'ուզուի թեւը բաժնել գլխէն եւ անկէ աւելի վար իջեցնել, կոգովտի ձեռագրին մէջ արգէն բոլորովին վար իջած է եւ սիւնին երկար կամ կարճ բռնուելուն համեմատ՝ կը նմանի բոլորգիր ղ կամ ո. տառերուն: Այսպէս 25<sup>րդ</sup> տողը գտնուած դատար ամենեւին տարբերութիւն չունի 26<sup>րդ</sup> տողի ո. էն: Նոյնպէս է նաեւ կոստանդնի 1271 թուի դաշնագրին մէջ (Սիսուան, էջ 210), ուր ունինք վեց անգամ դ. եւ ճշդիւ ինչպէս ք ունի ալեծածան պոչ, նոյնպէս եւ դ ունի այդ ձեւով պոչ: Հոս տառս ստացած է արգի ձեռագրին ղ կամ շ առին ձեւը, բայց վախ չկար շփոթուելու անոնց հետ, որովհետեւ այն ժամանակ ղ ի պոչը կեռ էր եւ ոչ ալեծածան, իսկ շ ամբողջական տառ էր, մինչդեռ դ ստորնական էր:

Դ տառի այս ձեւն ալ յաջողութիւն չի գտներ եւ շուտով կը խափանուի գ-ի նման, անշուշտ այն պատճառով, որ դիւրութեամբ պիտի շփոթուէր վերոյիշեալ տառերուն հետ:

Տառին գլուխն ալ որ նախապէս վերէն գոց եւ վարէն բաց ձեւ մը ունէր, կը սկսի հետզհետէ կերպարանափոխուիլ: Սմբատ Սպարապետի յիշատակութեան մէջ (1241 թուէն, Սիսուան, էջ 72) այդ գլուխը գրեթէ ∞ ձեւն ունի. հոս ամբողջ տառը կը նմանի նօտագիր է գրին, միայն ստորնական եւ գլխին քովէն նոյն ∞ նշանը: Կոստանդինի դաշնագիրին մէջ կը ստանայ 7 ձեւը եւ աւելի յաճախ՝ 2 գրին նման կլորակ գլուխ մը:

Նօտագրին մէջ տառին թեւը ընդհակառակը վեր կը բարձրանայ եւ կը հաւասարուի գլխին հետ, որով կը յառաջանայ Դ: Այս ձեւը կ'անցնի նաեւ արդի ձեռագրին, որուն համար ալ տառը կը մնայ ստորնական: Սակայն հոս հակառակ բոլորգրին, տառին գլուխը կը բացուի եւ կը ստանայ ս ձեւը, փոխանակ ո, ինչպէս էր բոլորգրին մէջ: Ոմանք ասոր առաջին ճիւղը զարդի համար օղակի մը կը վերածեն. տառը կրնայ միացման բոլոր ձեւերն, ստանալ. արագ գրութեան մէջ նոյն իսկ բոլորգիր Ճ գրին ձեւը կը ստանայ, միայն աւելի երկար թեւով եւ ստորնական:

Ե, Ե, Է.

Ժ. դարէն ձգտում կը սկսի տառին տակի կորութիւնը կրճատելու. այսպէս Տեկորի 964 թուի խաչքարին մէջ (Շող., Թ. 15) թէեւ կայ կանոնաւոր Ե բոլորգիր ձեւը, բայց կայ նաեւ նօտագիր է գրին նման ձեւ մը: Կոգովտի 999

Թուի ձեռագրին մէջ գարձած է է. նոյն իսկ ստորին գիծը տակէն կէտ մ'ալ ունի, որով է տառէն բնաւ չի տարբերիր նոյն ձեռագրին մէջ: Այսպէս եւ յետոյ ուրիշ շատ մը բոլորգիր ձեռագիրներու մէջ: Երկրորդի 1028 Թուի արձանագրութեան մէջ (Շող., Թ. 19) կը գտնենք թէ է եւ թէ նօտրանման է ձեւը. բայց բոլորին ալ թեւը դէպի վեր շեղուած է եւ ոչ թէ ուղիղ: Վերջինիս մէջ ե ունի նաեւ տարօրինակ ձեւ մը. տառին մարմինը ստացած է ե ձեւը, որուն վրայ կ'աւելնայ նաեւ նոյն թեք թեւը: Այլուր այսպիսի ե չեմ տեսած, եւ որովհետեւ Երեւոյթի նոյն արձանագրութեան մէջ ալ միակն է եւ տարբեր միւսներէն, ուստի կրնայ փորագրութեան սխալ համարուիլ:

Նստրագրի մէջ յաղթանակած է կրճատ ձեւով է, որ եւ գարձեր է ամբողջական տառ միջին թեւին պատճառաւ. թէեւ բոլորգրին մէջ վերնական էր: Արդի ձեռագրին մէջ ամբողջը մէկ շարժումով հանելու համար տակի կեռը մազագծով միացած է թեւին եւ միացման բոլոր ձեւերուն ալ կ'ենթարկուի: Այս ձեւը սովորական է արեւմտահայոց մէջ: Կովկասի մէջ շատեր բոլորգիր ե ձեւով կը գրեն:

Չ. Ն. Պ.

Միջին-երկաթագրի մէջ տառս 2 ձեւն ունէր, որուն հետ նոյն է նաեւ փոքր-երկաթագիրը, ինչպէս նաեւ անցման ձեւը: Բոլորգրին անցնելու համար տառը աւելի պարզուելով՝

ըստ օրինի պոչը բոլորովին ուղիղ գծի մը կը վերածուի, իսկ կլորակը պոչին միացնող կապը քիչ մը աւելի ներս կը քաշուի, որ ըսել է թէ նոյնպէս ուղիղ դիրք մը կը սկսի ստանալ։ Այս ժամանակ տառը գրեթէ Զ թուանշանին ձեւն ունի, ինչպէս կը գտնենք Երեւոյքի 1028 թուի արձանագրութեան մէջ (ՇՊՂ. Թ. 19), Ստեփանոս Օրբելեանի յիշատակարանին մէջ՝ 1290 թուէն (Սիսական, էջ 95) եւն։ Գլխաւոր գոգուարութիւնը ասոր մէջ՝ տառին գլուխը գեղեցիկ կլոր ձեւով հանելու մէջ էր. ուստի ոմանք երկուքի կը վերածեն զայն եւ նախ կը գծեն ձախակողմեան կէսը եւ յետոյ՝ անկէ քիչ մը անջատ՝ աջակողմեան կէսը, որ մինչեւ վար կ'իջնէ. երրորդ շարժումով կը գծեն երկար ւ ձեւը, որ տառին պոչը կը կազմէ։ Այս ձեւով ունինք տառս Էջմիածնի ՊՅ 1214 ձեռագրին մէջ՝ 1118 թուէն (ՇՊՂ. Թ. 60), Բացառիկ ձեւով է Տեկորի 964 թուի խաչքարին վրայ (ՇՊՂ. Թ. 15). հոս տառին գլուխը 3 ձեւն ունի, որուն ծայրէն կախուած է Լ ձեւը։ Աւելի վերջը՝ կլոր գլուխը կը վերածուի քառակուսիի, ինչպէս կը պահանջէր բոլորգրի ոճը։ Էջմիածնի ՊՅ 2374 աւետարանին մէջ (989 թուէն, ՇՊՂ. Թ. 44) ասիկա դեռ կիսով միայն կատարուած է, իսկ Կոգովտի ձեռագրին մէջ (999 թուէն, Այրարատ, էջ 498) ամբողջապէս քառակուսի գլուխը, պոչին միացնող մասը՝ դեռ բաւական թեք է, որ աւելի յետոյ բոլորովին պիտի ուղղուի եւ պիտի դառնայ զ։

Բոլորգիր զ ձեւը կազմուելէ յետոյ, դիւ-  
րութեան համար տառի գլխին վերի գիծը կը  
սկսի ջնջուիլ, որով կը ստացուի զ ձեւը: Այս-  
պէս կը գտնենք Հեթում պատմիչի բժշկարանին  
մէջ՝ 1294 թուէն (Սիսուան, էջ 337), Էջ-  
միածնի ՊՅ 206 ձեռագրին մէջ՝ 1318 թուէն  
(Շող., Թ. 124), Խաչիկ վարդապետի պատա-  
ռիկին մէջ՝ 1334 թուէն (Շող., Թ. 132) եւն.  
Ասիկա է որ կու տայ շղագիր ձեւը:

Արդի ձեռագիրը տարբերութիւն չունի  
շղագրէն եւ կը ներկայացնէ զանազան վարի-  
անտներ՝ համաձայն պոչի այն ձեւափոխութեանց՝  
որ նկարագրեցինք վերը: Այս տառը առհասա-  
րակ շատ կը շփոթուի չ տառին հետ, որմէ ու-  
նեցած տարբերութիւնն այն է՝ որ զ տառին  
գլուխը կազմուած է երկու ճիւղէ, իսկ չ ունի  
միայն ձախակողմեան մէկ ճիւղ<sup>1</sup>:

է, է, է.

Ինչպէս երկաթագրի, նոյնպէս եւ բոլորգրի  
մէջ տառս երկու ձեւ ունի ուղիղ պոչով  
եւ վայրահակ: Առաջինին իբր օրինակ ըլլայ  
Կոզովտի 999 թուի ձեռագիրը, ուր ե եւ է չեն  
զանազանուիր իրարմէ (երկուքն ալ ունենալով  
է ձեւը): Այսպէս եւ շատ ուրիշ բոլորգիր ձե-

<sup>1</sup> Որչափ լաւ կ'ըլլար եթէ սովորութիւն դարձնէինք  
ձեռագրին մէջ զ եւ չ իրարմէ աւելի լաւ տարբերելու հա-  
մար՝ առաջինին պոչը կլոր շինել, երկրորդինը վար կախուած:  
Տողերս գրողը մանկութենէն սովորութիւն ըրած է զ եւ չ  
առաւերը այսպէս գրելու:

ռագիւններու մէջ, Բայց նոյն իսկ այս նմանու-  
թեան պատճառաւ այս ձեւը այնուհետեւ կը  
խափանուի եւ տիրող կը հանդիսանայ վայրա-  
հակ ձեւը, որ կ'անցնի նաեւ նօտրին, շղագրին  
եւ արդի ձեռագրին: Հոս տառը պոչին պատճա-  
ռաւ քանի մը ձեւեր կրնայ ստանալ, յատկա-  
պէս երկրորդ, երրորդ, հինգերորդ եւ վեցերորդ  
ձեւերը: Նոյնպէս թեւը կրնայ տառի մարմինն  
կպած եւ կամ անկէ անջատ մնալ:

Ը, Ը, Ը.

Երկաթագրէն մինչեւ շղագիր՝ տառս ա-  
ռանձին ձեւափոխութիւն չի ներկայացներ: Արդի  
ձեռագրին մէջ պոչի օրէնքին համաձայն կրնայ  
բոլոր ձեւերն ստանալ. ասոնց մէջ ամէնէն պարզն  
է 4րդ ձեւը, որ կը գտնենք արդէն 1271 թուին՝  
Կոստանդինի դաշնագրին մէջ (Սիսուան, էջ 210),  
Հետաքրքրական է երրորդ ձեւը, ուր մէկ շար-  
ժումով ամբողջ տառը պոչով ու թեւով կը  
հանուի եւ որ նման է գոթական ձեռագիր  
ու տառին:

Թ, Թ, Թ.

Հոս ալ կողմէ երկաթագրէն մինչեւ շղա-  
գիր տարբերութիւն չկայ: Կոգովտի 999 թուի  
ձեռագրին մէջ թ տառը 13 անգամ գրուած  
է առանց ոլորքի, պարզ թեւով մը եւ երկու  
սիւները հաւասար, այնպէս որ տառը շղագիր  
ու տառին ձեւն առած է, միայն թեւը քիչ  
մը ներս խրուած: Երեւոյքի արձանագրութեան

մէջ (1028 թուէն, Շող., Թ. 19) տառին թեւը փոխանակ աջ կողմէն դուրս երկարելու՝ դա-  
դաթէն վեր կը բարձրանայ եւ գէպի աջ կը  
թեքուի: Այնուհետեւ կը սկսի տառին բարձ-  
րութիւնը փոխուիլ. Սարգիս Սեւանեցւոյն ձե-  
ռագրին մէջ (1041 թուէն, Շիրակ, էջ 50)  
բոլորովին ստորնական է, բայց Տուսէորդւոյն  
ձեռագրին մէջ (1154 թուէն անցման երկա-  
թագիր, Այրարատ, էջ 167) հինգ անգամ  
գործածուած է տառս եւ չորս անգամը միւս  
տառերուն հետ հաւասար դիրքով, միայն մէկ  
անգամ տողէն քիչ մը վար կ'երկարի: Լեւոն  
Թագաւորի ստորագրութեան մէջ (1200 թիւ,  
Սիսուան 388) տառը արդէն ամբողջական է,  
ինչպէս եւ Էջմիածնի ՊՅ 3793 ձեռագրի յիշա-  
տակարանին մէջ՝ 1201 թուէն (Շող., Թ. 70)  
եւ ՊՅ 2877 ձեռագրի յիշատակարանին մէջ՝  
1211 թուէն (Շող., Թ. 71):

Հետեւում Թագաւորի դրամին վրայ առած  
է տարօրինակ ձեւ մը, այն է լատիներէն P,  
շրջանակին աջ կողմը փոքրիկ գիծ մը կցուած  
(տես Սիսուան, էջ 232):

Արդի ձեռագրին մէջ միացման օրէնքին  
համաձայն կը ստանայ զանազան ձեւեր:

Ժ, Ժ, Ժ.

Երկաթագրի մէջ տառս երկու ձեւ ունէր,  
պարզ եւ գլուխը հորիզոնական գծով: Այս եր-  
կու ձեւերն ալ կը շարունակուին բոլորգրի մէջ:

Փղոսկրեայ աւետարանին մէջ՝ 989 թուէն (Հող.,  
թ. 44) կը գտնենք երկրորդ ձեւով եւ թեւն  
ալ գրեթէ վայրահակ. Սարգիս Սեւանեցւոյն  
ձեռագրին մէջ (1041 թիւ, Հիրակ, էջ 50)  
նոյն հորիզոնական գծին վրայ կոթ մ'ալ կ'աւել-  
նայ եւ տառին գլուխը կը դառնայ ւ. ասկէ  
զատ՝ տառը ամբողջապէս տողէն վար կը գրուի:  
Այս ձեւին տակ տառը ճշտիւ ք տառին նման է  
եւ անկէ կը տարբերի անով՝ որ ծ զուրկ է  
գլխէն. այսինքն արգի վիճակին ճշտիւ հակա-  
ռակը: Աւելի յետոյ նոյն հորիզոնական գիծը կի-  
սակղոր ձեւ մը կը ստանայ, իրր այսպէս Ժ. այս  
ձեւով կը գտնենք տառս Կոստանդնի 1271 թուի  
դաշնագրին մէջ (Սիսուան, էջ 210): Կիսակղորը  
կը դառնայ սուր անկիւն, ինչպէս կը գտնենք  
Միշտ Գայլեձորի Պիաոյից գրքին մէջ՝ 1278  
թուէն (Սիսական, էջ 133): Հոս երկու ձեւերը  
կը միանան եւ այլ եւս կոթով ժ չի տեսնուիր:

Արգի ձեռագրին մէջ ալ ժ նոյն ձեւով է.  
տակայն կարելի է նաեւ թեւը փոխանակ սիւնէն  
դուրս դէպի աջ երկարելու, տառին ծոցին մէջ  
փաթթել:

ի, է, ի.

Երկաթագրէն մինչեւ հիմայ նոյն ոճով կը  
ձեւայ. Կոգովտի 999 թուի ձեռագրին մէջ շատ  
անգամ տողէն վար եզած մասը կրճատուելով՝  
տառս առած է ի ձեւը. բայց ասիկա անշուշտ  
միայն արագագրութեան արդիւնք է, որովհետեւ  
նոյն տեղը կը գտնենք նաեւ սովորական ի ձեւով:

Արդի ձեռագրին մէջ տառս միջին թեւին պատ-  
ճառաւ գարձած է ամբողջական եւ միացման  
օրէնքին համեմատ կը ստանայ բոլոր ձեւերը:

Լ՝ Լ՝ Լ՝

Երկաթագրէն մինչեւ հիմայ նոյն ոճով է.  
պոչին պատճառաւ գարձած է ստորեական. Կո-  
գովտի 999 թուի ձեռագրին մէջ (Այրարատ,  
էջ 498) ուղղահայեաց սիւնը յաճախ կոր ձեւ  
մը ունի, գրեթէ յ տառին պէս. իսկ պոչը այս-  
տեղ բոլորովին ուղիղ է, Կոստանդինի 1271  
թուի գաշնագրին մէջ (Սիսուան, էջ 210)  
կլորածեւ, իսկ արդի ձեռագրին մէջ կը ստա-  
նայ պոչի բոլոր ձեւերը:

խ, ի, յ.

Երկաթագրէն մինչեւ հիմայ պահած է  
նոյն ձեւը. կարճ կոթով ձեւը յաջողութիւն  
գտած չէ. արդի ձեռագրին մէջ կը ստանայ  
միացման բոլոր ձեւերը:

ծ, ծ, ժ.

Տառիս բոլոր երկրորդական ձեւերը խա-  
փանուած են եւ միայն հնագոյնը, այն է Զի-  
թենեաց արձանագրութեան ձեւն է որ անցած  
է բոլորգրին եւ կը շարունակուի մինչեւ հիմայ:  
Արդի ձեռագրին մէջ ունի զանազան վարիանտ-  
ներ, որոնք կը տարբերին իրարմէ գլխաւորապէս  
գլխի պատճառով. այսպէս մերթ ձախէն կը

ստանայ պարզ շեղ մազագիծ մը, ինչպէս ֆրանս. ձեռագիր Ժ. մերթ նոյն շեղ մազագծին վերի ծայրը՝ գլխին անմիջապէս աջ կողմը կլորակ մը կը ձեւացուի. մերթ ձախէն հորիզոնական գծիկ մը կ'աւելնայ (ինչպէս Ժ), որուն ձախ ծայրն ալ վերէն ոլորք մը կը շինուի. ասկէ զատ՝ տառին մէջքը կրնայ ուղիղ դիւք մը ստանալ կամ նաեւ ձախ թեքուած ծուռումուռ դիրք մը ստանալ. վերջապէս պոչը կրնայ այլեւայլ ձեւերով ըլլալ եւ մինչեւ իսկ ստանալ վերը նկարագրուած 11<sup>րդ</sup> ձեւը:

կ. ի. կ.

Գիտենք որ երկաթագրի հին ձեւին մէջ տառիս երկու սիւներէն մէկը մեծ, միւսը փոքր էր, որ յետոյ հաւասարուեցաւ: Բողբոգրի շրջանին՝ միջին կապը երբեմն թեք է, ինչպէս Անիի 622 թուի արձանագրութեան մէջ (Շող., Թ. 4), ուր փիւնիկեան Կ գրին միջին կապին ձեւով է. — երբեմն բողբոգրին ուղիղ է, ինչպէս Տեկդրի 964 թուի խաչքարի արձանագրութեան մէջ (Շող., Թ. 15), Երեւոյքի 1028 թուի արձանագրութեան մէջ (Շող., Թ. 19), Սարգիս Սեւանեցւոյ 1041 թուի ձեռագրին մէջ (Շիրակ, էջ 50). — երբեմն ալ ալիսածան, ինչպէս Կեչառոյքի 1335 թուի արձանագրութեան մէջ (Շող., Թ. 26): Ասկէ զատ՝ Սեւանեցւոյն ձեռագրին մէջ աջակողմեան սիւնը բողբոգրին շեղ՝ այսինքն դէպի ձախ թեքուած է, մինչ միւսներուն մէջ ուղղահայեաց:

Արդի ձեռագրին մէջ տառս կրնայ վերի կողմէն ֆրանսերէն ձեռագիր չգրին նման գլուխ մը ստանալ, նոյնպէս վարի կողմէն ստանալ մազագիծ կամ պոչ, որով զանազան ձեւերու տակ մանել, մինչեւ անգամ յ տառին նման եւ անկէ աւելի մեծ պոչ մը ձեւացնել եւ կամ պոչի յ 11րդ ձեւը ստանալ: Արագ գրութեան մէջ մինչեւ անգամ կրնայ գառնալ գրեթէ ուղիղ գիծ մը՝ որ հազիւ մէջտեղէն կորացած է:

հ, է, թ.

Գիտենք որ հնապէս երկաթագրի մէջ զանազան ձեւեր կային տառիս համար, որոնք երկու գլխաւոր տիպի կը վերածուին. մէկը կարթով (չ), միւսը առանց կարթի (է): Այս երկու ձեւերն ալ շարունակուեցան բոլորգրի մէջ: Առաջին ձեւը բաղկացած է հինգ մասէ, այն է վերի ծայրը փշիկ մը, յետոյ կարթը, աջէն ձախ գիծ մը, ձախէն աջ գիծ մը եւ վերջապէս տառին ոտքը՝ որ դարձեալ փշիկի մը ձեւն ունի: Երկրորդ շրջաններուն այս մասերէն մինչեւ երկուքը կը կրճատուի. այսպէս Սմբատ Գոռնդրստապլի շղագիր յիշատակարանին մէջ (1241 թուէն, Սիսուան, էջ 72) վերի փշիկը ջնջուած է, կարթը գարձած բոլորովին հորիզոնական, իսկ ոտքը երկար եւ ուղղահայեաց գիծ մը գարձած է: Սանփաննոս Օրբելեանի յիշատակարանին մէջ (1290 թուէն, Սիսական, էջ 94) բոլոր հինգ մասերն ալ կը մնան, միայն թէ չորրորդը

(այն է ձախէն աջ եկող գիծը) դարձած է հորիզոնական, իսկ տակի ուղբը՝ մեծ ու լայն ստորակէտի ձեւով կլորացած: Էջմիածնի № 379 աւետարանին մէջ (ԺԳ դար, անցման բոլորգիր, Շող., Թ. 115) աւելի հետաքրքրական ձեւ մը առած է տառս. նախ փշիկը ջնջուած եւ կարծր խոշոր միջակէտ մը դարձած է. յետոյ աջէն ձախ գացող գիծը դարձած է հորիզոնական կամ գրեթէ կիսակլոր, իսկ ուղբը բոլորովին ուղղահայեաց. միեւնոյն ժամանակ՝ տառը, հակառակ սովորականին, տողէն վեր է եւ ուղբը ԼԼ տառին սիւններուն հետ համադրի: Վերջապէս չեթում Լ. Թագաւորի դրամի արձանագրութեան մէջ (Սիսուան, էջ 232) փշիկն ու ուղբը իսպառ ջնջուելով՝ եւ գծերուն թեքումները մեղմանալով՝ տառս ստացած է Լտ. Շ տառին ձեւը:

Այնուհետեւ տառիս այս տիպը կը վերնայ հասարակ գործածութենէ եւ կը պահուի միայն իբրեւ գլխատառ:

Առանց կարծի ձեւը բաղկացած է չորս մասէ. նախ հաստ միջակէտ մը, յետոյ ասոր ձախ կողմէն դէպի վար իջնող գիծ մը, յետոյ դէպի աջ ծռող գիծ մը եւ վերջապէս ուղբը: Այս ձեւով ալ կը մասնէ բոլորգրի մէջ: Բայց հոս կը սկսի զանազան փոփոխութիւններ կրել. — մերթ միջակէտը կը ջնջուի եւ ուղբը կը գառնայ դէպի ձախ ծռող գիծ մը. հմմտ. Երեւոյթի 1028 Թուի արձանագրութեան մէջ (Շող., Թ. 19), ուր ձախի գիծն ալ հորիզոնական դառնալով՝ տառս ստացած է յն. կոտրած Տ

տառի ձեւը, իբր Ծ: Սարգիս Սեւանեցւոյն ձե-  
ռագրին մէջ (1041 թուէն, Շիրակ, էջ 50)  
ունի Մ կամ Զ, Զ ձեւերը եւ տողէն վար կը  
գանուի. — մերթ ալ ուրքը լայնալոյ ու կլոր-  
նալոյ՝ գէպի ձախ կ'ոլորուի, պոչին պատճառաւ  
կը գառնայ ստորնական եւ իր այս ձեւին աակ  
դրեթէ 5 թուանշանին ձեւը կ'ընդունի, ինչպէս  
Կոզովտի 999 թուի արձանագրութեան եւ Էջ-  
միածնի № 2520 ձեռագրին մէջ (1306 թուէն,  
Շող., Թ. 120). — վերջապէս ասոր ալ միջա-  
կէսը կը ջնջուի եւ բոլորովին նոր տառի մը  
երեւոյթը կը ստանայ, նման զնդ. Մ կամ պՃ, Զ  
եւ խպաի Ծ (քէյ) տառերուն եւ կամ գլուխը  
կոտրած 5 թուանշանին (իբր Զ): Այս ձեւերով  
կը գտնենք տառս Էջմիածնի № 3795 ձեռագրի  
յիշատակարանին մէջ՝ 1190 թուէն (Շող.,  
Թ. 65), Լամբրոնացւոյ յիշատակարանին մէջ՝  
1197 թուէն Սիսուան, էջ 92), Էջմիածնի  
№ 2606 ձեռագրին մէջ՝ 1198 թուէն (Շող.,  
Թ. 67), Լեւոն Բ. Թագաւորի ստորագրութեան  
մէջ՝ 1210 թուէն (Սիսուան, էջ 438), Երու-  
սաղէմի № 2660 ձեռագրին մէջ՝ 1262 թուէն  
(Շող., Թ. 83), Կեչառոյքի 1335 թուի տա-  
պանագրի մէջ (Շող., Թ. 26) եւն:

Տարօրինակն այն է որ երկու ձեւերն ալ  
միաժամանակ կը գտնուին միեւնոյն ձեռագրին  
էջին վրայ. օրինակ՝ Էջմիածնի № 2606 ձեռա-  
գրին (1198 թուէն, Շող., Թ. 67) մէկ էջին  
մէջ տառս կայ 6 անգամ, որմէ երեքը առաջին,  
երեքը երկրորդ ձեւով է. Երուսաղէմի № 2660

ձեռագրին (Եղ. Թ. 83) մէկ էջին մէջ կային անգամ, որմէ ետեւ շառնչին ձեւով, երկուքը երկրորդ ձեւով: Այս երկրորդ ձեւը սակայն հետզհետէ գործածութենէ տեղի կու տայ եւ վերջապէս կը խափանուի:

Արդի ձեռագրին մէջ զանազան ձեւեր ունի տառս: Առաջին եւ սովորական ձեւն է լա. ձեռագիր ճ տառին պէս, որուն թեւը կրնայ նաեւ մեծ սիւնին ձախ կողմը միայն մնալ եւ աջ կողմը չանցնիլ, մտաւորապէս լա. տպագիր հ ձեւին պէս: — Երկրորդն է նաեւ գիր հ ձեւին շարունակութիւնը, սակայն ձեռագրին յարմարելու համար երկու թեք գծերը կըրտիկ ձեւ մը առած՝ լա. Ը տառին պէս: Ասոր ալ վարիանտներն են՝ Ը տառին նման ձեւ մը՝ տողէն վեր գրուած, կամ նշմը՝ գլուխը անջատ, եւ կամ պոչն ու գլուխը միացած՝ գոթական ձեռագիր Կ տառին պէս:

Ձեռագրիս առաջին ձեւին համեմատութեամբ Արամեան ոճով այս գրիս համար հնարուած է հ ձեւը՝ ճշտիւ նման լատինականին:

### ձ, յ, ճ.

Գիտենք որ երկաթագրի մէջ տառիս բերանը շատ աւելի բաց էր, այսինքն ոլորակի ձախ մասը տառին մարմնին կպած չէր. միեւնոյն ժամանակ պոչին ծայրը վեր չէր ոլորուեր, ինչպէս է օրինակ Զ ձեւին մէջ: Այս ձեւով կը գտնենք տառս նաեւ անցման շրջանին, ինչպէս

կը ցուցնէ խաչիկ վարդապետի պատառիկը՝ 1040 թուէն (Շող., Թ. 48), կամ աւելի ուշ՝ Էջմիածնի № 379 աւետարանին մէջ (ԺԳ. դար, Շող., Թ. 115)։

Արագ գրելու ժամանակ դժուարութիւն կը հանէին տառին գլուխը եւ պոչի ոլորքը, ուստի եւ այս երկուքը սկսան հետզհետէ փոփոխութեան ենթարկուիլ։ Նախ գլուխը՝ փոխանակ վարէն վեր եւ ձախէն դէպի աջ երթալով կը լորակ շինելու (ինչպէս կ'ընենք շ, շ, Յ գրելու գրելու ժամանակ), սկսաւ վերէն վար իջնելով կոթ մը ձեւացնել եւ յետոյ ձախէն աջ ոլորուիլ, ճշտիւ նօտրագիր ք գրելու պէս։ Միեւնոյն ժամանակ պոչի ոլորքը՝ փոխանակ տառին իբր շարունակութիւն մէկ շարժումով հանելու, անջատ կը գրուի եւ մինչեւ երկու շարժումով կը հանուի։ Այսպէս օրինակ՝ Էջմիածնի № 1214 ձեռագրին մէջ (1118 թուէն, Շող., Թ. 60) տառս հետեւեալ ձեւով կը գրէ գրիչը. նախ վերէն վար կը գծէ կոթ մը (ւ), անոր վարի ծայրէն կը կպցնէ յ ձեւով կը լորակը, յետոյ նոր շարժումով՝ կը լորակին ծայրը կ'աւելցնէ ձեւով ոլորք մը։ Բայց երբեմն ալ այս ոլորքը երկուքի կը բաժնէ. նախ կը գնէ թեք գիծ մը, ճշտիւ ինչպէս շ գրին տակն է, որուն ձախ ծայրը տակէն կ'աւելցնէ լ ձեւով նշան մը։ Ասիկա աւելի անփոյթ ձեւով գրուելով՝ վերի կոթին եւ վարի նշանին տեղ մէկ մէկ միջակէտ կրնայ դրուիլ, որոնք տառէն քչիկ մը հեռու եւ առանձին կը մնան, իբր :Շ, այս ձեւով է առաս Էջ-

միածնի № 3795 ձեռագրին մէջ՝ 1190 թուէն (Շող., Թ. 65)։

Այնուհետեւ նոյն գլուխը կը փոխուի եւ կը ստանայ ն տառին կտուցին ձեւը (ւ), որուն տակ կը կցուի սովորական զարդարուն շ ձեւը կամ աւելի պարզ ժ. առաջինը կը գտնենք Էջմիածնի № 177 ձեռագրին մէջ (ԺԳ. դմբ., Շող., Թ. 118), երկրորդը կը գտնենք Սարգիս Սեւանեցւոյն ձեռագրին մէջ՝ 1041 թուէն (Շիրակ, էջ 50)։

Սակայն ժ ձեւը գծելու համար գրիչները կը միածեն ոլորքը փոխանակ ձախէն դարձնելու՝ աջէն դարձնել. ասով յառաջ կու գայ բոլորգրի ձ ձեւը։ Այնուհետեւ նոյն աջակողմեան ոլորքը աւելի անփոյթ կերպով կը գծուի, որով ձ տառը գրեթէ ն տառին ձեւը կը ստանայ. այսպէս կը գտնենք Կոգովտի 999 թուի յիշատակարանին մէջ՝ 3 անգամ (մէկ անգամ ալ եբր. 3 գրին ձեւով՝ որ սակայն կը թուի թէ փորագրութեան սխալ մ'է)։ Այս նմանութենէն խուսափելու համար՝ հիմայ ալ գրիչները կը սկսին ձ տառին թեւը վար կախել, կ տառին ոտքին պէս. հմմտ. Կոստանդինի 1271 թուի դաշնագիրը (Սիսուան, էջ 210), Գայլեձորի Պիարոյից գիրքը 1278 թուէն (Սիսական, էջ 133), 1291 թուէն յիշատակարան մը (Սիսական, էջ 131) եւն։ Ասոնց մէջ յիշեալ ոտքին վերի ծայրը տառին մարմնին ուղղակի կպած է, շուտով քչիկ մը հեռանալով՝ ճշտիւ կ տառին ոտքին պէս կը գրուի. հմմտ. Էջմիածնի № 3793 ձեռագրի մէկ յիշա-

տակարանին մէջ՝ 1201 թուէն (Շող., Թ. 70), նոյն 1291 թուի յիշատակարանին մէջ (Սիսական, էջ 131), Կեչառայքի 1335 թուի յիշատակարանին մէջ (Շող., Թ. 26): Ասկէ անմիջապէս կը յառաջանայ նօտագրի յ ձեւը:

Արդի ձեռագրին մէջ տառս երեք ձեւ ունի. նախ նօտագրի ձեւը՝ վերի ծայրը մագագծով կամ իրարիկ ոլորակով, իսկ պոչը զանազան խաղերով՝ համաձայն պոչի ոլորման օրէնքներուն. — երկրորդ՝ ոլորուն գլխով, ճշտինչպէս գերմ. Յ. որ գործածական է միայն Կովկասի մէջ. — երրորդ՝ վերէն վար ուղիղ, առանց բեկընկուսներու, ինչպէս եւրոպական ձեռագիր ձ:

Ղ, Ղ, Պ.

Երկաթագրէն մինչեւ հիմայ կը պահէ նոյն ոճը: Արդի ձեռագրին մէջ պոչի օրէնքներու համաձայն կը ստանայ բոլոր վարիանները:

Ճ, Ճ, Շ.

Երկաթագրի ոճը պահուած է մինչեւ հիմայ, չին գրութեանց մէջ երկու թրածեւ գծերը կրնան անհաւասար ըլլալ, իսկ աակի խարիսխը մերթ բոլորովին ուղիղ է եւ մերթ տառին փորին հետ կանոնաւոր ձուածիւ մը կը ձեւացնէ, որուն կլոր մասը վար եւ սուր մասը վեր դարձած է: Առաջինին իրր օրինակ ունինք Սարգիս Սեւանեցւոյն ձեռագիրը՝ 1041 թուէն (Շիրակ, էջ 50), իսկ երկրորդին համար Կոստանդնի դաշ-

նագիրը 1271 թուէն (Սիսուան, էջ 210), տճկ. օ  
գրին պէս:

Սրդի ձեռագրին մէջ զանազան ձեւեր կը  
ստանայ տառս. 1. Լատին ձեռագիր գլխատառ  
Ձ ձեւին պէս, միայն աւելի փոքր, որ եւ ա-  
մէնէն սովորականն է: 2. Նոյնը՝ միայն թէ վերի  
ձախակողման մեծ ոլորքը միջին սիւնէն ներս,  
իսկ միջին սիւնը աւելի ուղղահայեաց եւ վերի  
ծայրը առանց զարդի: 3. Ճշտիւ այս երրորդ.  
ձեւին պէս միայն առանց տակի ձախակողման  
ոլորքին: 4. Այս երրորդ ձեւին պէս, միայն ա-  
ջակողման մեծ ոլորքին ծայրը քիչ մը սիւնէն  
դուրս երկարած: 5. Այս չորրորդ ձեւին պէս,  
միայն խարիսխը առանց անհարթութեանց, բո-  
լորովին կլոր, գրեթէ կոստանդինի դաշնագրի  
ձեւով: 6. Չորրորդ ձեւին պէս, միայն տառին  
խարիսխը գրեթէ յն. ա տառին ձեւով, իսկ վերի  
ոլորքը միջին սիւնէն գէպի ձախ երկարելէ յե-  
տոյ, տակէն դառնալով, նորէն գէպի աջ՝ տառէն  
դուրս երկարելով, իրրեւ թեւ մը, մօտաւո-  
րապէս ֆրանսերէն ձեռագիր չ տառին միջին  
թեւին պէս: 7. Գրեթէ չ տառին նման ձեւ մը,  
աջ ծայրը միջակէտով, միայն թէ աջակողման  
կարճ սիւնին մազագիծը նոյն սիւնին ձախէն  
ոլորելով դուրս եկած, իրր ջ ձեւով: 8. Նման  
ոլորք մը՝ նաեւ մեծ սիւնին ձախ կողմէն:  
9—10. Նման 7—8 ձեւերուն, միայն մեծ սիւնին  
գլուխը փոխանակ աջ ծռած կորութիւն մը  
ձեւացնելու, ձախէն ալեծածան թեւով մը, մօ-  
տաւորապէս յ ձեւով:

մ, Տ, Վ՛.

Երկաթագորի մէջ տառս բաղկացած էր երկու հաւասար սիւներէ, երկրորդին ծայրը հորիզոնական թեւով մը: Այսպէս կը գտնենք նաեւ գէպի բոլորգիր անցման շրջանին. օրինակ՝ Երերոյքի 1028 թուի արձանագրութեան մէջ (Ըդ., Թ. 19) և ձեւով է: Նոյնը, բայց թեւը քիչ մը աւելի թեք ձեւով՝ Տուտէորդւոյն յիշատակարանին մէջ՝ 1154 թուէն (Այրարատ, էջ 167): Կոգովտի 999 թուի յիշատակարանին գրիչը հետեւեալ ձեւով կը գրէ տառս. նախ կը գծէ և ձեւը, յետոյ ասոր աջ սիւնին ծայրը, առանձին կը կպցնէ թեւ մը, որ զանազան ձեւեր կը ստանայ. մերթ պարզ թեք գիծ մը կ'ըլլայ, մերթ պարոյկի նման (<sup>α</sup>), մերթ թեք գիծ մը՝ ծայրը բութ նշանով (<sup>β</sup>) եւն: Այս բոլորին մէջ երկու սիւները հաւասար են եւ թեւը աջ սիւնին ճշաիւ ծայրին կպած է: Աւելի յետոյ սիւներուն ձեւը կը փոխուի. այսպէս՝ 1291 թուէն յիշատակարանի մը մէջ (Սիսական, էջ 131) ձախ սիւնը կարճ է, աջը երկար եւ նոյն իսկ երկու սիւները իրար կապող սաորին հորիզոնական գծէն աւելի վար իջած, իսկ թեւը ոչ թէ աջ սիւնին ծայրին կպած է, այլ բաւական վարօք, գրեթէ այսպէս Վ. և երջնպէս ամբողջը մէկ գրչով հանելով եւ ծայրէ ծայր երկու կորութիւն կազմելով՝ կը յառաջանայ նօտրի նման մ' ձեւը, ինչպէս կը գտնենք արդէն Կոստանդինի 1271 թուի դաշնագրին մէջ (Սիսուան, էջ 210), երկար

Թեւով, եւ Կեչառոյքի 1335 Թուի արձանա-  
գրութեան մէջ (Շող., Թ. 26) կարճ Թեւով:

Եւ ի, է, Թ, փ եւն տառերուն քով տա-  
ռիս Թեւը կը ճատուելով՝ կ'ըլլայ մ իսկ ն տառին  
հետ գրչախառնուելով՝ կը յառաջանայ մի ձեւը:

Արգի ձեռագրին մէջ տառս նօտրագիր յ  
տառին ոճով է եւ ունի զանազան վարիանտներ,  
որոնք միայն Թեւի ոլորքի կողմէն կը տարբերին  
իրարմէ. այսպէս կարելի է՝ Լ, Շ տառերու պո-  
չին նման երկար հորիզոնական գիծ մը քաշել,  
նօտր յ ձեւին պէս իր վըայ կորացնել, նոյն կո-  
րութիւնը կարելի է իր վըայ լաւ մը ոլորել, նոյն  
իսկ կրկին անգամ, կամ ոլորքի ծայրը դէպի  
ձախ՝ սիւնէն գուրս երկարել, կարելի է նաեւ  
վըաց, ց ձեւին կամ ֆրանս. ձեռագիր ց ձեւին  
պէս Թեւը դէպի ձախ ոլորել, եւ կամ յն. ֆ  
տառին պէս նոյնը ձախ ոլորելէ յետոյ՝ նորէն  
գէպի աջ բերել, Թաւրիզի մէջ յաճախ կը պա-  
տահի տեսնել գրեթէ 3 Թուանշանին նման,  
միայն վերի ոլորքը վարի ոլորքէն աւելի մեծ,  
կամ քչիկ մը դէպի աջ ծռած եւ կամ երկու-  
քին մէջտեղը գտնուած սուր ծայրին փոխարէն  
ոլորակ մը շինելով՝ իբր ց: Աւերջապէս կարելի  
է այս բոլորէն զանազան խառնուրդներ կազմել,  
որով միեւնոյն տառը տասնէ աւելի վարիանտ-  
ներ կ'ունենայ:

յ, յ, յ.

Ամենահին ժամանակներէն արդէն երկա-  
թագրի մէջ տառիս ձախակողմեան կէտը քնջուե-

լով՝ մնացած էր միայն երկու կլորակ. այսպէս կը գտնենք նաեւ Հեթում Ա. Թագաւորի դրամի արձանագրութեան մէջ, ուր գրեթէ 8 թուանշանին ձեւն ունի (Սիսուան, էջ 232): Կրկին թղթակները իբար կապող միջին թելը գծագրութեան մէջ որոշ գծուարութիւն կը հանէր. ուստի գիւրութեան համար գրիչները մտածած են նախ շինել մեծ կիսալուսին մը, յետոյ մէջտեղէն գիծ մը քաշել՝ ուղիղ կամ ալեծածան, Ուղիղ ձեւով կ'ըլլայ Յ, ալեծածան ձեւով Յ: Երկուքը միաժամանակ կը գտնենք Երեւոյթի 1028 թուի արձանագրութեան մէջ (Շող. Թ. 19): Այնուհետեւ միջին գիծը կը յապաւուրի եւ կը մնայ միայն կիսալուսինը՝ Շ ձեւով, ինչպէս կը գտնենք Տեկորի 964 թուի արձանագրութեան մէջ (Շող. Թ. 15), բայց ամբողջ տողին վրայ եւ ոչ թէ տողէն վար: Ասոնց աւելի դադացած ձեւերն են՝ նախ Չ ձեւը, որ կը գտնենք Խաչիկ վարդապետի պատառիկին մէջ՝ 1040 թուէն, անցման երկաթագրով (Շող. Թ. 48), երկրորդ Չ ձեւը՝ որ կը գտնենք Կեչառոյթի 1335 թուի տապանագրին մէջ (Շող. Թ. 26), երկուքն ալ ամբողջ տողի վրայ: Ասոնց ուղիղ շարունակութիւններն են թղթագիր յ եւ նօտր յ ձեւերը, որոնց հնագոյն օրինակը կը գտնենք Կոգովտի 999 թուի ձեռագրին մէջ: Կայ եւ ասոր քիչ մը զարդարուն ձեւը Կ, ինչպէս կը գտնենք Տուտէորգւոյն յիշատակարանին մէջ (Այրարատ, էջ 167) եւ այլուր:

Արդի ձեռագրին մէջ յ ունի միեւնոյն ձեւը

եւ պոչին նետուածքով միայն կը տարբերի. մերթ պարզ յ ձեւով, մերթ ալեծածան իրր ձեւով, մերթ գէպի աջ երկարած եւ սիւնէն գուրս ելած, մերթ գարձաձ՝ իրր շ եւ մերթ՝ ալ տճկ. օ գրին ձեւով, բոլորն ալ ստորնական:

ն, ն, լի.

Երկաթագրի մէջ երկու ձեւ ունէր տառս. հորիզոնական գլխով եւ կեռ կաուցով: Առաջին ձեւին շարունակութիւնն է բոլորգիր Մ ձեւը՝ որ կը գտնենք գործածուած 8 անգամ՝ Երեւոյքի 1028 թուի արձանագրութեան մէջ, մէկ անգամ ալ նոյնը թեք գլխով: Ասոնց մէջ երկու սիւները հաւասար են եւ կաուցը հորիզոնական գիծ մ'է: Այլըւր այս ձեւը չկայ, եւ ինչպէս երկաթագրի, նոյնպէս եւ բոլորգրի մէջ կը խափանուի, ասպարէզը թողելով կեռակաուց ձեւին: Ասիկա բոլորգրի մէջ կուտայ՝ Ասոր ալ տարբերակները քանի մը տեսակ են. նախ կայ երկու սիւները հաւասար ձեւով, ինչպէս է Գր. Տուտէորդւոյն ձեռագրին մէջ՝ 1154 թուէն (Այրարատ, էջ 167). աւելի յետոյ կը տարածուի անհաւասար սիւներով ձեւը՝ Երկրորդ ունինք զարգացած կաուցով ձեւը. այսպէս՝ Վոգովտի 999 թուի ձեռագրին մէջ գրիչը սովորական ձեւով ն գրելէ յետոյ, կաուցին ծայրէն նոր հորիզոնական գիծ մ'ալ կ'երկարէ շ, լ տառերուն ոտքին պէս: Ասիկա կրնայ մասամբ անոր համար ըլլալ որ նոյն գրութեան մէջ ճ տառն ալ, ինչպէս տեսանք, ճշաիւ ն տառին ձեւն ունի, եւ

հետեւաբար կտուցի մեծութիւնը կրնար ըլլալ միջոց՝ տարբերելու համար այդ երկու գրերը։ Աւելի յետոյ կտուցի այս ձեւն ալ կը խափանուի։ Եւ տառէն երկու ուրիշ ձեւ ալ ունինք. նախ ոլորուն ձեւով՝ իբր չ, որ կը գտնենք 3 անգամ Կեչառոյքի 1335 թուի արձանագրութեան մէջ (Շող., Թ. 26), երկրորդ՝ չ ձեւով, որ կը գրանենք մէկ անգամ Տեկորի 964 թուի խաչքարի արձանագրութեան մէջ (Շող., Թ. 15)։ Բայց այս երկուքն ալ բացառիկ բաներ են եւ յաջողութիւն չեն գտած։

Արամեան ոճով տառիս համար հնարուած է (ն ձեւը, որու մէջ կտուցը փոխանակ դէպի ձախ ծռելու՝ դէպի աջ ոլորուած է. ասով տառը ճշտիւ կը նմանի ին ձեւին, միայն հոս տակի մասը ո ձեւն ունի, մինչ առաջինին մէջ ս ձեւով է։ Այս ձեւը անոր համար է որ կտուցը տառին մարմնէն դուրս երկարելով՝ ուրիշ գրերու միութիւնը չխանգարէ տպագրական արուեստի մէջ (յատկապէս մ տառին հետ)։

Արդի ձեռագրին մէջ տառն սովորաբար բոլորգիրն ին ձեւին համեմատ է. բայց գլուխը կրնայ նաեւ աւելի վարէն եւ կամ աւելի կամ նուազ մեծ առնուիլ. նոյնպէս տակի մասը փոխանակ ս ձեւով ըլլալու՝ կրնայ ալեւել ըլլալ. Կարելի է նաեւ Արամեան ձեւին պէս դուրս բերել, այն ժամանակ տառն փրանս. ձեռագիր և ձեւը կը ստանայ Վերջապէս ձեռագրին մէջ շատ սովորական է թ ձեւը։ Ասիկա ուրիշ բան չէ, եթէ ոչ և տառին կտուցը, որ համառօտութեան համար

Հնարուած է եւ նախապէս միայն բառաւերջը կը գործածուէր, իսկ հիմայամէնտեղ ալ կրնայ գործածուիլ եւ իր դիւրութեան պատճառաւ կը սպառնայ Ն ձեւը ամբողջապէս վտարել գործածութենէ: Սովորական գրութեան մէջ ֆրանս. *e* դրին ձեւն ունի. բայց կրնայ պոչը աւելի երկարիլ, դէպի վար թեքուիլ եւ կամ շատ աւելի վեր բարձրանալ՝ գրեթէ ֆրանս. ձեռագիր 3 գրին պէս: Ն առոի այսպիսի ձեւ մը հինէն աւանդուած չէ եւ հաւանաբար ԺԸ. դարուն հնարուած է:

## 2. Ն ը.

Ինչպէս երկաթագրի, նոյնպէս եւ բոլորգրի մէջ զանազան ձեւեր ունի տառս, որոնք բոլորն ալ նախորդ երկաթագիր ձեւերու շարունակութիւնն են: Այսպէս՝

1. Երկաթագրի երկրորդ ձեւին նման, ձեւ մը՝ որ արդի բոլորգիր շ տառէն այն տարբերութիւնն ունի, որ գլխի կորութեան տեղ կայ բաւական երկար բութ նշան (') եւ պոչն ալ վայրահակ է: Այս ձեւը կը դանենք Տուսէորդւոյն ձեռագրին մէջ, 1154 թուէն, անցման գրով (Այրաբատ, էջ 167):

2. Ճշաիւ նոյնը, բայց առանց վայրահակութեան, պոչը ուղիղ պահելով. այսպէս կը գանենք Էջմիածնի թ. 2679 ձեռագրին մէջ՝ 971 թուէն (Շողակաթ, թ. 36):

3. Յն. Տ առին նման ձեւ մը, պոչը վայրահակ, ինչպէս առաջին ձեւը, բայց գլուխը փոխա-

նակ պարզ բութ նշան մը ձեւացնելու՝ ալեձեւ է, իբր Շ. Այսպէս կը գտնենք տառս Սարգիս Գլա-  
ձորեցւոյ օրինական թուղթ Շորհալոյ բոլորգիր  
ձեռագրին մէջ՝ 1317 թուէն (Սիսական, էջ 136):

4. Խպտի Շ տառին նման ձեւ մը, միայն թէ  
տակը բութ ձեւով վերջացած՝ ինչպէս լա. Գ  
եւ ամբողջը տողէն վեր գրուած. ասիկա՝ որ եր-  
կաթագրի 5<sup>րդ</sup> ձեւին շարունակութիւնն է, գոր-  
ծածուած է Կոզովտի 999 թուի ձեռագրին մէջ՝  
8 անգամ:

5. Շ ձեւով շ, որ երկաթագրի 7<sup>րդ</sup> ձեւին  
շարունակութիւնն է. թէ՛ գլուխը, թէ՛ մարմինը եւ  
թէ՛ պոչը ուղիղ գծէ կազմուած. կը գտնուի  
Երերոյքի 1028 թուի արձանագրութեան մէջ  
(Շող., Թ. 19) 8 անգամ:

6. Շղագիր ՝ ձեւին նման շ, որ գործա-  
ծուած է Անիի 622 թուի արձանագրութեան  
մէջ (Շող., Թ. 4). ասիկա երկաթագիր է, բայց  
ձեւով իսկապէս բոլորգրին կը պատկանի եւ մեր  
շ ձեւին կորացած գլխին հնագոյն օրինակը կը  
ներկայացնէ, աւելի հին քան վերի 4<sup>րդ</sup> ձեւը:

Վերոյիշեալ բոլոր ձեւերը հնազանդէ կը  
քաշուին գործածութենէ եւ կը յառաջանայ  
նոր ձեւ մը՝ կոր գլխով եւ հորիզոնական պոչով.  
այս է մեր արդի բոլորգիր շ ձեւը: Բայց ասիկա  
ալ սկիզբէն բաւական տարբեր է. կոր գլուխը  
մեծ, անշնորհք եւ անհամաչափ է, իսկ ամբողջը  
կը սկսի տողին վերէն: Այսպէս կը գտնենք  
տառս Տուտեորդւոյն 1154 թուով ձեռագրին  
մէջ (Այրարատ, էջ 167)՝ վերը յիշուած առա-

ջին ձեւին հետ միասին, եւ մանաւանդ Կոստան-  
գինի 1271 թուի գաշնագրին մէջ (Սխուան,  
էջ 210): Տառիս գլխի այս մեծութիւնը, ինչպէս  
եւ ամբողջական ըլլալը այն պատճառաւ է որ այն  
ժամանակ դ տառն ալ շ գրին ձեւն ունէր եւ  
երկուքը իրարմէ կը տարբերէին միայն անով, որ  
մէկը ամբողջական էր, միւսը ստորնական: Երբ դ  
տառին թեւը բարձրացաւ վեր, այլ եւս շփո-  
թութեան երկիւղը վերջացաւ եւ շ տառն ալ  
միւսներուն համաչափութիւնը պահելու համար  
դարձաւ ստորնական, ինչպէս կը գտնենք հիմայ:

Արդի ձեռագրին մէջ տառս բոլորգրի ոճով  
է եւ պոչի օրէնքներու համեմատ ունի բոլոր  
տարբերակները:

Արամեան ոճին մէջ տառս ստացած է Շ  
ձեւը, որ հնարուած է միջին-մեսրոբեան Շ ձեւին  
վրայէն եւ դարձած վերնական տառ՝ միայն ան  
նպատակով, որ եւրոպական վայելագորութեան  
հետեւելով՝ մեր այբուբենէն ստորնական տառե-  
րու թիւը մասամբ կրճատուի:

ո, ո, ո.

Երկաթագրէն մինչեւ հիմայ նոյն ոճը կը  
պահէ, ինչպէս եւ արդի ձեռագրին մէջ, ուր կան  
քանի մը տարբերակներ. երկու սիւներու կապը  
կրնայ առնուիլ վերէն, ինչպէս օրէնքը կը պա-  
հանջէ, կամ նաեւ թեք ձեւով (ինչպէս ռուս..  
Մ տառին մէջ). կրնան նաեւ երկու սիւները  
օղակաձեւ կազմուիլ եւ այն ժամանակ տառս

գրեթէ կը ստանայ ֆրանսերէն գլխիվայր դար-  
ձած երկու ձեռագիր թժ տառի ձեւը:

Ճ. Լ. Ճ.

Երկաթագրի մէջ տառս ունէր Չ ձեւը  
աւելի կամ պակաս գոյք բերնով, որ շատ նման  
ըլլալով Չ տառին, նմանօրինակ ձեւափոխութիւն-  
ներ ալ կրած է: Հոս ալ դժուարութիւն հանողը  
գլխաւորապէս տառին կլոր գլուխն էր, ուստի  
Չ գրին նման հոս ալ նախապէս ձեւացաւ վերէն  
վար իջնող յաւելուածական կոթ մը: Այսպէս կը  
գտնենք Տոստէորդուոյն ձեռագրին մէջ՝ 1154  
թուէն, անցման երկաթագրով (Այրարատ,  
էջ 167), ուր մօտաւորապէս Չ ձեւս ունի, Դ-յն  
կոթը աջէն ձախ թեքուած եւ ոչ թէ ձախէն աջ,  
պոչը ի՛նչ ի՛նչ -- եւ ի՛նչ դէպի աջ երկարած, նմանապէս  
պոչը կլոր գլխին միացնող մասը ի՛նչ ի՛նչ -- եւ ի՛նչ  
երկար, եւ ամբողջը պոչէն վար կախուած: Աւելի  
յետոյ պոչին դէպի ձախ եղած մասը կը կրճա-  
տուի եւ դէպի աջ երկարած մասը սովորակա-  
նէն աւելի կ'երկարի. այսպէս Էջմիածնի Թ. 379  
ձեռագրին մէջ (ԺԳ. դար, Շող., Թ. 115), ուր  
տառին գլուխը գրեթէ 2 թուանշանին ձեւն ունի.  
նոյնպէս եւ 1181 թուէն Աւետարանի մը յիշա-  
տակարանին մէջ (Շիրակ, էջ 27), անցման եր-  
կաթագրով, ուր այդ երկար պոչը գեղեցիկ կեր-  
պով դէպի վեր դարձած ծայր մ'ալ ունի: Ինչ-  
պէս Չ տառին մէջ, նոյնպէս եւ հոս կրնայ տառիս  
գլուխը երկու մասի բաժնուիլ եւ այն ժամանակ

վերոյիշեալ կոթը միջակէտի մը ձեւը կը ստանայ: Այսպէս է նոյն 1181 թուի Աւետարանին մէջ: Երկու ձեւերուն մէջ ալ պոչը գլխին միացնող կոթը շատ կարճ է եւ ամբողջ տառը տողէն վար կ'ախուած:

2 տառի անսովոր ձեւ մ'ալ ունինք, որ կը գտնուի ցեկորի 964 թուի խաչքարի արձանագրութեան մէջ (ՇՊՀ, Թ. 15): փորագրութիւնը շատ պարզ չէ, բայց կ'երեւայ որ տառս ը կամ Ը ձեւով է: Երկու պարագային ալ ուրիշ բան չի ներկայացներ, եթէ ոչ 2 տառը՝ աջ դարձած գիրքով եւ աակի պոչը ուղիղ: Այս ձեւը այլուստ ծանօթ չէ եւ ինչպէս կ'երեւայ, յաջողութիւն ալ ունեցած չէ:

Վերոյիշեալ բոլոր ձեւերը երկաթագրի նկարագրէն առանձին տարբերութիւն չունին: Նախ քան բոլորգրին անցնելը անշուշտ եղած է շրջան մը, երբ տառին կոթը բաւական երկարած եւ պոչն ալ միայն գէպի աջ երկարող թեւի մը վերածուած էր, մօտաւորապէս արդի ձեռագիր ղ ձեւին պէս: Այսպիսի չ գեռ չեմ պատահած որեւէ ձեռագրի մէջ, բայց պէտք է որ գտնուած ըլլայ Ժ դարուն սկիզբը: Այս ձեւին մէջ տառին գլխի կամարածեւ մասը գիւրութեամբ կրնար ուղղուիլ եւ յառաջ գալ բոլորգիր չ ձեւը, ինչպէս կը գտնենք արդէն 971 թուէն՝ Էջմիածնի Թ. 2679 ձեռագրին մէջ (ՇՊՀ, Թ. 36): Համեմատութիւնը ճշտիւ նոյն է, ինչ որ 2 > ձ, 2 > չ:

2 տառի ուրիշ ձեւի մ'ալ կը պատահինք, այն է կոթէն բոլորովին զուրկ, ճշտիւ 2 ձեւով:

այսպէս կը գտնենք Կոգովտի 999 Թուի ձեռագրին մէջ երկու անգամ. բայց հոս երկիւղ չկար շփոթելու շ գրին հետ, որովհետեւ վերջինս ունէր Շ ձեւը: Սակայն Կոգովտի ձեռագիրը նոյն աեղը երեք անգամ ունի նաեւ Տ ձեւով, միայն թէ ամբողջապէս վերնական, մինչդեռ առաջին ձեւը ստորնական է: Բոլորգիր շ տառը տարածուելէ յետոյ՝ անշուշտ շ գրին յիշեալ ձեւը խափանուած է:

Արդի ձեռագրին մէջ տառս բոլորգրին հետ նոյն է եւ պոչի ձեւափոխութեամբ կը ստանայ բոլոր տարբերակները:

պ, ւ, շ.

Երկաթագրին ոճը պահուած է մինչեւ հիմայ: Ցարաբերութիւնն այն է որ նախ առաջին երկու սիւները՝ որոնք երկաթագրի մէջ անհաւասար մեծութեամբ են, հոս վերածուած են միեւնոյն մեծութեան, ինչպէս կը պահանջէր բոլորգրի ոճը: Երկրորդ՝ երեք սիւներու կամարաւոր կապը՝ որ առնուած էր վերէն, հոս իջած է տակը, ճշտիւ ինչպէս ԼԱ տառին մէջ: Արդէն միջին եւ փոքր երկաթագրի, ինչպէս եւ անցման գրի մէջ սկսած էր պ տառի ձեւ մը, ուր առաջին եւ երկրորդ սիւները միանգամայն վերէն ու վարէն կապուած էին, իսկ երրորդ սիւնը միայն վերէն. այսպէս՝ Պ | > Պ | > Պ. Վերջինս հմմտ. Էջմիածնի Թ. 988 ձեռագրին մէջ՝ 1045 Թուէն (Շող., Թ. 50), Էջմիածնի Թ. 1890 ձեռագրին մէջ՝

1174 թուէն (Շող., Թ. 62) եւն: Աւելի յետոյ ծագեցաւ նաեւ ուրիշ տեսակ մը՝ ուր առաջին եւ երկրորդ սիւները տակէն միացած էին, իսկ երկրորդ եւ երրորդ սիւները վերէն. այսպէս կը գտնենք Տաթեւի Թ. 9 ձեռագրին մէջ՝ 1267 թուէն (Շող., Թ. 85) եւ Սմբատ Գունգոստապլի շղագիր ստորագրութեան մէջ՝ Սիսուան, էջ 71: Այս ձեւը սակայն յաջողութիւն ունեցած չէ եւ տարածուած է միայն տակէն կապուած ձեւը, ինչպէս կը գտնենք արդէն 971 թուին, Էջմիածնի Թ. 2679 ձեռագրին մէջ (Շող., Թ. 36) եւ աւելի յետոյ՝ Կոդովտի 999 թուի ձեռագրին եւ Երեբոյքի 1028 թուի արձանագրութեան մէջ (Շող., Թ. 15): Բայց անկէ քիչ առաջ, ինչպէս Տեկորի 964 թուի խաչքարի արձանագրութեան մէջ (Շող., Թ. 15) առաջին սիւնները թէեւ արդէն հաւասարուած, բայց կամարը տակաւին ամբողջապէս վերէն է:

Արդի ձեռագրին մէջ գլխատառի համար որոշուած է կապը վերէն դնել, իսկ հասարակ տառերու համար վարէն. ոմանք սակայն այս վերջինն ալ վերէն կը դնեն: Երեք սիւնները սովորաբար հաւասար են, ոմանք սակայն առաջինը աւելի երկար կը դնեն, ինչպէս ա տառին մէջ, ուրիշներ երեք սիւններն ալ օղակաձեւ կը բռնեն, իբր իբար յաջորդող երեք ֆրանս. ձեռագիր օօ: Վերջապէս տակի պոչը ոմանք կը ձգեն ազատ, ոմանք աջէն թեւով մը կը միացնեն յաջորդ տառին, ուրիշներ այդ թեւը ձախէն կը դնեն՝ յ առաին նման ոլորելով:

## Ը, Ը, Ը.

Երկաթագրին պէս՝ անցման շրջանին ալ տառս ունի զանազան ձեւեր. 1. Գլխուն երկու կորութիւնները իրարմէ հեռու, այսինքն վերի կողմէն բաց, իսկ տակէն միացած, պոչն ալ ալեծածան, հորիզոնական գիրքով, ձախ եւ աջ կողմէն: Այսպէս կը գտնենք Էջմիածնի Թ. 1214 ձեռագրին մէջ՝ 1118 Թուէն (Շող., Թ. 60. հմմտ. նաեւ Էջմիածնի Թ. 379 ձեռագիրը՝ ԺԳ. գարէն (Շող., Թ. 115): — 2. Գլուխը գրեթէ քառակուսի ձեւով՝ դրուած տողին մէջտեղը. քառակուսին ձախ կողմը վերէն փոքրիկ փշիկ մը, իսկ վարէն՝ քիչ մը երկար կոթ մը՝ որուն ծայրը հաստատուած է իբր պոչ՝ Թեք գիծ մը, սակաւ ինչ ալեծածան, ձախ կողմը աւելի կարճ, աջ կողմը կրկնակի երկար: Այսպէս կը գտնենք Էջմիածնի Թ. 1328 ձեռագրին մէջ՝ 1278 Թուէն (Շող., Թ. 95): — 3. Գրեթէ նոյն ձեւով, գլուխը ձուռ-ձեւ, ձախակողմը՝ վերէն փշիկով, պոչը աւելի ուղիղ, միայն գէպի աջ երկարած. ձախը չկայ: Այսպէս կը գտնենք Տաթեւ-Էջմիածնի Թ. 9/4139 ձեռագրին մէջ՝ 1267 Թուէն (Շող., Թ. 86): — 4. Ճշաիւ այս վերջին ձեւով, միայն առանց փշիկի, պոչը միայն աջ կողմ երկարած եւ ծայրը վեր բարձրացած. այսպէս ունինք Էջմիածնի Թ. 2679 ձեռագրին մէջ՝ 971 Թուէն (Շող., Թ. 36): — 5. Գլուխը արդի ձեւին պէս, պոչը միայն գէպի աջ եւ ալեծածան. պոչին ձախ ծայրը, տակէն՝ հաստ միջակէտ մը կպցուած. այսպէս կը գտնենք 1181

Թուով Աւետարանի մը յիշատակարանին մէջ, անցման երկաթագորով (Շիրակ, էջ 27)։ — 6. Բոլորովին արդի ձեւով ջ, պոչը վայրահակ կամ ուղիղ, արգէն 1198 Թուէն, Էջմիածնի Թ. 2606 ձեռագրին մէջ (Շող., Շող., Թ. 67) կամ քիչ յետոյ՝ 1215 Թուէն՝ Էջմիածնի Թ. 947 ձեռագրին մէջ (Շող., Թ. 76)։ Նոյնը իբր շղատառ՝ պոչը վեր ոլորած՝ Կոստանդնի 1271 Թուի դաշնագրին մէջ (Սիսուան, էջ 210)։

Արդի ձեռագրին մէջ տառս կը պահէ բոլորգրին ձեւը, միայն ամբողջապէս սառնական է, մինչդեռ բոլորգրի մէջ գլուխը սողէն քիչ մը վեր կ'երկարի։ Ձեռագրին մէջ գլուխը կրնայ ըլլալ զուա կըր, տառին մարմնին ձախակողմը բոլորովին կից կամ քիչ մը անջաւ, գլուխը մարմնին միացնող մազագիծը կամ քովէն, կամ տակէն, կամ մէջէն եւ կամ վրայէն առնելով, պոչն ալ ըստ օրինի բոլոր տարբերակներով։

ռ, ւ, ռ.

Երկաթագրի ոճը կը մնայ մինչեւ հիմայ։ Միակ տարբերութիւնը թեւին վրայ է, որ երկաթագրի մէջ երկրորդ սիւնին մէջտեղէն կը սկսի եւ բոլորգրին մէջ ալ դեռ երկար կը շաշունակէ այնպէս մնալ։

Առաջին անգամ 999 Թուին (տէս Կոգովտի ձեռագիրը) գիծը կ'իջնէ վար եւ տառը կը դառնայ ռ։ Այնուհետեւ երկու ձեւերը հաւասարապէս կը շարունակեն իրենց գոյութիւնը։

ըստ Շողակաթի գոնէ մինչեւ 1335 թիւը, բայց անշուշտ նաեւ աւելի ուշ, մինչեւ որ վերջապէս ու ձեւը կը յաղթանակէ, ինչպէս որ է մեր ապագրին, շղագրին եւ արդի ձեռագրին մէջ:

Արդի ձեռագրին մէջ քանի մը տարբերակներ ունի տառս. երկու սիւներու կապը կրնայ ըլլալ վերէն (ինչպէս ու տառին մէջ է), բայց աւելի յաճախ վարէն (ինչպէս ս տառին մէջ է): Ասկէ զատ՝ ոմանք երկու սիւները կը գրեն ուղիղ կամ օղակաւոր (իրը ֆրանս. ձեռագիր կրկնակ օ), Նոր-Ջուղայի հայոց մէջ տառս ունի անսովոր ձեւ մը, այն է երկրորդ սիւնը բաւական երկար, որով տառը կը ստանայ դ տառին ձեւը: Այս վերջինէն կը զանազանուի գլխաւորապէս անով՝ որ դ տառին թեւը վերէն կ'առնուի, իսկ ու գրինը՝ մէջտեղէն:

ս, ս, լւ.

Երկաթագրէն մինչեւ հիմայ կը մնայ նոյն ոճով, նմանապէս արգի ձեռագրին մէջ: Միայն թէ ոմանք առաջին սիւնը երկրորդէն երկար կը գրեն, ուրիշներ ալ իւրաքանչիւր սիւնը օղակաւոր կը ձեւացնեն, իրրեւ ֆրանս. երկու ձեռագիր օ:

վ, լ, լժ.

Գիտենք որ երկաթագրի մէջ շատ հին ժամանակէն երկու տեսակ վ կար. մէկը հաւասար սիւներով, երկրորդը լժ ձեւին պէս: Բուլորգրի մէջ ալ ժամանակ մը կը շարունակուի առաջին ձեւը. այսպէս տակաւին 1181 թուին,

անցման գրով Աւետարանի մը յիշատակարանին (Շիրակ, էջ 27) վ տառը կը գտնենք և ձեւով՝ Այնուհետեւ այս ձեւը կը խափանուի՝ տեղի տալով վ ձեւին, որու պոչը կրնայ ըլլալ վայրահակ կամ ուղիղ, երկու տեսակներն ալ միաժամանակ կը գտնենք Տուտէորդուոյն ձեռագրին մէջ՝ 1154 թուէն (Այրարատ, էջ 167)։

Արդի ձեռագրին մէջ պոչի օրէնքներուն համաձայն կը ստանայ բոլոր տարբերակները։ Տարբերակները շատ աւելի կը շատնան անով՝ որ կարճ սիւնը մեծ սիւնին միացնելու ժամանակ՝ մազագիծը նոյնպէս կը ստանայ զանազան ձեւեր՝ միացման օրէնքներուն համաձայն։

տ, ր, ռ.

Գիտենք որ երկաթագրի մէջ տառս ունէր երկու ձեւ՝ Տ եւ Ր. միջին մեսրոբեան գրութեան մէջ պահուեցաւ երկրորդ ձեւը, որ ուղիղ գծերով եղաւ Ր։ Ասոր մէջ տառին երեք սիւնները անհամաչափ էին, առաջինը եւ վերջինը ըլլալով կարճ, միջինը երկար։ Վայելագրութեան օրէնքը կը պահանջէր որ երեք սիւնները հաւասարուէին, ինչպէս եղաւ վերջապէս բոլորգրի մէջ, բայց մինչեւ այդ նկատելի են տատանումներ։ Այսպէս՝ Էջմիածնի Թ. 988 ձեռագրին մէջ՝ 1045 թուէն (Շող., Թ. 50) միջին մեսրոբեան 11 տող գրութեան մէջ կայ 15 տ, որոնցմէ 10 մ՝ ձեւով, մէկը՝ առաջին սիւնը երկար, վերջինը կարճ։ Տուտէորդուոյն ձեռագրին մէջ՝ 1154 թուէն (Այրարատ, էջ 167) կայ 12 տ, որոնցմէ հինգը

հաւասար սիւներով, իսկ եօթը հատը՝ առաջինը  
եւ երկրորդը հաւասար, երրորդը կարճ:

Երեք հաւասար սիւներով տ կը գտնենք  
առաջին անգամ 999 թուին, Կոգովտի ձեռա-  
գրին մէջ: Այս վիճակին հասնելէ յետոյ՝  
հիմայալ տառը կը սկսի ուրիշ ձեւափոխութեանց  
անթարկուիլ: Նախ՝ վերջին սիւնը կը սկսի կլորնալ  
եւ վար կախուիլ. յետոյ՝ առաջին սիւնին ծայրէն  
եւ երրորդ սիւնին վարի ծայրէն մէկ մէկ փշիկ  
կ'աւելնայ այսպէս՝ Էջմիածնի թ. 948 ձեռա-  
գրին մէջ, 1196 թուէն, (Շող., թ. 66) յե-  
տոյ առաջին եւ երրորդ սիւները կլորակ ձեւ  
կ'ընդունին, իբր թէ ունենայինք պառկած ∞  
մէջտեղէն ուղղահայեաց գիծ մը անցած, այսպէս  
Համբրոնացւոյն յիշատակութեան մէջ՝ 1197  
թուէն (Սիսուան, էջ 92), վերջապէս միջին  
սիւնը կը սկսի երկարելով վար կախուիլ, այսպէս  
արդէն 1201 թուին՝ Էջմիածնի թ. 3793 ձե-  
ռագրին մէջ (Շող., թ. 70) եւ աւելի յետոյ  
Գրիգոր Յաղմանեցւոյն յիշատակարանին մէջ՝  
1314 թուէն (Սիսական, էջ 137):

Ասկէ յառաջացաւ նօսրագիր ու ձեւը:

Տ տառի տարօրինակ ձեւ մը ունինք Սմբատ  
Գունդստապլի ստորագրութեան մէջ՝ 1241  
թուէն (Սիսուան, էջ 71), ուր երկճիւղ է տառը  
եւ գրեթէ Կ ձեւն ունի. ըսյց ըստ որում նոյն  
տեղը կայ նաեւ տ կանոնաւոր ձեւը, ուստի ասիկա  
քաջառիկ բան մը պէտք է համարել:

Եւրդի ձեռագրին մէջ տառս սովորաբար  
նօսրի ոճով է, ըսյց միջին սիւնը ուղղուած եւ

նօտրէն քիչ մը աւելի երկար. ասիկա երրորդ սիւնին կը միանայ միացման օրէնքի զանազան ձեւերով եւ ըստ այսմ կը կազմէ զանազան տարբերակներ. մազագիծը ձախէն առնուելով՝ երեմի ստորնական Ծ գրին ձեւը կը ստանայ, Ոմանք երրորդ սիւնին ծայրը ներս կ'ուրորեն եւ Դ տառը այն ժամանակ կը դառնայ գրեթէ Լթ (թ ստորնական ձեւով). ուրիշներ նախ կը գծեն երկար ւ ձեւ մը, ծայրը վայրահակ եւ յետոյ մէջտեղէն կ'իջեցնեն երկար եւ ուղղահայեաց սիւնը, կամ նաեւ նոյն վայրահակ ծայրէն մազագծով մը ետ դառնալով՝ կ'իջեցնեն նոյն սիւնը, որով տառը գրեթէ փ գրին ձեւը կ'ընդունի, Վերջապէս ոմանք կը գրեն բոլորգիւր սիւնին համեմատ, այսինքն հաւասար սիւներով, Այս վերջին ձեւը միայն կովկասի մէջ գործածական է եւ անշուշտ խոտելի, որովհետեւ ւ գրէն շատ տարբերութիւն չունի:

Արամեան ոճով տառս դարձած է Ց, որ ուրորուն գլխատառ Տ ձեւին փոքրացածն է եւ կազմուած է գիտամմը՝ նմանցնելու համար հայերէն գիրը լատին Ց տառին:

Ր, Է, Բ.

Երկաթագրէն մինչեւ հիմայ կը պահէ նոյն ոճը. արդի ձեռագրին մէջ միացման օրէնքներուն համեմատ կը ստանայ բոլոր տարբերակները, Արամեան ոճով դարձած է Է, որ բոլորգրին կարճ ձեւն է եւ կազմուած է դիտամմը՝ նմանցնելու համար հայերէն գիրը լատին Է տառին:

9, 7, 9.

Ինչպէս երկաթագիր 8 գրի երկու բոլորակները միանալով գարձան կիսալուսնաձեւ 3 կամ 5, այսպէս եղաւ նաեւ 8 տառը, որ ամէն կերպով անոր կը նմանէր: Միայն որովհետեւ վերջինիս գլուխը փակ էր, ուստի հոս ալ կադմուեցաւ: Կլորակ գլխով ձեւ մը, իբր 9. այսպէս կը գտնենք Երեւոյթի 1028 թուի արձանագրութեան մէջ (Շող., Թ. 19), երեք անգամ: Աւելի յետոյ անշուշտ միջին գիծը ինկաւ, ճիշտ ինչպէս 5 ձեւին մէջ. ասոր օրինակը դեռ չէ տեսնուած որեւէ տեղ. բայց գրեթէ նոյնն է 9 ձեւը, որ կը գտնենք գործածուած Տեկորի 964 թուի խաչքարի արձանագրութեան մէջ (Շող., Թ. 15): Այս ձեւն է ահա որ կանոնաւորուելով եղաւ ց, ինչպէս կը գտնենք առաջին անգամ Կողովարի 999 թուի ձեռագրին մէջ, միայն թէ հոս տառին պոչը բաւական երկար է. գրիչը երբեմն ալ կը գրէ 9 եւ ծայրը նորէն ւ ձեւով գիծ մ'ալ կ'աւելցնէ. Տուտեորդուոյն ձեռագրին մէջ՝ 1154 թուէն (Այրարատ, էջ 167) տառս գրեթէ 9 ձեւն ունի: Այս ց ձեւը կազմուելէ յետոյ համառօտութեան համար երկու սիւններուն վերի կապը կը սկսի ջնջուել եւ տառը կը դառնայ Կ. այսպէս կը գտնենք մէկ անգամ արդէն 999 թուին՝ Կողովարի նոյն ձեռագրին մէջ, եւ իբրեւ սովորական ձեւ՝ Սարգիս Սեւանեցուոյն ձեռագրին մէջ՝ 1041 թուէն (Շիրակ, էջ 50) եւ Էջմիածնի Թ. 1214 ձեռագրին մէջ՝ 1118 թուէն

(Շող., Թ. 60) եւն: Ասկէ կը յառաջանայ շղագիր չ ձեւը, որ նաեւ անցած է արդի ձեռագրին, ընդունելով հոս պոչի օրէնքին համաձայն՝ զանազան տարբերակներ, մինչեւ անգամ վերէն ձախ ոլորուած ձեւ մը՝ որ ճշտիւ նման է ասոր. 6 տառին:

ւ. - , հ.

Յառաջացած է հին երկաթագիր Ի ձեւէն. ասկէ բոլորգրին անցնելու համար նախապէս սկսան սիւնը կարճ գրել. եւ որովհետեւ բաւական նուրբ գործ էր կարճ սիւնին ճիշտ մէջտեղը գանելով՝ անկէ հորիզոնական գիծ մը քաշել, ուստի ինքնաբերաբար երբեմն սկսան գիծը վաւրէն առնել: Այսպէս յառաջացաւ ւ ձեւը: Ասոր հնագոյն վկայութիւնն ունինք կոգովտի 999 Թուի ձեռագրին մէջ, Բայց այլուր, աւելի յետոյ ալ, դեռ երկար կը շարունակուի ւ ձեւը. այսպէս Երերոյքի 1028 Թուի արձանագրութեան մէջ (որ հետաքրքրական բոլորգիր ձեւերով է) ասոս դեռ Ի ձեւն ունի եւ ամբողջական է (Շող., Թ. 19). բայց նոյն իսկ շատ կարճ ւ ձեւը կը գանենք մինչեւ 1335 Թիւր (Շող., Թ. 133): Այլուր երկու ձեւերն ալ միասին կը գործածուին. այսպէս Էջմիածնի Թ. 2684 ձեռագրի բոլորգիր յիշատակարանին մէջ՝ որ 1159 Թուէն է, կայ երեք ւ, որոնցմէ երկուքը պարզապէս ւ ձեւով է, իսկ մէկը այնպէս կարճ է առկէն, որ կրնանք ըսել Թէ արգէն ւ ձեւն ունի: Ամբողջապէս զուտ ւ ձեւը կը գտնենք 1266 Թուին՝ Էջմիածնի Թ. 823 ձեռագրին մէջ (Շող.,

թ. 84), որ յեառյ ընդհանուր կը դառնայ եւ կ'անցնի նօտագրին, շղագրին եւ արդի ձեռագրին: Արջինիս մէջ սովորաբար նօտրի ձեւով է, բայց ռմանք կրնան պոչը վար իջեցնել իբր  $\gamma$ , ուրիշներ կ'իսակըրակ շինել՝ իբր  $\sim$  եւ վերջապէս ռմանք ալ կ'ըրակ՝ գրեթէ  $\epsilon$  ձեւով:

Կ. 4. Նի.

Երկաթագրէն մինչեւ հիմայ գրեթէ նոյն ոճով պահուած է: Այս տառը միակն է որ երկաթագրի մէջ հպատակած չէ տառերու բերանաբացութեան օրէնքին. այսպէս մինչդեռ  $B > P$ ,  $\theta > \rho$ ,  $P > r$ ,  $O > n$ , ընդհակառակը  $\phi >$  գլխագիր երկաթագիր  $\phi$ , միջին երկ.  $\phi$ , փոքր երկ.  $\phi$ , անցման գիր  $\phi$ : Բոլորգրի մէջ է միայն որ այս տառին ալ երկու բերանները բացուած են: Բացումը կատարուած է նախ վերէն եւ տառը ստացած է  $\psi$  ձեւը. այսպէս կը գտնենք առաջին անգամ 999 թուին՝ Կոգովտի ձեռագրին մէջ կամ քիչ յետոյ 1118 թուին՝ Էջմիածնի թ. 1214 ձեռագրին մէջ (Շող., թ. 60) եւ 1190 թուին՝ Էջմիածնի թ. 3795 ձեռագրին մէջ (Շող., թ. 65): Այնուհետեւ ղանազանութեան համար՝ բացման ձեւը փոխուելով՝ ձախ կողմը եղած է վերէն, աջ կողմը վարէն. ասիկա է մեր արդի բոլորգիր փ ձեւը, որուն առաջին վկայութիւնը կը գտնենք 971 թուէն՝ Էջմիածնի թ. 2679 ձեռագրին մէջ (Շող., թ. 36). Ժամանակ մը երկու ձեւերը միջման մէջ էին եւ

հաւասարապէս գործածական. այսպէս 1118  
թուէն՝ Էջմիածնի թ. 1214 ձեռագրին մէջ  
(Շող., թ. 60) երկու փ կայ, մէկը առաջին տե-  
սակէն, միւսը երկրորդ տեսակէն. 1196 թուէն՝  
Էջմիածնի թ. 948 ձեռագրին մէջ (Շող., թ. 66)  
երեք փ կայ, երկուքը առաջին տեսակէն, երրորդը  
երկրորդ տեսակէն, Մրցումը կը շարունակուի  
մինչեւ 1283 թիւը. վերջին անգամ՝ կը պատա-  
հանայ այս թուին Էջմիածնի թ. 1563 ձեռագրին  
մէջ (Շող., թ. 99), որմէ յետոյ այլ եւս առա-  
ջին ձեւը կը վերնայ եւ կը յաղթանակէ փ ձեւը:

Արդի ձեռագրին մէջ տառս բոլորգրի  
ոճով է, բայց ունի զանազան տարբերակներ. այս-  
պէս ոմանք կը գրեն նախ և ձեւ մը, որուն մէջ-  
տեղէն՝ յետոյ վերէն վար ուղիղ գիծ մը կ'ի-  
ջեցնեն, Ուրիշներ երկու թեւերը կ'որակներու  
կը վերածեն, որով տառս գրեթէ օ/օ ձեւը  
կ'ընդունի: Առաջին թեւը սիւնագլխին եւ սիւնը  
երկրորդ թեւին միացնող մազագծերն ալ կրնան  
աջէն կամ ձախէն առնուիլ, որով կը ստեղծուին  
նոր զանազանութիւններ՝ ասոնց մէջ ամենէն նկա-  
տելին է այն զարդարուն ձեւը՝ որուն մէջ տա-  
ռին առաջին թեւը եղած է օ, միջին սիւնը  
վերջին թեւը օ, այնպէս որ ամբողջը եղած է  
գրեթէ օ/օ:

բ. + ք.

Երկաթագրէն մինչեւ բոլորգիր նոյն ոճը  
պահուած է: Երեւոյթի 1028 թուի արձանա-  
գրութեան մէջ, որ բոլորգիր է, ունի տարօրի-

նակ ձեւ մը՝ իբր Գ, որ այլուր չէ գործածուած կամ եթէ գործածուած ալ է, շուտով խափանուած է: Բոլորգիր ք ձեւին մէջ համառոտութեան համար յետոյ գլխի կըրակը յապաւուելով եւ թեւին ձախակողմեան կոթը կըճատուելով՝ յառաջացաւ + ձեւը, որ նախապէս բոլորգիր կը համարուէր եւ յետոյ միայն յատկացուեցաւ նօտրագրին: Այս ձեւը կը գտնենք առաջին անգամ 1435 թուին Էջմիածնի թ. 1380 Բ-ԼԵԴԷ՛՛՛՛ ձեռագրին մէջ (Շող., թ. 136), ուր կայ 11 հատ ք, որոնցմէ մէկը միայն + ձեւով, միւսները ք, Ասկէ քիչ առաջ՝ 1323 թուին, Էջմիածնի թ. 3793 ձեռագրին մէջ (Շող., թ. 126), մինչեւ անգամ նօտրագիր ըլլալով հանդերձ, չենք գտներ + ձեւը, այլ ք (երեք անգամ): Նոյնպէս 1346 թուին՝ Էջմիածնի թ. 3793 Նօր-ԷԷ՛՛՛ ձեռագրին մէջ (Շող., թ. 134) չկայ +, այլ միշտ ք. այսպէս եւ 1348 թուի ձեռագրի մը մէջ (Շող., թ. 135):

Այսպէսով մէկ կողմէ Լըբրոյքի տարօրինակ ձեւը եւ միւս կողմէ նօտրագրի + ձեւը՝ գրեթէ յոլորովին նման դուրս եկած են հին յունարէնի Գ եւ X ձեւերուն. բայց այս նմանութիւնը զուտ պատահական է:

Արդի ձեռագրին մէջ տառս նօտր + ձեւէն վը ծագի. բայց այն տարբերութեամբ՝ որ մինչդեռ նօտրագրի մէջ միջնական է տառս, հոս դարձած է ամբողջական: Ասկէ զատ կրնայ վերէն կամ վարէն եւ կամ թէ՛ վերէն ու թէ՛ վարէն մաղագիծ ընդունիլ՝ աջ կողմէն կամ ձախ

կողմէն. որով կրնայ կազմել զանազան տարբերակ-  
ներ. մինչեւ կը ստանայ ֆրանս. ձեռագիր  
ձեւը: Այս պատճառաւ է ահա որ արամեան  
ոճով տառիս համար հնարուած է f ձեւը, ճշտիւ  
լատին f տառին նմանութեամբ:

o, o, o.

Երկաթագրի ժամանակ չկար տառս: Այս  
հնչումը տալու համար հները կը գրէին o, որմէ  
տարբեր էր -- = au (իր ~~---~~): Աւելի յետոյ  
վերջինս փոխելով իր հնչումը՝ դարձաւ e, որով  
ներկու հնչումները նոյնացան: Այս ձայնափոխու-  
թիւնը անշուշտ Ժ. Գարէն հին է, որուն իբր ա-  
պացոյց կը գտնենք Ժ. Գարէնի գրչութիւնը (փխ. փա-  
ռաւ. ք) Անիի Ապուղամրենց Ս. Գրիգոր եկեղեց-  
ւոյն արձանագրութեան մէջ (Շող. Թ. 17):  
Բայց պէտք է կարծել որ Հայաստանի շատ կող-  
մերը, ինչպէս հիմայ ալ, ո ստացած էր o-ն երկ-  
բարբառային հնչումը, որով ո եւ o տարբեր  
ձայներ ունէին: Այս պատճառաւ է ահա որ հայ-  
երը o ձայնը գրելու համար չգրին ո, այլ ստի-  
պուեցան գիմել օտար աղբիւրի եւ յուսարէնէ  
առին o ձեւը: Այս գրին առաջին անգամ կը  
պատահինք 1214 թուին. հմմտ. Ցաշեան, Ցուց-  
705 ա գրուած յիշատակարանին մէջ պաշտօն-  
բառը: Ասկէ քիչ ժամանակ յետոյ 1294 թուէն  
չեթում պատմիչի բժշկարանին մէջ քանիցս կայ  
o, թէեւ ոչ բոլորովին կլորակ, այլ կոթաւոր  
ձեւով մը, իբր o (տե՛ս Սիսուան, էջ 338):

Փ. Ֆ. Յ.

Երկաթագրի ժամանակ չկար տառս, որով հետեւ հայերը այս ձայնը չէին կարող արտաբերել: Շատ յետոյ յառաջանալով լեզուին մէջ մասամբ բուն հայերէնի ձայնաբանական օրէնքներով (օր Էւֆէ) եւ մասամբ օտար լեզուներէ փոխառութեամբ, պէտք եղաւ ունենալ առանձին տառ եւ այն ժամանակ փոխ առին յն. փ ձեւը, որ դարձաւ Փ: Առաջին անգամ առուսկը գտնեմ գործածուած այս ձեւով՝ 1270 թուականին, Հեթումի դուստր Ֆիփի իշխանուհւոյն անուան մէջ (Սիսուան, էջ 145): Ասկէ աարի մը յետոյ է կոստանդնի գաշնագիրը (Սիսուան, էջ 210), որ գլուխը քիչ մ'ալ վարէն առնուելով՝ տառս ստացած է գ տառին արդի ձեւագրին ձեւը:

Արդի ձեւագրին մէջ գրեթէ նոսրի ձեւով է. բայց կարերի է նաեւ սիւնը կլոր գլխէն քիչ մը աւելի վեր երկսորել եւ ծայրն ալ մազագիծ մը աւելցնել:

Կովկասի մէջ շատեր կը գրեն ձեւագիր գլխատառ զք ձեւով, իսկ ք տառէն կը զանազանեն միայն անով՝ որ իբր Փ՝ գլուխը մազագծով մը միացած է միջին թեւին, իսկ իբր ք՝ միացում չկայ եւ թեւը անջատ կը մնայ:

Այս բոլորէն յետոյ իբրեւ ընդհանուր դիտողութիւն պէտք է ըսել, որ ինչպէս գրի աւսակներու, նմանապէս անոնցմէ իւրաքանչիւրին զանազան ձեւերուն համար տրուած թուականները

ընդունելու ենք իբրեւ մօտաւոր թուական եւ  
 համարելու ենք միշտ աւելի ուշ: Այդ թուա-  
 կանները մենք քաղած ենք Ալիշանի տեղագրու-  
 թեանց եւ Շողակաթի նմանահանութիւններէն,  
 որոնք ինչ քան ալ հարուստ ըլլան, չէին կրնար  
 սակայն պարունակել բոլոր ձեռագիրներուն մոյշ-  
 ները: Ասոր համար մենք այդ թուականները  
 իբրեւ առաջնորդ չենք բռնած՝ գրերու զարգաց-  
 ման ընթացքը պարզելու համար, այլ ձեւերու  
 համեմատութիւնը: Այս պատճառաւ շատ անգամ  
 պատահեցանք այնպիսի ձեւերու՝ որոնց թէեւ  
 աւելի ուշ կը հանդիպինք ձեռագիրներու մէջ,  
 բայց զարգացման օրէնքներու համեմատ աւելի  
 հին են քան ուրիշ ձեւ մը, որ ըստ բախտի պա-  
 հուած է աւելի հին ձեռագրի մը մէջ: Իբր օրի-  
 նակ յիշենք փ տառին առաջին ձեւը (փ)՝ որուն  
 գործածութեան թուականն է 999 թուէն  
 մինչեւ 1183, իսկ երկրորդ ձեւը (փ), որ կը գոր-  
 ծածուի 971էն մինչեւ այսօր: Երեւութապէս ա-  
 սոնց մէջ աւելի հին է փ, բայց ըստ զարգացման  
 պատմութեան՝ հնագոյն ձեւը առաջինն է, որ եւ  
 հետեւաբար պէտք է դրուի նախ քան 971 թիւը:  
 Վերջացնելու համար հայերէն գրերու զար-  
 գացման ընդհանուր պատմութիւնը, յիշենք  
 նաեւ այն նորագոյն փոփոխութիւնը՝ որ ոմանք  
 փորձեցին մտցնել անոնց մէջ: Ամենուն յայտնի  
 է որ բոլորգրի մէջ կան քանի մը տառեր, որոնք  
 չափազանց նման են իրարու եւ փոքր գծիկներով  
 միայն կը տարբերին. այսպէս են՝ ա — տ, գ — դ,  
 զ — ղ, ո — ս: Օտար բառերու ընթերցանու-

Թեան, մանաւանդ տպագրական փորձերու ժա-  
մանակ շատ դժուար է ղանազանել այս տառերը,  
ուստի մտածեցին դարման մը տանիլ: Մուրճ  
Թերթի խմբագիր Ա. Արասխանեան 1898—  
1899 թուին հնարեց նոր տառեր. դ դարձուց  
Չ, ղ դարձուց Ղ, իսկ տ տառին մէջ՝ միջին  
սիւնը երկարելով գէպի վար՝ դարձուց ր: Մուր-  
ճի այս նորմուծութիւնը շարունակուեցաւ քանի  
մը տարի, ըստ Ետոյ՝ Թերթին հետ խափանուե-  
ցաւ: Նոյն խնդրով զբաղեր է նաեւ Վենետիկի  
Միթարեան միաբանութիւնը. բայց փոխանակ  
Մուրճի խմբագրութեան նման նորահնար եւ  
անհամաչափ ձեւեր հնարելու, աշխատեր է օգ-  
տուիլ արդէն դործածական գարձած հայ ձեւե-  
րէն եւ գ ձեւին տեղ գրեր է զ, զ ձեւին տեղ  
զ, իսկ տ տառին միջին գիծը աւելի ընդհանր  
առեր: Ո եւ ս գրերը կը մնան անփոփոխ: Այս  
շատ գեղեցիկ ձեւափոխութիւնը դժբախտաբար  
ամենուրեք տարածուած չէ:

դրուի տարբեր թուական գասի համապատասխան տառը: Այսուքենը կը բաժնուի չորս գասի, իւրաքանչիւրը 9 տառէ բաղկացած. ~~գ~~ (որոնց մէջ կը մտնեն ~~ա, բ, գ, դ, ե, շ, է, ը, ր~~ տառերը), ~~դ~~ (այն է զ—ը), ~~է~~ (այն է ճ—ջ) եւ ~~ը~~ (այն է ~~ւ~~—ւ): Փոխարինագրի մէջ միաւորի տեղ կը դրուի հաղարաւոր, տասնաւորի տեղ հարիւրաւոր, հարիւրաւորի տեղ տասնաւոր եւ հազարաւորի տեղ միաւոր:

Հոս կը դնեմ ամբողջ ծածկագիր այսուքենը իւրաքանչիւր տառի տակ դնելով իր արժէքը նոտրագիր:

|   |   |   |   |   |   |   |   |   |   |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ա | բ | գ | դ | ե | զ | է | ը | թ | ժ |
| — | — | լ | ռ | հ | ճ | — | ժ | + | ճ |
| ի | լ | խ | ծ | կ | հ | ձ | ղ | ճ | մ |
| հ | յ | ն | շ | — | շ | ղ | ը | ժ | ի |
| յ | ն | շ | ո | չ | պ | ը | ռ | ս | վ |
| ւ | ի | ծ | հ | հ | յ | շ | — | թ | ժ |
|   |   |   |   |   |   |   |   |   |   |
| տ | ր | ց | ւ | փ | ք |   |   |   |   |
| դ | ե | շ | ի | ւ | ր |   |   |   |   |

Ծածկագրի այսպիսի օրինակ մը ունինք Տաշեան, Յուցակ, էջ 50ա, որ հետեւեալն է.

ց. բ. մ. ի. խ. կ. ի. ո. ե. ո. է. ի.  
 ո. է. կ. ե. բ.

որ վերլուծելով՝ կը կարդամ.

ՁԱՆԴԱՆ ԻՐԱՆԱՆԻՍ.

Կրիչը սխալած է երեք տեղ. պէտք է հասկնալ «ՋՍԻՄԵՆ՝ կրաւաւորս» եւ այս վերլուծումը ճիշտ է, որովհետեւ գիտենք ուրիշ յիշատակարաններէ՝ որ նոյն ձեռագրի գրիչն է ՍԻՄԵՆ կրաւնաւոր (տե՛ս անգ, էջ 49բ)։

Ինչպէս կը տեսնուի, ծածկագրի այս ձեւին մէջ տառերու յոփսանակութիւնը դասէ դաս՝ եղած է գիրկընդխառն։ Բայց կրնայ ենթադրուիլ որ յոփսանակութիւնը ուրիշ անսակ ալ եղած ըլլայ. այսպէս՝ միաւորի տեղ տասնաւոր կամ հարիւրաւոր, տասնաւորի տեղ միաւոր կամ հազարաւոր, հարիւրաւորի տեղ տասնաւոր կամ միաւոր եւն։ Բայց այս ձեւերուն հանդիպած չըլլալով՝ չենք ուզեր օրինակներ ալ տալ անոնց մասին։ Բայց աւելորդ չեմ կարծեր յիշել յոփսարինագրի զարմանալի օրինակ մը, որ հրատարակուած է ՀԱՆՈՒՅՈՒՆ, 1921, էջ 41, այսպէս. «Չեռամբ թերավարժ գրչի Ի. Բ. Գ. Ժ. Ի. Բ. Դ. Զ. Ակինեան այս ծածկագիրը իրաւամբ կը կարգայ «Մինասի» բա՛ց անկարելի էր կարգալ, եթէ այլուստ նոյն անունը ծանօթ չըլլար (հմմտ. անգ՝ էջ 29 եւ 40)։ Իրօք ալ թէեւ ասոր մէջ կը գտնենք երեք անգամ միաւորի տեղ տասնաւոր եւ տասնաւորի տեղ միաւոր ( $\text{ա} > \text{Ժ}$ ,  $\text{ի} > \text{Բ}$ ), բայց յետոյ մէկ մէկ անգամ հարիւրաւորի տեղ տասնաւոր ( $\text{մ} > \text{ի}$ ), հարիւրաւորի տեղ միաւոր ( $\text{ն} > \text{դ}$ ), հազարաւորի տեղ տասնաւոր ( $\text{ս} > \text{ի}$ )։ Արդեօք գրիչը դիտմամբ ըրած է այսպիսի խառնակ փոխանակութիւններ եւ այն ժամանակ ինչքան դժուար պիտի ըլլար ընթերցումը։

Գ. - - - - - Գ. Կը կոչեմ ծածկագրի այն տե-  
սակը, ուր իւրաքանչիւր տառ իր թուական ար-  
ժէքի համեմատ կը վերածուի զանազան մասերու,  
այդ մասերը կը նշանակուին իրենց համարժէք  
տառերով եւ ընթերցողը գումարելով զանոնք՝  
կը վերածէ ամուղջի: Այսպէս՝ ենթադրենք թէ  
կ'ուզենք գրել Դ. այս տառին թուական արժէքն  
է 4, որ իր մասերուն վերածելով կ'ըլլայ  $2 + 2$   
կամ  $3 + 1$  եւ կամ  $1 + 3$ . ըստ այսմ ալ կրնանք  
այս տառին համար իբրեւ ծածկագիր գրել ԲԲ  
կամ Գ- եւ կամ -Գ, որոնք միեւնոյն արժէքն ու-  
նին: Այս բացատրութենէն կ'երեւայ որ միեւնոյն  
տառը կրնայ զանազան ձեւերով գրուիլ եւ որքան  
մեծ ըլլայ առին թուական արժէքը, այնքան ալ  
մեծ կ'ըլլայ անոր ծածկագիր ձեւերու թիւը: Ա  
(1) տառը անբաժանական ըլլալով՝ բնականա-  
բար կարելի չէ ծածկագրել գումարագրի մէջ.  
— Բ (2) տառը կարելի է միայն ծածկագրել --  
ձեւով. — Գ (3) տառը կ'ըլլայ --- կամ -Բ եւ  
կամ Բ-. — Դ տառը կրնայ ըլլայ ----, --Բ,  
-Բ-, -Գ, Գ-, Բ--: Եւ այսպէս միւսներն ալ: Որ-  
պէս զի ծածկագրուած իւրաքանչիւր տառ շատ  
ընդարձակ տեղ չբռնէ, միանգամայն եւ վերծա-  
նութիւնը աւելի Դ- - - - - ըլլայ, ընդհանրապէս  
ծածկագրողները կը կազմեն կարճ խմբեր եւ  
իւրաքանչիւր տառի մասերը կ'աշխատին առնու-  
միեւնոյն դասէն, այսպէս՝ միաւորները միաւոր-  
ներէն (արդէն այս դասը ուրիշ կերպով կարելի  
ալ չէր), տասնաւորները տասնաւորներէն, հա-  
րիւրաւորները հարիւրաւորներէն եւ հազարա-

ւորները հազարաւորներէն: Յաճախ օգնութեան կ'առնուին նաեւ բաղմապատկիչներ. երբ հարիւրաւորէ մը կամ հազարաւորէ մը առաջ կայ միաւոր, այս միաւորը անշուշտ բաղմապատկիչ է: Վերջապէս ծածկագրին խաբուսիկ ձեւ մը տալու համար՝ երբեմն այս կամ այն տառը առանց ծածկագրելու՝ կը թողուն իր բնական ձեւով: Գումարագրի ընդարձակ օրինակ մը ունինք Տաշեանի Ցուցակին մէջ, էջ 997-ը, որ հետեւեալն է.

Զ. զա. ուս. եեժ. ժեեժ. միճճճ. գճյ.  
լիիժժ. սս. ա. մճճ. ժեե. մմ. գճմճ. սսո. բբ.  
ժժ. գճ. ճճճ. ժժ. մճմ. գբ. ա. եեժ. ոսո.  
վս. գա. ւ. ա. լի. գգ. խժժի. բբա. ձ. գճ.  
ժեե. ւ. սոս. ա. տո. տր. ա. մճ. զճ. ոսվո.  
գե. ե. նն:


որ վերլուծելով կը կարգամ

Ջէտիլ Պողաանին որդին յիշեա ի Տր  
եւ Ած զձե՛յ յիւր արքայութենն:

Ասոր մէջ առանց ծածկագրելու են սկիզբէն Զ նախդիրը, մէջերէն երկու անգամ - (բայց երրորդ անգամ դրած է ոսվո = 1000 + 2000 + 3000 + 1000 = 7000, որ է -), իսկ վերջէն էւ: Միանգայն գրիչը սխալած է գրելով յ, փոխանակ շ, որով եղած է յի՛յ՝ փոխանակ յիւ:

Նման օրինակ մը ունինք ՀԱ, 1921, էջ 29 եւ 40, հետեւեալ ձեւով.





Արուանձտեան կ'ըսէ թէ այբուբենը փոխանակ չորսի, կարելի է բաժնել նաեւ 3, 5 դասի կամ ինչքան որ ուղենք. եւ ըստ այնմ փոխել համարիչի ու յայտարարի կէտերուն թիւը. բայց այս տեսակ կոտորակագրերու համար օրինակ չկայ:

ՇԵՆՔԻԷ կը կոչեմ ծածկագրի այն տեսակը՝ որ կը կազմուի հայերէն տառերուն շրջուած դիրք մը տալով: Շրջագրի օրինակ մը գտնուած է Սեւանի մէջ՝ խաչքարի մը վրայ, զոր Այս վալտ գերմանացւոյն օրինակութեամբ հրատարակեր է Ալիշան (Սիսական, էջ 79): Այս գրին ճիշտ օրինակը ունենալու համար կարելի է թափանցիկ թուղթի մը վրայ գրել երկաթագիր այբուբենը եւ թուղթը գլխիվայր շրջելէ յետոյ՝ ետեւի կողմէն (կամ որ նոյն է՝ հայելիի մը մէջ) դիտել տառերը: Այսպէսով Գ տառը կը դառնայ Ժ, Բ տառը կը դառնայ Ե:

Ե տառը կը դառնայ Բ եւն: (Ամբողջ այբուբենը տե՛ս ալ լաձեւ այբուբեններու տախտակին մէջ<sup>1</sup>):

1 Երջագիր արձանագրութեան վրայ երկար խօսած է Գայուստ Ցեր-Մկրտչեան, Ըղակաթ, էջ 137—141: Սեւանի մէջ որոնելով Այեւալուի խաչքարը, գտեր եւ օտուգեր է որ վրան կայ 9 առջ երկաթագիր արձանագրութիւն, որ հեռեւեալն է. «Սա է քր|կիշ աշխար|հի եւ յոյո: հաւաաացեւց| (որք երկրպա|գէք զկպա քհյ աշ|աւթ օյիշցէք) Զքր կազմաշ| Պղէո: Ասոր մէջ փակագծեալ մասը պարզ յըջագիր է, այսինքն տառերը դարձած են ալէն ձախ: Յօգուածագիրը կը ցուցնէ որ Այեւալու օրինակած է Պայն մէկ առջը, որ է վեցերորդը, մինչդեռ յըջագրով են նաեւ 5րդ եւ 7րդ առջերը: Ասկէ զատ Այեւալու իր արձանագրած առջը գլխիվայր յըջեր է, որով յաւաջացեր է յըջագիր գրութիւնը: Մենք այլուր խօսած ենք ալէն ձախ գրութեան վրայ, իրրեւ ծածկագրի նման բան մը կամ քմահաճոյք: Գ. Ցեր-Մկրտչեան կը կարծէ որ առիկա հին Դանիէլեան գրութեան շարունակութիւնն ըլլայ, որ իբր թէ ասորական աճով ալէն ձախ էր եւ «բայրովին անհաւանական կը համարի որ յիշեալ գրութիւնը» որեւէ գրչութաշ ըլլայ, որովհետեւ, նախ իր անապահաւոր ձեռագիրներու մէջ ալէն ձախ գրելու, այսպիսի ուրիշ փորձ չէ տեսեր, եւ երկրորդ՝ որ Կարապետ քահանան եթէ կ'ուզէր որ յիշէին գիւնքը, ինչո՞ւ ծածկագրով պիտի գրէր իր անունը: Մենք ասոր իբր պատասխան մասնանիշ կ'ընենք Սկեւալ վանոց մասնաւոր փի արձանագրութիւնը, որ նոյնպէս ալէն ձախ է. երկրորդ՝ եթէ տարօրինակ գտնենք Կարապետ քահանայի յիշատակութեան ծածկագիր ըլլալը, տարօրինակ եւ աւելի տարօրինակ պիտի գտնենք նաեւ բոլոր ծածկագրերը, որոնք գեւ աւելի դժուար վերծանելի են եւ որոնց մէջ միշտ մէկը իր անունը կը գնէ եւ կը խնդրէ որ յիշեն: Այս բարբի բացարձակութիւնն այն է որ գրիչները ծածկագիրը հասկնալու շտի հմուտ մարդը կը համարին ուսումնական եւ իբր այն՝ վրան վառահութիւն ունին: Հնեալ տնունն ու յիշատակը եղծանողները միշտ ազատներն են, որոնց համար ալ գրուած է ծածկագիրը:

Մենք մեր ցուցակին մէջ յըջագիր գրիչը Այեւալուի ձեւով բայց ուղղը կրնայ թուղթը գլխիվայր յըջել եւ այն ժամանակ կ'ունենայ պարզ ալէն ձախ գարձած այբուբեն:

Այլաձեւ այբուբեններէն առաջինը կը կոչուի -յ-ւ-է-ւ-դ-ւ-։ ասիկա հանուած է Եւգոկիա գանուած ձեռագրէ մը, որ կը պատկանէր Դաւիթ Շիրինեանի։ Այս անձը նոյն գրերը օրինակելով թղթի մը վրայ՝ ուղարկած է Սեբաստիա՝ իր եղբօր Տիգրան Շիրինեանի։ Վերջինէս սառնալով լի Գաբիկեան 1908ին, ղրկած էր ինձ 1911 թուականին։ Թղթին վրայ գրուած է եղեր այս մակագրութիւնը. «Հայոց Սենեքերիմ թագաւորին հին մատեաններէն օրինակուած է, նոյն թուղթը կը պարունակէր նաեւ Հայոց հին նշանագրերը եւ «Հայոց պատիւով բառերն», իսկ ծածկագրի համար գրուած է այս վերնագիրը. «Այս է Հայոց հին ազանագիրն»։ Ասկէ աւելի տեղեկութիւն չունինք։

Երկրորդ այլաձեւ այբուբենը հանուած է Սեբաստիա գանուած ձեռագրէ մը՝ որ կը պատկանէր Սեբաստացի Նազարէթ Ղորղոռեանի։ Չեռագիրը գրուած է ՌՃԿԲ = 1713 թուին եւ է հեղինակութիւն կամ ծաղկաքաղ «անպիաան եւ անարժան ծառայ ձեր մեղապարտ Սարտիրոս սուտանուն Սեբաստացւոյ»։ Առաջին մասն է ըստկարան, երկրորդ մասն է պայթարնամա, ուր կայ եւ պողպատ շինելու, թրի ու դանակի մուխ տալու եւ ոսկիի ու արծաթի բաժինը։ Յառաջաբանին մէջ յիշուած է թէ Հայոց Հեթում թագաւորը 18.000 զօրքով գացեր է թշնամիին վրայ. յետոյ Պաղտատի Նասըր խալիֆային մօտ, որու քով գաեր է Ստեփանոս անուն իմաստուն մէկը, եւ ասոր թարգմանել տալով յիշեալ գրքերը՝

բերեր է Հայաստան, Ձեռագրին վերջի մասը պակաս է: Թէ բժշկարանին եւ Թէ պայթարնա-մային մէջ ինչ ինչ բառեր գրուած էին տեսակ մը ծածկագրով, տգէտներու ձեռքով չարաչար գործածուած ենէ փրկելու նպատակով: Ահա օրի-նակ մը.

“Եւ զինչ ճասատանի (“մարմիններ”) որ չոր լինի կակղցնել այս է. (չարք մը Թուելէ յետոյ)... Թէ ΔVεϛ6 չոր գայ, հալէ եւ զբազ-նեցն միւրն ի վրայ ձգէ, կակղնայ”:

Այս կարգի ծածկագրուած բառերու ընդ-հանուր Թիւն էր 24: Թղթակից բարեկամս Պր. Գաբրիկեան, 1905 Թուին ձեռք անցունելով յի-շեալ ձեռագիրը, ամբողջապէս կ’ընթարինակէ: Սեփականատէրը այնուհետեւ կը մեկնի Ամերի-կա՝ հետը տանելով նաեւ բնագիրը: Պր. Գա-բրիկեան կ’աշխատի վերլուծել յիշեալ բառերը եւ մակարեւելով նախադասութեանց իմաստէն՝ քանի մը բառ կը մեկնէ. այնուհետեւ կը բա-ցուին միւս բառերն ալ: Բայց ծածկագրուած բառերու սահմանափակ Թիւը բաւական չէր ամբողջ այբուբենը երեւան հանելու: Այնու-հետեւ կը գիմէ վեցհազարեակի հմուտ անձե-րու, ինչպէս նաեւ քանի մը վարպետ ոսկերիչ-ներու, յատկապէս հրացանագործ Ոսկեհան եւ Գէորգ Էկեահան անուն անձերուն: Ասոնք յայտներ են Թէ յիշեալ գրերը կը կոչուին Աշ-ն-գիւր եւ քանի մը հատին ձեւն ալ տուեր են, որ ճշտիւ համապատասխանէ եղբր բժշկարանի այբուբենին: Վերջինը յայտներ է նաեւ որ իր

Հայրն ու պապը կը գործածէին յիշեալ գրերը իբրեւ ծածկագիր եւ թէ իրենց քով կը մնան դեռ այգ գրութիւններէն: Բայց որովհետեւ անոնք իրենց վարպետներուն երգում տուած են եզեր, ուստի ծածկագրին գաղտնիքը երեւան չեն հաներ:

Պր. Գարիկեան կը յայտնէր նաեւ որ հա-  
կառակ իր ջանքերուն, ուրիշ որեւէ բժշկարանի  
կամ ուրիշ ձեռագրի մէջ, նմանօրինակ կամ  
այլ ձեւի ծածկագիր չէ տեսած: Ծիայն տեղ մը  
պատահած է Ղեւի- բառին՝ գրուած ծածկա-  
գրով. այսպէս՝ տԻՅՕՐԻՍՄ՝, որմէ կ'երեւայ որ Ղ,  
օ, -, տառերը հայերէնի հետ գրեթէ նոյն են,  
Ե կազմուած է նոյնպէս հայերէն Ե -էն, Վ առ-  
նուած է լատինէն, իսկ վերջին տառը հայերէն  
ն ձեւն է, պառկած դիրքով եւ կտուցը ձեւա-  
փոխուած:

Բժշկարանի ծածկագրին հետ բոլորովին  
նոյն է այն, որ գտեր է Ն. Բարամեանց 1886  
թուին եւ հրատարակեր է ZDMG թերթին  
մէջ, հա. 40, էջ 315—319. Բարամեանի  
գտած ծածկագիրն է հետեւեալ նախագասու-  
թիւնը. “Յիշեցէք զմեղապարտ յովսափ սար-  
կաւաթն”։ Ասոր մէջ կը գտնենք երկու տառ՝ որ  
բժշկարանի մէջ կը պահսէին. այն է Պ եւ Զ, որ  
աւելցուցած ենք մեր ցուցակին մէջ:

Բժշկարանի տառերէն քիչ մը տարբեր  
են ի, Ղ, Ե, Դ, Կ, Լ տառերը. — առաջինը ի՝ բժշ-  
կարանի մէջ ձեռագիր զ տառին ձեւն ունի,  
Հոս վերի կողմէն քիչ մը երկար թեւ մը ստա-

նալով՝ անշնորհք գրուած է տառին ձեւն առած է, — երկրորդը չ՝ հոս ունի (Ն ձեւը, որ իսկապէս նոյն է բժշկարանի ձեւին հետ, միայն բաժնուած է մասերու. — երրորդը ՝ զուրկ է թեւի աւելորդ խաղերէն՝ որ ունի նոյն տառը բժշկարանի մէջ. — չորրորդը ՝ զուրկ է բժշկարանի ձեւին սկիզբէն ու վերջէն աւելցած փշիկներէն. — վերջապէս հինգերորդը ՝ նօտրագրի ձեւն ունի, մինչդեռ բժշկարանին մէջ վերէն ու վարէն գոց X տառին ձեւն ունի, բոլորովին տարբեր է ի տառը, որ եւ դրինք մեր ցուցակին մէջ՝ տակը աստղանիշով:

Երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ եւ եօթներորդ սիւնակի պարուբենները գտած է Հ. Ժիրար յիսուսեան քահանան, որ հմուտ արեւելագէտ մ'է եւ ունի ընդարձակ ուսումն նասիրութիւններ փոքր-Սսիոյ եւ Հայաստանի վրայ՝ երկար ժամանակ մնացած է Կեսարիա, Եւդոկիա եւ Սեբաստիա: Սեբաստիոյ Ս. Նշան վանքին մէջ գտնելով ձեռագիր Հայոց Պատմութիւն մը Սենիքերիմէն սկսեալ՝ ընդարձակ քննական հրատարակութիւն մը պատրաստած է՝ հանդերձ ուսումնասիրութեամբ: Վերոյիշեալ պարուբեններն ալ գտած է զանազան ձեռագիրներու մէջ: Թիւ 3—4 կը կոչեմ Դաւթեան, որովհետեւ կ'ըսուի թէ այս երկու պարուբենները Դաւիթ Անյաղթ փիլիսոփային գործածածներն են: Թիւ 5 գործածուեր է Ալեքսանդր Մեծի ժամանակէն սկսեալ մինչեւ Արշակունիները, ուստի եւ կը կոչեմ Նիւր-Նիւր: Թիւ 6 գոր-

ծածեր են վրացիները՝ նախ քան քրիստոնէութիւնն ընդունիլը. այս պատճառաւ ալ կը կոչեմ Ն-ի-վ-ը-ի-ն: Թիւ 7 գործածուեր է Մեսրոբեան գրերէն առաջ, ուստի եւ կը կոչեմ Ն-ի-վ-ը-ի-ն: այն գրերէն շատը նոյն են շա-ն-գրի հետ:

Հ. Ժիրար գտած է նաեւ նոյն ծածկագրի թուանշանները, որոնք են՝

|   |   |   |   |   |   |   |   |   |   |   |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Y | Π | Δ | Υ | 1 | կ | Λ | φ | 7 | Q | T |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |   |   |

Ասոնց տասնեակները, հարիւրեանկերն ու հազարեակները կազմելու համար թուին վերեւը կը գնեն 1, 2, 3 կէտ:

Ութերորդ սիւնակը կը ներկայայնէ այն ծածկագիր այբուբենը՝ որ Ներսէս Աշտարակեցի կաթողիկոսը գործածեր է իր համախոհներուն հետ թղթակցելու համար Դաւիթ-Դանիէլեան վէճերու ժամանակ, ԺԹ. դարու սկիզբը: Այս ծածկագրով գտնուած են ամբողջական նամակներ եւ այլ գրութիւններ, Գաղտնիքը լուծեց Միաբան Գալուստ Տէր-Մկրտչեան (տե՛ս իր յօդուածը Արարատի մէջ, 1888, էջ 35—49 «Ներիսեան ծածկագիր» վերնագրով):

Տարակոյս չկայ որ ծածկագրերու այս բոլոր տեսակներն ալ ղանաղան գրիչներու հնարագիտութեան արգիւնք են եւ քիչ ծաւալ ստացած: Սիւնագրի վրայ խօսած է Müller, Nicht-Mesropische Schriftzeichen bei den Armeniern,



Որ թուականին ծագած են ծածկագրերու զանազան տեսակները: Գումարագրի համար մեր բերած օրինակը Հ. Տաշեանի Յուլյանէն՝ 1618 թուականէն է. երկրորդ օրինակը (Հ. Ալինեանի) 1572 թուականէն. աւելի հին է փոխարինագրի օրինակը (Տաշեան, Յուլյան, էջ 50 -), 1439 թուէն: Վերջապէս Գրիգոր վրդ. Տուտեորգւոյն ծածկագիրը, որ միաժամանակ կը պարունակէ կէտագիր, թուագիր եւ գումարագիր, ՈԳ = 1154 թուականէն է (տես Ալիշան, Այրարատ 166 ք): Միւսագրի օրինակներու հնագոյնը 1298 թուէն է (Թորոս աղբար, Բ. 337), միւսները աւելի նոր են, այն է 1465 թուէն (Թորոս աղբար, Ա. 77), 1640 թուէն (Բ. 191), ԺԶ. դարէն (ՀԱ 1892, 82): Միւլլէր կը կարծէ թէ քանի որ ծածկագրերու մէջ օ եւ § տառերը չկան, ուստի ըլլան “hinter das XII. Jahrhundert”. Սակայն աղաւնագիրը ունի այս երկու տառերը, եթէ միայն աւելի յետոյ աւելցուած չըլլան: Ըստ Գաբրիկեանի՝ Սեբաստիոյ մէջ աւանդաբար կը պատմուի թէ Սենիքերիմ թագաւորն ու հայ իշխանները իրենց մէջ ծածկագիր գրութիւն մը կը գործածէին. եւ որովհետեւ մեր թուականներն ալ մինչեւ 1154 կը հանեն մեզի, ուստի կրնանք ըսել թէ այդ ծածկագրերն ալ ԺԱ. դարուն հնարուած ըլլան: Ասոր համապատասխան է այն հանգամանքը՝ որ ծածկագիր տառերէն շատը նօտրագրի, նոյն իսկ շղագիր վրայէն շինուած են. ինչպէս աղաւնագիր Բ, որ պարզապէս նօտր ք ձեւն է, 2 որ մեր շղագիր

չ տառն է եւն: Դաւթեան գրերու երկրորդ տեսակը յայտնապէս ~~է~~ գրերու նմանողութիւն մըն է եւն:

Կը մնայ մեզ քննել այս ծածկագրերուն տրուած զանազան անուաններու ծագումը: Հները սովորութիւն ունէին որեւէ բան ընթերցողին աչքին պատուական ընծայելու համար՝ վերագրել նշանաւոր անձի մը կամ առհասարակ հնութեան: Այսպէս Երազմասնը Գանիէլ մարգարէինն է, Յաճախապատումը Լուսաւորչինն է, յետին շարականներ՝ Սահակինն ու Մեսրոբինն են: Գրերու մէջ ալ հայոց նշանագրերը (տես Գլուխ Գ) կ'ընծայուին Ադամ նահապետին, ծածկագրերէն երկու տեսակ Դաւիթ Անյաղթին, միւսները նախարշակունեան, նախամեսրոբեան եւ նախավրացական շրջաններու: Այս բոլորը այն ժամանակի հոգեբանութեամբ ըմբռնելի գրական կեղծիքներ են: Կեզծիք չէ միայն ~~աղանգի~~ բառը (աղանիի գիր), որ ըստ իս բուն «ծածկագիր» նշանակութիւնն ունի, ճիշտ այնպէս, ինչպէս ունինք ծածկալեզուի համար ~~նշանակի~~ լեզու, ~~գիր~~ լեզու կամ ինքի: Այս ~~աղանգի~~ բառը յետոյ շփոթուելով, դիտմամբ կամ պատահմամբ, դարձեր է Աղանգի ~~գիր~~, եւ այս անունով ալ յիշուած են ծածկագրերը մեր ձեռագրերու մէջ տեղ տեղ:

Պատմութենէն գիտենք որ Ս. Մեսրոբ Աղուաններու համար ալ գրեր հնարեց եւ այս գրերով Թարգմանուեցան Մարգարէութիւնները, Աւետարանը եւ Գործք Առաքելոցը, մէկ խօս-

քով ամբողջ Ս. Գիւրքը՝ Ահա ասոր վկայութիւնն էր. «Ապա այնուհետեւ երանելոյն Երեմիայի եպիսկոպոսի ի ձեռն առեալ՝ վաղվաղակի զաստուածային գրոց թարգմանութիւնս ի գործ արհանէր, որով անգէն յական թօթափել վայրենամիտ եւ դատարկասուն եւ անասնաբարոյ աշխարհն Աղուանից՝ մարգարէագէտք եւ առաքելածանօթք եւ աւետարանաժառանգք լինէին, եւ ամենայն աւանդելոցն Աստուծոյ, ոչ իւրք անտեղեակք» (Կոր., էջ 19):

Այս հաւատարիմ վկայութենէն կը հետեւի որ անշուշտ աղուաններէն գիր ու գրականութիւն կար. բայց հայերէնի ազդեցութեան տակ՝ այդ գիրն ու գրականութիւնը այնպէս քնջուեր են, որ հետք մ'անգամ մնացած չէ: Գիտունները շատ հետաքրքիր եղած են գտնելու որեւէ հետք Աղուաններու լեզուէն ու գրէն, բայց իրենց բոլոր ջանքերը ի զուր եղած են եւ գտնուածներն ալ սուտ: Այսպէս Մակար եպս. Բարխուդարեանց (Պատմ. Աղուանից, Վղըշպտ. 1902, էջ 17) կը կարծէ գտած ըլլալ Աղուանից գրերով կարճ արձանագրութիւն մը Դերմենդի պարսպի արտաքին պատին վրայ, որու նմանահանութիւնն ալ կու տայ Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 119: Բայց ասիկա ուրիշ բան չէ, եթէ ոչ քուֆի արձանագրութիւն մը: Նոյնպէս Փրանսացի հայագէտ E. Boré, Cor. T. II, էջ 49 կը խօսի աղուաններէն հին ձեռագրի մը վրայ՝ որ գտնուեր է Էջմիածնի մէջ եւ որու մասին զեկուցեր է 1838ին Փրանսական ակա-

դեմիային: Բայց ասիկա ալ ուրիշ բան չէր, եթէ ոչ հայերէն նօտր գիրը (տես Խորենացի, Թրգմ. Խ. Ստեփանէի, Բ. տպ., ծան. 750):

Աղուանից գրի մասին զարմանալի վկայութիւն մ'ալ ունինք Հեթում պատմիչի մէջ (տպ. Վենետ. 1842, էջ 14): Խօսելով հայոց մասին, հեղինակը կ'ըսէ թէ «ուսին նշանագիրս արամեանս եւ այլս եւս՝ որ ասին հայերն»: Այս տարօրինակ բառը երկրորդ անգամ կը գտնենք էջ 24, ուր խօսելով Արաբներու մասին, կ'ըսէ թէ «կալան զմեծն Ասիա ողջոյն, բաց ի թագաւորութիւնէն Ափսաղաց՝ որ ի Վերս, եւ բաց ի գաւառէն անտի թագաւորութեան Հայոց, որ ռամկօրէն կոչի Հալոյէն: Այս երկու նահանգք զգեմ կալան Սարակինոսաց եւ ոչ կամեցան բնաւ հպատակիլ նոցա եւ այնպէս գտան ապաստան եւ պատսպարան ամենայն քրիստոնէից, զորս հալածէին Սարակինոսք»: Այս բացատրութենէն կ'երեւայ որ Հալոյէնը Աղուանքն ըլլալու է. նկատի ունենանք նաեւ այն որ ըստ Հեթում պատմիչի Հայաստանի սահմանը կը սկսի Դարբանդ (Միրալի) քաղաքէն, որով Աղուանք կ'ըլլայ մասն Հայաստանի (գլուխ Թ.). պատմիչը Աղուանք անունով առանձին երկիր չգիտէ:

Ըստ այս տեղեկութեան, ուրեմն նոյն իսկ 1305 թուին աղուաներէն գրերը գոյութիւն ունէին. բայց թէ ինչ եղաւ այնուհետեւ, տեղեկութիւն չունինք: Եւ հաստատապէս կրնանք ըսել թէ մեր զանազան ձեռագիրներու մէջ յիշուած «աղուաներէն» գրերը չեն:

Հետ շփոթութեան արդիւնք են: Այսպէս օրինակ քարամեանցի գաած գիրը՝ որ ձեռագրին մէջ կոչուած է «գիր Աղուանից» եւ որուն հաւատացած է նաեւ քարամեան եւ այն ծածկագրերը իբրեւ նորագիւտ աղուաններէն գիր հրատարակած է<sup>1</sup>: Թէ ոչ ունի եւ Աշունից գիր իբրեւ մերձաւոր րաւեր կրնային դիւրութեամբ շփոթուիլ իրարու հետ, համար. Աշունի յատուկ անունը՝ որ Սեբաստիոյ մէջ կը հնչուի Աշին, նոյնպէս Աշունից գրչութիւնը՝ փոխանակ «Աղուանից» (Յուց. ձեռ. Թաւրիզի, Թ. 44, էջ 369բ):

Ծածկագրերու շարքին մէջ կարելի էր գասել նաեւ հայ սղագրական նշանները, որոնց համար արգէն ունինք երկք դրութիւն. գլխաւորն է Հ. Աթանաս Տիրոյեանի հրատարակածը (Վեներտ. 1888) «Սղագրութիւն հայկական» վերնագրով, Գարէլսբերգերի դրութեան համաձայն: Բայց ասոնց մասին խօսիլը մեր ծրագրէն դուրս է<sup>2</sup>:

Հոս կը գնեմ ծածկագրերու համագրական ախտակը, որ իմ խնդրանքը պատրաստեց Պետրոգրադի գեղարուեստական Ակադեմիայի նախագահ Հայազգի Պրոֆ. Պր. Ա. Թամանեան,

<sup>1</sup> Այս կեղծիքի մասին տես նաեւ Ֆրէսերիք Մուրտի յօդուածը՝ ՀԱ 1903, 334—335:

<sup>2</sup> Հայերէն սղագրութեան նորագոյն դրութիւն մը հնարեց Կովկասի մէջ՝ նշանաւոր մանկավարժ Սեդրակ Մանդինեանը. բայց միջոց չունենալով հրատարակելու՝ ձեռագրերը թողոյց իր որդի ելեկարադէտ Պր. Գեորգ Մանդինեանի: Վերջինս՝ որ Թաւրիզ կը գտնուի, յայտնեց ինձ որ նոյն ձեռագրերը յանձնեւ է Պր. Սա. Կանայեանի՝ Հայաստանի պետական Գրագրարանին մէջ պահուելու համար:

որուն կը յայտնեմ հրապարակաւ խորին շնորհակալութիւնս:

Հ. Տաշեանի Մկնարկէն (էջ 89 ծան.) կը տեղեկանամ որ ծածկագրութեանց վրայ խօսած է նաեւ Բրոսէ հայագէտը եւ քանի մը տեսակն ալ հրատարակած է: Բրոսէ մինչեւ 19 տեսակ ծածկագիր կը ճանչնայ. հմտ. իր յօդուածը՝ Variétés arméniennes, Mélanges Asiatiques, V, 65—77 (երեք տախտակով): Միւրողութեան համար պէտք էր այս գրուածքն ալ ի նկատի ունենալ. բայց այն միջավայրին մէջ՝ ուր կ'ապրիմ հիմայ, անհնար է ձեռք բերել:

---

## ՀԱՅ ՆՃԱՆԱԳՐԵՐՈՒ ԿՈՐ ՑՈՒՑԱԿ ՄԸ

Նշանագրերու ուսումնասիրութեան հրատարակութենէն յետոյ (Հանգ. Ամս. 1910, էջ 174—176) Սերաստիայէն թղթակից բարեկամս Դր. Կ. Գաբրիէան ուղարկեց ինձ հայ նշանագրերու նոր ցուցակ մը՝ որ արտագրած էր Սերաստիա գտնուած երկու հայ ձեռագրերէ։ Առաջին ձեռագիրը կը պարունակէ 289 նշանագիր, երկրորդը 100 նշանագիր, ընդամենը 389 նշանագիր։ Երկու ձեռագրերն ալ անշուշտ օրինակուած են Վ. Կ. Կ. հին ձեռագրերէ, որովհետեւ այբուբենական կարգը կանոնաւոր չէ ասոնց մէջ եւ միեւնոյն բառը մէկ քանի անգամ կ'երեւայ նշանագրերու ցանկին մէջ։ Գաբրիէան այոցուցակը հրատարակած էր նախ Սերաստիոյ խմբարարիկ Նշարակ թերթին մէջ, բայց ապագրութիւնը եղած էր շատ անյաջող։

Քննելով յիշեալ ցուցակը եւ համեմատելով իմ նշանագրերու հետ, տեսայ որ կան շատ հետաքրքրական նորութիւններ. խումբ մը բառեր բոլորովին նոր են եւ քննած 14 ժողովածուներու մէջ գոյութիւն չունին, ուրիշներ՝ թէեւ կան նոյն ժողովածուներուն մէջ, բայց հոս կը ներկայանան բոլորովին նոր նշանով մը եւ կամ կը կրեն այնպիսի նշանագիր մը՝ որ մեր ուսումնասիրութեան եւ նշա-

նագրերու զարգացման պատմութեան համար հետաքրքրական է:

Այս պատճառով միացնելով նոյն կարեւոր նշանագիրները նոր պրուբենական ցանկի մը մէջ կը գտնուի հոս:

Նշանագրերու այս երկրորդ տախտակն ալ կազմուած է այնպէս՝ ինչպէս նախորդը: Թուահամարները շարունակած են 455 թուէն սկսեալ, եթէ նշանագրերը բոլորովին նոր են. իսկ հոն ուր նշանագիրը նոր ձեւ մը չէ, այլ մեր ունեցած ձեւերուն մէկ նոր (ու կարեւոր) զանազանութիւնն է, գրած են՝ առաջին տախտակին համապատասխան նշանագրին թուանշանը:

Նոր ձեւագիրները դժբախտաբար տգէտ գրչի գործ են. հայերէն բառերուն մէջ շատ ուղղագրական սխալներ կան. օր. գրուած է հայեիւլ՝ փոխանակ հայհոյել. քանի մը բառեր կան՝ որոնց ինչ ըլլալը չի հասկցուիր. այսպէս՝ գրուած է լըլ-ըլ, լը-ըլ՝ որոնց նշանագրերը շատի ձեւին նման ըլլալով՝ կը կարծես թէ պէտք է կարդալ «գուարակ»: Ա գրին շարքը կոյ տեղի բառ մը, որուն նշանագիրը (տես տախտակին վերջին նշանագիրը) (ձ, տակը յ) նման է թէ տեղի եւ թէ անտեղի նշանագրին. չգիտեմ թէ ինչպէս պէտք է կարդալ. հաւանական է անտեղի, քանի որ Ա գրին շարքին մէջ կը գտնուի Ա՞ով բառերու շարքին մէջ կայ ընդ ձեւ մը, որ անշուշտ սխալ ընթերցուած մ'է. առաջին յարմարագոյն որբագրութիւնն է լընը, ենթագրելով որ «գրուած ըլլայ միասին. բայց նշանագրերու միւս ցուցակները այսպիսի բառ մը չգիտեն:

Բուրո՞վին անստոյգ բառեր են — շին (նշանագիրք նման է — ինչին), — րին, հնքերն:

Եթէ հասարակ հայերէն բառերը այսպիսի սխալներ ունին, որքան աւելի բլլալու էին նշանագրերը. այսպէս Զօր-Բեկ բառին գէժ գրուած նշանագիրք՝ միւս ցուցակներուն զօր-բ բառին նշանագիրն է. իւրե՛ճ զոգիակոսին գէժ գրուած է իշի- զոգիակոսին նշանը, յէլ-բ-ի բառին գէժ յ-իշ-բ-ի:

«. Ինչ ինչ նշանագրեր՝ որ նախորդ ցուցակին մէջ գեռ պարզ տառական վիճակ մը ունին, հոս ստացած են բուն նշանագրի զարգացած ձեւ. օր. Բ-բեկ-ը՝ օր նախորդներուն մէջ կը ներկայանայ պարզապէս մը տառերով, Տ, վրդ. Պալեանի ցուցակին մէջ քան ձեւով, հոս արդէն դարձած է բարդ փակագիր. Գեղեցի՛ ուրիշ անգ պարզ ք տառն է՝ տակէն յով միացած, հոս քանի մը ոլորքներով զարգացած է. Գե-բ-ի՝ օր նոյն տեղը զուս գլխատառ Գ է, հոս կլորակի մը վըայ բարձրացած է. Մե-բ-ի նոյն տեղը կը ներկայանայ ե-բ համառօտագրուած թեամբ, հոս դարձած է յաջող փակագրութիւն մը՝ որ կազմուած է Բ-բ տառերէն: Այսպէս համտ. նաեւ Երեմի (մ), Եղեցի, Լեգ-որ (ա), ի-յ- (ւ):

Բ. Կան խումբ մը նշանագրեր՝ որոնք կը ներկայացնեն գեղեցիկ միջին ձեւեր եւ յաջող կերպով կը ծառայեն բացատրելու նշանագրերու կազմութիւնը. Այսպէս՝ Եղեցի՛ ձեւին գէժ մէնք ունէինք ամէնէն առաջ նօտրագիր Եի՛ համառօտագրութիւնը, որ իմ կարծիքովս ծագում տուած է յաջորդ 10 նշանագրերուն, որոնք եկեղեցիի շէնքին նիւթական պատկերը կը թուին ներկայացնել:

Նոր նշանագիրը աւելի կը հաստատէ մեր ենթա-  
գրութիւնը, ունենալով կրճատելի համառօտագրու-  
թիւնը (ի ջնջուած), որ կը բռնէ մեր նշանագրերու  
մէջ ներքին երկրորդ տեղը: Նոյնպիսի միջին ձեւեր  
են աւագ, Նոյնգոյն: Սակայն բառին գէժ  
ունեինք երկու կարճ նշանագիր, մին քառակուսի՝  
մէջը գծիկով մը, միւսը կլոր՝ մէջը - . վերջինը յառ-  
կապէս - գրէն էր, բայց անմեկնելի կը մնար առա-  
ջինը: Նոր ցուցակը կու ապա երկու նոր նշանագրեր  
(քառակուսի մը՝ մէջը -), որով նախորդ երկու նշա-  
նագրերը կը միանան եւ կասկածը կը ջնջուի:

Բ. Բանի մը տեղ նոր ցուցակն ունի աւելի  
հին նշանաձեւեր, որով քանի մը անճիշտ կամ ան-  
ծանօթ կէտեր կ'ուղղուին եւ կը ռոտագուին: Վի-  
շաղջ (Թ. 413)՝ որ մեր նախորդ ցուցակին մէջ անորոշ  
ձեւ մը ունէր, հոս եղջիւրաւոր գլուխ մ'է, որով  
նոյն նշանագիրը կ'ընտրուի պատկերադիր եւ մեր աստ-  
ղանիշը 'ր վերածուի խաչանիշի: Վերջին բառին  
նշանագիրը եւ խաչանիշը 'ր տառերէն. նոր  
նշանագիրը 'ր ցոյցն է խաչանիշը. նշանագիրը  
նախապէս կ'ընտրուէր 'ր տառերէն, ուր յետոյ  
դ գրին ոտքը կրճատուելով՝ ձեւացած է 'ր: Հա-  
գերը (Թ. 240) բառին նշանագիրը պարզ կերպով  
կը ցուցնէ թէ փակագիր մ'է, ուստի մեր ցուցակին  
մէջ պէտք է ջնջել աստղանիշը: Սակայն բառին գէժ  
ունեինք ի ձեւով նշանագիր մը՝ որ կարծած եմ  
փակագրութիւն. հիմա պնդեմ պարզ է ի գրին  
պոչին վրայի - տառը, որ պէտք կ'ըլլայ ջնջել իմ  
գրած կասկածական: Սակայն կը ներկայանար ոչ հա-  
մառօտագրութեամբ, որ ենթագրած էի իբր տա-

աական շփոթութիւն՝ ձեւացած որէն. նոր նշանագիրը յիշվին կը հաստատէ առիկա: Փէլդդդդդդդդդ էինք ք գրէն. հոս յայտի կերպով չէ, որով պէտք կ'ըլլայ ըսել թէ ք յետոյ ձեւացած է: Ճո՞ղ-  
 րո՞ւմը բառին գէմ գրուած է պարզապէս ք, որ կը հաստատէ մեր ենթադրութիւնը թէ ասոր արեւելեան մասն նշանագիրը ուրիշ բան չէ, բայց եթէ ք գրին մէկ ձեւակերպութիւնը:

Դ. Յիշենք վերջապէս թէ մէկ քանի բառեր ալ՝ որոնք նախորդ ցուցակներուն մէջ կանոնաւոր փակագրութիւններ կը կազմեն, հոս բոլորովին այլ լանդակուած ու անհասկանալի բան մը դարձած են. այսպէս են Դ-Կ-Ե (T), Դ-Կ-Ե (ԵԳ), Դ-Կ-Ե (Բ):

Այս բոլոր փոփոխութիւնները ի նկատի առնենալով՝ կը տեսնենք որ նոր ցուցակիս հրատարակութեամբ նշանագրերու ընդհանուր թիւն է 509 (հաշուելով սանդուխ բառը իբր մէկ նշանագիր), որ կը համապատասխանէ 402 բառերու կամ դադարեալներու. Ասոնցմէ

|                                        |     |
|----------------------------------------|-----|
| Ծառերէ յառաջացած նշանագրեր             | 332 |
| † Պատկերագրեր . . . . .                | 32  |
| — Օտար առադարաշխական նշաններ . . . . . | 21  |
| * Ծագումն անծանօթ . . . . .            | 124 |
| Գումար . . . . .                       | 509 |

Ուսումնասիրութեանս մէջ ըսած էինք թէ նշանագրերու հնագոյն հրատարակութիւնը, որչափ մեզ ծանօթ է, Էմիլիոնն է: Աւերջերս մեր ձեռքն անցաւ Միխիթար Աբգայի «Քերականութիւն գրաբանի լեզուի հայկազան սեւիո (Վէնէտիկ 1730, Բ. տպ.

1770), ուր էջ 481 հրատարակուած գտանք 46 նշանագրերու ցուցակ մը։ Առիկա համեմատելով մեր ցուցակին հետ նորութիւն մը չի պարունակեր, բայց անշուշտ հնագոյն հրատարակութիւնն է բոլոր ցուցակներու մէջ։

Ամենավերջին հրատարակութիւնը եղաւ Շոշակաթի մէջ, ուր լուսանկարով նմանահանուած են Էջմիածնի թ. 612 եւ 91 ձեռագիրներու նշանագրերը ամբողջ էջերով։ Այս ձեռագիրները ամբողջ մենք նախապէս տեսած եւ անոնց պարունակած նշանագրերը մեր ցուցակին մէջ անցուցած էինք։ Անծանօթ կը մնար միայն անոնց գրութեան թուականը, որ մոռցած էինք նշանակել, բայց որ կարեւոր էր ճշտելու համար նշանագրերու ծագման ժամանակը։ Գարեգին վարդապետի տեղեկութիւններէն կ'երեւայ որ (Շոշ., էջ 214) այս երկու ձեռագիրներն ալ անթուական են. բայց Գարեգին վրդ. առաջինին թուականը կը դնէ ԺԳ. դարու վերջը եւ ԺԳ. դարու սկիզբը, իսկ երկրորդը թերեւս ԺԸ. դար։ Վերջինս շատ ուշ ըլլալով՝ նշանակութիւն չունի. բայց առաջինը շատ մեծ նշանակութիւն ունի։ Արդարեւ մեր ունեցած ձեռագրերը կը հասնէին մինչեւ 1564 թիւը. բայց կ'ենթադրէինք որ նշանագրերու առաջին գործածութիւնը ԺԳ. դարէն ըլլայ։ Եթէ ճիշտ է Գարեգին վարդապետի տուած թուականը, այն ժամանակ պէտք կ'ըլլայ նոյն թիւը քիչ մ'ալ առաջ տանիլ, ըստ որում նոյն ձեռագիրներուն մէջ գտնուած նշանագրերը բաւական մաշուած ձեւեր են եւ աւելի հին սկզբնաւորութիւն մը կ'ենթադրեն։

## ԲՈՎԵՆԳԱԿՈՒԹԻՒՆ

---

### ԳԼ. Ա. Հաթեամ գրերը: էջ

- |                                |   |
|--------------------------------|---|
| 1. Ո՞վ են Հաթերը .....         | 3 |
| 2. Հաթեան գրերը .....          | 4 |
| 3. Հաթեան գրերու ծագումը ..... | 7 |

### ԳԼ. Բ. Խալդեամ բեւեռագրեր:

- |                                                                    |    |
|--------------------------------------------------------------------|----|
| 1. Խալդեան արձանագրութեանց եւ ժողովուրդի մասին համառօտութիւն ..... | 9  |
| 2. Խալդեան գրութեան ծագումը .....                                  | 12 |
| 3. Ասորեստանեան բեւեռագրական գրութիւնը. իւր ժողովուրդիւնները ....  | 13 |
| 4. Խալդեանց մտցուցած բարեփոխութիւնները .....                       | 16 |
| 5. Յուցակ խալդեան բեւեռագրերու ..                                  | 18 |

### ԳԼ. Գ. Նշանագրեր:

- |                                                         |    |
|---------------------------------------------------------|----|
| 1. Նշանագրերու դործածութեան մասին ենթադրութիւններ ..... | 22 |
| 2. Նշանագրերու հաւաքածոներ .....                        | 28 |
| 3. Յուցակ հայերէն նշանագրերու ....                      | 32 |
| 4. Համառօտագրութեանց կազմութիւնը .....                  | 32 |
| 5. Նշանագրերու կազմութիւնը .....                        | 37 |
| 6. Նախորդ ենթադրութեանց հերքումը .....                  | 52 |
| 7. Նշանագրերու հնարման ժամանակը .....                   | 56 |

## ԴԼ. Դ. Դամիելեան գրքեր:

էջ

|                                                          |     |
|----------------------------------------------------------|-----|
| 1. Վկայութիւններ հին այրուրենի մը<br>գոյութեան . . . . . | 59  |
| 2. Այս վկայութեանց արժէքը . . . . .                      | 64  |
| 3. Հին հայերէն այրուրենը Գանիէլեան<br>ղե՞րն է . . . . .  | 69  |
| 4. Այս գրքերը Դանիէլի հնարածներն<br>է՞ն են . . . . .     | 70  |
| 5. Այրուրենի զիտին ժամանակը . . . .                      | 76  |
| 6. Քանի՞ գրէ բաղկացած էր այս այ-<br>բուրենը . . . . .    | 80  |
| 7. Ի՞նչ լեզուէ չինուած էր . . . . .                      | 82  |
| 8. Նոր քննիչներու կարծիքը եւ անոնց<br>հերքումը . . . . . | 91  |
| 9. Դանիէլեան գրքերը հայերէն չէ՞ն . .                     | 100 |

## ԴԼ. Ե. Պարսիկ, Յոյն եւ Ասորի գրքերը . . . . . 106Ժ

## ԴԼ. Զ. Մեսրոբեան գրքերը . . . . . 130

## Ա. Գրերու թիւը:

|                                                                                  |     |
|----------------------------------------------------------------------------------|-----|
| 1. Պատմագիրներու վկայութիւնը . . . . .                                           | 131 |
| 2. Մասենագրական վկայութիւններ . . . . .                                          | 135 |
| 3. Հնադոյն արձանագրութեանց վկայու-<br>թիւնը . . . . .                            | 135 |
| 4. Նոր քննիչներու կարծիքը . . . . .                                              | 137 |
| 5. Ղ. Աղայեանի կարծիքը . . . . .                                                 | 137 |
| 6. Ասոր հերքումը . . . . .                                                       | 140 |
| 7. Մեր ՅՅ գրերն իսլորն ալ Մեսրոբի հնա-<br>րած են. երկու տարրեր կարծիքներ . . . . | 145 |
| 8. Անոնց քննութիւնը. եղբակացութիւն . . .                                         | 158 |

## Բ. Մեսրոբեան այբուրենի յօրինուածութիւնը:

|                                           |     |
|-------------------------------------------|-----|
| 9. Անջատական եւ կցողական այբուրեններ      | 165 |
| 10. Հայերէնը իրրեւ անջատական այբուրեն . . | 167 |

11. Զայնաւորները զրեւու կամ չգրեւու էջ  
գրութիւնը ..... 168

Գ. Մեսրոբեան գրութեան ուղղութիւնը:

12. Այնպիսի ման, ձախակողման եւ ուղղա-  
հայեաց գրութիւնները գրութեան մէջ .. 170  
13. Գրեւու աջակողմեան կամ ձախակողմեան  
ուղղութիւնը . .... 172  
14. Զախակողմեան ուղղութեամբ հայերէն  
գրուածքներ ..... 175

Դ. Գրեւու ձեւը եւ ամօնց ծագումը:

15. Մեր պատմագրերու տուած տեղեկու-  
թիւնները ..... 177  
16. Նոր քննիչներու կարծիքները ..... 182  
17. Ասոնց ըննադատութիւնը. ո՞ր այրուրեն-  
ներէն կրնար Մեսրոբ ոլոսուած ըլլալ.... 191  
18. Հայերէն գրեւու մանրամասն համեմա-  
տութիւնը օտար այրուրեններու հետ .... 198  
19. Եզրակացութիւն եւ ամփոփում ..... 270

Ե. Մեսրոբեան գրեւու դասաւորութիւնը:

20. Այսօրուան հայերէն գրեւու շարքը նո՞յն  
է հնին հետ ..... 272  
21. Ս. Մեսրոբ ո՞ր այրուրենին հետեւած է  
գրեւու դասաւորութեան մէջ ..... 273  
22. Վրացերէն այրուրենի մէջ ի՞նչ գրութեան  
հետեւած է ..... 273

Զ. Գրեւու ամուսնները:

23. Մեսրոբեան գրեւու հին եւ նոր անունները 277  
25. Հայ եւ վրացի գրեւու անուանակոչեան  
ծագումը . .... 281

|                                                             |     |
|-------------------------------------------------------------|-----|
| Է. Մեսրոպեան գրերու հմշումը կամ արժեքը: Ը՞                  |     |
| 26. Ձայներու բարեշնթութիւնը .....                           | 280 |
| 27. Հին հայերէնի հնչումները որոշելու միջոցները .....        | 288 |
| 28. Հայերէն այբուրենի դասաւորութիւնը....                    | 280 |
| 29. Դիոնիսիոս թրակացւոյն քերականութիւնը . ....              | 290 |
| 30. Օտար լեզուէ տառադարձուած բառերը հայերէնի մէջ .....      | 292 |
| 31. Հայերէնի ասորադարձուած բառերը օտար լեզուներու մէջ ..... | 294 |
| 32. Ձայնաւորներու հնչումը .....                             | 296 |
| 33. Երկրարբառներու հնչումը .....                            | 312 |
| 34. Ա. խմբի երկրարբառներու հնչումը ....                     | 315 |
| 35. Բ. խմբի երկրարբառներու եւ Խ զրի հնչումը . ....          | 321 |
| 36. Գ. խմբի երկրարբառներու հնչումը ....                     | 328 |
| 37. Ծռարբառներու եւ բաղաձայններու հնչումը . ....            | 335 |
| Ը. Մեսրոպեան գրերու տեղակիւնքը եւ զարգացումը. ....          | 346 |
| Տառերու ձեւափոխութիւնը .....                                | 406 |
| ԳԼ Է. Հայերէն ծածկագրեր .....                               | 460 |
| Յաւելում. Հայ նշանադրերու նոր ցուցակ մը                     | 483 |

## ԿԱՐԵՆԻՈՐ ՎՐԻՊԱՆՈՒՄ

| էջ  | տող    | սխալ            | ուղղոր            |
|-----|--------|-----------------|-------------------|
| 62  | 21     | ՀԼ 1910, 171 բ  | վերջ, էջ 24       |
| 84  | 6      | ---ԵԼ-ՅԵԼ՝      | առար. յ 7 յ 7     |
| 84  | 9      | ---ԵԼ-ՅԵԼ՝      | առար. յ 8         |
| 84  | 14     | ---ԵԼ-ՅԵԼ՝      | առար. յ 8         |
| 84  | 22     | փ               | փ                 |
| 85  | 2, 6.  | փ               | փ                 |
| 85  | 7, 13, | փ               | փ                 |
| 103 | 6      | անկման... ողման | անկման... ողման   |
| 171 | 11     | դ աստիան        | աստիան            |
| 173 | 30     | հ               | հ                 |
| 175 | 19     | յ               | յ                 |
| 176 | 4      | ---ԵԼ-ՅԵԼ՝      | զիւիվայր բանած    |
| 186 | 3      | 3 դիր           | 3 դիր (-, +, +)   |
| 195 | 9      | հին             | հին կամ աւել-ան-ն |
| 196 | 13     | 353             | 253               |
| 205 | 16     | միշտ            | միշտ              |
| 206 | 9      | ա-ին            | ա-ին              |
| 206 | 25     | միշտ            | միշտ              |
| 215 | 2      | հ               | հ                 |
| 219 | 14     | միշտ            | միշտ              |
| 220 | 26     | ը               | ը                 |
| 220 | 27     | ը, ը            | ը, ը              |
| 222 | 16     | ուղիղ աշխարհ    | ուղիղ աշխարհ      |
| 223 | 11     | Բ               | Թ                 |
| 228 | 27 հւն | փիկ             | փիկ               |
| 230 | 25     | մի              | չէ մի             |
| 241 | 26     | է               | է միկնիլ          |
| 245 | 17     | բած             | բած               |

| էջ  | տող | սխալ                                                                                      | ուղղիչ                      |
|-----|-----|-------------------------------------------------------------------------------------------|-----------------------------|
| 250 | 25  | միշտ                                                                                      | ճիշտ                        |
| 251 | 12  | ձեւերէն                                                                                   | գրի ա, բ, գ ձեւերէն         |
| 254 | 6   | 1893                                                                                      | 1913                        |
| 270 | 3   | այցելութիւնը                                                                              | ազգացութիւնը                |
| 271 | 21  | առար.                                                                                     | առար.                       |
| 276 | 3   | չ, հ                                                                                      | ջ, հ                        |
| 276 | 25  | անոր                                                                                      | անոր համար                  |
| 279 | 27  | գառ                                                                                       | գաւ                         |
| 281 | 24  | գիւլ                                                                                      | գիւլ                        |
| 281 | 25  | լուր                                                                                      | լուր                        |
| 282 | 20  | յիւն                                                                                      | յիւն                        |
| 284 | 16  | հայերէն                                                                                   | հայերէն                     |
| 286 | 2—3 | «-դիւլ» 26. Չայներու բարեկրթութիւնը.<br>27. Հին հայերէնի հնչումները որոշելու<br>փշոջները. |                             |
| 289 | 22  | միշտ                                                                                      | ճիշտ                        |
| 290 | 8   | է                                                                                         | է օ                         |
| 291 | 18  | 212                                                                                       | —                           |
| 303 | 26  | vo                                                                                        | vo, բարբառներուն<br>մէջ vo, |
| 303 | 28  | «-իւն»-իւ                                                                                 | Երկրորդ, Երրորդ եւն.        |
| 305 | 2   | գրք.                                                                                      | քրք.                        |
| 312 | 27  | «                                                                                         | գերմ. u                     |
| 313 | 19  | իւ                                                                                        | իւ                          |
| 316 | 4   | գրին                                                                                      | գիրք                        |
| 316 | 6   | իւր                                                                                       | եւրոպական                   |
| 319 | 2   | կը                                                                                        | մը                          |
| 320 | 29  | հիւսիս                                                                                    | հիւսիս                      |
| 325 | 20  | hav, havat                                                                                | haw, hawat                  |
| 327 | 7   | Հեթոթոս                                                                                   | Հեթոթոս                     |
| 327 | 16  | յագնակին                                                                                  | յագնակին եւ                 |
| 328 | 14  | եղ                                                                                        | եղ                          |
| 331 | 18  | «-»                                                                                       | «                           |
| 333 | 28  | ազգայն                                                                                    | ազգայն                      |
| 334 | 6   | բառազերի                                                                                  | բառազերի ֆրանս. r           |

| էջ  | տող                             | սխալ      | ուղիղ                                                                                   |
|-----|---------------------------------|-----------|-----------------------------------------------------------------------------------------|
| 339 | 9                               | հւ        | հն                                                                                      |
| 340 | 20                              | կոււմ     | կուժ                                                                                    |
| 342 | 12                              | ամէն      | ուժի                                                                                    |
| 355 | 26                              | ի         | է                                                                                       |
| 357 | 4                               | Ֆ         | Ք                                                                                       |
| 360 | 13                              | ճ         | Ծ                                                                                       |
| 361 | 26                              | Հ         | Շ                                                                                       |
| 364 | 10, 15                          | Ն         | Ն                                                                                       |
| 365 | 11, 15                          | 3         | 4                                                                                       |
| 365 | 26                              | աղիւ      | Ս                                                                                       |
| 374 | Յանքիւնիւն Դնիւ էջ 373, տող 14. |           |                                                                                         |
| 383 | 28                              | 24        | 25                                                                                      |
| 395 | 12                              | A         | 4                                                                                       |
| 405 | 26                              | i         | չ                                                                                       |
| 410 | 18                              | գաւառ     | գրաւած                                                                                  |
| 418 | 27                              | քառակուսի | քառակուսի է. միայն<br>այդ քառակուսի                                                     |
| 425 | 27                              | 94        | 95                                                                                      |
| 430 | 8                               | երկրորդը  | հւ Յորայ մեկնու-<br>թեան ձեռագրի մը<br>մէջ՝ 1299 թուէն<br>(ՍԻՍ. էջ 149). երկ-<br>րորդը. |
| 431 | 14                              | 2         | չ                                                                                       |
| 432 | 1                               | o         | 8                                                                                       |

Ծանօթ. — Վերականգնու շարունակութիւնը  
Հակառակ մեր ջանքերուն կարելի չեղաւ ցայժմ ստանալ  
Երիւանէն:



ፊ ሁ ፊ ሃ ሁ ዓ ለ ሂ ለ

[illegible]



ԱՅԲՈՒԲԵՆՆԵՐՈՒ

ՀԱՄԱԴՐԱԿԱՆ

801844

[illegible]

|   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|

[illegible]

# ՅՈՒՑԱԿ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ՆՇԱՆԱԳՐԵՐՈՒ

|                     |            |              |                      |             |                             |   |
|---------------------|------------|--------------|----------------------|-------------|-----------------------------|---|
| 1. Արբանյակ         | Հ          | Ե 3 3 3      | * 53. Անիթա          | Յ Ե Ն Յ     | - 104. Արանյակ (Յ. Արանյակ) | Կ |
| 2. " "              |            | Ե            | 54. Անի              | Ե           | 105. Արանյակ                | Կ |
| * 3. Արգ            |            | Ա Օ Օ Օ Ե    | 55. " "              | Ե Ե Ե Ե Ե Ե | 106. Արանյակ (Կ)            | Կ |
| 4. Արգան            | ...        | Ա Ն Ն        |                      | Ա Ե Ե Ե Ե Ե | + 107. Արանյակ              | Կ |
| 5. Արգան            | (Կ)        | Ե Ե          | * 56. Անի            | Ա Ե Ե       | 108. Արանյակ                | Կ |
| + 6. Արգ            |            | Ե Ե Ե Ե      | * 57. Անի            | Ե Ե         | 109. " "                    | Կ |
| + 7. Արգան          |            | Ե Ե Ե        | 58. Անի              | Ե Ե Ե       | * 110. " "                  | Կ |
| 8. Արգան            | Հ          | Ե Ե Ե        | 59. Անի              | Ե Ե Ե       | 111. Արանյակ                | Կ |
| 9. " "              | Կ          | Ե Ե          | * 60. Անի            | Ե Ե Ե       | 112. Արանյակ                | Կ |
| 10. " "             | Կ          | Ե Ե Ե        | * 61. Անի            | Ե Ե Ե       | * 113. Արանյակ              | Կ |
| 11. Արանյակ         | Հ          | Ե Ե Ե        | * 62. Անի            | Ե Ե Ե       | 114. Արանյակ                | Կ |
| * 12. Ար            |            | Ե Ե          | * 63. Անի            | Ե Ե Ե       | 115. Արանյակ                | Կ |
| * 13. Ար            |            | Ե Ե Ե        | 64. Անի              | Ե Ե Ե       | 116. Արանյակ                | Կ |
| 14. Ար              | Հ          | Ե Ե Ե Ե      | 65. " "              | Ե Ե Ե       | 117. Արանյակ                | Կ |
| - 15. Ար (Հ. Ե. Ե.) |            | Ե (Ե. Ե. Ե.) | * 66. Անի            | Ե Ե Ե       | 118. Արանյակ                | Կ |
| 16. Ար              | Հ          | Ե Ե Ե        | * 67. " "            | Ե Ե Ե       | 119. Արանյակ                | Կ |
| 17. " "             | Հ          | Ե Ե Ե        | * 68. " "            | Ե Ե Ե       | * 120. Արանյակ              | Կ |
| 18. " "             |            | Ե Ե          | - 69. " (Ե. Ե. Ե.)   | Ե Ե Ե Ե Ե Ե | 121. Արանյակ                | Կ |
| 19. Ար              | (Կ)        | Ե Ե Ե Ե      | 70. Անի (Ա. Ե. Ե.)   | Ե Ե Ե Ե Ե   | + 122. Արանյակ              | Կ |
| 20. Ար              |            | Ե Ե Ե        | 71. Անի              | Ե Ե Ե Ե     | * 123. Արանյակ              | Կ |
| 21. " "             | Հ          | Ե Ե Ե        | 72. Անի              | Ե Ե Ե Ե Ե   | 124. Արանյակ (Ե. Ե. Ե.)     | Կ |
| 22. " "             | Հ          | Ե Ե Ե        | + 73. " "            | Ե Ե Ե Ե Ե   | + 125. Արանյակ              | Կ |
| 23. " "             | Հ          | Ե Ե Ե        | * 74. Անի            | Ե Ե Ե       | 126. Արանյակ                | Կ |
| 24. Ար              | Հ          | Ե Ե Ե Ե      | * 75. Անի            | Ե Ե Ե       | 127. Արանյակ                | Կ |
| 25. Ար              | Հ          | Ե Ե Ե Ե      | 76. Անի              | Ե Ե Ե Ե     | 128. " "                    | Կ |
| 26. " "             | Հ          | Ե Ե Ե        | 77. Անի              | Ե Ե Ե       | 129. Արանյակ                | Կ |
| 27. " "             | Հ          | Ե Ե Ե        | 78. Անի              | Ե Ե Ե       | + 130. Արանյակ              | Կ |
| 28. Ար              | Հ          | Ե Ե Ե        | 79. " "              | Ե Ե Ե       | 131. Արանյակ                | Կ |
| 29. " "             | Հ          | Ե Ե Ե        | 80. Անի              | Ե Ե Ե       | 132. Արանյակ                | Կ |
| 30. Ար              | Հ          | Ե Ե Ե        | * 81. Անի            | Ե Ե Ե       | 133. Արանյակ                | Կ |
| - 31. Ար (Հ. Ե. Ե.) |            | Ե Ե Ե        | * 82. " "            | Ե Ե Ե       | * 134. Արանյակ              | Կ |
| 32. Ար              | Հ          | Ե Ե Ե        | * 83. " "            | Ե Ե Ե       | 135. Արանյակ                | Կ |
| 33. " "             | Հ          | Ե Ե Ե        | * 84. " "            | Ե Ե Ե       | 136. " "                    | Կ |
| 34. " "             | Հ          | Ե Ե Ե        | 85. Անի              | Ե Ե Ե       | 137. Արանյակ                | Կ |
| 35. Ար              | Հ          | Ե Ե Ե        | 86. Անի              | Ե Ե Ե       | 138. Արանյակ                | Կ |
| 36. Ար              | Հ          | Ե Ե Ե        | - 87. Անի (Հ. Ե. Ե.) | Ե Ե Ե       | 139. Արանյակ                | Կ |
| * 37. Ար            |            | Ե Ե Ե        | 88. Անի              | Ե Ե Ե       | 140. Արանյակ                | Կ |
| * 38. Ար            |            | Ե Ե Ե        | 89. Անի              | Ե Ե Ե       | * 141. " "                  | Կ |
| * 39. Ար            |            | Ե Ե Ե        | 90. Անի              | Ե Ե Ե       | + 142. Արանյակ              | Կ |
| 40. Ար              | Հ          | Ե Ե Ե        | * 91. " "            | Ե Ե Ե       | * 143. Արանյակ              | Կ |
| 41. Ար              | Հ          | Ե Ե Ե        | + 92. Անի            | Ե Ե Ե       | * 144. " "                  | Կ |
| 42. Ար              | Հ          | Ե Ե Ե        | 93. " "              | Ե Ե Ե       | * 145. " "                  | Կ |
| 43. Ար              | Հ          | Ե Ե Ե        | + 94. Անի            | Ե Ե Ե       | * 146. Արանյակ              | Կ |
| 44. Ար              | Հ          | Ե Ե Ե        | 95. Անի              | Ե Ե Ե       | 147. Արանյակ                | Կ |
| 45. Ար              | Հ          | Ե Ե Ե        | * 96. Անի            | Ե Ե Ե       | 148. Արանյակ                | Կ |
| 46. " "             | Հ          | Ե Ե Ե        | 97. " "              | Ե Ե Ե       | 149. " "                    | Կ |
| 47. Ար              | Հ          | Ե Ե Ե        | + 98. Անի            | Ե Ե Ե       | + 150. Արանյակ              | Կ |
| 48. " "             | (Կ)        | Ե Ե Ե        | 99. Անի              | Ե Ե Ե       | 151. Արանյակ                | Կ |
| 49. Ար              | Հ          | Ե Ե Ե        | 100. Անի             | Ե Ե Ե       | 152. Արանյակ                | Կ |
| 50. Ար              | Հ          | Ե Ե Ե        | 101. Անի             | Ե Ե Ե       | - 153. Արանյակ              | Կ |
| 51. Ար              | Հ          | Ե Ե Ե        | 102. Անի             | Ե Ե Ե       | + 154. Արանյակ              | Կ |
| 52. " "             | (Հ. Ե. Ե.) | Ե Ե Ե        | 103. Անի             | Ե Ե Ե       |                             |   |

|                           |                |                   |      |                |                         |              |
|---------------------------|----------------|-------------------|------|----------------|-------------------------|--------------|
| 155. Երկուսուր (չգ.)      | II (ԲՆ Է)      | 209. Երեսուր      | Եր   | Եր Եր Եր Եր Եր | *204. ԶԲԲԵԻ             | ժ            |
| 156. Երկինք (Եր-<br>կինք) | Գ Ե Ե Ե Ե Ե Ե  | 210. Երեղեկ       | Ե    | Ձ (Ձ) Է        | 205. Զմեռն (Ե-<br>Էմեռ) | ձ ձ ձ ձ      |
| 157. Երկիր                | Ճ Ճ Ճ Ճ Ճ Ճ Ճ  | 211. Երեսուխ      | Ե    | Ջ Ժ Ժ          | 206. Զուր (չգ.)         | Ի (Ի Է) Է    |
| 158. Երկինքում            | (ՎԿ) Կ Կ Կ     | 212. Երեսույ      | Ե    | Ե Կ Կ Ե Ե Ե Ե  | *207. Զամբար            | Է Է Է Է      |
| *159. Երեղուտակ           | Կ Կ            | 213. Կտմեղեկ      | (ԿԿ) | ԿԿ Կ Կ         | 208. Զեպ                | Կ Կ Կ Կ      |
| *160. Երեղուտակ           | Կ Կ            | 214. Կտմար        | (ԿԿ) | Կ Կ Կ Կ        | +209. Զեպ               | Կ =          |
| *161. Երեղեմ              | Կ Կ Կ          | 215. Կտմարում     | Կ ?  | Կ Կ Կ          | 70. Զմեռույթ            | Կ Կ Կ Կ      |
| 162. Զուտակ               | Կ Կ            | -216. Կտմեղ (չգ.) |      | Կ (Կ Կ Կ)      | *271.                   | Կ Կ Կ        |
| 163. Զարարիտ              | Կ Կ            | *217. Կեղեմար     |      | Կ Կ Կ Կ        | *272.                   | Կ Կ Կ Կ Կ    |
| 164. Զեպ                  | Կ Կ            | 218. Կեղեմեր      | Կ    | Կ Կ Կ          | 273.                    | Կ            |
| 165. Զարարիտակ            | Կ Կ            | 219.              | (ԿԿ) | Կ Կ Կ          | 274. Զարարիտ            | Կ Կ          |
| 166. Զարարակ              | Կ Կ            | *220. Կեղեմարում  |      | Կ Կ Կ Կ        | 275. Զարարիտ            | Կ Կ Կ Կ Կ    |
| 167. Զարարարիտ            | (ԿԿ) Կ Կ Կ Կ Կ | +221. Կեղեմ       |      | Կ Կ            | 276. Կտմարում           | (ԿԿ) Կ Կ     |
| 168. Զարարար              | Կ Կ            | -222. Կեղեմ (չգ.) |      | Կ (Կ Կ Կ)      | +277. Կտմարի            | Կ Կ Կ Կ Կ    |
| 169. Զարարիտ              | (ԿԿ) Կ Կ Կ Կ Կ | -223. Կեղեմ (չգ.) |      | Կ (Կ Կ Կ)      | 278. Կտմարի             | Կ Կ          |
| 170. Ընդհանուր            | Կ Կ            | *224. Կտմարար     |      | Կ Կ Կ Կ        | 279. Կարգարի            | Կ Կ Կ Կ Կ Կ  |
| 171. Ընդհանուր            | Կ Կ            | *225. Կտմար       |      | Կ Կ            | 280. Կարգ               | Կ Կ Կ Կ      |
| 172. Ընդհանուր            | (ԿԿ) Կ Կ       | *226. Կտմար       |      | Կ Կ            | 281. Կարգարի            | Կ Կ          |
| 173. Ընդհանուր            | (ԿԿ) Կ Կ Կ Կ Կ | *227. Կտմարի      |      | Կ Կ            | 282. Կարգարի            | Կ Կ Կ Կ Կ Կ  |
| +174. Ընդհանուր           | Կ Կ Կ          | 228. Կտմարում     | Կ Կ  | Կ Կ Կ Կ Կ Կ    | 283. Կարգարի            | (ԿԿ) Կ Կ Կ Կ |
| *175. Ընդհանուր           | Կ Կ Կ          | 229. Կտմարում     | Կ Կ  | Կ Կ Կ Կ        | 284. Կարգարի            | Կ Կ Կ Կ      |
| 176. Ընդհանուր            | Կ Կ            | 230.              | Կ Կ  | Կ Կ            | 285. Կարգարի            | Կ Կ Կ Կ Կ Կ  |
| *177. Ընդհանուր           | Կ Կ Կ Կ Կ Կ    | 231.              | Կ Կ  | Կ Կ Կ Կ        | *286. Կարգ              | Կ Կ Կ Կ Կ    |
| 178. Ընդհանուր            | (ԿԿ) Կ Կ Կ     | 232. Կարգ         | (ԿԿ) | Կ Կ Կ Կ        | 287. Կարգ               | Կ Կ Կ Կ Կ    |

|                   |            |                |                      |      |         |                      |      |         |
|-------------------|------------|----------------|----------------------|------|---------|----------------------|------|---------|
| 318. Գուստանյան   | Յ          | 3° 4° 5° 6° 7° | * 383. Պղպեղ         |      | ճ ճ ճ ճ | 410. Վարդանյան       | (+4) | Մ Մ Մ Մ |
| 319. Գուստ        | Յ          | 3 0 0 0        | 384. Պարսիկ          | (+4) | ճ ճ     | * 411. Վարդանյան     |      | Մ Մ Մ Մ |
| † 320. Գուստ      |            | ( ) ~ ~        | 385. Պարսիկ          | ~    | ճ ճ     | † 412. Վարդանյան     |      | Մ Մ Մ Մ |
| 321. Գուստ        | (+4)       | ճ ճ ճ ճ        | * 386. Պարսիկ        | ~    | ճ ճ     | * 413. Վարդանյան     |      | Մ Մ Մ Մ |
| 322. Գուստ        | ~          | ճ ճ ճ ճ ճ ճ    | 387. Պարսիկ          | ~    | ճ ճ     | † 414. Վարդանյան     |      | Մ Մ Մ Մ |
| 323. Գուստ        | ~          | ճ ճ ճ ճ        | 388. -               | B    | B       | 415. Վարդանյան       | ~    | Մ Մ Մ Մ |
| 324. -            | ~          | ճ ճ ճ ճ ճ ճ    | † 389. -             |      | ճ ճ ճ ճ | 416. Վարդանյան       | ~    | Մ Մ Մ Մ |
| 325. Գուստ        | ~          | ճ ճ            | 370. Գուստ           | (+4) | ճ ճ ճ ճ | * 417. -             |      | Մ Մ Մ Մ |
| * 326. Գուստ      | ~          | ճ ճ            | 371. Գուստ           | (+4) | ճ ճ     | * 418. -             |      | Մ Մ Մ Մ |
| 327. Գուստ        | ~          | ճ ճ            | 372. Գուստ           | ~    | ճ ճ     | 419. -               | (+4) | Մ Մ Մ Մ |
| † 328. Գուստ      |            | ճ ճ ճ ճ        | - 373. Գուստ (Գուստ) |      | ճ ճ ճ ճ | 420. Գուստ           | ~    | Մ Մ Մ Մ |
| 329. Գուստ        | (+4)       | ճ ճ ճ ճ        | 374. Վարդանյան       | (+4) | ճ ճ ճ ճ | 421. Գուստ           | ~    | Մ Մ Մ Մ |
| 330. Գուստ        | ~          | ճ ճ ճ ճ        | * 375. Վարդանյան     |      | ճ ճ ճ ճ | † 422. Գուստ         |      | Մ Մ Մ Մ |
| 331. Գուստ        | (+4)       | ճ ճ ճ ճ        | * 376. -             |      | ճ ճ ճ ճ | 423. Գուստ           | (+4) | Մ Մ Մ Մ |
| * 332. Գուստ      |            | ճ ճ            | 377. Վարդանյան       | (+4) | ճ ճ ճ ճ | * 424. Գուստ         |      | Մ Մ Մ Մ |
| * 333. Վարդ       |            | ճ ճ            | 378. Վարդանյան       | (+4) | ճ ճ ճ ճ | 425. Գուստ           | ~    | Մ Մ Մ Մ |
| * 334. Վարդ       |            | ճ ճ            | * 379. -             |      | ճ ճ ճ ճ | 426. Գուստ           | ~    | Մ Մ Մ Մ |
| 335. Վարդ         | ~          | ճ ճ            | 380. Վարդ            | ~    | ճ ճ ճ ճ | 427. Գուստ           | ~    | Մ Մ Մ Մ |
| 336. Վարդ         | (+4)       | ճ ճ ճ ճ ճ ճ    | 381. -               | ~    | ճ ճ ճ ճ | 428. -               | (+4) | Մ Մ Մ Մ |
| 337. Վարդ         | ~          | ճ ճ ճ ճ ճ ճ    | 382. Վարդ            | ~    | ճ ճ ճ ճ | 429. Գուստ           | (+4) | Մ Մ Մ Մ |
| 338. Վարդ         | ~          | ճ ճ ճ ճ ճ ճ    | * 383. -             |      | ճ ճ ճ ճ | - 430. Գուստ (Գուստ) |      | Մ Մ Մ Մ |
| * 339. Վարդ       |            | ճ ճ            | 384. Վարդ (Յ)        | ~    | ճ ճ ճ ճ | - 431. Գուստ         |      | Մ Մ Մ Մ |
| 340. Վարդ         | (+4)       | ճ ճ ճ ճ ճ ճ    | * 385. -             |      | ճ ճ ճ ճ | 432. Գուստ           | (+4) | Մ Մ Մ Մ |
| * 341. Վարդ       |            | ճ ճ ճ ճ ճ ճ    | 386. Վարդ            | (+4) | ճ ճ ճ ճ | 433. Գուստ           | ~    | Մ Մ Մ Մ |
| 342. Վարդ         | ~          | ճ ճ ճ ճ ճ ճ    | 387. Վարդ            | (+4) | ճ ճ ճ ճ | 434. Գուստ           | ~    | Մ Մ Մ Մ |
| 343. -            | ~          | ճ ճ ճ ճ ճ ճ    | 388. Վարդ            | (+4) | ճ ճ ճ ճ | 435. Գուստ           | ~    | Մ Մ Մ Մ |
| 344. Վարդ (Գուստ) |            | ճ ճ ճ ճ ճ ճ    | † 389. Վարդ          |      | ճ ճ ճ ճ | 436. Գուստ           | ~    | Մ Մ Մ Մ |
| * 345. Վարդ       |            | ճ ճ ճ ճ ճ ճ    | 390. -               | T    | ճ ճ ճ ճ | 437. Գուստ           | (+4) | Մ Մ Մ Մ |
| 346. Վարդ         | (+4)       | ճ ճ ճ ճ ճ ճ    | 391. -               | (+4) | ճ ճ ճ ճ | 438. Գուստ           | (+4) | Մ Մ Մ Մ |
| 347. Վարդ         | ~          | ճ ճ ճ ճ ճ ճ    | 392. -               |      | ճ ճ ճ ճ | 439. Գուստ           | ~    | Մ Մ Մ Մ |
| 348. Վարդ         | ~          | ճ ճ ճ ճ ճ ճ    | 393. Վարդ (Յ)        | (+4) | ճ ճ ճ ճ | 440. Գուստ           | ~    | Մ Մ Մ Մ |
| 349. Վարդ         | ~          | ճ ճ ճ ճ ճ ճ    | 394. Վարդ            |      | ճ ճ ճ ճ | 441. Գուստ           | ~    | Մ Մ Մ Մ |
| 350. Վարդ         | ~          | ճ ճ ճ ճ ճ ճ    | 395. Վարդ            | (+4) | ճ ճ ճ ճ | 442. Գուստ           | (+4) | Մ Մ Մ Մ |
| * 351. -          |            | ճ ճ ճ ճ ճ ճ    | 396. Վարդ            | ~    | ճ ճ ճ ճ | * 443. Գուստ         |      | Մ Մ Մ Մ |
| * 352. Վարդ       |            | ճ ճ ճ ճ ճ ճ    | 397. -               | ~    | ճ ճ ճ ճ | 444. -               | ~    | Մ Մ Մ Մ |
| 353. Վարդ         | (+4)       | ճ ճ ճ ճ ճ ճ    | * 398. Վարդ          | (+4) | ճ ճ ճ ճ | 445. Գուստ           | (+4) | Մ Մ Մ Մ |
| * 354. Վարդ       |            | ճ ճ ճ ճ ճ ճ    | 399. Վարդ            |      | ճ ճ ճ ճ | * 446. -             |      | Մ Մ Մ Մ |
| 355. Վարդ         | (+4)       | ճ ճ ճ ճ ճ ճ    | 400. -               |      | ճ ճ ճ ճ | 447. Գուստ           | ~    | Մ Մ Մ Մ |
| 356. Վարդ         | (+4)       | ճ ճ ճ ճ ճ ճ    | 401. Վարդ            | (+4) | ճ ճ ճ ճ | 448. Գուստ           | ~    | Մ Մ Մ Մ |
| 357. Վարդ         | (+4)       | ճ ճ ճ ճ ճ ճ    | 402. Վարդ            | (+4) | ճ ճ ճ ճ | 449. Գուստ           | (+4) | Մ Մ Մ Մ |
| * 358. Վարդ       |            | ճ ճ ճ ճ ճ ճ    | 403. Վարդ            | (+4) | ճ ճ ճ ճ | 450. Գուստ           | ~    | Մ Մ Մ Մ |
| * 359. Վարդ       |            | ճ ճ ճ ճ ճ ճ    | 404. Վարդ            | ~    | ճ ճ ճ ճ | 451. -               |      | Մ Մ Մ Մ |
| 360. Վարդ         | ~          | ճ ճ ճ ճ ճ ճ    | 405. -               |      | ճ ճ ճ ճ | 452. Գուստ           | (+4) | Մ Մ Մ Մ |
| 361. -            | B          | ճ ճ            | 406. Վարդ            | ~    | ճ ճ ճ ճ | 453. Վարդ            | ~    | Մ Մ Մ Մ |
| 362. -            | (Յ - Վարդ) | ճ ճ            | 407. Վարդ            | ~    | ճ ճ ճ ճ | 454. Վարդ            | ~    | Մ Մ Մ Մ |

[illegible]

ЦЕНА

A <sup>11</sup>  
12850